

1915



ԱՂԷՏ ԵՒ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

1915

ԱՂԷՏ ԵՒ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ



Հեղինակ՝

ԱՂԷՏԷՆ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐ



Փ Ա Ր Ի Զ

ՏՊԱԳՐ. ԱՐԱՔՍ

1952

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Համաշխարհային պատերազմի ընթացքին տեղի ունեցաւ ահաւոր դէպք մը. աւելի ահաւոր քան թէ պատերազմի բոլոր արհաւիրքները. երկուքուկէս միլիոն Հայերու տեղահանութիւնը իրենց չորս հազար տարուան բնաշխարհէն եւ անոնց մեծ մասին սպանդը:

Ոճիր մը, որ չունի իր նախընթացը մարդկային տարեգրութեանց մէջ, սկսելով ամենահին ու խաւար դարերէ մինչեւ ներկայ ժամանակները, կամ ասորական բարբարոսութեանց անթանազրութիւններէն՝ մինչեւ քաղաքակիրթ եւ լուսաւոր կոչուած դարաշրջանին 1915 թուականը:

Ձանգուածային բնաջնջումը՝ հայ ազգին ամբողջութեան կէսին, բարբարոսներու ձեռքով եւ դիւային ծրագրով, յղացուած՝ օսմանեան սահմանադրութեան ծածկոցին տակ:

Ամենէն զարհուրելի ոճիրը, զոր թուրք ցեղը աւելցուց իր բազմաթիւ ոճիրներուն վրայ, հայ ազգին դէմ, եւ քաղաքակիրթ կոչուած աշխարհին դէմ, եւ ամբողջ մարդկութեան խղճին դէմ:

Անասելի յանցանք մը, զոր Դաշնակից կառավարութիւնները, հակառակ իրենց հանդիսաւոր յանձնառութեանց, ձգեցին անպատիժ եւ, քանի մը տարի ետք, իբր անմիջական հետեւանք՝ թափուած հայ անմեղ արեան, աշխարհը չարաչար պատժուեցաւ հիդէլերական սարսափով: Արդարեւ, Հիդէլէր, իր իսկ խոստովանութեամբ, քաջալերուած՝ 1915ի հայկական ըսպանդին մոռացումէն, սարքեց ցեղաջինջ նոր սպանդ Եւրոպայի սրտին վրայ...

Թէ ի՞նչպէս ձեռնարկուեցաւ Մեծ Եղեռնի յուշերուն հրատարակութեան:

Յօդուածով մը լեւադրած էի որ Աղէտէն վերապրողները այս տարուան (1951ի) սղատօնին առթիւ, թերթերու մէջ իրենց յուշերը դրեն: Յօդուածը արտատպուեցաւ գաղութներու մէջ եւ վերապրողներ սկսան իրենց յուշերը զրկել հասցէիս, Ֆրանսայէն, հիւսիսային եւ հարաւային Ամերիկաներէն, Պալքանեան երկիրներէ, Սուրիայէն եւայլն: Յայտնի եղաւ թէ Մեծ Ալէտին ցաւը, այսքան տարի ետք, տակաւին կը կոտտար 1915ի սերունդին կուծքին տակ, առաջին օրերու սաստկութեամբ: Ոմանք կ'ըսէին թէ նոյնիսկ տարիներ առաջ դրած եւ պահած են իրենց յուշերը, աւանդ ձգելու համար իրենց զաւակներուն, որովհետեւ տըպադրելու ոեւէ յոյս չունէին:

Այս պայմաններուն մէջ, նուիրական պարտականութիւն էր դոհացում տալ ընդհանուրին ցանկութեան եւ ձեռնարկել յուշերու հաւաքման եւ հրատարակութեան:

Իրականին մէջ, իրենք, գաղութներու մէջ ցըր-

ուած վերապրողներն են այս գրքին հեղինակները, ամէն կողմէ միացած՝ նոյն բաղձանքով, թելադրութիւններով, քաջալերութիւնով:

Այս գիրքը չի հետապնդեր քաղաքական ոչ մէկ նւապատակ, ոչ ալ պատմութիւնն է Մեծ Եղեռնին, այլ ականատես զոհերու վկայութեանց հաւաքածոն որ, ապագային, կրնայ նիւթ հայթայթել 1915ի լիակատար պատմութիւնը գրողներուն:

Այս գրքին հրատարակութիւնը, Ոճիրէն երեք տասնեակ եւ աւելի տարիներ ետք, կը դառնայ անյետաձգելի անհրաժեշտութիւն,

Որովհետեւ.

Վերապրող վկաները անհետանալու վրայ են,

Ոճիրը, տարիներու ընթացքին, սկսեր է արդէն աղօտանալ եւ խեղաթիւրուիլ:

Զէ՞ որ, 1915էն իվեր, յաճախ փորձուեցաւ ճերմկցնել Ոճրագործը ի շահ եւրոպական նենգ եւ պղտոր դրամատիրութեան:

Զէ՞ որ, նոյնիսկ հիմա, 1951ին, երբ դեռ կենդանի են տասնեակ հազարաւոր վերապրողներ, քաղաքակիրթ կոչուած ազգեր կամովին կը մոռնան Թուրքին Ոճիրը որ զիրենք եւ ամբողջ մարդկութիւնը ցնցեց 1915ին: (1951 դեկտեմբերին, Փարիզ, ձայնասփիւռէն խօսող մը խղճի կատարեալ հանդարտութեամբ չքմեղացուց Ոճրագործը, յայտարարելով թէ Հայերը նոր կրօնք մը ուզեցին տարածել Քուրտիստանի մէջ եւ ջարդուեցան Քուրտերո՛ւ ձեռքով...):

Զէ՞ որ, 1915ի Մեծ Ոճրագործը հիմա բազմած է մեծ ազգերու կողքին:

Զէ՞ որ, Թուրքը, բոլորովին շիւղացած, սինիքօրէն

բողոքեց իր լրագրողներէն մէկուն բերնով. «Հայերը կը յանդգնին նախատել մեզ, վեհանձն թուրքերս, ստեղծել եւ փրօփականաւ մղելով որ Անատոլուի մէջ իբր թէ միլիոնաւոր Հայեր կ'ապրին եղեր 1914ի պատերազմին, որոնք իբր թէ ջարդուեր են թուրքերու ձեռքով...»:

Այս ամէնը՝ երբ դեռ կանգուն են թրքահայաստանի հարիւր հազարաւոր հայապատկան շէնքերու, բաղմադարեան կոթողներու, եկեղեցիներու եւ վանքերու ակերակները, եւ երբ տակաւին ողջ են Աղէտէն վերապրած հազարաւոր թրքահայեր...:

Այս գիրքը գրողներէն շատերը հազիւ պատանիներ էին 1915-ին եւ, այդ պատճառաւ մնացած են կիսազրագէտ:

Սրբագրելով իրենց յուշերը, ջանացի պահել իրենց ժողովրդական պարզ ոճը եւ անկեղծ շէշտը, յաճախ զարմանալիօրէն ինքնատիպ եւ ուժեղ:

Մեր ժողովուրդն է, արտայայտութեան եւ զգացումի հարստութեամբ օժտուած հայ ժողովուրդը, որ կը յայտնուի այս տողերուն մէջ: Պատմողներուն ամենէն անուսը, տառասխալներով լեցուն իր գրութեանը մէջ, երբեմն գրական գեղեցկութիւններ եւ մտածման գոհարներ զետեղած է առանց անդրադառնալու, գեղեցիկին առհաւական իր բնազդով:

Ատկէ դատ, այս էջերուն մէջ կը գտնէք թանկագին տեղեկութիւններ, որոնք այլապէս պիտի կորսուէին պատմութեան համար: Ինչպէս՝ Զօհրապի եւ Վարդգէսի ի պատիւ տրուած հացկերոյթը թուրք վալիի մը կողմէ, անոնց սպաննութեան նախօրեակին, կամ պոլսահայ մտաւորականութեան աքսորին եւ նահատակութեան առնչութեամբ անտիպ եւ ծանրակշիռ յայտնութիւններ:

Ընթերցողը այս գրքին մէջ պիտի գտնէ նաեւ գաղտնիքը թէ ի՞նչպէս հայ ազգը կրցաւ վերապրիլ համատարած աղէտի մը փորձութենէն անցնելէ ետք, երբ ուրիշ ազգեր, իրմէ աւելի մեծ եւ ուժով, շատոնց փոշիացած եւ անհետացած են, չկրնալով դիմանալ շատ աւելի փոքր աղէտներու փորձութեան :

Այս գիրքը, այդ տեսակէտով, հաւատարիմ թարգմանն է Հայուն ցեղական առաքինութեանց եւ պանծացումը հայ կնոջ :

1915ի աղէտը ծայրէ ծայր, եւ անոր դառնութեան մինչեւ յետին կաթիլը, հայ կնոջն է որ բաժին ինկաւ : Անոնք հարիւր հազարներով նահատակուեցան ու մեռան եւ հազարներով իբր ողջ նահատակ դեռ կ'ապրին իրենց դահիճներուն լուծին տակ :

Պիտի հանդիպիք այս գրքին մէջ հայ հերոս կիսներու, նոյնիսկ աղջնակներու, որոնց շատին անունը անգամ կը մնայ անյայտ, եւ որոնք դիտցան անվթար պահել ազգային նոյն առաքինութիւնները, ամենադժնդակ պայմաններու մէջ, երբ տղամարդիկ զանգուածօրէն բնաջնջուած էին եւ հայ կինը, հեռաւոր կիրճերու եւ անծանօթ անապատներու մէջ մնացած էր բոլորովին անպաշտպան, անօթի եւ մերկ, շրջապատուած՝ մարդակերպ գազաններով . . .

Յուշերու հաւաքման դործը անակնկալ եւ կսկծելի հարց մը ստեղծեց : Միջագետքի հայկական գաղութներէն, որոնց հետ կարելի եղաւ թղթակցիլ մեծ դժուարութեամբ, տեղեկացուցին թէ արաբական վըրաններու տակ դեռ գոյութիւն ունին կիսով կամ ամբողջովին արաբացած հայ ընտանիքներ, կիներ ու որբուկներ որոնք ձուլուած են իրենց բաղդին : Այդ դժբաղդներուն հանդէպ աններելի է անտարբերութիւնը ազգա-

Իր գոյութիւնը ապահոված փոքր ազգ մը, որ հըսկայի ուժով դարբնելու վրայ է ազգային վերելք, աննախընթաց՝ իր բազմադարեան կեանքին մէջ:

Հայ ազգը 1915ին զոհ տուաւ անհաշուելի հարըստութիւն, մշակութային անփոխարինելի դանձեր եւ, ամենաթանկագինը, հարիւր հազարաւոր երախաներ որոնցմէ պիտի ծլէին արուեստի եւ գիտութեան իր ապագայ յոյսերը:

Դիտեցէք, սակայն, այս գրքին⁴ լուսանկարները: Անոնց մէկ մասը քաշուած է Աղէտէն առաջ, ներկայացնելով հնադարեան կոթողներ, յիշատակարաններ, ընտանեկան եւ դպրոցական խմբանկարներ: Երկրորդ մասը՝ աղէտ, տարագրութիւն եւ սպանդ: Մնացեալները Աղէտէն ետքի պատկերներ են եւ կը ներկայացնեն նոր ծիւեր, նոր երիտասարդութիւն, հայ ժողովուրդին նոր յոյսերը, փրկարար ներգաղթը, մեր սովետական Հայրենիքին յարաճուն վերելքը, մեր ազգին անհաւատալի վերածնունդը:

Փարիզ 1951

ԼԵՒՈՆ ՄԵՍՐՈՊ



Թուրքերուն ըրածները չգրել , չլսուիլ, կը նշանակէ իրենց մեղսակից ըլլալ :

ԵՐՈՒԱՆԴ ՔՀ. ԳԱՐԲԻՆԵԱՆ

Ձեր գիրքը անթաղ մահատակներուն շիրիմը եղաւ :

ՏԻԿ. ՎԱՐՍԵՆԻԿ ԱԴԱՄԵԱՆ

Մահը չորս կողմս պատած է: Բարը, հոգը, քշմամի եմ դարձեր: Սողուններուն երանի կուտայի որ հոգին տակը բնակարան ունին:

ՄԵԼԲՈՆ ՏԵՐՏԵՐԵԱՆ

Վարդանանց պատերազմին Տիկնայք փափկասունքը տանջուեցան եւ անմահացան: Պատմութիւնը պիտի ըսէ՞ որ անոնց չափ եւ աւելի տանջուեցան հայ կիները տարագրութեան դժոխքին մէջ:

ՏԻԿ. ԶԵՓԻՒՌՈՒ ՎԷԼԷՏԵԱՆ

Ա՛յս, այլեւս չեմ կրնար շարունակել...

Բայց պէտք է շարունակեմ: Թող գիտնան յաջորդ սերունդները թէ ի՞նչ փշոտ, գարեուրելի մամբաներէ անցաւ հայ կիներ եւ գիտնան սիրելի իրենց ազգն ու հայրենիքը եւ պաշտպանեն իրենց պատիւը:

Կ'անհիծեմ այն Հայը որ կ'ուրանայ իր ազգն ու հայրենիքը:

ՏԻԿ. ԳԵՂԱՆՈՒՇ ՇԱՀՊԱԶԵԱՆ

ՀԱՅԿ ԹՈՐՈՅԵԱՆԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

(Գրի առնուած Ձապէլ Եսայեանի կողմէ)

Հալէպցի հայ զինուոր մը, Հայկ Թորոյեան, գերմանացի սպային, Էօլմանի ծառայութեան մէջ կը մամբարդէ Հալէպէն Պաղտատ, անցնելով Եփրատի երկայնքէն ուր ցրուած էին տարագրուած հայերու կարաւանները, կոտորակուած, սովահար եւ տակաւին թուրքերու վայրագութեան առարկայ :

Հայկ Թորոյեանը կը յաջողի ափսոսելները հարցաքննել եւ լսածն ու տեսածը գրի առնել :

Գերմանացի սպան եւ հայ զինուորը կը հասնին Պաղտատ եւ կ'անցնին Պարսկաստան : Քիրմանշահի մէջ սպան կը խենթեմայ, չկրնալով տոկալ Եփրատի եզերքը տեսած զարհուրանալին եւ անձնասպան կ'ըլլայ :

Հայկ Թորոյեանը կը հողոսպրի թրքական բանակէն, կ'անցնի Թեհրան, յետոյ՝ Կովկաս : 1916ին Թիֆլիզի հայ թերթերուն միջոցաւ առաջին անգամ ըլլալով ինք կը գուժէ Թրքահայաստանի ներքին նահանգներուն ողբերգութիւնը, որուն շուկները միայն լսուած էին մինչեւ այդ առեւն :

Անգլիական կառավարութիւնը Լորտ Պրայսը կը փութացնէ Թիֆլիզ : Թորոյեանի վկայութիւնը կը վերածուի անգլիական «Կապոյտ գրքի» ուր հայկական սարսափներու պատասխանատուութեան մեծ բաժինը ձգուած է գերմանացիներու վրայ, կարելի եղածին չափ մեղմացնելով բուն ոճրագործին պատասխանատուութիւնը : Հայկական արիւնը կրկին կ'օգտագործուի ի նպաստ անգլիական կայսրութեան ասպագայ մութ շահերուն :

Պատերազմը վերջանալէ առաջ, Հայկ Թորոյեանը ծայտուած կը վերադառնայ Միջագետք, կազմակերպելու համար հայ բեկորներու ազատագրութեան գործը : Կը ձեռքակալուի, կը դատապարտուի մահուան եւ կ'ազատի հրաշքով : Զինադադարին կը վերադառնայ Հալէպ, կը նուիրուի որբերու փրկութեան գործին : Կը հիմնէ Հալէպի «Կիլիկեան Վարժարան»ը հարիւրաւոր

աշակերտներով : Դպրոցը ,նիւթական միջոցներէ գուրկ , կը փակուի : Հայկ Թորոյեանը 25 տարիէ ի վեր հաստատուած է Թեհրան :

Իր վկայութիւնը 1916-17ի կովկասահայ թերթերէն առնելով , առաջնութեանը եւ կարեւորութեանը պատճառաւ արտատպուած է գրեթէ ամբողջութեամբ :



Հայկ Թորոյեան

1914 Նոյեմբեր ամսուն կը դառնուէի Տիգրանակերտ : Գաղաքին բնակչութեան կէտը հայ է եւ միւս կէտը թուրք եւ քուրտ : Հայերու մէջ կան նաեւ փոքր թուով Ասորիներ , որոնք հայախօս են , ինչպէս թուրքերու եւ Գուրաերու մէկ մասը : Հայերը ունին չորս ազգային դպրոց , երկու եկեղեցի եւ առաջնորդարան : Կը գրազին

վաճառականութեամբ եւ արհեստներով : Տիգրանակերտի մէջ Հայերը ունէին մետաքսեղէն կերպասներու , ալիւրի , սիկարի թուղթի բազմաթիւ դործարաններ եւ տպարաններ :

Սահմանադրութեան հռչակումէն ետքը Տիգրանակերտի հայ դիւղերն ալ ունեցած են բարդաւաճում :



Թալար

Տնտեսական այս բարդաւաճման հետ մեծ յառաջադիմութիւն տեղի ունեցաւ Տիգրանակերտի Հայերու մտաւոր կեանքի մէջ : Հիմնուեցան գրադարաններ եւ թատրոն , կաղմուեցաւ երաժշտականութիւնը :

Իրաց այս դրութեան մէջ անհնար էր , որ թուրք ժողովուրդը մրցէր հայերու յարաճուն յառաջդիմութեան դէմ : Իթիբահատականները մասնաւորապէս մտահոգ էին եւ շատ լաւ գիտնալով թէ իրենց յետամնաց ժողովուրդը շարժման մէջ դնել գրեթէ անհնար է , ըսկսան կառավարական միջոցներու դիմել հակակշռելու

համար հայերու սղոյեցութեան: Պայքարը սկսու օրն-
տեսական հողի վրայ: Օգուտ քաղելով քրիստոնեանե-
րու դէմ տնտեսական սղոյեցութէն, որ հուշակուած էր



Թալարի ձևով գրուած գաղտնի կեռագիրը

Հայերու քնազնջման մասին:

պալքանեան պատերազմին, սկսան զրգուութիւն յառաջ
բերել իսլամ բնակչութեան մէջ, միեւնոյն ատեն հիմ-
նեցին Մաղազայը իսլամիէ անուճով վաճառատուն ձը,

ուր կը ծախուէին ամէն տեսակ ապրանքներ : Թէ յայտնասէս եւ թէ ծածուկ կը յորդորէի իսլամները ամէն կարգի յարաբերութիւն խզել Հայերու հետ եւ դնել միմիայն իսլամներէ եւ մասնաւորապէս իթթիհատականներէ հիմնուած այդ վաճառատունէն :

Իթթիհատականները նոր առիթ կը փնտուէին Հայոց շուկան փճացնելու եւ այդ նպատակաւ հրատարակեցին տեղական թերթ մը որուն սակայն գրաչարները եւ տպարանի գործաւորները ստիպուած էին հայերէ առնել :

Շատ պարզ է թէ զինուորական հրամանը եւ զինուորական գրաւումները ինչ սքանչելի առիթ մը ընծայեցին օրինական ձեւի տակ կողոպտելու հայերը : Իթթիհատականներու նախագահ Մէմտուհ պէյ եւ զինուորական մը անձամբ կատարեցին գրաւումները : Անոնք շուկային մէջ կը մտնէին հայ վաճառատունները և անխնայ թալանի կ'ենթարկէին : Գրաւեցին ամէն տեսակ ապրանքներ , նոյնիսկ այնպիսի ապրանքներ որոնք ուէ կերպով չեն կարող ծառայել զինուորական պիտոյքներու : Գրաւուած ասուեղէնէն զինուորականները հայ դերձակներու միջոցաւ , զորս ձրի կ'աշխատցնէին իբր զինուոր , շինել տունին հազուստներ իրենց կանանց եւ երախայոց համար :

Նոյն տեսակ կեղեքումներու ենթարկուեցան նաեւ Տիգրանակերտի հայ զիւղերը : Գրաւեցին գրեթէ ամբողջապէս ապրանք , պաշար , սայլ եւ ամէն տեսակ կենդանիներ :

Երբ ամէն ինչ գրաւուեցաւ զինուորական պիտոյքներու պատրուակաւ , նոյեմբեր ամսու կէս զիչերին , ոստիկաններու եւ զիչերապահներու ձեռամբ հրդեհեցին հայոց շուկան :

Այս հրդեհէն այրեցան 1143 խանութներ, որոնց մէջ կային 7 փուռ, 3 քարաւանսերայ եւ քանի մը սըրճարան: Հայերու նիւթական կորուստը շատ մեծ էր: Հայ վաճառականութիւնը մէկ անգամէն սնանկացաւ, մանաւանդ որ ոչ միայն վերականգնելու ունէ հնար չի կար, այլ ընդհակառակը կառավարութիւնն ամէն հնար ի դործ կը դնէր լրացնելու համար Հայերու տընտեսական քայքայումը:

Հրդեհէն անմիջապէս ետք մինչեւ 45 տարեկանները գէնքի տակ կանչուեցան եւ երեք օր պայմանաժամ տրուեցաւ: Հայերը սկսան շտապով ծախել կամ դրաւի դնել իրենց տուները, տրամադրել իրենց զարդեղէնները, որպէսզի պետել վճարեն եւ փրկուին զինուորական ծառայութենէն, որը ստեղծած էր վտանգաւոր վիճակ մը մասնաւորաբար հայերու համար: Հայերու բոլոր ապրանքներուն յարգը եւ գինը ինկած էր: Կառավարութիւնը չէր ընդուներ 5 օսկինոցները, որ իբր գարդ կը գործածէին կանայք: Մետաքսը կը ծախուէր 100ին 50 զեղջով, իսկ 5-6 սենեակով տուն մը՝ 60-70 օսկիի:

Կառավարութիւնը այս կերպով հայ ժողովուրդին բոլոր ուժերը քամելէ ետքը յանձնարարեց, որ ամէն տուն պարտական էր տալ պղնձեղէն ամաններ, վրաններ, անկողիններ եւայլն զինուորներու համար: Զինուորական իշխանութիւնը ամէն կարգի բռնութիւն կը դործածէր: Սուզարկելու պատրուակաւ ժանտարմաները կը մտնէին տուները եւ կը կողոպտէին:

Շուկային հրդեհումէն քիչ ետքը ուզեցին կրակի տալ նաեւ հայ թաղերը, բայց թուրք հրճիգները բռնուեցան հայ գիշերապահներու կողմէ:

Կառավարական ճնշումը հետզհետէ դարձաւ ան-

տանելի, նիւթական եւ բարոյական հարուածները կ'իջնային հայ ժողովուրդին վրայ անդադրում : Զէնք փընտոնելու պատրուակաւ կառավարութիւնը 150-200 քուրդ եւ թուրք խուժանի մը աջակցութեամբ խուզարկեց եկեղեցին : Ամէն տեւակ պատրուակ կը փնտռէին թալլելու եւ կոտորելու համար, բայց իրենց խուզարկութիւնը արդիւնք չունեցաւ : Երբ ձեռնունայն կը վերադառնային, հանդիպեցան ծերունի քահանային եւ ծեծի տակ սպաննեցին զինքը :

Նոյն միջոցին կախաղան բարձրացան Արդնի-Մատենի Օսմանեան փարլամենթի հայ անդամ Չրաճեան Ստեփան էֆէնտին եւ իր երկու որդիները, որոնք նոյնպէս կառավարական պաշտօնեաներ էին, այն միակ պատճառաւ, որ իրենց ընտանիքը հնչակեան կը համարուէր :

Կառավարութեան թշնամական դիրքը տեսնելով, բնական է, որ հայ զինուորացուներէն շատերը չէին ներկայանար հրակէրին : Բայց փախստականին փոխարէն թուրքերը կը բանտարկէին անոր հայրը, մայրը կամ քոյրը, մինչեւ որ զինուորացուն կը յայտնուէր ընտանիքը փրկելու համար :

Նոյեմբեր ամսու մէջ տեղի ունեցած էր նաեւ Պէրէճիքի հրդեհը : Այնտեղ ալ շուկան այրած էր եւ 70 խանութներ, ինչպէս շատ տուներ փճացեր էին : Նըմանօրինակ դէպքեր ու լուրեր, որ կը հասնէին զանազան հայաբնակ վայրերէ, այլեւս տարակոյս չէին թողուր թուրքերու դէպի հայերը ունեցած դիտաւորութիւններու մասին, եւ ծանր մտահոգութիւն մը պաշարած էր բոլոր միտքերը :

Իմ մեկնելէս քիչ առաջ Պանք Օթթօմանը Տիգրանակերտի, Հալէպի, Պիթլիսի եւ դրեթէ իր բոլոր մաս-

նաճիւղերուն մէջ յայտարարեց որ, ամեն անոնք, որ պարտք ունին պանքին, պէտք է որոշեալ պայմանա-
ժամով վճարեն: Իսկ անոնք որ պանքան դրամ պահ
դրած էին, ոեւէ կերպով չէին կարող գանձել: Այս ա-
նարդար կարգադրութիւնը պատճառ եղաւ, որ շատ մը
հայեր անանկ հռչակուին եւ գրաւուի իրենց ինչքերը:

Հայ ժողովուրդը շատ լաւ գիտէր, թէ մինչեւ որ
աստիճանները կրնայ հասնիլ թուրքերու վայրագու-
թիւնը, հակառակ որ բարձրաստիճան պաշտօնեաներ
զանազան խորամանկ ձեւերով եւ խօսքերով կ'ողզէին
ծածկել իրենց դիտաւորութիւնները:

Ինչպէս ամէն տեղ այնպէս ալ Տիգրանակերտի մէջ,
թշնամին վարուեցաւ ճարպիկութիւնով: Աստիճանա -
բար ճնշելով եւ մաս մաս կորզելով հայ ժողովուրդին
նիւթական եւ բարոյական ուժերը, զայն ենթարկեց
վերջնական բնաջնջման, երբ դիմադրութեան ոեւէ հա-
ւանականութիւն այլեւս չէր մնացած: Տիգրանակերտի
հայերը բաւական զէնք ունէին, բայց չէին համարձա-
կեր բուռն միջոցներու դիմել, որովհետեւ իրենց ամե-
նէն ամուր բազուկները բացակայ էին, զինուորութեան
զացած ըլլալով: Ժողովրդէն մաս մը կ'առաջարկէր զէն-
քի ուժով դիմադրել եւ ապաստանիլ Սասունի լեռները,
մինչ ուրիշներ յուսահատական ջանքեր կ'ընէին սիրա-
շահելու համար կառավարութիւնը:

Բոլոր յոյսերը ի դերեւ ելան եւ բոլոր խոհեմու-
թիւնները ապարդիւն մնացին: Թուրք կառավարութիւ-
նը հանգիստ ժամանակ ունեցաւ իրագործելու իր ծրա-
գիրը եւ վերջ ի վերջոյ Տիգրանակերտի հայ ժողովուր-
դը ենթարկուեցաւ տեղահանութեան եւ բնաջնջման:

ՃԱՐԱՊԼՈՒՍ, 1914 ԴԵԿՏ. 1915 ՆՈՅԵՄԲ. 12.— ՀԱՅԵՐԱՆՈՒ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ՄԻՆՁԵՒ 1915 ՓԵՏՏՐ.— ԱՌԱՋԻՆ ԹՇՆԱՄԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ.— 2000 ՀԱՅ ԲԱՆՈՒՈՐՆԵՐ ԿՈՏՈՐԵԼՈՒ ՓՈՐՁԸ

1914 Նոյեմբերի վերջերը մեկնեցայ Տիգրանակերտէն, անցայ Սեւերեկէն, ուր զօրակոչ եւ զինուորական գրաւումները կատարուած էին նոյն անարդարութեամբ ինչպէս Տիգրանակերտ: Հակառակ որ տեղւոյն բոլոր բժիշկները հայեր էին եւ անոնք ամէնքն ալ անխտիր պատասխանելով կառավարութեան հրամանին, մեծ եռանդով եւ անխոնջ կերպով կ'աշխատէին բանակին մէջ, նոյն այդ իշխանութիւնը անհամար չարիքներով կը ճնշէր ոչ միայն հայ ժողովուրդը ընդհանրապէս, այլ նաեւ այդ բժիշկներուն ընտանիքները:

Սեւերեկէն անցայ Եդեսիա (Ուրֆա), ուր կացութիւնը աւելի մեղմ էր այդ ժամանակ: Շտապեցի անցնիլ Ճարապլուս, եւ Տիգրանակերտէն մինչեւ Արաբ-Ֆունար չորս օր կառքով եւ անկէ երկու ժամ գնացքով ճամբորդելէ ետքը՝ հինգ օրէն հասայ Ճարապլուս:

Ճարապլուս Հալէպէն 100 քիլոմետր հեռու Եփրատի եզերքին գիւղաքաղաք մըն է, որ կարեւոր կայանրաններէն մէկը դարձած է Պաղտատի երկաթուղիին: Բոլորովին արաբական է այս շրջանը, եւ հայերը աննշան փոքրամասնութիւն մը կը կազմեն: Թուրքեր ալ քիչ կան այնպէս որ հայերու վիճակը բաւական հանդարտ է: Նոյնիսկ ամենադառն օրերուն այստեղ կացութիւնը համեմատաբար տանելի էր: Այն միջոցին որ ես հասայ, Արաբները եւ թուրքերը լաւ վերաբերմունք ցոյց կուտային հայերուն:

Այս համեմատաբար լաւ վիճակը տեւեց մինչեւ 1915ի փետրուար ամիսը:

Իմ մէկ թուրք բարեկամս, որ Հալէպ դացած էր, վերադարձաւ այդ միջոցին եւ ես դացի իրեն այցելութեան:

— Բարի ես եկեր, ըսի ուրախութեամբ:

Անիկա տխուր եւ խոժոռ դէմքով կը նայէր ինծի, իբր թէ բոլորովին օտար մէկը ըլլայի:

— Բարի ես եկեր, կրկնեցի, շփոթուած իր ձեւէն:

— Ձէ', քու բարեւոյ քեզի, պատասխանեց չոր կերպով, այլեւս մեր միջեւ բարեկամութիւն չիկայ, ամէն ինչ մեր մէջ խզուած է:

— Ինչո՞ւ հարցուցի:

— Առ այժմ չեմ կրնար ըսել, օր մը կ'իմանաս:

Դիտեցի որ գրգռութիւն կայ թուրքերու մէջ: Տարօրինակ լուրեր կը շրջէին հայոց ապստամբութեան, թուրք կիներու եւ երախաներու կրած նախատինքին եւ չարչարանքին մասին: Տարակոյս չիկար մեզի համար, որ մասնաւոր դիտաւորութեամբ եւ որոշ կազմակերպութեամբ գրգռութիւն յառաջ կը բերէին հայերու դէմ:

1915ի փետրուարի առաջին օրերուն, երբ այս աննպաստ շուկները կը տարածուէին մեր շրջանի իսլամ բնակչութեան մէջ, հայ բանուորներու բազմութիւն մը կիսամեռ, սարսափահար, դրեթէ մերկ, թափուեցան ձարապլուս եւ պատմելով իրենց գլխուն եկածները, օգնութիւն աղերսեցին տեղացի հայերէն:

Ահա թէ ինչ պատահած է:

Ռաս իւլ Այնի եւ Մծբինի միջեւ գերմանական արհեստանոց մը կայ, ուր 2000ի չափ բանուորներ կ'աշխատին երկաթուղիի շինութեանց վերաբերեալ գործերով: Արհեստանոցին պաշտպանութեան յատկացուած զինուորականը իր ժանտարմաներով կը հաւաքէ շրբ-

Ջակայքի չէչէնները եւ չէրքէղները եւ խուժելով արհեստանոցին վրայ, կը հարկադրէ հայ բանուորները, որ ամէն ինչ թողուն եւ հետեւին իրենց: Խիստ հսկողութեան տակ զիրենք կը տանին մօտակայ չէրքէղ գիւղ մը, ուր կ'ենթարկեն բացարձակ կողոպուտի:



Երկու քարճրաստիճան հայ եկեղեցականներ եւ իրենց դահիճները

Կ'առնեն իրենց վրայէն ինչ որ կը գտնան, նոյնիսկ հագուստները:

Ոմանք կը մնան միայն շապիկով, իսկ շատերը բոլորովին մերկացած են: Յետոյ հինգական հոգինոց խումբեր կը կազմեն եւ առաջին խումբը ճամբայ հանելով, կը տանին մերձակայ բլուր մը, ուր մահուան դատապարտեալները սոսկումով կը տեսնեն, թէ արդէն իսկ մեծ փոս մը պատրաստուած է իրենց համար: Այդ-

տեղ կը սկսին մէկ մէկ դաշունահար ընել հայ բանուոր-
ները: Երրորդը սպաննած էին արդէն երբ անսպասելի
կերպով ազատարարներ վրայ կը հասնին եւ կը խան-
գարեն ոճրագործները:

Ռաս իւլ Այնի երկրաչափները եւ պատասխանատու
պաշտօնեաները, որոնք յոյներ, խտլացիներ եւ հայեր
էին, լսելով թէ չէ՛չէններու եւ չէրքէզներու խուժան
մը բռնութեամբ տարած են իրենց բանուորները, կը
դիմեն տեղւոյն գայմազամին որ քնացած էր: Զինք ար-
թնցնելով կը բացատրեն թէ ինչ ծանր պատասխանա-
տուութեան կ'ենթարկուի եթէ երկաթուղիի բանուոր-
ները կոտորուին, եւ վերջապէս կը հարկադրեն զինքը
որ ոչ միայն շուտափոյթ օգնութիւն հասցնէ, այլ ինքն
անձամբ ընկերանայ իրենց որոնելու համար գոհերը:
Այսպէսով կը հասնին կոտորածի վայրը եւ կ'ազատեն
մնացեալը գրեթէ մերկ վիճակի մէջ թուրք զինուորա-
կանին ձեռքէն: Երբ գայմազամը զինուորականին կը
հարցնէ, թէ ինչո՞ւ այդպիսի անգութ եւ յիմար գործի
ձեռնարկած է, անիկա ի պատասխան ցոյց կուտայ իրեն
եկած հեռագրական հրամանը:

Հայ բանուորները սակայն իրենց ազատագրեալնե-
րուն հետ կը վերադառնան արհեստանոց որուն շուրջը
ունէին իրենց հիւղակները եւ վրանները: Կը մտադրեն
իրենց ունեցածները առնել եւ Հալէպ փախիլ, բայց
ամէն ինչ թալանուած էր արդէն:

Պատերազմի պատճառաւ գերմանական երկաթու-
ղիի հանքածուխը սպառած էր եւ ստիպուած էին փայտ
վառել մեքենաները բանեցնելու համար: Հայու մը զե-
կավարութեամբ խումբ մը հայեր եւ շատ մը քուրդ եւ
թուրք գործաւորներ պաշտօն ունէին փայտը հայթայ-
թելու: Գայմազամը խումբ մը ժանտարմաներով կ'ըն-
կերանար աշխատողները պաշտպանելու համար: Կը

հասնին սուրբ վրկիչ վանքի մօտ Գարատաղի անտառը ուր գործի կը ձեռնարկեն: 1915 մայիս 3ին շրջակայ թուրքերը կը յարձակին հայերու վրայ եւ կը սկսին կացիններով սպաննել հայ բանուորները: Շատերը կը վիրաւորուին եւ ոմանք զետ նետուելով կ'ազատին: Գայմազամի օգնականը, որ հայ ժանտարմա մըն էր, երկաթուղիի ընկերութեան կողմէ կը բողոքէ կառավարութեան եւ կը պահանջէ, որ յանցաւորները պատժուին: Կառավարիչը բաւական ոյժ չունենալով իր տըրամադրութեան ներքեւ, կը դիմէ Ատիամանի գայմազամին եւ օգնութիւն կը խնդրէ: Բայց Ատիամանի գայմազամը կը մերժէ եւ կը պատասխանէ.

— Ես եմ զրկած այդ թուրքերը եւ Քուրտերը Հայերու վրայ: Ստացած եմ այնպիսի հրամաններ, որոնց համեմատ ստիպուած էի գործել: Արդէն պիտի տեսնես որ մեր գիւղաքաղաքին մէջ հայ չէ մնացած ու ասդին անդին պահուածներն ալ պէտք է ինծի յանձնես: Որոշուած է, մարդիկը պիտի կոտորուին ու կիները և երախաները պիտի քշուին դէպի Միջագետք:

Այդ միջոցին նկատեց որ գայմազամին հետինը հայ է: Պահանջեց որ յանձնուի ապա թէ ոչ սպառնաց թէ բռնի կերպով զինքը կը ձերբակալեն: Գայմազամը չուզելով յանձնել իր ընկերը, կը ջանայ համոզել Ադիամանի կառավարիչը, բայց անիկա չուզեր ոեւէ առարկութիւն լսել եւ բոլոր աղերսանքներուն ի պատասխան ցոյց կուտայ իր ստացած հեռազիրը: Մեծ դժուարութիւններով կը յաջողին ազատել զինքը որ անմիջապէս կը փախի եւ կ'երթայ Հալէպ:

ԿԻԼԻԿԻՈՅ ՏԵՂԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ .— ԶԵՅԹՈՒՆ, ՏԵՕՐԹ-
ԵՕԼ, ՀԱՃԸՆ, ԱՅՆԹԱՊ

Սուրբիոյ բանակին հրամանատար ձէմալ փաշա (որ Ատանայի կոտորածներէն ետքը, Ատանայի եւ Հալէպի վիլայէթներուն կուսակալ եղած է) նամակ մը կը գրէ Կիլիկիոյ Սահակ կաթողիկոսին եւ կը դրդէ գայն, որ իր ժողովուրդը յորդորէ հլու եւ հնազանդ գտնուելու: Կը յիշատակէ մասնաւորապէս Զէյթունի, Հաճընի, Տէօրթ Եօլի հայերը որոնք իրենց դիմադրութեամբ միշտ խանդարած են կառավարութեան դիտաւորութիւնները, եւ կ'ազդարարէ Կիլիկիոյ կաթողիկոսին, որ ամէն միջոց գործ դնէ, որպէսզի այդ ժողովուրդը կէտ առ կէտ հետեւի զինուորական հրամաններուն, եւ պարտաւոր ըլլայ հնազանդելու, նոյնիսկ երբ տեղահանութեան հրաման արձակուի: Ի փոխարէն կը խոստանայ օգնութիւն եւ պաշտպանութիւն Կիլիկիոյ տեղահան եղած ժողովուրդին, եթէ հարկը պահանջէ:

Սահակ կաթողիկոսը կը հաղորդէ ձէմալ փաշայի հրամանը իր բոլոր թեմերուն, եկեղեցւոյ պաշտօնեաներուն միջոցաւ, եւ մասնաւոր եկեղեցականներ կը դրկէ Զէյթուն, Հաճըն, Տէօրթ-Եօլ որպէսզի կացութեան բացառիկ դժուարութիւնները հաղորդեն ժողովուրդին:

Զինուորական փախստականներու պատճառաւ Զէյթունի չորս թաղապետները բանտարկուած էին եւ Նազարէթ Չաւուչը (յայտնի ժողովրդական հերոս) բանտի մէջ սպաննուած էր ծեծի տակ: Իր տղան եւ ուրիշ զինուորական փախստականներ կը բարձրանան լեռը եւ կը մերժեն յանձնուիլ կառավարութեան: Այդ խումբ մը

երբնտասարդներու արարքը կը համարեն Զէյթունցիներու ապստամբութիւն եւ այդ պատճառաւ կը սկսին չարաչար նեղել քաղաքացիները: Լուրը կը հասնի փախստականներուն, որոնք զայրացած իրենց ընտանիքներու կրած նեղութիւններէն՝ կ'իջնեն քաղաք, կը յարձակին բանտին վրայ, կ'ազատեն չորս թաղապետները, որու միջոցին կոխ տեղի կ'ունենայ, բայց երկուստեք մարդու կորուստ չեն ունենար: Տեղւոյն կառավարութիւնը կը մեծցնէ դէպքը եւ արդարացնելու համար իրենց անկարողութիւնը, որ չէին յաջողած բանալ պաշտպանել, կը յայտարարէ թէ Զէյթուն ապստամբած է եւ շուտափոյթ օդնութիւն անհրաժեշտ է: Անմիջապէս Հալէպէն 3000 ճիւղեր կը մեկնին, առաջնորդութեամբ Փահրի փաշայի, որուն կը միանան Այնթապի եւ Մարաշի պահեստիները, որով 10.000նոց բանակով մը կը քալեն Զէյթունի վրայ: Ոեւէ դիմադրութեան չհանդիպելով, զօրքը կը մտնէ Զէյթուն: Անմիջապէս կը ձերբակալեն մինչեւ 30 տարեկան 300 տղամարդ եւ կը քչեն Դամասկոսի Հաւրան անապատը: Արար զինւորներ տեղեակցուցին, որ այդ 300 հոգին ամբողջովին սպաննուած են անապատին մէջ: Զէյթունի մնացեալ ժողովուրդը մաս-մաս ենթարկուեցաւ տեղահանութեան: Ասոնք Ղրկուեցան Պէրէճիք, Ուրֆա և Հաւրան, ուր մնացին երկար ատեն: Հաւրանի մէջ տեղահան եղած Զէյթունցի ժողովուրդին պաշտպանութիւնը յանձնուած էր թուրք զինուորականի մը, որ մեծ ատելութեամբ վարուած էր իր հսկողութեան յանձնուած ժողովուրդին հետ: Անիկա կը յորդորէր իր զինուորները վերէժ լուծել այդ կիներէն ու աղջիկներէն, որոնք շատ

Թուրք զինուորներ սպաննած էին*) : Երկու երկրա-
չափներ, որ անցեր էին Հաւրանէն, պատմեցին այս
ծանր դրութեան մասին : Թուրք զինուորականը երկու
զէյթունցի հայ աղջիկներ զրկած էր իբրեւ նուէր այդ
երկրաչափներուն զանոնք պատուելու համար :

Զէյթուն տեղահան եղած ժամանակ թոյլ չեն տար
ժողովուրդին իրենց հետ առնել ոչ գոյք եւ ոչ ալ փո-
խադրութեան միջոց : Միայն ունէին իրենց կրած հա-
գուտը եւ երեք-չորս օրուան պաշար : Զէյթունը հա-
յերէն դատարկելէն անմիջապէս ետքը կը լեցնեն ուս-
մելիցի թուրք գաղթականներով :

Կառավարութիւնը ամբաստանեց Տէօրթ-Եօլի հա-
յերը, թէ յարաբերութեան մէջ մտած են անդլիական
մարտանաւերուն հետ, եւ այդ պատրուակով հաւաքեց
այրերու մեծամասնութիւնը, որոնք ուղարկուեցան
դիրքեր շինելու, խրամներ փորելու եւ այլ ծանր աշ-
խատութեանց : Իսկ կիները եւ մանուկները տեղահան
ընելով զրկեցին Հալէպ, ուր հանդիստ վիճակի մէջ կը
մնան, մահաւանդ որ այրերն ալ իրենց յանձնուած
գործը լրացնելով, եկան միացան իրենց ընտանիքնե-
րուն Հալէպի մէջ եւ շրջակայքը, ուր կը զբաղին երկ-
րագործութեամբ եւ մանր առուտուրով :

Յահրի փաշան Զէյթունը տեղահան ընելէ ետքը իր
զինուորներով անցաւ Հաճըն : Այս տեղ հայ ժողովուր-
դը տեսած ըլլալով արդէն միւս տեղերու տեղահան

*) Ակնարկութիւն գէյթունցի կիներու եւ աղջիկ-
ներու յարձակումին զօրանցիկն վրայ, երբ կացինով,
մուրմով եւայլն, յանկարծակիի բերելով իրենց սպառ-
նացող բանակը, կոտորեք էին զանոնք :

եղած ժողովուրդին թշուառութիւնը, խաղաղ դիմադրութիւն ցոյց տուաւ: Ամէն ընտանիք իր տան մէջ ամբարփակուած էր, շուկան եւ փողոցները ամալի էին, կառավարական հրամանները, որ մունետիկներու միջոցաւ կը ծանուցանէին փողոցներուն մէջ, կարծես թէ պարապ քաղաքի մը կ'ուղղուէին: Չուղեցով բուռն միջոցներու դիմել, Ֆահրի փաշան բանակցութեան մտաւ տեղուոյն երեւելիներուն հետ եւ խոստումներ ընելով ու հաւաստելով, թէ պատերազմական անհրաժեշտութիւն մըն էր տեղահանութիւնը, թէ ժողովուրդը անվնաս պիտի հասնէր իր տեղը եւայլն, յաջողեցաւ համոզել:

Հաճընի հայ ժողովուրդը փոխադրուեցաւ Հալէպի շրջանները:

Կիլիկիոյ ամէնէն չէն եւ ծաղկեալ քաղաքներէն մէկն է Այնթապ: Ունի 70,000 բնակիչ, որուն 30,000ը հայ են, իսկ մնացեալը քուրդ եւ թուրք:

Օսմանեան Սահմանադրութեան հռչակումէն անմիջապէս ետքը կազմուեցաւ Կրթական յանձնաժողով մը, որուն նպատակն էր Կիլիկիցիներու նիւթական օգնութեամբ հաստատել բարձրադոյն վարժարան մը: Ատանայի ջարդը արդեւք եղաւ այս ծրագրին, բայց Այնթապցիք իրենց սեպհական միջոցներով բացին ձեմարան մը, որուն նպատակն էր ուսուցիչներ պատրաստել: Հակառակ որ Այնթապցիք ընդհանրապէս թրքախօս են, մեծ սէր ունին դէպի ուսմունք եւ ազգը, եւ մեծ ոգեւորութեամբ նոյնիսկ տարեց մարդիկ կը ջանային հայախօս դառնալ: Ունէին 10 երկսեռ վարժարան, որբանոց, արհեստանոց եւայլն: Բացուած էին նոր լսարաններ, արանց եւ կանանց համար սուսնձին եւ կազմակերպած էին թատերախումբ մը: Բնականէն օժտուած ըլլալով, մեծ յառաջդիմութիւն ցոյց կուտա-

յին երաժշտական արուեստի մէջ մասնաւորապէս :

Ուսման սէրը, քաղաքակրթութեան ընդունակութիւնը, որ զիրենք կը յատկանշէ, Այնթապը դարձուցած էր Կիլիկիոյ կրթական կեդրոնը : Իրենց դպրոցներն են, որ ամէն կողմերուն կը հայթայթէին ուսուցիչ, ուսուցչուհի, քահանայ, վարդապետ եւայլն : Ամէն տարի ժողովուրդին ծախքով երեք ընդունակ ուսանող կը զրկէին Ամերիկա եւ Եւրոպա, ինչպէս նաեւ բաղձաթիւ սաներ կը պահէին տեղւոյն Ամերիկեան Գոլէճին մէջ, որուն բոլոր աշակերտները Հայեր էին :

Այնթապի տնտեսական վիճակն ալ շատ բարդաւաճ էր . շրջակայ այգիները մեծ առատութեամբ կուտային ամէն տեսակ պտուղներ, մասնաւորապէս խաղող եւ պիստակ : Օսմ . Սահմանադրութենէն ետքը մեծ զարկ ստացաւ վաճառականութիւնը եւ Այնթապ կեդրոնը դարձաւ Հայաստանի հարաւային — արեւմտեան նահանգներուն (Սերաստիա, Խարբերդ, Երզնկա, Մալաթիա եւայլն) : Արհեստները շատ զարգացած էին եւ Հայերու ձեռքն էին, մանաւանդ ջուլհակագործութիւնը : Կանանց ձեռագործները շատ յարգի էին մանաւանդ Ամերիկայի մէջ : Միայն Այնթապ քաղաքին մէջ շաբաթական 200,000 զրուշի ապրանք կը գնուէր : Այնթապ լեռնային ըլլալով՝ շատ մաքուր օդ ունի, առատ եւ վճիտ ջուր եւ աղբիւրներ : Ժողովուրդը բարեկազմ է, ընդհանրապէս դեղեցկադէմ եւ շատ ուրախ տրամադրութեան տէր : Խաղաղ ժամանակ դրեթէ միշտ տօնական եւ զուարթ երեւոյթ ունի այս շրջանը :

Երբ տեղահանութեան հրամանը եկաւ, քաղաքին հարուստներուն մէկ մասը յաջողեցաւ կաշառքի շնորհիւ այս կամ այն կերպ ազատուիլ : Կառավարութիւնը հինգ օր պայմանաժամ տուաւ ժողովուրդին, որմէ ետք

Թաղ-Թաղ սկսան աքսորել: Այնթապցիք հապճեպով ծախեցին իրենց տուները եւ գոյքերը, եւ կառքով, ձիերով, ուղտով կամ էջով համեմատաբար հանգիստ ճամբայ ելան, անտէր ձգելով իրենց շէն եւ ղեղեցիկ երկիրը: Աքսորեալ ժողովուրդը բաժնուեցաւ չորս — հինգ ճիւղերու. մէկ խումբը հասաւ Սաճուրի կայարանը, ուր մնաց որոշ ժամանակ, հակառակ որ այդտեղ ապրիլը բաւական դժուար էր:

Ես Սաճուրի կայարանը կը դտնուէի, երբ տեղի ունեցաւ տարօրինակ հանդիպում մը: Այնթապցի հայ զինուորները թուրք բանակին հետ կը տեղափոխուէին Պաղատա: Երբ կառախումբը կեցաւ եւ զինուորները իջան սլահ մը ջուր խմելու, յանկարծ հայ զինուորները նշմարեցին խուռն բազմութիւնը տեղական ժողովուրդին: Զինուորները կը ճանչնան իրենց ազգակիցները եւ այլեւս չանսալով ոեւէ հրամանի, կը խառնուին դժբախտ ժողովուրդին: Կը համբուրուին, կը գրկախառնուին, մանուկներ իրենց հայրերը կը գտնեն, դողդոջուն պառաւներ կը փարին իրենց զաւակներուն, լաց եւ ողբ կը բարձրանայ ամէն կողմէ: Հայ զինուորները չեն կարող հասկնալ այս անսպասելի դժբաղդութեան պատճառը եւ ղիմելով իրենց հազարապետին, կը բողոքեն:

— Ի՞նչ, իրենք երթան իրենց կեանքը զոհելու եւ իրենց ընտանիքները, իրենց զաւակները ենթարկուին այդ սոսկալի կացութեա՞ն: Ի՞նչ յանցանք կարող էին գործել կիներ ու երախաներ, որոնց այրերը եւ հայւները թրքական բանակին մէջ կը ծառայէին: Հազարապետն ալ կը շուարի, ինքն ալ չի հասկնար. կը ջանայ ամօքել իր հայ զինուորներուն զայրոյթը, որոնցմէ դժգոհելու ոեւէ պատճառ չէր ունեցած մինչեւ այն ա-

տեն: Կը յուսադրէ դիրենք, կը խոստանայ կարգադրութիւն մը ընել, երբ ահա խիստ հրաման մը կուզայ եւ կ'ազդարարէ հազարապետին՝ վարուիլ առանց խնայելու: Ամէն կողմէ հրամաններ կ'որոտան զօրքը բաժ-



Գիրման սպայի մը ալպովէն: Կոստացոս չայ մը հոգեւարք է:

Նելու ժողովուրդէն: Բռնի կերպով կը յաջողին հայ Այնթապցի զինուորները խլել իրենց ընտանիքներէն: Զգուշութեան համար դանձք կը բանտարկեն փակ վահոններու մէջ: Այսպէս կը բաժնուին խեղճերը, բայց զայրոյթի, բողոքի, աղերսանքի ազաղակները երկու կողմէն կը լսուին տակաւին, երբ կառախումբը շտապով կը մեկնի: Կէս ճանապարհին, անմիջապէս որ կարելի կ'ըլլայ, հայ զինուորները կը նետուին պատուհաններէն, իրենց ընտանիքներուն օղնութեան հասնելու համար, բայց իբր ըմբոստ եւ փախստական՝ հետապնդութեան կ'ենթարկուին եւ շատերը կը դընդակահարուին: Միւս կողմէ, Սաճուրի սպասող Այնթապցի տեղահանուած ժողովուրդը հասցնեպով զրկեցին

Պունսուր (Յփրատի եւ Հալէպի մէջտեղ) : Այնթապի ժողովուրդին երկրորդ խումբը բերին Պիրէճիք, ուր մնաց 20 օր, լաստեր պատրաստելու համար : Կառավարութիւնը նախապէս խոստացած էր փոխադրութեան միջոցներ հայթայթել, բայց վերջին պահուն յայտներ էր թէ փայտը կը պակսի, կարելի չէ լաստեր տրամադրել եւ թէ պէտք էր ոտքով երթալ : Այն ատեն դժբախտ ժողովուրդը յուսահատած, կանանց դարդեղէնները կը հաւաքէ, կը յանձնէ կառավարութեան, որպէսզի ի փոխարէն հարկ եղած նիւթը հայթայթէ եւ իրենք շինեն իրենց լաստերը : Այս պատճառով 300ի չափ Հայեր Յփրատի դիմացի ափը բաց օդին կը սպասէին 15 զոյգ լաստերու շինութեան : Ամէն օր թուրքեր եւ Քուրդեր կուգային աղջիկներ եւ կիներ գնելու, հակառակ որ Այնթապիք միշտ սոսկումով կը մերժէին այդ սոսաջարկութիւնները : Բարեբախտաբար հսկիչ ժանտարմաները թէեւ արդէլ չէին ըլլար որ այդ կարգի բանակցութեան մտնեն թուրքերը Հայերուն հետ, բայց թոյլ չէին տար նաեւ որ մերժումի պարագային չարաչար վերաբերուին խեղճերուն հետ : Երբ լաստերը պատրաստուեցան, ժողովուրդը ճամբայ ելաւ եւ Յփրատի վրայով հասաւ Ճարապլուսի առաջ : Հսկիչ ժանտարմաները եւ մակուկավարները անմիջապէս դիմեցին տեղւոյն դայմագամին եւ արտօնութիւն խնդրեցին իրենց առաջնորդած ժողովուրդը գետը թափելու : Գայմագամը յայտնեց որ անոնք պէտք է հասնին իրենց սահմանուած վայրը : Փոշիներու մէջ ծածկուած, մեծ ու փոքր, խառն, բոկոտն, ցնցոտիներ հազած կը քալէին : Թոյլ չէին տուած իրենց ոեւէ գիւղ կանգ առնել, հանգստանալ կամ կազդուրուիլ : Փախստական խայիններ կը կոչէին զանոնք, եւ խաղալիք դարձեր էին ժանտարմաներու անխղճութեան : Իրենց հետ կային

մանուկներ, որոնք իրենց մօր քղանցքներէն կախուած կը քաշքշուէին: Հիւանդ թէ մատաղատի՛ տարրերութիւն չունէր իրենց դահիճներուն համար, որոնք մըրակի հարուածներով կը հարկադրէին, որ այդ դժբախտները յառաջանան ժանտարմաներու ճիւղերուն արագութեամբ: Ամէն տեղ թուրք ժողովուրդը լուտանքներով եւ ծաղրով կը դիմաւորէր զիրենք:



Շախրուրներ կամ տափանաւեր, որոնցմով Թաւրիսը հազարաւոր ափսոսելիներ նոյրատի ակնբուժ վրայ նետեցին

Այնթաղի ժողովուրդին միւս երկու խումբերը գընացքներով զրկուեցան Համա եւ Հոմա:

Կիլիկիոյ զանազան վայրերուն տեղահանութիւնը յաջորդաբար տեղի ունեցաւ: Մարաշ եւ իր շրջակայքը, Ատանա, Մերսին, Սիւ գրեթէ նոյն պայմաններու մէջ զրկուեցան իրենց տունէն, տեղէն եւ բարեկեցիկ կեանքէն: Հարուստները կը մնային Հայէսլ եւ շրջակայքը, բայց անոնք որ սեւէ միջոց չունէին իրենց ծը-

նընդաւլայրէն զուրս ասըրելու եւ բեռ կ'ըլլային կառավարութեան, կը զրկուէին զէսլի Միջագետք:

Կիլիկիոյ բնակչութեան տեղահանութիւնը եղած է համեմատաբար կանոնաւոր, զսնէ բացարձակ բնաջնջման չեն ենթարկուած այրերը եւ իրենց սահմանուած աքսորավայրերը հասնելէ ետք՝ կրցած են միանալ իրենց ընտանիքներուն եւ կերպով մը քաշքշել իրենց բաժին ինկած գփուարին կեանքը:

ՀԱՐՈՒՍՏ ԳԻՒՂԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ .— ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՐԵՒՈՅԹԸ, ԳԻՇԵՐԱՅԻՆ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐ .

Այնթաղի հիւսիսային կողմը Եփրատի մօտ կար 150 տուննոց հայ հարուստ գիւղ մը, որ գլխաւորաբար կը զբաղէր պիստակի արտածութեամբ, որով ունէր տարեկան 200,000 ոսկիի եկամուտ: Տեղահանութեան հրամանը կ'արձակուի եւ երկու օր պայմանաժամ կուտան գիւղացիներուն որպէսզի մեկնելու պատրաստուին: Շրջակայ քուրդ գիւղացիները վաղուց ի վեր կը նախանձէին Հայերու վիճակին եւ յաճախ գաղտնաբար կուգային կը վնասէին ծառերուն, սրոնք Հայերու հարստութեան աղբիւրը կը կայմէին: Ատիժը այս անգամ կը ներկայանայ շատ աւելի նպաստաւոր կերպով: Մեկնելու դատապարտուած ժողովուրդը տակաւին գիւղն էր, երբ Քուրդերը կը յարձակին եւ կը սկսին կողոպտել եւ զժբախտ ժողովուրդին կայքերը փոխադրել իրենց գիւղերը: Միեւնոյն ժամանակ ժանտարմաները եւ զինուորականները քուրտերու առաջնորդութեամբ կը պեղէին պետիւնները, կը փլցնէին պատերը եւ թազնուած ոսկի կը փնտռէին:

Հայ գիւղացին ականատեսս ըլլալով այս կողոպուտին, յուսահատ կերպով ճամբայ կ'ելլէ, հաստատ համոզումով որ զէպի մահը կ'երթայ :

Աքսորեալներու տխուր կարաւանը կը յառաջանայ 10 ժանտարմայի հսկողութեան ներքեւ, որոնք իրենց անպութ քմահաճոյքներուն համեմատ, կը չարչարէին ժողովուրդը : Կիները եւ այրերը առանձին խումբերու բաժնեցին եւ նոյնիսկ գիշերները, երբ կը կենային, թոյլ չէին տար, որ մարգիկ իրենց ընտանիքներուն մօտենան եւ որեւէ կերպով անոնց օգնեն : Միեւնոյն ժամանակ այրերը խումբ խումբ կ'ենթարկէին տաժանելի աշխատանքներու . ճամբաները հարթել, քարերը մաքրել եւ ուրիշ նման դբադումներ տալով, թոյլ չէին տար, որ պահ մը հանգստանան : Երբեմն ալ զանազան պատրուակներով կը տանէին Եփրատի եզերքը ուր յանկարծակիի բերելով, մէկ մէկ կը գլտորէին գետը :

Երբ մուտքը պատէր աքսորեալները կ'իջնէին իրենց էշերէն եւ կանգ կ'առնէին այն տեղին վրայ, որ իրենց ժանտարմաները ընտրէին : Կիները ու երախաները առանձին ու անպաշտպան էին, ու ամէն գիշեր իրենց վրայ հսկելու պաշտօն ունեցող ժանտարմաները միանալով չըջակայքը դռնուող ժանտարմաներուն, կը կողոպտէին եւ կը խլէին, ինչ որ ունէին զարգեղէն կամ դրամ :

Յունիսի վերջերն էր, երբ ձարապլուսի մէջ լսեցինք, որ հայ դաղթականներ կուգան : Անմիջապէս դուրս ելանք եւ ահա տեսանք, որ մօտակայ բլուրէն վար կ'իջնէին աքսորեալները : Յոգնութենէն, ջերմութենէն այլակերպ դարձած էին : Էշերը գոյգ գոյգ կ'ընթանային եւ ամէն մէկուն վրայ կար կին մը, երախաներ առջեւը եւ ետեւը : Երբեմն ալ մէկ հատ գիրկը : Կի-

ները գլուխնին ճերմակ լաթեր փաթթած էին արեւէն պաշտպանուելու համար եւ ճամբու դժուարութիւնները, հոգեկան եւ Ֆիզիքական տառապանքը այնպիսի վիճակի մը վերածած էին զիրենք, որ անկարելի էր երիտասարդը պառաւէն զանազանել: Այրերու խումբն ալ կը ներկայացնէր նման պատկեր: Արեւակէզ, պապակած, շուարուն, անոնք կը նայէին կարծես առանց տեսնելու եւ իրենց շարժումները անկապ դարձած էին սարսափի ու ցաւի ազդեցութեան ներքեւ:

Այսպէս կը յառաջանային, շտապելով եւ ժանտարմաներու հապճեպ եւ խռպոտ ձայներուն հնազանդելով: Երբ առուակի մը մօտեցան, ուրկէ պէտք է անցնէին, խելագարներու պէս իջան իրենց էշերէն եւ ինկան առուակին վրայ, որուն ջուրը պզտոր էր եւ աղտոտ: Մարդ կենդանի, մեծ, պզտիկ, անյազաբար դիմեցին դէպի ջուրը եւ իրենց աճապարանքին մէջ խենթի աննպատակ շարժումներ ունէին, ոտքերնին, կուրծքերնին կը թըրջէին եւ չէին յաջողեր բերաննին մօտեցնել ջուրին: Ոմանք կը նուաղէին, իսկ կիներէն շատերը ամօթի ամէն զգացում կորսնցուցած՝ դայրոյթով եւ հապճեպով մէկ կողմ կը նետէին իրենց հագուստները եւ մերկանալով, ջուրին մէջ կը նետուէին: Այս բոլորը կատարուեցաւ տարօրինակ լուութեան մէջ եւ արագութեամբ, եւ ոմանց շրթունքը հազիւ թէ ջուրին հասած էր, երբ ժանտարմաները սկսան պոռալ եւ սպառնալ: Զանազան հրամաններու գոռում դռչումին մէջ կը լսէինք սա խօսքերը. «Ալ կը բաւէ, շատ հանգիստ ըրիք»:

Մանուկները ցրուած էին այս ու այն կողմ եւ շըրջակայքէն եկած Գուրդեր օգուտ քաղելով շփոթութենէն, հապճեպով կը դարձնէին երախաներուն դէմքերը, կը նայէին եւ կ'ողզէին զեղեցկազէմ մանուկները իրենց

մէջլահին (վերարկու) մէջ պահելով տանիլ: Այն ատեն մօտիկնալով Քուրդերուն, միջամտեցի եւ արգելք եղայ որ երախաները առեւանդեն: Ճարապլուսի Հայերը տակաւին քաղաքացիական իրաւունք կը վայելէին եւ իմ միջամտութիւնս ասարդիւն չանցաւ:

Աքսորեալներու կարաւանը կազմուեցաւ եւ կամաց կամաց քաշուեցաւ դէպի ճամբան: Ջուրի ափին մնաց ծեր կին մը, որու վրայ ինկած մօտաւորապէս 17 տարեկան աղջիկը կուլար եւ մայրիկ կը կանչէր: Կինը դրեթէ անշնչացած էր: Ուրիշ տարեց կին մը նուազած պառաւին քոյրն էր, կուրծքը ծեծելով կուլար եւ եղբերբդ (մէնի) կ'ըսէր: Ուրիշ երկու ծեր մարդիկ մօտակայ առուակէն իրենց Փէսերով ջուր կը բերէին, ժանտարման վերջապէս նշմարեց ջուր բերող այրերը: Անոնք հարկադրուեցան մեկնիլ եւ մնացին միայն կիները, որոնք կը շարունակէին իրենց լացը երգել: Այդ պահուն քանի մը քուրդեր, անոնց շուրջը կեցած կը սպասէին, որ կարաւանը անհետանայ եւ կարենան յափշտակել դեղեցիկ ու երիտասարդ աղջիկը:

Ես ալ այնտեղ կեցած էի: Աւելի յարմար սեպեցի աղջիկը եւ մօրաքոյրը առաջնորդել դէպի կարաւանը իրենց գիւղացիներուն մօտ եւ յորդորեցի զիրենք հետեւիլ ինծի: Մայրը մեռած համարեցինք եւ լաթով մը ծածկելով դայն, հեռացանք: Տարեց կինը կը շարունակէր երգել իր տխուր երգը եւ երբեմն ետ կը դառնար տեսնելու համար քրոջ դիակը, իսկ աղջիկը կը հեծեծէր:

Աքսորեալներու կարաւանը հասաւ Ճարապլուս եւ եկաւ կեցաւ գայմազամի դրան առջեւ: 800 հողիէ բաղկացած խումբ մըն էր, իջած էին էջերէն, յողնած, անօթի վիրաւոր, արցունքը երեսնուն, աչքերնին յառած

դէպի կառավարչատան պատուհանները՝ հրամանի կը սպասէին: Ժամ ու կէս այդ անձկալի վիճակին մէջ իրենց տրուելիք վճիռին սպասելէ ետքը դայմագամը հաճեցաւ հրամայել, որ մեկնին մօտակայ գիւղի մը դաշտերը, գիշերը հոն անցընելու համար:

Գարաւանին հսկող ժանտարմաները իբր վարձ պահանջեցին տեղահան եղած ժողովուրդին շնորհիւ էջերը, որոնցմէ ամէնէն գեղեցիկ 5 ճերմակ էջերը նուիրեցին դայապամին: Անկէց ետքը ամէն օր կը տեսնէի որ դայմագամին սղաքը կը հեծնէին այդ էջերը եւ պլատոյտի կ'երթային:

Վերադարձիս ուղեցի երթալ տեսնել, թէ ինչ եղաւ այդ կլինը որ մեռած համարեցինք, բայց նկատելով որ Գուրաերը լարուած են իմ դէմ, ես անձամբ չի գացի եւ ղրկեցի տեղւոյն երկաթուղիի գիշերապահ հայախօս քուրդ Ալի Տային: Մութիւն մէջ անչռուկ գիշերապահը կը մօտենայ պառաւին եւ կը տեսնէ, որ քուրդ մը կը փորձէր բռնաբարել այն 70 տարեկան անկենդան կլինը: Ալի Տային կը յարձակի Գուրտին վրայ որ կը փախչի ծածկոյթն ալ հետը տանելով: Գիշերուան զովութիւնը եւ Ալի Տայիին ջանքերը կը յաջողին վերջապէս կլինը սթափեցնել: Ուշ ատեն բերաւ դայն մեր մօտ, եւ մենք գիշերապահին եւ ուրիշ Գուրտի մը օգնութեամբ դայն ղրկեցինք աքսորեալներուն գտնուած տեղը որպէսզի իր աղջկան յանձնուի:

Լսելով թէ այս գիւղացիները որքան հարուստ էին եւ յուսալով որ տակաւին իրենց քով կրնան ունենալ թաղնուած ոսկի եւ զարդեղէն, տեղւոյն ժանտարմայի գօմանտանին ընչաքաղցութիւնը կը դրդուուի եւ կէս գիշերին մէկ քանի ժանտարմաներու օգնութեամբ կը յարձակի խուճրին վրայ: Իրարանցումէն օգուտ քաղելով,

կառավարութեան պաշտօնեաները կը սկսին մէկ մէկ խուզարկել, մերկացնել կիները, այրերը եւ մանուկները: Կը կոզոտուեն ու կը հաւաքեն դրամ, ոսկի, զարկեղէն որ տակաւին յաջողած էին պահել իրենց հաւուստներուն ծալքերուն մէջ այդ հարուստ գիւղի դժբախտ աքտորեալները:

Նոյն գիշերն էր, ուրիշ խումբ մը հայեր, այր ու



Գերման սպայի մը սպաննէմ: Ինչքե կը զուարմանայ
հաց ցոյց տալով սովաւար հայ երախտներու:

կին խառն, որոնք եփրատի աջ եզրի գիւղերէն տեղահան
եղած էին, կ'անցընէին գիշերը ճարասպառուսի մօտ բաց
դաշտին մէջ:

Չափազանց խաւար էր, այլեւս ոչ մէկ շշուկ այդ
ճանր ու խաւար գիշերին մէջ:

Տեղահան եղած ժողովուրդին խումբը ունէր իր

պահակները, որոնք փոխն ի փոխ կը հսկէին, որպէսզի ոեւէ յարձակում զիրենք դոնէ յանկարծակիի չի բերէ: Կէս գիշերը անցած ըլլալով, պահակները կը վերնան եւ իրենց հետ գտնուող քահանան գիշերային եւ վերջին աղօթքը ընելէ ետքը, ամէն մրմունջ կը դադրի եւ յոգնութենէ սպառուած խումբը կը թաղուի խոր քունի մէջ: Հսկող ժանտարմաները նախապէս հեռացած էին դիտամար եւ ժողովուրդի այդ բեկորը կը գտնուէր այդ պահուն անոք եւ անպաշտպան, կորսուած՝ անծանօթ եւ անյայտ տարածութեան վրայ:

Տեղւոյն երկաթուղիի գիծի պաշտպան չէրքէզ Մուստաֆա պէյ եւ թուրք զինուորական Հասան էֆէնտի, որ Ատանայի կոտորածին վատ դեր կատարած ըլլալուն կախաղանի դատապարտուած եւ յետոյ ազատուած էր, ընկերակցութեամբ քանի մը զինուորներու եւ խումբ մը չէրքէզներու միակ լատերով մը կը փնտռեն խաւարին մէջ հայ աքսորեալները: Չէրքէզները կը հետախուզեն ամէն կողմ եւ ահա իրենց սրած ականջներուն կը հասնի ծանր շնչառութեան հեւքը հարիւրաւոր դժբախտներուն:

Թուրքերը առաջին պահու շուարումէն օգտուելով 6-7 աղջիկ կը տանին եւ կը վերադառնան դէպի հայերը, կողոպուտի համար: Շատերը արթնցած են արգէն եւ իրարու ձայն կուտան: Ինչքա՞ն անգամներ ընդոստ արթնցած են այսպէս, երբ իրենցմէ մէկը կամ միւսը գէշ երազներու ազդեցութեան տակ կը պոռայ, սոսկուամով եւ արհաւիրքով: Այնքա՞ն յոգնած են եւ իրենց ջլատուած անդամները իրուած են խոնաւ աւազին մէջ, որ հակառակ իրենց խոովքին չեն ուզեր շարժիլ եւ իրարու կը մրմնջեն՝ «բան չի կայ, բան չի կայ»...

Այդ միջոցին չէրքէզները եւ զինուորները կը յար-

ճակինն Հայերու վրայ եւ զէնքի կոթերով կը հարուածեն ու ամբողջ խումբը տակն ու վրայ կը դարձնեն: Մարդիկ կը ջանան իրենց կիները ու երախաները վերցնել, անկիւն մը տանիլ: Սելահորոյս վիճակի մատնուած, շատերը քարացած կը մնան. քուն են թէ արթուն, ո՞ր կողմէ է յարձակումը, ի՞նչ կ'ուզեն իրենցմէ: Մղձաւանջային շփոթութիւն մը կը տիրէ: Մութը այնքան սաստիկ է, որ զիրար չեն ճանչնար, թշնամին ու հարազատը չեն կարող որոշել: Յարձակողներուն հայհոյութիւնը, անէծքը կը խլանան այն սոսկուածի եւ ցաւի միահամոյն աղաղակին մէջ: Սուրինները մութին եւ շփոթութեան մէջ կը խրուին կեանքով բաբախուն մարմիններու մէջ: Ոտքերու տակ կը կոխոտուին վերաւորները եւ մանուկները, կիներ աննշալատակ կը վազվզեն, կը զարնուին, իյնալէ առաջ սուր ճիչերով կը գոչեն իրենց վերջին ամենասիրելի անունը, մայրի՛կ... Հայկանո՛ւշ... եաւրո՛ւմ...

Անդին լապտերին մօտ խումբ մը չերքեզներ եւ զինուորներ անվրդով կը լրացնեն իրենց կազմակերպած գործը: Մէկիկ մէկիկ կը բերեն իրենց մօտ աքսորեալները, կը խուզարկեն, կը մերկացնեն, կ'առնեն ինչ որ գտնան՝ դրամ, զարդեղէն ու կը լեցնեն տոպրակ մը: Կ'առնեն նաեւ լաւ հագուստները փոխարէն ցնցոտիներ տալով: Կիներ եւ աղջիկներ չեն ուզեր մերկանալ այդ վայրենիներուն դէմ, բայց չերքեզները բռնի կը պատուեն անոնց հագուստները եւ գոմանտանը ու զինուորականը կը ծիծաղին ու կը զուարճանան այդ խղճալի մերկութիւններու վրայ:

Կողոպուտը կատարելէ ետքը չերքեզները եւ զինուորները հեռացան: Այն ատեն եկան տեղահանեալ ժո-

դովուրդին վրայ հսկելու պաշտօն ունեցող ժանտարմաները եւ հրամայեցին հայերուն, որ լապտերին շուրջ ամփոփուին: Մութին մէջ ցիր ու ցան ելած ժողովուրդը սկսաւ խմբուիլ խարխափելով: Ժողովեցին դիակնացած մանուկները, քակեցին առեւանգուած սղջիկներու կապանքները եւ սկսան հեծկլտալով արտասուել:

Մանրամասնօրէն տեղեկանալով բոլոր անցուղարձին եւ նկատելով, որ տեղւոյն դայմազամբ լաւութեան հետք մը ցոյց տուած է ուրիշ աւիթներու մէջ, նոյն այդ յարձակումին ենթարկուող խումբէն երկու երիտասարդ առնելով հոտերնիս, դիմեցինք կռուալարութեան եւ բողոքեցինք: Գայմազամբ լսելէ ետքը՝ մեզ զրկեց իր օղնականին, այն հարիւրապետ Հասան էֆէնտին որ Հայերու յանդնութենէն դայրացած՝ նախատական խօսքեր ընելէ ետքը մեզ զրկեց չերքեզ Մուստաֆա պէյի մօտ: Երբ երկու երիտասարդները տեսան չերքեզը, ճանչցան զայն, տժգունեցան եւ ինձ ըսին, թէ այս մարդը երէկ դիշեր աւազակներուն դուռն էր: Զերքեզը վաղուց ի վեր զիս կը ճանչնար, իր խոփոռ աչքերը դէպի ինձ դարձուց եւ սպառնաց:

Յետոյ դառնալով երկու երիտասարդներուն, ըսաւ խստութեամբ.— եկէ՛ք երթանք չարադործները գլտնանք: Տարեր էր զանոնք հին բերդի մօտ Եփրատի եզերքը եւ դաշոյնով մէկ մէկ զարկեր եւ դիակները նետեր էր գետափը:

Այս դէպքը պատճառ եղաւ, որ քանի մը ամիսէն ճարապուսէն մեկնիմ: Տեղւոյն հայ բանուորները բողոքեցին գերմանական երկաթուղային ընկերութեան: Մուստաֆա պէյը հեռացուցին, Հասան էֆէնտին բաւական նեղեցին եւ դանդատը հասաւ մինչեւ ձէմալփաշային:

Իսկ աքսորեալներու խումբը, որ պէտք էր քանի մը օր հանդէք ճարասլուսի մօտ, նոյն օրն իսկ ճամբայ հանեցին դէպի Միջագետք:

ՀԱՅ ՄԱՅՐ ՄԸ .— ՓՈՒՔՐԻԿՆԵՐ ԿԸ ԾԱԽՈՒԻՒՆ.
ՅՈՅՆ ԿՆՈՋ ՄԸ ԴԵՐԸ .

Յուլիս ամսուան մէջ Պէրէճիկի շրջակայքէն եւ Եփրատի եզերքի զանազան վայրերէ հաւաքուած Հայեր հասան ճարասլուսի կայարանը՝ ընդամէնը 1620 հոգի՝ այր, կին խառն եւ իրենց քահանաները միասին: Հետեւեալ օրը զնայքով պիտի մեկնէին եւ դիշերը անցընելու համար իրենց յատկացուցած էին կայարանի կից դաշտը, որ անհարթ եւ քարքարուտ տարածութիւն մըն էր: Աքսորեալները ճամբորդած էին մասամբ հետիոտն եւ մասամբ էշերով: Ճարասլուս հասնելէ ետքը էշերը գրաւեցին:

Իրիկնամուտին ժողովուրդը սկսաւ քննալու տեղ պատրաստել: Քարերը կը հաւաքէին, դետինը կը հարթէին, բայց դետինը թաց էր եւ լպրծուն ցելս մը կը ներկայացնէր: Երկու օր առաջ յորդ անձրեւներ եկած էին, եւ ջուրը լճացած մնացեր էր քարերուն տակ: Յարեկուան սաստիկ տաքին յաջորդած էր թափանցող ցուրտ մը, եւ դետնի խոնավութիւնը բոլորովին անտանելի կը դարձնէր դրութիւնը: Այնքան յոգնած ու տանջուած էին տաժանելի ճամբորդութենէն, որ աքսորեալները սկսան ցրուիլ: Որոշ սահմանէ անդին անցնիլ անկարելի էր, այնպէս որ նստեցան քարերու վրայ, տարածեցին իրենց խոնջացած անդամները եւ շատերը, սպառած յոգնութենէ, նետուեցան խոնաւ աւազներուն:

մէջ: Մանուկները միայն կը հանգչէին իրենց մօր դիրկը, բայց քիչ մը չափահասները, չը դիմանալով կրած չարչարանքներուն կուլային: Առաւօտեան դէմ տեսայ գիրենք: Յուրտէն սլաշտպանուելու համար բնազդով մօտիկցած էին իրարու եւ կարծես միաձոյլ զանգուած մը կը կազմէին:

Արեւը բաւական բարձրացած էր, երբ դայմագամ պէյը իր կնոջ եւ զաւակներուն հետ դուրս եկաւ: Իրենց կ'ընկերանային երկաթուղիի վերաքննիչ յոյն Գոյնաբուլոս Էֆէնտին եւ իր կինը: Կիները զարդարուած մետաքսեայ հագուստներով՝ խրոխտ, ուրախ, ժպտելով եւ ծիծաղելով կը յառաջանային եւ կարծես հարսնիքի կ'երթային: Ասոնք կուգային դէպի հայ աքսորեալները: Երբ քահանան տեսաւ, որ պէյը իրենց այցելութեան կուգայ, վազեց դիմաւորելու եւ ձեռքերը դնելով պատառոտած վերարկուին կուրծքին, վրայ, խոնարհեցաւ դէպի դետին ու բարեւեց եւ դողդոջուն շըրթունքներով մաղթանք մը մըմնջաց:

Պէյը յայտնեց թէ կ'ուզէ պտոյտ մը ընել տեղահան ժողովուրդին մէջ: Ողորմելի քահանան շուարուն եւ խոովուած շտապեց դէպի իր հօտը եւ սկսաւ զոչել կերկերաձայն.

— Ելէ՛ք, ոտքի կանգնեցէ՛ք, դայմագամ պէյը կուգայ ձեզ այցելելու: Գոհ դէմքով, դիմաւորեցէք զինքը, մի՛ լաք, մի՛ աղերսէք, այլ բարեւի կեցէք:

Թուրքերը եւ Յոյները շարունակելով խօսակցիլ եւ ծիծաղիլ, կը մօտենան ժողովուրդին: Քահանային անձկալի դէմքին վրայ փոխն ի փոխ ցաւազին եւ բռնազբօսիկ ժպիտ մը կ'երեւայ, երբ հիւրերուն կը դառնայ եւ իր սարսափած նայուածքով կը կշտամբէ աքսորեալներէն մէկը կամ միւսը, որ հարկ եղած ակնածու-

Թեամբ բարեւի չէ կեցած, կքած ըլլալով ոեւէ ցաւով կամ տառապանքով:

Գայմազամը կը մտնէ խումբերուն մէջ, կը դիտէ մանուկները, կը սկսի քննել եւ հարցուփորձել: Տեղահան ժողովուրդը կը հասկնայ, որ պէյը մանուկ կը փնտռէ եւ երկիւղի սարսուռ մը կ'անցնի բոլոր մայրերուն վրայէն եւ ամէն մէկը կը չանայ իր զաւակը սահել քղանցքներուն տակ. ձեռքեր կը դողան անձկութենէ, նայուածքներ կը մոլորին, կին մը խելակորոյս կը գոչէ. — Ո՛վ Աստուած հարցն մերոց, մեր ո՞ր մեղքերուն քառութեան համար է այս ժամը:

Պէյը կը խոժոռի ու կը կենայ, իր սրտոյտը ապարդիւն անցած էր, չէր դտած այն որ կը վախաքէր: Մանուկներուն ընդդիմութիւնը, իրմէ փախելին, անոնց վտիտ ու տգեղ կերպարանքները զինքը կը յուսահատեցնեն:

Քահանան, դողահար, պէյին վատ տրամադրունէն անզամ մըն ալ կը խոնարհի, կը բարեւէ եւ կը ջանայ իր սարսափէ ծամածռած դէմքովը ժպտիլ, բայց դայմազամ պէյը զայրացած է եւ հակառակ քահանային խոնարհ վարմունքին, հակառակ խեղճ ժողովուրդին ակնածական բարեւին, անիկա կը բռնէ քահանային կուրծքէն եւ դայն ցնցելով կը սրտայ:

— Ո՞ր են լաւ մանուկները, ո՞ր էք սահեր, խայիններ, ես կ'ողբեմ, հիմակ կ'ողբեմ դեղեցիկ մանուկներ:

Հայհոյանքներու եւ սպառնալիքներու տարափ մը կ'իյնայ ժողովուրդին եւ ալեւոր քահանային վրայ, որ այլայլած, դրեթէ խելագար, կը դառնայ ժողովուրդին.

— Ճանրմ, տուէք, երեւան բերեք մանուկները,

տուէք, ամէն ինչ տուէք, մի բարկացնէք գայմազամ պէյը :

Ամբողջ ժողովուրդը կ'որոտայ գայրոյթով եւ անէծքով, իրենց յուսահատութեան թափին մէջ կը մոռնան երկիւղը, դրեթէ կենդանական գլուշութիւնը, որ զիրենք անբան վիճակի վերածած է : Քահանան շուարած՝ մէյ մը կը դառնայ գայմազամին, որ միշտ կը գոռայ, կը դառնայ ժողովուրդին, որուն գայրոյթը հետզհետէ կը մարի ազիոդորմ հեծեծանքի մը մէջ : Ծեր կիներ յուսահատական աղօթքներ կը մրմնջեն, մէկը չի համարձակիր տեղէն շարժիլ, կարծես ամենքն ալ անօրինակ աղէտի մը կը սպասեն :

Այդ միջոցին յոյն կիներ գայմազամին կը դիմէ եւ փաղաքշական խօսքերով կը ջանայ զայն հանդարտեցնել :

— Մի բարկանաք, պէյս, կ'ըսէ ծեքծեքալով, ես հիմակ զեղեցիկ մանուկները դուրս կը հանեմ, դուք այս Հայերուն խորամանկութիւնը չէք գիտեր : Ես կը գտնեմ, միայն թէ դուք հանդարտեցէք :

Իսկ Գոյնորուլոս էֆէնտին նոյնպէս կը ջանայ պէյը հանդարտեցնել եւ կ'ըսէ .

— Սպասեցէք մէկ վայրկեան, հիմա տիկինս ձեր փափաքածը կը բերէ :

Տիկին Գոյնորուլոս կը սողոսկի խումբերու մէջ, ուր խոփոռ, լռին եւ արցունքոտ դէմքերով կ'ընդունին զինքը :

Յոյն կիներ կը գտնէ վերջապէս ինը տարեկան որբ աղջիկ մը, որուն հայրը թրքական բանակին մէջ իբրեւ զինուոր մեռած էր, իսկ մայրը՝ աքսորի ճամբուն վրայ :

Անիկա նիհար դէմքով, ճերմակ մորթով, սեւ աչ-

քերով, առատ մազերով սիրուն աղջիկ մըն էր, որ դըլուխը ծածկած էր սեւ եազմայով մը, որ մօրը սուգի եազման էր: Տխուր էր եւ սրտաբեկ, բայց իր սիրուն զէմքը հաճելի կ'երեւայ պէյի հանրմին եւ որովհետեւ ոչ մէկ պաշտպան կամ տէր չունէր, զինուորի մը միջոցաւ զրկեցին պէյի տունը:

Աղջիկը մեկնելէ առաջ դիւսիկոր նայեցաւ հայ աքսորեալներու խումբին եւ կարծես կը վարանէր յառաջանալու: Իր աբրտում աչքերը կ'ըսէին.

— Ինձ վերջին համբոյր մը տուող չի կա՞յ...

Դրացիին կինը հասկցաւ որբուկին մտածումը, կանչեց զայն եւ ըսաւ.

— Եկուր, մօրդ տեղ ես համբուրեմ քեզի:

Եւ երկու այտերէն համբուրելով, զայն յանձնեց թշնամիին: Գայմագամ պէյը քիչ մը հանդարտած էր, եւ յոյն կինը քաջալերուած՝ մտած էր կրկին խումբերուն մէջ որ այս անգամ մանչ մը գտնէ: Յոյն կինը կը փնտռէր եւ հայ մայրեր աչքերնին գետին կը խոնարհէին, որպէսդի այդ կնոջ աչքերուն չի հանդիպի իրենց նայուածքը: Անիկա վերջապէս աքսորեալ կնոջ մը քրդանցքին ներքեւէն հանեց սիրուն մանուկ մը: Մայրը կ'աղերսէր, կուլար եւ ձեռքը ոտքը կը համբուրէր յոյն կնոջ: Բայց անիկա ամուլ կին էր եւ բնութիւնը զրկեր էր զինքը մայրական զգացումէ: Առանց ուշադրութիւն ընելու մօրը արցունքներուն սկսաւ պոռալ.—

— Պէ՛յ, պէ՛յ, հոս եկեք, տեսէք ի՞նչ սիրուն է:

Պէյը մօտեցաւ եւ ժպտեցաւ. իր ճաշակին յարմար էր այս մանկիկը: Հազիւ վեց տարեկան կար, գիրուկ էր, ճերմակ եւ սեւաչուրի:

Յոյնը ջանքեր կ'ընէր մանուկը խլելու մօրմէն, բայց

անիկա գերմարդկային ջանքեր կ'ընէր պահպանելու համար զաւակը եւ կուրծքին վրայ պինդ սեղմած էր իր մանկիկը: Մօրը այս յուսահատական վարուած դը-
գուանք կարծելով, մանկիկը գլուխը կը բարձրացնէր, մօրը երեսները կը համբուրէր, եւ պէյին տուած նի-
քելէ մէթալիքը ցոյց կուտար:

Յոյն պաշտօնեան կնոջը մօտ եկած էր եւ երկուքը մէկ պէյին կ'արժեցնէին եւ կը գովէին մանուկին գե-
ղեցկութիւնը, առողջութիւնը, լաւութիւնը: Խեղճ մայրը սարսափահար այս անցուդարձէն՝ կ'ուզէր զա-
կին հետ փախչիլ եւ խումբին մէջ անհետանալ, բայց պայմապամին հրամանաւ զինուորները բռնած էին զին-
քը եւ փախուստը կ'արգիլէին:

Պէյը տեսնելով մօրը ընդդիմութիւնը, որ հետզհե-
տէ կատաղութեան կը հասնի, ժանտարմաներուն կը հայհոյէ, սաքով կը զարնէ գետինը, գլուխը կը շարժէ զայրոյթով և իր բոլոր կատաղութիւնը քահանային վը-
րայ թափելով, կը պոռայ:

— Անմիջապէս մանուկը պէտք է զինուորներուն յանձնուի որ տանին:

Փոքրիկին հայրը մէկ կողմ կեցած՝ ապուշի պէս կը դիտէր եւ կարծես ամէն զգացում կորսնցուցած էր: Քահանան դէպի իրեն եկաւ ու ըսաւ.

— Եթէ զաւակդ չի յանձնուի... մտածեցի՞ր, թէ ինչ կուզայ մեր ամենուս գլխուն... գայմապամ պէյը զայրացած է, մտածեցի՞ր, թէ ի՞նչ կը պատահի այս ամենուն:

Կարծես վանելու համար ակներեւ եւ ծանր սպառ-
նալիք մը՝ անիկա խաչակնքեց ու կեցաւ:

Հայրը ինքնակորոյս եւ մեքենաբար մօտեցաւ կը-
նոջը. վախը եւ հայրական սէրը դողդոջուն կը դարձ-

նէին զինքը, բայց բազուկները երկարեց, առաւ մանուկը, որ մայրը վստահեցաւ հօրը իբր աւելի ուժեղ եւ վստահելի պաշտպանի:

Հայրը մանուկը յանձնեց զինուորներուն: Երբ մայրը իր մարդուն դիրկլէ դատարկ տեսաւ, հասկցաւ: Մայրները կը փեթտէր, երեսները կը ճանկէր եւ ամուսնոյն վրայ յարձակելով, կը սրուար անդադար:

— Որո՞ւ տուիր դաւակա, վերադարձուր զաւակս:

Պէյին խումբը իր պտոյտը կատարած էր եւ մանուկին զինը՝ մէկ մէծիտ վճարելով քահանային, հեռացան: Որբուհին անաէր էր, անոր համար չի վճարեցին, իսկ յոյն կինը դայմադամին արտօնութեամբ վերցուց 15 տարեկան աղջիկ մը ծառայութեան համար: Պէյին հրամանով ապրանքատար վաճառներ յատկացուած էին տեղահան ժողովուրդին եւ հրամայուած էր շտապով հեռացնել զիրենք: Շարք շարք կը դիւլէին աքսորեալները վաճառներու մէջ: Որդեկորոյս մայրը տեղէն չէր շարժած, կուլար, կ'ողբար, մէնիներ կ'ըսէր, քարեր կը ժողվէր եւ մանուկը կորսնցուցած տեղը զերեզմանի ձեւով կոյտ մը կաղմելով, գլուխը կը դարնէր դետնին եւ անմխիթար ցաւով կուլար, դէմքը այլափոխուած էր արցունքի առատութենէն եւ անիկա մարդկային երեւոյթը կորսնցուցած էր կարծես: Աքսորեալներէն ամէն մէկը այնքան ծանրաբեռնուած էր առանձին տասապանքներով, որ անուշադիր մօրը ցաւին՝ կ'անցնէին կ'երթային, իսկ ամուսինը դաշտին ծայրը կեցած յուսահատ, լրքուած, աչքերը վայրահակ, չէր համարձակեր կնոջը մօտ երթալ: Հրամայեց զինուորներուն հեռացնել կինը, իսկողեւ այդ ձայնը: Ժանտարմաները կ'ողվէին, զայն տանիլ, փակել վաճառի մը մէջ: Բայց մայրը կը կուսէր, կ'աղաչէր ու կը պաղատէր, որ-

պէսզի գինքը չի հեռացնեն եւ զաւակը դարձնեն իրեն : Սկսան զայն քաշելով տանիւ առանց անոր աղերսանքին լսելու : Հագուստները պատռտեցան եւ քարերու վրայ քաշքշուելով , ոտքերը եւ սրունքները արիւնոտեցան : Այսպէս հասցուցին այդ կինը դէպի դնացքը եւ զրեթէ անկենդան վիճակի մէջ նետեցին վակոնը : Պէյի տան մէջ մանուկները կը հազուեցնեն , անուշեղէններ կու տան եւ ամէն ջանք կ'ընեն անոնց սիրտը շահելու : Փոքրիկ մանչուն հագցուցեր էին զարդարուն լաթեր , բայց աղջիկը մերժեր էր հագուիլ ու զարդարուիլ : «Ես կարմրագոյն հագուստ չեմ ուզեր , ես սեւ պէտք է հագնիմ» կը պնդէր անիկա :

— Ինչո՞ւ , աղջիկս , կ'ըսէին , գինքը փաղաքշելով :

— Իմ հայրս ու մայրս մեռած են , ես սգաւոր եմ :

Ամիս մը անցեր էր եւ 9 տարեկան որբուհին մաղերը միշտ ծածկած էր սեւ եազմայով : Բոլոր ջանքերը ի դերեւ ելան : Ժպիտը չերեւցաւ անոր դէմքին վըրայ : Ազդուած այս յամառ տխրութենէն եւ վախնալով , որ այդ սգաւոր աղջիկը դժբախտութիւն պիտի բերէ իրենց տունին , ուրիշ հայ աքսորեալներու խումբի մը հետ ճամբայ հանեցին դէպի Միջագետք :

ՀԱՅԻ ԲԱՇԽՈՒՄ — ԱՌԱՋԻՆ ԴԻԱԿՆԵՐԸ ԵՓՐԱՏԻ
ՎՐԱՅ — 70 ՄԱՆՈՒԿՆԵՐ ԽԵՂԴԱՄԱՀ

Նոյն ամսուան մէջ Կիլիկիոյ շրջանէն , Ռուս Գալէի կողմերէն հասան 200 հողինոց խումբ մը Հայեր , որոնք ճարապլուսի մօտ կանգ առին : Պէտք էր նոյն օրը մեկնէին , բայց որովհետեւ մէկ ու կէս օրէ ի վեր ոեւէ բան կերած չէին , որոշուեցաւ որ տեղի ունենայ հացի բաշխումը : Գայմազամին հրամանով հապճեպով հաց

Թխեցին եւ տակաւին անեփ, կէս խմոր վիճակին մէջ փուռէն հանելով, հացը յանձնեցին ինձ որ տանինք ու բաշխենք աքսորեալներուն: Հացերը լեցուցինք երկու սլարկերու մէջ եւ երկու աքսորեալ Հայերու օգնութեամբ սարինք բազմութեան:

Մարդեր չէին կարծես, այլ անօթութենէ զազազած անբաններ, որոնք կորսնցուցեր էին մարդկային զգացումներու ամէն հետք: Ակնթարթի մը մէջ կերան լափեցին: Մանուկներ, հիւանդներ, յղի կիներ անօթի մնացին: Տեսայ որ վտիտ երախաներ մատերնուն ծայրը թուքով կը թրջէին եւ կը հաւաքէին գետինը ինկած ամենայետին փշրանքները:

Կիլիկիոյ շրջաններու մասին, միշտ տեղեկութիւն կ'ունենայինք եւ կը հետեւէինք անցուղարձերուն, բայց Հայաստանէն բոլորովին լուր չունէինք: Ահա թէ ինչպէս առաջին հանդիպումը ունեցանք Հայաստանցիներու հետ:

Մայիս մէկի առաւօտուն կանուխ ընկերներով Եփրատի եզերքը դացինք: Երբ դէպի գետը կուգայինք, տեսանք, որ սեւ սեւ կոյտեր կը ծփան Եփրատի ջուրերուն վրայ: Արաբներ, զինուորներ խումբ խումբ կեցած եւ հետաքրքրուած կը դիտէին այդ կոյտերը: Յանկարծ աղաղակ մը բարձրացաւ.

— Հայեր են, Հայեր...

Մօտեցայ եւ թուրք զինուորի մը հարցուցի.

— Ի՞նչ են ասոնք:

— Հէ՛, խայիներ, սլատասխանեց, ձեր Հայերու դիակներն են, չէ՞ք շիտեր, թէ ինչե՛ր սլատահեր են վերերը:

Չէինք ուղեր հաւատալ եւ մօտենալով գետափին, սկսանք շտապել հոռանքն ի վեր դէպի երեւցող կոյտերը:

Գետափը խոռոչի մը մէջ տեսանք, որ զինուոր մը ջուրի եզրը նստած՝ դիակի մը վրայէն կը հանէ վերարկուն, լաթերը, կօշիկները :

Դարձեալ չուղեցինք հաւատալ, թէ այդ դիակները Հայու դիակներ են, եւ կը խորհէինք, որ թերեւս պատերազմի հետեւանքով ինկող զինուորներու մարմիններ են : Խմբուեցանք թուրք զինուորին մօտ եւ ուղելով ստուգել, մօտեցանք դիակին : Զինուորը կողոպտած վերարկուին գրպանները կ'որոնէր, երբ տետրակ մը հանեց : Անմիջապէս առի ձեռքէն . ջուրը անընթեռնելի դարձուցած էր գիրերը : Այսքանը միայն կրցայ հասկնալ, որ ատիկա Սամսադ դիւղացի նպարավաճառի մը օրատետրն էր :

Սոսկումը եւ արհաւիրքը մեզ պատեց . ուրեմն իրաւ Հայեր էին : Դիակները կ'իջնային հոսանքն ի վար 5 կամ 10 հոգի ձեռք ձեռքի, ոտք ոտքի կապուած, հազուադէպ էին առանձին դիակները, որոնք նոյնպէս կապկպուած էին :

Յորեկը լոյս աչքով ակնապիշ կը դիտէինք : Մինչեւ մայիս 5ը անցան օրական 150-200 դիակ առանց հաշուելու գիշերն անցածները : Այսպէս տեւեց մինչեւ մայիս 28-29ը, հետզհետէ օրական թիւը նուազելով :

Իրար կապուած դիակներու կոյտերը կը սահէին, կ'անցնէին անդադար : Կային նաեւ կանանց դիակներ, որոնց երկու բազուկներուն տակ եւ սրունքներուն մէջ մէյ մէկ մանուկ կապուած էին : Կիները բոլորովին մերկ էին եւ դեռատի :

Նոյն այդ խոռոչին մէջ հանդիպեցայ մօտ 14 տարեկան աղջկան մը դիակին : Հեռուէն որ կուգար սեւ կոյտ մը կ'երեւար միայն :

Երբ մեր կողմը հասաւ, ալիքը զայն նետեց ավուները, ուր յորձանքին մէջ պահ մը դառնալով, մնաց :

Առաջի պահուն սուած մասեր միայն կ'երեւային, փորը սեւ եւ դորշ եւ ստինքները ուռած դիակներու նման, ոտքերը ջուրին մէջ կախուած էին եւ պղնձագոյն ազդերը կը կրէին վէրքերու հետքեր: Ոտքերէն կախուած էր պատուած ճերմակեղէնը, որը ցեխով եւ արիւնով պղծուած էր: Ձեռքերը քնքուշ էին եւ կապուած հաստ պարանով մը. դէմքը կորսուած էր ջուրին մէջ, բայց աւատ, ոսկեգոյն մազերը կը ծփային ջուրին վրայ:

Ես եւ ուրիշ հայ պաշտօնեայ մը նոր կամուրջը դացեր էինք: Այնտեղ տեսանք հետեւեալը. կամուրջին ստորոտը, ուր պահապան գինուորներ կը կենան, այդ նոյն պահապանները շինած էին երկար երկաթէ ձողեր, որոնց ծայրը կեռ մը կար, որով դիակները կը քաշէին հագուստները կողոպտելու համար: Այդ պահուն զինուոր մը կնոջ դիակ մը կը քաշէր, բերուէ ջուրի եզերքը: Կնոջ մարմինը կրի նման ճերմկած էր եւ սեւ խոշոր արատներ կը կրէր. մարմինը ձեւափոխուած էր եւ դիմագլիծը անհետացած էր, այնքան փտտած էր այլեւս, որ ձողը հազիւ թէ կը կպցնէր, անիկա կը խրուէր մարմինին մէջ: Այդպիսի դիակի մը ձեռքէն զինուորը առաւ արծաթ մատանին:

Նոյն կամուրջին ներքեւ երկրաչափի օգնական երիտասարդ Փրանսացի մը, որ յոյնի անուան ներքեւ կը մնար, արձակուողի ժամուն կուգայ ձեռքը լուալու Եփրատի մէջ, երբ յանկարծ թեւին բան մը կը փաթթուի եւ սոսկումով վեր կը քաշէ, 14—15 տարեկան աղջկան դիակ մըն էր, որ կը ծանրանար թեւէն: Երիտասարդը ձեռքը կ'ազատէ մազերէն, բայց այնտեղ գտնուող թուրքեր կուգան աղջկան դիակը կը յափշտակեն: Անիկա տակաւին մատղաշ էր եւ գեղեցիկ, դիակը թարմ էր, եւ չէր ձեւափոխուած, ոտքէն կապուած էր

քար մը, որով դանդաղօրէն եւ ջուրին մէջէն կը յառաջանար առանց մակերեսը բարձրանալու :

Իրտած էինք որ ճարապուստէն քիչ հեռու անսովոր երեւոյթ մը յայտնուած էր . երամներով ազուաներ, եւ շուներու վստմակներ կ'երեւէին, որոնց կունչիւնը, ունոցը եւ լալիւնը երկարօրէն կը լսուէր իրիկնամուտի ժամերուն : Հետաքրքրուած գացինք այն կողմերը տեսնելու, թէ ինչ կայ : Տակաւին ճանապարհին վրայ՝ դաշտերուն մէջ տեսանք մարդկային մարմնի բեկորներ, ձեռքեր, կէս յօշոտուած գանկեր եւայլն : Ո՞վքեր էին ասոնք, ուրկէ՞ եկած էին, չի կրցանք հասկնալ : Տեսանք, որ խոշոր շուներ դէպի իրենց որջերը կը քաշէին դիակներու բեկորներ իրենց ձագերուն համար : Իսկ ղետեղը այդ բեկորները այնքան առատ էին, որ շուներու խումբեր եւ ազուաներու, վայրի զանազան թռչուններու երամներ, իրարու առանց վնասելու, անվրդով թառած իրենց որբերուն վրայ, դունչերնին խլրած դիակներու մէջ՝ անընդհատ կը լափէին :

Գերմանական երկաթուղիի գիծի հայթայթիչը, որ Զուլիցերիացի էր, Գարատաղի անտառը մեկնեցաւ փայտ բերել տալու համար, բայց չկարողացաւ Եփրատի եզերքէն իր ձամբան շարունակել, որովհետեւ Պէրէճիքէն մինչեւ Գարատաղ ղետին երկու եզերքը ղիղուած դիակները այնպիսի նեխութիւն յառաջ կը բերէին, անոնց երեւոյթը այնպէս խոր կերպով ջիղերը քայքայեր էին, որ սարսափով փախաւ, վերադարձաւ Հալէպ հիւանդացաւ :

Երբ Ատիամանի, Սամսատի եւ շրջակայ դիւղերու Հայերը տեղահան ըրած են, կիները զրկուած են Արաբ Բունարի կայարանը եւ այրերն ալ կապելով իրարու, նետած են ղետը : Մայիսի վերջերը այդ վայրերու կիները ղնացքով, 40 վակոնով, իւրաքանչիւրին մէջ 60

հողի, կը զրկուէին դէպի Հալէպ: Երբ կ'անցնէին Եփրատի առժամանակեայ կամուրջին վրայէն, այդ դըժբախտները վակոնի պատուհաններէն կը տեսնեն խումբ մը դիակներ գետին վրայ, որոնց հազուատները եւ տարազը նման էր իրենց զիւղացիներու հազուատներուն: Հարս մը ուր դնացքին մէջ նոր ծնած էր իր անդրանիկ զաւակը եւ ուր իր հարստութեան եւ գեղեցկութեան պատճառաւ անյուր տանջանքներու մատնուած էր ճամբուն վրայ եւ կէս խելագար վիճակի մէջ էր, կը կարծէ ճանչնալ իր ամուսինը դիակներու այդ խումբին մէջ: Բոլոր կիները կը ճչեն եւ կ'ուզեն գետը թափուիլ, սիրական անուններ կ'աղաղակեն, կը պոտան, կը հեծեծեն: Նոր հարսը խելակորոյս վիճակի մէջ կ'ուզէ գետ նետուիլ եւ չի յաւելեւոր նեղ պատուհանէն դուրս ցատկել, նորածին մանուկը կը նետէ դէպի կարծեցեալ ամուսինը:

Թուրք մը պատրուակելով ուր մանուկները պիտի տանի, լաւ մարդոց խնամքներու պիտի յանձնէ, Սամսազի զիւղացիներէն եւ Թուրքերու ձեռքէ հաւաքուած մանուկներէն 70 հողի կ'առնէ մակոյկ մը կը լեցնէ եւ կ'ըսէ թէ Եփրատի վրայով ճարապլուս պիտի բերէ՝ անկէ Հալէպ անցնելու համար:

Երբ կը հասնին Սիւբիւրկէճի (Սուրբ Փրկիչ) մօտ, ուր ջրվէժ մը կայ եւ մեծ յորձանք մը կը կազմէ, եւ ուր վերջին ծայր վտանգաւոր է մակոյկներու համար, փայտ մը կը կոտրէ մակոյկէն, ինքը կը նետուի ջուրը եւ լողալով կը հասնի գետեզրը: Մանուկներու մակոյկը անտէր եւ առանց ղեկի կը հասնի յորձանքին, կը շրջի անմիջապէս եւ սարսափահար մանուկները ցիր ու ցան պահ մը կը դառնան յորձանքին մէջ: Կէս ժամ չանցած 70 փոքրիկ դիակներ կ'ուղեւորուին հոսանքն ի վար: Թուրքը ղետեղըրը կեցած կը հսկէ եւ կը սպասէ,

մինչեւ որ վերջին մանուկն անհետանայ, ուրկէ ետքը կը դառնայ իր գիւղը :

Մեր շրջանի Հայերը մատնուած էին հոգեկան անպատմելի չարչարանքի : Երբ դիակներ կ'երեւային դետին վրայ, գործ եւայլն կը ձգէին եւ կը փախէին, որպէսզի չի տեսնան : Ու անդադար կ'անցնէին խեղղամահներու սեւ կոյտերը : Պէրէճիկի թուրքերը լուտանքներ կը թափէին անցնող դիակներուն վրայ, կամ կը հեզնէին ու կը ծաղրէին : Տղաքը քար կը նետէին ու նախատական խօսքերով դեատափէն կը հետեւէին անոնց ընթացքին, իսկ կիները կը գանգատէին որ այդ պիղծ դիակները Եփրատի ջուրերը ալոտոտած են եւ ամէն կարգի անէծքներ եւ հայհոյութիւններ կ'ուղղէին Հայերուն :

Արաբները միայն կը խղճային ու կը գանգատէին : Իրենց մեծամեծները զայրացած էին այս անարդար անխղճութիւններուն վրայ, եւ մանաւանդ 70 մանուկներու մահը մեծ գրգռութիւն յառաջ բերաւ իրենց մէջ թուրքերու դէմ : Բուն կերպով բողոքոցին Հալէպի կառավարութեան եւ 70 մանուկներու ոճրագործը ձերբակալելով, յանձնեցին դատարան, որ այդ հրէշը կախաղան բարձրացուց Արաբներու ստիպումին վրայ :

Շատ տեղ զիս իսլամ կարծելով, թուրքերը անվերապահ կերպով կը խօսէին այս անցուղարձերու մասին : Իրենց ընդհանուր կարծիքը այս էր .

«Աստուած Հայը ստեղծած է զուրպանի (զոհ) համար, կիները զուարճութեան համար, բայց մանուկները սպաննելը իրօք բարբարոսութիւն է» :

ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ՀԱՅԵՐՈՒ ՏԵՂԱՀԱՆՈՒԹԵՆԷՆ ԴՐՈՒԱԳՆԵՐ

Տիգրանակերտցի քանի մը շատ հարուստ սեղանաւորներ կը յաջողին ահագին կաշառք տալով քաղաքէն մեկնել: Բայց ճանապարհին զիրենք կը բաժնեն իրենց ընտանիքներէն եւ Սէվէրէկի ու Եդեսիոյ մէջտեղ կը սպաննեն: Իրենց կիներն ու աղջիկները, մօտ 200 հոգի, ապահով տեղ կը հասնին եւ կը պատմեն հետեւեալ դէպքերը, որոնց հետեւած են օրը օրին:

Առաջին անգամ կառավարութիւնը ձերբակալելով Տիգրանակերտի եւ շրջակայքի Հայերէն 650 հոգի, Տիգրիսի վրայէն լաստերով զրկած է դէպի Մուսուլ, բայց քաղաքէն քիչ մը հեռանալէ ետքը ժանտարմաները կը պատռեն լաստերու տիկերը եւ աքսորեալները ամբողջովին կ'ընկղմին Տիգրիսի մէջ: Անոնք որ կը կարողանան լողալով գետեզրը հասնիլ, այնտեղ գտնուող ժանտարմաներէն հրացանազարկ կ'ըլլան:

Այս դէպքէն ետքը Տիգրանակերտի ժողովուրդէն այրերը իրենց դիրքին եւ հարստութեան կարգով մաս մաս կը հեռացնեն քաղաքէն եւ զանոնք ողջ ողջ թաղելով ցորենի հորերու մէջ, վրանին կը փակեն քարերով եւ շնչահեղձ կը մեռցնեն: Մաս մըն ալ Տիգրիսի եզերքը խեղդամահ ընելով կը ջնջեն եւ մնացեալը, այր եւ կին միասին խուժք խուժք Մարտինի դժով կը զրկեն դէպի Ռաս իւլ Այն: Ճամբան այրերը կիներէն բաժնելով, մինչեւ 6 տարեկան տղաքը ճանապարհին մօտ ձորերու մէջ տանելով, կը կոտորեն: Կիները տակաւին Մարտին չի հասած՝ յարձակում կը կրեն չէչէններու կողմէ, որոնք զատելով գեղեցիկ աղջիկները, չարաչար կը բռնաբարեն, իսկ Քուրտերը անընդհատ կը կողոպտեն գիրենք: Այրերու կոտորածի միջոցին կիները մէկ կողմ



Թուրք դահլիճը եւ հայ գահը, Բրբախան բանտի մը մէջ:

կեցուցած էին եւ իրենց կը հասնէին ձորերու մէջ կոտորուող մարդոց օրհասական աղաղակները: Տիզրանահերտի եւ շրջակայ գիւղերու ժողովուրդին կոտորածը այնքան սաստիկ կ'ըլլայ, որ Տիզրանահերտէն մինչեւ Մարտինի ձորերը դիակներով լիքն էին եւ Սէվէրէկէն մինչեւ Եգեսիա ճամբուն երկու կողմը դիակներով ծածկուած էին: Ահա այսպէս է, որ կոտորուած, կողոպտուած, նախատուած պառաւ կիներու խղճալի խումբ մըն է միայն որ Տիզրանահերտի բարդաւած եւ բազմահայ շրջանէն կը հասնի Ռաս իւլ Այն:

Թուրք զինուոր մը, որ Վանայ կռիւներուն մէջ վիրաւորուած էր եւ միեւնոյն ճամբէն անցնելով հասած էր Ճարապուս, կը պատմէր հետեւեալը .

Պիթլիսի մէջ տեսայ, որ հայ վաճառականներուն կոնակը բեռցուցած էին վաճառականական տոմարներ եւ այդպէս զիրենք կը փոխադրէին Սղերդ: Հայ զինուորներ բերած էին էրզրումէն եւ կ'աշխատցնէին բերդի մը շինութեան: Գործը աւարտելէն առաջ Պիթլիսցի վաճառականներուն հետ կը վերադարձնեն Պիթլիս եւ հոն Ծաղկաքարի մօտ (Պիթլիսի նշանաւոր վայրերէն մէկը), թէ հայ զինուորները եւ թէ վաճառականները յարձակում կը կրեն տեղւոյն Քուրտերէն որոնք կը կողոպտեն զանոնք եւ յետոյ կը սպաննեն:

Պիթլիս-Սղերդ ճանապարհին հայ գիւղի մը մէջ տեսայ հայ կին մը, որ ոտքերէն կախուած էր, գլուխը հողէն մէկ մէթը բարձր էր, երեք մատղաշ գաւակները ոտքերնուն գամած էին գետնին. տակաւին ողջ էին եւ կը ձգտէին իրարու հասնիլ: Թուրք զինուորականներ քիչ հեռու կեցած էին եւ նշանառութեան փորձեր կ'ընէին ճօճուող կնոջ վրայ, գնդակ արձակելովով աչքերուն, ծիծերուն: Կնոջ յանցանքը այն էր, որ տեղահանութենէ խուսափելու համար իր գաւակներուն հետ պահուրտած էր:

Տիգրանակերտէն անմիջապէս ետքը Մէմտուհ պէյի հսկողութեան ներքեւ կը սկսի Մարտինի տեղահանութիւնը եւ կոտորածը: Այրերը կը ժողվեն, պատրուակելով, թէ անոնք պիտի յատկացուին ճանապարհի նորոգութեան գործերու, բայց անմիջապէս որ քաղաքէն դուրս կը հանեն, Տիգրանակերտի եւ Մարտինի ձորերուն մէջ կը կոտորեն զիրենք:

Պալատի մէջ թուրք զինուորական մը ինձ կը պատմէր, թէ բոլոր ձորերը լեցուն էին դիակներով եւ զրեւիչ անոնց խորուլթեան կէսը ծածկուած էր: Դա-



Նահատակուած հայ մտաւորականներ

չունահար մարդոցմէ հոսած արիւնը այնքան առատ էր, որ ջուրի սէս կը հոսէր:

Մարտինի կիները եւ աղջիկները ենթարկուեցան Տիգրանակերտցիներու վիճակին: Ձէչէնները կը դատէին գեղեցիկները, կը կողոպտէին ու կը զրկէին Ռասիւ Այն: Այս շրջանին մէջ Ասորիներու մէկ մասն ալ Հայերուն վիճակին ենթարկուեցաւ:

Ասորի կին մը անիծելով Հայերը, որ պատճառ դարձան իրենց անբազղութեան, պատմեց հետեւեալը.

Մարտինի մէջ տեղահանութեան հրամանը սոսկում յառաջ բերաւ, որովհետեւ Տիգրանակերտի կող-

մերէն կիներու խումբեր ցիր ու ցան կը հասնէին եւ իրենց երեւոյթը, մանաւանդ ողբ ու լացը, կը յայտնէր, թէ ինչ կը սպասէր աքսորեալներուն: Միւս կողմանէ տակաւին ժողովուրդը չի մեկնած՝ ժանտարմաները, Չէչէնները, Քուրտերը կը մտնէին տուները, կը կողոպտէին, կը հարուածէին, կը բռնաբարէին: Շատերը խելագարուեցան ու գոսալով, աղաղակելով կ'անցնէին փողոցներէն, որոնք մեծ պազարի մը փոխուած էին: Ամէն կողմ կարասիներ, գորգեր թափուած, դիզուած, դանաղան գոյքեր կոտրատուած: Ոտքերու տակ կը ջախջախուէին յախճապակիէ եւ այլ դիւրաբեկ անօթներ, հայելիներ ու բոլորին մէջ ասդին-անդին ինկած դիակներ, ամենուկ աչքին առաջ բռնաբարումներ: Յայտնի ընտանիքներու աղջիկներ կ'ենթարկուէին յետին նախատինքներու եւ տեղ տեղ հաւաքած ըլլալով ամէնէն դեղեցիկները ու մատղաշները, կը ծախուէին շրջակայքէն եկած իսլամներու: Տիգրանակերտցի եւ Մարտինցի 300ի չափ հարուստի աղջիկներ, որոնք մեծ ժառանգորդներ էին, չէչէններու կողմէ ծախուեցան՝ իւրաքանչիւրը 200էն 300 ոսկիի:

Տիգրանակերտի, Մարտինի, Սղերդի, Խարբերդի տեղահանութիւնը կազմակերպած էր Խալիլ պէյ, որ Պ ուսէն եկած էր յատուկ այս պաշտօնով: Անիկա էր կազմած Առնաուտներէ, Չէչէններէ, Չէրքէզներէ չէթէներ որոնց պաշտօնն էր Հայերու բնաջնջումը: Ու այդ բոլորը մինչեւ գործադրութեան օրը պաղտնի պահուած թէ հայ, թէ թուրք ժողովուրդէն: Այս շրջաններու տեղահանութիւնը եղած է ամենէն բարբարոս կերպով, այրերը կոտորուած են եւ կիներն ու երախաները ենթարկուած են ամէն կարգի չարչարանքներու:

Ռաս իւլ Այնի մէջ, իմ բարեկամս, երկաթուղիի

չինութեանց պաշտօնեայ, որ շարունակ կ'երթար Ռաս
իւլ Այն եւ կը վերադառնար, պատմեց հետեւեալը:



Յոգնած, անօրի, կազկալս:

Առաջին անգամ որ Ռաս իւլ Այն հասայ, տեսայ
կայարանին եւ գիծին երկու կողմերը ընդարձակ տա-
րածութեան մը վրայ խոնուած հաղարատը կին եւ ե-
րախայ: Չէշէնները, Չէրֆէյները, Թուրք զինուորներ
եւ զինուորականներ ազատ կերպով կը մտնէին այդ
խումբերուն մէջ եւ ամէն անգամուն իրենց հետ դուրս
կը բերէին աղջիկներ, գոյքեր, զարդեղէն, դրամ եւն:
Տեղեկացայ, որ ասոնք Տիգրանակերտի, Մարտինի եւ
Մասամբ Խարբերդի տեղահան եղած ժողովուրդի բե-
կորներ են: Սկիզբները տակաւին բաւական լաւ հաշ-
ուած էին, բայց շարժումն մը երթեւեկի ընթացքին
հետզհետէ խումբը ստուարացաւ եւ իրենց վիճակը
վատացաւ, թշուառութիւնը, անօթութիւնը, հողեկան

եւ Ֆիզիքական տանջանքները այլակերպ դարձուցին զիրենք: Մուրացկանի վիճակին վերածուած անոնք կը թափառէին տմէն կողմ, կը թասէին զնացքին վրայ եւ այնքան կորսնցուցած էին ինքզինքնին սլաշտպանելու բնազդը, որ անզուշտութեամբ կը նետուէին անլիներուն ներքեւ: Ամէն անդամուն կառախումբը մանուկներ ճգմելով, արիւնոտած կը վերադառնար: Քանի մը անդամ գաղտնաբար մտայ տարագիր Հայերու խումբերու մէջ եւ զգացի իրենց հոգեվարքը:

Անօթի, տժգունած, վտիտ, կէս դիակներու վերածուած՝ անոնք աղերսագին կտոր մը հաց կ'ուզէին: Ամէն անդամուն հետս կը բերէի հինգ պարկ ալիւր եւ կը բռնէի հապճեպով, բայց իրենց վրայ հսկող զինուորները եւ ժանտարմաները, երբ ալիւր կը տեսնէին Հայերու ձեռքը, կը խլէին եւ կը տանէին ուրիշներու ծախելու: Մահացու յուսահատութիւնը այնքան տիրապետած էր իրենց, որ կիներ ինքզինքնին զնացքին ներքեւ կը նետէին. թուրք զինուորականներ կը նայէին եւ կը ծիծաղէին: Տեսայ նոյնիսկ, որ կիներ ու քանի մը մանուկներ շարելով գիծին վրայ, վակոն մը կը գըլտորցնէին եւ բարձրաձայն կը ծիծաղէին անոնց ջախջախուիլը, վիրաւորուիլը եւ ցաւի ազդեցութեան տակ անոնց գալարուիլը տեսնելով: Անօթութիւնը, տաքը իրենց հսկողներուն անխիղճ վերաբերմունքը այնպիսի անտանելի կեանք մը ստեղծած էր, որ աքսորեալներուն հոգեվարքի հեծեծանքները հաւան մինչեւ Հալէպ եւ վրդովմունք յառաջ բերին ոչ-թուրք ժողովուրդներու մէջ: Գայթակղութեան առաջը առնելու համար կառավարութիւնը որոշոց զիրենք հեռացնել եւ փոխադրել մինչեւ Մծբին:

Բարեկամս, խորհելով մինչեւ ասոնց մեկնումը դոնէ որոշ թիւով մանուկներ ազատել, հետեւեալ հնար-

քին դիմեց : Իր հետ կ'ունենար մեծ դամբիւղներ , որոնցմով զանազան վայրերէ հնչեկահաւեր կը փոխադրէր Հալէպ : Կը մտածէ այդ դամբիւղները օգտագործել եւ ամէն օր դաշտերէն հայ մանուկներ ժողվելով , կը դնէ դամբիւղներուն մէջ եւ կը բերէ Հալէպ : Ահա թէ ինչպէս կը պատմէր իր ազատարարի պաշտօնի միջոցին կրած տպաւորութիւնները :

Մօտեցայ խումբի մը , ամէնքն ալ պառկած էին երեսնին գետնին դարձուցած՝ արեւին տաքութենէն պաշտպանուելու համար . անշարժ էին եւ անշշուկ , կարծես գերեզմանատան մը հողակոյտերն էին իրարու քով , ցիր ու ցան շարուած : Երախայի մը մօտ գացի եւ ուզեցի արթնցնել , բայց երբ դպայ անոր , չըսթափեցաւ : Խորհելով որ քնացած է , գետնէն վերցուցի զինքը եւ տեսայ , որ սիրուն մանչ մըն էր եւ անմիջապէս նշմարեցի , որ իր կիսաբաց աչքերը կը մարէին , մանուկը իր վերջին շունչը կը փչէր : Սարսափած թողուցի զայն գետինը եւ խելագարի պէս սկսայ վազել , փախիլ այդ զարհուրելի երեւոյթէն : Հոգիս այնքան խորապէս վրդովուած էր , որ իրականութեան զգացումը կորսնցուցի եւ ժամերով մնացի ապուշ կտրած , ակնապիշ՝ առանց բան մը տեսնելու : Երբ սթափեցայ , տեսայ յղի կին մը , որ երկու մանուկ ետելը ձգած ձեռքերս կը համբուրէր եւ կ'աղերսէր , որ կտոր մը հաց տամ իրեն : Արեւը բաւական իջած էր եւ միջօրէի կիզիչ տաքը մեղմացած էր , աչքերս դարձուցի դէպի այն խումբը , տեսայ որ շատերը արթնցած էին եւ կը խլրտէին իրենց տեղոյն վրայ : Ոտքի ելայ ու կրկին դացի իրենց մօտ : Անսուաղութենէ մոլորուած կիներ դաշտին մէջ խոտ կը փնտռէին ուտելու , բայց ամէն ինչ չորցած էր այդ աւազուտ եւ կիզիչ տարածութեան վրայ , իսկ մանուկները , որոնք զիականային երեւոյթ

ունէին, այնքան ուժասպառ էին, որ իրենց ձեռքի տակի չորցած խոտերու շիւղերը կը շօշափէին եւ ուժ չունէին կարծր հողէն քաշել հանելու:

Յաջորդ անգամուն հետս հաց բերի, երբ ցոյց կու տայի հացը, որպէսզի տեսնան եւ դէպի ինձ դան, իրենց մարած աչքերը տենդային, գրեթէ խելագարի փայլ մը կ'առնէին, կը սեւեռէին ինձ, բայց կ'իյնային կարծրը գետնին վրայ եւ դէմքերնին ու ձեռքերնին կ'արիւնոտէին: Երբ կը մօտենայի հացը մանուկի մը տալու, ոչ թէ կ'առնէին, այլ կը յափշտակէին ձեռքերս ճանկրտելով, անոնք կորսնցուցած էին մանկական ամէն շնորհ եւ երեւոյթ, կնճռոտած դէմքեր ունէին, դաժան նայուածքով եւ անասնային արտայայտութիւնով: Զէին կարող խօսիլ, այլ երբ ուզէին պոռալ, տեսակ մը կոկորդային աղաղակ կ'արձակէին, որ ոչ մէկ մարդկային ձայնի կը նմանէր: Անգամ մը մօտեցայ փոքրիկի մը, համոզեցի որ հետս գայ, ակնապիշ կը նայէր ինձ առանց պատասխանելու, բայց զլացի որ հասկցաւ: Այն ատեն յորդորեցի, որ իր շուրջի մանկիկներն ալ հետը բերէ, բայց անիկա տարօրինակ շարժումով մը մէկիկ մէկիկ ցոյց տուաւ զանոնք: Աւելի մօտեցայ եւ տեսայ, որ մեռած էին ու ինքը մինակը նստած էր դիակներու մէջ: Այդ պաշտօնեան իր հընդակահաւի զամբիւղներով 40-50 երախայ բերաւ Հալէպ, որոնք որդեգրուեցան տեղւոյն հայ ընտանիքներու կողմէ:

Ռաս իւլ Այնէն հայերը փոխադրուեցան Մծբին եւ մնացին միայն դիակները, որոնք Հայերու միջոցաւ դիզել տուեր էին եւ որոնցմով բլուր մը կազմուած էր: Այսպէս մնացին անթաղ եւ տարրալուծուեցան ու չքացան արեւին կիզիչ ճառագայթներուն ներքեւ:

Թէլ Ապիատի մէջ, երկաթուղիի ընկերութեան բը-

Ժիշկ արաբ խալիտ պէյ պատմեց ինձ Թէլ Ապխատի մէջ կանգ առած Հայերու մասին: Գնացքով կ'երթար, երբ ճանապարհին կը տեսնայ գլիծին վրայ ինկած մանուկներ: Գնացքը կեցնել կուտայ եւ մօտենալով կը տեսնէ, որ 6 երախաներէն մէկը միայն տակաւին կենդանի է: Մէկ կողմ կ'առնեն փոքրիկ դիակները եւ ինքը վերցնելով միակ ողջ մնացած տղան, կը վերադառնայ վակոն: Ուշիմ երախայ մըն էր եւ ուտելիքով բաւական կազուրուսէէ ետքը կը պատմէ, թէ ինչպէս այլտեղ կը դռնուէին:

Աքսորեալներու իրենց խումբը կ'անցնէր ձորերու եւ լեռներու մէջերէն, երբ յանկարծ իր մայրը կը կորսընցնէ: Ձայն փնտուելու համար կը խուսափի խումբէն եւ կը սկսի թափառիլ: Երկու օր ասդին անդին մոլորելէ ետքը կը լսէ դնացքին սուլոցը եւ կուգայ այդ ուղղութեան: Գլիծին մօտիկ կը դռնէ միւս մանուկները, որոնք իրեն պէս 6-7 տարեկան երախաներ էին, իրենց ձամբան կորսնցողցած, անօթի, անտէր:

— Երբ իրարու հանդիպեցաք, ո՞ղջ էին ամէնքը, կը հարցնէ բժիշկը:

— Ասաւօտուսն տակաւին իրարու հետ կը խօսէինք, յետոյ մէկիկ մէկիկ լռեցին ու ինկան, կը պատասխանէ երախան: Ժողովուրդը, որ կը գտնուէր Թէլ Ապխատի մէջ, բեկորներն էին այն Հայերուն, որոնք տեղահան եղած էին Սարբերդէն, Սեւերէկէն, Չնքուշէն, Ջերմուկէն:

Մօտաւորապէս 400 հոգի էին եւ դիզուած՝ պզտիկ խանի մը մէջ, ուր հազիւ թէ 50-60 հոգիի տեղ կարենար ըլլալ: Մտիպուած էին ստքի վրայ մնալ եւ կամ իրարու վրայ նստիլ: Որովհետեւ կ'արդիւլէին ժողովուրդին դուրս ելլել բնական պէտքերու համար, անոնք զրեթէ շարախուսած էին կեղտով եւ աղբով: Գարշահասու-

թիւնը, անմաքրութիւնը մահացու հետեւանքներ կ'առնենային: Ամէն կտրուի ցաւերով կը տանջէին աքսոր-



Անթիւ սակրաւոյտերէն մէկը:

եալները եւ օրական բազմաթիւ մահեր կը պատահէին խանին մէջ: Մեռնողները կը հակէին շուրջիններուն վրայ եւ սրովհետեւ տեղ չի կար իյնալու, երբեմն անոնց խիտ շարքին մէջ երկար ատեն կանգուն կը մնային: Ողջերը ստիպուած էին կամ մեռելին վրայ նստիլ, կամ գայն դրկել, սրովհետեւ տեղերնուն շարժելու ոչ մէկ հնարք չի կար: Հակառակ այս ծայրայեղ վիճակին, հակառակ անօթի, կիսամեռ, մերկ, աղտոտութեանց եւ նեխութեանց մէջ կորուսած ըլլալնուն՝ անոնք խաղալիք դարձած էին ժամաարմաներուն, սրոնք գիշերանց կը մանէին հոն, կը փորձէին կողոպտել, կը փրնտուէին ու կը պահանջէին դարդեղէններ ու բան չի գրտնալով, ժողովուրդը կը մասնէին ամէն կտրուի շար-

չարանքներու եւ անարգանքներու :

Թէլապիատէն մինչեւ Արար Բունար երկաթուղիի գիծը ամբողջովին հայ կնոջ եւ երախայի արիւնով ուղողուած էր եւ գիծին երկու կողմը դրեթէ անընդհատ կը հանդիպէինք դնացքին ներքեւ չախջախուած դիակներու : Գիշերային փոխադրութիւններու միջոցին թուրք ժանտարմաները կը նստեցնէին իրենց յանձնուած ժողովուրդը գիծին վրայ : Հայաստանի խորերէն եկած խեղճերը չեն գիտեր թէ գիծը ի՞նչ է, դադաւիար չունէին զնացքի մաշին եւ երբ յոյնաբեկ եւ սպասած տարածուած են եւ կը քնանան, կառախումբը յանկարծակի կը բերէ գիրենք : Ամէն անգամուն զնացքը կը ըստիպուէր կենալ գիակներու վրայ . չախջախուած մարմինները մէկ մէկ կը շարտէին մէկ կողմ եւ ողջերը կը ստիպէին հեռանալ :

Անէզէ արաբ ցեղը մեծ գումարներ ստանալով Եդեսիայի Հայերէն, եկած էր Թէլապիատի Հայերուն մէկ մասը ազատել : Հսկիչ ժանտարմաներու հետ կռիւի բռնուելով, շատ Հայեր ոտնակոխ կ'ըլլան եւ 100ի չափ կրներ գոհ կ'երթան արձակուած զնդակներուն : Եդեսիոյ մէջ (Ուրֆա), Խարբերդէն, Սեբաստիայէն եւ այդ շրջաններէն տեղահան եղած Հայերէն մաս մը, կրն եւ երախայ լեցուցած էին տեղւոյն կառապաններու մեծ խանին մէջ : Քաղաքներու մէջ զգոյշ էին եւ չէին կարող շատ սանձարձակ կերպով վարուիլ աքսորեալներուն հետ : Բայց Եդեսիայի թուրք հարուստները կը պայմանաւորուէին ժանտարմաներու հետ եւ գիշերանց մտնելով անոր խանը, կ'արթնցնէին կրները ու աղջիկները եւ ընտրելով ամենէն դեղեցիկները, կը տանէին :

Կացութիւնը անտանելի էր այս թշուառներուն համար : Ապրելու դժուարութիւնները այնքան բուռն էին,

որ մայրեր հարկադրուած էին սոսկալի ընտրութիւն մը ընել. այն է՝ իրենց զաւակներուն մէկ մասը փրկելու համար ծախել մնացեալը :

Ուրֆայի ամենօրեայ շուկան դարձած էր մանուկներու պազար. ամէնէն զեղեցիկ տղան կը ծախուէր 10 զրուշի :

Տրասլիզոնէն, Սամսոնէն, ՊաՓրայէն, Սեբաստիայէն եւ Ամասիայէն տեղահան եղած ժողովուրդներուն ողորմելի մնացորդներ էին, որ կը հասնէին Արաբ Բունար: Ասոնք ամիսներէ ի վեր երկար եւ մանուածապատ ճամբաներէ հետիոտն, բոկոտն, անօթի թափառելէ ետքը կը հասնէին՝ հազուստներնին պատառտած, ոտքերնին արիւնած, որովհետեւ կօշիկ չէր մնացած այլեւս: Արաբ Բունարի մէջ հայ վաճառականներէ գլուրաւուած ցորենը թափուած՝ անտէր կը մնար: Աքսորեալները սովալլուկ վիճակի մէջ անյապաքար կ'իյնային վրան եւ հողով, քարով խառն կուլ կուտային անասուններու նման: Յորեն ուտողները հազիւ կ'ապրէին 20-24 ժամ եւ փորերնին ուսելով, կը մեռնէին սարսափելի ցաւերով եւ գալարումներով: Կառավարութիւնը փոխանակ արգիլելու՝ նոր եկող խումբերուն ցոյց կուտար թափուած ցորենը, երբ ժողովուրդը հաց կ'աղաղակէր: Տեղահան ժողովուրդին վրայ հսկելու պաշտօն ունեցող ժանտարմաններուն անգթութիւնը եւ հնարամտութիւնը՝ խեղճերը չարչարելով սպաննելու, ամէն մարդկային երեւակայութենէ դուրս է: Ասոնք ընդհանրապէս ընտրուած էին Եղեսիոյ, Պէրէճիքի, Սամսատի չըջաններու գազանաբարոյ Թուրքերէն եւ Քուրտերէն: Զինուորութենէ փախած ըլլալով, կը զբաղէին աւաղակութեամբ եւ ենթարկուած էին կառավարութեան հետապնդումներուն, բայց երբ հայկական հալածանքը պիտի կազմակերպուէր, կառավարութիւնը յայտարարու-

րեց, որ ամէն անոնք, որ յանձնուին, ժանտարմա կ'ար-
ձանադրուին եւ պաշտօն ստանալով երկրին ներսերը,
զերծ կ'ըլլան պատերազմի դաշտ երթալէ: Այս փախս-
տականները փութացին օդտուիլ, եւ այս անգուսպ
վայրենիներուն է որ յանձնուեցաւ տեղահան եղած ժո-
ղովուրդը: Ժանտարմաներու վրայ տասնապետ կարգը-
լած էին Համիտեան ռէժիմէն մնացած տասնապետները:

Տեղահան եղած ժողովուրդը ընաճնջման դատա-
պարտուած ըլլալով, անոնք բոլորովին անպաշտպան
յանձնուած էին այս մարդակերպներու դիւալին: Հարա-
գործութեանց: Լիազօրութիւն ունէին իրենց սծրագործ
երեւակայութեան քմահաճոյքներուն համեմատ մահ-
ուան եղանակներ ընտրել իրենց յանձնուած զոհերուն
համար: Այդ է պատճառը, որ անսանձ եւ անարգել
կ'երկարէին անոնց հողեւարքը, կ'ենթարկէին զանոնք
հողեկան եւ Փիղիքական բոլոր անպատմելի չարչա-
րանքներուն, կ'երկարէին աքսորեալներու տաժանելի
ճամբորդութիւնը, կը բաժնէին սիրելիները իրարմէ,
անօթի եւ ծարաւ պահելէ ետքը երկար ատեն՝ կու-
տային այնպիսի ուտելիքներ, որ փոխանակ սնուցա-
նելու՝ տանջանքներով մահուան կ'ենթարկէին զանոնք,
եւ իրենց չարաբաստիկ հեղինակութիւնը ի դործ կը դը-
նէին յառաջ բերելու համար այնպիսի տառապանք, որ
ամէնէն դիւալին երեւակայութիւնն իսկ անդօր է պատ-
կերացնելու:

Երբ այս ամէն կողմէրէ հաւաքուած ժողովուրդէն
խումբ մը որոշէին զրկել Եփրատի եզրերը, այնպէս կը
կարգադրէին, որ ոչ միայն նոյն քաղաքացիները եւ
դիւղացիները բաժնուին իրարմէ, այլ եւ ընտանիքները
լուծուին: Կ'առնէին իւրաքանչիւր քաղաքէ կամ զիւրէ,
տասնական հողի: Հինգ շունչէ բաղկացած ընտանիքի

մը երկու անգամը կը մնար մէկ խումբին մէջ, երկուքը ուրիշ խումբ եւ մէկը առանձին եւ այսպէս յաջորդաբար: Երբ սիրելիները իրարու զրկուած՝ չէին ուզեր բաժնուիլ, կուլային, կ'ողբային, ժանտարմաները առանց պահ մը յուզուելու՝ վայրենօրէն կը բաժնէին զանոնք իրարմէ:

Ծերուկ կ'ին մը, որուն հրամայուած էր առանձին մեկնիլ խումբի մը հետ, կը յաջողի անհետանալ եւ կ'երթայ իր հարսը եւ աղջիկը փնտռելու: Կէս գիշերին պառակին գիւղը ինկած էր արիւնաթաթախ, իսկ յլի հարսին փորը պատուած էին եւ աղիքները դուրս թափուած: Բայց տակաւին կենդանի էր եւ հոգեւարքը տեւեց երկար ժամեր առանց ոեւէ օգնութիւն ըլլալու իրեն: Կեսարացի մեքենավար մը կը պատմէր թէ խարբերոցի հարուստ հարս մը յաջողեր էր փախչիլ Սուրուճի հարուստ թուրքի մը ձեռքէն եւ պահուած մընացեր էր երեք օր քարերու մէջ, չի կարողանալով ոեւէ կերպով աղատիլ եւ անցելի դէպի Հալէպ, ինքզինքը կը նետէ դնացքի մեքենային տակ: Մեքենավարները, որոնք ընդհանրապէս քրիստոնեայ, սուրիացի եւ յոյն կաթողիկներ էին, կը հաւաքէին անօթի եւ անոէր մանուկներ, որոնք հանքածուխի տէփոյին մէջ պահելով, կը բերէին Հալէպ: Խեղճ փոքրիկները անմիջապէս կը հասկնային, որ ասոնք աջատարարներ են եւ անտրտունջ կը հետեւէին եւ ոեւէ շշուկ չէին հաներ իրենց ներկայութիւնը չի մատնելու համար:

ՍՈՒՐՈՒՃԻ ՕՎԱ (ՀԱՅԵՐՈՒ ԳԵՐԵԶՄԱՆՆՈՑ)

Սուրուճի դաշտը ընդարձակ, անջուր, տափակ, քարքարուտ եւ բուսականութենէ զուրկ վայր մըն է, ուր Հայաստանի ամէն կողմէրէ հաւաքուած էին 60,000 Հայեր:

Ասոնք յանձնուած էին խումբ մը ժանտարմաներու, որոնք կը գտնուէին հարիւրապետի մը հսկողութեան



Խմբովին նահատակուած հայ երախաներ:

Այս նկարը անուուած է սպաներէն գրքէ մը, արուած՝ Պուէնտս-Ալբէս: Հեղինակը, Վենեզուէլացի մը, Ռաֆայէլ աէ Նօկալէս, 1914ի պատերազմին մասնակցած է թրքական բռնակցին մէջ իբր կամուար եւ բորձրատիճան ուղայ: Եզանչաններ ընդունած է Քայդերէն եւ Սուլթանէն: Եւ սակայն, ստահամով կը նկարագրէ թրքական բորբարոսութիւնը:

Ներքեւ: Տեղը քաղաքներէ հեռու ըլլալով, այս մեծ բողմութիւնը կանանց եւ երախայոց, զրկուած էր սեւէ օդնութենէ ու մահը տարածուած էր իրենց մէջ: Ժանտարմաներու թոյլտուութեան շնորհիւ շրջակայ թուրքերը միշտ կուղային անեւանդակու մանուկ եւ աղջիկ:

Թշուառութիւնը եւ անօթութիւնը այնքան սաստիկ էր, որ խեղճերը կորսնցուցած էին բարոյական ոեւէ զգացում եւ իրարու մանուկ կը գողնային ու կը ծախէին: Շատ կիներ կը դիմէին Քուրտերու, որպէսզի զիրենք առնեն նոյնիսկ ծառայ:

Ժանտարմա Մահմուտ օնպաշին, որ ինձ ծանօթ էր, կը պատմէր թէ, ինքը Սուրուճի օվայի մէջ միայն աղջիկ եւ մանուկ ծախելով 100 ոսկի վաստկած էր: Հակառակ իր առաջացած տարիքին եւ արդէն երկու կին ունենալուն՝ կնութեան առած էր նաեւ մէկ դեղեցիկ հայ աղջիկ:

Շրջակայքի ամէն կողմէն խումբ-խումբ թուրք զինուորներ եւ ժանտարմաներ, իրենց գործը լքելով, կը փախէին, կուգային Սուրուճէն հայ կիներ ու երախաներ իբր աւար տանելու համար: Ձիֆտէք կայարանի տասնապետը կը հեռագրէ Ճարապլուսի հարիւրապետին. «Ձինուորները եւ զծի գիշերապահ ժանտարմաները Սուրուճ փախան ամուսնանալու, ուրիշներ զրկեցէք»:

Թուրքերու եւ Քուրտերու դէպի Սուրուճ երթալը եւ միւս կողմանէ հոն եղած համաճարակը եւ մահը ըսկսան անհանդիստ ընել կառավարութիւնը, որ այդ բուրիւն առաջքը առնելու համար, ողջ մնացած 10,000 հողին բաժնեց շրջակայ քուրտ գիւղերու մէջ: Բայց Քուրտերը մերժելով ձրի հաց կերցնել, հարկադրեցին խեղճերը, որ կամ իրենց հետ ամուսնանան, կամ իրենց ծառայեն: 1000 հոգի այս եղանակաւ կորսուեցան, իսկ մնացեալ քանի մը հազարը զրկուեցաւ դէպի Արաբ Բունար եւ Միջագետքի զանազան կողմերը: Մահմուտ օնպաշին ներկայ եղած էր այնտեղ, երբ հրաման արձակուեցաւ ողջ մնացած ժողովուրդը բաժնել քուրդ գիւղերուն մէջ: Անիկա կը գտնուէր այն ժանտարմաներուն

մէջ, որ պաշտօն ունէին հսկելու այդ 50-60,000 հաւաքուած Հայերու վրայ :

Ընդարձակ, անծայր տարածութեան վրայ գետնին կպած, անձայն անշարժ ժողովուրդը կը մնար : Ժանտարմաները կը հրամայեն, որ ամէնքը ոտքի ելլեն եւ անմիջապէս իրենց հետեւին, անշարժ բազմութեան մէջ խումբեր կ'երեւան եւ ժանտարմաները զարմանքով կը տեսնան, որ հազիւ թէ 10,000 հոգի կանդնած էին եւ որոնք իրենց ստիպողական հրամաններուն վրայ կը ըսկսին յառաջանալ, կոխկրտելով անթիւ դիակներ : Մեռելները տարածուած եւ տեղ տեղ դիզուած էին դաշտին ամէն կողմերը եւ սակաւաթիւ ողջերը, որ կ'ապրէին ու կը պառկէին մեռելներու մէջ, կ'ախայլին կերպով վտիտ, մոլորուն եւ դողդոջուն ուրուականներու պէս կը շարժէին՝ կորսնցուցած՝ կենդանի մարդու ամէն երեւոյթ եւ զլացում : Անոնք ուժ չունէին խօսելու, քալելու, ոեւէ բան արտայայտելու եւ տարերային ուժէ մը մղուած՝ կոխոտելով իրենց սիրելիներու դիակները կ'անցնէին կ'երթային առանց անգամ մը ետեւ դառնալու : Մօտ 50,000 դիակներ անթաղ մնացին եւ բացօդեայ փտտեցան : Սմբողջ Սուրուճի օվան դարձաւ Հայերու գերեզմաննոց :

Եւ տակաւին Միջագետքի կիզիչ արեւը չէր մաքրած այդ համայնատարած եւ բացօդեայ գերեզմանին ոսկերոտիքը իրենց նեխութիւններէն, երբ կիսամեռ Հայերու նոր ստուար խումբեր հետզհետէ կուգային, նոյն վիճակին կ'ենթարկուէին եւ յանկարծական հրամաններու անսալով, օրհասական վիճակի մէջ սակաւաթիւ կը մեկնէին, ճամբուն վրայ հետզհետէ անօսրանալով եւ այսպէս վերջապէս հետզհետէ չքանալով :

Այդ ժամանակները ճարապուստ կը ներկայացնէր անսովոր պատկեր մը : Հիւսիսային հայաբնակ վայրե-

րու ճոխ կողոպուտը զրգուած էր ակորժակը հարաւային դաւառներու իսլամ բնակչութեան: Տեղացիք կը տրտնջային, որ Կիլիկիոյ մէջ կառավարութիւնը աւելի մեղմ եղած էր հայ բնակչութեան նկատմամբ եւ չէին կարողացած անարգել եւ սանձարձակ կողոպուտել ու կոտորել: Թէեւ ամէն օր տեղահան եղած խումբեր կուղային եւ կ'անցնէին, բայց ասոնք քանիցս յարձակումներու ենթարկուած ըլլալով, սոված եւ մերկ էին: Ամէն տեղ իսլամ ժողովուրդը, ըլլայ քաղաքացի թէ գիւղացի, երեսի վրայ թողած խաղաղ աշխատանքը՝ կ'անցնէին Եփրատը եւ կ'երթային որոնելու հայ ժողովուրդի բեկորները: Օրուան ընթացիկ հարցումն էր «Չե՞ս երթար հայ կողոպուտելու»:

Ճարապլուսը մեծցած եւ չէնցած էր: Բացուած էր նոր պաղար մը, ուր օրը օրին կը ծախէին տեսակ-տեսակ ապրանքներ: Գիւղացիներ, պաշտօնեաներ, գործաւորներ, քաղաքացիներ հեռուներէն շարան-շարան կուգային եւ ընչաքաղցութիւնով ոգեւորուած կը հարցնէին, թէ ո՞ր է պաղարը: Ամէն օր պաղարը կը լեցուէր ու կը պարպուէր, եւ վաճառող թէ գնող չափազանց գոհ կը մնային, մին քսակը ոսկի լեցուցած տուն կը վերադառնար, միւսն ալ թեթեւ գիններով իւրացուցած կ'ըլլար ծանրարժէք առարկաներ եւ գոհարեղէններ: Բայց պաղարի ապրանքները չէին սպառեր, օրը օրին կուգային նոր տեսակներ, նոր ձեւեր, ամէն հայաբնակ դաւառներու ճարտարարուեստը, ոսկերչութիւնը, գորգեր, զարդեղէն, պղնձեղէն, մետաքսեղէն եւն, հարուստ եւ նրբաւարտ՝ կը ցուցադրուէին այնտեղ խառնիխուռն եւ ճարապլուսը տեսակ մը արուեստահանգէս մըն էր կարծես:

Գնողները խումբերով կը մեկնէին եւ երբեմն ալ

կուգային ինձ ցոյց տալու եւ կը հարցնէին՝ «այսքան վճարեցի, կ'արժէ՞ մի»: Փողոցները լիքն էին զանազան երեւոյթով մարդոցմով, որոնք իրենց նոր հագուստներուն մէջ տօնական ձեւ ունէին: Ահա Քուրտ մը բէտինկոթ հագած, որ քանդակուած շրջանակով հայելիի մէջ կը նայի եւ քիւլահը կը շտկէ: Բոկոտն ստահակ մը թաւիչէ վերարկու մը հագած՝ պարծենալով կ'անցնի, աղբահաւաք մը մետաքսեայ լաթերով, էշերը կը քշէ: Ահա պաշտօնեաներ գնած են մատանիներ, ադամանդներ, ոսկի ժամացոյցներ եւ շատ մը զարդեղէններ, որոնց վրայ երբեմն կ'երեւին հայերէն գիրեր: Հրեայ առեւտրականներ էշերով եւ ուղտերով բարձած կը տանին պղնձեղէններ, կահ-կարասի, տան զարդեր եւ հակ կապած ապրանքներ:

Շրջակայ գիւղերը ողողուած են եւրոպական ապրանքներով, արգիւնք՝ հայ տուներու եւ վաճառատուներու աւարին: Ամէն ոք կը կրէ նոր հագուստ, նոր կօշիկ, նոր ձեւերով, միայն քիւլահները անփոփոխ մընացած են: Կիսավայրենի եւ չտես տեղացի ժողովուրդը ողողուած է այն ճոխ հարստութիւնով, որ Հայերը տարիներու ընթացքին համբերութեամբ եւ աշխատութեամբ դիզած էին, իւրացնելով եւրոպական եւ արեւելեան ճարտարարուեստը եւ արտադրութիւնները:

Գիւղապետը զիս կանչեց իր տունը հասկնալու համար գնած իրերուն արժէքը: Յոյց տուաւ գորգեր, շալեր, եկեղեցիի մետաքսեայ վարադոյրներ, ոսկեթել բանուածքով շուրջառներ, անօթներ ու շատ մը թանկագին առարկաներ: Անիկա զարմացած կը հարցնէր, մետաքսեայ բանուածք մը ցոյց տալով. «Որուն հարսն է այս գեղեցիկ աղջիկը»: Ճմրթկուած ձեռագործ մըն էր անիկա, չորցած արեան բիծերով արատաւորուած, որ կը ներկայացնէր Մայր Հայաստանը շղթաներով:

Հալէպի հիւսիսային կողմը կը գտնուէր Նիզիպի խանը: Իսլամ Արաբ ճամբորդները ցաւելով կը պատմէին, թէ ինչեր կը կատարուին Նիզիպի խանի պատերուն մէջ: Անոնք իրենց աչքերով բան չէին տեսած, բայց լսած: Էին հատակոտոր պատմութիւններ եւ ամէն օր լսած էին մանաւանդ աղեկտուր հեծեծանքը բանտարկեալներուն եւ առած էին դիակներու հոտը, որ կը հասնէր մինչեւ հեռուները: Նիզիպի խանի տասնապետը շրջակայքը գտնուող հարուստներու իբրեւ նուէր կը զրկէր հայ աղջիկներ: Ամէն կողմ տարածուած էր հայ աղջիկներու համբաւը. կը գովէին անոնց բարեկրթութիւնը, ուսմունքը եւ ձեռական նուրբ աշխատութեանց մէջ ունեցած ճարտարութիւնը: Այնպէս որ՝ հրապուրուած ամէն կողմերէ իսլամներ կ'երթային եւ կը գնէին կիներ, աղջիկներ ու մանուկներ 5 կամ 10 զրուշի փոխարէն: Այս կացութիւնը այնքան հանրածանօթ էր, որ երկաթուղիի նորոգութեան հսկիչ պաշտօնեայ՝ Փրանսացի մը աղջիկ գնելու պատրուակաւ կը մտնէ Նիզիպի խանը եւ կը տեսնէ զարհուրելի պատկերը:

Փրանսացին կը մտնէ քարաւանսարայ, կը դիմէ ժանտարմաներու տասնապետին եւ արտօնութիւն կը խնդրէ կին մը կամ աղջիկ մը գնելու: Տասնապետը սիրալիր ընդունելութիւն կ'ընէ իրեն եւ երկարօրէն կը գովաբանէ հայ կիներուն արժանիքները, ցոյց կուտայ իր խոհարարուհին եւ այն խեղճ հայուհիները, որ իրեն սեփականացուցած էր եւ որոնք իրենց ասեղնադործութիւններով զարդարեր էին իր սենեակը: Փրանսացին փափաք կը յայտնէ անձամբ ընելու իր ընտրութիւնը, որուն վրայ տասնապետը կ'առաջարկէ իրեն՝ այցելել խանին բակը:



Տէր-Զօրի առջև Եփրատի այն մասը ուր 2000 հայ երախտներ
գնտը քափուեցան քուրք կուսակալին հրամանով:

Այդ բակը մեծ էր եւ սենեակներ չունէր, միայն
չորս պատերով շրջափակուած մերկ տարածութիւն մըն
էր: Աջ կողմը եւ ճակատը խոնուած էին զգզողուած,
սարսափահար, ցնցոտիներով ծածկուած կիներ, որոնց
ձախ կողմը զիղուած էին խումբ մը զիականեր, որոնցմէ
արտաշնչուող ներութիւնը անշնչելի, նողկալի կը դար-
ձնէր օդը: Գլխու պտոյտի մէջ, դրեթէ գինով վիճակի
հասած, պաշտօնեան կը տեսնէ, որ նոր զիականերու վը-
րայ ինկած էին կիներ, որոնք իրենց լացով եւ ողբով
կը խլացնէին օրհասականներուն հառաչանքը: Ոմանք կը
մերկացնէին զիակաները հազուատները առնելու համար
եւ ոմանք խելագարի շարժումներով աննպատակ կը դե-
զերէին, միօրինակ վանկ մը կամ խօսք մը կրկնելով
անվերջ: Որք մնացած մանուկները հաւաքուած էին ի-
րարու մօտ եւ ոչ ոք կը դրաղէր իրենցմով: Զատանցա-

կան վիճակ մը կը տիրէր ամենուն վրայ եւ անոնք ոչ միայն զիրար մոռցած էին, այլ կարծես ինքզինքնուն գիտակցութիւնը կորսնցուցած էին: Անտէր մնացած մանուկները անհաւատալի նիհարութեան մը հասած էին եւ այդ կմախքները սարսափելի էին իրենց տենդային սուր նալուածքներով: Անպայման շուտով կը մեռնէին: Պատի ճեղքերէն խելայեղած կիներ իրենց հոգեվարքը երկարածուցելու համար Քուրտերուն կը ծախէին իրենց մանուկները, հագուստները եւ նոյնիսկ 12-13 տարեկան աղջիկները, ու այդ բոլորը յաճախ սլատառ մը հացի փոխարէն, որ իբր խայծ հեռուէն կը ցուցնէին Քուրտերը սովալլուկ կիներու: Դժոխային խառնաշփոթութիւն մը, դարչահոտութիւն, լաց, հեծեծանք, կոկորդային, գրեթէ անասնական աղաղակներ, խելագարի ճիչեր եւ երբեմն քստմնելի քրքիչներ կը լեցնէին այդ շրջափակը, որոնց արձագանդը կը հասնէր մինչեւ հեռուները: Երբ այդ թշուառները կը տեսնեն եւրոպական հագուստներով մարդ մը, եւ իմանալով որ կին մը գնելու եկեր էր, ամէն կողմերէ կը թափուին շուրջը, իրարու կը զարնեն, կը հայհոյեն եւ կ'ուզեն առաջ անցնիլ եւ երեւալ օտարականին: Շատեր թշուառութենէ ծամածուած դէմքերու վրայ մոռցուած ժպիտ մը փորձելով, կը գովէին իրենց գեղեցկութիւնը, իրենց արժանիքները. «Ինձ առ, ես գեղեցիկ եմ, ես այսինչին աղջիկն եմ»: Ոմանք կը հաստատէին, ոմանք կը հերքէին. «Սուտ է, սուտ է, ես աւելի գեղեցիկ էի, հարսն էի գիւղապետին», «ես գիտեմ մանեւ, գորդ հիւսեւ, կը ծառայեմ քեզի գիշեր ցերեկ, տանդ շունը կ'ըլլամ, գերիդ կ'ըլլամ, տար ինձ»: Խլացուցիչ աղմուկը այս առաջարկութիւններուն, որով ամէն մէկը կը գովէր իր գեղեցկութիւնը, իր անցեալ հարստութիւնը, իր ընտա-

նիքին ազնուութիւնը եւ ընդունակութիւնները, սեղմ շարքերը կեղտոտ, աղբով ծածկուած աքսորեալներուն, որոնք հետզհետէ իրենց ճնշումին տակ պիտի խղզէին պաշտօնեան, նեղացուց ժանտարմը, որ ձեռքի խարազանով անողոք հարուածներ իջեցնելով այդ ցաւատանջ կիներուն վրայ, ամենքը իր տեղը քշեց եւ ընկերանալով հիւրին, սկսաւ մէյ մէկ աղջիկներ կանչել եւ դովել անոնց դիրութիւնը, գեղեցկութիւնը, առողջութիւնը: Երբեմն կը հարցնէր. «Որո՞ւ աղջիկն ես», եւ երբ պատասխանը կը լսէր, կը հաստատէր. «Ես կը ճանչնամ իր հայրը, այսինչ քաղաքի նշանաւոր վաճառականներէն մէկն էր, հարուստ, քիպար մարդ էր». եւ այսպէս յաջորդաբար:

Փրանսացին ամբողջ քարաւանսարային շրջանը կ'ընէ այս եղանակաւ, անկիւն մը քարի մը վրայ կը նշմարէ յանկարծ երկու կիներ, որոնք շատ կը նմանէին իրարու եւ քոյրեր ըլլալու էին. սեւ աչքերով, սեւ մազերով, երկարահասակ վայելուչ ձեւերով՝ անոնք նստած էին եւ տխրութեամբ կը նայէին: Իրենց հաղուստները թէեւ աղտոտած եւ պատառոտած, բայց կ'երեւէր, որ անոնք նախապէս մեծագին շրջադէստներ եղած էին, ծանրաբարոյ եւ մտածկոտ, անոնք տեղերէն չէին շարժած: Երբ մօտեցանք իրենց, ժանտարմը բացառիկ դովեստներով խօսեցաւ անոնց նկատմամբ եւ սկսաւ հարցումներ ուղղել. «Որո՞ւ աղջիկներն էք, ո՞ր տեղացի էք»: Անոնք չէին պատասխանէր հարցումներուն եւ արցունքոտ աչքերով յուսահատօրէն կը դիտէին Փրանսացին, որ վերին աստիճանի զգածուած էր. այդ դժոխքը եւ այդ ազնուական կիներուն ներկայութիւնը այդ դարհուրելի միջավայրին մէջ զինքը կը շուարեցնէին: Երբ կիները տեսան, որ պաշտօնեան փափաք կը յայտնէ դիրենք



ԱՆԹԱՄԱՐ

Մէկը՝ հայկական մշակոյթի բազմադարեան կոթողներէն,
որոնք 1015ին քանդուեցան քարքարոս Թուրքերու ձեռքով:

տանելու, լուսթիւնը խզեցին եւ անձկալի ձայնով մը
հարցուցին. «Իրօք մեզ կը տանի՞ս»: Ճրանասացին հար-
կադրուեցաւ «այս» ըսել: Փանտարման այդ միջոցին
գիրքը կը փոխէ եւ կը սկսի բռնանալ երկու հայուհի-
ներուն վրայ, որպէսզի հեռանան պաշտօնեայէն:

— Ես գնեցի այս երկու կիները, կ'ըսէ պաշտօնեան
եւ անոնց գինը տալով, կը հեռացնէ փանտարման:

Երբ փանտարման կը հեռանայ, կիները լուռ եւ
երկարօրէն կը նային օտարականին եւ իրենցմէ կըտ-
սերը կը հարցնէ.

— Պարտն, դուք Փրանսերէն կամ անգլիերէն գիտէ՞ք:
Ու իրեն հետ կը սկսին խօսիլ մարուք Փրանսերէնով:

Երբ այս կիները կ'իմանան, որ իրենց խօսակիցը

քրիստոնեայ է, ծնկաչոք կը պաղատին իրեն, որ զիրենք կերպով մը հեռացնէ այդ դժոխքէն: Մին ձեռքերը կը համբուրէր, միւսը կը փարէր ստեբրուն եւ իրենց յորդահոս արցունքները կը թափէին ու կ'ազաչէին:

Մահացու յուղումի մը ենթարկուած պաշտօնեան կը մտածէր. «Ո՞ւր տանիմ, ինչպէս ընեմ», որովհետեւ ինքը հաստատ բնակարան չունէր, լերան դլուխը Քուրտերու վրաններուն ներքեւ մնալու հարկադրուած էր եւ գիտէր թէ նոր փորձանքներու կ'ենթարկուէին խնդճերը, եթէ այնտեղ տանէր իր հետ: Կ'ուզէ առանձին հեռանալ, բայց կիները կը հետեւին իրեն եւ ժանտարման արդեւք չըլլար, որովհետեւ գինը ստացած էր: Մինչեւ լեռները երկու կիները կը հետեւին պաշտօնեային, ուր հասնելէ ետք ստիպուած զիրենք կը տանի մօտակայ քուրդ գիւղ մը, կը յանձնէ զանոնք ծերունի զիւղապետին եւ անոնց քանի մը ամսուան ապրուստի ծախքերը կը վճարէ, որպէսզի հանգիստ ու ապահով մնան քուրդ զիւղապետին մօտ: Այս կիները Կեսարիոյ շրջակայքէն էին:

ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՓՈՒՍԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԳՆԱՑՔՆԵՐՈՎ
«ԶՈ՛ՒՐ... , ԶՈ՛ՒՐ...» — ԵՐԶՆԿԱՑԻ ԿԻՆ ՄԸ

1915 Ապրիլէն մինչեւ Նոյեմբեր, Ռասիւլ Այնէն Թէլ Ապփադէն եւ Արաբ Բունարէն գնացքները կը հասնէին Ճարապլուս, լիքը տեղահան եղած ժողովուրդով: Անոնք որ դրամ ունեցեր են, կրցեր են մարդատար գլնացքներ մտնել: Կիներու, աղջիկներու եւ մանուկներու խառն ի խուսն բաղմութիւններ էին, ամէնքն ալ յուսահատած, աչքերնին արիւնոտ, դէմքերնին արցունքով ողորուած:

Իրարու համար կարեկցութիւն, նոյնիսկ հարա-
դատներու մէջ, անհետացած էր բոլորովին :

Ինձ ծանօթ Յոյն մը, որ Հայեր փոխադրող կա-
ռախումբով Հալէպ կ'երթար, սեւ թաւիչ հագած աղջիկ
մը ցոյց տուաւ եւ ըսաւ .

— Եղբայր, այսպիսի սիրուն, մաքուր աղջիկ մը,
որ լաւ Ֆրանսերէն կը խօսի, Քուրդերու ձեռքը մնացեր
էր, հազիւ կրցայ զինքը ազատել իմ զինուորական բա-
րեկամիս օգնութեամբ, ըսելով, թէ կնութեան պիտի
առնեմ :

Աղջկան մայրը, հայերէն խօսիլս լսելով, զիս կան-
չեց : Մօտերնին դացի եւ լմացայ, որ Ամասիացի են :
Յորդառաս արցունք թափելով եւ ախ ու վախերով
պատմեցին թէ իրենք հարուստ եւ հին ընտանիքի ան-
դամներ են : Մայրը հարցուց ինձ, յոյն երիտասարդը
ցոյց տալով թէ արդեօք իրա՞ւ զրիստոնեայ է :

— Սոստացեր եմ աղջիկս իրեն կնութեան տալ, ը-
սաւ, որովհետեւ մեզ ազատեց դազաններու ձեռքէն :

Նոյն վակոնին մէջ կային տասը հայ կիներ, բայց
միեւնոյն քաղաքէն երկու հոգի չգտայ : Այնպէս բաժան
բաժան ըրած էին տեղահանուած ժողովուրդը, որ այդ
տասը հոգիին մէջ կային Պաֆըացի, Կիրասոնցի, Սամ-
սատցի, Երզնկացի, Սեբաստացի եւ այլ կիներ՝ մէկ մէկ
հոգի :

Ամէնքը ծանրաբեռնուած էին վիշտով, կարօտով,
դառնութիւնով : Կը պատմէին թէ ի՛նչ տաժանելի դժ-
ուարութիւններու հանդիպեր էին կայարաններու մէջ,
ուր քրիստոնեայ պաշտօնեաներ իսկ անխնայ կերպով
չահագործեր էին իրենց տգիտութիւնը, սարսափը,
խուճապը : Տոմսակ չէին ծախեր մինչեւ որ չստանա-
յին զինը՝ երկու, երեք եւ երբեմն աւելի անգամ : Հա-
րիւրաւոր թուրք զինուորներ կը խնուէին հայ գաղ-

թականներու վակոններուն շուրջ, եւ հինգ փարայի հացը կը ծախէին 2 - 3 դրուչի: Շատ անգամ տեսնելով կնոջ կամ ասղկան դողդոջուն ձեւք մը, որ կ'երկնար իրենց հացը դնելու համար, կ'ըսէին իրարու. «Ա՛խ, եթէ մեզի հրաման մը տրուէր, ամէն մէկերնիս կ'առնէինք ասոնցմէ մէկ մէկ կիւն»:

Այդ գնացքներուն մէջ հանդիպեցայ իմ աղբականներէս Տիգրանակերտցի Ջէրդէրեան ընտանիքին, որ հարուստ առեւտրականներ էին, եւ Չմշկածառացի երկրագործական պանքայի տնօրէն Պ. Սուքիասեանի կնոջ ու ասղիկներուն, որ յետին չքաւորութեան մատնուած ըլլալով, մուրացկանութեան ենթարկուած էին եւ կը խնդրէին կտոր մը հաց եւ մի քանի դրուչ, որպէսզի ճամբան ծախսեն: Դժուար էր զիրենք ճանչնալ մէկ ակնարկով. անոնք կորսնցուցած էին իրենց գեղեցկութիւնը եւ շնորհը, վախէն դեղնած, կապուտցած, արեւէն սեւցած, այլանդակ եւ ողորմելի երեւոյթներ ստացած էին:

Իւրաքանչիւր կայարանի մէջ աքսորեալները կ'ենթարկուէին ամէն տեսակ չարչարանքի եւ նախատինքի: Կայարանին պաշտպանութեան յատկացուած զինուորները իրենց բոլոր լրբութեան մէջ սանձարձակ կը զգային ինքզինքնին: Կայարանի աջ կողմը կը դառնուի միշտ ջրահան մեքենան, եւ այդ կողմը վայրի ու ամայի է:

Երբ գնացքը կը կենար, աքսորեալներէն մաս մը պապակած կը վազէին ջուրին գլուխը, իսկ մաս մը կ'անցնէին ձախ կողմը անհրաժեշտ պատճառներով: Զինուորները, որ դարանակալ կը սպասէին փոսերու մէջ, յանկարծ կը յարձակէին այս խեղճ կիւներուն վրայ եւ կը համարձակէին բռնաբարել զիրենք նոյնիսկ մեծ կայարաններու մէջ: Անդին ջուրին գլուխը ժողովուած ասղիկներու եւ մանուկներու մէջ նոյնպէս ազատ

կը մտնէին Թուրքեր : Յանկարծ ճիշ մը կը բարձրանար , ուրիշ մը կ'աղաղակէր եւ կամ անօդուտ կերպով օդնութիւն կ'աղերսէր :

Չանազան կարգի խայտառակութիւններու նշաւակ դառնալով , այդ դժբախտ կիները յաճախ կ'աղաստանէին իրենց վակոնները առանց ծարաւնին կարենալ անցընելու : Խոնուած մանուկներու խումբեր այս իրարանցումին եւ շփոթութեան մէջ ոտքի տակ կ'երթային , կամ մեծ դժուարութեամբ ձեռք անցուցած ջուրը կը թափէր եւ սրտալիւծ խեղճ շրթները կարօտ կը մնային ջուրի : Երբեմն անոնք այնքան ծայրայեղ կերպով տագնապած էին ծարաւէն , որ կ'իյնային երեսի վրայ գետին եւ մեքենայէն թափուած ու ոտքերու տակէն անցած ջուրը կը լափլիղէին :

Այս բոլոր եղելութիւնները ամէն օր աչքի առաջք ունենալով , ես եւ ուրիշ ընկեր մը որոշեցինք ճար մը ընել : Հաւաքեցինք քանի մը արաբ տղաներ եւ կարգադրեցինք հաց , մանաւանդ ջուր բաշխել մեր կայարանը հասնող հայ աքսորեալներուն :

Անմիջապէս որ կառախումբը կը կենար , դոյլերով ջուր եւ հաց առած մեզ հետ՝ կը մօտենայինք վակոններուն : Շատերը վախնալով կայարանի զինուորներէն , վար չէին իջներ եւ իրենց ամանները կ'երկարէին որ լեցնենք : Եթէ ամանը պղնձեայ ըլլար , զինուորները կը յափշտակէին եւ կը փախէին : Սակայն պղնձէ ամանները բացառութիւն էին , ընդհանրապէս իրենց քով մնացած էին թիթեղէ ժանդոտած անօթներ , չորացած դըղումներ , գերմանացիներու թողած քոնսէրվի պարապ տուփեր : Այոնք որ այս բաները ունէին , տակաւին բազդաւորներն էին , մեծամասնութիւնը զուրկ էր ռեւէ միջոցէ ջուր ունենալու համար : Տաքէն ու տապէն այսահարած դէմքեր , չորցած շրթունքներ կարկամած

լեզուներով անհասկնալի եւ խուպոտ աղմուկ մը կը բարձրացնէին եւ անմիջապէս որ կարելի ըլլար, հազարաւոր բազուկներ կ'երկարէին եւ անմիջապէս որ կարելի ըլլար, հազարաւոր բազուկներ կ'երկարէին «Չո՛ւր... Չո՛ւր...» աղաղակելով :

Կառավարութիւնը հաշտ աչքով չէր նայեր մեր օդ-նութեան, որ ինքնին շատ քիչ բան էր բաղբալածամբ թշուառութեան : Այնուամենայնիւ ուշադրութիւն չէինք ընէր սպառնական ակնարկութիւններուն եւ ամէն անգամուն կը մօտենայինք վակոններուն, ամէն մէկս կրելով երկու մեծ ամաններով ջուր : Աքսորեալները ընդհանրապէս խոնուած էին բեռներու վակոններու մէջ, որոնք չորս փոքրիկ լուսամուտ եւ երկու դռներ ունէին եւ որոնք փակուած էին դրսէն : Երբ կը մօտենայի եւ դռներէն մէկը կը բանայի, ներսը խոնուած բաղմութիւնը, կարծես դժոխքէ փախիլ ուզելով, կը խուժէր վրաս եւ ամէն կողմէ անէծք կը թափէր վրաս, որովհետեւ կը կարծէին, թէ ես եմ դուռը դոցեր : Խեղճերը տեղ չունէին նստելու եւ որդերու պէս կը դեռային : Անհամար բերաններ մէկ բան կը պահանջէին «Չո՛ւր... Չո՛ւր...» : Ոմանք արհամարհելով ամէն վտանդ, դուրս կը նետուէին եւ կ'երթային դէպի ջրահան մեքենան :

Այդ անհամբեր, պապակած, մոլորուած բաղմութեան կանոնաւոր ջուր բաշխելը անհնարին կը դառնար եւ կէսը պարապը կը թափուէր : Զիրար կը հրէին, իրարու ձեռքէ յափշտակել կ'ողդէին ջուրով լի ամանները եւ հայհոյութիւններու, անէծքներու փոթորիկը կը բարձրանար, երբ դողդոջուն կամ կարկամած ձեռքերէ ամանը կը շրջէին եւ ջուրը կը թափէր ցնցոտիները թրջելով : Այն ատեն մանուկները լռին ու ինքնամփոփ կը կառչէին կնոջ հագուստներուն եւ ջուրի զովութիւնը վայելելու համար թրջուած լաթերը կը ծծէին :

Ամէն մէկը գերազրգուած իր կրած տանջանքներէն՝ թշնամական վերաբերմունք ցոյց կուտար իր աքսորի ընկերին : Անօթութիւնը եւ ծարաւը անյագ ու խեղաբար դարձուցած էր զիրենք :

Հացի բաշխումը աւելի դժուար էր : Չէի կարող իւրաքանչիւրին իր բաժինը տալ, որովհետեւ կը յարձակէին վրաս եւ հացը կորզելու համար ձեռքերս կը ճանկոտէին : Ստիպուած էի հեռուէն նետել եւ աչքերս կը դարձնէի չի տեսնելու համար, թէ ինչպէս հացը ինկած տեղը սոսկալի պայքար մը տեղի կ'ունենար :

Վերջի բաց վակոնը, որ ոչխարներու փոխադրութեան յատկացուած էր, անվամ մը կեցած էին՝ երկու կին իրենց երախաներով . ասոնք քղեցիներ էին՝ բոկոտն, ցնցոտիներով ծածկուած, որոնց պատուուածքներէն իրենց մարմնոյն ամէն կողմերը կ'երեւային : Բերած հացս սպառած էր, բայց անոնք աղերսանքով ուտելիք կ'ուզէին եւ աղեսարչ ձայներով կը պաղատէին : Չորցած հացի կտորներ գտայ եւ թաշկինակի մը մէջ կապելով, նետեցի իրենց, անմիջապէս երկու կիները մէկանց վագեցին հացին վրայ, իսկ մանուկները սողալով կը հետեւէին իրենց, պահ մը տեսայ իրենց արեւէն սեւցած երեսները, ցցուած ժանիքները, փոսացած աչքերը վայրի եւ տաղնապալի կիրքով մը վառուած, որովհետեւ անողոք պայքարի մը կը պատրաստուէին : Յառաջ եկաւ մեծ կռիւ . անոնք անխօս, կտրուկ ու հապճեպ շարժումներով կը պայքարէին եւ մանուկները սոսկալով կը դիտէին : Երկար տեւեց մաքառումը : Մէկը յաղթեց վերջապէս եւ տապալեց միւսը, որ ինկաւ գետին : Չաւակները լալով դէպի իրենց մայրը դիմեցին . իսկ յաղթող կինը, չորցած հացերը առնելով, թաշկինակը պատռեց, չի համբերեց քակելու, սկսաւ ուտել կատաղաբար, իսկ իր աղերսող որդիներուն տուաւ մէյ մէկ

կտոր: Վակոններու մէջ կը դտնուէին մանուկներ, որոնց մայրերը մեռած էին ճամբորդութեան ընթացքին: Այս անօգնական որբերը մէկ կողմ դիզուած կը մնային եւ ընդհանուր խառնաշփոթութեան մէջ չէին համարձակեր յառաջանալ, ջուր խմել: Միւս կիները, որ մոռցած էին նոյնիսկ իրենց հարազատ զաւակները, չէին հողար այս խեղճերը, այնպէս որ երկաթուղիի ընկերութեան հառադիրները հոս հոն դրեթէ ամէն օր կ'իմացնէին, թէ ծարուէն մեռան 10-12 մանուկներ: Եւ այս կառախումբերը կ'անցնէի՝ այնպիսի կայարաններէ, ուր մեծ դիւրութիւններ կան ջուր բաշխելու: Պէտք է նկատողութեան առնել նաեւ, որ այս թշուառ ամբօխը մաս կը կազմէ հարուստ, կրթուած, նրբացած ժողովուրդի մը: Անոնք մեծ մասամբ քաղաքացի էին եւ բնական վիճակի մէջ ընտանեկան սէրը իրարու մասին, գուրգուրանք եւ գոհողութիւն իրենց ամենաբարձր առաքինութիւնները կը կազմէին:

Երկարատեւ եւ անլուր դժբախտութիւնները խեղաթիւրած էին ոչ միայն իրենց Փիզիքական երեւոյթը, այլ եւ իրենց հոգին, եւ անոնք դարձած էին ոեւէ մարդկային զգացումէ զուրկ անասնային՝ արարածներ, կառչած՝ յուսահատօրէն կենդանական կեանքին եւ որոնց մէջ մէկ զգացում, մէկ արհաւիրք կը տիրապետէր այլեւս՝ անօթութիւնը եւ ծարուր: Անգամ մը, երբ վակոնին դուռը բացի ջուր տալու համար, կնոջ այլակերպ երեւոյթ մը ցցուեցաւ դիմացս, ամէնքը կը վախնային անկէ եւ կը հեռանային, այնպէս որ շուրջը պարապ ձգած էին: Զիս տեսնելով, աքսորեալները պաղատագին խնդրեցին, որ դուրս հանեմ զինքը եւ ըսին, թէ կատաղի խելագար մըն է: Կինը իր սուր եւ խոթող նայուածքը պղտոցուց ամենուն վրայ, երեսն ի վար ինկած թնջուկ մազերը ետեւ նետեց եւ ջուրի դոյլը

բարձրացնելով բերնին, սկսաւ անյաղաբար խմել, յետոյ ինձ նայելով ըսաւ .

— Ես խենթ չեմ, եղբա՛յր :

Հակառակ որ ջուրը սառն էր, անիկա իր ծարաւը չի յազեցուց եւ ըսաւ տրտնջալով .

— Աս տաք է, ինձի պաղ ջուր տուր :

Երբ բաւական հանգստացաւ, դուրսը շարժեց ջղաձգօրէն եւ կրկնեց .

— Ես Գէորդ պապին աղջիկն եմ, ես խենթ չեմ :

Ձեռքերը ամբողջովին արիւնոտ էին եւ մատները կը կծկէր, կարծես երեւակայական բան մը փարատելու համար եւ ափսոսանքով նայուածք մը ունէր, որ թուրք զինուորներն իսկ չի կրցան դիմանալ անոր վայրագ արտայայտութեան եւ վախնալով փախան հեռու :

Երկաթուղիի ամէն ազգէ քրիստոնեայ պաշտօնեաները խոր կերպով ազդուած էին ամէն օր պարզուող թշուառութեան այս պատկերներէն, բայց իրենց կարեկցութիւնը հիմնական արդիւնք չէր կարող ունենալ : Երբ հանդիպէին բաց դաշտերու վրայ մնացած, մոռցուած կամ փախած մանուկներու եւ աղջիկներու, կառավարութենէն դադտնի կը պահէին սնտուկներու մէջ կամ ապրանքներու ներքեւ եւ կը փոխադրէին Հալէպ : Այսպէս անցաւ Սեբաստացի 15 տարեկան տղայ մը, որ աղջկան հագուստ հաղած էր, եւ Հայաստանցի միակ այր մարդն էր, որուն հանդիպեցայ անցնող անվերջ բազմութիւններու մէջ : Երբ զգաց, որ հասկցայ իր ծպտուած ըլլալը, սարսափահար խնդրեց, որ ոչ ոքի չի յայտնեմ : 40 վակոնով կազմուած կառախումբ մը գրեթէ բոլորովին պարապ եկաւ ճարապլուս : Այցելելով վակոններուն, հանդիպեցայ երգնկացի կնոջ մը :

— Ի՞նչպէս կ'ըլլայ որ հանդիստ թողեր են քեզ եւ մինակդ կը ճամբորդես, հարցուցի :

Կինը լսելով հայերէն խօսիլս, ցնցուեցաւ եւ ըս-
կաւ արտասուել, յետոյ սկսաւ պատմել :

— Իմ մէկ աղջիկս, որ շատ գեղեցիկ է, կարողա-
ցայ պահել Երզնկայէն մինչեւ Արաբ Բունար անա-
կաշառք տալով ամենուն, Արաբ Բունարի մէջ քրիստոն-
եայ պլման մէհէնտիգ (գերմանացի երկրաչափ) մը,
երբ տեսաւ աղջիկս, շատ հաւնեցաւ եւ ըսաւ, թէ Հայե-
րու եւ Ալմաններու մէջ տարբերութիւն չի կայ, քրիս-
տոնեայ են, եւ համոզեց զիս ու աղջիկս առաւ, ըսելով
թէ հետը պիտի ամուսնանայ : Հրաման ըրաւ նաեւ, որ
զիս ապահով հասցնեն Հալէպ եւ խոստացաւ թէ 2-3
օր ետք աղջկանս հետ ինքն ալ կուգայ եւ Հալէպի մէջ
կը պսակուին : Առաջարկեցի, որ աղջիկս ինձ մօտ մնայ,
բայց անիկա ըսաւ. «Ոչ, աւելի լաւ է ինձ հետ կենայ
եւ վարժուի իմ բնութեանս եւ լեզուիս :» Նոյն կինը
պատմեց Երզնկայի տեղահանութեան մասին հետեւեալ
կերպով : «Կառավարութիւնը 24 ժամ միջոց տուաւ Հա-
յերուն, ուրկէ ետքը ամէնքն ալ պէտք է հեռանային
քաղաքէն :

«Յուսահատութիւնը տիրեց ամենուն, բայց առաջին
դիմումներէն իսկ հասկցուեցաւ, թէ հրամանը վճռա-
կան էր եւ իշխանութիւնը զիջող պիտի չըլլար ոչ ոքի :
Այն ատեն Հայերը հապճեպ կերպով պատրաստուեցան
եւ ամէն մէկը իրենց հատ առին իրենց դրամական կամ
ոսկեղէն հարստութեան մէկ մասը : Վաճառականական
տուններու ապրանք, առնելիք ու տալիք, շարժուն եւ
անշարժ հարստութիւն՝ ամէն ինչ եւ ամբողջովին մը-
նաց թշնամիին ձեռքը : Դպրոցի տնօրէնը եւ իր կինը
եւ ուրիշ Բարուստ Երզնկացի մը հասկցան թէ ինչ կը
սպասէր իրենց եւ ինքզինքնին թունաւորեցին :

«Քսանչորս ժամը լրանալէն ետք ամբողջ ժողովուր-

դը, այր եւ կին խառն, ժողովելով ճամբայ հանեցին: Սկիզբները բաւական լաւ կը վարուէին եւ այնպէս կը ձեւացնէին թէ հսկողութիւնը խիստ է: Բայց երբ հասանք Քեմախի կիրճը, ժանտարմաներուն վերաբերմունքը փոխուեցաւ: Զինուորական մը իր ժանտարմաներով սկսաւ հաւաքել այն հարստութիւնը, որ իրենց հետ առած էին տարադրեալները: 50,000 կանխիկ ոսկի, դէզ մը զարդեղէններ յանձնուեցան զինուորներուն, որոնք այդ բոլորը տարին իրենց հետ, տրուած հրահանդին համաձայն: Կողոպտուած հայ ժողովուրդը, սրտաբեկ եւ զգալով նոր դժբախտութիւններ, ժանտարմաներու հրամանին համաձայն դուրս ելան կիրճէն եւ ահա անմիջապէս Քուրդերու խուժան մը դիմաւորեց մեզ: Հող՝ կիները եւ այրերը բաժնեցին իրարմէ եւ այրերը որոնք բոլորովին անզէն էին, առաջնորդեցին մերձակայ բլրակի մը մօտ, ուր սկսան կոտորել անխնայ, բիրերով, քարերով չարաչար սպաննելով եւ գլուխները ջախջախելով:

Աղիողորմ եւ օրհասական աղաղակներ կոտորուողներուն աշխարհ բռնած էին: Կը պոռային, կ'ուզէին երթալ դէպի իրենց հարազատները, իրենց կորսուող սիրելիները, բայց ժանտարմաները խարաղանի հարուածներով կը զսպէին զիրենք ու արցունքի հետ յաճախ արիւն կը հոսէր վիրաւորուած դէմքերու վրայէն:

«Քուրդ խուժանլ, մինչեւ կէսօր լրացնելէ ետք իր գործը, եկաւ կիներու խումբին քով: Երբ ընտրեցին գեղեցիկ աղջիկներն ու տարին, այն ատեն ժանտարմաները մեզ առաջնորդեցին մեծ աղբիւրի մը մօտ եւ հոն արգիլեցին մեզ ջուրին մօտենալ: Ծարաւ էինք, այրուած էինք, բայց աղբիւրին քով երթալ անկարելի էր:



Մշոյ Ս. Առաքելաց Վանքը:

Սեւքերնիս կորսնցուցած, սրտերնիս արիւնստ, խրոնուած էինք իրարու մօտ եւ յուսահատութենէ ու ցաւէ կը պոռայինք ժանտարմաներու անկարեկիր աչքերուն տակ, որոնք կը հեզնէին մեր ցաւը ու կը ծաղրէին մեզ: Մինչեւ երեկոյ այս դրութեան մէջ սպասելէ ետքը ստիպուեցանք մէջտեղ հանել թագնած դրամ եւ զարդեղէն՝ եւ կաշառել ժանտարմաները, որով միայն հաւանութիւն առինք ջուր խմելու:

«Ժանտարմաները ամէն երեկոյ մեզմէ կը պահանջէին մէյմէկ կոյս աղջիկ: Եթէ չի տայինք, մեզ ծարաւ կը ձգէին, առանց հանդիստ տալու մեզ կը քաշեցնէին: Երբ սպառած յօդնութենէ, ծարաւէ, կը խնդրէինք դադար կամ ջուր, իրենց պահանջքը կը կրկնէին եւ տեղի չէին տար, մինչեւ որ դոհացում չի դանէին:

«Այս պայմաններու մէջ կատարեցինք ճամբորդու-

Թիւնը Երզնկայէն Սամսազ, որու միջոցին, անօթու-
թենէ ծարաւէ կը մեռնէին միշտ որոշ թիւով մանուկ-
ներ եւ ծեր կիներ: Քուրդեր կամ Թուրքեր մեր խումբը
տեսնելով, կը վազէին կուզային եւ կը տանէին ազ-
ջիկներ ու հարսեր, քանի մը զրուշով վարձատրելով
հսկող ժանտարմաները:

«Հասանք Սամսազ, մնացինք մէկ ամբողջ օր: Տեղ-
ւոյն Թուրքերը կը մտնէին մեր մէջ անարգել եւ բռնա-
նալով կամ վճարելով, կ'առնէին մանուկներ եւ ազջիկ-
ներ, այնպէս որ, երբ Արաբ Բունար հասանք, ազջիկ
չէր մնացած մեր մէջ:»

Ուրիշ օր մը վահոնին մէջ Չմչկածաղցի կին մը
կը պատմէր:

«Քուրտ ցեղի մը պէյը մեզ ուղարկեց 70 ջորի եւ
լուր տուաւ, թէ Թուրք կառավարութիւնը մեզ պիտի
կոտորէ, որով կ'առաջարկէր. «Այն, որ կարող է, ջո-
րիով կամ հետիտոն դայ իմ մօտս ապաստանի»:»

«Մեր շրջանի չորս դիւզերու հայ բնակիչները ամ-
բողջութեամբ փախան պէյին մօտ, բայց մեզ անհնար
եղաւ այդ հրաւէրին պատասխանել, որովհետեւ կառա-
վարութեան ժանտարմաները եկած էին արդէն: Մեզ
ժողովեցին հապճեպով եւ տարին: Երէկ մարդիկ բաժ-
նեցին, զրկեցին Խարբերչ, իսկ մեզ լեռներու միջով
երկար ու դժուար ճամբաներով հետիտոն բերին մին-
չեւ Արաբ Բունար»:

Այս աքսորեալները նոյն ճամբէն անցնելով, կրած
էին Երզնկայի հայ ժողովուրդին կրած տառապանք-
ներուն նման չարչարանքներ:

Երբ Թուրք կիները կ'իմանային, որ Հայաստանցի
Հայեր պիտի անչնին ճարապուսի կայարանէն, իսկ-

բերով կուզային եւ անպատմելի խայտառակ խօսքերով կը հայհոյէին դժբախտներուն : Կ'ըսէին թէ իրենց սր-դիները Հայաստանի դաշտերուն մէջ Հայոց զնդակներէն մեռած են , թէ իրենց կրած նեղութիւնններուն պատճառը Հայերն են եւայլն : Անոնք կը մօտենային վակոններուն եւ հակառակ հայ աքսորեալներու դըժբախտ եւ թշուառ երեւոյթին , ամէն կարգի նախատինք կը թափէին անոնց վրայ , կը թքնէին , կը քարկոծէին : Պատահած է նոյնիսկ , որ թուրք կիներ մտնելով վակոնները , խեղդած են հայ կին մը կամ մանուկ մը : Իրենց ատելութիւնը այնքան սաստիկ էր , որ յաճախ կը յաջողէին գրգռել իսլամները տեղւոյն խաղաղ Հայերուն դէմ :

Հայ բժիշկ մը , որ թուրք անուկով Ռաս իւլ Այնէն կը վերադառնար , պատմեց թէ Չիֆթեկէն մինչեւ Ռաս իւլ Այն , որ 180 քիլոմէթր է , գիծին երկու կողմերը հայ կիներու եւ մանուկներու դիակները դիզուած են , կայարաններու երկաթուղիները ամբողջութեամբ արիւնով չաղախուած են , շատ տեղեր դիծերու միացման տեղը կազմուած եռանկիւնին մէջ լճացած արիւնը խլտացած է :

Այս բոլորը կը տեսնէին օտարները եւ զերմանացի գինուորականները : Կիներ , հետաքրքրուած , կայարաններու մէջ ամէն օր պարզուող սոսկալի տեսարաններէն , կուզային լուսանկարելու համար եւ իրենց յուսացածէն աւելի արդիւնք ձեռք բերելով , դժ սրտով կը վերադառնային :

ՏԵՂԱՀԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՀԵՏԻՈՏՆ ԴԵՊԻ ՀԱԼԵՊ

Արաբկիրի շրջանէն Անջրդի դիւղացի հարս մը պատմեց այսպէս :

— Ուրբաթ օրը կարմիր հաւկիթը խաշեցինք, բայց չարաթ երեկոյին չի կրցանք ո տել: Նոյն օրը մեզ տեղահասն ըրին մեր դիւղէն եւ ճամբուն վրայ կոտորեցին, թալլեցին, աղջիկները ու կիները տարին: Քուրտ մը զիս փախցուց, բայց յաջողեցայ դայն խաբել եւ զիշերանց վերադարձայ մեր դիւղը, ուր Հայ չէր մնացեր: Քանի մը օր շրջակայքը թափառելով, Քուրտերու մօտ գտայ իմ ծանօթներս ու ազգականներս: Սոսկ ինչ հետ դադարի տեսակցելով, յորդորեցի ամէն ինչ իմ վրատանդը աչք առնեն եւ փախին ինձ հետ: Երբ Քուրտսարդ կիներ եկան միացան ինձ եւ միասին ճամբայ ելանք դէպի Հալէպ: Գիշերները լեռներու մէջ պատկելով, ցորեկները ձորերէն անցնելով, առանձին, անօրնական, անօթի կը յառաջանայինք դանդաղ կերպով: Պահակները կեցած էին ամէն տեղ եւ ամենէն աննշան անցքը պահուած էր պղտիկ պահականոցով մը, այնպէս որ ամէն անգամուն ստիպուած էինք երկայն շրջաններ ընել եւ մէկ երկու օր թափառել, որպէսզի չի հանդիպինք պահակին: Մեր պատիւը եւ ազատութիւնը փրկելու համար մոռցեր էինք ցաւը, անօթութիւնը, յոգնութիւնը եւ ամէն տեսակ չարչարանքներ: Երբեմն սպառած կ'իյնայինք չոր հողին վրայ, ոտքերնիս արիւնոտած եւ ուռած եւ կը տնքայինք յոգնութենէ: Երբեմն կը կարծէինք, որ այլեւս ոտքի չենք կարող կանգնիլ, բայց անօթութիւնը մեզ կը հարկադրէր խոտ փնտռելու, որովհետեւ մեր միակ սը-

նունդը այդ էր: Բայց մեր ամենէն մեծ տանջանքը ծաւաւն, էր: Յոգնածութիւնը, խոտակերութիւնը եւ արեւին տաքութիւնը մեզ այնպէս մը ծարաւեցուցած էին որ մեր պապական լեզուն կը ծանրանար մեր բերնին մէջ եւ մեր չորցած ու վիրաւորուած շրթները չէինք կարող շարժել իրարու հետ խօսելու համար: Լռին եւ հապճեպ շարժումներով ջուր կը փնտուէինք եւ բարձրութիւններ մագլցելով, կը նայէինք, եւ ուր որ լըճացած ջուր տեսնէինք, դէպի հոն կ'երթայինք անմիջապէս: Անգամ մը հանդիպեցանք լճակի մը, որ մօրացած էր, շուրջի հողերը չորցած, ճեղքրտուած էին, իսկ լճակին եզերքը լարձուն տիղմ մը կար: Մօտենալ փորձողը մինչեւ ծունկը կը խրէր եւ հազիւ կրնար ազատուիլ առանց ջուրին մօտենալու: Մեր ընկերուհիներէն մէկը այնքան կը տանջուէր ծարաւէն, որ հակառակ մեր զբուսութիւններուն նետուեցաւ ջուրին մէջ եւ չի կրնալով յենակէտ մը գտնել, ընկղմեցաւ ջուրին ներքեւ թանձրացող ցելսին մէջ:

Հեռաւոր ճամբէն Քուրտ մը կ'անցնէր, ճարահատ օգնութեան կանչեցինք զինքը: Անմիջապէս եկաւ եւ համարձակութեամբ նետուելով ջուրին մէջ, ազատեց մեր ընկերուհին: Մենք այնքան ծարաւած էինք, որ երկար չէինք հետաքրքրուեր մեր ընկերոջ վիճակով եւ անոր թրջուած փէշերը քամելով, սկսանք անյազաբար ծծել կեղտոտ հեղուկը:»

Լսեցինք, որ չորս մակոյկով Եփրատի վրայէն հարուստ Հայեր եկած են Պէրէճիկի մօտ եւ կայան ընտրած են բաց դաշտի մէջ: Ես (Հ.Թորոյեան) դացի իրենց մօտ եւ տեսայ հետեւեալը: Գետեզրի աւազին վրայ, խոռոչի մը մէջ ցիր ու ցան նստած էին 60 կին ու երախայ եւ 10 այր, որոնց մէջ էին ինձ ծանօթ յայտնի

ընտանիքներու պատկանող անձնաւորութիւններ, որոնք ամէնքն ալ ձեռքերնին ձմերուկներ բռնած՝ կրծելով կ'ուտէին: Աստիճ մասնաւոր արտօնութիւն ստացեր էին Հալէպ հասնելու, որովհետեւ էրզրումցի երեւելիներէն մէկուն եղբայրը, որ Հալէպի մէջ կառավարական բարձր պաշտօնեայ էր, յաջողեր էր փրկելու իր եղբայրը եւ բազմանդամ ընտանիքը: Այդ էրզրումցիներու գլուխը պոնուոզ անձը պատմեց այսպէս:

— Կառավարութիւնը էրզրումի մէջ մեզ 10 օր պայմանաժամ տուաւ քաղքէն հեռանալու: Այդ միջոցին թուրքերը մեզ հետ վարուեցան շատ քաղցրութեամբ եւ մեզ աւելի կատարելապէս խաբելու համար նոյնիսկ թոյլ չի տուին, որ ցած գիներով մեր ապրանքները ծախենք, որովհետեւ կ'ըսէին թէ ասիկա ժամանակաւոր բան է եւ մօտ առենէն կրկին պիտի վերադառնանք: Կը յորդորէին, կը խոստանային եւ ամէն կերպ անուշելով, կը ջանային ընել այնպէս, որ մենք չի հասկընանք, թէ ինչ պիտի դայ մեր գլխուն: Այսուամենայնիւ Հայերը ժողով կազմեցին եւ խորհրդակցեցան իրենց բռնելիք ընթացքին վրայ:

Երիտասարդները կ'առաջարկէին չի հնազանդիլ կառավարութեան հրամանին, կը սնդէին նոյնիսկ, որ պէտք էր դիմադրել եւ չի մեկնիլ մեր տուներէն, կըրուիլ եւ ի հարկին կուտի մէջ իյնալ: Բայց հարուստները եւ տարեց մարդիկ դէմ էին բռն միջոցներու: Նախամեծար կը համարէին ենթարկուիլ կառավարութեան հրամանին եւ այդպէսով կը կարծէին փրկել ժողովուրդին կեանքը, մինչդեռ անհնազանդութիւնը, մանաւանդ բռնի ուժով դիմադրութիւնը վերին աստիճանի ազետաբեր կրնար ըլլալ ամենուէն համար: Խոհեմութեամբ վարուիլ քարոզողներու քուէն մեծամաս-

նութիւն շահեցաւ, եւ Էրզրումի Հայերը որոշեցին ան-
դահան ըլլալ առանց ոեւէ դիմադրութիւն ցոյց տալու :
Տասը օրուան պայմանաժամը լրանալէ ետքը կառավա-
րութեան աջակցութեամբ վարձեցինք կառքեր, սայլեր,
ձիեր, էշեր, ջորիներ, եւ բեռցուցինք մեր թանկագին
իրեղէնները եւ մեր հարստութեան մէկ աննշան մասը :
11րդ օրը գայմազամին եւ 100 պաշտպան զինուորներու
ուղեկցութեամբ ճամբայ ելանք մեր հայրենի քաղա-
քէն դէպի Երզնկա : Կառավարութեան բարձր պաշտօն-
եաները իրենց յարգանքը յայտնելու համար մեկնող
ժողովուրդին, խմբով ողջերթի եկան մինչեւ Էրզրումի
դռները եւ ամէն կարգի քաղաքավարական պատիւնե-
րով մեզ ճամբու դրին : Դժուար և դառն բան էր նոյնիսկ
ժամանակաւոր կերպով մեր տունն ու տեղը թողուլ
բայց Թուրքերու մեզ ցոյց տուած վերաբերմունքը մին-
չեւ վերջին պահը այնպէս էր, որ կասկածը իսկ
չունեցանք այն սարսափելի դէպքերուն, որոնց սահ-
մանած էին մեզի : Էրզրումէն մինչեւ Երզնկա մեզ ըն-
կերացող պայմազամը եւ զինուորները վերջին ծայր
ակնածութեամբ կը վարուէին մեզ հետ, նոյնիսկ զին-
ւորները չէին մօտենար կիներու խումբերուն եւ կը քա-
լէին հեռուներէն :


Բաբերդի մօտ տեսանք որ 2-3 դիակներ ինկած են
դաշտին մէջ, բայց դարձեալ չխորհեցանք, որ ասիկա
Թուրքերու կողմէ կատարուած ոճրագործութիւն մըն
էր : Հասանք Երզնկայի մօտ, ուր բաց դաշտին վրայ
կայանք առաւ արտորեալ ժողովուրդը : Մն եւ մէկ քանի
ծանօթներ գացինք քաղաքը մեր գործերը կարգադրե-
լու եւ տուն կամ սենեակ վարձելու, որպէսզի փոխադ-
րենք մեր ընտանիքները : Բայց երբ մտայ Երզնկա,
սոսկումը եւ ապշութիւնը զիս պատեց : Հայերու շու-



Մշոյ Սուրբ Կարապետի վանքը

կան դատարկ, տուները եւ ամբողջ քաղաքը ամառի : Ոչ մէկ Հայ չէր մնացեր... : Շփոթած, յուզուած դիմեցի կուսակալին, բայց անիկա խուսափեցաւ պատասխանելու իմ հարցումներուս եւ անմիջապէս ինձ տեղեկացուց, թէ Հալէպէն հրահանգ զրկած են իրեն որ զիս եւ իմ ընտանիքս ժանտարմաներու ընկերակցութեամբ սպահով հասցնէ Հալէպ : Այն ատեն հասկցայ ամէն ինչ եւ մէկ անդամէն ըմբռնեցի, թէ ի՞նչ դժբախտութիւն եկեր էր մեր գլխուն :

Շտապով ուղեցի մեկնել, բայց կուսակալը պնդեց որ սպասեմ եւ առանց ինձ յատկացուած ժանտարմաներուն ճամբայ չելլիմ, որովհետեւ ամէն Հայ այլեւս սպառնալիքի ներքեւ էր : Քիչ յետոյ ժանտարմաներով հասայ այն դաշտը, ուր էր դրումի հայ ժողովուրդը



Մշոյ Մ. Կարապետ Վանքի մականքը:

կանգ առած էր, եւ մէկ ակնարկով տեսայ սոսկալի դրութիւնը: Էրզրումէն մեղ հետ եկող գայժագամբ եւ զինուորները անհետացեր էին եւ դաշտը ծածկուած էր Քուրդերէ, Թուրքերէ եւ զինուորներէ կազմուած խուժանով մը, որոնք խառնուած էին անպաշտպան ժողովուրդին մէջ, կը կողոպտէին, կը կոտորէին եւ կ'առեւանգէին: Ճիչ, աղաղակ, ցաւի եւ յուսահատութեան գոչիւններ կը խառնուէին թշնամիին հայհոյութիւններուն եւ ծաղրանքներուն: Հազիւ կարողացայ ինձ հետ

եղող ժանտարմաներու օգնութեամբ ազատել ընտանիքս եւ մէկ քանի բարեկամներ, իսկ մնացած հազարուոր ժողովուրդը ցիր ու ցան եղած էր : Շատեր ոտքերու տակ կոխոտուած էին : Մանուկներ, ծեր կիներ, իրենց դեռ նոր մորթուած սիրելիներուն կառչած, կուլային եւ կը ճուային : Հաղարաւոր դիակներ փռուած էին ամէն կողմ : Փոքր մաս մը այդ մեծ բազմութենէն ցան ու ցրիւ եղած էր լեռներու եւ դաշտերու մէջ, իրար կորսնցուցած, խելակորոյս վիճակի մէջ : Այն կարաւանը որուն յանձնած էի իմ մետաքսի հակերս եւ արժէքաւոր իրերս, նոյնպէս անհետացած էր :

Այս իրարանցումի միջոցին հասաւ Տրապիզոնի աստրեալ Հայերու մէկ խումբը, որուն մէջ էին երկու յայտնի վաճառականներ : Ասոնք եկան միացան ինձ, իբր իմ ընտանիքիս անդամ, եւ մենք առանց դադարի կազմեցինք մեր փոքր կարաւանը եւ անցանք դէպի Քեմալս : Այդտեղ Քեմալսի կիրճին մէջ գինուորական մը ձերբակալեց իմ անդրանիկ որդիս՝ 28 տարեկան եւ իր ընկերը : Հակառակ իմ աղաչանքիս եւ խոստումներուս՝ անիկա չյանձնեց որդիս : Խոստացայ մինչեւ 20,000 սուկի դաւակս փրկելու համար, բայց գինուորականը անդդուելի մնաց : Ստիպուած՝ սուզը սրտերնիս թողուցինք մեր անդրանիկ որդին եւ անցանք Մալաթիա, ուր ուղեցի մեր վաճառականական մասնաճիւղերէն քիչ մը դրամ առնել, բայց քաղաքը բոլորովին դատարկ էր : Հոս ալ Հայ չէր մնացեր եւ քիչ մնաց որ ես ինքս ալ զոհ երթայի իմ յանդնութեանս :

Շարունակեցինք մեր ճամբան եւ մօտակայ գիւղի մը մէջ կանոյ առինք գիշերելու համար : Տեղուոյն պէկերէն մէկը մօտեցաւ մեր խումբին եւ երկար որոնելէ ետք հաւնեցաւ Գավաֆեանի նոր հարսին : Մեզ հետ եղող ժանտարմաները ջանացին պաշտպանել երիտա-

սարդ կինը, բայց սէկը զայրացաւ այդ ընդդիմութեանէն եւ սպառնաց բնաջինջ ընել մեր ամբողջ խումբը, եթէ այդ կինը չյանձնուի իրեն: Գավաֆեանի հարսը, որ կորսնցուցած էր իր ծնողքը, ամուսինը եւ գրեթէ ամբողջ ընտանիքը, եւ բոլոր ժամանակը մտայլ յուսահատութեան մէջ էր, տեսնելով որ իր մասին յառաջ եկած վէճը կրնայ վտանգաւոր դառնալ, կամովին յանձնուեցաւ պէկին, մեր խումբը յարձակումէ փրկելու համար:

Գավաֆեանը էրզրումի հարուստ վաճառականներէն մէկն էր եւ կառավարութեան յանձնած էր 20,000 ոսկի արժողութեամբ շաքար, սուրճ եւ դրամ: Վճարած էր իր երեք որդիներուն պէտէլը եւ աշխատած էր բանակի պարենաւորման գործերը դիւրացնելու եւ կանոնաւորելու: Բայց եւ այնպէս իր երեք որդիները եւ կինը սպաննած էին իր աչքերուն առջեւ եւ ինքն ալ չդիմանալով վիշտին, յանկարծամահ եղած էր Երզրնկայի մէջ:

Հասանք Սամսադ, ուր մնացինք երեք օր: Սամսադի բոլոր Հայերը քշուած էին եւ մնացեր էին միայն քանի մը հայ կիներ, որոնք շուկային մէջ քէպապուճիներու մօտ, սրճարաններու մէջ կ'աշխատէին իբրեւ ստրուկ: Հանդիպեցայ չոպանի մը, որ ունէր հայ կին մը եւ երկու հայ սպասուհիներ:

Զիս համարելով հասկացող մարդ, ցոյց կուտային թիթեղէ ամաններով լեցուն ոսկի մատանիներ, զարդեր, որոնք վերջին ծայր ատան գինով կը ծախէին: Պազարին մէջ դիզուած էին հազարաւոր գորգեր եւ շատ թանկարժէք իրեղէններ: Սմէն ոք դռողացած եւ լըրբացած էր, եւ նոյիսկ մեզ ընկերացող ժանտարմաները որոնց՝ երբ փոքր ծառայութեան մը փոխարէն 100 ոսկի կուտայի, չէին ընդուներ ըսելով թէ քիչ է:»

ՊԵՐԷՃԻԿԷՆ ԱՆՑՆՈՂ ՀԱՅԵՐՈՒ ԽՈՒՄԲԵՐ

ՄՈՒՐԱ՛Տ, ՄՈՒՐԱ՛Տ, ՄԵՐ ՄՈՒՐԱՏԸ ԿԱՏԱՐԵՑԻՐ

Մօտ 20,000 հոգի կին եւ երախայ, որոնք զանազան վայրերէ տեղահանուած Հայեր էին, մեծամասնութեամբ Խարբերդցի եւ Էրզրումցի եւ որոնք կը վրանուէին Եդեսիոյ մէջ (Ուրֆա), կառավարութեան հրամանով տեղափոխուեցան Պէրէճիք: Այստեղի թուրքերը, որ ծայրայեղ կերպով հայատեաց էին եւ կը սպասէին այսպիսի առիթի մը, թափուեցան աքսորեալներուն վրայ եւ «Ասոնք մեր զերիներն են, մեր դէմ կըլուուող ժողովուրդն է» ըսելով սկսան կողոպտել եւ առեւանգել: Ամէն մէկ թուրք՝ աղջիկ մը կամ կին մը վերցուց: Նոյն իսկ 12 տարեկան աղջիկները տարին կնութեան առնելու համար: Ծեր կիներ, «սէվապ» է (Աստուծոյ ընդունելի է) ըսելով, կուգային, աղջիկներ կը տանէին իրենց բացակայ որդիներուն համար: Թուրք ժողովուրդին թոյլատրուած էր ամէն տեսակ վարժունք եւ հայ աքսորեալները ենթարկուած էին անոր քմահաճոյքին եւ ոչ մէկ բան զիրենք կը պաշտպանէր: Իմ ծանօթներէս մէկը, Հասան էֆէնտի, որ 50 տարեկան մարդ էր, ինձ կ'ըսէր առանց քաշուելու.

— Տասնհինգ տարեկան աղջիկ մը կար, շատ ալ գեղեցիկ, որքան համոզեցի որ իր կամքով ամուսնանայ հետս, բայց մերժեց. ես մեղքացալ զինքը եւ չուզեցի բռնանալ եւ իմ եղբօրս տուի, որ ինձմէ տասը տարով փոքր է:

Աքսորեալները երկու շաբաթ մնացին Պէրէճիքի դաշտին մէջ: Այլեւս ոչ աղջիկ մնացած էր իրենց մէջ, ոչ մանուկ, որովհետեւ ոչ միայն տեղացի ժողովուրդը,

այլեւ շրջակայ գիւղերու գիւղատեմները կասսավարութեան հրամանով եկան եւ իրենց բաժին ինկած աղջիկները եւ մանուկները տարին: Մնացեր էին միայն պառուաներ եւ հիւանդացած երախտաներ, որոնք յաջորդաբար մահացան եւ այսպիսով 20,000 հոգինոց արտորեալներու խումբը բնաջինջ եղաւ: Գարածեան անունով հայ կին մը, որ Պէրէճիքի շրջակայ գիւղերէն մէկուն մէջ Թուրքերու ձեռք ինկած էր, լսելով որ մօտերը Հայեր կան, հետեւեալ երկտողը յաջողած էր զըրկել. «Ես եւ աղջիկս ողջ ենք: Ամուսինս կը գտնուի Ամերիկա: Խնդրեմ իրեն նամակ գրէք, որ պայ մեղ ազատէ: Մենք անտանելի չքաւորութեան մէջ ենք, խնդրեմ մեզի օգնեցէք դրամով:»

Տասը տարեկան քուրդ պատանի մը իրենց գիւղը գտնուող հայ կիներու մասին կը պատմէր այսպէս. «Ամէն առաւօտ անպատճառ կը լուացուին եւ շատ ջուր կը գործածեն: Չեն ուզեր մեր քով նստիլ, կ'ըսեն դուք ալտոտ էք, ձեր վրայէն հոտ կուզայ: Մեր արւած հացը չեն ուտեր, ըսելով թէ չոր է: Կ'ըսեն «մեր երկիրը լաւ կ'ուտէինք»:

Հարցուցի Քուրդին.

— Տղայ, ինչո՞ւ չոր հաց կուտաք: Անիկա պատասխանեց. — Հայրս մասնաւոր չոր հաց կուտայ որ մեռնին»: Հետզհետէ գրգռուելով, քուրդ տղան աւելցուց. «Կեաւուր կնոջ աղջիկը ուղեցինք եղբօրս համար, չտուին. ինչպէ՞ս մենք անոնց կակուղ հաց տանք: Բայց ոնին իմ տարիքիս փոքր աղջիկ մը, որ շատ լաւ հէքեաթներ կը պատմէ, ես այդ փոքր աղջիկը շատ կը սիրեմ»:

Սենեակիս մէջ նստած էի, երբ Թուրքերուն ձայնը լսեցի, որ կը պոռային.

— ԵՏՍԻՐ ԿԷՆԻՅՕՐ, ԵՏՍԻՐ՝ (ՎԵՐԻ ԿՈՒՎՁՅԱՅ ԿՈՐ, ԳԵՐԻ՝):

ԹՈՒՐՔԵՐԸ ՀՁՅԵՐԸ Կ'ԱՆՈՒԱՆՔԻՆ ԿԱՄ «ԵՏՍԻՐ» ԿԱՄ «ՄՈՒՀԱՃԻՐ» (ԳԵՐԻ ԿԱՄ ՂԱՂԹԱԿԱՆ):

ԿԷՍՕՐ ԷՐ ԵՆ ԱՍԱՏԻԿ ՄԱՔ. արեւը այնքան կրդիչ էր որ թուշունները մտած էին ժայռերու շուքին ներքեւ: Սենեակին մէջ ջերմաչափի աստիճանը բարձրացած էր մինչեւ 42: Հակառակ այս սոթադին ժամուն, աքսորեալները կը քալեցնէին եւ ես հետաքրքրութենէ մղուած, դուրս վազեցի եւ թուրքերու միջեւ խստուրեւով դացի դիմաւորելու Հայերը: 600է աւելի բաղամութիւն մը կ'իջնէր բլրակէ մը դէպի ընդարձակ եւ աւազուտ դաշտը: Անոնք ոչ թէ կը քալէին, այլ կը դուրուէին: Երբ տեսան Եփրատը, իրենց ուղին փոխելով դիմեցին դէպի ջուրը: Մանուկները ետ չի մնալու համար, իրենց մօրը քղանցքներէն կախուած կը շտապէին դէպի գետը: Յլի կիներ՝ պապակած՝ չէին կարող քալել եւ նստած էին աւազին վրայ: Ծեր կիներ, չորացած տիկերը պատրաստելով, դէպի ջուր կ'երթային: Երիտասարդ ու մանուկ, խելայեղ, հեւ ի հեւ դէպի գետը կը վազէին եւ այդ թշուառացած, անօթի եւ ծարաւ բազմութիւնը մահուան սարսափի դառնութիւնը զգալէ ետքը՝ կարծես դէպի կեանքը կը վազէր, հակառակ որ Եփրատի ափունքը տակաւին դիակներով լեցուն էին եւ ջուրը ապականուած էր նեխութիւններով: Խումբին ետեւը մնացեր էին 7-8 բոկոտն տղաք եւ աղջիկներ, որոնց ոտքերը աւազի տաքութենէն խաշուած ըլլալով, կը կաղային եւ կուլային:

Ժանտարմաները տեսնելով որ իրենց առաջնորդած խումբը դէպի ջուրը կ'ուղղուի, ձիերնին մտրակելով հասան դէպի աքսորեալները եւ սկսան դոռալ, խարազանել եւ խումբը ետ դարձուցին: Ողբ ու լացը, աղա-

չանք, ժանտարմաներու հայհոյանքը, մտրակներու շա-
չիւնը իրար խառնուելով, բռնած էր աշխարհը: Ու պա-
պական ժողովուրդը առանց ջուրին մօտենալու անցաւ
մեր առջեւէն: Այդ պահուն լուծ էին այլեւս բոլորն
ալ, յուսահատ, աչքերնին մոլորուն, այլանդակուած
դէմքերով, որոնցմէ շատերը կապուտցած էին խարա-
զանի հարուածներէն: Բոկոտն ոտքերու թաւ աղմուկը
կը խշրտացնէր միայն արեւէն տաքցած ւառղը, եւ կամ
մանուկներ ժանտարմաներու հեռաւորութենէն քաջա-
լերուած, մօրերնուն կը ցուցնէին գետը, ջուր խնդրե-
լով: Աքսորեալները ճամբուն վրայ ձգեցին երկու դի-
ակներ. յղի կին մը եւ մանուկ մը: Դիակները անթաղ
մնացին: Երկրորդ օրը Թուրք մը զրկեցինք, լայնօրէն
վարձատրելով, որ երթայ թաղէ զանոնք: Վերադարձին
կը պատմէր, թէ դիակները մերկ էին, գիւղացիները
կողոպտեր էին անոնց ցնցոտիները, ինչպէս միշտ կը
պատահէր:

Աքսորեալներու ետեւէն կուգար ժանտարմաներու
տասնապետը, որին շո՛րջը հաւաքուեցան տեղացի
թուրք հանդիսատեսները: Անոնց մէջ էր հայատեաց
պէրէճիկցի Հօճա Օղլին, որ տասնապետին ուղղելով
խօսքը, ըսաւ.— Պիրատէր (եղբայր), ինչո՞ւ քեզ կը
յոգնեցնես այդ քածերուն համար, երբ խօսքիդ չեն
հնազանդիր, գետը նետէ անհնազանդները: Յետոյ ողե-
ւորուած աւելցուց.

— Ճանրմ, սէվտիի Մուրատ (հոգին սիրելի Մու-
րատ գետը) օրական քանի այսպէս դիակներ կը տանի:
Անդէէն ուրիշ մը աղաղակեց.

— Ա՛խ Մուրա՛տ, Մուրա՛տ, մուրատնիս կատա-
րեցիր:

Տասնապետը դիւային ժպիտով մը խնդաց ու ըսաւ.

— Ես լիազօր եմ, մահու եւ կենաց իշխանութիւն ունիմ. 600 հոգիէն 6 հոգի չի մնար... բայց ինչ հարկ կայ շտապելու... կամաց, կամաց, տակաւին ժամանակը չէ հասած, ամիս մը ես քը դուք կը տեսնէք, թէ ի՞նչ մնացած է այս բոլորէն:

ՀԱԼԷՊ — ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ — ՀԱՅ ՄՏԱՒՈՐԱ-
ԿԱՆՆԵՐՈՒ ԱՆՅՔԸ — ԶՕՀՐԱՊ ԵՒ ՎԱՐԴԳԵՍ

Հալէպ վաճառականական եւ հարուստ քաղաք մըն է, մօտաւորապէս 450.000 բնակչութեամբ որոնցմէ 10.000ը Հայեր են: Կան քիչ թիւով Հրեաներ: Քաղաքին ստուար մեծամասնութիւնը կը կազմեն իսլամ եւ քրիստոնեայ Արաբները: Թուրքերը թիւով քիչ են եւ բաղկացած՝ պաշտօնեաներէ եւ ղինուորականներէ:

Հայ բնակչութիւնը կազմուած է այսպէս. 800 տուն տեղացի Հայեր որոնք արաբախօս են եւ նոյնիսկ աւետարանը կը կարդան արաբերէն լեզուով, եւ 1200 տուն եկուորներ, որոնք զանազան հայաբնակ գաւառներէ վաղուց ի վեր եկած տեղաւորուած են Հալէպ եւ հայախօս են:

Օսմանեան սահմանադրութեան հոչակումէն ետքը Հայերու մտաւորական եւ տնտեսական վիճակը արագ զարգացում ստացաւ: Կազմուած էին ազգային երաժշտական խումբեր, աղջկանց դրաղարան, իգական սեռի ազգասիրաց ընկերութիւն եւ կը ծրագրուէր կուսակցական խմորատիպ շաբաթաթերթ մը հրատարակելու, բայց պատերազմը արգելք եղաւ:

Հալէպի դրեթէ բոլոր բժիշկիները եւ դեղագործները Հայեր էին, որոնցմէ ոմանք ունէին իրենց անձնա-

կան հիւանդանոցները, իսկ արհեստաւորները, մանաւանդ նրբակերտ դործերու համար, Հայեր էին մեծ մասով :

1915ի ապրիլ ամիսէն սկսաւ Կիլիկիոյ տեղահանութիւնը: Կառավարութեան հրամանաւ կազմուեցաւ թուրք յանձնախումբ մը որուն դերը պիտի ըլլար հասնող զաղթականները տեղաւորել եւ անոնց հայթայթել օրապահիկը, նպաստ տալով միայն ալիւր: Մնացեալ պէտքերուն մասին կը հոգային տեղւոյն Հայերը: Թուրք յանձնախումբը ամէն օր կը տեղեկացնէր տեղահան եղած Հայերու ժամանումը, միեւնոյն ատեն իմացնելով, թէ որ կողմէն կուգային, ինչ թիւով եւնէ: Կիլիկեցի զաղթականները բաւականին տեղաւորուած էին: Այր թէ կին շուկաներուն մէջ կը դբաղէին զանազան աշխատութիւններով, այնպէս որ իրենց տընտեսութիւնը կազմակերպուած էր, մանաւանդ իրենց հետ բերած էին մաս մը դրամագլուխ: Գրեթէ նոյն պայմաններու մէջ գտնուիլը համեմատաբար նպաստաւոր վիճակ մը ստեղծած էին իրենց համար:

Բայց ահա իմացուեցաւ, որ կուգան Հայաստանցի զաղթականները: Հայերը զացին դիմաւորելու զիրենք եւ քաղաքէն դուրս ճանապարհի վրայ տեղի ունեցաւ առաջին հանդիպումը:

Ասոնք 2000ի չափ բազմութիւն մը կը կազմէին կիւներու եւ մանուկներու: Մէկ այր մարդ չի կար, նիւհար, սեւցած, ցնցոտիներով ծածկուած, անօթի ու ծարաւ, անոնք այսահարներու երեւոյթ ունէին: Գետնի փոշին այնքան փչած էր երեսներուն, որ հեռուէն հողադոյն զանգուած մը կ'երեւէին, սեղմուած իրարու եւ կարծես անբաժանելի: Ասոնք քարացած կեցած էին եւ չէին գիտեր թէ ո՞ւր պիտի երթան, ի՞նչ պիտի

ընեն : Բողոքել կամ խօսիլ չէին կարող, միայն երբեմն կին մը ա՛խ հառաչելով, գլուխը կը շարժէր, կամ մանուկ մը կ'իյնար յողնութենէ սպառած, եւ այս վիճակին մէջ կը սպասէին : Մենք պահ մը կասկածեցանք թէ մեր փետուածներն են, բայց երբ հասկցանք որ այս թշուառները Հայեր են, մենք ալ ապշած մնացինք : Չէինք կարող ոչ խօսիլ, ոչ քայլել եւ դէմ առ դէմ կանդնած լուռ ցաւի մէջ մնացինք : Այսպէս եղաւ մեր առաջին հանդիպումը Հայաստանցի Հայերու հետ :

Վերջապէս սթափուելով մեր ապշութենէն առաջնորդեցինք քսորեալները դէպի Հայոց եկեղեցին : Ճանապարհին Թուրքեր, Քուրտեր, Արաբներ, վրանաբրնակներ, զարմացած կը դիտէին եւ իրարու կ'ըսէին . «Այսպէս մարդի՞կ ալ կան երկրիս վրայ» : Միայն արբա շէյխերը հասկցան ամէն ինչ եւ ամէն անգամ կը բացագանչէին .

— Սըպհան Ալլահ, ալէյհիւլ գըլէմ, (Տէր Աստուած այս ի՞նչ զուլում է) :

Հայաստանցի քսորեալներու այդ առաջին ժամանումէն ետքը ամէն օր թուրք յանձնախումբը կը յայտնէր, որ նոր խումբեր կը հասնին զնացքով կամ հետիոտն : Հետզհետէ եկողները աւելի վատթար դրութեան մէջ էին, ոսկրացած, անբանացած, շատերը մահամերձ : Անոնք կորսնցուցած էին մարդկային երեւոյթըն իսկ : Հալէպի մէջ ժողովուրդեցաւ մօտ 70,000 տեղահան ժողովուրդ, որոնք զանազան տեղերէ եկած խումբեր էին, մեծ եւ շէն քաղաքներու մնացորդներ, Պաֆրա, Տրապիզոն, Էրզրում, Տիգրանակերտ եւ այս քաղաքներու շրջակայքէն ցան ու ցրիւ կիներ ու մահ-

նուկներ, որոնք նոյնիսկ իրենց ընտանիքներու ամբողջութիւն չէին պահած, որովհետեւ ամէն ընտանիք բաժան բաժան եղած էր Թուրքերու կողմէ զանազան վայրեր զրկուած խումբերու մէջ:

Տեղւոյն Հայերը մեծ եռանդով եւ մեծ անձնուիրութեամբ կազմակերպեցին օգնութեան դործը: Բըժիշկները անդուլ եւ անդադար կ'այցելէին հիւանդներուն, իրենց գլուխը ունենալով Տօքթօր Սամուէլ Շրմաւոնեան: Այդ հանգամանքով եւ անձնական դոհողութիւններով այնքան աչքի ընկաւ, որ կառավարութիւնը դայն ձերբակալեց: Քանի մը օրէն ազատուեցաւ աղբեցիկ միջամտութիւններու շնորհիւ եւ կրկին ըսկսելով իր աշխատութիւնները, վարակուեցաւ եւ մեռաւ: Մեծ դեր կատարեց նաեւ կանանց յանձնախումբը, որուն անդամուհիները գրեթէ անձնական հոգածութեամբ պաշտպանած եւ ամռաձ էին 70,000 աքսորեալներ: Իրենց ձեռքով կերակուր կ'եփէին, փողոցէ փողոց մուրալով պարէն ու հագուստ կը հասցնէին: Այս ամէնուն աշխատանքը բաւական ամոքեցին աքսորեալ Հայերուն դրութիւնը: Տօքթ. Սամուէլի հսկողութեան ներքեւ կազմակերպուած էր բժշկական խումբ մը եւ ուրիշ անձնաւորութեան մը ղեկավարութեամբ երիտասարդներու եւ պատանիներու խումբ մը, որոնք վերոյիշեալ կանանց հետ գիշեր ու ցորեկ կը տեղաւորէին ժողովուրդը, կը լուային, կը մաքրէին, կը բուժէին, կը կերակրէին եւ կարելիութեան սահմանին մէջ գործ կը հայթայթէին աշխատելու կարող աքսորեալներուն: Հալէպի հայ ժողովուրդը առ հասարակ գրկաբաց ընդունեց իր դժբախտ ազգակիցները: Իրենց տունները բացած էին գաղթականներուն առջեւ, եւ ամէն ոք իր տան մէջ կը պատսպարէր 5 - 10 ծանօթ կամ ան-

ծանօթ աքսորեալ Հայեր: Բայց եւ այնպէս փողոցները, դաշտերը, անծանօթ անկիւններ լիքն էին հազարաւոր բնաւեր խեղճերով, մանաւանդ եկեղեցւոյ թաղը անտանելի պատկեր կը ներկայացնէր: Ճամբաները խճողուած եւ փակուած էին, տեղահանուածները կը քնանային փողոցներու մէջ նոյն իսկ իրենց կղկղանքներուն մօտ: Անցուդարձը անհնար էր եւ օգնութեան գալը՝ վերին աստիճանի դժուար: Թէեւ անտուն ժողովուրդը տեղաւորուած էր բոլոր ազգային կալուածներու մէջ, քարւանսարայ, դպրոց, եկեղեցիի կտուրը, ամենուրեք: Բայց դարձեալ այդ թշուառներուն խճողումէն յառաջ կուգար շատ մեծ թիւով մահացում եւ աղջիկներու, մանուկներու անհետացում: Հետզհետէ կառավարութիւնը դադրեցուց նպաստը եւ փոխեց քաղաքականութիւնը: Խուզարկեցին տեղացիներուն տունները, թէեւ ոեւէ կասկածելի բան չգտան, բայց եւ այնպէս բանտարկեցին աքսորեալներուն օգնող բազուկները եւ տեղացի հարուստներէն մէկ քանին: Ասիկա պարզ ձեւականութիւն մըն էր, տեսակ մը ազդարարութիւն: 24 ժամ բանտարկութենէ ետքը արձակեցին:

Միեւնոյն ատեն կառավարութիւնը յայտարարեց.— որու քով որ պահուած կը մնան աքսորեալ մանուկ, աղջիկ, կին եււն, պէտք է շտտով դուրս փտարուին տուներէն: Այն հալէպցին, որ հակառակ կառավարութեան յատարարութեան իր մօտ գաղթական կը պահէ, ինքն ալ տեղահան կ'ըլլայ ու կ'աքսորուի:

Տեղացի ժողովուրդին մէջ տիրեց սարսափ: Գործող ուժերը ջլատուեցան եւ ամէն ոք յայտնապէս օգնելու կը վախնար: Գաղտադողի եղած օժանդակութիւնը անբաւական էր: Աքսորեալ Հայերը մնացին անօգնական: Անօթութիւնը, հիւանդութիւնը, թշուառութիւնը

նը միանալով, մահերու թիւը օր օրի աւելցաւ եւ հասաւ օրական 100ի: Այնպիսի տագնապալի դրութիւն յառաջ եկաւ որ նոյն իսկ օտարները սկսան բողոքել: Օրինակ՝ դերմանացի պաշտօնեայի մը կինը՝ տիկին Քօխ, որ կ'օղնէր իր շուրջը վխտացող թշուառներուն, բողոքեց կառավարութեան, ըսելով թէ իրենց տան մօտերը, սենեակներու կամ բակերու մէջ արգելափակուած անմեղ Հայեր կը մեռնին անօթութենէ:

Կառավարութիւնը բողոքներու եւ բարդութեանց առաջըր առնելու համար սկսած էր փողոցը գտնուած խեղճ դաղթականները խումբ խումբ ղրկել դէպի շրջակայքը եւ Միջագետք:

Այս սոսկալի դրութեան ճար մը գտնելու յոյսով, տեղացի Հայեր դիմեցին Եգիպտոսի եւ Սուրիոյ բանակի հրամանատար ճեմալ փաշային եւ հետեւեալ պատասխանը ստացան. «Վանի մէջ Հայոց կատարած անգթութիւններուն փոխարէն քիչ են այս եղածները: Այսու ամենայնիւ վստահ եղէք, Սուրիոյ մէջ Հայու մէկ կաթիլ արիւն չի թափիր»:

Հալէպի հայ ժողովուրդը ընկճուած էր իրարու յաջորդող դէպքերու տպաւորութեան ներքեւ: Հալէպի մէջ հրացանադարկ եղան եօթ Սուետիացի Հայեր իբր զինուորական փախստական, որոնցմէ մէկը, հակառակ բաղմաթիւ գնդակներ ընդունելուն՝ չէր մեռած:

Հալէպցի դաշնակցականներ բանտարկուած էին եւ չարաչար կ'աչխատցնէին զանոնք: Պաշտօնանկ եղած էին բոլոր հայ պաշտօնեաները, արգիլուած էր հայերէն լեզուով թղթակցութիւն, արգիլուած էր ոեւէ Հայու հասցէով դրամ կամ ուրիշ բան փոխադրել: Ճամբորդելը բացարձակապէս արգիլուած էր:

Արեւմտեան նահանգներէն տեղահան եղած Հայեր

րը, Գոնիա, Կեսարիա, Իզմիտ եւ շրջակայք՝ ամբողջ էին, այսինքն այրերը կը գտնուէին իրենց ընտանիքներուն հետ եւ մասամբ կեդրոնացած էին Հալէպի շուրջը: 1915 հոկտ. ամսէն այս աքսորեալներուն ալ սկսան կամայական վերաբերմունք ցոյց տալ: Յաճախ կը ստահէր որ ընտանիքի մը այր անդամները դուրսը կը գտնուէին ոեւէ գործով, եւ ահա յանկարծ կառավարութիւնը ոստիկաններու միջոցաւ կը հաւաքէր, ով որ գտնէր փողոցները, կ'ուղարկէր կայարան, ուրկէ կը քշուէին դէպի Բասիլայն: Մինչեւ այդ թուականը արեւմտեան նահանգներու Հայերը բաղդատաբար հանգիստ մնացած էին, բայց երբ մաս մաս զրկուեցան Բասիլայն, ուր կեանքի եւ պատուի ոչ մէկ ապահովութիւն կար, անոնք ալ ենթարկուեցան հայաստանցիներու վիճակին:

ՄՏԱԻՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԱՔՍՈՐԸ

Գնացքը կեցաւ Ճարապլուսի կայարանը, եւ տեսանք որ վակոնի մը մէկ բաժանմունքը խիստ հսկողութեան տակ էր: Պատուհաններուն ետեւէն տեսանք սեւ հագուստով մարդիկ, տժգոյն դէմքեր, բայց անհնար էր իրենց մօտենալ եւ իրենք ալ կը զգուշանային ոեւէ նշան մը ընելու եւ ոստիկանութեան ուշադրութիւնը հրաւիրելու: Հասկցանք որ Պոլսէն աքսորուած յայտնի հայ մտաւորականներն են, որոնք կ'երթային Տիգրանակերտ դատուելու: Ասոնք հաւանաբար այն մտաւորականներն էին որոնք Այաշի աքսորեայներու խումբէն բաժնուելով, զրկուած էին Տիգրանակերտ. Խաչա-

տուր Մալումեան, Ռուբէն Զարդարեան, Տօքթ. Տաղա-
ւարեան, Սարգիս Մինասեան, Ճիհանկիւլեան եւ Խա-
ժակ: Դատաւարութիւնը տեղի ունեցաւ թէ ոչ, կամ
ինչ հետեւանք ունեցաւ՝ չի կրցանք ստուգել: Միայն
լսեցինք Տիգրանակերտցի Թուրքերէն, Հայոց բարձր
մտաւորականներն եկան Տիգրանակերտ, դատաւարող-
ւեցան եւ պիտի կախուին:

Արաբ Բունարէն անդին զանոնք վսխաւրեր էին
կառքով, թուրք կառապանը վերադարձին՝ գովելով կը
խօսէր անոնց արժանաւոր եւ անուսկան վերաբեր-
մունքի մասին եւ կը ցաւէր իրենց վրայ:

Վարդգէս եւ Զօհրապ հիւանդութեան պատճառաւ
մնացին Հալէպ Պապ-իւլ-Փարաճ պանդոկը, ուր տասն
եւ մէկ օր կենալէ ետքը դնացքով մեկնեցան դէպի
Նդեսիա (Ուրֆա):

Հալէպէն նամակ մը դրած են ձէմալ փաշային եւ
հետեւեալ պատասխանը ստացած. «Պատրաստ եմ ձեզ
դրամական օգնութիւն ընել որքան որ կ'ուզէք»:

Նդեսիոյ թուրք պատգամաւորը դիմաւորած էր
երկու հայ պատգամաւորները, հիւրասիրած էր իր
տան մէջ եւ շատ աշխատած էր պահել զանոնք իր մօտ,
ամէն պատասխանատուութիւն իր վրայ առնելով, բայց
կառավարութիւնը, մանաւանդ չէչէն Խալիլ պէյը, որ
Պոլսէն եկած էր, հետը բերելով դատարկապորտներ,
Հայերու կոտորածը կազմակերպելու մասնաւոր պաշ-
տօնով, Տիգրանակերտի, Մարտինի եւ Խարբերդի
չրջանին մէջ, արդեւք հանդիսացան, եւ երկրորդ օրն
իսկ Վարդգէս եւ Զօհրապ կառքով ճամբայ հանուեցան
դէպի Տիգրանակերտ, բայց Նդեսիայէն մէկ ժամ հա-
զիւ հեռացած էին, երբ Ղարաքէօփրիւի քով Խա-
լիլ պէյի հրամանաւ, որ ներկայ էր, կառքը կը կեցնեն

եւ կը պահանջեն որ երկու հայ պատղամաւորները իջնեն: Զօհրապ կ'իջնէ, բայց Վարդգէս ամէն՝ ինչ հասկնալով կը դառնայ խալիլ պէյին եւ կ'ըսէ. «Գիտեմ որ մեզ սպաննելու համար եկեր ես, ես հիւանդ եմ, զիս կառքին մէջ սպաննէ»:

Արդէն խալիլ պէյը ատրճանակը ուղղած էր Զոհրապին, երկրորդ հարուածով զարկաւ Վարդգէսը: Վարդգէսին արիւնը ներկած էր կառքը: Վերադարձին կառապանը պատմեց այս մանրամասնութիւնները եւ ցոյց տալով արեան արատները, կ'ըսէր. «Ասիկա ձեր պատղամաւորին արիւնն էր որ, խալիլ պէյ իր ձեռքովը սպաննեց»:

Կառապանին խօսքերը կը հաստատէր Եղեսիացի Հայ վաճառականի մը կինը, որ անձամբ լսեր էր կառապանէն: Նոյնը կը կրկնէին նոյն մանրամասնութիւններով Եղեսիացի շատ մը Հայեր եւ թուրքեր:

ԵՒԵՍԻՈՅ (ՈՒՐՖԱ) ԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ .

ՏԵՂԱՀԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ .

Կառավարութիւնը ծրագրած էր Եղեսիոյ տեղահանութիւնը, բայց ընդհանուր դիմադրութեան չի հանդիպելու համար թուրքերը սկսան դանազան խաբեբայութիւններու դիմել եւ ըստ իրենց ծրագրին, մաս մաս հեռացնել նախապէս քաղաքէն յայտնի անձերը:

Առաջին անգամ ձերբակալեցին 40 երեւելիներ եւ առաջնորդը: Ասոնք տարուեցան տեղւոյն՝ բանտը, որ ախոռ մըն էր: Թուրքերը կը պատմեն, շատ չարչարած են դանոնք: Երբ Հայերը կ'ուզեն կերակուր տանիլ առաջնորդին եւ միւս բանտարկեալներուն, կ'արգելուին: Երկրորդ օրն իսկ բանտարկեալները կը փոխադրուին

ուրիշ տեղ եւ կ'անհետանան :

Երկրորդ անգամ պահանջեցին առևտրական դասին 100 Հայեր, հակառակ որ հազարներով ոսկի կաշառք տրուած էր սլաշտօնեաներուն եւ զինուորականներուն որոնք պատուոյ խօսք տուած էին բանտարկեալները պահել քաղաքին մէջ, այդ հարիւր հոգին ալ զրկուեցան, յայտնի չէ ուր, եւ անհետացան : Երրորդ անգամ դարձեալ 100 հոգի ձերբակալեցին եւ աքսորեցին :

Եղեսիացիները գիտէին Հայաստանցի Հայերու վիճակը, տեսեր էին անոնց ողորմելի կարաւանները, լըսեր էին անոնց պատահած դարհուրելի դէպքերը, եւ տեսան որ Եղեսիոյ տեղահանութիւնը սկսած էր կատարուիլ ճիշտ նման ուրիշ հայաբնակ վայրերու տեղահանութեան : Գիտէին, որ եթէ հնազանդէին, հետեւանքը պիտի ըլլար աղջիկներու եւ մանուկներու առեւանգութիւնները, այրերու կոտորած, կանաց բռնաբարութիւն, մահ եւ սոսկում եւ բոլոր այն քստմնելի անցքերը, որ տեղի ունեցած էին իրենց աչքերուն առաջը :

Եղեսիացի հայ կիները վառուեցան ցասումով եւ ըմբոստութիւնով եւ ստիպեցին իրենց այրերը որ այլեւս չի հնազանդին եւ չի յանձնուին կառավարութեան :

Այդ միջոցին նոյն քաղաքացի Թուրքերը լուր զըրկած էին հայ գեղեցկադէմ կիներու եւ ըսած էին, «Եթէ Եղեսիոյ Հայերը տեղահան ըլլան, դուք անհոգ եղէք, դուք եւ ձեր դաւակները մեզ մօտ կը մնաք, դուք մերն էք» :

Չէրքէզներ եւ Թուրքեր, տակաւին կռիւր չսկսած, կուգային Հայոց դռները կը դարնէին, դրամ եւ աղջիկ կը պահանջէին, եւ մերժուելով կը սպառնային կոտորել զիրենք : Այն տունները, որոնց այրերը աքսորուած

էին կամ զինուորութեան դացած, կ'ենթարկուէին տեղացի թուրք երիտասարդներու զիչերային յարձակումներուն, որոնք կը կողոպտէին, կը բռնանային:

Եդեսիոյ կիները ունէին արդէն լաւ կազմակերպութիւններ: Կը պահէին որբանոց, արհեստանոց, Կարմիր Խաչի ընկերութիւն եւ այլն: Այդ ընկերութիւններու բոլոր անդամուհիները համաձայնեցան եւ պատրաստուեցան թունաւորուիլ քան թէ թշնամիին ձեռքը իյնալ:

Կառավարութիւնը կը շարունակէր 100 առ 100 մարդ պահանջել, բայց այլեւս ժողովուրդը կ'ընդդիմանար եւ ոչ ոք կը յանձնուէր: Կիներու թելադրութեամբ այրերը քաշուած էին շուկայէն, փակուած կը մնային իրենց բարձր թաղին մէջ, եւ իրենց կիները առեւտուրը կը շարունակէին: Բուռն միջոցներու առաջը առնելու համար հարիւր հազարներով կաշառած էին կառավարութիւնը, բայց անիկա խիստ կերպով կը պահանջէր այրերը եւ մանաւանդ Եօթնեղբայրեաններու մեծ եղբայրը: Անիկա կաղ էր եւ խիստ հետապնդման ենթակայ, բայց եւ այնպէս ամէն օր զանազան ծպտումներով կ'իջնէր քաղաք եւ նոյնիսկ կառավարական շէնքերու մէջ մտնելով, կ'իմանար Հայոց մասին եկած հրամանները եւ տրուած տեղեկութիւնները:

Կառավարութիւնը հեռացուցած էր Հայաստանցի Հայեր, որոնք կը գտնուէին Եդեսիա եւ միւս կողմանէ խիստ կերպով արգիլած էր տեղացի Հայերու ունէ պատճառաւ քաղաքէն մեկնիլ: Հեռացուցած էին նախ Եդեսիայէն Սուրիա պատերազմական դերի Եւրոպացիները:

Այդ օրերուն խումբ մը ոստիկաններ եկան հայտուն մը խուղարկելու: Տան մէջ այր չի կար եւ մնացեր էին մայր ու աղջիկ: Այս վերջնոյն դեղեցկութիւնը հրապուրեց ոստիկաններու պետը, որ ապար-



Հայ սրբեր :

դիւն խուզարկութենէն ետքը ուզելով իր կիրքը յայեցնել, ոստիկաններուն հրամայած էր բռնի տանիլ աղջիկը տանը մէկ սենեակը, ուր թագստոցի մը մէջ սլահուած կը մնար աղջկան եղբայրը: Երբ ոստիկանապետը կը մօտենայ Հայ աղջկան, եղբայրը չի հանդուրժելով քրոջը սպառնացող վտանգին, դուրս կ'ելլէ թագստոցէն եւ ատրճանակը արձակելով, կը սպաննէ ոստիկանապետը: Խուճապ տանը մէջ, ճիչ, աղաղակ, որու մէջոցին ոստիկանները կը փախին եւ սարսափած լուր կը տարածեն թէ Հայերը ապստամբած են:

Կառավարութիւնը անմիջապէս օգուտ կը քաղէ այս դէպքէն եւ ահազանգը կը հնչէ: Տեղւոյն զինուորական

իշխանութիւնը կը հեռագրէ Հալէպ. «Շուտով օգնութեան հասէք. Եդեսիա վտանգի մէջ է. Հայերը ապստամբած են:» Ու Հալէպէն Ֆախրի փաշան կը ղրկեն, որ շուտով քննութիւն բանայ եւ հարկ եղածը կարգադրէ:

Ֆախրի փաշան միւսներուն պէս հրէշ չէր, բայց ստիպուած էր գործադրել իրեն տրուած հրահանգները: Ան Եդեսիա հասնելով քննութիւն բացաւ եւ անմիջապէս հաստատեց, որ Հալէպ ղրկուած տեղեկութիւնները ճիշտ չէին եւ թէ Հայերը ապստամբական վիճակի մէջ չէին: Բայց որովհետեւ Եդեսիոյ Հայերու տեղահանութիւնը վճռուած էր եւ գործադրութիւնը յանձնուած էր իրեն, բանակցութեան մտաւ Հայերուն հետ եւ խոստացաւ ամէն դիւրութիւն եւ ապահովութիւն ընծայել իրենց:

Հայերը ընդունեցին իր առաջարկութիւնները, բայց միակ պայման մը դրին, այն էր՝ վերադարձնել այն 200 այրերը որ նախապէս ձերբակալած եւ աքսորած էին. երբ իրենցմէ բաժնուած հարազատները ետ դառնան, այն ատեն կը յանձնուին եւ կառավարութեան նշանակած տեղը կ'երթան: Ֆախրի փաշան սլտի ուղէր կատարել Եդեսիացիներուն խնդիրը, բայց աքսորեալները սպաննուած էին:

Երբ Հայերը տեսան որ Ֆախրի փաշան զանազան խորամանկութիւններով կը ձգձգէ իրենց խնդիրը եւ կը խաբէ զիրենք, ըսելով թէ այս ինչ տեղ պիտի կարենան միանալ աքսորեալներուն, Եդեսիացիները չուզեցին գոհ երթալ եւ բացարձակապէս յայտարարեցին որ իրենց տուններէն դուրս չպիտի ելլեն:

1915 հոկտեմբեր ամսուան մէջ Ֆախրի փաշայի տուած տեղեկութիւններուն հիման վրայ եւ ճէմալ փա-



Ամերիկայեան և ժամկոչեանի բնտանիքը Վասայ մէջ:
Աջէն ճախ՝ իր կիներ և երկու աղջիկները: Ամբողջ բնտան՝ էր
բնացնելուամ, բացի մամիկներուն հետեւը կեցամ աղջիկէն որ
հիմա կ'ապրի Պաճու:

չայի հրամանով, Հալէպէն զրկեցին կանոնաւոր զին-
ւորներ, 3 թնդանօթ և 4 - 5 միթրայէօղ: Տեղական
իշխանութիւնը արդէն հաւաքած էր շրջական Քուրտե-
րը, զինած էր անոնք և անդացի թուրքերը և կանչած
էր նոյնիսկ Պունպուճի Չերքէզները: Իսկ Պէրէճիկի և
այդ կողմերու թուրքերն ալ կամաւոր կերպով կ'երթա-
յին Եդեսիոյ Հայերը կողոպտելու և կոտորելու: Այն-
պէս որ տասնեակ հազարաւորներու ամբոխ մը սլաշա-
րած էր Հայոց Բարձր թաղը:

Հայերը տուած էին զինուորներ թրքական բանա-
կին: Իրենց երիտասարդ ու կոուռ ոյժը կը սլակէր:

Կառավարութիւնը նոր աքսորած էր հարուստներն ու երիտասարդները եւ մեծ թիւով տղամարդիկ հեռացուցած էր իբր արհեստաւոր: Բայց կիները եւ աղջիկները արիութեամբ զինուած եկան միացան այն սակաւաթիւ տղամարդոց որ դիմադրութեան կորիզը կը կազմէին եւ ուխտեցին մեռնիլ կռուելով, քան թէ անարգ թշնամիին ձեռքը անցնիլ եւ անոր նախասինքնեպուն ենթարկուիլ:

Կռիւը սկսաւ: Տարձակումները տեղի կ'ունենային չորս կողմէն, ամէն օր առաւօտէն մինչեւ կէսօր հրացաններուն ծուխը կը ծածանէր Հայոց թաղին վրայ: Հայերուն համար անտարակուսելի էր թէ փրկութեան ոեւէ յոյս չկայ, բայց իրենց տրամադրութիւնները բարձր էին ու երգելով եւ խիզախութեամբ կը դիմադրէին թշնամիին հրացանաձգութեան, բազմաթիւ դիակներ ձգելով դետին: Եղեսիոյ այն թուրքերը որ առաջին կրակը բացած էին, գրեթէ բոլորն ալ ինկան: Մեծ խուճապ յառաջ եկաւ թուրքերուն մէջ, իրարանցում եւ սարսափ, մանաւանդ որ կանոնաւոր զօրքը չէր յաջողած գրաւել Հայոց թաղը, մինչդեռ հայ աղջիկներ չեմ գիտեր ո՛ր տեղէն դուրս գալով, ձեռքի ուումբեր կը նետէին թուրք խուժանին մէջ եւ կ'անհետանային:

Քաղաքին թուրքերը հետզհետէ փախան եւ պահ մը Հայերը տէր դարձան ամբողջ Եղեսիոյ: Քաղաքը շրջապատող թուրք խուժանին մէջ թուրութիւն յառաջ եկաւ: Շատերը կը հեռանային եւ իրենց տեղերը վերագառնալով չափազանցեալ եւ առասպելական բաներ կը պատմէին Հայերու ոյժին մասին: Կանոնաւոր զինուորը աւելի խիստ պաշարման ձեռնարկեց եւ մեծ թափով կրկին յարձակում տեղի ունեցաւ: Իրենց մէջ կային արար զինուորներ, որոնց Հայերը կոչ կ'ընէին եւ կ'ը-

սէին . « Դուք եղբայր էք , ինչո՞ւ կը կռուիք մեզի դէմ , մենք ձեզ չենք զարներ , դուք հեռացէք » :

Կռիւր տեւեց 15 օր : Այդ միջոցին Եդեսիոյ հայ քաջերուն անունը , մանաւանդ Եօթնեղբայրեաններու համբաւը տարածուեցաւ շրջակայ վայրերու մէջ : Կառավարութիւնը , չփոթուած այս անսպասելի դիմադրութենէն , հրամայեց վճռական միջոցներու դիմել : Պախրի փաշան կ'ողգէր առանց քաղաքը քանդելու Հայերը պահել պաշարուած դրութեան մէջ : Բայց Հալէպի զինուորական խորհուրդը հրամայեց շուտով վերջ տալ այդ դիմադրութեան , թնթանօթները պործածելով : Հոկտ . 15-20 թնթանօթները որոտացին եւ Հայոց թաղը եւ եկեղեցին քարուքանդ ըրին . քանդեցին նոյնիսկ այն շէնքերը , որոնք Հայոց թաղէն հեռու էին եւ կռուի չըրջանակէն դուրս կը մնային : Բայց այս աւերումն իսկ չընկճեց Հայերը , որոնք յուսահատօրէն շարունակեցին դիմադրել : Թշնամի բանակը չփոթութեան մատնուած էր որովհետեւ չէր կարողացած առաջուց իմանալ , թէ Հայերը ապաստան պատրաստած էին դետնափորներու մէջ : Այս գետնափորները հին ժամանակներէ ի վեր գոյութիւն ունէին եւ Հայերը , դուշակելով իրենց գլխուն գալիքը , մասամբ նորոգելով յարմարցուցեր էին իրենց պահանջներուն եւ մանաւանդ պաշար ամբարած անոնց մէջ : Ունէին իրենց ընդարձակ ամբարները , ջրհորները , ապաստարանները բնակչութեան համար եւ նոյնիսկ այդ գետնափորներու միջոցաւ հաղորդակցութեան ճամբաներ ապահովեր էին պաշարման գիծէն դուրս : Երբ թշնամին հասկցաւ այդ դետնափորներու կատարած դերը , թնթանօթները ուղղեց դէպի գետին , խորտակեց ճամբաները եւ բարձրացող փոշիի ամպերուն մէջէն տեսնելով Հայերու դիրքերը , վերջին յարձակումով մը խորտակեց դիմադրութիւնը :

Թուրք զինուորները խուժեցին Հայոց թաղը եւ սկսան անխնայ կոտորել անտուն ժողովուրդը: Երիտասարդները եւ աղջիկները տակաւին կը կռուէին ցրուած խումբերով: Առանձին մարդիկ կամ կիներ թունաւորուած էին եւ կը գալարուէին զինուորներուն ոտքերուն տակ: Մանուկներ, ծերեր շուարած կը դեգերէին ակերակներու մէջ, մինչ անդին խումբ մը աղջիկներ եւ տղաքներ կը հրդեհէին Հայոց ինչքերը, կը դիզէին գորգեր, կարասիներ, նոյնիսկ ուտեստեղէններ եւ կը ջնջէին ամէն ինչ, թշնամիին ձեռքը բան չի ձգելու համար: Թուրքերը գրաւեցին վերջապէս Հայոց թաղը եւ սկսան հաւաքել մանուկները, ծերերը եւ երկու սեռէ կըռուող Հայերէն մաս մը, զոր յաջողած էին դերի բռնել: Թուրք զինուորականները եւ զինուորներ զարմանալով կը դիտէին կատարուած գետնափորներու կառուցուածքը եւ կռուի մէջ ինկած հայ աղջիկներու դիակները, որոնց կուրծքերը զարդարուած էին փամփուռ շտակալներու շարքերով եւ դրեթէ յուզուած կը ըսէին իրարու.

— Միթէ այսպէս բան կրնա՞յ ըլլալ:

Կառավարութիւնը ձերբակալած էր մօտ 2000 հոգի որոնց մէջ կային 200ի չափ այրեր եւ կիներ: Ասոնցմէ 60 այրեր եւ կիներ ու աղջիկներ իբր ապստամբութեան հեղինակ կախուեցան Եդեսիոյ մէջ եւ մնացեալ 140 հոգին զրկուեցան Հալէպ դատուելու համար, իսկ կիները եւ երախաները աքսորուեցան Միջագետք:

Այն Թուրքերը որ շրջակայքէն եկած էին կողուպուտի, ոչ միայն ձեռնոնայն վերադարձան, այլեւ սարսափած էին, որովհետեւ գետնափորներու մէջէն տակաւին կը յայտնուէին ողջ մնացած Հայեր, որոնցմէ ոմանք մինչեւ մահ զնդակ կ'արձակէին:

Նդեսիա 1895ի ժամանակ խիստ կոտորածի մը ենթարկուած էր, Բայց Հայերը քիչ ատենի մէջ իրենց կարուստները դարմանած էին եւ նախկին դիրքին տիրացած : Արաբներու հետ լաւ յարաբերութեան մէջ ըլլալով, կրկին տէր դարձած էին իրենց հայկական գիւղերուն : Քաղաքին մէջ վերստին ծաղկած էին վաճառականութիւնը եւ արհեստները, որոնք ամբողջովին Հայերու ձեռքն էին :

Օսմանեան սահմանադրութեան հռչակումէն ետքը ընդարձակուեցան դորգի դործարանները : Բարգաւաճեցաւ կանանց ձեռագործի ընկերութիւնը, որուն արդիւնքը կ'արտածուէր մեծ մասամբ Ամերիկա : Հայերը ուղեցին Քուրդ եւ Թուրք հողատէրերու հետ երկրագործութիւնը արդիականացնել : Ձեռնարկուեցաւ մեքենաներ բերել եւ հաստատել ջրաբաշխութիւն : Բացուեցաւ ժողովուրդի պահանջով Պանք Օթոմանի մասնաճիւղ, երկրագործական պանքա եւայլն : Հայերու ոչ միայն տնտեսական այլեւ մտաւորական կեանքը մեծ զարգացում ստացաւ : Ունէին իրենց թատրոնները, լրսարանները, կանանց եւ այրերու առանձին գրադարաններ եւ երիտասարդական միութիւններ :

Գերմանական երկաթուղիի դիժը հասած էր Նդեսիայէն չորս ժամ հեռու, եւ այդ հանգամանքը մեծ առիթ էր վաճառականութեան զարգացման, որով եւ երկիրը կը հարստանար հետզհետէ : Գերմանացիները նախապատուութիւն կուտային Հայերու եւ դիտնալով անոնց ժրջանութիւնը եւ պարկեշտութիւնը, իրենց գործերը կը յանձնէին անոնց : Հայերը սկսան նորէն գնել ընդարձակ արտեր, այգիներ, պարտէզներ եւ չինել եւրոպական ձեւով քարաշէն ճերմակ տուներ :

Այս ամէնը ոչ միայն գրգռած էին տեղացի Թուր-

քերը այլ եւ կառավարութիւնն ալ պղտորուած էր եւ
դիտնալով շատ լաւ, որ իսլամ տարրը, հակառակ իր
մեծամասնութեան չէ կարող մրցիլ Հայերու հետ, տըն-
տեսակա՞նս սոյքթթի եւ այլ հալածանքներու միջոցաւ,
ինչպէս հայաբնակ ուրիշ վայրերու մէջ, այստեղ ալ
սկսած էր տկարացնել կառավարական միջոցներով Հա-
յերու տնտեսական եւ մտաւորական ոյժը:

Այս լարուած եւ թշնամական դրութիւնը զոյսու-
թիւն ունէր արդէն իսկ, երբ պատերազմը ծագեցաւ:

ԱՌԺԱՄԵԱՅ ՕՐԷՆՔ ԱՔՍՈՐԵԱԼ ՀԱՅԵՐՈՒ ՍԵՓԱԿԱ-
ՆՈՒԹԵԱՆՅ ՄԱՍԻՆ — ՊԵՐԷՃԻՔԻ ՀԱՅԵՐԸ ԿԻՍԼԱ-
ՄԱՆԱՆ ԵՒ ՍԱԿԱՅՆ ՏԵՂԱՀԱՆ ԿՐԼԼԱՆ.

Պէրէճիքի եւ շրջակայքի բնակչութեան հոծ մեծա-
մասնութիւնը կազմուած է Գուրտերէ կամ քրտական
ու արաբական ծագում ունեցող թուրքերէ: Այս իսլամ-
ներուն մէջ չէյխերը եռանդուն բրոքականա կ'ընէին
որ ամուսնանան հայ աղջիկներու հետ եւ առնեն հայ
մանուկներ, ըսելով որ թէ կրօնական տեսակէտով սե-
վապ է (աստուածահաճոյ) եւ թուրք սերունդի ազնը-
լացման կը ծառայէ: Այս բրոքականաը շատ տարած-
ուած էր, այնպէս որ ամէն կողմերէ յանձնարարու-
թիւններով, նամականերով հայ աղջիկներ կ'ուղէին, եւ
չատերը անձամբ կուղային տանելու զանոնք: Հեռա-
ւոր վայրեր գտնուող թուրք կամ քուրտ գործաւորներ,
պաշտօնեաներ, ղրեւուորներ ու ղրինուորականներ, որ
չէին կարող իրենց տեղերէն հեռանալ, կը խոստանա-
յին ամէն անոնց որ աղջիկ մը, մանուկ մը կամ կին

մը բերեն վճարել 8-10 քէսէ (իւրաքանչիւր քէսէն 500 ղրուշ է), 10 ոչխար եւայլն :

Հայ աղջիկներու նկատմամբ տիրող այս ոգեւորութեան պատճառաւ գրեթէ աղջիկ չէր մնացած, նոյն իսկ տղեղները տարուած էին :

Հարուստ Քուրտ մը յաջողած էր իր տղուն համար գեղեցիկ հայ աղջիկ մը գտնել եւ իր այս յաղթանակին համար հրաւիրած էր շրջակայ բոլոր գիւղացիները, կազմած էր ձիաւոր մեծ թափոր մը, նստեցուցած էր հայ կոյսը ձիուն վրայ եւ ձին ու աղջիկը զարդարած էր թանկագին կերպասներով, զոհարներով, զարդերով : Աղջկան առաջքէն խմբուած կը պարէին ու կ'երգէին գոյնզգոյն հագուստներ հագած քուրտ կիներ, փեսին մայրը եւ մօր ազգական հիւրերը, իսկ տղան հագած էր ճոխ լաթեր ու ձի հեծած՝ սուր խաղացող երիտասարդներու հետ ձիարչաւ կ'ընէր : Տաւուլ զուռնայի առաջնորդութեամբ հրաւիրեալներու այս թափօրը գիւղերը պտտելով, կը պարծենար իր գտած հայ աղջկան արժանիքներուն վրայ : Երեք օր երեք դիշեր տեւեց այս հարսանիքին կերուխումի զուարճութիւնները :

Այդ միջոցին թուրք թերթերը հրատարակեցին առժամեայ օրէնք մը զոր արտատպած էր նաեւ «Բիւզանդիոն» շաբթերթը : Օրէնքը բաղկացած էր երեք յօդուածներէ, որուն գործադրութեանը համար Թալէաթի հրամանաւ կազմուած էր թուրք յանձնախումբ մը :

Այդ օրէնքը կը վերաբերէր տեղահան եղած Հայերու անչարժ եւ շարժուն կայքերու դրաման : Յանձնախումբը լիազօր էր Հայերու կայքերը ծախել եւ պարտատէրերու դրամները վճարել : Մնացեալը պիտի յանձնուէր տիրոջը, եթէ ներկայ էր, հակառակ պարագային պիտի մնար յանձնախումբին քով :

Այս օրէնքի հիման վրայ սկսած էին արդէն զործի : Հապճեպով կը ծախէին Հայերու տուները, պարտէզները, արտերը եւայլն :

Պէրէճիքի Հայերը տազնապալի դրութեան մէջ էին, ոչ միայն կը տեսնէին ու կ'իմանային դանազան վայրերէ տեղահան եղած Հայերու վիճակը, այլեւ կը նեղուէին տեղացի թուրքերէն, որոնք չափազանց մոլեռանդ էին եւ ամէն առիթով կը սպառնային տեղացի Հայերուն : Օրինակ, թուրք մը ծրար մը կը տանի Հայու խանութ մը կը ձգէ, ըսելով թէ կէս ժամէն կուգամ տանելու եւ կ'երթայ ուղղակի կառավարութեան իմացնելու թէ այս ինչ խանութը զէնք եւ փամփուշտ կայ : Անմիջապէս ոստիկանները կուգան կը խուզարկեն, կը գտնեն այդ ծրարը որ հարեւան թուրքը ձգած էր եւ գտնելով զէնք ու փամփուշտը, կը ձերբակալեն : Եւ նութագանը : Այս կարգի դէպքերը եւ շարունակական սպառնալիքները յուսահատական դրութեան մատնած էին Պէրէճիքի Հայերը որոնք կերպով մը իրենց գլուխը փրկելու համար որոշեցին կրօնակից ըլլալ թուրքերուն : Պէրէճիքի հարիւր հայ ընտանիքները ընդունեցին մահմետականութիւնը : Եւ ամէն արտաքին ձեւաւարտութիւնները կատարեցին, նոյնիսկ քանդած էին Հայոց եկեղեցիին զանգակատունը եւ յուղարկաւորութիւնը Հայ կնոջ մը որ մեռաւ այդ միջոցին, իսլամական կրօնին համեմատ կատարեցին եւ թաղեցին թրքական գերեզմանատան մէջ : Միայն ծերուկ քահանան չէր ուրացած իր հաւատքը եւ եկեղեցիին մէջ փակուած կը մնար, անդադար աղօթելով :

Թուրք ժողովուրդը եւ նոյնիսկ կառավարութիւնը մեծ յարգով ընդունեցին այս կրօնափոխութիւնը եւ դիմեցին Կ. Պոլսոյ Շէյխ-իւլ-Իսլամին, որպէսզի իր

հրովարտակով վաւերացնէ նորախոխներուն իսլամութիւնը, ինչ որ կատարուեցաւ եւ կառավարութիւնը ըսկաւ բաժնել նոր ինքնութեան թուղթեր մահմետականացած Հայերու: Յարաբերութիւնները լաւացան եւ թուրքերը սկսան իբր բարեկամ նկատել իսլամացած Հայերը, երբ ահա նոյեմբեր 12ին, հակառակ թուրք ժողովուրդին եւ չէյխերու դիմումներուն, տեղահան ըլին Պէրէճիքի բոլոր Հայերը եւ զրկեցին դէպի Միջագետք:

Մարաշի դիւղերէն թուրք զինուոր մը իր դիւղացի Հայերուն տեղահանութիւնը լսելով կառավարութեան դէմ կը դանգատէր եւ կ'ըսէր. «Մենք եղբօր պէս կ'ապրէինք մեր հայ դրացիներուն հետ եւ անոնք մեր ամէն պիտոյքներուն դոհացում կուտային առանց դանդատելու: Երբ ես կը ստիպուէի քաղաք երթալ գործով, առանց մերժելու կուտային իրենց ձին կամ էջը, որ օրերով երբեմն քովս կը մնար: Երբ գնումներ կ'ընէի իրենց խանութներէն, դրամը անմիջապէս չէին առներ ըսելով թէ թող մնայ, մի նեղուիր եւ 5-6 ամիս ետքը կը վճարէի: Իմ դաւակներս անոնց տղոցը հետ կ'երթային խաղալու եւ կը սորվէին հէքեաթներ, երգեր: Մեր մանուկները այնքան կը սիրէին Հայերը որ անոնց տուներէն չէին բաժնուեր մինչեւ երեկոյ: Երբ ես զինուորութեան գացի իմ տան ամբողջ ծախքը դրացիներս հողացին: Երբ իմ ազգական Ալին եկաւ սլամոնց, թէ մեր տունը ոեւէ բանէ չէր զրկուած շնորհիւ հայ դրացիներու հոգածութեան, սիրտս չատ հանդարտեցաւ այդ մասին, բայց հիմա երբ կը լսեմ մեր այդ բարի դրացիներուն տեղահանութիւնը, խելքս կը կորսնցնեմ եւ չեմ հասկնար թէ այդպիսի լաւ մարդիկներու ինչու այդպիսի չարիք կ'ընեն: Հապա իմ մեծ ցաւս, իմ տանս վիճակը ի՞նչ պիտի ըլլայ...»:

ԹՈՒՐԳԵՐՈՒ ԿԱՍԿԱԾՈՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԻՄ ԵՒՏԵՂԱՑԻ ՀԱՅԵՐՈՒ ՆԿԱՏՄԱՐԲ—ՃԱՐԱՊԼՈՒՍԻ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՅԸ — ՀԱՐԻՒՐԱՊԵՏ ՕԹԹՕ ԷՕԼՄԱՆ, ԳԵՐՄԱՆ ՍՊԱՅ :

Եդեսիոյ դիմադրութենէն ետքը, տեղւոյն թէ զինուորական պաշտօնեաներու եւ թն Չէրքէզներու ատելութիւնը դրդուած էր Հայերու դէմ եւ մասնաւորապէս իմ դէմ, որովհետեւ միշտ ճգնած էի օգնել անցնող Հայերուն եւ քանի անգամներ բողոքած էի կառավարութեան մօտ : Առիթը եկած կը համարէին ոեւէ ձեռով վնասել տեղւոյն հայութեան եւ վրէժ լուծել ինձմէ :

Վաղուց ի վեր զգացած էի, որ իմ կացութիւնս ապահով չէ, երբ դրազիր թուրք բարեկամս, որ ազատամիտ եւ հակաիթթիհատական երիտասարդ մըն էր, ինձ յայտնեց որ չէրքէզ Մուսթաֆան կը պատրաստուէր դաւ մը սարքելու ինձ համար եւ թէ իմ հեռանալս անհրաժեշտ էր :

Գերմանացի զինուորականներ միշտ կուգային մակոյկներով, կ'անցնէին Եփրատի վրայէն եւ կ'երթային Պաղտատ : Այդ բանը ինձ մտածել տուաւ, թէ ոեւէ մէկին հետ ոեւէ պաշտօնով կրնայի հեռանալ : Այդ միջոցին հիւանդանոցը պառկած կը մնար գերմանացի հարիւրապետ մը՝ Օթօ Էօլման, որուն բարեհամբոյր բնաւորութիւնը բժշկապետին ուշադրութիւնը գրաւէր էր : Բժիշկը առաջարկեց ինձ ներկայացնել հարիւրապետին, իսկ հիւանդանոցի հաշուապահը խոստացաւ իր կարգին բարեխօսել : Չիս ներկայացուցին Օթօ Էօլմանին, որ 30-35 տարեկան, վայելուչ դէմքով, հսկայ հասակով մարդ մըն էր : Ինքը պաշտօն ունէր զէնքեր փո-

խաղրել Պարսկաստան: Եփրատի վրայէն պիտի հասնէր Պաղտատ եւ անկէ սահմանագլուխը պիտի անցնէր: Ես զիտէի այն բոլոր տեղական լեզուները եւ բարբառները, որ այդ ճամբուն վրայ կը խօսուին՝ արաբերէն, քուրտերէն, թուրքերէն եւայլն: Պայմանաւորուեցանք որ ես իբր թարգման ուղեկցիմ իրեն:

Առաջին պահուն որ իրարու հանդիպեցանք, ինձ հարցուց՝ «Հա՛յ ես», եւ երբ հաստատական պատասխան տուի, գոհունակութեամբ ընդունեց զիս: Կէս ժամու չափ խօսեցանք եւ համաձայնեցանք, որ հետեւեալ առտու 1915 նոյ. 12ին ճամբայ պիտի ելլենք: Ճարապլուսէն մեկնիլս դժուար էր, մանաւանդ որ անհրեշարին էր իբրեւ ուրիշ ազգի պատկանող ծպտուիլ, ինչպէս մտադրութիւն ունէինք ընել ճամբայ ելլելէ ետքը: Բայց Օթօ Էօլման ջանաց, որ մակոյկը մտած միջոցիս ժանտարմաներու կողմէ չարզիլուիմ: 10 մակոյկ յանձնուած էր մեզ, որոնց մէջ կը գտնուէին Պոլսէն եկած զերմանական ուղմամթերք, իսկ այս նիւթերուն հսկողութեան համար մեզ կ'ընկերանային 10 ժանտարմաներ, որոնց անձանօթ էի: Գերմանացի սպան ստաջարկեց ինձ անմիջապէս իմ հայ ըլլալս ծածկել եւ ես սուրիացի կաթոլիկ արաբ ձեւացայ եւ անունս փոխեցի՝ Եուսուֆ:

Մեր մակոյկին մէջ ունէինք փայտաչէն խցիկ մը, ուր մենք երկուքս կը քնանայինք: Ունէինք ճանապարհի համար շատ լաւ պաշար, նոյնիսկ ըմպելիներ: Առաջին պահէն իսկ զիս զարմացուց զերմանացի սպան իր ցոյց տուած ելբայրական մտերմութիւնով: Ինքը խնդրեց ինձմէ, որ ճաշենք միասին: Ինձ կը պատմէր իր Դաւրէթի մէջ ունեցած կեանքը, ուր կը գտնուէր իբ: կիւնը եւ նորածին երախան: Մեծ կարօտով կը յիշէր

դանոնք եւ անհամբեր էր հասնելու Պարսկաստան, ուր-
կէ ետքը արձակուրդով պիտի երթար միանար իր ըն-
տանիքին: Կ'ըսէր, թէ Դաւրեթի մէջ միակ հաճելի
ընկերութիւնը կարելի է գտնել Հայերու մէջ: Յաճա-
խեր էր անոնց երեկոյթները եւ իր փոխ-հիւստիտոսի
հանդամանքով առիթ ունեցեր էր լայն ծանօթութիւն-
ներ ունենալ Հայերուն հետ: Ամէն անգամ որ, ճամ-
բորդած էր գործերու պատճառաւ, Ռուսիոյ եւ Թուր-
քիոյ մէջ հանդիպած էր Հայերու, որոնց մասին գո-
վեստով կը խօսէր, մասնաւորաբար Կ. Պոլսոյ Հայերու
մասին, որոնց տնտեսական եւ մտաւորական կեանքին
հետ շփում ունեցած էր, եւ զարմացած մնացեր էր:

Երբ հարցուցի, թէ ինչո՞ւ ուզեցիք, որ ձեր թարգ-
մանը հայ ըլլայ, պատասխանեց. «Ես փորձուած մարդ
եմ եւ գիտեմ Հայերու գործունէութիւնը եւ հաւատար-
մութիւնը, բայց ձեր մասին մասնաւորապէս, երբ ժա-
մանակը գայ, ցոյց կուտամ, թէ ես ինչո՞ւ հայ թարգ-
ման առի»:

Պահ մը, երբ կը գանդատէի իմ նիւթական կո-
րուստներուս մասին եւ կը յայտնէի, թէ ամէն ինչ փը-
ճացած էր դէպքերու հետեւանքով, նաեւ Հայերու կը-
րած սոսկալի տանջանքներու մասին, գերման սպան
անկեղծօրէն բացատրեց, թէ այդ բոլորը մեծ ցաւ կը
պատճառէր իրեն: Զրուանքով խօսելէ ետքը Թուրքերու
ապիկարութեան եւ վայրենութեան մասին, կը մեղադ-
րէր նաեւ Հայերը, որ անկազմակերպ եւ անպատրաստ
գտնուեցան իրենց ճգնաժամին մէջ:

«Մենք Հայերու մասին մեծ կարծիք ունէինք, ըսաւ
գիտէինք ձեր ձգտումները, ձեր բարգաւաճ վիճակը,
գիտէինք նոյն իսկ ձեր դպրոցներուն թիւը: Դուք ու-
նէիք կուսակցական կազմակերպութիւններ, ի՞նչու պի-

տի կոտորուէիք այսպէս ոչխարներու նման : Ձեր դիմա-
դրուեթիւնը մեզ չի պիտի զարմացնէր, բայց այս վի-
ճակը անբացատրելի է» :

Օրինակ կուտար Եղեսիոյ դիմադրուեթիւնը . «Եթէ
Հայերը կազմակերպուած ըլլային այնպէս, ինչպէս որ
կը կարծէինք, եւ եթէ ամէն տեղ ու ամենքը միահա-
մոյն ձայն բարձրացնէին, իրենց ձայնը անլսելի չէր
կրնար մնալ» :

Կը հիանար գերմանացիներու զինուորական ոյժին
եւ թեքնիք միջոցներու վրայ, բայց եւ յարպանքով
կը խօսէր անգլիացիներու եւ Ֆրանսացիներու մասին,
մանաւանդ կը սիրէր Ռուս քողաքները, որոնց հետ
յաճախ ճամբորդած էր : Կ'ատէր պատերազմը եւ կը
ծիծաղէր Թուրքերու տգիտութեան վրայ : Կ'ըսէր, թէ
բոլոր գերման սպաները ի պաշտօնէ ստիպուած են
յարգանքով վերաբերուելու թուրք զինուորականներու
հետ, բայց երբ առանձին կը մնային, ինչ անսպաս-
նիւթ էին Թուրքերը, ծիծաղի եւ հեղնութեան : Կ.
Պոլսոյ մէջ ինքը գրագիր եղած էր գերմանական զին-
ուորական օֆիսին եւ անձամբ տեղեակ եղած էր, թէ
ի՞նչ բարձրաստիճան փաշաներ արեւելքի կը խօսէին
եւ յաճախ շուարուծի կը մատնուէին : Եթէ գերմանա-
ցիներու աջակցութիւնը չըլլար, Թուրքերը կը մատ-
նուէին արագ եւ ծիծաղելի սլարտութեան :

Այսպէս, Եփրատի հոսանքն ի վար ճամբորդելով,
երեք օրէն հասանք Մէսքէնէ (նոյմ . 15ին) :

ՄԵՍՔԵՆԵՅԻ ՎԱՐԺՈՒՀԻՆ ԴԵՊԻ ՌԱՔՔԱ

Դեղերը ստանալէս ետքը վերադարձայ աքսորեալ Հայերու մէջ եւ կասկածելով, որ իմ մօրաքրոջս աղջիկ Աննան կրնար ատոնց մէջ գտնուիլ, ժանտարմայի մը ընկերակցութեամբ խումբերու մէջ կը պտտէի եւ կ'որոնէի, երբ ահա տեսայ շուրջ 25 տարեկան սիրուն դէմքով եւ բաւական մաքուր հագուստներով աղջիկ մը, որ ամէն կողմ թափառելով, կը խօսէր ու կը մխիթարէր, եւ ամէնքն ալ յարգանքով մտիկ կ'ընէին զինքը: Ժանտարմը մատնանշելով այդ աղջիկը զիս անոր մօտ տարաւ: Մօտեցայ երիտասարդ աղջկան, սանձեցի ժանտարման, որպէսզի անպատշաճ խօսք չարտասանէ, եւ ես սկսայ թուրքերէն լեզուով խօսիլ աղջկան հետ:

— Ո՞րտեղացի էք:

— Իզմիտէն եմ (Նիկոմիդիա):

— Ի՞նչպէս կ'ապրիք:

— Շատ թշուառ կերպով, ահա կը տեսնէք ձեր աչքին առաջը՝ հիւանդ եւ անօթի...

— Ի՞նչ կ'ընէք՝ այսպէս խումբերու մէջ պտրտելով:

— Իմ մխիթարութիւնս կը գտնեմ ժողովուրդը խրախուսելով ու մխիթարելով:

Երբ իմացայ, թէ Փրանսերէն գիտէ, սկսանք խօսիլ Փրանսերէն լեզուով: Չէր զանդատէր իրենց թըռուառութենէն, միայն հացի եւ դեղի պակասն էր, որ կը մատնանշէր սոսկալով:

Մեր խօսակցութիւնը բաւական երկար տեւեց, երբ վարժուհիին դէմքին վրայ տեսայ գունատութիւն մը, անիկա սկսաւ դողալ եւ ինկաւ նուաղած: Չորս կողմէն ձայներ կը գոչէին.

— Վարժուհիին ալ ինկաւ անօթութենէ:

Ժանտարման կ'ուզէր նուազած աղջիկը տանիլ, բայց ես իմ դերման սպայիս անունով սպառնացի, այնպէս որ անիկա վախցաւ եւ հեռացաւ :

Հասայ մակոյկ, առի դեղեր, դրամ եւ կրկին վերադարձայ դէպի Հայերը : Վարժուհին սթափած էր, բայց հիւանդ էր : Բաժնեցի հաց եւ դեղ աքսորեալ ժողովուրդին : Ամէն կողմէ նկատելով, խուժեցին վրաս եւ ես հազիւ կարողացայ իրենց ճնշումէն ազատիլ : Ամէնքը կը պուռային .

— ԷՖէնտի՛, հաց, էՖէնտի՛, դեղ . . .

Արաբ կիներ հեռուներէն եկած էին եւ հազիւ մէկ օխա կշոռ դիւրացող կը ծախէին 20 փարայի : Միջօրէի տաքութիւնը տանելի էր, բայց գիշերուան ցուրտը, մանաւանդ ցօղը, մահացուցիչ էր : Ժողովուրդին կեցած վայրին շուրջ դիզուած էր մարդկային կեղտ, մինչ մէկ կողմէն թշուառ ժողովուրդը կը ջանար իր մէջէն դուրս հանել ամէն տեսակ աղտեղութիւններ :

Այդ միջոցին Հալէպէն կուգային նոր դազլթականներ : Հասնողները չէին կարող նոյնիսկ նստիլ, այլ գետինը կը նետուէին եւ կը պառկէին, ինքնակորոյս վիճակի մէջ, կարծես ամէն ղզացում կորսնցուցած էին : Հոն եղող Հայերը ոեւէ հետաքրքրութիւն ցոյց չէին տար նոր հասնողներուն, այնքան ամէն մէկը ընկճուած էր իր սեփական ցուերով : Շարքերով ինկած, պառկած, մէկը կուլար, միւսը կը հեծեծէր եւ ոչ ոք կուգար հարցնելու իրենց ցաւը, եւ ոչ ալ իրարու հետ կը խօսէին : Երբ հարցում կ'ուզէի, «Պարբերեցի կա՞յ ձեր մէջ», նշանով ցոյց կուտային : Երբեմն երկար կը խօսէի եւ ոչ մէկ պատասխան կը ստանայի, աչքիս մէջ կամ կէտի մը յառած իրենց նայուածքը, անշարժ կը մնային և միավանկ մը իսկ չէին ուզեր արտասանել :

Երբ մակոյկ վերադարձայ, տեսայ որ տեղւոյն

Թուրք զինուորականը բարի վալուստ այցելութեան եկած էր սպային մօտ: Երբ իրեն հարցուցի, թէ ինչո՞ւ հաց չէր տար, անիկա պատասխանեց. «Զինուորներուն համար բաւական հաց չունիմ, ուրկէ՞ պիտի կարենամ Հայերուն տալ: Թէեւ շատ ցաւալի է վիճակին, նոյն իսկ հեռագրած եմ այդ մասին, բայց ես ի՞նչ կրնամ ընել»:

Մութը իջաւ: Գերմանացի սպան օրուան մէջ տեսածներէն ազդուած՝ տխուր էր, ոչ կը ծխէր եւ ոչ կը խմէր: Մտահոգ եւ տրտում նստած էր առանձին եւ կարծես նոյնիսկ կը զլուշանար ինձ հետ խօսելու:

Դարձեալ եկան մեր ժանտարմաները եւ գաղտնապէս ինձ առաջարկեցին երթալ հայ կիներով զուարճանալ: «Աստուած ասոնք ստեղծեր է մեզի համար, կը ըսէին, որպէսզի այստեղ հանդիպինք իրենց»:

Գերմանացի սպան խիստ կերպով հրամայած էր, որ մեր ժանտարմաները իրենց մակոյկներէն չի հեռանան, բայց ասոնք գիշերանց գացեր էին եւ շատ ուշ, գրեթէ լուսաբացին վերադարձան:

Առաւօտուն մեկնեցանք Մէսքէնէէն դէպի Ռաքքա: Քիչ յետոյ տեսանք հեռուն դիակ մը գետին ջուրերուն մէջ, հետզհետէ մօտեցանք եւ սկսանք որոշել հազուատները եւ դէմքը: Ես եւ ժանտարմաները պոռայինք:

— Երեկուան վարժուհի՛ն է, վարժուհի՛ն...

Այն ատեն ժանտարմաները պատմեցին իրենց նախորդ գիշերուան կատարած քաջագործութիւնները:

— Ի՞նչ յիմար ես, որ չեկար: Մենք եւ տեղւոյն ժանտարմաներու տասնապետը գացինք Հայերու տեղը եւ այս աղջիկը գողցանք, տարինք տասնապետին սենեակը եւ մինչեւ լոյս զուարճացանք: Բայց տեսնէիր թի ինչ կողարար աղջիկ էր, ալօքաթի մը նման մեզ

կը ջանար համոզել, կը պատասխանէր մեղի քաջութեամբ, անանկ բաներ կ'ըսէր, որ մենք կ'ապշխնուինք: Վերջապէս յուսահատեցաւ, զայրացաւ եւ սկսաւ գոչել.

— Դուք վայրենի գազաններէն ալ գէշ էք:

Ժանտարմաները շատ չարչարեք էին խեղճ աղջիկը, որ պահ մը խուսափելով իրենց ձեռքէն, ինքզինքը նետեր էր գետը:

Հանդարտ կ'երթար վարժուհիին դիակը հոսանքին ուղղութեամբ, քակուած մազերը ալեակներուն վրայ կը ծփային եւ դէմքը ծածկուած էր ջուրի թեթեւ խաւի մը ներքեւ:

Հետեւեալ առաւօտուն կանուխ տեսանք, որ գետին ձախ աիը իջած էին մարդիկ ու կիներ, ոմանք ճեմակ գիշերային զգեստներ կը կրէին, շատերը հագուած էին եւրոպական հագուստներ եւ նոյնիսկ կիները եւրոպական տարազով էին: Ասոնք կը լուացուէին օճառով եւ նոյնիսկ գեղեցիկ երեսի սրբիչներ ունէին: Մեր մակոյկները կ'անցնէին շատ մօտէն եւ կը տեսնէինք իրենց երեսները: Ամէն մէկը յանդիմանական ազնարկ մը նետելով դէպի մեզ, կ'անցնէին կ'երթային: Սպան կ'ըսէր. — Նայէ՛, կարծէք թէ կը հայհոյեն մեզ:

Մեր մակոյկները յառաջացան եւ բլրակի մը ետեւ տեսանք այդ աքսորեալներուն բնակարանները: Ասոնք շինած էին հողաշէն ցած եւ բաւական մաքուր տուններ եւ քանի մը հատ եղեգեայ խրճիթներ, որոնց առաջը խոնուած էին նոյն ձեւով հագուած բազմաթիւ դաղթականներ: Չի կարողացանք գիտնալ, թէ այդ հայերը ո՞ր տեղացի էին:

Մինչեւ յաջորդ կայանը մեր ճամբան երկար էր: Գիշերները կ'իջնայինք անապատը եւ ժանտարմաներու ընկերակցութեամբ երբեմն կ'երթայինք դէպի Արաբներու վրանները, որոնք կը գտնուէին դետեղրէն 15

վայրկեան հեռաւ : Իրիկուն մը այսպէս հասանք արաբ վրաններու մօտ եւ լսեցինք, որ անոնցմէ մէկուն մէջ Հայեր կան : Անմիջապէս ուղեցի հասկնալ, թէ ո՞րն է այդ վրանը, բայց ժանտարմաները արդէն դացեր խուզարկեր էին եւ վերադառնալով ինձ ըսին. «Մի՛ երթար, բան մը չիկայ, ոչ աղջիկ կայ, ոչ երիտասարդ կին» :

Վրանը մաղէ հիւսուած էր եւ բաժնուած էր երեք մասի, որու մէկ կողմը Արաբին կովերը եւ ոչխարները կային : Երկրորդ մասին մէջ, որ հազիւ չորս քառակուսի մէթր էր, խոնուած էին 40—50 պառաւ կին եւ այր : Երբ ես ներս մտայ, զիս պետական պաշտօնեայ կարծելով, բոլորը մէկ ոտքի ելան բարեւելու համար : Իրենց դրութիւնը սոսկալի էր, պառկելու տեղ չունէին քնականաբար եւ նստած կը քնանային, ոչ միայն երախաները այլ եւ պատանիները իրենց մօր գիրկը քնացած էին : Երբ հարցուցի իրենց վիճակի մասին, վախնալով իմ հարցումէս, մեծ գոհունակութիւն ցոյց տուին եւ դողահար ամէնքը մէկ սկսան աղօթել սուլթանին արեւչատութեան համար : Իրենց այդ հոգեկան սոսկալի դրութիւնը չափազանց գէշ ազդեց վրաս եւ ուղեցի անմիջապէս հեռանալ, բայց ինձ ընկերացող ժանտարման զիս պատուելու համար Արաբէն ջորի մը պահանջեց, որպէսզի զիս ետ դարձնէր : Արաբը ցոյց տուաւ Հայերու միակ եւ վտիտ ջորին : Հայերուն դէմքը բոլորովին այլայլեցաւ, այն ատեն խորապէս յուզուած բարձրաձայն ըսի :

— Ձեմ ուղեր, թողէք ջորին, ես քալելով կը վերադառնամ :

Բայց այս անգամ Հայերը իմ մերժումէս վախնալով, կը պաղատէին ու կ'ըսէին :

— Առ դնա, հէլալ ըլլայ քեզի :

Չէին գիտեր, որ եթէ Չորին տանէի, աւելի վատ էր իրենց համար, քան թէ չի տանէի: Իրենց չփոթու-թիւնն ու վախը ազդած էր իմ վրաս եւ ես ալ չէի գիտեր, ինչպէս ընեմ զիրենք հանդարտեցնելու համար: Հարկ եղաւ Չորին վերցնել, զայն վերադարձնելու համար ինծի ընկերացաւ հայ պատանի մը: Ճամբան զինքը ապահովցնելու համար յայտնեցի թէ ես քրիստոնեայ եմ, այն ատեն տղան պատմեց, թէ իրենք Մարաշի կողմերէն են եւ ցաւով պատմեց այդ խումբ մը Հայերուն կրած տառապանքները: Անօթի, ծարաւ, ամէն օր կը ստիպէին զիրենք տեղերնին փոխել: Միայն Արաբներ: Կտոր մը սեւ հայ կուտային իրենց: Չորին իրն էր եւ խեղճ կենդանին կը կրէր ամբողջ խումբին բեռը իրենց թափառումներու միջոցին: Երբ տեղ մը կը կենային, ժամանակ չէին տար, որ Չորին հանգստանար. անցնող դարձող զինուորականները, զինուորները կամ ժանտարմաները բռնի կ'առնէին զայն, կը լծէին կառքի, կը բեռցնէին անտանելի բեռեր եւ երբ Չորին չէր կրնար տանիլ, կը ստիպէին պատանին, որ մտրակէ կամ բեռը ինքը վերցնէ: Այդ Չորին, որ պէտք էր աքսորեալներու վիճակը թեթեւցնել, պատուհաս մը դարձած էր եւ կը բաժնէր իր տէրերուն ճակատագիրը:

— Արդէն Չորին ուտելիք ալ չունի, կ'ըսէր պատանին, մեզի հետ ասդիէն անդիէն չոր խոտեր կրծոտելով կ'ապրի:

Մեր մակուկավար ժանտարմաները իրենց հետ պարկերով ալիւր բերած էին, որպէսզի թանկ գիներով ծախեն: տեղահանուած Հայերուն:

Գիչեր մը, երբ զբաղած էին ծախելով, ամէն կողմէ սկսան վաղելով գալ խումբ խումբ Հայեր: Դրամ ունեցողը դրամ կուտար, չատերը այլեւայլ իրեղէննե-

րով կը վճարէին եւ նոյնիսկ սմանք իրենց մանուկը ու
պատիւը ծախելով, կ'ուզէին ալիւր առնել, բայց ժան-
տարմաները ու մակուկավարները կը մերժէին եւ կը
պահանջէին կամ դրամ կամ իրեղէններ :



Թուրք զէլա որ կրէշներէն մէկը.
ջարդարար Ապտուլլահ փաշա

Ասդին անդին հապճեպով կրակ կը վառէին եւ ա-
լիւր դնողները, սրոնք բախտաւոր ունեւորներ կը հա-
մարուէին, կ'առանձնանային, շտապով կը շաղուէին,
կըր իմօր մը կը շինէին տօսնց աղի եւ առանց թըթ-
լամօրի եւ կը նետէին կրակի մէջ ու վառած շիւղեր
դիզելով այդ իմօրին շուրջ բոլորը անհամբերութեամբ
կը սպասէին, բայց իմօրը չեփած, մատներնին այրե-
լով, կը յափշտակէին ու կտոր կտոր խլելով կ'ուտէին :
Անոնք որ չէին կրնար ալիւր առնել, կէս թմրած վիճա-
կի մէջ տարածուած էին դետինը եւ ամէն կողմէ անզօր :

ցանկութեան եւ անքոցի ձայն կը բարձրանար: Այս թըշուառներուն մանուկները հաց եփողներուն շուրջը դեղերելով հաց կը մուրային, երբեմն իրենց մօրաքոյրէն, հօրաքոյրէն: Բայց մարդիկ իրենց ծայրայեղ եւ դեր-



Մուսուլէն ազատուած երկու հայ սղախ:

մարդկային դժբախտութեան մէջ դարձեր էին անկարեկիր եւ անուղք, ու նոյնիսկ չէին պատասխաներ սոված մանուկներուն:

Ուշագրութիւնս դարձաւ խումբ մը մանուկներու վրայ, որոնք խոնուած էին ալիւրի պարկին շուրջ եւ մատերնին թրջելով կը հաւաքէին ու կ'ուտէին գետինը մաղուած ալիւրը:

ՌԱՔՔԱ, ՀԱՅՈՑ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆԸ —
ԽԵՆԹԵՑԱԾ ՄԱՐԴՈՑ ՏԵՍԱՐԱՆԸ

Գետին երկու ափերը կը տարածուէին աւազուտ դաշտեր: Մէջտեղը պզտիկ կղզի մը կար, ուր կ'երեւային բոյսերը: Այլ ափին էր Ռաքքա քաղաքը 6-700 տուն բնակիչներով, որոնք ամբողջովին Արաբ էին: Տուները հողաչէն էին եւ քաղաքը ունէր փոքրիկ շուկայ մը: Իրիկունը հասանք Ռաքքա: Ձախ ափին վրայ տեսանք շուրջ 5000 Հայերու բազմութիւն մը, որոնց մէջ կային Հայաստանցի, Կիլիկեցի եւ արեւմտեան նահանգներէ Հայեր: Այդ բազմութենէն քանի մը երիտասարդներ անցան աջ ափը ժանտարմայի մը ընկերակցութեամբ, որպէսզի հաց եւ ալիւր գնեն: Գիշերը շուտ վրայ հասնելուն չի կարողացայ քաղաք երթալ եւ մակոյկէն սկսայ դիտել շուրջս: Գետափին վրայ մի քանի հայ դաղթականներ կը թափառէին: Տեսայ որ մեր ժանտարմաները բռնի կերպով բռնուցին իրենց բերած ալիւրը, որպէսզի քաղաք տանին ծախելու: Ձախ ափին վրայ դտնուող Հայերը կ'ընծայէին տարօրինակ տեսարան մը, կարծես թէ տօնավաճառ մըն էր այնտեղ: Գիշերուան մութին մէջ Հայերու խումբերը ամբողջովին լուսաւորուած էին վառուած օճախներու լոյսով: Կէս գիշերը անց էր, երբ արթնցանք սարսափելի աղմուկով մը: Կանանց եւ տղայոց աղեկտուր ձայները, չաքալներու ուռնոցը, աղջիկ թէ կին փախցնող գիշերային գողերու կանչերը, իրարու կը խառնուէին: Կրակները մարուած էին եւ բան չէինք կարող տեսնել, բայց գիշերուան ցուրտը, հեկեկացող մանուկներու լացն ու աղաղակը, որ կը տիրէր միւս ձայներուն, մեզ կը դողացնէր ջղազրզուութենէ: Պահ մը ետքը իմացանք եղե-

լուծիւնը : Ժանտարմաները որոշեր էին այդ միջոցին ճամբայ հանել աքսորեալները : Մէկ մասը քունի մէջ, մէկ մասը ցուրտէն դողդողալով, ապշած, զարհուրած, առանց կատարելապէս սթափուելու, մուծի մէջէն կը քալեցնէին՝ քշելու համար Միջադեպի խորերը :

Երբ լոյսը բացուեցաւ, ձախ ափին մարդ չէր մնացեր, միայն հովը մարած օճախներուն մոխիրը կը ցըրուէր օդին մէջ :

Արեւը ծագեցաւ եւ ես ժանտարմայի մը ընկերակցութեամբ սրտորաստուեցայ մեկնիլ Ռաքքա քաղաքը, որ դետափէն 10-15 վայրկեան հեռու էր : Գերման սպան շատ տխուր տրամադրութեան մէջ էր : Գիշերուան ձայները ազդած էին իր վրայ եւ վերյիշելով մանաւանդ ճամբուն վրայ տեսածները, մռայլ թախիծի մէջ էր : Չէր ուզեր նոյնիսկ բաց օդին ելլել : Սենեակը փակուած նստած էր եւ կը զարմանար թէ ի՞նչպէս կրնամ երթալ իմ հայրենակիցներուն այդ վիճակը տեսնելու :

Աւազուտ դաշտին մէջէն կը յառաջանայի երբ ժանտարմը ինձ ըսաւ .

— Այդ կողմէն մի երթար : Նայեցայ այդ արդիւնուած կողմը եւ աւաջին ակնարկով բան մը չի տեսայ, յետոյ դիտեցի, լայնատարած աւազի դաշտը կոհակաւորուած էր անթիւ սլաքիկ աւազակոյտերով, բայց ասիկա անսովոր բան չէր, անասլաքի քամին երբեմն ծովի պէս կ'ալեկոծէ աւազները եւ համաչափ կոյտեր կը կազմէ նման ծովի ալիքներուն : Հարցուցի ժանտարմային . — Ի՞նչ կայ որ այն կողմը :

— Միթէ չե՞ս տեսնար, դեռ կ'երեւան կեավուրներուն ոտքերը, գանկերը :

Աչքերս բացուեցան կարծես, եւ անմիջապէս տեսայ ամէն ինչ : Ոչ թէ հարիւրներով այլ հազարներով կ'երեւէին կմախքի բեկորներ, չրուած՝ անասլաքի ա-

լազներուն մէջ: Ասոնք չէին թաղուած այլ ինկած տեղերնին մնացած էին եւ աւաղը ծածկած էր զանոնք: Շունները եւ բորենիները աւաղը պեղելով դուրս հանած էին ոմանց անդամները, ոմանց դանկը: Հակառակ ժանտարմային նախազուշութեան, դայի այդ համայնատարած գերեզմանին ուղղութեամբ, բայց հետզհետէ դժուար եղաւ յառաջանալ, կմախքները աւելի խիտ էին եւ ամէն մէկ քայլիս վախը ունէի, որ պիտի կոխեմ դիակի մը վրայ, կամ աւազակոյտերու մէջ ոտքս խըրելով պիտի հասնի մարդկային կմախքի մը: Ըսի ժանտարմային:

— Այդչափ ալ մեռեալ կ'ըլլա՞յ միթէ:

— Հա', հա', ծիծաղելով պատասխանեց: Ասոնք բնական մահով մեռած կամ սպանուած մարդիկ չեն, ասոնք այս ամառ ծարաւէն ինկող առաջին աքսորեալներն են: Երբ ժանտարմաները սուինը ձեռքերնին եւ ձիւաւորները կը բռնէին Եփրատի ափը, երեսուն քայլ անդիէն քշուող մարդկային հօտէն ո՞վ կը համարձակէր շղթան անցնիլ եւ երթալ ջուր խմելու:

Երբ դուրս ելանք մեռելներու այս դաշտէն, հանդիպեցայ տեղացի Արաբի մը որուն հետ երկար խօսեցայ հայ աքսորեալներու մասին: Անիկա թէ՛ կը խղճար Հայերը եւ թէ կը զանգատէր որ շուկային տէրը դարձած էին: Բացատրեց, որ բաղդատմամբ տեղահանութեան առաջին օրերու, այժմ իրենց վիճակը բարւոքած է: Այն մեռեալներու պատմութիւնը քստմնելի եւ անհաւատալի պատմութիւն մըն էր: Հաղարաւոր հայ աքսորեալներու բազմութիւն մը, չի դիտցուիր ո՞ր վայրերէն եկած, սաստիկ յոգնեցնելէ ետքը ոլոր մոլոր ճամբաներէ, անօթի, պապակած անսպասի միջօրէի կիզիչ տաքին ներքեւ, կողոպտուած, մերկ կամ կիսամերկ հասցուցած էին այս դաշտը ուր արգիլած են

Եվրատի մօտենալ ծարաւը յագեցնելու :

Գետին շուրջ 30 քայլ անդին ջուրին ձայնը լսելով եւ ծարաւէ խելադարուած մարդիկ ինկեր ու մեռեր են քանի մը օրուան ընթացքին, ամբողջապէս :

Հաշարաւոր դիակներու տեսքը, անոնցմէ արտա-
շնչուող խիստ նեխութիւնը, որ հովը կը տանէր անա-
պատին մէջէն մինչեւ հեռաւոր ովասիսները, գէշ աղ-
դեր է տեղւոյն բնակչութեան վրայ, եւ վրդովմունք
յատաջ եկեր է տեղացի Արարներու մէջ: Այսքան անօ-
դուտ վայրագութիւններու ի տես, կառավարութիւնը
ստիպուած էր ինկած դիակները գոնէ ծածկել, եւ ժող-
ւելով մէկ քանի արաբ զինուորներ, անոնց յանձնած
է այդ գործը: Զինուորները չուզելով երկար մնալ այդ
ապականուած վայրին մէջ, հապճեպով թիերու օգնու-
թեամբ, աւաղով ծածկած են մեռեալները:

Ճանապարհին երկու կողմերը բաց դաշտերու ա-
ւազուտին մէջ ցիր ու ցան տեսանք քանի մը կիներ ու
այրեր որոնք իմ ուշադրութիւնս պրաւեցին իրենց ան-
նպատակ շարժումներով: Այր մը կ'երթար, կուգար,
ձեռքերով շարժումներ կ'ընէր, երբեմն կը կենար եւ
կարծես բուռնցքով կը կուռէր մէկու մը հետ, ուրիշ
մը գետինը նստած, գլուխը ձեռքերուն մէջ, աւազը կը
դիտէր պիշ պիշ նայուածքով, անդին ուրիշ մը ձեռքը
փայտ մը աւազին վրայ երեւակայական զբաղումով
զրաւուած էր: Ոմանք իրարու հետ կուռելով, տենդա-
գին, խելայեղ կը չափչփէին ամբողջ դաշտը: Հարցու-
ցի Արաբին.

— Ի՞նչ են այս մարդիկը, ինչո՞ւ այսպէս կ'ընեն:
Անիկա պատասխանեց.

— Ասոնք մեծատուններ են եղեր իրենց տեղը, հոս
եկեր խենթեցեր են: Ամէն օր կ'աւելնայ այս խելա-
դարներուն թիւը, երեկ այսքան չի կային:

Անդին շարքերով կրներ, աղջիկներ, մանուկներ կ'երթային թոյլերով ջուր բերելու դետէն: Ոմանք լըւացք կ'ընէին եւ շատ կրներ ու աղջիկներ դետեզրը նստած իրենց ցաւը կուլային:

Երեկոյին, վերադարձիս, դերման գլինուորականը պատմեց, թէ այր ու կին երկու ծերունիներ սեւ շալվարներ հագած, հաւանաբար Գոնիացի, եկեր նստեր են դետափը: Ժամ մը խօսեր ու լացեր են ու վերադարձեր՝ դէպի խումբը:

Այն ճամբան, ուրկէ կը քալէինք, ամենէն ամրացած մասն էր, բայց դարձեալ անհաստատ աւազը դըժւարին կը դարձնէր մեր քալուածքը եւ ոտքերնիս կը խրուէր աւազին մէջ: Իսկ անդին դաշտին մէջ ուր կ'երթեւեկէին Հայերը, աւազը այնքան շարժուն էր որ կը մխուէին երբեմն մինչեւ ծունկերը: Աղջիկ մը ցնցստիներու մէջ, ծանր դոյլ մը շալկած եւ մէկ ձեռքով մանուկ մը բռնած, եկաւ մեր անցած ճամբէն քալելու: Մերսինցի հայ տղայ մը մեզ ցոյց տալով կը պոռար ետեւէն.

— Չե՞ս տեսներ այս շուները, որ ճանապարհէն կը քալես: Ինչպէս երէկ Աստղիկը, այսօր ալ քեզ կը փախցնեն:

Վերջապէս հասանք քաղաք: Շուկան ունէր մօտ հարիւր խանութ, որուն կէսը դրաւած էին Կիլիկեցի եւ Անատոլուցի Հայեր: Հաստատեր էին քանի մը փոռներ, որոնց տէրերը կապալով առած էին բանակին հաց հայթայթելու դործը: Կային հայ խոհարարներ, մըսավաճառներու, քեպապճիներու խանութներ, բանջարեղէն եւ այլ ուտեստեղէն ծախողներ: Կային կօշկակարներ, կլայեկողներ, թիթեղագործներ, խահուէճիներ եւ պղնձագործներ: Շուկային մէջ կ'երեւային նաև կրներ ու մանուկներ որոնք շրջուն վաճառողներ էին եւ

կը ծախէին իրենց երկրին կերակուրները եւ քաղցրեղէնները, որ արաբ ժողովուրդը մեծ հաճոյքով կը վընէր : Առանձին ըլլալէս օգտուելով, մտայ հայ նսպարավաճառի մը խանութը, որուն երբ յայտնեցի թէ ես քրիստոնեայ եմ, սկսաւ գանդատիլ եւ ողբալ :

Կառավարութիւնը յայտնած էր իրենց, որ այլեւս այդ երկիրը պիտի բնակին եւ պատերազմէն ետք պիտի քննուի, այն որ իր հայրենի երկրին մէջ հող ունէր, պարտէզ ունէր միեւնոյն տարածութեամբ հող պիտի տրուի իրեն Միջագետքի մէջ, կամ հողեր ու այգիները ծախուելով փոխարժէքը հոս պիտի տրուի տիրոջը :

Նսպարավաճառը կիլիկեցի էր, ա՛խ քաշելով իր հայրենիքին համար, սրտանց կուլար, հեկեկալով կուլար ; կը գանդատէր նաեւ ու կ'ըսէր .

— Մեր այս վիճակին մի նայիք, այս ապրանքը ամբողջ պարտքով առած ենք Արաբներէն, որով հազիւ կարող կ'ըլլանք մեր ընտանիքը անօթութենէ եւ մահէ փրկել : Բայց այսպէս երկար չի մնար : Այսօր կամ վաղը կառավարութիւնը մեզ այստեղէն կ'ուզարկէ ուրիշ տեղ մը : Եւ ցոյց կուտար դիմացի շարքի խանութները, որոնք պարապ էին :

— Անոնք ամէնքը Հայերը բռնած էին, առուտուր կ'ընէին, կառավարութիւնը զիրենք ուզարկեց անծանօթ տեղեր :

Վերադարձիս կէսօր էր, դաշտին վրայ մարդ չէր մնացած բացի խելագարներէն, որոնք կը շարունակէին իրենց երեւակայական գործերով զբաղիլ : Մէկ ալ տեսանք, որ երկու կիներ, տախտակի մը վրայ դրած էին կնոջ մը դիակը եւ կը տանէին մեռեալներու այն դաշտը, որ կառավարութիւնը կոչած էր «Հայոց դերեզմանատուն» : Բայց ճանապարհին մարդ մը քաշեց ա-

ուաջին քալող կինը, որ տակաւին դեռատի էր, դիակը գլորեցաւ ինկաւ, իսկ մարդը տարաւ աղջիկը քաշ-քշելով:

Հալէպէն բերուած աքսորեալներու հանդրուաններն են, Մէսքէնէ, Ռաքթա, Տէր-Զօր եւայլն: Այդ վայրերուն մէջ տեղահանուած Հայերու մնացորդները երբեմն կը մնան մէկ ամիս, երբեմն աւելի: Երբեմն ալ անմիջապէս, առանց հանգստանալու կը քշուին անապատին խորքերը: Ամէն ինչ կախուած է զիրենք առաջնորդող ժանտարմաներու քմահաճոյքէն: Միշտ կը հասնին նոր խումբեր, եւ նախորդները ճամբայ կ'ելլեն: Խանութ բացողները, տուն վարձողները, ունէ կերպով տեղաւորողները, հին խումբերու կը պատկանին: Հայ ընտանիքները կ'ամփոփուին եւ անմիջապէս կեանք մը կը ստեղծեն իրենց համար: Վրաններու ներքեւ, թէ տուններու մէջ անոնք իրենց անցած տեղը շէնցուցած են նոյն իսկ այդ կարճատեւ կայանքներու միջոցին: Տեղացի արաբ ժողովուրդը կ'աջակցէր իրենց ամէն բանով բայց դժբախտաբար Հայերը երբեք տեղ մը չեն տեղաւորուիր վերջնականապէս: Հրաման կուգար կամ զիրենք տանող ժանտարմաները կը վճռէին, եւ հարկ էր ամէն ինչ թողլով, ճամբայ ելլել դէպի անծանօթ եւ հեռաւոր կայաններ:

ԴԵՊԻ ՏԵՐ-ԶՕՐ — ՄԱՐԱՇԻ ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻՆՆԵՐԸ
ԵՓՐԱՏԻ ԱՓԵՐՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՊԱՏԿԵՐԸ

Ռաքթայէն մեկնեցանք նոյեմբեր 19ին: Երկրորդ օրը մակուկավարները կեցան ձախ ափին, որպէսզի դաղթական Հայերէն փայտ գնեն: Այս տեղ հաստատուած էին Մարաշի շրջականներու հայ գիւղացիներ եւ

անապատը շէնցուցած էին իրենց շինարարական ընդունակութիւններով: Բլրակի մը կողքին վրայ շինած էին աւագէ կղմինտրներով ծածկուած 70ի մօտ տուներ, որոնց մէջտեղը խան մը, ուր լեցուած էին դէղերով լաւ տեսակէ փայտածուխ և կտրուած փայտերու խուրձեր: Ոմանք ջորիներ ունէին, որոնցմով շրջակայ գիւղերէն կամ քաղաքներէն կը բերէին ապրանքներ: Ասդին անդին գիղուած էին սելս, ձմերուկ, արմաւ եւ այլն ու տեսակ մը պաղար կաղմած էին, ուրկէ կուգային դնելու նոյնիսկ ճամբորդ Արաքները: Բաւական չըջեցայ տուներուն մօտերը եւ բաց դռներէն նայելով, գիտեցի որ մաքուր եւ կոկիկ կերպով յարգարած էին: Բարակ շիւղերով եւ թելերով շինած էին փսիաթներ, որոնցմով ծածկած էին իրենց տան դետինը:

Եփրատի ափին կային նաեւ Հայեր, որոնք դբադած էին ձկնորսութիւնով: Մակուկավարները, որ թուրք էին, նախանձով կը խօսէին Հայերու վրայ եւ կ'ըսէին, «կեավուրները ոսկիի տէր դարձան այս մօտակայ անտառին փայտովը»:

Աջ ափին կար գինուորական գրաման կեդրոնատեղի մը, որուն տնօրէնը հրաւիրեց գինուորականը եւ գիւս: Այդ կեդրոնատեղիին սօտ կային 200 տեղահան հայ ընտանիքներ որոնք կիլիկեցի գիւղացիներ էին, ամէնքն ալ կը բնակէին իրենց շինած եղեգեայ խուրձիթներու մէջ:

Մտանք պաշտօնական ընդարձակ սենեակը ուր մեծ յարգանքով ընդունեցին մեզ: Այնտեղ լսեցինք որ պաշտօնեաներու, դրագիրներու, ծառաներու մեծ մասը Հայեր են: Միւտիւրը զարմանքով եւ գովասանքով կը պատմէր թէ ինչպէս Հայեր այս մեծ անապատին մէջ իրենց աշխատութեամբ եւ հնարամտութեամբ յաջողեցան 200 ընտանիքի կեանքը ապահովել: Գացի այցելե-

լու եղեգեայ խրճիթները: Ժրաջան աշխատութեամբ զբաղուած էին ամէն մէկը: Պատանի մը վրայտ կը կոտորէր ու կը դիզէր, անդին կին մը լուացած ցորենը կը սիրոէր արեւին տակը, ուրիշ կին մը ժանտարմային չափը կ'առնէր անոր շապիկ կարելու համար, նոյնիսկ երախաները զբաղուած էին սեւէ գործով:

Երբ գերմանացի սպան կաթ կը փնտռէր զնելու համար, հայ սպտանի մը ըսաւ.

— Ես գիտեմ թէ որտեղ կաթ կայ, ի՞նչ կուտաք ինձ, որ ցոյց տամ տեղը:

Մայրը բարկացաւ այս վարմունքին համար եւ արդան աշխուժով մեղ առաջ: որդեց Արաբի մը տունը, որմէ իբր վարձք ստացաւ գաւաթ մը կաթ, իսկ սպան զինքը լիուլի վարձատրեց:

Այս Հայերը բաւականին կազդուրուած էին, լաւ երեւոյթ ունէին, մաքուր հագուած էին եւ կ'երեւէր որ նախապէս կողոպուտի չէին ենթարկուած:

Արդէն կիլիկեցիները առհասարակ անհամեմատ աւելի լաւ վիճակ ունէին, մանաւանդ որ այրերը իրենց ընտանիքներուն մօտ մնացած էին: Իրենց կեանքի հանդամանքներէն կ'երեւար, որ պոնէ որոշ չափով օրէնքի սլաշտպանութիւնը կը վայելէին:

Մեր մակոյկները ճամբայ ելան: Երկու ափերուն միօրինակ եւ տափարակ տարածութիւնը զիտելով կը յառաջանայինք: Քանի մը ժամ ճամբորդելէ ետքը ձախ ափին վրայ տեսանք խումբ մը կիներ, հրէշային դէմքով պառաւ մը, մանուկ մը քնչուի նման, խանձած արեւէն ու թշուառութենէ, այլակերպուած դէմքերով, որոնք գետափը նստած բոլորովին մերկ գիրար կը լուային: Հակառակ որ իրենցմէ քանի մը քայլ անդին կը դտնուէին արաբական վրանները, որոնց առաջքը նստած էին Արաբներ. հակառակ որ մեր շարք մը մակոյկները



Նահատակներու սկզբներ- պատերազմէն ետք Տէր-Գօթի
Հայերու կողմէ հաւաքուած:

իրենց շատ մօտէն կ'անցնէին, անոնք անտարբեր կը մնային: Եւ ոեւէ կերպով չէին փորձեր իրենց մերկութիւնը ծածկելու, անփոյթ՝ մեր ներկայութեան, կը շարունակէին իրենց դորձը, եւ երբեմն ալ աւազով կը շփէին իրենց անդամները:

Գետափէն հեռու կ'երևէին ուրիշ խումբեր, անդին՝ լքուած Հայերու խումբեր, մինչեւ մեր տեսողութեան հեռաւոր սահմանին վրայ:

Յորեկ մը կանգ առինք գետափը եւ գիշերեցինք: Հետեւեալ ասուտուն տեսանք այն տասնապետը, որուն ամիս մը առաջ հանդիպած էի Ճարապլուսի մէջ, գաղթականներու խումբով:

Աքոսրեալներու մնացորդը այնտեղ էր եւ մէկ ամսուան մէջ փոխուած էր հիմնովին: Լքուած եւ թշուած կը մնային Եփրատի ափին: Չունէին այլեւս դոյնզգոյն

հազուստները որոնցմով անցած էին, չի կային աղջիկներ ոչ ալ մանուկներ եւ մնացեր էին միայն պառակլիներ, որոնք ապշած կը դիտէին գետին ընթացքը: Մեր տասնեակ մը մակոյկներու ներկայութիւնը, մեր անցուդարձը, լուսանկարի մեքենան չէին հետաքրքրեր զիրենք: Այս ամէնքը կարծես թէ չուք մըն էր, որ կ'անցնէր իրենց սեւեռած աչքերուն առաջքէն: Այստեղ կենդանութիւնը դադրած էր: Չի կար եռուզեռ ոչ ալ աղմուկ, հեծեծանք եւ ոչ ալ արցունքոտ աչքեր, միայն մեռելային լուռութիւնն էր, որ կը տիրէր: Անոնք թընձուկ մազերով, մերկ ոտքերով, պատուած լաթերով, սեւցած դէմքերով, երկարած եղունգներով ու փոսացած ահաւոր աչքերով, սոսկում կը պատճառէին նոյն իսկ ժանտարմաներուն: Մարդ չէր համարձակեր մօտենալ կամ խօսիլ այս ուրուականներուն: Ժանտարմաներու տասնապետին օգնականը պատմեց, թէ ինչպէս այս վիճակին հասած էին:

Սամսատի մօտակայ վայրէ մը մեկնած օրերնին, իրենց որոչ թիւն էր 541, ունէին քաջաոտղջ վիճակ, ճոխ հազուստներ, դբամ եւ զարդեղէն: Այս ամէնքը ճանապարհին կողոպտուեցան տասնապետէն: Երբ աքսորեալները զրկուեցան իրենց նիւթական միջոցներէն, շատերը մեռան ծարաւէն, անօթութենէն, յոգնութենէ եւ տաքէ: Տակաւին խումբը արիութեամբ կը կրէր այս չարչարանքները եւ սուղերը, բայց երբ հասան Ռաքթա եւ անկէ պիտի մեկնէին, իրենց վիշտը խելագարութեան աստիճանի հասաւ:

— Ի՞նչ եղաւ որ Ռաքթա:

— Գայմազամին հրամանաւ կիները բաժնեցին երկու մասի, տարէջ կիներ եւ պառաւներ մէկ կողմ, մանուկներ եւ աղջիկներ միւս կողմ: Այս վերջինները մընացին Ռաքթա, իսկ ասոնք բերին հոս: Այդ բաժանու-



Հայ առամնարդի մը, ծպտուած եւ սպանդէն սպասուած

մը կատարեցինք զիշերը, մութին մէջ: Այդ ժամը չեմ
կրնար մոռնալ: Տասնապետը հրամաններ կը դռար եւ
մենք բռնութեամբ կը բաժնէինք զաւակը մօրմէն, քոյ-
րը քրոջմէն: Իրարու փաթթուած չէին ուզեր իրարմէ
բաժնուիլ: Բայց աւելի դէշը այն էր, որ ծծկանները
կը բաժնէին իրենց մայրերէն, որոնք նուազելով կ'իյ-
նային: Այն օրը յողնութենէն սպառեցանք: Սաստիկ
կերպով դիմադրեցին, չէին վախնար ոչ մեր սպառ-
նալիքներէն, ոչ մեր ազդած սարսափէն եւ ոչ ալ խա-
րազանի հարուածներէն: Մէկ քանին հոն մեռան ու
մնացին, իսկ ասոնց մէջ խենթերու թիւը հետզհետէ
կը շատնայ եւ շարաթը մէկ քանի հողի ինքզինքնին
զեար կը նետեն:

Երբ մութը պատեց, դուրս եկայ մակոյկէն: Տա-

ըօրինակ սոսկում մը զիս պատեց : Կ'երեւակայէի աւաղոտ ընդարձակ աշխարհը ուր խաւարը կը տիրէր ու այս սեւ լուծեան մէջ իմ ցորեկը տեսած աքսորեալներու խումբին պէս անհամար խումբեր, շէն՝ եւ բարզաւած հայ քաղաքներու եւ զիւղերու մնացորդներ : Հովը դադրած էր, Եփրատը անշշուկ կ'անցնէր եւ իր ճերմակ երեսը կը դծուէր համայնատարած խաւարին մէջ :

ՏԵՐ-ՁՕՐ — ՀԱԶԱՐԱՊԵՏԻՆ ՀԵՏ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՇՈՒԿԱՆ — ՄԵԶԻՐԵՑԻ ԱՂԶԻԿ ՄԸ

Նոյեմբեր 24ին հասանք Տէր-Ձօր : Այստեղ դետը կը բաժնուի երկու ճիւղի, մէջտեղը ունենալով մեծ կղզի մը, որ կամուրջով միացած է աջ ափը գտնուող քաղաքին հետ : Մօտ 45,000 արար բնակիչ ունի, կան 15 տուն Հայեր, ներքին գաւառներէ եկած : 10,000է աւելի տեղահանուած Հայեր կը գտնուին հիմա Տէր-Ձօր : Անոնք տեղաւորուած են հետեւեալ կերպով, կիլիկեցիները գրեթէ ամբողջապէս հողաչէն տուներու, խանութներու եւ քարվանսարայներու մէջ, զիւղացի Կիլիկեցիները եւ Հայաստանցիներուն մէկ մասը, քաղաքէն դուրս սեւ վրաններու ներքեւ, իսկ մնացեալը կը մնան բացօթեայ, գետափը, պարտէզներու մէջ : (Այս տեղեկութիւնները գրուած են Տէր-Ձօրի հսկայական սպանդէն ամիսներ առաջ : Լ.Մ.) :

Քաղաքը տակաւին չի մտած, մէկ ժամ հեռաւորութենէ կ'երեւան ծառաստաններ, պարտէզներ, ջրաղացներ : Պարտէզներու մէջ գետափին նստած էին խումբ մը կիներ, որոնք մեր եւրոպական հագուստները տեսնելով, պոռացին .

— Ղուրպան: Ըլլամ, դուն Հա՞յ ես. մեր քաղաքէն
ի՞նչ խապար:

Մակոյկը ճիշտ եղերքէն կը սահէր դանդաղու-
թեամբ: Երբ աւելի մօտեցանք, հարցուցի թուրքերէն
լեզուով.

— Դուք ո՞ր տեղացի էք:

Կին մը ընկերներուն դառնալով ըսաւ.

— Զըսի՞, ասոնք Հայու չեն նմանիր:

Այսու ամենայնիւ պատասխանեցին:

— Մենք խարբերչի ենք:

Մտանք քաղաք եւ անմիջապէս դիմեցինք տեղւոյն
հազարապետ դայմագամին, որ մեր կարեւոր գործերը
պիտի կարգադէր: Հարիւրապետ Օթօ Էօլման տեղե-
կութիւններ հարցուց տեղւոյն զաղթական Հայերու վի-
ճակի մասին: Հազարապետը պատասխանեց:

— Երբ շուկայ երթաք, պիտի տեսնէք Հայերու
լաւ վիճակը: Ներկայիս հոս կը դտնուին աւելի քան 10,
000 Հայեր եւ դեռ նորեր գալու վրայ են: Ժրաջան են,
հնարամիտ եւ աշխատասէր: Կը յուսամ, որ մօտ ժա-
մանակէն մեր քաղաքը Հայէպի եւ Դամասկոսի նման
գեղեցիկ ու բարդաւաճ քաղաք մը պիտի դառնայ:

Անցանք շուկայ, որ բաւական ընդարձակ էր: Ամէն
կողմ կ'երեւին տեսակ տեսակ հագուստներով Հայեր,
երախաններ, որոնք ամէնքն ալ գրադած էին առուտու-
րով: Ոմանք խանութներու մէջ զաւազան արհեստնե-
րով կը զբաղէին, ոմանք շրջուն վաճառողներ էին,
կային որ նոյնիսկ բացած էին մեծաքանակ առեւտուրի
տուններ: Հայ հացագործներ շինած էին գեղեցիկ կար-
կանդակներ, որոնք մեծ ախորժակով կը վնէին տեղա-
ցիները: Կառուցած էին տասնեակ մը փուռեր, ունէին
դերձակի, կօշկակարի, սափրիչի, թիթեղագործի, կը-
լայեկողներու, ջուլհակագործի խանութներ: Հայ մա-

Նուկներ կը ծախէին այլ եւ այլ եւրոպական մանր ապրանքներ, սիկարէթի թուղթ, լուցկի, թել եւայլն, եւ տեսակ տեւակ քաղցրեղէններ: Ձկնորսները ձուկ կը ծախէին եւ ոմանք հեռու տեղերէ ածուխ բերած՝ իրենց ապրանքը կը դնէին վաճառքի:

Հանդիպեցայ Այնթապցի քահանային եւ վարժապետի մը, որոնք զանազան դործերով կը զբաղէին: Հանդիպեցայ շատ մը ծանօթներու, որոնց հետ դադանի խօսակցեցանք: Դժգոհ էին շատ մը տեսակէտներով, բայց միանգամայն համակերպած էին իրենց վիճակին, քանի որ դոնէ այդտեղ զերծ էին կոտորածէ եւ այլ սարսափներէ: Ասոնք Կիլիկեցիներ էին եւ մեծամասնութեամբ Այնթապէն:

Գետափին Այնթապցի կիներ տասնեակներով նըստած լուացք կ'ընէին: Գերմանացի սպան առաջարկեց անոնցմէ մէկուն մեր ձերմակեղէնը լուալ: Թէեւ շատ քիչ բան էր մեր տուած աշխատանքը եւ այնքան ալ մաքուր լուացուած չէր, այսուամենայնիւ գերմանացին վճարեց 40 դրուշ: Կինը դառնալով իր ընկերներուն ըսաւ. «Այս ալ մօր զաւակ է»:

Կանչեցինք նաեւ հայ սափրիչ մը, զոր նոյնպէս առատօրէն վարձատրեց: Սպան մեծ յուզմունքի մէջ կը գտնուէր ընդհանրապէս եւ այս մասնակի բարիքները, որ կ'ընէր, կարծես զինքը կը թեթեւցնէին: Այլեւս ինձ չէր խօսեր կրած տպաւորութիւններուն մասին, բայց իր դէմքը ջղագրգռութենէ կծկուած էր եւ յաճախ կը հառաչէր:

Գացինք բաղնիք: Առանձնութենէս օգտուելով, կ'երգէի հայերէն պանդուխտի երգ մը: Բաղնիքի ծառաներէն մէկը սարսափած դէպի ինձ եկաւ եւ ըսաւ.

— Լո՛ւէ՛, քու երգերովդ մեզ կրակը պիտի ձգես:

Անիկա կարծած էր, որ ես իրենց քաղաքացի Հայ

մըն եմ : Երբ տեսաւ որ օտար եմ եւ մանաւանդ գերման սպային հետ , քովս նստաւ եւ ինքն ալ սկսաւ իր ցաւերը լալ մենիներով :

Մեր մակոյկին մօտ կար նեղ անցք մը եւ մի քանի հողաչէն չէնքեր , որոնց մէջ կը բնակէին հայ գաղթականներ : Անցած միջոցիս ինձ հարցուցին .

— Աղա՛ , դուն ո՞րտեղացի ես :

Հարցաքննելով հասկցայ , որ Արաբկիրի շրջանէն եմ : Երբ ըսի թէ հայ եմ , զիս ներս կանչեցին , շուրջս հաւաքուեցան 40-50 կիներ , որոնք ամէնքն ալ դուրպայ կը հրևէին , դռները դոցեցին եւ սկսան խօսիլ :

Տեղեկութիւն հարցուցի իմ մօրաքրոջս աղջկան մասին , ոչինչ չէին զիտեր , խկ իրենք ամէնքն ալ անձկութեամբ կը հարցնէին .

— Մեր մարդոցմէ լուր ունի՞ս , ի՞նչ եղան , ո՞ր մնացին : Չանոնք տարին , ըսելով թէ ճամբաներու վերայ սլտի աշխատին , մեզ ալ բերին այստեղ : Ի՞նչ հըրաչք , դուն ի՞նչպէս ազատուեր ես , տղա՛յ : Ուրեմն մեր տղաքն ալ կրնան ազատուիլ քեզի պէս :

Ըսի իրենց մէկ քանի մխիթարիչ խօսքեր , ամենուն աչքերէն արցունք կը կաթէր : Անդին անկիւնը նստած էր միջհասակ , սեւ մազերով , սեւ յօնքերով , կարմիր այտերով երիտասարդ կին մը : Նախշուն հագուստներ հագած էր եւ կուլար , անդադար կուլար : Աչքերը ուռած էին եւ անիկա նոյնիսկ գլուխը չէր բարձրացներ մեզ դիտելու համար : Բայց երբ Մէզիրէի անունը տուի , ինձ դարձաւ եւ սկսաւ խոր , խոր նայիլ : Ասիկա առեւանդուած հայ աղջիկ մըն էր , իր գեղեցիկ հագուստները տուեր էր թուրք զինուորական մը , որուն ճանկերէն տակաւին չէր ազատուած : Երբ սրտմեցի Մէզիրէի մասին , այն ատեն հաւատաց , որ ես հայ եմ եւ երկու խօսք ըսաւ միայն :

— Եղբայր, ինձ չե՞ս ազատեր ասկէ :

Շուրջս կեցող կիներն ալ կ'ըսէին .

— Աստուծոյ խաթերը համար, եթէ կրնաս, այս աղջիկը ազատէ այդ շան ձեռքէն :

Մեր դեղերը սպառած էին եւ սպայիս հետ դիմեցինք տեղւոյն կառավարական կեդրոնական դեղատունը : Փողոցը սալալատակուած էր եւ ճանապարհի երկու եղերքը, դեղատունէն մինչեւ 15 վայրկեան հեռաւորութիւն, թափուած էին կիներ, մանուկներ, աղջիկներ : Մէկուն փորը ուռած էր, մէկուն աչքերը կապուած էին, ուրիշ մը վերքերով ծածկուած էր : Այս բոլոր բազմութիւնը դեղնած, ոսկրացած, հազար ախտով, ցաւով բռնուած, ինկած էին գետնի վրայ եւ հերթի կը սպասէին դեղատուն մտնալու համար : Իսկ դեղատան դրան առջեւ խռնուած էին հարիւրներով : Մէկը ա՛խ, մէկը վա՛խ կ'ըսէր, մէկը ողբաւին կը կրկնէր «Ալլահ խաթըր իչուն» (Աստուծոյ սիրոյն համար) եւ այսպէս աղերսանքով, պաղատանքով դեղ կը պահանջէին, իսկ դեղատան դռները ամրափակ էին եւ առաջքը կայնած էր զինուոր մը :

Երբ գերմանացի զինուորականը երեւցաւ, կեցող թուրք զինուորը շուարեցաւ եւ սկսաւ իր ձեռքի ճիւղտովը խռնուած բազմութիւնը երկուքի բաժանել, որպէսզի ճամբայ բանայ : Կիսամեռ, ցաւոտ, վիրաւոր, ժողովուրդը ճիւղտի հարուածներուն ներքեւ ինկաւ երկու կողմերուն վրայ : Անհամար ոխերիմ աչքեր յառած էին սպայիս վրայ եւ կարծես իրենց նայուածքով ատելութիւն եւ անէծք կը թափէին : Մենք շտապով անցանք այդ ճամբէն, եւ երբ դեղատուն մտանք, տեսանք որ ամենուն շրթները կը շարժէին բան մը պոռալու համար, բայց չէին կրնար խօսիլ : Գերմանացի սպան խո-

րապէս յուզուած էր, յանդիմանեց զինուորը իր վարմունքին համար եւ զղջաց ինքը անձամբ դալուն: Հարցուցինք դեղագործին.

— Սիւլֆաթ տը քինին ունի՞ս:

Անիկա կ'ըսէր շուարած.

— Ի՞նչ կ'ըսէ կոր:

— Սուլֆաթօ, սուլֆաթօ կ'ըսեմ:

— Հա՛, հատեր է, ներողութիւն:

Ինչ որ ուլեցինք սպառած էր կամ շատ վատ վիճակի մէջ եւ ձեռնունայն վերադարձանք:

Ճամբուն վրայ հանդիպեցանք տեղացի Հայու մը, որ կ'ըսէր. — օրական 40-50 հոգի, մեծամասնութեամբ կին, կը մեռնին դեղի պակասութեան պատճառաւ: Ամենայետին ժանտարմը, զինուորը կամ տեղացի սրիկայ մը իր տունը ունի հայ աղջիկ մը, կամ սպասուհի հայ կին մը:

ԴԵՊԻ ԱՆԷ

Մեր մակուկավարները փոխուեցան եւ առինք Տէր Զօրցի Արաբներ: Ասոնք միշտ կը պատմէին իրենց սրիկայութիւնները եւ հայ աղջիկներու պատճառած չարչարանքները: Երբ հասանք քարաժայտի մը մօտ, երիտասարդ մակուկավարներէն մէկը տեսաւ հայ կին մը, որ յղի էր: Յատկեց դուրս մակոյկէն, ուղեց հետապնդել խեղճ կինը, բայց հաւասարակշռութիւնը կորսընցնելով, ինկաւ գետը: Հոսանքին սաստկութեան հանդիպելով, հաղիւ կարողացաւ կիսամեռ վիճակի մէջ ազատիլ: Երբ սթափեցաւ, այս պատիժը երկնային համադրելով, երգում ըրաւ իր մօտ պահած հայ աղջիկ-

ները արձակել եւ միշտ Հայերու պաշտպան հանդիսանալ :

Դեկտեմբերի 3ին հասանք Անէ : Նամակ մը ունէի յանձնելիք տեղահանուած Հայու մը, որ կը բնակէր Անէ : Հակառակ որ մենք պէտք չունէինք կենալու այդ տեղ, նամակին պատճառաւ գերմանացի սպան հրամայեց որ մեր մակոյկները կենան : Սնմիջապէս աի ելայ եւ տեսայ, որ քանի մը հայ գիւղացիներ տեղացիներու հետ հաւկիթի, ձաւարի եւայլն առեւտուր կ'ընէին : Քիչ մը անդին կարգ մը Հայեր մորթ կը լուային ու կը ներկէին : Դիմաւորեցի բոլորովին ալեւոր ծերունի մը եւ նամակին հասցէն կարգալով հարցուցի, թէ ո՞ւր կ'ըրնայի գտնել այդ մարդը :

— Ես եմ, ըսաւ, ետըր նամակը, քրոջմէ՞ս է արդեօք, եւ սաստիկ յուզումէն նուազած ինկաւ :

Սպայիս հետ զացինք շուկայ գնումներ ընելու : Անէ պզտիկ աւան մըն է պզտիկ շուկայով, ուր քանի մը խանութներ կային : Այստեղ ալ կ'երեւային երկու փոռներ, որոնք Հայերը շիներ էին, եւ մէկ քանի առեւտուրի եւ արհեստի խանութներ : Հոս ալ մանուկները կ'աշխատէին, ծախելով այլեւայլ ապրանք : Երբ ուզեցինք մածուն գնել, ինչ որ չիկար շուկային մէջ, հայ կիները բերին մեզի ներկայացուցին տուփերով մածուն :

ԴԵՊԻ ՀԱՏԻՍԷ

Դեկտեմբերի 4ին մեկնեցանք Անէէն, պատուիրելով մակուկավարներուն, որ առատ հաց գնեն իբր պաշար, որովհետեւ 3 օր անընդհատ պիտի ճամբորդէինք Եփրատի վրայ, անցնելով աւազի դաշտերու մէջէն :

Անապատը այստեղ կը դառնայ բոլորովին անջրդի եւ ամուլ: Քամին, որ նոյն իսկ գետին ջուրը կը փոթորկէ, առաջ կը բերէ աւազի սաստիկ փոթորիկներ որոնք օդը անշնչելի կը դարձնեն:

Ճանապարհին մեր հացը պակսեցաւ եւ կեցանք գիւղակի մը առջեւ, որ միայն 3 տուն ունէր եւ քարվանսարայ մը, որը նոր շինած էր կառավարութիւնը ճանապարհի պաշտպանութեան համար:

Դիմեցինք այնտեղ հաց գնելու, բայց միայն ալիւր կրցանք գտնել: Երբ տնակներէն մէկը մտնել ուզեցի հացը թխել տալու համար, տարեց ժանտարմա մը ըշտապով արգելեց տան մուտքը եւ թոյլ չի տուաւ որ ներս մտնեմ: Գացինք Արաբներու քով, որոնք հաճոյքով յանձն առին մեր հացը պատրաստել տալ:

Մեր պաշտպան ժանտարմաներն ալ եկան միացան մեզի: Ասոնք ալ ալիւր գնած եւ յանձնած էին տեղւոյն այն ծերունի ժանտարմային, որ ինձ փակեց իր տան դուռը:

Ժամանակը լրանալէ ետքը մեր ժանտարմաներէն մէկը, փոքրիկ արաբուհի մը ուղարկեց:

— Գնա՛ տես, հացը պատրա՞ստ է, թէ չէ:

Փոքրիկը վերադառնալով ըսաւ:

— Մարիամը կ'ըսէ, որ քիչ մը եւս թող սպասեն: Զարմացած հարցուցի:

— Այստեղ քրիստոնեանե՞ր կան:

Գացի ուղղակի տեղւոյն ժանտարմային տունը եւ հակառակ մերիններուն արգելքին մտայ սենեակ, ուր ճակատը նստած էր ծերուկը եւ ճիշդ իր քովը, մօտ 20 տարեկան հայ աղջիկ մը, որ տակաւին իր տարազը կը կրէր, որով յայտնի էր, թէ Կիլիկեցի է: Իսկ թոնիրին մօտ կեցած էր ուրիշ հայ աղջիկ մը 19 տարեկան նման տարագով: Երկուքն ալ տխուր էին, մտահոգ եւ

արեւակէզ :

Հարցուցի ծերունի ժանտարմային , որ ոտքի ելած
եւ բարեւի կեցած էր .

— Ի՞նչ են ասոնք :

Չէր կրնար պատասխանել : Աղջիկները շուարած ,
վախնալով կը դիտէին մեզ եւ կարծես թէ օդնութիւն
կ'աղերսէին : Իմ գերման զինուորականիս անունով խօ-
սեցայ իրեն եւ ըսի , որ նախ քան մեր Պաղտատ հաս-
նիլը , այդ աղջիկները իր ծնողաց մօտ ուղարկէ , որոնք
երեք օր առաջ անցած էին :

Վերադառնալով տեղացի Արաբներուն մօտ , իմա-
ցայ որ ծերունի ժանտարման այդ երկու աղջիկները
կնութեան առած էր : Շուտով մեր մակոյկները ճամ-
բայ ելան : Գետին ամենէն յորձանուտ եւ վտանգաւոր
կէտն էր ատիկա , երկու կողմերը կը տարածուէին
ընդարձակ աւազի դաշտերը , փոթորիկին խաղալիք :
Աւազի փոթորիկը այնքան սաստիկ կ'ըլլայ , որ տե-
ղացի Արաբները իսկ կը կորսուին երբեմն բարձրացող
աւազին մէջ : Անջրդի , անբոյս սեւախառն աւազի ծովը
արեկոծուած էր :

Գեկտեմբեր 6ին հասանք Հատիսէ : Ասիկա փոքրիկ
գիւղաքաղաք մըն էր գեղեցիկ ովասիսի մէջ , որուն
տուները ամփիթատրոնի նման կը դասաւորուէին բար-
ձրութեան մը կողին վրայ : Գետին երկու ափերը առատ
արմաւենիներ կը բարձրանային : Այս գիւղաքաղաքին
մէջ կային 700ի չափ Հայեր , որոնք կը զբաղէին այլ
եւ այլ գործերով , թէեւ ամէնքն ալ կը գանդատէին
թէ գործ քիչ կայ :

Գացեր էի մածուն գնելու , երբ հանդիպեցայ հայ
կնոջ մը , որ հողին վրայ նստած գուլպայ կը հիւսէր
եւ կ'արտասուէր : Աչքերը կուրացած էին գրեթէ ար-
ցունքէն , բայց կը շարունակէր հիւսել գուլպան , որ

աւարտելու մօտ էր :

— Կը ծախե՞ս, մայրիկ, հարցուցի :

Անիկա սրտադին հառաչեց «Ա՛խ, ա՛խ...» ու չի կրցաւ սրտասխանել :

Արաբ դրացին ինձ բացատրեց կնոջը վիշտը : Տեղ-
ւոյն ժանտարմը տարած էր իր աղջիկը եւ պահանջեր
էր զոյգ մը դուրպայ, որպէսզի վերադարձնէ զայն :
Ժանտարման ըսեր էր .

— Քանի օր ուշանաս, այնքան օր աղջիկդ ինձ հետ
կ'անցընէ : Կինը կարկամած մատներով, սիրտը ճըն-
շուած վիշտով կը շտապէր այդ դուրպաները աւար-
տելու :

ՀԻԹ — ԱՅՆԹԱՊԻ ՃԵՄԱՐԱՆԷՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ
ՇՈՒԿԱՆ — ՊԱՂՏԱՏԷՆ ՀԱՅ ԱՂԶԻԿ ԿՈՒԶԵՆ

Դեկտեմբեր Տին հասանք Հիթ, որ սղտիկ քաղաք
մըն է : Գետի ափին կը տեսնուէին արմաւենիներու
անտառներ, որոնց մէջ կը կորսուէին հողաչէն տուներ :
Ամէն ինչ առատ էր այստեղ, մանաւանդ արմաւը : Այս-
տեղ զետափին հանդիպեցայ երկու հայ երիտասարդ-
ներու, որոնք Այնթապի ճեմարանին աշակերտներէն
էին : Դիմեցին զերմանացի սպայիս ոեւէ գործ խընդ-
րելու : Զիրենք հարցափորձեցի, ըսին թէ քաղաքին
մէջ իրենց յարմար ոեւէ գործ չիկայ : Կ'ըսէին . «Երանի
թէ հացագործութիւն սորվէինք, քան թէ ուսում : Ահա
այսպէս ստիպուած ջուրին եղերքը կ'ուզանք այն յոյ-
սով, որ բեռնակրութիւն կամ ուրիշ բան մը գտնենք
ընելու» : Վերջին ծայր յուսահատ վիճակի մէջ էին :

Հայերը ոեւէ ձեւով տեղաւորուած էին եւ կը դբա-

ղէին զանազան դործերով: Կային գլխաւորապէս քէ-
սպապճիներ եւ մանրավաճառներ: Իրենցմէ մէկունն հար-
ցուցի. — Ի՞նչպէս է ձեր զրութիւնը:

— Ինչպէ՞ս... դժոխքէն անդին գիւղ չիկայ...

Ճանապարհին հանդիպեցայ Հայերու, որոնք զբա-
ղած էին տուն շինելով: Աւաղի եւ հողի խառնուրդով
աղիւս կը շինէին եւ կը կառուցանէին իրենց տնակները:
Իրենց մէջ կային վարպետ որմնադիրներ, որոնք իրենց
ձեռքին տակ եղած նիւթերով նոր ծեփեր պատրաստե-
ր էին եւ զարմացում կը պատճառէին տեղացիներուն:

Անցնելով այդ տեղէն, հասայ պզտիկ հրապարակ
մը, ուր բաւական թիւով հայ կիներ, շուրջանակի
նստած, գուլպայ կը դործէին կամ կը պարապէին ա-
սեղնագործութեամբ: Այս կիները նոյնպէս այնթապցի
էին: Գետեզրի մակուկավարները մեծ մասով Հայեր էին
որոնք մարդ կամ բեռ կը փոխադրէին մէկ ամէն միւսը:
Երբ խօսեցայ իրենց հետ, ըսին.

— Կ'ապրինք կոր եղբայր, բայց այս ապրիլ չէ,
մահ է:

Գացի հեռագրատուն, որպէսզի իմացնեմ, որ մեզ
համար կառք պատրաստեն Ֆէլլուճէի մէջ: Պաշտօնեան
որ նոր հեռագիր մը ստացեր էր, «դարձեալ նոյն բանը»
ըսելով, ձեռքը անհամբերութեամբ սեղանին զարկաւ:
Հեռագիրը վերցուցի կարգացի. «Ձեր զրկածներէն գոհ
ենք, դարձեալ հայ աղջիկ մը կամ կին մը զրկեցէք»:

Խնդրողները Պաղտատի կառավարական թուրք պաշ-
տօնեաներն էին: Այստեղ դարունը սկսած էր արդէն,
գառնուկները ծնած էին, խոտը բարձրացած էր կէս
կանգուն եւ բանջարեղէնները հասած էին: Տարւոյն լա-
ւազոյն եղանակն էր: Ամառը 48-50 աստիճան տաք է
շուրջի մէջ:

ՌԱՄԱՏԻ, — 300 ԶԵՅԹՈՒՆՅԻ ԱՅՐԻ ՄԸ ՄԵՁ
ԱՐԱԲ ՀԱՅԱԳՈՐԾԻ ՄԸ ՎԵՐԱՔԵՐՄՈՒՆՔԸ
ՖԵԼԼՈՒՃԷ, — ՄԵԾԱՀԱՐՈՒՍՏ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԻ
ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ռամատի հասանք Գեկտեմբեր 9ին: Գեղեցիկ եւ բարեբեր ովասիս մըն էր: Գետափէն կ'երեւէին արմաւի եւ նարնջի ծառեր: Դաշտերը մշակուած էին եւ դաւլարին կը տարածուէր մինչեւ հեռուները: Շուկան կը գտնուէր քաղաքին մէջտեղ, ուր եւ կար քարվանսարայ մը: Այստեղ հացադործները եւ բանջարեղէն ծախողները ամբողջապէս Հայեր էին, կային 300 - 400 կիլիկեցի Հայեր: Տեղացի Արաբ մը կը պատմէր, որ Ռամատիի խորքերը այրի մը մէջ կան 300ի չափ Զէյթունացիներ, որոնք Ռամատիէն անցեր էին: Ասոնց վիճակը անորոշ էր: «Հայերու կտրիճներն են ասոնք» կ'ըսէր Արաբը:

Հաց գնելու համար գացի Աճմէտ Խըպպըզի տունը, ուր հանդիպեցայ քանի մը այնթապցի Հայեր, որոնք նոյնպէս հաց գնելու եկած էին: Հայերը հարցուփորձեցի: Կը զանգատէին անգործութենէ եւ վայրկեան առ վայրկեան կը սպասէին իրենց հայրենիք վերադառնալուն, հակառակ որ կառավարութիւնը յայտարարած էր իրենց, որ այլեւս իրենց երկիրը չպիտի դառնան եւ թէ Միջագետքի մէջ հող պիտի տրուի իրենց: Ասիկա իրենց ամենէն մեծ ցաւն էր:

— Ինչո՞ւ, ըսի, միթէ Արաբները լաւ չե՞ն, չէ՞ք կրնար ապրիլ իրենց հետ, ինչո՞ւ կ'ուղէք անպատճառ ձեր հայրենիքը վերադառնալ:

— Այո, կ'ըսէին, Արաբները լաւ են, բայց այս

կեանքը տանելի է առժամանակեայ, ոչ տեւական կերպով: Այս երկիրը իբր հայրենիք ընդունել չէ կարելի: Կրակը ինկած տեղը կ'այրէ: Դուռն հայրենիք չունի՞ս: Ու կը հառաչէին սրտագին կերպով «Ա՛ր, ա՛ր...»:

Երբ Հայերը մեկնեցան, հարցուցի Արաբին.

— Ովքե՞ր են ասոնք:

— Եղբայր, պատասխանեց, չես գիտեր, ի՞նչ լաւ մարդիկ են: Ասոնք էրմէնիներ են, չեմ գիտեր ինչո՞ւ կառավարութիւնը զիրենք աքսորեր է այս կողմերը: Կ'ըսեն թէ ապստամբեր են, գէշ մարդիկ են, բայց մենք այդպէս բան չենք տեսներ: Ընդհակառակը այնքան լաւ ու պարկեշտ մարդիկ են, որ ես այսքան ատեն է իրենց ապառիկ հաց կուտամ, պարտք ունին, բայց դարձեալ կուտամ, վստահելի մարդիկ են, ապահով եմ՝ որ երբ եւ իցէ իրենց պարտքը կը վճարեն:

Դիտեցի որ գերման սպան զբաղած էր գաղտնապէս թշուառ խումբի մը լուսանկարը առնելով, հակառակ որ խստիւ արգելուած էր մեզի ոեւէ պատկեր վերցնել: Մօտը գացի եւ հարցուցի թէ ի՞նչ պիտի ընէ:

— Պատերազմէն ետքը պիտի յայտնեմ այս բոլոր վայրագութիւնները, ըսաւ:

Միասին կ'երթայինք դէպի մակոյկը երբ ճանապարհին տեսանք, որ ժանտարմաներ մատանիներ կը ծախէին: Ուզեց գնել կնոջը համար, բայց երբ իմացաւ որ Հայերու կողոպուտի արդիւնք է, ետ տուաւ ըսելով:

— Ձեմ կարող գնել, չեմ կարող նոյնիսկ տեսնալ:

Նոյն օրը մեկնեցանք Ռամատիէն եւ դեկտեմբեր 10ին հասանք Տէլլուճէ, ուր մեր գետային ճամբորդութիւնը վերջացաւ:

Տէլլուճէ կը դռնուի ձախ ափին, որ միացած է միւս ափին շարժական կամուրջով: Արմաւի կողեւով

հիւսուած եւ ձիւթով պատուած բոլորածեւ մակոյկնե-
րու շարքի մը վրայ հաստատուած է այս փայտեայ
կամուրջը, որը կը բանան կամ կը գոցեն, երբ ցանկան :

Ֆէլլուճէի մէջ կը գտնուէր Գոլյումճեան մեծա-
հարուստ ընտանիքը, որուն կը պատկանէր Ֆէլլուճէի
մեծ մասը: Այնտեղ կայ ալիւրի, կիրի գործարաններ
եւ ջրաբաշխ մեքենաներ, որոնք բոլորը նոյն ընտանիքի
սեփականութիւնն էին: Տեղս ունի ընդարձակ շուկայ,
կառավարչատուն, հեռագրատուն, պարտէզներ, խիտ
արմաւենիներ, կայ նաեւ շատ առատ ձուկ:

Գացի ընտանիքէն ունէ մէկը փնտռելու: Հրեայ մը
չարախնդութեամբ ըսաւ ինձ .

— Անոնք ամենքն ալ քչուեցան, անոնց մասին հիչ
մի հարցներ, տուններնին, տեղերնին, գործերնին տակն
ու վրայ եղած է, իրենց բոլոր ստացուածքներուն փո-
խանորդ մը դրած են:

— Ո՞ւր ուղարկեցին, հարցուցի:

— Մուսուլ, պատասխանեց, կարծեմ ճամբան ըս-
պաննած են զիրենք:

Յետոյ առիթ ունեցայ իմանալու, թէ Հրեային կար-
ծիքը ճիշդ չէր եւ թէ անոնք Մուսուլէն հասեր էին Մի-
ջագետք: Ֆէլլուճէի մէջ մեր բերած ռազմամթերքը
յանձնեցինք զինուորական կառավարութեան եւ կառք
վարձելով դեկտեմբեր 11ին մեկնեցանք:

ՊԱՂՏԱՏ. 49 ՀԱՅԵՐ ԿՄՔՍՈՐՈՒԻՒՆ — ԿԱԽԱՂԱՆ ՄԸ
ՀԱՅԵՐՈՒ ԴՐՈՒԹԻՒՆԸ — ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՊԱՏՈՒ-
ՍԻՆ ԱՐԳԵԼՔԸ — ԽԱԼԻԼ ՓԱՇԱՅԻՆ ԽՕՍՔԵՐԸ

Պաղտատի մէջ քանի մը օր մնացինք: Այնտեղ լը-
սեցի որ 49 հոգի, տեղացի եւ դրսեցի երեւելի Հայեր,

աքսորուած են դէպի Մուսուլ: Հանգիստ հասեր էին տեղը եւ նոր հեռագրեր ու իմացուցեր էին, որ կը մեկնին դէպի Տէր-Ձօր: Դեկտեմբեր շին կախաղան հաներ էին Սեբաստացի Թաւկորեան անունով երիտասարդ մը, որ իբր թէ բռնուած էր Արաբներու մէջ, ի նպաստ անգլիացիներու փրօփականտ ընելու յանցանքով: Պաղտատի մէջ բանտարկուած կը մնային մէկ քանի Հայեր: Մնացեալ Հայերը, որ 200 տուն կը կազմեն, հանգիստ են առ այժմ: Հանդիպեցայ Խարբերդցի երիտասարդի մը, որ լսելով թէ ես անցած եմ Միջագետքի աքսորավայրէն, տեղեկութիւն կ'ուզէր իր մօրը մասին, ուրկէ կառապանի մը միջոցաւ ստացած էր հետեւեալ նամակը.

«Սիրելի որդիս, հայրդ Խարբերդի մէջ աչքիս առջեւը մորթեցին: Երկու եղբայրներուդ եւ քրոջդ հետ հոս ղրկեցին մեզ, Արաբներու մէջ: Հիմակ որ այս նամակը կը գրեմ, եղբօրդ մէկը մեռաւ, իսկ ես եւ միւսները անօթի կը մեռնինք: Եթէ մեզի օգնութիւն չի ղրկես շուտով, երկար չենք ապրիր»:

Տղան շուարած էր եւ չափազանց յուզուած, ինչպէս առիւծ մը վանդակի մը մէջ, անկարողութենէն խելակորոյս էր, որովհետեւ չէր գիտեր, ինչպէս օգնութիւն հասցնէր իր հարազատներուն:

Ամէն օր զանազան Հայեր, այսինչ կամ այնինչ դաւառացի, կուգային ինձմէ տեղեկութիւն խնդրելու իրենց դաւառի, ազգականներուն եւ առհասարակ Հայերու մասին: Մինչեւ այդ օրը ոչ ոք տեղեկութիւն ունեցած էր անցուղարձերու մասին: Երբ կը պատմէի իմ տեսածներս, սարսափով ու զարհուրանքով կը պաշարուէին եւ իրենցմէ մէկուն ուղղելով կ'ըսէին.

— Յակոբ, դուն մարգարէ՞ էիր:

Յակոբ շարունակ կ'ըսէ եղեր.

— Տիգրիսի ջուրին համը փոխուած է, կարծես թէ



Տէր-Զօր

արեան համ կուգայ :

Գերմանացի սպայիս հետ դացինք գերմանական հիւպատոսին այցելութեան, որը երբ զիս տեսաւ, հարցուց Օթօ Խօլմանին .

— Թարգմանդ հա՞յ է, եթէ հայ է, խստիւ կ'արդիլեմ քեզ հետդ տանիլ, ես ուրիշ թարգման կուտամ քեզի :

Հակառակ որ ես պարսկերէն չէի գիտեր, սպաս համարձակեցաւ հիւպատոսին ըսել .

— Այս պարոնը Լիբանանցի կաթողիկէ Արար է, շատ լաւ պարսկերէն գիտէ, իրեն վարժուած եմ եւ իր հաւատարմութիւնը փորձուած է : Կը խնդրեմ, որ պաշտօնապէս ընդունիք զինքը եւ իրեն անցազիր տաք Պարսկաստան անցնելու :

Հիւպատոսը, որ կասկածով կը նայէր ինձ, մեր-

ժեց սպայիս խնդիրքը: Երբ մեր սենեակը վերադարձանք, Օթօ Էօլմանը ցաւ յայտնեց իր անյաջողութեանը համար:

— Ես քեզ կը տանիմ, մինչեւ սահմանագլուխ, եւ ամէն միջոցաւ կ'աշխատիմ քեզ օգտակար ըլլալու, բայց հակառակ սլարագային պատասխանատու չեմ, զիս մի մեղադրեր: Ես կը վստահիմ քեզ եւ գիտեմ, որ ինչ ինչ ալ պատահի, դուն ինձ չես վնասեր:

Ընդունեցի առաջարկը:

— Զիս տար, ըսի, մինչեւ սահմանագլուխ, ես կ'անցնիմ կերպով մը: Զիս խրախուսեց եւ յոյս յայտնեց, որ կը յաջողինք: Իմ նկատմամբ սպան եղած էր միշտ վեհանձն, առատաձեռն եւ ազնիւ:

Պաղտատի մէջ արժանահաւատ անձէ մը լսեցի, որ Խալիլ փաշան խօսեր էր Իթթիհատի քլիւպին մէջ եւ ըսեր էր.

«Հայաստանի սիրտը խլեցի հանեցի, կարգը եկաւ Արաբներուն: Ով որ Օսմանեան մահիկին տակ գլուխ չի ծռեր, Հայաստանի վիճակին կ'ենթարկուի»:

Լսեցի նաեւ որ Թուրքերը Անգլիացիներէն դրաւած էին երկու աէրօբլան վնասուած վիճակի մէջ: Ուզեր էին նորոգել, բայց Թուրք չէին գտեր եւ ստիպուեր էին դիմել Հայերու, հայհոյելով իրենց մարդոց անձարակութեան դէմ: Այդ աէրօբլանները գործածութեան մէջ էին:

×

Հայկ Թորոյեանի յուշերուն մնացեալ մասը որ կը պատկանի իր եւ Օթօ Էօլմանի ճամբորդութեանը Պաղտատէն Քիրմանշահ, համառօտագրուած է յետագայ տողերուն մէջ:

Գերմանացի սպան եւ իր հայ թարգմանը Պաղտատէն կը մեկնին ղեկտեմբեր 21ին: Կարեւոր քանակու-

Թեամբ զէնք եւ ռազմամթերք պիտի փոխադրեն Քիրմանշահ, ուր գերմանացի եւ Թուրք սպաներ Քուրտերը զինելու վրայ են, կասեցնելու համար ռուսական յառաջխաղացումը :

Թուրք-Պարսկական սահմանը անցնելէ առաջ, Արաբները Օթօ Էօլմանի զէնքերէն երկու սնտուկ կը գողնան : Գերմանացին որ արդէն ջղային տազնապի նըշաններ ցոյց կուտար, սաստիկ կը յուզուի : Թորոյեանը կ'երթայ արաբ ցեղապետին մօտ, եւ կը յաջողի գողցուած զէնքերը ետ առնել :

Քիրմանշահ հասնելէ առաջ, Օթօ Էօլման կը խելագարի : Թորոյեան նամակ մը կը փութացնէ Քիրմանշահի գերման հիւպատոսին, տեղեկացնելով սպային տագնապալի վիճակը : Մեծ դժուարութեամբ Օթօ Էօլմանը կը փոխադրեն Քիրմանշահի գերման զինուորական դարմանատունը : Հիւանդին վիճակը քիչ մը կը բարւոքի, Թորոյեանին կը դանդատի հսկող հիւանդապահուհիին կոպտութենէն, կը գովէ Թորոյեանին անձնագոհութիւնը, կը խօսի Թէպլիզի հայ բարեկամներուն աջնուութեան եւ Միջագետքի սարսափներուն մասին : Կրկին կ'իյնայ դառանցանքի մէջ : Հակառակ Թորոյեանին ձեռք առած զգուշական միջոցներուն, գիշեր մը, այս վերջինին բացակայութենէն օգտուելով ինքզինքը կը կախէ :

Ռուսական բանակը կը մօտենայ Քիրմանշահին : Գերմանացիներուն ստիպումով Թորոյեան Թարզմանի պաշտօն կը կատարէ վարձկան բանակին մէջ : Ամենքը կը հաւատան որ մահմետական է : Սպաննուած զինուոր մը Թաղելու համար մօլլա չի ճարուիր : Հայկ Թորոյեանը Ղուրան կը կարդայ եւ կը Թաղէ :

Գերմանօ-թուրք բանակը կը պարտուի եւ փախուստ

կուտայ Քիրմանշահէն: Հայկ թորոյեանը կը թագնուի
քրիստոնեայի մը տունը եւ կը յանձնուի Ռուսերուն:
Քիրմանշահէն կ'անցնի Թէհրան եւ յետոյ Կովկաս ուր,
իւր զարհուրելի վկայութիւնը կը գրէ թերթերու մէջ:

ՎԵՐՋ ՀԱՅԿ ԹՈՐՈՅԵԱՆԻ ՎԿԱՅՈՒԹԵԱՆ



Պատերազմի միջոցին, կովկասահայութիւնը իր կարելին ըրաւ օգնութեան հասնելու համար թրքական գուլումէն փողոսքաւ հարիւր հազարաւոր աղէտեալներուն: Բացուեցան որբանոցներ: Ուսուցիչներէ եւ գըրողներէ կազմուած յանձնախումբեր գրի առին որբերու յուշերը որոնք 1916ին լոյս տեսան թերթերու մէջ: Դժբախտաբար ցրուած կամ կորսուած են այդ թանկագին վաւերաթուղթերէն շատերը:

Այստեղ արտատպուած են մէկ քանիս: Առաջինը վկայութիւնն է Սողոմոն անուն մշեցի տղեկի մը որ «գրում է բանաստեղծութիւններ»:

Արդարեւ, մշեցի տղեկը յետագային պիտի դառնար մէկը՝ մեր լաւագոյն եւ տաղանդաւոր բանաստեղծներէն, ծանօթ՝ Սողոմոն Տարոնցի անունով:

ՄՇՈՅ ԴԱՇՏ

ՍՈՂՈՄՈՆ

Ծնուել է 1902 թուին, Մշոյ նահանգի Խարց գիւղում: Այժմ գտնուում Մոսկուայի Հայոց կոմիտէի Աշտարակի որբանոցում: Գրում է բանաստեղծութիւններ:

Ընտանիքի անդամները. Մխիթար՝ հայրը, Հաւսօ՝ մայրը, Ալբուղ՝ քոյրը, 29 տարեկան, Մկրտիչ՝ եղբայրը, 27 տարեկան, Հայկանուչ՝ քոյրը, 25 տարեկան, Ինքը Սողոմոնն եւ քոյրը Մարիամ, 11 տարեկան:

Երբ սկսեց ուսումնական կռիւը, Թուրքերն ու Քրդերը մեզ հետ լաւ էին վարւում: Մինչեւ 1915 թուի

ամառը մեր դիւղում թալանների եւ սպանութիւնների դէպքեր չեղան :

Մեծ եղաւ մեր ուրախութիւնը, երբ մենք լսեցինք, որ մեր ոռոսահայ եղբայրները խմբեր են կազմել, միացել ոռոս զօրքին, որպէսզի գան եւ մեզ ազատեն տաճկական դարաւոր ստրկութիւնից: Գիտէինք, որ այդ խմբերի դիւղին են անցել մեր հերոսները՝ Անդրանիկն ու Քեռին: Այդ մասին խանդավառութեամբ սլատմում էին մեր դիւղի կոմիտէի անդամները՝ Սերոբ փաշայի նախկին զինուորները:

Վանի ապստամբութեան մասին ոչինչ չգիտէինք, բայց շատ չքաչեց, մեր կոմիտէի անդամները այդ լուրն իմացան եւ մեզ ուրախացրին, որ Վանն ազատուել էր տաճկական բռնաւոր լծից եւ շուտով Անդրանիկն ու Ռուսները կը գան մեզ եւս ազատելու: Բայց ինչքան լաւ կը լինէր, եթէ Անդրանիկը լինէր մեր առաջին ազատարարը: Նա գիտէր մեր լեզուն, մեզ հետ կը խօսէր եւ կ'իմանար, որ մենք Հայեր ենք եւ նրա դալստին անհամբեր սպասողները: Իսկ եթէ առաջինը Ռուսները ոտք դնէին մեր հողի վրայ, մենք նրանց հետ ի՞նչ լեզուով պիտի խօսէինք: « Մենք կը դպեստաւորուինք, խաչ ու խաչվառ կը հանենք, միջամտեց մեր դիւղի քահանան, եւ եկեղեցական երգասացութեամբ ընդ առաջ կը գնանք: Այն ժամանակ նրանք կ'իմանան, որ մենք Հայեր ենք, այս դժբախտ երկրի առաջին քրիստոնէականը»: Բայց մինչ Ռուսները կը գային, Տաճիկը մեր երիտասարդները՛ն հաւաքում էր եւ զինուոր տանում:

Արդէն հինգերորդ թուղթն էինք ստացել, որով եղբօրս կանչում էին զինուորագրութեան: Հայրս մտահոյուութեան մէջ էր: Ինչպէ՞ս անէր, որ այս անգամ

էլ Մկրտիչ եղբայրս զինուոր չգնայ: Հօրս միակ յոյսը
Խնէր գիւղի քուրտ Մուսա բէգի վրայ էր, որի ահա-
դին կալուածներէ եւ տաւարներէ կառավարիչն էր 30
տարուց ի վեր: Նա գնաց Մուսա բէգի մօտ եւ ասաց.

— Աղա՛, դու տեսնում ես, որ մաղերս ճերմակել,
հասակս առեւ եմ, մի ոտս արդէն գերեզմանումն է:
Եթէ Մկրտիչն էլ զինուոր տանեն, ո՞վ պիտի կառավա-
րի իմ տունն ու տեղը, ո՞վ պիտի կառավարի խանութը:
Դու գիտես, որ ես խանութից հասկացողութիւն չու-
նեմ, իսկ Սողոմոնս դեռ փոքր երեխայ է:

— Որ այդպէս է, ասաց բէգը, խանութդ շինիր իմ
անունով: Երբ տղիդ զինուոր ուզեցին, կ'ասեմ, որ նա
իմ խանութի միակ կառավարիչն է, ձեռք միք տայ:

Հայրս ուրախացած աղայի այդ բարեացակամ վե-
րաբերմունքից, տուն եկաւ, եւ Մկրտիչը մի առ ժա-
մանակ ազատ ապրեց:

Բայց կառավարութիւնը նորից նրան մտաբերեց եւ
այս անգամ նրան կտրականապէս զինուորագրութեան
կանչեց:

— Միակ ելքն այն է, ասաց այս անգամ բէգը, որ
Մկրտիչը գայ եւ իմ խմբի ծախսարարը դառնայ: Նա
վաճառական մարդ է, ճարպիկ եւ խելացի, առեւտուր
կ'անի:

Էլ հնար չկար: Խանութը յանձնեցին ինձ, եւ եղ-
բայրս մտաւ Մուսա բէգի քրտական խումբը, որ բաղ-
կացած էր 1000 հոգուց: Նոյն թուից բաղկացած խմբեր
ունէին Մուսա բէգի միւս երկու եղբայրները՝ Նհօ բէգն
ու Ղասում բէգը: Եղբայրս իր վիճակից դժգոհ չէր,
նրան յաճախ ուղարկում էին էրզրում խմբի համար
հազուստներ եւ ուտելիքներ գնելու: Ո՛չ գէնք էին տա-
լիս, ոչ էլ դիրքերը ուղարկում:

— Քո հայրը հաւատացել եւ մեզ որդի է յանձնել, յանկարծ մի գնդակ կը կպչի քեզ, մեղք ես, այն ժամանակ ո՞վ պիտի կառավարի ձեր տունն ու խանութը, ասում էր Մուսա բէգը:

— Արդեօք չի կեղծում, կասկածում էր եղբայրս, արդեօք նա չի՞ վախենում, որ եթէ ինձ զէնք տայ, ես Ռուսներէ կողմը կ'անցնեմ:

Շուտով էրզրումի կողմերից Ռուսերը սկսեցին ճնշել եւ Մուսա բէգի խումբը կորուստներ տալով փախուստի դիմեց, խումբը ցրուեց եւ եղբայրս եկաւ տուն:

Մի ամսից յետոյ Մուսա բէգը նորից հաւաքեց իր խումբը, բայց եղբօրս, Մկրտչին, կարծես թէ մտադրութիւն չունէին իրենց հետ վերցնելու: Եղբայրս չպընդեց եւ մնաց տանը:

Մէկ ու կէս ամսից յետոյ Մուսա բէգի եւ նրա երկու եղբայրների խմբերը, թուով 3000 հոգի, նորից փախան եւ ցրուեցին, այս անգամ 250 մարդ կորցնելով:

էրզրումը վերցրել էին Ռուսերը:

Այդ մենք իմացանք, բայց Քրդերը չգիտէին եւ չէին էլ ուզում հաւատալ երկար ժամանակ:

Մուսա բէգի ճիգերը նորից խումբ կազմելու եւ երրորդ արշաւանքը գործելու՝ ապարդիւն անցան: Մինչդեռ կառավարութիւնը պահանջում էր, որ Քրդերը կամ կռիւ գնան, կամ զէնքերը վերադարձնեն: Իսկ Քրդերը ոչ հաւաքուում էին եւ ոչ էլ զէնքերը յանձնում:

— Ռուսը մեզ այսքան կոտորեց, միթէ՞ մի հրացանով էլ է մեզ չեն վարձատրի, ասում էին նրանք:

Այսպիսով ստեղծուեց կառավարութեան եւ Քրդերի մէջ մի լարուած դրութիւն: Շշուկներ պտտեցին, որ կառավարութիւնն ուժով պիտի առնի զէնքերը: Իսկ

Գրտերը պատասխանում էին .

— Զէնքի դէմ զէնքով կ'ելնենք :

Եւ ինչպէ՞ս կարող էին զէնքերը վերադարձնել, երբ փախուստի ժամանակ հայ գիւղերը թալանելիս նրանց այնքան պէտք ունէին :

Յանկարծ լուր եկաւ որ Ռուսները մօտենում էին Մշոյ դաշտին :

Բայց այդ ուրախ լուրերի հետ հասան եւ տխուր լուրեր : Հայերին կոտորում էին . . .

Ահա այդ բոթաբերների յետեւից ծայր տուին եւ փախստականները :

Համբարձման օրերն էին : Մի օրում մեր գիւղի ե-
կեղեցու բակը թափուեց 350 մարդ, ըստ մեծի մասին ծեր, կին, երեխայ : Երիտասարդներին կոտորել էին :

Նրանք բոլորը մերկ էին, սոված :

Գիւղի Ռէսը գզիր գցեց գիւղը եւ կանչեց, թէ .
եկէ՛ք, սրանք մեր անբաղդ հաւատակիցներն են, մարդ
դէռւիս մէկը վերցրէք եւ պահէք, մինչեւ տեսնենք ,
Աստուած մեզ ինչ օրի է արժանացնում :

Գիւղացիները արձապանք տուին Ռէսի կոչին : Խըղ-
ճահարուեցին եւ զաղթականներին բաժանեցին իրար
մէջ : Երեկոյեան դէմ եկեղեցու բակում այլեւս անտէր
մարդ չմնաց :

Այդ օրերը Մուսա բէգը նորից կոչ արեց իր Գըր-
դերին, որ զէքերով գան, խումբ կազմեն եւ Ռուսի դէմ
դուրս գան : Զարմացանք, երբ այս անգամ Քրդերը
անմիջապէս արձագանք տուին իրենց բէգի կոչին : Վար-
դավառի երկուշաբթի օրը մէկ էլ տեսանք, որ մեր
գիւղը շրջապատուած էր Քրդերով : Մուսա բէգի նո-
րակազմ խումբն էր : Գիւղը մտան չորս ծանօթ ձիա-
ւոր, որոնք արչաւելով փողոցից փողոց գոչում էին .

— Հայեր, մտէք ձեր տները :

Ես կանգնած էի մեր խանութի առաջ ; երբ նրանք մեր փողոցով էլ անցան նոյն խօսքերը կրկնելով :

— Լաւ հոտ չի գալիս, ես գնամ ներքեւ, գուցէ Մուսա բէգին կամ նրա մարդկանց տեսնեմ, ասաց հայրս ու գնաց դէպի գիւղի ծայրը :

Իսկ մենք, եղբորս Մկրտչի հետ, վճռեցինք խանութը դատարկել եւ ապրանքը թաքցնել : Մեր տանը հեշտ կը գտնուէր : Տարանք քեռուս տունը, որ մեր տան մօտ էր : Լսուեցին հրացանի ճարճատիւններ :

Ապրանքները տեղաւորեցինք թաքստոցում, դէպի որը միայն մի նեղ անցք էր տանում : Եղբայրս, քեռուս չորս տղաները եւ կոմիտէի անդամ Վարդանը մըտան այդտեղ եւ պահուեցին : Մի փեթակ բերինք դրինք անցքի առաջ : Հրացանների ձայները մօտենում էին մեր տանը : Մենք մտանք տուն : Դուրսը լսում էր կանանց լացն ու աղաղակը, փողոցով վազէվազ անցնում էին մարդիկ ու մահուան ճիչ արձակելով գետին զորուում : Նորից մի քանի հարուածներ եւ մէկ էլ տեսնեմ մեր սենեակը լցուեց վառօդի ծխով : Մենք աղեկտուր ճիչերով փողոցը թափուեցինք : Տղամարդիկ չկային, միայն կանայք էին : Ես պատսպարուեցի նրանց մէջ : Այդ ժամանակ դէպի մեր տունն էր շտապում փեսաս : Նա գալիս էր հովանաւորուելու հօրս մօտ, որ երեսուն տարուց ի վեր Մուսա բէգի հաւատարիմ ծառան էր եղել : Բայց երբ տեսաւ, որ մենք ահաբեկուած, փուլոցումն ենք եւ մեր մէջը ոչ մի տղամարդ չկայ, մտաւ մեր մէջը եւ անմիջապէս սրանից—նրանից կնկայ շորեր վերցնելով, հագնուեց իբրեւ կին : Մի դինուոր քուրդ մօտեցաւ նրան, բերանից եազման քաշեց եւ բխերը տեսնելով, հրացանի կոթով խփեց ու դուրս քաշեց նրան կանանց խմբից : Տեղացին հրացանի երկու հար-

ուածներ եւ փեսաս իմ աչքի առջեւ գետին գլորուեց : Այդ ժամանակ մի խումբ քրդի կանայք մտան քեռու տունը կողոպտելու : Ներսից լսուեց հրացանի ձայն : Կինը լեղապատառ դուրս վազեց ու կանչեց .

— Եկէ՛ք, այստեղ հայ գինուորներ կան, փեթակը քաշեցի եւ ինձ վրայ կրակեցին :

Քրդերը իրար անցան, պաշարեցին տունը, վրձ-
ուեցին տանիքը քանդել եւ վերեւից սպանել թաքստո-
ցում պատսպարուածներին : Կտուրը քանդուեց, լըս-
ւեցին հրացանածգուլթիւններ : Մէկ էլ տեսնեմ, եղբայրս Մկրտիչը տաս կրակնոցը ձեռքին, գլխաբաց փողոցը վազեց : Դրան առաջին մի Քրդի գետին գլորեց և փա-
խաւ դէպի դաշտը : Միւս թաքնուածները այլեւս դուրս չեկան : Նրանք սպանուած էին, կամ զէնք չունէին : Փողոցում փեսաս այս ու այն կողմ էր թաւալում : Նա թէեւ մահացու վէրք էր ստացել, բայց դեռ վերջին շունչը չէր փչել : Մի Քուրդ քանդած տանիքից մի գե-
րան վերցրեց եւ ձգեց փեսիս գլխին : Նրա գանկը ճեղ-
քուեց եւ ուղեղը թափուեց փոշու մէջ : Ամէն կողմից քշում ու հաւաքում էին կանանց, աղջիկներին եւ երե-
խաներին :

Մի Քուրդ իմ հասակը մեծ համարելով, հրացանը ուղղեց կրծքիս : Իմացի տանիքի վրայ աչքովս ընկաւ Պալիլը, Մուսա բէգի թոռը, որ ինձ լաւ ճանաչում էր : Ծիի կտորածների ժամանակ մենք պատսպարուել էինք նրանց մօտ եւ այնուհետեւ հինգ տարի ապրել նրանց գիւղում : Պալիլը իմ մանկական ընկերն էր, ինձանից հազիւ երկու տարի մեծ :

— Թո՛ղ որ խօսեմ Պալիլ աղի հետ, գոռացի հրա-
ցանը ինձ ուղղած Քրդին :

— Ի՞նչ ունես ասելու, ասաց նա :

— Խալիլ աղա, կանչեցի ես, խնայիր ինձ, թող որ դամ մօտդ :

— Ո՞ւր է եղբայրդ, հարցրեց նա :

— Չգիտեմ, փախել է : Նա գիւղի ծայրը գնաց, որ աղային հանդիպի :

— Հա, չե՞ս իմացել որ նրան գոմում սպանել են, ասաց նա սառնօրէն, իսկ սա՞ ուլ է, հարցրեց նա, փեսիս դիակը ցոյց տալով :

— Փեսաս է :

— Չուռնաչի՞ն :

— Այո՛ :

Նա գիտէր որ փեսաս զուռնաչի էր : Յետոյ նա դիմեց իր կողքին կանգնած Քրդին եւ ինձ ցոյց տալով, հրամայեց .

— Տարէ՛ք սրան մեր տունը :

Խնդրեցի Խալիլին, որ չմոռնայ նաեւ մօրս եւ քոյրերիս : Նա խոստացաւ : Ինձ տարան Խններ գիւղը, Մուսա բէգի մօտ : Հետեւեալ առաւօտ եկան մայրս եւ երեք քոյրերս՝ Ալդուզը, Հայկանուշը եւ Մարիամը : Նրանք պատմեցին թէ մեր գիւղի կանանց եւ աղջիկներին հաւաքել էին չորս տուն, ընտրել եւ զեղեցիկներին տարել, իսկ մնացածներին միւս առաւօտ քշել Աւազուտ հայ գիւղը : Յետոյ իմացանք որ դրանց եւ ուրիշ գիւղերից բերած կանանց եւ երախաներին լցրել են եօթը տուն և կրակի տուել : Այդ «Տեառնընդառաջ»ի հերոսը եղել էր Խալիլը : Երեք օրից յետոյ Խններ եկաւ թուրք կառավարութեան պաշտօնեան, խումանդարը, նեղացաւ Քրդերի վրայ, որ նրանք կոտորածից ազատւած Հայերին պատսպարել են, տունէ տուն պտտեց եւ սկսեց Հայերին հաւաքել : Քրդերը զեղեցիկ հարսներին ու աղջիկներին անմիջապէս փախցրին լեռները, որ խումանդարի ձեռքը չընկնեն :

Եկան եւ մեր յետեւից : Մուսա բէզը լուռ՝ աչքով արաւ եւ մեզ դուրս բերին փողոցը : Հազարի չափ կին եւ երեխայ դուրս եկան այդ գիւղից : Մեզ հաւաքեցին Մելոյենց տունը : Մելոյենք Խնների այն քսան տուն Հայերից էին , որոնք մահմեդականութիւն ընդունելով դերժ էին մնացել կոտորածից : Մուսա բէզը երեկոյեան մարդ ուղարկեց եւ մեզ նորից ազատեց : Միայն այդ գիշեր իր տանը չպահեց , այլ տեղաւորեց մի մահմետականացած , Երանոս անունով հայի ընտանիքում :

Առաւօտեան խումանտարը Մելոյենց տան Հայերին քշեց Խնների մօտ հոսող Մեղրագետի ափը , ուր պառաւներին ու ծերերին ջուրը նետեց , կանանց հրացանազարկ արեց , իսկ մանուկներին , խնայելով վնդակները թողեց գետի ափին , որ սովամահ լինեն : Բայց այդ գիշեր մենք չկարողացանք քնել : Մանուկների լացն ու ծւլոցը բռնել էր ողջ գիւղը : Հետեւեալ առաւօտ այդ ձայներից ազատուելու համար Քրդի լամուկները չընները առած առաջները , գնացին գետի ափը , քաց թողին երախաների վրայ , որ խեղդամահ անեն : Կենդանի մնացածներին իրենք էին քարկոծում : Երկրորդ գիշերը երեխաների ձայները նուազեցին , իսկ երրորդ գիշերը այլեւս ձայն չլսեցինք : Մի քանի օրից յետոյ Մուսա բէզը մեզ կանչեց եւ ասաց :

— Դէ՛հ , ես ձեր կեանքն ազատեցի , բաւական է , այժմ գնացէք ձեր գլխի ճարը տեսէք , այլեւս ձեզ չեմ կարող պահել : Կը գնան խումանտարին իմաց կը տան :

Մեզ վերցրեց եւ ուղարկեց հարեւան Գեսան քուրդ գիւղը : Այդ տեղ էր ապրում իմ հօրեղբայրը իր ընտանիքով , որ նոյնպէս մահմետականութիւն էր ընդունել :

Մի գիշերից աւել հօրեղբայրս մեզ չպահեց , որովհետեւ նրա դրութիւնն էլ խախտւտ էր :

Մենք նորից վերադարձանք Մուսա բէգի մօտ եւ սասցինք, որ մեր հօրեղբայրը մեզ չի ուզում պահել: Բայց Մուսա բէգի վճիռը անխախտ էր: Մենք այլեւս այդտեղ չէինք կարող մնալ: Հինգ հողի՝ մայրս, ես եւ երեք քոյրերս ձգեցինք Մուսա բէգի տունը եւ գնացինք քուրդ գիւղերը թափառելու: Տասնհինգ օր գիւղից գիւղ էինք անցնում, Քրդերի տներից հաց մուրում եւ դաշտը դուրս գալով մի ծառի տակ կամ մի փլատակի մէջ պառկում քնում:

Ոմանք խղճում էին մեզ, հաց տալիս, ոմանք դուրս էին անում ասելով.

— Յիշո՞ւմ էք Սահմանադրութեան տարիները: Ձեզ հետ խօսել չէր լինում, կատաղել էիք, մեզ հետ հաւասարուել էիք ուզում...

Քրդի լամուկները հեռուից քար էին խփում մեզ եւ հայհոյում մեր խաչը:

Իսկ մեծերը ասում էին.

— Ձեր կրօնը եթէ լաւ լինէր, դուք այդ օրը չէիք ընկնի: Քանի՞ անգամ սասցինք ձեզ, մահմեդական դառէք: Չլսեցիք, դէ՛հ շան պէս սատկէք, ափսոս են նոյնիսկ մեր գնդակները, որ ձեզ սպանենք:

Այդ թափառումների ժամանակ լսեցինք, որ սպանուած է եւ եղբայրս՝ Մկրտիչը: Նա մի քանի Քուրդ ըսպանելով դուրս է եկել դաշտը, ուր շրջապատել են 40 հոգի: Նա պաշտպանուել է մինչեւ վերջին գնդակը եւ ապա նահատակուել:

Մի օր լսեցինք, որ Ռուսը մօտենում է Մշոյ դաշտին: Մուսա բէգի եղբայր Ղասում բէգը, որ ապրում էր Խլաթի կողմերը իր վանիկ գիւղում, ընտանիքով, ապրանքներով ու կենդանիներով փախաւ ապաստանեց Խւներում, իր եղբոր մօտ: Մենք էլ սաստիկ յոգնած ու տանջուած էինք: Փորձեցինք նորից գնալ Գեսան եւ

հօրեղբորս մօտ ապրիլ, բայց իմացանք, որ նրան արդէն սպանել են, 18 տարեկան աղջկան Քրդի կնութեան տուել, իսկ կնոջ եւ երկու երեխաներին գիւղից դուրս արել:

Այս անգամ մենք փորձեցինք շարժել Ղասում բէգի գուլթը: Գնացինք Խլներ եւ մօտեցանք Մուսա բէգենց տանը: Տեսայ Ղասում բէգին, որ դարպասի սարուին նստած էր: Մօրս եւ քոյրերիս փրկելու համար ստորացայ, նրա ոտներն ընկայ, որ համբուրեմ:

— Մի անի, դաւակասաց նա ինձ բարձրացնելով:
Ես պատմեցի մեր վիճակն ու լաց եղայ:

— Մնա իմ քով, ասաց նա: Մայրդ թող Երանոսի մօտ ապրի, իսկ դու քո քոյրերի հետ մեզ մօտ ծառայելու կը գաս:

Բայց շուտով մենք լուր առանք, որ մեծ քրոջս՝ Ալղուզի ամուսինը մի քրդի գիւղում կենդանի է մնացել: Ալղուզին ուղարկեցինք նրա մօտ: Մայրս մնաց Երանոսի տանը, իսկ Հայկանոյշին Ղասում բէգը ուղարկեց Նորչէն անունով գիւղը մի քրդի՝ Աղիզ բէգի մօտ ծառայելու համար: Մնացինք մենակ մի քոյր, մի եղբայր Ղասում բէգի մօտ: Մեզ տեղ տուին գոմում: Մուսա բէգի կինը, մի պառաւ կին, մեզ հացի կանչեց, տուեց մի աման կերակուր, մի կտոր հաց: Բայց մենք չկարողացանք ուտել, մեր բուկը կարծես սեղմուել էր: Մուսա բէգի կինը այդ նկատեց, փաղաքչեց մեզ, լաց եղաւ ու ասաց,

— Ա՛յ Քրդեր, մեր այս արարմունքը Աստուած անպատիժ չի թողնի...

Եւ իսկապէս, երկար չանցած Ղասում բէգը լուր առաւ, որ Ռուսները Վանիկն էլ են գրաւել:

Հարկաւոր էր Խլներից փախչել: Մուսա բէգն ու Ղասում բէգը շտապ պատրաստուեցին ու բարձրացան

Սեւ լեռը: Մեզ էլ վերցրին իրենց հետ:

Լերան ստորոտին մեր այդ գաղթի ժամանակ մօրս առաջով անցաւ մի բարձած եղ: Յանկարծ մօրս ոտները թուլացան, ընկաւ գետին ու սկսեց դողալ ու լալ:

— Մայրիկ ջան, ի՞նչ պատահեց: Վազեցի՞նք նրա մօտ ու գրկեցի՞նք նրա գլուխը:

— Ա՛խ, էն բարձած եղը տեսէք... Մկրտիչի վերմակն է վրան...

Մայրս իմ սպանուած եղբօրն էր յիշել:

Երբ տեղ հասանք, հիւանդացաւ ու պառկեց: Եօթը օրից աւել չտեւեց հիւանդութիւնը, կսկծից մեռաւ եւ մենք որբացանք...

Մուսա եւ Ղասում բէգերը իմացան, որ Խւների վրա եկող Ռուսների թիւը քիչ է, ընդամէնը 50 հոգի: Նըրանք 200 Քուրդ հաւաքեցին, գնացին Ռուսներին քշեցին եւ մենք 21 օրից յետոյ նորից իջանք Խւներ, բայց այս անգամ առանց մեր անուշ մայրիկի...

Նա մնաց Սեւ լեռան վրայ...

Խւներում մնացինք 6-7 ամիս: Մուսա բէգի տանը ինձնից եւ իմ քոյր Մարիամից շատ գոհ մնացին: Ես ամէն օր հոտաղութեան էի գնում, իսկ Մարիամը տան մանր գործերն էր անում: Դաշտում յաճախ հանդիպում էի հիւծուած ու թափառական հայ կանանց եւ երեխաների, որո՞նք չէին համարձակուում գիւղերը մըտնել, իսկ երբ տեսնում էի անթաղ դիակներ, յիշում էի իմ ծնողներին ու արտասուքն աչքերիս, հոր փորում եւ թաղում:

Շուտով իմ աղաներն ինձ այնքան սիրեցին, որ առան ինձնից հոտաղութիւնը եւ սկսեցին ինձ զինավարժութեան տանել: Երեք օրը մի անգամ ես գնում էի հրացանաձգութեան:

Ձմեռ էր: Նորից իմ աղաներն իրարանցման մէջ



Տէր-Զօր. — Հայ-պետուհին տղաք,
հայրերնին Արաք, մայրերնին Հայ:

ընկան: Այս անգամ Ռուսը մտել էր Մուշ: Գրաւել էին
յոմ հայրենի Խարց գիւղը, ապա Վարդենիսը, Առնիստը,
Արգունքը:

Իմ աղաները կրկին գաղթեցին Սեւ լեռը, բայց սրով-
հետեւ ձմեռ էր եւ սարերը ձիւնով ծածկուած, չկա-
րողացան ամբողջ տաւարը հետները վերցնել: Տարան
միայն 1000 ոչխար, 14 եղ եւ 8 ձի, իսկ մի այդքան էլ
ոչխար, 36 եղ, 4 էջ եւ 3 քուռակ թողին իրենց մօտ
ծառայող հոտաղներին ասելով:

— Զեր մալն է, այսքան ժամանակ հաւատարիմ
ծառայել էք, աւելի լաւ է ձեզ մնայ, քան թէ մուրտառ
Ռուսին:

Մուսա եւ Ղասուժ բէգերը, սրոնց միացաւ եւ նըրանց երրորդ եղբայր Նհօ բէգը, խումբ կազմեցին, այս անգամ ոչ աւել քան 200 Քուրդ, եւ դուրս եկան իրենց քոչի թիկունքը պաշտպանելու :

— Դէ տղաս, հեգնելով դարձաւ ինձ Ղասուժ բէգը, տեսնու՞մ ես, ձեր ազատարար «քեռին» եկել է (խօսքը Ռուսների մասին էր), եկել ձեզ Հայերիդ փրկելու : Հա՛, հա՛, հա՛ . . . Վեր կաց զնանք, հետը կուռենք :

Ինձ տուին մի «քիւշիւք չափլի» (մոսին) եւ 400 փամփուշտ : Մուսա բէգի տունը դատարկուեց : Մնացին անասունների մօտ միայն նրանց չորս հայ հոտաղները : Քոյրս՝ Մարիամը մրսել էր եւ հիւանդ պառկած էր գոմում : Նրա մօտը դրի հաց, պանիր, ջուր, խնդրեցի հայ հոտաղներին, որ մէկ-մէկ նայեն, եւ Քրդերի հետ գնացի պատերազմ :

Ռուսները շրջապատեցին Խւները եւ մենք երեք օր դիմադրեցինք, մինչեւ քոչը անցնէր : Այդ երեք օրուայ ընթացքում ես 200 փամփուշտ արձակեցի, բայց իմ գնդակները ուղղում էի կամ վերեւ, դէպի երկինք, կամ ներքեւ, ձիւնի մէջ : Դէպի Ռուսները ոչ մի գնդակ չթողի :

Երկրորդ օրը Ռուսները գրաւեցին հարեան Մաունիկ գիւղը : Մենք բարձրացանք Խւների բլուրը : Երրորդ օրը գիւղի կողմից լսեցինք ուսսական «ուռա»ները : Մեզնից մի քանի վիրաւորներ ընկան եւ մեր խումբը փախուստի դիմեց : Ղասուժ բէգը ձեռքիցս առաւ հրացանը եւ փամփուշտները ու պատուիրեց, որ գիւղ գնամ եւ չթողնեմ, որ Ռուսները իրենց տունն աւերեն : Ղասուժ բէգը ձին քշեց դէպի Սեւ լեռը, իսկ ես վերադարձայ Խւներ :

Տանը, գոմի մէջ, դտայ չորս հայ հոտաղներին ու քրոջս : Երեք հաստ գերաններ ձգեցինք դրան յետեւ

ու սպասեցինք, մինչեւ Ռուսները գան :

Կէսօրի մօտ էր, երբ մեր գոմի մօտ փողոցում լըսեցինք Ռուսների ձայնը ու բարձրացանք կտուրը կանչելով :

— Եկէ՛ք, եկէ՛ք, մենք Հայ ենք...

Ձինուորների մի խմբակ մօտեցաւ մեզ եւ մէկը հայերէն հարցրեց անհամբեր :

— Ձեր հոգուն մատաղ, ասէ՛ք, շատև՞ր էք :

Մի Երեւանցի տղայ էր, Գէորգ անունով : Սկսեց մեզ հարց ու փորձ անել եւ յետոյ վերցրեց հետն ու պտտեց գիւղը : Մօտ 150 հայ դուրս բերինք այդ գիւղից, որոնց թուում եւ իւնների 8 մահմեդականացած ընտանիքները : Մնացած 12 ընտանիքը Քրդերը կոտորել էին : Ռուսները Սեւ լեռը թնթանօթի կապեցին, իսկ ես քրոջս ձեռքը բռնելով մնացած Հայերի հետ ճանապարհ ընկայ Մառնիկ գիւղը : Ոչ մի տեղ Քուրդ չկար : Մառնիկում ինձ ուղարկեցին, որ տնէ տուն ման գամ եւ զօրքի համար ոչխար փնտռեմ :

Առաջին տունն էր, երբ մի լստի դէզի մէջ երեք քրդի աղջիկ գտայ, 10, 8 եւ 5 տարեկան : Արիւնը տըւեց գլուխս : Յիշեցի այն սուգի գիշերները, գետի ափին հայ երախաների լացն ու ճլուղը, մօրս անքուն աչերի արտասուքը... Ձինուորից առայ թուրը եւ մեխեցի աղջիկների մէկի կուրծքը : Մեծ աղջիկը բռնեց իմ կունից, բայց զինուորը նրան դետին գլորեց եւ ոտը դրեց նրա ծամի վրայ : Ես նրա վիզը կտրեցի... իմ վառուած սիրտը մի փոքր հովացաւ... Երբ գլուխս բարձրացրի, զինուորը գլուխը դարձրել էր դէպի պատը ու երեսը ձեռքերով ծածկել : Գէորգն էր :

Հետեւեալ առաւօտ զինուորները առաջ անցան եւ ուղեցին ինձ էլ հետները տանել : Բայց ես չգնացի, ո-

րովհետեւ քոյրս տկար էր եւ անտէր կը մնար :

Վերցրինք չորս ձի, երեք էջ, տասերկու եզ եւ չորս սայլ ցորեն ու զնացինք Խաս գիւղը: Մեղրագետով անցնելիս սառուցը կոտրուեց եւ սայլերս մնացին գետի միւս ափին: Հասանք Մուշ: Տաւարի մի մասը վերցրին Ռուսները եւ ինձ թողին մի եզ, մի կով: Այդ եզն ու կովը առաջներս առած ճանապարհ ընկանք Խնուս: Մեզ ընկերացաւ Մուրատ անունով մի Հայ, որ հօր պէս մեզ խնամում ու սիրում էր: Երբ հասանք Խնուս, կովն ու եզը նուիրեցի այդ բարի մարդուն: Խնուսից ինձ եւ քրորոջս ճանապարհեցին Կովկաս ու ինձ տեղաւորեցին Աշտարակի որբանոցում:

Աշտարակ, 1916 թ. Նոյեմբեր:



Թորոս Կարօֆեան, Սեբաստացի
կ'ապրի Շամմար ցեղին մէջ:



ՎԵՐԱԾՆՈՒՆԻ

Փրկարար ներգաղթը: Սուրիա հաւաքուած վերապրողներ
Սովետական Հայաստանի սահմանը կը հասնին:

ՄՇՈՅ ԴԱՇՏ

ՆԱԽՇՈՒՆ

Ծնուել է «Մշոյ դաշտի Բաղուա գիւղում՝ Ս. Կարապետի մօտ: Գտնուում է Մ. Հ. Կ. Աշտարակի ուրբանոցում:

Ընտանիքի անդամները՝ Սահակ, Հայրը, Երկրագործ, Մարիամ, մայրը, Նախշուն՝ ինքը, Սեդրակ, եղբայրը, 9 տարեկան, Ալմաստ, քոյրը, 7 տարեկան, Աղնուտ, քոյրը, մէկ տարեկան:

Նոր էի օճախը վառել եւ կաթը դրել վրան, երբ լսեցի մօրս ճիչը.

— Ամա՛ն, Նախշո՛ւն, եկո՛ւր, մեր դրացի Մանէին սպաննեցին:

Ես վազեցի մօրս մօտ եւ նա հրամայեց ինձ տուն տեղը հաւաքել :

Մեր դիւղում Քրդերը շատ քիչ էին : Եղածներն էլ մեզ հետ լաւ էին , մանաւանդ մեր հարեւանները՝ Հաջիենք : Նրանք յաճախ կրկնում էին , որ վտանգի դէպքում մեզ կը պաշտպանեն : Հայրիկս ու մայրիկս դըւալով մօտալուտ վտանգը , յիշեցին Հաջիենց խոստումը եւ տան իրեղէնները հաւաքելով , փոխադրեցին նրանց մօտ : Բայց բանից դուրս եկաւ , որ դիւղում կոտորած չը կար , այլ միայն հրաման էր եկել կառավարութիւննից , որ տղամարդիկ հաւաքուին դիւղի ռէսի մօտ , սրտեղից նրանց պիտի ճանապարհէին չզխտեմ ուր : Մանէն միայն չէր հնազանդուել ու դրա համար էլ պատժուել էր իր կեանքի դնով : Շուտով մեր տուն մտան մի քանի պաշտօնեաներ եւ հրամայեցին որ հայրս էլ հետեւի նրանց : Երբ հայրիկիս տարան , հետեւեալ շրջը հրաման դուրս եկաւ , որ դիւղի բոլոր կանայք եւ երեխաներն էլ պիտի պատրաստուեն տղամարդկանց հետ ճանապարհ ելնելու :

Մենք դու եւս պատրաստութիւն չէինք տեսել , երբ լսեցինք փողոցում ձիերի սմբակների ձայնը , դուրս վազեցինք բակի դուռը եւ տեսանք , որ մի խումբ ասկարներ առաջներն առած քշում են մեր դիւղի տղամարդկանց , ձեռքերը յետեւնին շղթայած եւ միմեանց չաղկապած :

Դրանց մէջ ես անմիջապէս գտայ հայրիկիս : Նրա կռներն էլ էին յետեւին կապել : Նա աչքերը ձգեց մեր տան վրայ , մեզ տեսաւ եւ լաց եղաւ : Մայրիկը նրան չէր նկատել , նա նրանց մէջ միայն իր քեռուն էր տեսել : Հենց որ տղամարդիկ անցան , նրանց յետեւից քշեցին մեզ : Առաջից զնում էին տղամարդիկ , յետեւից մենք :

Ոտների տակից ելնող փոշին խեղդում էր մեզ, բայց մեզ թոյլ չէին տալիս մի քայլ անգամ միմեանցից զատուելու :

Բոլորը տխուր ու տրտում առաջ էին գնում : Ու մանք հառաչում ու լաց էին լինում : Լսում էին մէկ մէկ շշուկներ , որոնք ասում էին .

— Մեզ տանում են Ս . Կարապետի վանքը , գիշերս այնտեղ պիտի մնանք :

— Իսկ յետո՞յ :

— Յետո՞յ , ի՞նչ գիտե՞նք . . . Ո՛վ դու Ս . Կարապետ , մեռնինք քո սուրբ զօրութեանը . . .

Կէս օրից յետոյ հասանք Ս . Կարապետի վանքը : Իսկապէս որ մեզ այդտեղ դադար տուին : Տղամարդկանց քշեցին ջոկ տեղ , իսկ մեզ , կանանց , լցրին դոմերն ու դռները մեզ վրայ փակեցին : Արեւը մայր մըտաւ եւ մութը պատեց դոմը : Մեզ մօտ ոչ եկան եւ ոչ էլ ճրագ ուղարկեցին : Մնացինք մութի մէջ սոված , դողը սրտերնիս :

Մայրս նստեց պետնին , բացեց կուրծքն եւ սկսեց Ազնուտին կերակրել : Ազնուտն անմիջապէս քնեց : Խոսրովը , ես եւ Ալմաստը գլուխներս դրինք մայրիկի ծնկներին ու լուռ պառկեցինք :

— Զեղի մեռնեմ , հաց չէ՞ք ուզում , հարցրեց մայրըս :

Մենք բոլորս էլ պատասխանեցինք՝ ո՛չ : Գիտէինք , որ հաց չը կար : Բայց եթէ լինէր էլ , միեւնոյն է , չէինք ուտի : Ախորժակ չկար :

Մի փոքր յետոյ քնեց եւ Ալմաստը : Իսկ իմ եւ Խոսրովի քունը չէր տանում : Մթութեան մէջ մի խոնաւ բան թրջեց իմ ճակատը : Մօրս արտասուքն էր : Այդ որ նկատեցի , երեսս ծածկեցի մայրիկիս դողում եւ ըսկսեցի թագուն լալ :

Խոսրովը չէր լալիս : Նա լուռ պառկած՝ կարծես մի
ինչ որ բանի մասին մտածում էր : Արդէն բաւականին
անցել էր : Թէ էս եւ թէ մայրս դադարել էինք լալուց ,
երբ յանկարծ դռան փականի մէջ լսեցինք բանալիի սը-
խտրոցը : Դուռը բացուեց եւ ներս մտան երեք ասկար :
Մենք շունչներս քաշեցինք : Միայն մեր աչքերը նրանց
ձեռքի ճրագի ճառագայթներից անհանդիստ թարթում
էին : Նրանք մի բան էին որոնում : Մէկը մօտեցնում
էր ճրագը եւ միւսները որոնող հայեացքով նա-
յում էին մեր դէմքերին : Յանկարծ ճրագի բոցը կանգ
առաւ մայրիկիս , ապա իմ դէմքի առաջ : Ինձ թուաց ,
որ իմ սիրտս այլեւս չէր բաբախում , բայց այդ ըրպէիս
յետեւի ասկարը բոթեց իր ընկերոջն ասելով .

— Լաւ , դնա :

Նրանք թողին մեզ եւ հերթով մօտեցան միւսներ-
ըին : Մէկ էլ կանգ առան դոմի անկիւնում նստած
Մարիամի առաջ : Մարիամը մեր գիւղի երիտասարդ եւ
ամենից գեղեցիկ աղջիկն էր :

— Վեր կաց դնանք , ասաց ասկարներից մէկը նը-
րա ձեռքը բռնելով :

Մարիամը ճչաց եւ կպաւ իր մօր կռնից :

— Վեր կաց քեզ ասում եմ , թէ ոչ՝ այս ըրպէիս
քեզ կը մորթեմ , ասաց միւս ասկարն ու ձեռքը ձգելով
աղջկայ կռնատակերը բարձրացրեց : Մարիամը նորից
եւ նորից ճչաց , բանց նրան կռնատակերից բռնած քա-
շեցին դուրս եւ դուռը նորից կողպեցին մեզ վրան :
Մարիամի ձայնը կտրուեց : Մենք մնացինք կրկին մը-
թութեան մէջ ահաբեկուած ու լուռ :

Հենց որ ասկարները դուրս եկան , մայրիկս ինձ
պառկեցրեց երեսս դէպի պատը եւ ինքը նստեց առաջս :
Բայց իմ քունը մինչեւ լուսաբաց չտարաւ : Մտածում
էի խեղճ Մարիամի մասին , որ այդ գիշեր այլեւս չ'ե-

կաւ : Լուսաբացին ,դրսից թնթաց հրացանազարկ : Կարծես երազում էի եւ ամպերն էին որոտում : Տեսայ՝ կանայք խոնուած դոմի լուսանցքի մօտ՝ դէպի դուրս են նայում , կոծում ու գլխներին տալիս : Իսկ երախաները , կուտուած դոմի անկիւնում , լաց են լինում : Ուզեցի մօտենալ լուսանցքին եւ դուրս նայել , մայրս արգելեց : Այդ ըոպէին լուսանցքից դէպի դոմը շարժուեց հրացանի մի խողովակ եւ լսուեց ասկարի գոռոցը :

— Ի՞նչ էք գոռոցներդ գցել , միեւնոյն է , ձեզ էլ նրանց պէս պիտի սսլանենք : Կտրէք այս ըոպէիս ձեր ձայնը :

Իմ մարմնով մի սարսուռ անցաւ եւ ոտներս թուլացան : Զգիտեմ ինչո՞ւ լացս չեկաւ : Դուրսը նորից եւ նորից թնդացին հրացանները : Դադարեցին միայն կէսօրին :

— Գնացին ճաշի , ասացին դոմում : Օգտուելով հանդամանքից , ես մօտեցայ լուսանցքին եւ դուրս նայեցի : Եւ ի՞նչ տեսնեմ :

Դիակների մի ահազին կոյտ՝ մէկը միւսի վրայ թափթփած , մերկ ու ստաբոպիկ , երեսները դէպի վար : Վախեցայ , մի դուցէ դրանց մէջ ճանաչեմ հօրս : Աչքերս իսկոյն վեր բարձրացրի եւ , չը գիտեմ ինչու , յառեցի ծառերի միջից երեւացող Ս . Կարապետի պըմբէթին : Այդ ըոպէին դոմի մէջ լսեցի տղամարդու ձայներ : Յետ նայեցի՝ ասկարներ էին : Հաց էին բերել մեզ բաժնելու : Երեք օրից յետոյ մեզ դուրս բերին դոմից , որ տանին Մուշ : Մեզ հետ այլեւս հայ տղամարդ չը կար : Բոլորին կոտորել էին : Մուշից մեզ քչեցին Կոմուէ : Շէխլարի տակ , ճանապարհին , մի մութ գիշեր մայրս յանկարծ բռնեց մեր թեւից ու մտաւ մի թփի տակ : Երբ մենք փորձեցինք ձայն հանել , մայրս ձեռքը դրեց մեր բերանին եւ նշան արաւ , որ լռենք : Կանանց

եւ երեխաների կարաւանը առաջ անցաւ եւ ասկարների կողմից մենք մնացինք աննկատ : Մենք ազատուել էինք : Բայց ինչ ազատութիւն էր դա , երբ ազատ շարժուելու հնարաւորութիւն չունէինք : Մենք դուրս եկանք ճանապարհից եւ սկսեցինք քայլել մացառուտ եւ քարքարոտ դար ու փոսերով : Ողջ գիշերը Ազնուտը նուժ էր : Մայրիկի կաթը ցամաքել էր , դրա համար էլ չէր կարողանում նրան կերակրել եւ հանգստացնել : Մայրիկի կոներն էլ սաստիկ յոգնել էին , բայց եւ այնպէս նրան դրկած անդադար օրօրում էր : Այդպէս քայլեցինք ողջ գիշերը , ինքներս էլ չը գիտէինք դէպի ուր : Երբ լուսացաւ , բարձրացանք մի բլուր եւ պատասպարուեցինք մի քարի տակ : Այդ տեղ մեզ տեսնել չէին կարող : Ողջ օրը մնացինք ահը սրտեսնիս , թէ մի գուցէ մեզ նկատեն : Միայն Ազնուտն էր որ չէր հասկանում մեր դրութիւնը եւ անվերջ նուժում էր , ինչպէս նախընթաց գիշերը :

Սաստիկ սոված էինք , բայց ո՞րտեղից պտենք հաց :

Հէնց որ օրը մթնեց , մենք իջանք հովիտը : Մայրիկն ասաց որ ամբողջ գիշերը կրկին ճանապարհ պիտի գնանք : Ազնուտը կրկին չէր հանգստանում : Նա իմանալով , որ մայրիկի կաթը ցամաքել է , այլեւս չէր մօտենում մայրիկի կրծքին : Իսկ յոգնած եւ սոված մայրիկն իր կոների մէջ այլեւս ոյժ չունէր նրան անդադար օրօրելու : Յամառել էր Ալմաստը , յոգնել էր եւ չէր ուզում քայլել : Մինչդեռ մենք ողջ գիշերը պիտի գնայինք :

Ներքեւ անցնում էր մի գետ : Մենք իջանք նրա ափը եւ մայրս նշան արաւ , որ նստենք : Նա Ազնուտին իր դիրկն առաւ եւ սկսեց սրտագին համբուրել : Յանկարծ մէկ էլ այն տեսանք , որ մայրիկը ոտքի կանգնեց , Ազնուտին առաւ իր ձեռքերի վրայ եւ իր ամբողջ ուժով նետեց գետի մէջ : Երբ երեխան սուզուեց ջրի

տակ, մայրիկը ընկաւ խոտի վրայ եւ սկսաւ աղեկտուր հեկեկալ ու փետտել մագերը: Ապա ոտքի կանգնեց, առաւ իր մէջքը Ալմաստին, որ այլեւս մի քայլ անել չէր կարողանում, բռնեց մեր երկուսի, իմ եւ Սեդրակի թեւից ու բարձրացաւ կրկին բլուրները:

Այդպէս մենք չորս օր ճանապարհ գնացինք: Գիշերները գնում էինք ու ցերեկները թաղնուում: Զորորոզ օրը լուսաբացին հասանք մեր գիւղը եւ բաղխեցինք մեր հարեւան քուրդ շաջիենց տան դուռը: Հաջին զանմանքով մեզ ընդունեց, բայց վերին աստիճանի սիրալիբ էր եւ կարեկից: Նա մեզ կերակրեց եւ հրաւիրեց, որ հանգստանանք: Մեզ առաջնորդեցին այն սենեակը, ուր անվնաս ու լիովին սարքուած էին մեր նրան պահ տուած իրեղէնները:

Մեր գիւղը բերել էին ուրիշ տեղերից դաղթեցրած Գրդեր ու տեղաւորել Հայերի տներում: Մի քուրդ ընտանիք էլ ապրում էր մեր տանը: Բայց մօրս սրտին չի տուեց, որ գնայ տեսնի մեր տունը: Հետեւեալ օրը երկու ասկար մտան Հաջիենց տունը եւ ասացին, որ այստեղ Հայեր են պատսպարուել, պիտի անմիջապէս իրենց յանձնուեն:

Բայց ծերունի Հաջին դուրս եկաւ եւ նեղացած՝ ասաւ .

— Ես կին չեմ տայ, որ դուք տանէք սպանէք, կ'ուզէք ինձ սպանէք:

Ասկարները հեռացան:

Մի շաբթից յետոյ Հաջին մեզ տեղափոխեց իրենց հարեւան Սաֆարենց Մկոյի տունը, որ գիւղի դաղթից յետոյ դատարկ էր մնացել: Այդտեղ մենք մի սենեակ յարմարեցրինք եւ տեղաւորուեցինք: Մայրիկս ամէն օր գնում էր Հաջիենց տունը բան անում ու գիշերները դալիս մեզ հետ քնելու: Այսպէս ապրեցինք մի քանի ամիս, մինչեւ ձիւնը եկաւ ու ծածկեց գետինը: Մի օր

Քրդերի մէջ իրարանցում ընկաւ թէ Ռուսը մօտենում է իրենց գիւղին: Նրանք շտապով պատրաստութիւն տեսան, որ դաղթեն: Առաջ տեղափոխեցին իրենց կայքն ու անասունը, ապա ընտանիքը: Տեղափոխուած էին եւ Հաջիենք: Նրանք իրենց տան եղած-չեղածը բարձում էին իրենց անասուններին, մարդիկ մի բեռ էլ իրենք առնում ու գնում: Այդպէս երեք անգամ գնացին ու եկան: Ամէն անգամ տանում էին եւ մայրիկին, մի տառարակ էլ նրա մէջքին բարձած:

Վերջին անգամ, երեկոյեան, երբ ճանապարհուում էին, արդէն հեռուից լսում էր հրացանների ձայնը:

Այս անգամ մայրիկը ցանկացաւ մնալ մեզ հետ, բայց Հաջիի փոքր եղբայրը սպառնալիքով ցոյց տուեց դաշոյնն ու ասաց.

— Ուզո՞ւմ ես: Ապա մի տոպրակ ցորեն դրեց մայրիկի մէջքին, առաջն առաւ ու գնաց: Գիւղում ոչ ոք չը մնաց: Առաւօտեան փողոցներում լսեցինք ձիերի սմբակների տրոփիւն եւ տղամարդկանց ձայներ: Չը վստահեցանք դուրս գալ: Վախեցանք մի գուցէ տաճիկ ասկարներ լինեն, որոնք կարող էին մեզ սպանել:

Այդպէս մնացինք ողջ օրը: Արդէն մուլթը պատել էր, երբ յանկարծ մեր դուռը բաց արին եւ հինգ զինւած տղամարդ մտան ներս: Մենք սարսափից ճչացինք եւ միմեանց զրկելով, կուչ եկանք սենեակի անկիւնում: Մէկը նրանցից հայերէն ասաց.

— Հա՞յ էք, բալէքս:

Մենք իսկոյն ընդառաջ վազեցինք եւ երեքովս փախուեցինք նրան: Հայ զինուոր էր:

Մենք այնչափ ուրախացանք, որ վերջապէս Ռուսները եկան եւ մեզ ազատեցին: Երանի շուտ եկած լինէին, չէր սպաննուել հայրիկս եւ այժմ, ով գիտէ ո՞ւր, չէր տառապի մայրիկս, որին չը գիտեմ ինչպէ՞ս մոռանամ:

ՄՇՈՅ ԴԱՇՏ

ՀԱՅԿԱԶ

Չորս տարին հազիւ անցած, մի փափլիկ, ժիր, շուտ մտերմացող եւ շատախօս տղայ է: Նա աշտարակի Ա. որբանոցի մշտական հերոսն է, բոլորի սիրոյ եւ ուշադրութեան առարկան: Ամենի հարցին նա ունի իր պատրաստի պատասխանը: Գիտէ բազմաթիւ երգեր, ստանաւորներ, շուտասելուկներ: Նա հարստատներ չունի: Միակ ազգականը, որ ազատուել է կոտորածից եւ որը նրա մասին տեղեկութիւններ է տալիս, նրա հօրաքրոջ աղջիկ Մարիամն է:

Հայկազը Մշոյ շրջանի Տապափանք գիւղի Շլըմ Խորենց Մկոյի տղան է: Շլըմ-Խորենք գիւղի ամենամեծ եւ ամենահարուստ տունն էին: Վեց եղբայր, բոլորն էլ ամուսնացած, ամէն մէկը տասնեակ երեխաների տէր, կողք կողքի քրտինք էին թափում, մի յարկի տակ հաց կտրում: Ընտանիքի անդամների թիւը հասնում էր 56ի: Ունէին մի մեծ տուն, բազմաթիւ արտեր եւ այլիներ, 6 դուրձանի լծկան, 4 ձի, 3 քուռակ, 200 գլուխ տաւար եւ անհամար ոչխարներ:

Կոտորածի ժամանակ Քրդերը թալանեցին նրանց ամբողջ կայքը, կենդանիները քչեցին, գեղեցիկ հարսներին ու աղջիկներին դերի վարեցին, մնացածներին սրի անցկացրին եւ տունը, նաւթ ածելով, կրակեցին:

Այդ ժամանակ Հայկազի հայրը, ինչպէս եւ տան միւս տղամարդիկ, զինուոր էին գնացել, իսկ մայրը հրացանազարկ եղաւ տան շէմքին, զոյգ երախաները դրկին սեղմած: Ազատուեց միայն փոքր տղան՝ Հայկազը, որին Քրդերը տարան իսլամացնելու:

Երբ Ռուսները մտան Մշոյ Խճեր գրւղը, Հայկազին գտան քուրդ աղա ՆՏօ բէգի գումսւմ : Նրան ոռւս զինւորները վերցրին եւ մի ամիս պահեցին իրենց մօտ : Ընտանիքից կտրուած այդ մուժիկները Հայկազին շատ սիրեցին ու փայփայեցին : Եւ երբ Մոսկուայի Հայոց կոմիտէի աշխատաւորներից Պ. Արջակին ու Փելլէշեր Պ. Նիկողայոսը նրան վերցրին, պէտք էր տեսնել, թէ ինչ տհաճութեամբ ոռւս զինուորները յանձնեցին Հայկազին, իսկ երեխան լալիս էր եւ չէր ուղում բաժանուի նրանցից :

Ութ ամիս Քրդերի մօտ մնալուց եւ մի ամիս ոռւս զինուորներին հիւր յինելուց յետոյ, նա մուսացել էր



ՎԵՐԱԾՆՈՒՆԻ

Ամերիկահայ մերգաղթողներ Պաքուսի Էարափին վրայ

Հայերէնը: Նա խօսում էր քրդերէն եւ գիտէր ռուսերէն մի քանի խօսք, որոնց իւրաքանչիւրին, իբրեւ մի անբաժան որոշիչ, կցորդում էր ռուս գինուորի այնքան սիրած «երեքյարկանի» հայհոյանքը:

Իր անցեալից Հայկազը քիչ բան է յիշում: Նրա տուած տեղեկութիւնները շատ կցկտուր են: Պատմելիս դէպքերը խառնում է իրար, իսկ երբ թելը կորցնում է, նրան պէտք է օգնես հարցերով: Մի օր իր թլուատ լեզուով հետեւեալը պատմեց:

— Ես Տապալանցի Հայկազն եմ: Աչուն՝ մեր գիւղ կտրեցին: Իմ խեր Ռուսներու հետ կռիւ կէնէր: Իմ մէր Քրդեր զարկեցին, գուլլան էս թշէն մտաւ, էն թշէն ելաւ դուրս: Նհօ բէդ ինձի վերցուց, տարաւ իրենց գիւղ: Իմ անուն դրին Օսման: Էնտեղ ես կը խաղէի: Ռուս որ եկաւ, Քրդեր փախան սար: Ինձի Ռուսներ բերին Մուշ: Էնտեղ պարոն Արշակ ինձի դրեց խուրջին, բերեց Խնուս: Խնուսա Փուրղոնի մէջ նստանք, եկանք՝ չեմ գիտեր ինչ քաղաք: Պարոն Նիկողոսի ձի ինկաւ գետին մէջ՝ խանեցինք... Քրդեր ճամբէն կ'անցնէին, մեր տաւար դողցան: Ունինք շատ տաւար: Մի ձի ունենք, էնօր քուլակ իմն էր: Իմ խէր ինձի նստեցուց ձիու վրայ, իմ քուր մնաց գետին: Մի Քուրդ եկաւ իմ ձի գողնի, իմ խէր մեր դուռ փակեց, չը գողցաւ: Գերման Փանդով կը կուռի: Սասնոյ Դաւիթ մկա սաղ եղնէր, մենք կ'երթինք մեր տուն: Խարուր հատ ջաղցի քար դնէր գլխուն ու ման կուգար: Ինկլիզ ծովի պռունգ կռիւ կէնի: Քրդեր հային «Փլա» կ'ասեն, Ռուսին «քաֆիր», ջրուն կ'ըսեն «ալ», խացին՝ «նան»: Ես որ պարոն բժիշկ եղնիմ, կ'երթամ կռիւ, Քրդեր զմմէն սպանիմ: Ինչի՞ Էնոնք մեր Խայեր սպանեն, մեր տներ նաւթ ածեն, որ այրեն: Պուճոտ տղաներ ոտներ կը

բունեն, կը ճղեն, նոր կը թալնեն կրակի մէջ: Կ'երթամ
թոփով, թւանդով, խանջլով կը սպանեմ: Թեւ կը քը-
ցեմ իմ մէջ, երկու խանջալ կը կապեմ: Թոփին վրէն
Գերմանը կրակ ու խունկ կը դնէ, կը զարկի, զմէն
կը կոտորի: Իմ մէր, որ սպանեցին, չգիտեմ էլ ինչ
եղաւ: Ինչի՞ որբանոցի Միսակ, Ջիւան ինձի կ'ըսեն՝
«Թոփալ»: Ես էլ էնոնց կ'ըսեմ՝ «Ճաղար»: Ինձ չորս
խատ շաքար տուեցին ոռու սալդաթներ: Պարոն Ար-
չակին կը զուրցեն, կ'ըսեն՝ «լաւաչ եստ... խլիբ եստ...»
Շաքարին Ռուսները կ'ըսեն «սախար...» Ռուսները ին-
ձի կ'ըսեն.

— Կո՞ւլտ, արմեա՞ն:

Կ'ըսեմ. Արմեա՛ն:

Ես կ'ուզի Ռուսներուն քով մնամ, լա՛ւ են էնոնք:
Ես Բրդերուն մէջ քրդերէն երգ սովորեցի: Դրենք կ'ու-
տեն մածուն, կերակուր, ինձի կուտային ցամաք խաց:
Կ'ուզե՞ս քրդերէն երգ ասեմ.

— Դլօ, դլօ, մավա բարէ շէվուտէ,

Բաբու բուրա գենուն գուշտնա,

Թալանէ բարէ բրնա:

Եանի կասա՛

— Դլօ, դլօ իմ խօր տուն վառեցին,

Իմ աղպրտիք սպանեցին,

Իմ խօր տուն թալանեցին:

Ձեմ գիտեր քանի տարեկան իմ: Էջմիածին սալ-
թատներուն հետ ոռուներէն զրուցի, էնոնք ինձի փարա
տուին, կորսուաւ: Էնտեղ օրիորդ Արփենիկ պսակուաւ:

Էլ չեմ ուզիլ խօսալ: Իմ ոտներ դմբրաւ...

Ասաց նա ու վազեց իր խաղընկերների մօտ:

Աշտարակ, 1916:

ՎԱՆ

ՍԻՐՎԱՐԳ

Ծնուել է 1904 թ. Վան քաղաքում : Հայրը հաց-
թուխ էր, որի փուռը գտնուում էր շուկայի մէջ : Մի
գեղեցկադէմ եւ վայելուչ աղջիկ է, նկարչութեան շը-
նորհք ունի : Գտնուում է Մոսկուայի Հայոց Կոմիտէի
Աշտարակի Բ. որբանոցում :

Ընտանիքի անդամները՝ Խաչատուր, հայրը : Ա-
ղանի, մայրը : Խոսրով, եղբայրը 15 տարեկան : Սիր-
վարդ, ինքը, 11 տարեկան : Նուարդ, քոյրը 3 տարեկան :

Ես թուրք շատ քիչ էի տեսել : Մեր տունը հայկա-
կան թաղումն էր : Մեր փողոցով նրանք ոչ գալիս ոչ
էլ անցնում էին : Մի օր լսեցի հրացանաձգութեան
ձայներ : Հայրիկս վերցրեց հրացանն ու դուրս եկաւ :
Գիշերը հրացանաձգութիւնը դադարեց : Հետեւեալ ա-
ռաւօտուանից նորից սկսուեց եւ այդպէս շարունակուեց
երեսուն օր : Հայրիկս օր ու մէջ առնում էր հրացանը
եւ գնում նշանակուած դիրքը, որ թուրքերի դէմ պաշա-
պանուին : Մի անգամ գնում էր ցերեկը, միւս անգամ
գիշերը : Մի անգամ էլ հայրիկս ուրախ ուրախ տուն
եկաւ եւ ասաց .

— Կնիկ, աչքդ լոյս, թուրքերը փախան :

Այդ օրը հրացանաձգութիւն չեղաւ :

— Թէ որ նոր ուժերով չգան, կասկածանքով ասաց
մայրս :

— Ի՞նչ պիտի անեն, հայ կամաւորներն ու ոռու
գինուորները հիմա կը մտնեն քաղաք : Ել, ընդառաջ
գնան :

Մայրս ուրախութիւնից ծափ տուեց եւ հօրս հետ
դուրս եկան փողոց : Մեզ չթողին որ դուրս գանք :

Հետեւեալ օրը Սոսրովի հետ ելանք նորաչէն եկեղեցու հրապարակը հայ կամաւորներին տեսնելու: Նըրանք խումբ խումբ անցնում էին փողոցներով, խանութների առաջին կանգնում, ապրանքներ էին գընում: Ես շատ էի ուզում տեսնել եւ այն դիրքը, որտեղից հայրիկս կուիւ էր մղում Թուրքերի դէմ: Սոսրովը բռնեց իմ կռնից եւ մենք գնացինք տեսնելու:

Կռուի ժամանակ շրջակայ գիւղերից բազմաթիւ հայ կանայք եւ երեխաներ էին թափուել Վան եւ պատըսպարուել Հայերի ընտանիքներում: Երկու կին եւ չորս երեխայ էլ հայրիկս էր վերցրել պահելու: Նրանք հետները ոչինչ էին բերել: Ճաշում եւ ընթրում էին մեզ հետ ու ապրում մեր սենեակում: Երբ Թուրքերը փախան, նրանք մեզ շնորհակալ եղան ու գնացին իրենց գիւղը:

Բայց մեր ուրախութիւնն ու հանդիստը երկար չը տեւեց: Մի օր դիրքերում կռուող տղաները միանգամայն անսպասելի կերպով սկսեցին փողոցից փողոց անցնել եւ յայտարարել, թէ պիտի գաղթենք: Մեզ յայտնեց իմ քեռու տղան, բայց հայրիկս նրան չհաւատաց:

— Աստուած է վկայ, պարոն Արամի բերանէն ես ականջովս լսեցի, երգուեց նա:

Օրը մթնեց եւ մենք տարակուսանքով պառկեցինք քնելու, թէ մի գուցէ սուտ լինի: Առաւօտեան կանուխ, երբ արթնցանք, զարգանդեցինք: Փողոցները լիքը մարդիկ, սայլեր, տաւարներ, հեռանում էին քաղաքից: Այդ որ տեսաւ հայրիկս նոր միայն սկսեց պատրաստուել: Մենք ոչ մի կենդանի չունէինք: Հայրիկս ուղեց գոնէ մի հորթ առնի բարձելու համար, բայց չգտաւ: Նա վերցրեց մի ալիւրի տոպրակ, լցրեց հացով ու կա-

պեց մէջքին : Մայրիկս շալակեց Նուարդին , իսկ Խոսրովը վերցրեց մի վերմակ եւ մի մի ձեռք տակի շոր : Տունը թողինք այնպէս , ինչպէս կար : Հայրիկս ենթադրում էր , որ կէս ճանապարհից կը վերադառնանք : Նա փակեց դուռը , բանալին դրեց գրպանը ու , իմ ձեռքից բռնելով , առաջ ընկաւ : Միայն հայրս շատ անհանգիստ էր , որ քեռիս իր կնոջ հիւանդութեան պատճառով մնաց քաղաքում : Արեւը նոր էր ծագում , երբ մենք դուրս եկանք քաղաքից : Հազարաւոր մարդիկ սայլերով , տաւարով , կին ու երեխաներով լցրել էին ճանապարհը : Ես կեանքումս առաջին անգամն էի տեսնում այդքան մարդ : Երբ կէս օր եղաւ , մենք կանգ առանք մի առուակի մօտ , ճաշեցինք եւ նորից ճանապարհ ընկանք : Իրիկնադէմին ես բեզարեցի եւ այլեւս չէի ուզում քայլել :

— Տես քո հասակակիցները ինչպէ՞ս են վազում , սասց մայրս : Ամաչիր գոնէ նրանցից : Այստեղ մնալով ի՞նչ պիտի անես :

Ուրախացայ , երբ օրը մթնեց եւ մեզ դադար տուին : Ես անմիջապէս գլուխս դրի հացի տոպրակին ու քնեցի : Արեւը դեռ չէր ծագել , երբ մայրս մեզ արթնացրեց : Խոսրովի հետ գնացինք առուակի ափը , երեսներս լուացինք : Երբ եկանք , հայրիկս հաց էր պատրաստել մեզ համար , կերանք եւ ոտքի կանգնեցինք : Ոչ թէյ կար , որ խմէինք եւ ոչ էլ տաք կերակուր , որ ուտէինք : Եւ այդպէս գնացինք՝ չգիտեմ քանի օր , քանի դիշեր : Օրը մթնելու վրայ էր երբ հասանք Բերկրիի մօտերը եւ պատրաստուեցինք քնելու : Յանկարծ կամաւորները անհանգիստ դէս ու դէն վազեցին եւ մեզ զգուշացրին , թէ փախէք , Քրդերը յարձակւում են մեզ վրայ : Հեռուից լսուեցին հրացանների խուլ որոտներ : Ամէնքը ոտքի կանգնեցին եւ ով ինչպէս կարող էր փախուստի դիմեց :

Կանայք կոծ ու շիւանով վազում եւ իրենց երեխաների-
անուններն էին տալիս : Մարդիկ թողնում էին իրենց
սայլերն ու կենդանիները , թափում մէջքերի բեռները
եւ գլուխները կորցրած սարերն ընկնում : Խոսարովը
բռնել էր մօրս փեշից , մայրիկս շալակած Նուարդին ,
իմ ձեռքից , եւ մենք այդպէս շղթայուած վազում էինք
հայրիկի յետեւից : Իմ ոտներն այլեւս չէին քայլում ,
միայն դզում էի , որ մօրս ուժեղ թեւը քաշ էր տալիս
մարմինս իր ետեւից :

— Զվախենաք , ձեր հոգուն մեռնեմ , չվախենաք ,
դողդոջուն ձայնով անդադար կրկնում էր մայրիկը :

— Իրարու պինդ բռնէք , մարդ չկորցնենք , խիստ
խիստ եւ հրամայական կրկնում էր հայրիկը :

Եւ այդպէս վաղեցիինք երկու ժամ : Մեր շունչը հա-
տել էր , մեր ոտները թմրել : Երբ մէկ էլ կանգ առանք
այլեւս հրացանի ձայներ չէին դալիս : Միայն լսում
էր Բանդի—Մահի գետի խուլ վշշոցը : Մայրս նստեց եւ
մենք գլուխներս դրինք նրա ծնկներին : Նա ձեռքով շո-
յեց իմ գլուխը եւ ես անմիջապէս քնեցի : Առաւօտեան
վաղ , երբ արթնացայ , մայրիկս կրկին նստած էր ,
նրա աչքերը կարմրել էին եւ երեւում էր , որ ողջ գիշերը
անքուն լաց էր եղել :

— Մայրիկ էլի՞ վախ կայ , հարցրի նրան :

— Ոչ , զաւակս , ի՞նչ վախ պիտի լինի , ամէն ինչ
անցաւ :


— Հապա ինչո՞ւ ես լաց եղել , հարցրի նորից :

— Քեզ այդպէս է թւում , ես լաց չեմ եղել , ասաց
նա :

Ես լռեցի եւ ցոյց տուի՝ իբր հաւատացի մօրս խօս-
քերին , թէ եւ տեսայ , թէ ինչպէս նա թեւով սրբեց աչ-
քերը : Լոյսը ծագել էր , բայց ոչ ոք տեղից չէր շարժ-

ւում : Ամէնքը վարանման մէջ գիշերուայ դէպքերից էին խօսում : Նրանք պատմում էին , որ Քրդերի յարձակումից ինչքան մարդ է սպանուել եւ թէ ինչքան կին ու աղջիկ իրենց նետել են Բանդի-Մահի յորձանքների մէջ :

Կրկին չգլտեմ , քանի՞ օր ղնացինք , բայց երբ միանգամ էլ հանդիստ առանք , ասացին ; որ հասել ենք Իզդիր և այլևս առողջ չենք գնալու : Այդտեղ մի խումբ այգեստանցիների հետ իջեւանեցինք մի պարտէզի մէջ : Մեր ազգականներին ու դրացիներին կորցրել էինք Բերկրի իրարանցման ժամանակ : Իմ երեսը արեւից այ-



ՎԵՐԱԾՆՈՒՆԻ

Ֆրանսայէն հայրենագարձ կռփամարտիկ Տագէս Օհանեան

բուել ու ճաքճքել էր , իսկ մայրիկը իրեն վատ էր ըզգում : Այդ գիշեր նա տաքացրեց : Բացօդեայ էլինք ապրում , մեր բաղդից անձրեւը չեկաւ : Մեր մի հատիկ վերմակը հայրիկը առաւ , մայրիկին փաթաթեց մէջ , սառկեցրեց ու ինք էլ նստեց կողքին : Մայրիկը խորը տնքում էր :

Առաւօտեան երբ արթնացայ եւ տեսայ , թէ հայրիկը ինչպէ՛ս տխուր ու անխօս նստած է մօրս գլխա-

վերեւը, տրտմեցի եւ գլուխս թաղելով մօրս վերմակի մէջ, առաջին անգամ դառն եւ անօդնական լացի:

Մայրիկս ձեռքը հանեց վերմակի տակից եւ իր տաք մատներով շոյեց իմ ծոծրակը: Ես երանի տուի Նըւարդին, որ ոչինչ չէր հասկանում եւ իր համար խաղ էր անում:

Մի շաբաթ յետոյ հայրիկս մի սայլ վարձեց, թէ պլտի երթանք Էջմիածին, այստեղ բժիշկ չկայ եւ ջուրըն էլ մօրս չի գալիս: Մինչ այդ մեր հացն էլ վերջացել էր: Մենք մի երկու օր տեղական փռից հաց առանք իսկ յետոյ երկու պարոն ամէն օր բերում եւ մեզ հաց էին բաժանում: Բայց ես մեր տան անուշ լաւաշներից յետոյ չէի կարողանում այդ հացը ուտել: Աւելի շուտ տաքացրած խմոր էր դա, քան թէ հաց: Սկանք Էջմիածին եւ վեր եկանք եկեղեցու բակում, արեւի տակ: Մայրիկին կրկին փաթաթեցինք վերմակի մէջ եւ պառկեցրինք: Մի բժիշկ եկաւ, դեղ տուեց եւ մայրիկս ըսկսեց լաւանալ: Հենց որ նա ոտքի կանգնեց, հիւանդացաւ հայրիկս: Եկաւ նոյն բժիշկը, ցոյց տուինք հայրիկիս, բայց նա փոխանակ դեղ տալու՝ հրամայեց ծառայողներին, որ նրան հիւանդանոց տանեն: Մի կռօք բերին, հայրիկիս պառկեցրին մէջն ու տարան: Հէնց որ հայրիկիս տարան, կրկին պառկեց մայրիկս: Ես Նուարդին էի պահում, իսկ Խոսրովը միշտ գնում էր հիւանդանոց եւ հայրիկից լուր բերում: Երեք օրից յետոյ Խոսրովը իր ժամանակին գնաց հիւանդանոց, բայց սովորականից շուտ վերադարձաւ: Մայրիկս շատ վախեցաւ եւ հարցրեց.

— Ինչո՞ւ այդպէս շուտ եկար:

Խոսրովի լեզուն կարծես պապանձուեւ էր: Սկզբում

լուեց, ապա սկսեց հեկեկալ: Հայրիկս մեռել էր...

Մայրիկս վերմակի տակ գիշեր-ցերեկ լալիս էր: Նրան ձայնակցում էինք մի կողմից՝ ես, միւս կողմից՝ Խոսրովը: Եւ այդպէս մի շաբաթ:

Մի գիշեր ցուրտ արաւ եւ մենք տաքանալու համար մտանք մայրիկի վերմակի տակ: Առաւօտեան երբ արթնացանք, տեսանք մայրիկը սառել էր: Մենք գրկեցինք նրա գլուխը, լաց եղանք եւ բարձր ձայնով կանչեցինք.

— Մայրի՛կ...

Նա մեզ պատասխան չտուեց: Մի ժամից յետոյ երկու պարոն եկան, մայրիկին դրին նոյն կառքի մէջ ու տարան: Եւ մենք, երկու քոյր ու մի եղբայր, զըրկեցինք միմեանց, կուչ եկանք եկեղեցու սլատի տակ ու դառը դառը լացինք:

Այդ օրից մենք եղանք որբ:

Աշտարակ, 30 Նոյեմբեր 1916

Խ Ն Ո Ւ Ս

Ա Ր Մ Ե Ն Ա Կ

Ծնուել է 1901 թ. Խնուսի Ղարաքէօփրիւ գիւղում: Ղարաքէօփրին ունէր 300 հայ, 12 քուրդ եւ թուրք տուն: Արմենակը գտնուում է Էջմիածնի Ա. որբանո-

ցում : Հայրը պարապում էր հողադործութեամբ : Ունէր 12 արտ , 6 դոմէշ , 7 եղ , 100 ոչխար , 200 մեղրի վեթակ :

Ընտանիքի անդամները . Բաղդասար , հայրը : Ադէ , մայրը : Սանազ , քոյրը , 18 տար . ամուսնացած : Արմենակ , ինքը 15 տար . Զաքար , եղբայրը՝ 11 տարեկան :

Սրտատրոփի եւ անհամբեր սպասում էինք այն երանելի օրին , երբ Ռուսը պիտի դար եւ մեզ աղատէր տաճկական լծից : Մեր այդ սպասումը դադարեց չէր թուրքերի համար : Բայց շնայած դրան մեր եւ թուրքերի արտաքին յարաբերութիւնները չէին խզուած : Սկզբի 2-3 ամիսները մեր շրջանում ոչ մի բռնութիւն չեղաւ , ոչ թալան եւ ոչ էլ սպանութիւն :

Բայց շուտով թուրքերը սկսեցին թեր եւ դէմ խօսել : Նրանք մեր երեսովն էին տալիս , որ Անդրանիկը հաւաքել է Տաճկահայերին , խումբ կազմել , միացել Ռուսներին եւ իրենց դէմ դուրս եկել : Դրան մենք առարկում էինք , թէ դա Ռուսահայերի դործն է : Նրանք միայն զօրք են տուել Ռուսին , ինչպէս ամէն մի հպատակ , որ հաւատարիմ է իր տէրութեանը :

Նրանք մեզ պատասխանում էին , թէ Ռուսահայերը ի՞նչ զիտեն քրդերէն , թէ դիրքերից յաճախ լսում ենք ինչպէս դէպի մեզ պոռում են քրդերէն խօսքերով .

— Քա՞ղ էք , կռուեցէք , ո՞ւր էք փախչում :

Կռուի առաջին 3-4 ամիսն անցնելուց յետոյ՝ համիդեանները եւս , որ մինչ այդ լաւ էին վարում մեզ հետ , փոխեցին իրենց վերաբերմունքը : Երբ մենք չլաւարած հարցնում էինք դրա պատճառը , նրանք էլ նոյն պատասխանն էին տալիս .

— Դուք ապերախտ ազգ էք. մեր հողում ապրում էք, մեր հացը ուտում եւ Ռուսի կողմը պահում :

Երբ մենք փորձում էինք առարկել, նրանք իսկոյն կտրում էին մեր խօսքը, ասելով .

— Ի զուր էք ուզում արդարանալ : Մենք ռուսական դիրքերի վրայ նոյն իսկ ծանօթ Հայեր ենք տեսել, որոնք մեր անուաները տալով, հայհոյում են մեզ քըր-դերէն եւ թուրքերէն :

Այդ ասելով նրանք մեզ ծեծում էին, մեր տաւարները քշում, տանում : Մեր տնից ութ ոչխար տարան : Երբեմն էլ լսում էինք, որ մտնում են տները, գեղեցիկ հարս կամ աղջիկ պատահելիս բռնի ուժով տանում եւ գիշերները պահում իրենց մօտ :

Այդ լուրերը հասնում էին մեր գիւղից զինուոր գնացած երիտասարդներին, որոնց դրուժիւնը, ինչպէս լսեցինք, այնքան էլ նախանձելի չէր զօրաբանակում : Նրանցից ոմանք ձգում էին զէնքերը, ոմանք զէնքը ձեռքերնին փախչում, գալիս գիւղը, իրենց գոյքն ու ընտանեկան պատիւը պաշտպանելու : Քիչ չէր փախըստականների թիւը եւ Քրդերի մէջ : Մեր գիւղում 15ից աւելի փախստական հայ զինուոր կար : Կային այնպիսիները, որոնք անցել էին Ռուսների կողմը : Շուտով Ալաշկերտի հովտից երեւացին քուրդ գաղթականները : Կառավարութիւնը նրանց բնակեցրեց գիւղերում : Մեր գիւղին բաժին ընկաւ 20 ընտանիք իրենց տաւարով : Մի ընտանիք էլ մեզ տուին պահելու : Նրանց համար յատկացրինք առանձին սենեակ : Հացը տալիս էր կառավարութիւնը :

Մեզ մօտ գաղթած Քրդերը շարունակ կրկնում էին

մեր երեսին, թէ Հայերը Ալաշկերտում մեր մալերը տարան, դրա վրէժը մենք այստեղ ձեզանից պիտի առնենք: — Ա՛յ տեսէք, հիմակուանից ձեզ զգուշացնում ենք, կեղծ բարեկամութեան դիմակի տակ ասում էին մեզ:

Համբարձման օրերին լուր եկաւ, որ Ռուսները մօտենում են Խնուսին: Մեր շրջանի մուհաջիրները թողին, փախան Տիգրանակերտի կողմերը, իսկ մեր գիւղի մահմեդականները մնացին իրենց տեղը: Ճիշտ Համբարձման օրը զինուծ Քրդերը շրջապատեցին մեր գիւղը:

Մեր գիւղի երիտասարդները ղէնքերն առան խումբ կազմեցին եւ դուրս եկան նրանց դիմադրելու: Քրդերը թողին, փախան: Այդ ժամանակ միջամտեցին մեր գիւղի Քրդերը, թէ ի գուր ղէնքի դիմեցիք, աւելի լաւ կը լինէր, եթէ ձեր տաւարը սայլիք եւ նրանց սիրաչահէիք, թէ ոչ ահա դալիս են կառավարութեան զօրքերը, որոնք ձեզ բողբոխը սրի անց կը կացնեն: Քանի ուշ չէ բերէք ձեր տաւարը եւ դրանով փրկեցէք ձեր կեանքը:

Ազդեցիկ գիւղացիները հաւաքուեցին ոչսի մօտ խօսեցին, վիճեցին: Մի մասը կողմնակից էր զինուած դիմադրութեան, միւս մասը՝ խաղաղ հաշտութեան:

Հայրիկս զինուած դիմադրութեան կողմնակից էր, բայց առաւուտեան երբ արթնցանք, տեսանք, որ հաշտութեան կողմնակիցները տաւարներն առաջները առած դնում են հարեւան Քրդերի գիւղերը, իրենց ծանօթ «քիրվա»ների մօտ պատսպարուելու:

— Դէ՛, էլ ժամանակ կորցնելն աւելորդ է, ասաց հայրիկս, պատրաստութիւն տեսէք՝ ճամբայ ընկնենք:

Մի հոր փորեցինք, մեր տան արժէքաւոր իրերը թաղեցինք մէջը, կանչեցինք մեր հարեւան քուրդ Խաս-

մի Հաջիին ու տեղը ցոյց տալով ասացինք.

— Հաջի, թէ մեզ կոտորեցին, այս ապրանքները քեզ լինի, իսկ թէ կենդանի մնացինք եւ թալանուեցինք, յոյս ունենք, որ մեր միասին կերած աղ ու հացը չես մոռանայ :

Վերցրինք մեզ հետ մի—մի ձեռք անկողին, հաց, մի բեռ ալիւր եւ մեր ամբողջ տաւարը :

— Ծօ կնիկ, ասաց հայրս, արի մի անգամ էլ նայինք մեր տունը, ո՞վ գիտէ, էլ չենք տեսնի :

Նրանք մտան տուն, մենք էլ նրանց յետեւից : Մի բոպէ լուռ նայեցինք չորս պատերին : Երբ աչքս ձգեցի հայրիկի եւ մայրիկի աչքերին, տեսայ ինչպէս նրանց այտերի վրայից դլորուեցին արտասուքի կաթիլները : Այդպէս տխուր ու տրտում թողինք մեր հայրենի տունը եւ դնացինք մօտակայ Եօնջալու քրդի գիւղը եւ իջեւանեցինք մեր հին ծանօթ Մհէի մօտ : Մհէն սիրով ընդունեց մեզ եւ տեղաւորեց մեր տաւարը : Հետեւեալ առաւօտ հայրս, մայրս եւ ես վճռեցինք գնալ մեր գիւղը, մի քանի անհրաժեշտ իրեղէններ էլ վերցնելու : Հեռուից տեսանք մեր գիւղը շրջապատուած : Հայրս վերադարձաւ, իսկ ես եւ մայրս մտանք գիւղ, ենթադրելով որ մեզ ձեռք չեն տայ : Գիւղը մտանք ու բացինք մեր տունը եւ ամէն ինչ գտանք այնպէս, ինչպէս թողել էինք : Մտածում էինք, ի՞նչ անենք փեթակները : Այդ բոպէին արտասուքը աչքերին, հեւ ի հեւ դէպի մեզ վազեց Միսակ հօրեղբօրս կինը, Ջիչակը, մօրս գիրկն ընկաւ ու հեծկլտաց .

— Վա՛խ, Ադէ, Գէորգին զարկին :

Գէորգն իմ միւս հօրեղբայրն էր : Դանդաղելն այլեւս վտանգաւոր էր : Կրկին փակեցինք դուռը եւ փախանք Եօնջալու՝ հայրիկիս լուր տանելու : Երբ գիւղը

հասանք, տեսանք, որ մի խումբ Քրդեր քշում են մեր տաւարը: Մհէն անօգնական վեր էր քաշում ուսերը կրկնելով.

— Էսպէս էլ բան կը լինի՞, ես ի՞նչ անեմ:

Մի քրդի լակոտ մեր ջալ եզը առաջն արած քշում էր: Դա իմ սիրած եզն էր: Արիւնը տուեց զլուխս, վազեցի առայ քրդի լակոտի ձեռքից ճպոտը ու եզան դըլուխը շուռ տուի: Նա յարձակուեց վրաս, ես բռնեցի նրա կոկորդից եւ խեղդում էի, երբ միջամտեց Մհէն եւ մեզ զատեց: Եզը մնաց ինձ:

Հենց որ տաւարը քշեցին, երեւացին զինուած Քրդերի նոր խմբեր եւ ասացին, թէ Հայերին այս գիւղում զօրքի կողմից վտանգ է սպասում, մենք պիտի տանենք պաշտպանելու:

Գիւղում որքան Հայ կար դուրս հանեցին եւ տարան մեր գիւղի մօտով Մազրա ձորը: Այդ գիշեր մենք քնեցինք այդ ձորի մէջ, բացօդեայ: Այդտեղ մենք ըզգացինք, որ հասել է մեր վերջին օրը: Ոչ ոքի աչքին քուն չէր պալիս: Հայրս արտասուքը աչքերին ծունկ չոքում էր եւ «Աստուա՛ծ» կանչում, ապա վեր կենում ու շուարած ինձ դիմում.

— Զաւակս, ի՞նչ անենք որ ազատուենք: Ա՛խ ինչո՞ւ մեր գիւղից դուրս եկանք:

Մեզ հետ կային մեր գիւղից մի քանի Քուրդ, որոնք իբր թէ մեր պահապաններն էին: Առաւօտեան նրանցից երկու հոգի ձիով գնացին մեր գիւղը եւ վերադառնալով մեզ յայտնեցին, թէ գայմազամը հրամայել է, որ մի Հայի քիթ չպիտի արնի: Դրա համար նա զօրք է ուղարկում, որ ձեզ պաշտպանեն: Իսկ գաղթի ժամանակ ձեր կրած վնասները կառավարութիւնը պիտի հատուցանէ:

Société des Nations

Commission pour la protection des femmes
et des enfants dans le Proche-Orient

ALEP, Syrie

N. O. No 585

League of Nations

Commission for protection of women and
children in the Near East

ALEPPO, Syria

N. O. No 585

Certificat: -

La soussignée, Karan Jappa, Coordonnatrice de la
Société des Nations, à Alep, chargée de la Commission pour
la protection des femmes et des enfants dans le Proche-Orient
certifie que Youssef Sakar, Turcien est employé à la dite
Commission en qualité d'Agent pour la ville de Der-el-Zor.

Alep, le 1 Juin 1927.

Karan Jappa
Karan Jappa



Մի փոքր հանգստացանք եւ ճանապարհուեցինք Գոռման գիւղը, որի ազգաբնակութեան կէսը հայ էր, կէսը՝ քուրդ: Այնտեղի Հայերը մեզ դիմաւորեցին եւ տեղ տուին: Գիւղի բէկը, Շահօ-Պալօն, կանչեց մեր մեծերին եւ ասաց .

— Եթէ կ'ուզէք միանգամայն ապահով մնալ ամէն փորձանքից, տուէք ինձ 800 ոսկի եւ ես կը լինեմ ձեր պաշտպանն ու հովանաւորը: Շահօ-Պալօն շրջանի ազգեցիկ բէզն էր: Մեր մեծերը 800 ոսկի ժողովեցին եւ տարան բէզին: Բէզը նրանց գրկաբաց ընդունեց եւ ի նշան մտերմութեան մի խնջոյք սարքեց եւ մեր մեծերին ամբողջ գիշերը պահեց մօտը, որ հիւրասիրի: Առաւօտեան հայրս արթնացրեց ինձ ու ասաց .

— Տղայ, վեր, լաւ հոտ չեմ առնում, Քրդերը մեզ շրջապատել են:

Մենք իջեւանել էինք գիւղի ծայրի տունը: Ելանք գնացինք գիւղի միջին թաղը եւ փակուեցինք մի սենեակում ու դռան նիւղը քաշեցինք: 15 տղամարդ եւ 20 կին ու երեխայ էինք: Քիչ անցած դրսից լսեցինք հըրացանի ձայներ: Մենք լուռ, ծպտուն չհանեցինք: Հարուածները քանի գնում սաստկանում էին:

— Տղա՛յ, եկ աղջկայ շոր հագցնեմ, շնջաց մայրս իմ ականջին:

Յանկարծ դրան շեմքը շարժուեց, շրջանակները ի-

<----->

Հայերու ճամարիտ բարեկամ եւ անձնուէր Դանիացի Քարէն Եփէի յանձնարարագիրը, ուր ըսուած է. — «Ստորագրեալս, Քարէն Եփէ, Հալէպի մէջ Ազգերու Դաշնակցութեան Կոմիտէի եւ փոխանորդ՝ Մերձաւոր Արեւելքի Հայ Կիներու եւ Երախաներու Պաշտպան Յանձնախումբին, կը վկայեմ թէ Տէր-Ձօրի քաղաքին համար, նոյն Յանձնախումբին ներկայացուցիչ կարգուած է Տիկ. Սաթենիկ Թէրզեանը:»

Հալէպ, 1 Յունիս 1927:

րենց տեղից ելան եւ դուռը ահագին աղմուկով դետին ընկաւ: Լսուեցին հրացանի հարուածներ եւ սենեակը լցուեց ծխով, վառօղի բոցերը շլացրին իմ աչքերը եւ վառեցին երեսիս մորթին: Տեսայ ինչպէս մի քանի Գրդեր սենեակի մէջ ատրճանակները ձեռքերնին կրահոււմ էին տղամարդկանց վրայ: Կանայք եւ երեխաները դուրս սարդուեցին սենեակից: Նրանց մէջն էի ես: Մենք գնում էինք Շահօ-Խալօյի մօտ, որ մտաբերի մեր տուած 800 ոսկին եւ իր խոստումը:

Ճանապարհին տեսանք մեր դրացուն, որ փորից թափած աղիքները գրկած, չոքէչոք սողում էր, որ մի քրդի տուն մտնի: Նրա մօտ ընկած էր մի կտրուած դլուխ առանց մարմնի, որ շատ նման էր նրա որդու գլխին: Շահօ-Խալօյի դուռը բաց էր: Մենք ներս անցանք եւ մտանք մի սենեակ, որ լեփ լեցուն էր հայ կանանցով ու երեխաներով:

Նրա կողքին կար եւ մի ուրիշ սենեակ, որի դռան շեմքի տակից, փոքրիկ առուակի պէս, դէպի բակն էր հոսում կարմիր արիւնը:

Այդ սենեակի մէջ էին երէկ քէֆ արել Շահօ-Խալօյի կողմից հրաւիրուած մեր դիւղի մեծերը, որոնց յետոյ մորթել էին: Նայեցի շուրջս եւ տեսայ, որ ինձ հետ էր մեր ամբողջ ընտանիքը: Այդտեղ էր մայրս, Սանամը, Չաքարը: Չկար միայն հայրս:

— Նրթանք գտնենք, ասաց մայրս եւ ուզեց դուրս գալ սենեակից:

Մի պառաւ կին նրան կանգնեցրեց եւ ասաց, թէ ի գուր է, նա արդէն տեսել է հօրս դիակը: Մայրս բարձր ձայնով լաց եղաւ, որին ձայնակցեցինք եւ մենք:

— Ի՞նչ էք մտել եւ կռնչոցներդ ձգել աշխարհ: Ձայներդ կտրէք, թէ ոչ լաց լինողին այս ըոպէիս կը մորթեմ, ասաց մի Գուրդ ներս մտնելով:

— Կորէ՛ք, հեռացէ՛ք այստեղից, ասաց միւսը դաշիւնը ձեռքին :

Մեր միջին կային մի քանի տղամարդիկ : Նրանց վիզը մեր աչքի առաջ կտրեցին : Ապա գեղեցիկ աղջիկներին ու հարսներին մի կողմ արին ու մնացածներին դուրս վռնտեցին : Ինձ չի ճանաչեցին եւ իբրեւ աղջիկ բաց թողին : Փողոցներում վխտում էին քրդի լամուկները, որոնք շրջապատում էին կանանց եւ հագի շորերը հանում : Մէկը դրանցից դաշոյնը մերկացրած մօտեցաւ ինձ, որ իմ շորերն էլ հանի : Մայրս առաջ ընկաւ եւ ուղեց արգիլել, բայց նա դաշոյնի տափակ կողմով խփեց մօրս գլխին : Հեռացաւ միայն այն ժամանակ, երբ մայրս համաձայնուեց իր շորերը տալ : Մենք վճռեցինք, լաւ թէ վատ, վերադառնալ մեր գիւղը : Հազիւ էինք դուրս եկել Վիւզից, երբ մեզ վրայ արշաւեց ձիաւորների մի խումբ : Նոր սարսափներ չի տեսնելու համար շատ հարսներ ու աղջիկներ իրենց նետեցին Խնուս գետի վարարած յորձանքների մէջ, շատերն էլ ընկան յետեւից արձակուած գնդակներից : Մեր ընտանիքից, բազդի բերմամբ, նոր զոհ չտուինք : Մենք դիմեցինք մեր ծանօթ Խսամի Հաջիենց տունը : Հաջին մեզ սիրով ընդունեց, ինձ էլ ճանաչեց աղջկայ շորերի մէջ, բայց խօսք չասաց : Միայն մենք տեսանք, որ մեր տան հորի մէջ թաքցրած բոլոր իրերը, աւելի շուտ քան մենք պայմանաւորուել էինք, փոխադրուած էին մեր այդ լաւ բարեկամի տունը : Բայց մայրս դրանց հոգսը չէր քաշում : Մի բան էլ աւելի կը տար, միայն Գուրդը ասպհովէր մեր կեանքը :

— Ձեմ կարող, ուսերը վեր քաշելով եւ ներողամիտ ժպիտն երևին :...-ըց Խսամի Հաջին : Տէրութիւնից հրաման կայ, որ բոլոր Հայերին կոտորեն, իսկ այն Գուրդը, որ պատասպարի Հային, պիտի պատժուի :

Հետեւեալ առաւօտ Խասմի Հաջին նոյն ներողամիտ ժպիտն երեսին ասաց, թէ չգիտէ, ո՞ր տեղից մի Գուրդ իմացել է մեր տեղը եւ եկել է, որ մեզ տանի գայմագամի մօտ: Մենք ստիպուած էինք գնալ: Կարճ ժամանակից յետոյ գայմագամի մօտ հաւաքուեցին բազմաթիւ կանայք եւ երախաներ:

— Պիտի երթանք Խնուսայ բերդը, ասաց գայմագամը եւ մեզ առաջն առնելով ճանապարհ ընկաւ: Մեր մէջ կային մի քանի վիրաւոր տղամարդիկ: Այս անգամ ոչ այդ տղամարդկանց եւ ոչ էլ մեզ թոյլ չի տուեց որ սպանեն:

Կէս գիշերին մեր այդ տխուր թափօրը հասաւ Խընուս: Խնուսի Հայերին դեռ չէին կոտորել: Մեզ տեղաւորեցին դրանց տներում եւ օրը մի անգամ էլ հաց էին բերում: Երեք օրից յետոյ կառավարութիւնը Խընուսի տղամարդկանց հաւաքեց, որ տանի, իբր թէ էրզրում աշխատանքի, իսկ կանանց մասին ասացին, որ պիտի քշեն մի ինչ որ տեղ՝ Վերան—Շէհիր անունով: Բայց մենք գիտէինք, թէ ի՞նչ է նշանակում թրքական տեղահանութիւնը:

Երբ մեզ հաւաքած արդէն տանում էին, մայրս բռնեց մեր ձեռքից, պոկուեց ամբոխից եւ աննկատելի կերպով ներս սլուեց բաց դռնից մի թրքական տուն:

— Գեալընըս, գեալընըս, խղճաց մի ծերունի եւ մեր յետեւից փակեց դուռը: Մեզ շրջապատեցին այդ եւ հարեւան տներից հաւաքուած թուրք կանայք, հարց ու փորձ արին եւ ցաւակցեցին: Այդ տան մէջ մենք մընացինք մի ամիս: Իմ անունը դրին Շէֆկէթ, իսկ եղբորս Ջաքարի անունը՝ Հասան: Մայրս եւ քոյրս նրանց տան մեծ գործերն էին անում, իսկ մենք՝ փոքր: Յաճախ մեզ հարց ու փորձ էին անում թուրքերը եւ զանազան դատողութիւններ անում:

— Աւելի լաւ է Հայերը ապրեն, ասում էին ոմանք,

որովհետեւ նրանք էին կռիւ գնացող զօրքերին պահում , կերակրում : Հիմա որ նրանց կոտորեցին , մենք այդ լուծը ո՞նց տանենք :

— Եղածն անցել է : Ասում են , Ռուսներն էլ են գըրանցից երես թեքել եւ Կովկասի բոլոր Հայերին կոտորել են :

Մի օր գայմադամի ազգական մի թուրք ինձ տեսնելով ասաց ծերունի տան տիրոջս .

— Այս տղային ես շատ հաւանեցի , վաղն ուղարկիր ինձ մօտ , ես նրան կը թրքացնեմ եւ կ'որդեգրեմ :

Մայրս այդ որ իմացաւ , գիշերն առաւ մեզ ու փախաւ այդ ծերունի թուրքի տնից : Եկանք մի հայ գիւղ՝ Հարամիկ անունով : Դրա բնակիչներին կոտորել եւ տեղը բնակեցրել էին Ալաշկերտի հովտից գաղթած թուրքերին ու Քրդերին : Գիշերով մօտեցանք մի տան եւ բաղխեցինք դուռը :

— Ի սէր Աստծու , ասացինք , դուք մեզ պահէք , իսկ մենք ձեզ ձրի կը ծառայենք :

Համաձայնեցին ներս թողին : Առաւօտեան ինձ եւ եղբօրս ուղարկեցին հանդը , իսկ մօրս եւ քրոջս պահեցին տանը , որ մանր դործերը անեն :

Մի շաբթից յետոյ մայրս հիւանդացաւ : Այդ դուր չեկաւ մեզ պատսպարող թուրքին :

— Էդ էր պակաս , մըթմըթաց նա , հիմա էլ նստեմ , հիւանդ պահեմ : Ախպէր , որտեղից եկել էք , էնտեղ էլ գնացէք :

Մենք դուրս եկանք նրա տնից , բայց երկար չկարողացանք քայլել , որովհետեւ մայրս տաքացնում էր : Գիւղից ոչ հեռու մենք մտանք մի պարտէզ , մօրս փաթաթեցինք վերմակի մէջ եւ այնպէս գիշերեցինք : Առաւօտեան հէնց որ լոյսը բացուեց , տեսանք , որ Ալաշ-

կերտից չուող մի նոր պաղթականական խումբ դիւղի մօտ վրան է խփել: Նրանցից մի քանի հոգի մեզ նկատելով, իրենց քայլերը ուղղեցին դէպի մեզ:

Թաքնուեցէք մի թփի տակ, գոնէ դուք պրծնէք, ասաց մայրս ինձ ու Ջաքարին: Մենք հնազանդեցինք: Քրդերը մօտեցան մօրս, վերմակը վրայից առան, դէն չպրտեցին ու սկսեցին աքացիներ տալ ու կրկնել:

— Փարա տուր, փարա տուր:

Բայց ո՞րտեղից տար մայրս փողը: Այն ժամանակ Քրդերը սկսեցին մօրս փայտով ծեծել: Քոյրս, Սանամը, գրկած՝ մօրս հիւանդ մարմինը, իր մէջքն էր դէմ անում իջնող հարուածներին, որ մօրս չկալէն: Այդ որ տեսանք, էլ մեզ մօտ սիրտ չմնաց, որ համբերենք: Դուրս եկանք թփի տակից եւ Քրդերի վրայ յարձակուեցինք: Նրանցից երկու հոգի մեզ վրայ տուին, բռնեցին եւ ծեծելով մեր վրայի շորերը հանեցին: Մի երրորդը, էն էր ձեռքի մահակը քաշեց, որ գլխիս տայ, ես դուրս պրծայ, ընկայ կողքից հոսող առուն եւ այնտեղից մագլցելով դէպի մի թումբ, փախայ:

Ի՞նչ արին եղբօրս Ջաքարին, չիմացայ: Ես վաղեցի արտի միջով, մտայ առաջին հանդիպած ցորենի դէղի տակն ու թաք կացայ: Մինչեւ երեկոյ մնացի այդ դէղի տակ: Առուն ընկնելուց թրջել էր միակ հագուստս, շապիկս, եւ կպել մարմնիս: Պակասը լրացրեց անձրեւը, որ մութն ընկնելուց յետոյ, սկսեց տեղալ: Մի սարսուռ անցաւ մարմնովս, եւ իմ ատամները սկսեցին զըմբ-զըմբալ: Վճռեցի կրկին վերադառնալ Հարամիկ գիւղը, վաղեցի, որ տաքնամ: Երբ տաքացայ, զգացի սաստիկ քաղց: Ծեծեցի մի թուրքի դուռ, բաց արին:

— Ծառայ չէ՞ք ուզում, ձրի կը ծառայեմ, ասացի ես եւ կուչ եկայ դռան առաջին: Ինձ խղճացին եւ ըն-

դուռնեցին: Թրջած շապիկս հանեցին ու տուին մի հին վերարկու: Հայի էր: Երբ լուսացաւ, ուղարկեցին ինձ հնձի: Հանդում տեսայ, որ այդ Թուրքի տանը բացի ինձանից ուրիշ չորս հայ տղայ էլ կար: Կէսօրին գլուխս սկսեց ցաւել, եւ ես տաքացրի: Թէեւ հիւանդ էի, բայց առաջին հոգս էր գտնել մօրս, քրոջս եւ եղբօրս: Միւս կողմից էլ, քանի որ այդ Թուրքի մօտ շատ Հայ կար, չարժէր մնալ, որովհետեւ շուտ աչքի կ'ընկնէինք: Թողի եւ գնացի նախկին Թուրքի մօտ, որ մի շաբաթ մեզ հիւրընկալեց: Ես հարցրի մերոնց մասին: Նա ասաց որ մօրս գիւղի մօտ մի պարտիզում դանակոծել եւ սպանել են, իսկ քրոջս եւ եղբօրս մասին ոչինչ չգիտէր: Ես նստեցի եւ լացի մօրս մահը:

Գնացի մի ուրիշ տուն եւ առաջարկեցի իմ ձրի ծառայութիւնը: Ինձ ընդունեցին եւ տարան ախոռը ու դուռը վրաս փակեցին: Դրսից լսեցի մի պառաւ կնոջ ձայն, որ կապ էր պահանջում ինձ ախոռում խեղդելու համար: Այդ որ լսեցի, բարձրացայ լուսամուտը, այնտեղից ներքեւ ցատկեցի, փողոցը ելայ ու վազեցի: Դռան առաջին նստած էր մի զինուոր: Քրդերն այս ու այն կողմից ասացին.

— Զարկի՛ր, զարկի՛ր, Հայի տղայ է:

Բայց որովհետեւ զինուորը տաճիկ էր, քրդերէն ուշ գլխի ընկաւ եւ հրացան արձակեց յետեւիցս այն ժամանակ, երբ ես արդէն փողոցի ծայրումն էի: Հարամիկում մնալն այլեւս անհնար էր: Վճռեցի գնալ կըրկին իմ հայրենի գիւղը, Ղարաքեօփրի:

Աշնանային մի ցուրտ գիշեր էր: Մութ երկնքից սառցի հատիկները պէս մաղում էր անձրեւը: Փաթաթուած իմ հին վերարկուի մէջ, գլխիկոր ու լուռ, անցնում էի սարից դաշտ, դաշտից ձոր, հեռու մարդկային:

քնակավայրերից, ու մտածում էի մարդկանց եւ աշխարհի անարդարութեան վրայ: Մեր գիւղի մօտ ձորերի մէջ մի խուլ հեկեկանք գրաւեց իմ ուշադրութիւնը: Այս ուշ գիշերին, աշնանային այս ցուրտ գիշերին, հեռու ձորի մէջ ո՞վ պիտի ողբար, եթէ ոչ Հայր: Զեռքս դրի նրա ուսին եւ ասացի հայերէն.

— Վե՛ր կաց, եղբայր, լաց մի՛ լինի:

Յանկարծ երկու ձեռքեր ամուր փաթաթուեցին իմ վզին: Նայեցի՝ իմ հարազատ եղբայրն էր, Զաքարը:

— Ի՞նչ եղաւ մայրիկը, եղաւ իմ առաջին հարցը:

— Սպանեցին, ծեծի տակ սպանեցին, ասաց նա հեծկլտալով:

— Իսկ քոյրի՞կը: Քրդերը տարան...

Նստեցինք եւ երկու հոգով լաց եղանք: Տեսայ որ եղբայրս ամբողջ մարմնով դողում էր, որովհետեւ հագին շոր չկար: Անօթութիւնից ու յոգնածութիւնից ոտի վրայ չէր կարողանում կանգնել: Ես նրան առայ իմ շալակը ու ճանապարհ ընկայ դէպի մեր գիւղը: Նորից ծեծեցի Խասմի Հաջու դուռը, բայց այս անգամ մեր վաղեմի բարեկամը դուրս արաւ մեզ՝ ասելով.

— Զեռք քաչէք ինձնից ի սէր Ալլահի: Զէ՞ք տեսնում, որ կառավարութիւնը պատժում է նրան, ով Հայր տեղ է տալիս:

Ո՞ւմ մօտ գնայինք. ի՞նչ անէինք: Մեր գիւղը թալանել էին եւ տները տուել նոր եկած մուհաջիրներին: Մենք մտանք առաջին մուհաջիրի բակը: Նա մեզ ոչինչ չասաց եւ ընդունեց իբրեւ ծառայ: Մօտ մի ամիս մեզ պահեց: Իմ անունը այս անգամ դրին Մահմադ Ալի, իսկ եղբորս Զապարին՝ Ալիկօ: Աշնան վերջն էր, ու տելիք չկար, մեզ սկսեցին վատ պահել: Միւս կողմից է լսեցինք, որ դրանց նորից պիտի տեղահան անեն, որովհետեւ Ռուսների կողմից վտանգ կայ: Որպէսզի մեզ

էլ հետները չտանեն, մենք թողինք դրանց եւ հեռացանք: Այդ կողմերը կային չարքազի գիւղեր, որոնք Հայերին հովանաւորում ու սահում էին: Որոշեցինք գնալ այդ գիւղերից մէկը՝ Լափուղաղը եւ այնտեղ մի Չարքազի մօտ ծառայութեան մտնել: Լափուղաղում անսպասելի կերպով հանդիպեցինք հայրիկիս ծանօթ մի Չարքազի: Նա մեզ վերցրեց: Բայց որովհետեւ բացի մեզանից նա ուրիշ երեք հոգու էլ էր սլատսպարել, վախեցաւ մի դուցէ կառավարութեան ուշքը վրաէ եւ որոշեց ելբօրս, Չարքարին ուղարկել մի ուրիշ չարքազի գիւղ՝ Խօլի-Մախսուտ:

Մեր ամբողջ ընտանիքից երկու եղբայր էինք մնացել, այն էլ բաժանում էին: Մենք գրկեցինք միմեանց, ասացինք «գուցէ վերջին անգամն է», համբուրուեցինք եւ լաց եղանք: Եղբայրս գնաց, եւ ես այդ Չարքազի մօտ մնացի մի ամիս: Եկաւ ձմեռ եւ ձիւնը նստեց: Մի օր հեռուից լսեցինք թնթանօթների որոտներ: Աւացին, որ Ռուսներն են մօտեցել: Գիւղացիք սլատրաստուեցին, որ գոչեն Տիգրանակերտի կողմերը: Իմ աղան տեղիցը չէր շարժւում, ենթադրելով, որ Ռուսը շուտով կը նահանջի: Բայց աղաս սխալւում էր: Հետեւեալ օրը գիւղի տակովն անցաւ ոռուսական մի զօրախումբ: Այդ օրը մենք ահի մէջ անց կացրինք: Կասկածեցինք, թէ մի դուցէ սրանք մեզ կոտորեն, յետոյ վախչեն: Հայեր այստեղ շատ կային, հարկաւոր էր դրանց ազատել: Նստեցի իմ ընկերոջ՝ Բարնասեցի Միսակ Մխօյեանի հետ խորհուրդ արի, որ դնանք եւ Ռուսներին մեր մասին լուր տանք: Այդպէս էլ արինք: Հետեւեալ առաւօտ երկուսով անցանք գիւղի սահմանը: Թուրք սահակները մեզ նկատեցին, բայց հրացան չարձակեցին՝ Ռուսների ուշադրութիւնը չգրաւելու համար:

Երկու ժամից յետոյ մենք հասանք Ռուսների մօտ :

— Կո՛ւրդ, արմեա՞ն, հարցրին Ռուսները :

— Արմեան, պատասխանեցինք մենք :

Եկան երկու հայ զինուոր եւ սկսեցին հարց ու փորձը : Մենք պատմեցինք՝ ինչ գիտէինք : Մի զորա-
խումբ ուղարկեցին գիւղը եւ այնտեղի Հայերին ազա-
տեցին : Բայց ինչքա՛ն զարմացանք, որ Ռուսները ոչ
մի Քուրդ չսպանեցին : Չէ որ նրանք այնքան վախե-
նում էին Ռուսների վրիժառութիւնից...

Այնտեղից մեզ մի խումբ թուրք գերիների հետ
բերին Ղարաչոբան, ապա Նաղիկ, Ալաշկերտ, Ղարա-
քիլիսէ : Ղարաքիլիսէ հայ գաղթականների մէջ գտայ
եղբորս՝ Զաքարին, որին անյոյս կորած էի համարում :

Ա՛խ, ի՞նչ կը տայի, որ այդպէս անսպասելի գլու-
նուէր եւ իմ քոյրը...

Իսկ նա մինչեւ օրս էլ չկայ...

Էջմիածին, 1916

Ս Ա Մ Ս Ո Ն

ԵՍԹԵՐ

Ծնուել է Ամասիայում 1901 թուին, այժմ գտնւում
է Կենտրոնական Կոմիտէի Կրժանիսի հայ օրիորդների
որբանոցում : Շիկահեր, սպիտակամորթ եւ դեղեցկա-
դէմ աղջիկ է : Նրա հայրը՝ Յակոբ Մոմճեանը եւ մայ-
րը՝ Սրբուհին՝ վախճանուել են դեռ պատերազմը չսկըս-
ւած, իսկ քոյրը, Մառին, ամուսնացել է պատերազմը
սկսելուց 15 օր առաջ :

Պատերազմը նոր էր սկսուել, երբ ես թողի իմ հայ-
րենի Ամասիա քաղաքը եւ իմ հօրեղբոր կարգադրու-

թեամբ եկայ Սամսոն, որ այնտեղից ծովով մեկնիմ նրա մօտ, Պոլիս, ուսում առնելու:

Սամսոնում ես իջեւանեցի մեր հեռու ազգական Միհրան Նէճեանի տունը: Այդտեղ ինձ յայտնեցին, որ այժմ անհնար է ծովով ճանապարհորդութիւն անել, որովհետեւ ուսական զրահանաւերի կողմից վտանգը միշտ անպակաս է: Ստիպուած եղայ երկար ամիսներ մնալ Սամսոն, Նէճեանների տանը, մինչեւ որ յարժար պատեհին մեկնէի:

Սամսոնում երեք ազգութեան պատկանող բնակիչ կար՝ տաճիկ, յոյն եւ հայ: Դրանից ամէն մէկը ապրում էր զատ-զատ թաղում: Չեմ կարող պնդել, որ Տաճիկները խտրական աչքով էին նայում Հայերին: Իսկ թալանի կամ սպանութեան դէպքեր ամենեւին չեղան: Այսպէս տեւեց մինչեւ 1915 թուի ամառը:

Թուօթը հասնելու ժամանակն էր, երբ յանկարծ հայկական թաղը ժանտարմաները շրջապատեցին: Խուզարկութեան համար էր: Հայերի զէնքերն էին հաւաքում: Շաբաթ չանցած, նրանք նորից շրջապատեցին հայկական թաղը ուրիշ նպատակով: Այս անգամ հաւաքում էին տղամարդկանց, որոնք պիտի թողնէին իրենց տուն ու տեղը եւ հեռանային քաղաքից:

Օրը նոր էր բացուել, երբ երեք ոստիկան էլ բաղխեցին մեր տան դուռը եւ Պր. Միհրանին դիմելով, ասացին.

— Դուք չէ՞ք սխալնում, էֆէնտիներ, հարցրեց Պր. Միհրանը, ես քաղաքի յայտնի վաճառական Միհրան Նէճեանն եմ, ինձ ինչի՞ պիտի կանչեն:

— Այդ միեւնոյնն է, պատասխանեցին ոստիկանները, կառավարութիւնը կարգադրել է, որ հաւաքենք բոլորին անխտիր: Եթէ չգաս, աւելի վատ կը լինի:

Այդպէս բոլոր Հայերին հաւաքեցին եւ քչեցին մի տեղ եւ ձեռքերն ու ոտները կապած, ճանապարհեցին, յայտնի չէ թէ ո՞ւր: Չանցաւ հինգ օր, նրանք երրորդ անգամ շրջապատեցին հայկական թաղը եւ այս անգամ էլ յայտարարեցին, թէ կանայք ու երեխաները պիտի պատրաստուին հեռանալու: Նրանք ասում էին, թէ մի օրուայ ճանապարհ զնալուց յետոյ պիտի հանդիպէք ձեր ամուսիններին:

Նէճեանի կինը ինձ և իւր քրոջ, 19 տարեկան Գոհարին յանձնեց իրենց ծանօթ մի գինեվաճառ Յոյնի, Թոտոր անունով, որ նրա մօտ պահուէնք:

Առհասարակ Յոյները մեզ կարեկցեցին եւ շատ լաւութիւններ արին: Նրանք իրենց տներում բազմաթիւ կին եւ աղջիկ պատսպարեցին:

Այսպէս՝ կանանց եւ երեխաներին էլ հաւաքեցին եւ եղան սայլերով ճանապարհեցին քաղաքից դուրս: Յետոյ մենք լուր առանք, որ իրաւ՝ մի օրուայ ճանապարհ զնաուց յետոյ, Գաւախ գիւղում նրանք հանդիպել են քաղաքի տղամարդկանց եւ երկու օր էլ միասին ճանապարհ կտրել մինչեւ Ղաւղա ասուած գիւղը: Այնուհետեւ Ամասիայի եւ Թոքատի մէջտեղը նրանց երեք խմբակի են բաժնել եւ տարբեր ուղղութեամբ ցրել: Հետզհետէ եկող լուրերից եւ դադանի նամակներից իմացանք, որ տղամարդկանց, մինչեւ 15 տարեկան տղան, կրկին դատել են եւ կոտորել, գեղեցիկ կանանց եւ աղջիկներին Քրդերին ու Տաճիկներին կնութեան տուել, իսկ երեխաներին տարել իսլամացնելու:

Թողորը, որ մեզ մխիթարում ու սիրտ էր տալիս, մի քանի օրից յետոյ մեզ յայտնեց, որ Նեճեանները եւ նրանց հետ մօտ 90 ընտանիք մահմետականութիւն են ընդունել եւ այդպիսով հնարաւորութիւն ըս-

տացել Սամսոնում մնալու: Բայց այդ շատ քիչ տեւեց, 15 օրից յետոյ դրանք էլ հեռացրին քաղաքից և տարան Չարչամբա:

Հայկական թաղը դատարկուեց: Ոստիկանութիւնը չրջեց տները եւ դռների փականքների վրայ պետական կնիքներ դրոշմեց: Մի օր կառավարութիւնից մի հրաման եկաւ, թէ բոլոր Յոյները իրենց մօտ պահած Հայերին պիտի բերեն եւ յանձնեն ոստիկանութեան: Չբհնազանդուող Յոյնը խիստ պատիժ պիտի կրէ: Յոյները, հակառակ իրենց կամքին, մեզ վերցրին ու տարան քաղաքի Փրանսական դպրոցը: 400 Հոռի հաւաքուեալ մեծ մասը կին, ալջիկ: Տղաները շատ քիչ էին: Կառավարական մի պաշտօնեայ մեզ փորձեց հարցաքննել, թէ ո՛վ, ո՞ր Յոյնի տունն էր պահուած: Բայց մենք անուններ չտուինք:

Դպրոցի այդ շէնքում մեզ պահեցին 15 օր: Մեզ հետ վարւում էին քաղաքավարի: Կերակուրը ստանում էինք կառավարութիւնից: Օրը մի թուրք կամ կառավարական մի նոր պաշտօնեայ գալիս էր մեզ տեսնում, խօսեցնում ու գնում:

Մի օր էլ մութասարիՓը (քաղաքպետը)ինձ ազաց թէ եկ, քեզ մի Հայ է կանչում: Մենք ամէնքս ուրախացանք: Ուրեմն դեռ կենդանի հայ տղամարդ էր մընացել: Եւ իրաւ, դա Ռէժի ծխախոտային գործարանի ներկայացուցիչն էր, մի ռումանահպատակ հայ, Տիգրան էֆէնդի անունով: Չէզոք պետութիւնների ինչպէս Ռումանիայի, Պարսկաստանի եւ դաշնակից Բուլղարիայի հպատակ Հայերին թողել էին անվնաս: ՄութասարիՓը մատնանշելով Տիգրան էֆէնտիին, ասաց

— Սրա հետ պիտի երթաս:

Ես ուրախացայ եւ Հայի հետ դուրս եկայ դպրոցից: Բայց իմ հրճուանքը երկար չտեւեց: Հայը ուրիշ նպատակով էր ինձ վերցրել:

— Մի կուսակալ կայ, ասաց նա, ուզում է քեզ որդեգրել:

Դա վանի նախկին կուսակալ Նազիմ բէյն էր, որ այժմ Սամսոնում Հայերի կայքերի աճուրդի կառավարիչն էր: Նա ապրում էր մի աքսորուած հարուստ Հայի տանը մենակ: Նրա ընտանիքը գտնուում էր Պոլսում:

Ես չուզեցի, լաց եղայ, բայց Հայը ինձ համոզեց, որ եթէ հակառակիմ, հետեւանքը վատ պիտի լինի: Նա ինձ տարաւ կուսակալի մօտ եւ ասաց.

— Ահա, բէյ, ձեր ասածը բերի:

Մի հասակաւոր մարդ էր: Տեղիցը վեր կացաւ, կեղծ ժպիտը դէմքին մօտեցաւ ինձ եւ փաղաքշական ձայնով ասաց.

— Քեզ պիտի որդեգրեմ, ինձի աղջիկ անեմ և ապա ուղարկեմ Պոլիս իմ ընտանիքի մօտ:

Ես պատասխանեցի.— Ձեմ ուզում:

Նա ձայնը բարձրացրեց եւ խստութեամբ ասաց.

— Ձընդունես, այն ատեն քեզ աքսորի կ'ուղարկեմ, ինչպէս Հայերին արի:

Ես լաց եղայ, բէյը շուարեց, մի ըոպէ մտածմունքի մէջ ընկաւ ու ասաց Հային.

— Դէ', լաւ, տար եւ թող առայժմ քեզ մօտ մնայ:

Տիգրան էֆէնտու ընտանիքն ինձ սիրով ընդունեց եւ տեղ տուեց: Կուսակալը յաճախ գալիս էր նրանց մօտ իմ սիրտը շահելու, բայց ես դիտմամբ թազնուում էի եւ չէի ուզում նրա աչքին երեւալ: Այդ ժամանակ իմացայ, որ դպրոցում մնացած միւս կանանց եւ աղջիկներին արձակել են եւ պատուիրել որ ամէն մէկը իր տանն ապրի: Բաց են արել կնքուած տները եւ յանձնել նըրանց, իսկ անտէր մնացած տները գրաւել էր կառավարութիւնը: Գոհարն էլ մի պառաւ կնոջ հետ գնացել եւ Նէճեանների տանն էր հաստատուել: Ես էլ ցան-

կացայ Գոհարի հետ Նէճեանների տանը ապրել, եւ ինձ չհակառակեցին: Բայց կուսակալն այդտեղ էլ ինձ հանգիստ չէր տալիս: Այժմ սկսեց յաճախել Նէճեանների տունը եւ ամէն անգամ ինձ տանելիս ասել.

— Գնանք իմ մօտ ապրելու:

Մի օր էլ եկաւ եւ ասաց.

— Հիմա էլ չպիտի վախենաս ինձնից: Քեզ համար մի հայ կին եմ վարձել, որ պիտի ապրէ իմ տանը:

Հետեւեալ օրը մի պառաւ հայ կին եկաւ իմ յետեւից եւ ասաց, որ բէյը ապսպրել է, եթէ այս անգամ էլ չգաս, ոյժով պիտի տանի:

Ես ստիպուած է հնազանդիլ: Նազիմ բէյը ինձ սիրով ընդունեց, իր բնակարանում մի սենեակ յատկացրեց, ինձ նոր շորեր բերաւ որ հագնեմ եւ տնային գործեր չանեմ: Բայց չնայած դրան, ես միշտ տխուր փակուում էի իմ սենեակում եւ բէյի բոլոր հարցերին պատասխանում լռութեամբ:

Միայն երբ բէյը տանը չէր լինում, մօտս էի կանչում պառաւ հայ կնոջը, եւ մենք ախ ու վախով խօսում էինք մեր դարդերից: Յաճախ նա նստում էր եւ լաց լինում իր կորած ամուսնու և երեխաների վրայ, որոնց աքսորել էին՝ չգիտեր ուր: Ապա գրկում էր ինձ փաղաքշում եւ հարազատ մօր պէս մխիթարում:

— Աղջիկս, ասում էր նա, չմոռանաս քո նախնեաց հաւատը, քո պատիւը: Զգո՛յշ, նրա նպատակը քեզ որդեգրել չէ:

Մի գիշեր, երբ նոր էի պառկել քնելու, լսեցի, որ մէկը կամաց թխկացնում է դուռս: Ես գլուխս ծածկեցի վերմակիս տակ ու ձայն չհանեցի: Դրան թխթխկոցը սաստկացաւ, եւ ես լսեցի բէյի ձայնը, որ դրան ճեղքից շնչում էր:

— Բաց, խօսք պիտի ասեմ:

Ես կրկին լռեցի: Բէյը համբերութիւնից ելնելով, հայհոյեց ինձ եւ հեռացաւ: Այդ գիշեր մինչեւ լոյս ես վախից չքնեցի: Առաւօտեան փորձեցի փախչել, բայց ծառաներն ինձ բռնեցին: Երեկոյեան բէյը մի պառաւ թուրքի կին ուղարկեց մօտս, որ ինձ սիրաշահի եւ մխիթարի:

— Ինչո՞ւ ես այդպէս տխուր, ասաց նա, եթէ մըտածում ես աքսորուածների մասին, մի յուսահատուիր, բոլորն էլ անվնաս կը վերադառնան: Ոչ մէկին չեն ըսպանի: Ա՛խ Հայեր, դո՛ւք էք մեղաւորը, եթէ Վանում չապստամբուէիք, մենք ձեզ ոչինչ չէինք անի: Բայց չնայած դրան, տեսնում ես, բէյը քեզ էլի սիրում է, ինչո՞ւ ես նրանից վախենում:

Ես կրկին լուռ եւ անխօս էի: Մի քանի ժամանակից յետոյ բէյը նորից փորձեց ինձ հետ խօսել, նորից իմ սենեակը գալ: Բայց ես միշտ տխուր ու լուռ խուսափում էի նրանից եւ փակուում իմ սենեակում: Բայց բէյը յոյսը չէր կտրում: Նա ուզում էր գրաւել իմ սիրտը մերթ փաղաքջանքով, մերթ խստութեամբ, մերթ նուէրներով: Մի օր վերջապէս նրան ասացի.

— Ի՛նչ կ'ուզես արա, թեկուզ սւլանիր, ես քեզ մօտ չեմ մնայ:

Իմ լուռութիւնից եւ տխրութիւնից զգուած՝ բէյը ուզեց մի առ ժամանակ անջատուել ինձանից եւ դրա համար ինձ ուղարկեց իր լաւ ծանօթ ամերիկեան կոնսուլի մօտ, որ ազգով գերմանացի էր: Այդ գերմանացու կինն ու երեխաները ինձ հիւրընկալեցին եւ փայփայեցին: Այդտեղ մնացի մի ամիս եւ շատ գոհ էի իմ վիճակից: Բայց կուսակալը՝ Նազիմ բէյը, ինձ կրկին հանգիստ չէր ուզում տալ: Այս անգամ էլ նա ծրագրել էր, որ ես զնամ Մարգուան, իբր թէ այնտեղի ամերիկեան դպրոցում սովորելու: Գոհարն ինձ հասկացրեց

որ Նազիրմ բէյը հեռանում է Սամսոնից, դրա համար էլ ինձ ուղարկում է օտար քաղաք, որպէսզի հեշտ լինի կոտորել իմ կամակորուժիւնը:

Երբ գերմանացին յայտնեց ինձ Նազիրմ բէյի նոր վճիռը, ես կտրուկ կերպով մերժեցի: Գերմանացին ըսկսեց ինձ համոզել եւ ստիպել: Յուսահատութիւնը պատեց ինձ: Սեղանիս վրայ թողի մի թուղթ, որի մէջ գրել էի հետեւեալը. «Յուսահատութենէս զիս ծով կը նետեմ: Ոչ ոքի վրայ չկասկածէք»:

Ուզում էի ծովի ափը դուրս գալ, բայց ինձ նորից ծառաները արգիլեցին: Երբ այդ ամէնը Նազիրմ Բէյի ականջին հասաւ, բարկացաւ եւ ասաց գերմանացուն.

— Զգէ՛, թող երթայ, ուր ուզում է:

Ես էլ հենց այդ էի տենչում: Անմիջապէս գնացի Գոհարի մօտ Նէճեանների տանը ապրելու: Գոհարին յաճախ այցելում էր նրա ընկերուհին՝ Հերանոյշ Տէր Համբարձումեանը, որ նիգա՛հ (սուտ) ամուսնացած էր մի մահմեդական վրացու հետ, տաճկական հալածանքից ազատուելու համար: Ամէն օր Տրապիզոնի կողմից գալիս էին թուրք եւ վրացի դաղթականներ, որոնց կառավարութիւնը տեղաւորում էր Հայերի դատարկ տներում: Ռուսները գրաւել էին Տրապիզոնը:

Տրապիզոնից փախած թուրքերը պատմում էին, որ Ռուսները նրանց հետ լաւ են վարում, բայց փախչում են, որովհետեւ վախենում են հայ կամաւորների և փախստականների վրէժխնդրութիւնից:

Մի շաբաթից յետոյ Հերանոյշը լուր բերաւ, թէ իր նշանածը, որ Տրապիզոնի կոտորածի եւ տեղահանութեան ժամանակից լեռներում փախստական էր, անցել է Ռուսների կողմը եւ Տրապիզոնից նաւակով եկել է մօտակայ յունական գիւղը մեզ ազատելու: Մեր ուրախութեանը չափ չկար:

Գոհարը, ես եւ մի ուրիշ աղջիկ՝ Աղեւ անունով, զնացինք մի վրացու տուն, որտեղից մի Յոյն եկաւ եւ մեզ տարաւ: Վրացին գիտէր մեր մտադրութիւնը, բայց արգելք չյարուցեց: Գիշերով Յոյնի հետ դուրս եկանք Սամսոնից եւ երեք ժամ ոտով ճանապարհ զնացինք: Լուսաբացին հանդիպեցինք գիւղացի ձիապանների, որոնց գտնելու համար կառավարութիւնը մի քանի անգամ խուզարկել էր գիւղը եւ գիւղացիների հետ կռուի բռնուել:

Մեզ առաջնորդեցին մի փոքրիկ տուն, ուր ըսպասում էր Ղազարը իր ուղեկից հինգ զինուած ընկերներով: Խորճիթի դուռը բանալու պէս Հերանոյշը ճանաչեց իր նշանածին, վազեց փաթաթուեց նրա վզով, իսկ մենք ուրախութիւնից արտասուեցինք: Յաջորդ օրը առաւօտեան մենք թողինք գիւղը, եւ լեռներն ի վարիջանք Մեւ ծովը: Մեզ հետ միացան գիւղում պահուած 13 հայ փախստական զինուորներ եւ մի այդքան էլ Յոյներ:

Երբ մթնեց, մենք գաղտագողի ու լուռ մօտեցանք ծովափին: Ղազարի խմբից մէկը նշան տալու համար լուցկի վառեց: Ծովը շնչեց եւ հանգրեց այդ լոյսը: Կէս ժամից յետոյ խաւարի միջից գորշ ալիքները ճեղքելով՝ ափին մօտեցան երկու նաւակ: Նրանց մէջն էր Գոհարի եղբայրը, որ կռուից առաջ մնացել էր Ռուսաստանում: Մենք տեղաւորուեցինք նաւակներում, թիերը շարժուեցին, եւ մենք պոկուեցանք այն հողից, ուր այնքան արիւն, այնքան արտասուք էինք թափել: Ես եւ ուրախ էի, եւ տխուր...

Կէս ժամից յետոյ մենք մօտեցանք մի հսկայական գրահանաւի, որ բոլոր ճրագները հանգրած, մութի մէջ մեզ էր սպասում: Մենք թողինք օրօրուող նա-

ւակները եւ բարձրացանք նաւը: Սեւ ծխնելոյզը ծխի
ամպեր պորթկաց, նաւը շարժուեց: Երեսներս խաշա-
կնքեցինք եւ աղօթքի խօսքեր ասինք, իսկ սմանք ուրա-
խութիւնից լացին:

Յաջորդ օրը առաւօտեան ժամը 11ին զրահանաւը
մեզ հասցրեց Տրապիզոն:

Կրժամիս, 30 Յունվար 1917:



ՎԵՐԱԾՆՈՒՆԻ

Էյրեւանի համալսարանին հայրեմադարձ ռուսաձոզ-ուհիներէն

Պ Ո Լ Ի Ս

ՄՏԱԻՈՐԱԿՍՆՆԵՐՈՒ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՔՍՈՐԸ

ՕՀԱՆՆԵՍ ԹԵՐԼԵՄԵՉԵԱՆ

1915 Սպրիլ 10-23ի երեկոյեան, Պոլիս, խանութիս մէջ զբաղած էի, երբ ոստիկան մը գալով զիս պահականոց առաջնորդեց, առանց թոյլ տալու մէկ վայրկեան որ գոյքերս հաւաքեմ :

Պահականոցին մէջ երկար սպասեցի: Հետզհետէ ուրիշ ձերբակալուածներ ալ եկան եւ առանց հարցաքննութեան զրկուեցանք կեղբոնական մեծ բանտը:

Այդ գիշեր եւ յաջորդ առտու ձերբակալուեցան հայ կարեւոր դէմքեր՝ մտաւորական, յեղափոխական դործիչ, բժիշկ, եւլն, մօտաւորապէս 200 անձ:

Յաջորդ գիշեր, Սպրիլ 11-24ին, բանտէն քամիոններով փոխադրուեցանք Սարայ-Պուռնու, ուր արդէն յատուկ շոգենաւ մը կը սպասէր: Շատեր վախցան թէ ծով թափուելու համար շոգենաւ կը դրուէին: Բայց Հայտար-Փաշա տարուեցանք եւ, մասնաւոր զնացքով, մեզ ճամբայ հանեցին դէպի Էնկիւրիւ: Գնացքին մէջ Ակնունին եւ ընկերները կ'ըսէին թէ. «Ոչինչ, սխալութիւն մը կայ: Վաղը Վարդգէսը Թալաթին դիմելով վերադարձուելու հրաման կ'առնէ մեզի համար»:

Էնկիւրիւ հասնելէ առաջ, Այաշի կայարանին մէջ զատեցին աչքի ինկող յեղափոխականները եւ զրկեցին Այաշի բանտը: Անոնցմէ քիչեր միայն աղատուեցան, իսկ մնացեալները ի վերջոյ չարաչար խողխողուած էին (Ակնունի, Խաթակ, Տօքթ. Տաղաւարեան, Ռ. Չսոյար-

եան, Հրանդ Կիւրճեան, Հրաչ Թիրեաքեան եւայլն) :

Այաշի կայարանէն Էնկիւրիւ տարուեցանք, ուր արածոնեցին որ Պոլիս մեր ընտանիքներուն հեռագրենք: Վերջէն տեղեկացանք թէ հեռագիրները չէին ղրկուած:

Էնկիւրիէն, բռան կառքերով մեզ ղրկեցին Չանղըրը: Երկրորդ իրիկունը Չանղըրը հասանք եւ մեզ բանտարկեցին քաղաքէն քիչ հեռու հին զօրանոցի մը մէջ:

Յաջորդ օրը, բոլոր բանտարկեալներս հաւաքուեցանք եւ հսկում կատարեցինք: Երեք վարդապետ — Կոմիտաս, Պալաքեան, եւ Յովնան Կարապետեան — Տէր-Ողորմեա երգեցին: Ամէնքս ծունկի եկած էինք: Կոմիտաս վրդ. շատ յուզուած էր եւ կ'արտասուէր: Այդ «Տէր-Ողորմեա»ն անմոռանալի եղաւ բոլորիս համար:

8-10 օր ետք, արտօնուեցանք քաղաքին մէջ բնակելու, պայմանաւ, որ ամէն օր ներկայանանք ոստիկանատուն:

Կոմիտաս եւ Յովնան վարդապետները, Տիրան Քէլէկեան, Յակոբ Քարեան եւ ես, Չէրքէզեան անուն Հայու մը տունը վարձեցինք: Միւսներն ալ ուրիշ տուներ:

Յաջորդ կիրակի, Կոմիտաս վրդ. պատարաւեց: Անոնք որ ներկայ եղած են իր պատարաւին, դիտեն թէ ինչ հոգեգմայլ հանդէսի մը ներկայ կը գտնուէին, բայց այդ օրը Կոմիտաս գերազանցեց ինքզինքը: Երբ յուզուած եւ սքանչացած կ'աղօթէինք, Կոմիտասի արձակման հեռագիրը հասաւ: Առաջին աքտրեալն էր որ պիտի վերադառնար Պոլիս: Իր ազատ արձակման հրամանը կը վերագրուի Ամերիկեան դեսպանին եւ կամ դահաժառանգ Մէճիտ Էֆէնտիի միջնարդուութեան, որովհետեւ երկուքն ալ սիրահար էին դեղարուեստին:

Կոմիտասէն ետք, քանիններ եւս յաջողեցան հետզ-

հետէ ազատիլ եւ վերադառնալ Պոլիս, իսկ մնացեալները դէպի անապատ ճամբայ հանեցին եւ ամենքն ալ անխնայ սպաննեցին :

Չանդըրըի Իթթիհատականներու պետին աղջիկը կը հիւանդանայ այդ օրերը եւ աքսորեալներէն Տոքթ. Տինանեանը կը կանչուի զինքը դարմանելու : Այդ միջոցին կը հասնի Տոքթ. Տինանեանի ազատ արձակման հրամանն ալ, որով, Տոքթ. Սեւակը կը յաջորդէ Տոքթ. Տինանեանին, յիշեալ աղջիկը դարմանելու համար :

Աղջիկը կը սիրահարի Տօքթ. Սեւակին :

— Դուք ամենքդ ալ դատապարտուած էք մահուան կ'ըսէ աղջկան հայրը Տօքթ. Սեւակին : Կ'ուզեմ քեզ ազատել, պայմանաւ որ իսլամանաս եւ ամուսնանաս աղջկանս հետ :

Տօքթ. ը մեր տունը եկաւ խորհուրդ հարցնելու : Յովնան վրդ., Քէլէկեան եւ ամէնքս խորհուրդ տուինք իրեն, իսլամութիւնը ընդունիլ եւ ամուսնանալ : Ապագային, երբ պարագաները փոխուին, ըստ այնմ վարուիլ : Ըսինք թէ իր մահը ոչ մէկ օգուտ կը բերէ ոչ ազգին, ոչ իր ընտանիքին :

— Չեմ կրնար համոզուիլ այն դադափարին հետ, ըսաւ Տօքթ. Սեւակը, որ մահէն վախնալով ուրանամ ազգ եւ ընտանիք :

Եւ նախընտրել մեռնիլ...

Պոլսոյ մէջ, կնոջս եւ բարեկամներու դիմումին չնորհիւ, իմ ազատութեան հրամանն ալ եկաւ : Տօքթ. Սեւակ, Վարուժան եւ Քէլէկեան յանձնարարեցին որ Պոլսոյ մէջ այցելեմ իրենց ընտանիքներուն եւ հաղորդեմ թէ ինչ վտանգաւոր դրութեան մէջ են, մանաւանդ Սեւակին տիկնոջ որ Զուիցերիացի էր, որպէսզի դիմէ


գուրիցերիական դեսպանատունը : Դժբախտաբար դէպ-
քերը տարբեր կերպարանք ստացան եւ հազիւ 47 օրէն-
յաջողեցայ Պոլիս վերադառնալ : Աքսորի յիշեալ թան-
կագին ընկերներս, մեկնումէս ետք արդէն սպաննուած
էին :

Ազատութեան հրաման ստացողներէն վերջինները
եղանք, Յակոբ Քարեանը, ատամնաբոյժ Վահան Ալ-
թունեանը եւ ես :

1915 Օգոստ. 6ին Չանդըրըէն մեկնելով, Օգոստ.
8ին Էնկիւրիւ հասանք : Նոյն օրը անծանօթ ուղղու-
թեամբ ճամբայ հանուած են մեր միւս ընկերները,
բացի 10-12 անձէ : Արամ Անտոնեանը որ աքսորուած-
ներուն հետ էր, բարեբախտ արկածով կ'ազատի մահ-
ուանէ : Բեռան կառքի ցնցումներէն նեղուած, երբ կը
փորձէ դիւք փոխել, կառքէն կ'իյնայ եւ ծանրապէս
կը վիրաւորուի : Զինքը մեր կառքը փոխադրեցին եւ
տարինք Էնկիւրիւ, ուր երկար ատեն հիւանդանոց մը-
նալով ազատեցաւ :

Հակառակ մեր ազատութեան վճռին, Էնկիւրիւի
դաժան կուսակալը տեղւոյն կաթոլիկ Հայերուն հետ
մեզ բանտարկեց եւ Օգոստ. 17ին ճամբայ հանեց դէ-
պի սպանդանոց :

Բանտէն դուրս կը կանչէին չորսական հոգի : Կը
կարծէինք որ հարցաքննութեան կ'երթանք, մինչդեռ
դուրսը, Էնկիւրիւի կառավարական պաշտօնեաներու
ներկայութեան, 8-10 մարդիկ վրանիս յարձակեցան
եւ մեր բազուկները իրարու կապեցին : Այսպէս, կա-
րաւան կազմեցինք 750-800 անձ եւ ճամբայ ելանք : Տե-
ղացի Հայեր, որոնք գիտէին թէ իրենցմէ առաջ 400
հոգի նոյն ճամբուն վրայ ջարդուած են, սկսան լալ
եւ ողբալ : Այդ օրը անակնկալ դէպք մը պատահեցաւ :



Սրբառն, բնիկ և հայրենադարձ ընտանիքներու ազգիկներ
ՉԵՐԱԿՆՈՒՆԿ

Մեր ետեւէն սրարչաւ հասան քանի մը ձիաւոր եւ մեզ առաջնորդող ժանտարմաներուն յանձնեցին հրամանագիր մը: Ժանտարմաները, փոխանակ մեզ ջարդելու, Գարակէտիկ գիւղը տարին, ըսելով որ ներման արժանացած ենք և աղօթենք կայսեր համար: Ի վերջոյ իմացանք թէ պապին Պոլսոյ նուիրակը, Մօնսէնեէօր Տօլչին տեղեկանալով Էնկիւրիի կաթոլիկ Հայերուն սպառնացող եղերական վախճանը, կը դիմէ Աւստրիոյ դեսպանին, այս վերջինն ալ՝ Թալաթին եւ կը յաջողի կաթոլիկ Հայերը փրկել: Կուսակալը երեք օր բանակցելով կը յաջողի որոշում ձեռք բերել որ կաթոլիկ Հայերը փոխանակ Էնկիւրիւ վերադառնալու, քշուին Միջագետք:

Օգոստոս 20ին, Գարա-Կէտիկ գիւղէն մեկնելով եւ ճամբուն վրայ սահմուկեցուցիչ դէպքերէ եւ տեսարաններէ անցնելէ ետք, անօթի, ծարաւ 21 օր քալելով հասանք Պօղանթի:

Ժանտարմաները ազատ կը ձգէին որ մեր սարսափելի ծարաւը յագեցնենք ճահճային ջուրերէ: Մաքուր առուններէ խմել յանդգնողները անխնայ կը ծեծէին:

Պօղանթիի մէջ գտանք ամէն կողմէ աքսորուած Հայերու բազմութիւն մը: Այդտեղ տեսայ օսմանեան հանրային պարտուց հայ պաշտօնեայ մը, որուն երկու սիրուն աղջիկները ժանտարմաներու խէնէջ յարձակման կ'ենթարկուէին: Խեղճ հայրը դրամ խոստացած էր դաւաւները փրկելու համար, բայց չէր կրցած գոհացնել ջարդարարները:

Պօղանթիէն քշուեցայ Տարսօն, ուր, քաղաքէն դուրս, հաստատուած էր տարագրեալներու ընդարձակ վրանաքաղաք մը: Անընդհատ կը հասնէին նոր կարա-

ւաններ եւ մաս առ մաս կը ճամբուէին դէպի Տէր-Չօր :

Օր մը յաջողեցայ վրանաքաղաքէն Տարսոն երթալ եւ հեռագրել Պոլիս : Կինս եւ բարեկամներս կրկին դիմումներով կը վերստանան ազատութեանս հրամանը :

Տեղւոյն սէվֆիաթի (աքսորի) տնօրէնը, հազարաւոր տարագիրներու մէջ զիս դտաւ եւ ըսաւ . «Եթէ յիսուն դեղին ոսկի տաս, քեզ կը վերադարձնեմ Պոլիս : Եթէ չի տաս, անմիջապէս ճամբայ կը հանեմ դէպի անապատ եւ կը հեռագրեմ որ՝ այդ անունով անձ չի կայ այստեղ» : Եւ թոյլ տուաւ որ քաղաք երթամ ու հեռագրով դրամ ուզեմ Պոլսէն : Աքսորակից ընկերներս, Քարեանն ու Ալթունեանը ինծի հետ քաղաք եկան եւ տեղւոյն գայմազամին իմացուցին եղելութիւնը : Գայմազամը Պոլսէն հարցուցեր է մեր երեքին արձակման մասին եւ հաստատական պատասխան ստանալով, կառք մը վարձեց եւ մեզ վերադարձուց երկաթուղւոյ կայարանը որ մէկ օրուայ ճամբայ էր :

Սեպտ. 19ին մեկնեցանք Տարսոնէն եւ 22ին հասանք Պոլիս, Հայտար-Փաշա :

Ֆրանսա, 1951

ՊՈԼԻՍ

ԼՃԵՑԻ ԳԱԼՈՒՍՏ ԽՈՐՏԻԿԵԱՆ

Ակնայ Լիճ գիւղէն եմ : Պալքանեան պատերազմին մասնակցեցայ իբր տասնապետ, նաեւ Բըրք-Քիլիսէի կռուին :

1914ին, Պոլիսէն գիւղ վերադարձած էի : Պատերազմը պայթեցաւ : Սկսան գէշ լուրեր տարածուիլ : Երիտասարդներս հաւաքոյթ մը ունեցանք, ուր ըսի թէ մեր միակ փրկութիւնը Տէրսիմ անցնիլն է : Տէրսիմի

Քուրդները վերջին ծայր հայասէր են, կը յարգեն մեր սրբավայրերը: Միւսները չհամաձայնեցան, որով որոշեցի մեկնիլ Պոլիս: Հայրս երկու օրուայ ճանապարհ ինծի ընկերացաւ: Կարծես նախազգացում եղած էր թէ այլեւս վերջին տեսութիւննիս է:

Երեկոյին հասանք Շապին-Պարահիսար: Ճամբորդները, ինձմէ զատ բոլորն ալ թուրք էին, ինծի կ'ըսէին «Տասնապետ, օձիկդ լաւ ազատեցիր»:

Վերջապէս Կիրասոն հասանք: Տեղւոյն զինուորական հրամանատարութեան գացի եւ իբր զինուոր շոգենաւի կէս տոմսակ խնդրեցի: Հրամանատարը խոստացաւ ձրի ղրկել, պայմանաւ որ տասը փախստական զինուորներ Պոլիս տանիմ: Պոլիս հասնելով փախստականները յանձնեցի եւ յաջորդ օրը գացի զինուորական բժիշկիս, Իւսկիւտար, Տօքթ. Երուանդ պէյ Արապեանին, որ խորհուրդ տուաւ զինուորութենէ արձակման թուղթս առնել: Իմ բանակս արդէն բնաջնջուած է եղեր: Քովս ունենալով փաստաթղթեր ու վկայականներ, զիս ազատ արձակեցին: Անմի՞թապէս ծնողքի՞ գըրեցի որ շուտով Պոլիս գան: Մէկ ամիսէն, հայրս աւստասիանեց թէ Սեպտեմբերին ճամբայ պիտի ելլենք: Այնուհետեւ ճանապարհները գոցուեցան: Ծնողքէս այլ եւս ոչ մէկ տեղեկութիւն: Հացագործները զինուորական ծառայութենէ զերծ էին: Ղալաթիա, Պանք-Օթօմանի կարգը, Պուլկար Վանկէլիի փուռը գործաւոր եղայ, մօտաւորապէս ութ ամիս: Հաց եփողն ալ Հայ էր: Ոստիկանները սկսան մեզ նեղել: Հաց եփողը որ Սեբաստացի էր, տարին: Կարգը ինծի եկաւ: Օրին մէկը, ճաշէն ետք, Վարպետիս տղան Անաստասը ըսաւ. «Ոստիկանները քեզ պիտի ձերբակալեն: Կ'ըսեմ որ ճարը խորհիս»

Զինուորական թղթերս իր հօրը քովն էին: Անաս-

տասը ազնիւ տղայ, հօրը գզրոցը բանալով, կամաց մը թղթերս եւ գզրոցին դրամները, մօտաւորապէս մէկ ոսկի, ինծի յանձնեց: Այդտեղէն Սինէմ գիւղ վացի, Ակնցի Տիկ. Սառա Քիւրքճեանի տունը: Տիկ. Սառային տղան, Ստեփանը որ Պապը-Ալի գրավածառ էր, ձերբակալած էին: Տիկինը զիս ներկայացուց տան վերի յարկը բնակող երիտասարդներու, մէկը Տիգրան Զաւէն, միւսը՝ Մանուկ, հայկական պանքայի մէջ պաշտօնեայ: Զիս սիրով ընդունեցին եւ ըսին թէ «այստեղ քունը հերթով է», եւ ցոյց տուին երկու թաքստոց, տեղեկացնելով որ ոստիկանները շաբաթական մէկ-երկու անգամ յանկարծ կը խուզարկեն տունը:

Գիշեր մը իրապէս եկան: Մենք արդէն թաքստոցներուն մէջ պահուած էինք: Տան տիկինը դուռը բացաւ: Ոստիկանները սկսան խուզարկել ու հարցափորձ ընել, Հրաչի եւ Արամի անունները տալով: Յետոյ ընկերներու անունը տուին: Յայտնի է որ մասնուած էին: Վերջապէս, ծակ ու ծուկ փնտռտուքէ ճարահատ մեկնեցան:

Այսպէս սարսափով վեց ամիսներ անցուցի: Երբեմն, գիշերները, միւս տունը կ'անցնէին ընկերներս եւ ուշ ժամանակ կը վերադառնային: Տան տիկինը թերթ կը բերէր: Իմացանք որ, ժողովի մը մէջ, իշխան Եուսուֆ Իզգէտտինը եւ էնվէր վէճ մը կ'ունենան: Հակառակորդը զգեստներու համար, իշխանը ատըրճանակ կը քաշէ: Գերմանացի փաշա մը կը փորձէ արգիլել եւ կը սպաննուի: Երկրորդ գնդակը էնվէրը ոտքէն կը վիրաւորէ:

Այդ միջոցին հնչակեան Քսանները արդէն կախուած էին, սակայն Պոլսոյ մտաւորականները դեռ չէին ձերբակալուած: Օր մը, հայ կին մը եկաւ Պր Զօհրապի կողմէ եւ ըսաւ ընկերներուս. «Պր. Զօհրապը կ'արդարարէ որ պէտք չէ մահափորձը ընել, որովհետեւ

գաւառի Հայերը աքսորուած են, Պոլսոյ եւ Իզմիրի աքսորուելուն պէտք չէ պատճառ ըլլանք» :

Ընկերներս անդրդուելի մնացին : «Գացէք ըսէք Պր. Զօհրապին թէ տէրօրը շատ լաւ կարգադրած ենք : Վաղը ցերեկէն ետք մեռեալ գերմանացին Թարապիւս պիտի տանին : Նախարարական կազմը ամբողջութեամբ պիտի կրնանք սատկեցնել : Եթէ այս տէրօրը չընենք, կարգը Զօհրապին եւ ընկերներունն է : Սպանդանոց պիտի երթան . . . »

Յաջորդ առտու կանուխ, Վարդուէսին կողմէ կին մը ներկայացաւ եւ սպառնական ձեւով ըսաւ թէ «պէտք չէ ընէք այդ տէրօրը : Եթէ անդրդուելի մնաք, գիտցէք որ ձեզ ձերբակալել պիտի տանք» :

Տղաքը վերջին ծայր ջլայնացան : «Լաւ, ըսին, ինչ կ'ուզէք ըրէք, միայն թէ թող լաւ գիտնան որ կարգը իրենցն է : Մենք հոս, մեր մասվզէրով եթէ չկրցանք մեր կեանքը փրկել, գոնէ քանի մը թուրք կը սպաննենք» :

Քանի մը օր ետքը, առաւօտ մը, տան տիկինը լուր բերաւ թէ բոլոր հայ մտաւորականները եւ երեսփոխանները ձերբակալուած են : Նաեւ՝ «Ազատամարտ»ի աշխատաւորները :

Այս լուրին վրայ, բոլորս ալ տխրեցանք : Ընկերներս ըսին թէ մեր ծրագրին յաջողելուն հարիւրին հարիւր վստահ էին, սակայն մերժեցին :

Մտաւորականներու ձերբակալութենէն երեք ամիս յետոյ, օր մը Շ. Միսաքեանը եկաւ եւ ընկերներուս ըսաւ. «Պուլկարիոյ մեր կուսակցական մարմինը առաջաստանաւ մը ղրկած է եւ ովքեր որ պիտի տանին, անուններով ցուցակը ղրկած է : Պատրաստ եղէք, վաղը առաւօտ մեկնելու» :

Ընկերներս, որ կը զգուշանային այդ մարդէն, պա-

տասխանեցին. «Այդ ամէնը կասկածելի է, ընկեր: Լաւ գիտցիր որ տեղն ու տեղը պիտի ձերբակալեն բոլորն ալ: Մենք կը մերժենք եւ միւս ընկերներուն մեկնելուն ալ համամիտ չենք: Գիտցիր որ մեծ պատասխանատուութիւն կ'իյնայ վրայդ, եթէ ոեւէ փորձանք պատահի»:

Մէկ շաբաթ յետոյ իմացանք որ մօտաւորապէս քսան տղայ դացած եւ տեղւոյն վրայ ձերբակալուած են, եւ թէ այդ Պր. Շաւարշը ծովեզերք չէր դացած, իսկ ատկէ ետք, մեր քով բնաւ չեկաւ:

Մեր ապրուստի հոգը դժուարացած էր: Ոեւէ օգնութիւն չունէինք: Բարեբախտաբար քիչ մը դրամ ունէի եւ հայրենակից փռապաններու երկտող մը գրելով, ձրի հաց կը ստանայինք: Վերջին քանի մը ոսկին մնացած էր: Օր մը հնչակեան ընկերուհի մը եկաւ: Տեղեկացանք որ ձերբակալում չկայ, միայն զինուորական փախտականները կը փնտռեն: Ես որ այդ կողմէ ապահով էի, ընկերուհիէս խնդրեցի Գուգկունճուզի փռապան Հայկ Բէխեանին երկտող մը տանիլ: Ընկերուհին սիրով ընդունելով, յաջորդ օրը պատասխանը բերաւ թէ պատրաստ է ինծի աշխատանք տալու: Փուռը բանակին հաց կը մատակարարէր: Առաւօտ կանուխ, զինուորական կառքերը կուգային եւ հացերը ըստ իրենց ցուցակին կը յանձնէին: Ինչպէս խոստացած էի ընկերներուս, շաբաթը երկու անգամ, իրենց ալ հաց եւ մէկ քիւօ շաքար կը ղրկէի: Զիս ձերբակալելով Պոլիս տարին ու բանտարկեցին: Մօտ քըսանըհինգ օր բանտը մնացի: Գաւառացի ուրիշ հայեր ալ կային, մօտաւորապէս 150 հոգի: Անձրեւոտ օր մը, Հայտար-Փաշայէն գոց վակոններով ճամբայ ելանք: Շարժելու տեղ չկար: Երկու փոքր պատուհան միայն ունէինք: Առաջին անգամ էսկիշէհիւր դուրսի օդը շնչեցինք, եւ երկրորդ անգամ Գոնիա:

Տեսայ այդտեղ ճամբու վրայ ծեր կիներ, այրեր եւ փոքրիկներ, ճամբորդներէն հաց կը մուրային: Երկու վակոն եւս կապեցին մեր թրէնին եւ այդ Հայերը որ շաբաթներով կը սպասեն եղեր, մէջը լեցուցին եւ ճամբայ ելանք:

Երկաթուղիի գծին երկայնքը ի՛նչ թշուառութիւն: Մենք ալ լաւ գիտէինք թէ սպանդ կ'երթանք: Երեկոյ մը Պօզանթի հասանք: Մեզ թրէնէն դուրս հանեցին, այրերը մէկ կողմ, իսկ կիներն ու պղտիկները միւս կողմը շարեցին: Այդտեղ բանակին մէջ աշխատող հայրենակից մը զիս ճանչնալով իր աշխատանոցը տարաւ եւ կերակրեց: Յաջորդ օրը աքսորականներու հետ միասին ճամբայ ելայ: Ջամ-Ալան կոչուած գիւղին մէջ փոռ մը դրին զիս որ աշխատիմ: Իսկ ուղեկիցներս նորէն ճամբայ հանեցին ոտքով, անօթի, ծարաւ, մերկ:

Զինադադարին Ատանա գացի եւ 1919ի ամառը Պոլիս: 1922ին, Պուլկարիոյ վրայով Ֆրանսա եկայ:

Ֆրանսա, 1951

ԼՃԷ

ՏԻԿԻՆ ՀՌԻՓՍԻՄԷ ՏԵՐ ՊՕՂՈՍԵԱՆ

Ծնած եմ 1904ին, Ակն քաղաքի գիւղերէն ԼՃԷ, որուն հայ բնակչութեան թիւն էր 350-400: 1915ին, երկու քոյր եւ երկու եղբայր էինք: Ես տասը տարու, մէկ եղբայրս՝ ութ, քոյրս վեց եւ մէկ տարեկան փոքր եղբայր մը: Հայրս, Ստեփան Պաղտասարեանը, մէկ տարի է ի վեր գիւղէն հեռու, փախստական կ'ապրէր ընկերներու հետ:

1915ի Մայիսին, առտու մը, թուրք ոստիկաններ մեր տունը դալով պահանջեցին որ հօրս թաքստոցը տեղեկացնենք: Չկրնալով պատասխան ստանալ, ծեծեցին մայրս եւ քաշքշելով տարին: Մենք, երախաներս, վազեցինք մեծ հօրս, Խաչատուր Խորտիկեանին, որ կառավարիչին փոխանորդն էր, (միւտիւր մուսավիհնի): Մեծ հայրս կառավարչատուն երթալով, կը տեսնէ մայրս որ գետին փռուած էր նուազած եւ ինքն ալ կը նուազի: Իրիկունը, մայրս ազատ արձակեցին, զիչերն ալ՝ մեծ հայրս, որ տուն վերադարձաւ գէշ վիճակի մէջ: Զինքը ծեծած ու տանջած էին: Յաջորդ օրը չկրցաւ հօրս եւ ընկերներուն ճաշը տանիլ: Ազգական երիտասարդ կին մը, Դշխուհի, յանձն առաւ փախստականներուն ճաշը տանիլ: Յաջորդ օրը, հայրս եւ իր ինը ընկերները անձնատուր եղան, լսած ըլլալով որ իրենց պատճառով մեր տնեցիները եւ գիւղացիներ բանտարկած ու տանջած են: Մեծ հայրս շատ յուզուեցաւ: «Ստեփան, ըսաւ հօրս, պէտք չէր որ կնոջ խօսքին հետեւելով յանձնուէիք: Ձեր փախստական վիճակը ապահովութիւն էր գիւղին համար»:

Քիչ վերջը մեր տան կտուրէն տեսանք որ հայրս եւ ընկերները, ութը ժանտարմաներով շրջապատուած կը տանին: Խարբերդէն նամակ մը ստացանք եւ ատկէ ետք, ոչ մէկ լուր...

Տարագրութիւնը սկսաւ: Մեր գիւղէն կ'անցնէին Հայերու կարաւանները, Էրզրումէն, Երզնկայէն, Քէմախէն, Արմտանէն: Շատերը մեռցուցին մեր մօտ, Եփրատի կամուրջին վրայ: Քեռիկինս եւ մայրս տեսած էին եւ կուլային:

Հօրս ձերբակալուելէն մէկտուկէս ամիս յետոյ, մեր գիւղին տղամարդիկը հաւաքեցին: Երիտասարդութիւնը զինուոր էր Էրզրումի ճակատը: Քեռիկինիս եղբայրը

որ ճակատէն ետ եկած էր, ծանր վիրաւոր վիճակով, շաբաթ մը ետքը նոյնպէս ձերբակալեցին: Գիւղի տղամարդոց հետ ձերբակալուեցան մեծ հայրս, Տէր Ալէքսան քահանան եւ ուրիշ 22 տարիքոտ մարդիկ: Մուսթաֆա անուն դրացի մը, ըսաւ որ «մէկ քանի օրէն դուք ալ անոնց քով պիտի երթաք»:

Յուլիսի տաք օր մը, մունետիկ մը կանչեց որ յաջորդ օրը այսինչ կալը հաւաքուինք: Գիւղին հայութիւնը, բացի երկու ընտանիքէ, որոնք թրքացան, յաջորդ առտու շարան-շարան գացին որոշուած կալը: Մօտ 400 հոգի էինք: Մեզ ճամբայ հանեցին դէպի Ակն: Մեզի կ'ընկերանային զինուորներ եւ թուրք գիւղապետը: Առաջին օրը մեզի հետ շատ լաւ վարուեցան, շատ հանդարտօրէն քալեցուցին: Ակն հասնելով գիւղապետը մեզ խան մը առաջնորդեց որ հանգիստ քնանանք:

Յաջորդ առտու, գիւղապետը եկաւ եւ 8-10 կիներ կանչելով սկսաւ խրատել: «Ձեր մէջ երկար տարիներ ապրած եմ, ձեր բարիքները վայելած եմ: Շատ կը ցաւիմ ձեր վրայ: Քաղաքապետին մօտ պէտք եղած կարգադրութիւնը ըրի որպէսզի ամէնքդ ալ վերադառնաք: Միայն թէ թրքութիւնը պէտք է ընդունիք»:

Այդ կիներէն Տիկ. Սառա Կիւլիստանեան եւ Տիկ. Նազենի Պաղտասարեան, հօրեղբօրս կիներ, մերժողական պատասխան տուին ըսելով թէ «մեր սիրելիները ուր որ գացին, մենք ալ հոն կ'երթանք» եւ միւսներն ալ համոզեցին թէ «պիտի թրքացնեն մեզ եւ շրջակայ թուրք գիւղերը պիտի բաժնեն, յետոյ երիտասարդ աղջիկները կնութեան պիտի առնեն»:

Մէկ քանի օր Ակն սպասելէ յետոյ, թուրքերը մեզ երկուքի բաժնեցին, մէկ մասը Հալէպ, միւս մասն ալ Խարբերդ ղրկելու համար: Հալէպ գացողները հազիւ 100 հոգի էին, մենք ատոնց միացանք: Քեռկինս չու-



ՎԵՐԱՄՆՈՒՆԻ

Հայրենադարձ ուսանող-ուսիկներ Երևանի Ռժշկական
Վարժարանի մուտքին առջև

զեց իր մօրմէն եւ եղբօր զաւակներէն բաժնուիլ: Անոնք
Խարբերդ գացող խումբին մէջ էին: Ուրիշ տեղերէ ալ
մեր կարաւանին միացան եւ սկսանք քալել դէպի Հա-
լէպ: Ճամբուն վրայ առաջին զոհը եղաւ փոքր եղբայրս
որ մեռաւ ու խեղճ մայրս փոս մը գտնելով թաղեց:

Հետզհետէ զարհուրելի եղաւ մեր տանջանքը: Տե-
սայ կիներ խելակորոյս կ'իյնային անօթի, նամանա-
ւանդ՝ ծարաւ: Մինչեւ իսկ աղտոտ ջուր չէինք կրնար
գտնել: Փոքրիկներս ջուր կը պոռայինք, կուլայինք եւ
յոգնած՝ այլեւս չէինք ուզեր քալել: Մեր մայրերը մեզ
կը համոզէին թէ մօտ է իջեւանը ուր շատ ջուր կայ:

Օր մը, խեղճ մայրիկս մեզ երեքս համբուրեց եւ
ըսաւ. «Գիտե՞ս, Հռիփսիմէ, Պօլիս մօրեղբայր մը ու-
նիք, մի մոռնաք, անունը Գալուստ է. կրնայ ըլլալ որ
օրին մէկը գտնէք զինքը: Մարիամը հոս չձգէք, մեր
ունեցած ոսկիները վրան կարած եմ: Ես աս երեք հարս-
ներուն հետ պիտի երթամ, ձեզի ջուր բերեմ»:

Երեք հարսները հօրս մօրաքրոջ աղջիկներն էին:
Փոքրիկ քոյրս չկրնալով քալել, եղբօրս հետ փոխնի-
փոխ շալկեցինք: Կարաւանը շատ հեռացած էր, սկսանք
վախնալ, քոյրիկնիս մեր մօրը ճամբուն վրայ ձգելով,
վազեցինք ու կարաւանին հասանք: Հալէպի մէջ մեզ
խան մը լեցուցին: Հալէպ բնակող Ակնցի Նշան Գա-
լուստեանը եկաւ եւ մեզի ուտելիք բաժնեց:

Գիշեր մը, ըսին թէ ծանր վիրաւոր կին մը եկած
է: Մօրս ընկերացող երեք հարսներէն մէկն էր: Պատ-
մած էր ուրիշներու թէ երբ լերան մէջ ջուր կը փնտռէին
չէթէներու կը հանդիպին, որոնք իրենց վրայ կը յարձա-
կին: Կը վիրաւորեն զինքը եւ միւսները կը սպաննեն:
Գիշերը արթննալով քոյրերուն եւ մօրս ձայն կուտայ,
սակայն տեսնելով որ երեքն ալ մեռած են, վէրքերը կը
կապէ եւ կը հասնի Հալէպ, ճամբուն վրայ լքելով իր

մանկիկը որ ողջ մնացած էր :

Վեցերորդ օրը մեռաւ այդ կինը : Նշան Գալստեանը , մեզ փոքրիկներս , տղայ թէ աղջիկ , որբանոց մը տեղաւորեց :

Օրին մէկը , բարձրաստիճան թուրք մը իր կնոջը հետ որբանոց եկան : Ուզեցին զիս տանիլ : Ըսի որ եղբօրս հարցնեմ : Եղբայրս լացաւ եւ ընդդիմացաւ : Քանի մը օր ետքը , լուր բերին թէ եղբայրս մեռած է : Սկսայ լալ , անակնկալ մահը լսելով : Երեկոյին միասին էինք եւ առողջ էր : Ի վերջոյ տեղեկացայ թէ թուրքերը առողջ տղաքը կը թունաւորեն :

Այլեւս մինակ մնացի : Բաւական ժամանակ յետոյ , նոյն թուրքը , որ կը կոչուէր Տէֆտէրտար Փայիք պէյ , եւ կինը զիս իրենց բնակարանը տարին : Թուրքին տան մէջ երեք բախտակից աղջիկներ էինք , մէկը Եօղկատցի , միւսը Էրզրումցի : Թուրքերու հետ տեղէտեղ կը փոխադրուէինք : Անունս Նուրիէ դրած էին : Անգամ մը Պոլիս գացինք եւ բաւական երկար ժամանակ մնացինք : Օր մը , Պէյազիտի կողմը պտոյտ կ'ընէինք , հանրմը , իր փոքրիկ տղան եւ երեք հայ բախտակիցներս : Իջանք Գում-Գաբու : Հայերէն խօսակցութիւն լսեցինք : Վերադարձնուս , մեր ամենամեծը , Կարնեցին , որ 16 տարեկան էր , անհետացաւ : Մեր վրայ հսկողութիւնը խստացուցին ու այլեւս փողոց չելանք :

Կրկին ճամբորդեցինք Դամասկոս , թուրք ընտանիքին հետ : Յետոյ նորէն Պոլիս եւ յետոյ , Անգարա ուր մնացինք մինչեւ Զինադադար :

Անգլիացիները Հայ կը փնտռէին : Օրին մէկը , փողոցը կը դիտէի , տեսայ երկու անգլիացի զինուորական , 14 տարեկան աղջկան մը հետ որ մազի կտրուածքէն յայտնի էր թէ մեզի բախտակից է : Կամաց մը ըսի թէ այդ տանը մէջ երկու Հայ ենք : Անմիջապէս դուռը

զարկին: Հանձմը մերժեց դուռը բանալ, առարկելով, որ ամուսինը տունէն բացակայ է: Այդ միջոցին ամուսինը որ դուրսէն կուգար, դուռը բացաւ: Անգլիացիները ըսին թէ յանձնեցէք հայ աղջիկները: Հանձմը թէեւ շատ ընդդիմացաւ եւ ըսաւ թէ հայ աղջիկներ չկային իրենց մօտ, եւ մենք իր զաւակներն էինք եւայլն, սակայն ստիպուեցան մեզ յանձնել: Անգլիական ոստիկանին մէկը հայ թարգման մըն էր: Մեզ հետ հայերէն կը խօսէր, սակայն մենք բոլորովին մոռցած էինք մեր մայրենի լեզուն, թէև քիչ մը կը հասկնայինք: Մեզ տուն մը տարին ուր հինգ աղջիկներ եւս կային: Մօտաւորապէս երեք շաբաթ մնացինք այդ տունը, մեր թիւը հասաւ 18ի: Մեզ ղրկեցին Պոլիս եւ տեղաւորեցին Հայտար Փաշա, վրանի մը տակ:

Մօրեղբայրս Գալուստ, հայրենակիցներէ տեղեկանալով իմ ազատուիլս, եկաւ զիս գտաւ: Գրկախառնուեցանք ու լացինք: Մեր գերզաստանէն, մեզմէ զատ ոչ ոք մնացած էր:

Տարի մը դպրոց դացի եւ հայերէն սորվեցայ:

Ամուսնացայ Թոքատցի երիտասարդի մը, Պետրոս Տէր Պօղոսեանի հետ: 1922էն ի վեր կ'ապրինք Ֆրանսա մեր երեք զաւակներով:

Ֆրանսա, 1951:

ԵԱԼԱԳ-ՏԵՐԷ

ՅԱԿՈՒՅ ՍԻՄՈՆԵԱՆ

Պոլսոյ Գարամուսալ գաւառակին պատկանող Ես-
լազ-Տէրէցի եմ :

Տասը տարեկան էի, երբ օր մը Թուրքերը մեր գիւ-
ղը պաշարեցին եւ մեր հայրերը բանտարկելով սկսան
ծեծել անխնայ, զէնք փնտռելու պատրուակով : Քիչ
յետոյ մեզ աքսորեցին : Տասը հոգի էինք . հայրս , մայ-
րըս , երկու եղբայրներս , քոյրս իր երկու զաւակներով
եւ կեսուրով եւ քեռայրս :

Գոմէչի կառքով Լէվքէ բերին մեզ : Ժանտարմանե-
րը ըսին թէ կրնանք շոգեկառքով շարունակել մեր ճամ-
բան եւ կամ մեր կառքով : Հայրս նախընտրեց շոգե-
կառքը որ տեղերնիս շուտ հասնինք : Իսկիչէհիր հաս-
նելով, քաղաքէն դուրս վրաններ լարեցինք : Արդէն հա-
զարաւոր վրաններ կային : Քանի մը օր ետքը, 15-20
ձիաւոր եւ թուրք կիներ ու տղաք մտան վրանները, ծե-
ծեցին ու յափշտակեցին ինչ որ կրցան :

Այդտեղէն մեզ վակոններով Գոնեա տարին : Մեր
վրանները կրկին լարեցինք, ուրիշ հազարաւոր վրան-
ներու քով : Օդը սաստիկ տաք էր : Քովերնիս
Հայ-Լազերը կային, լեռներու զովութեան վարժուած
մարդիկ, որոնք տաքին չղիմանալով կը մեռնէին, օրա-
կան 5-6 հոգի :

Առաւօտ մը կանուխ, ժանտարմաները եկան ու մեր
վրանները քանդեցին եւ մեզ վակոններու մէջ թխեցին :
Այնչափ սեղմուած էինք որ երկու հոգի մեռան : Ամայի
տեղ մը մեզ վակոններէն դուրս հանեցին : Այդտեղ հա-
ւաքուած դտանք տասնեակ հազարաւոր աքսորեալներ :
Սկսանք քալել : Բեռերնիս ծանր էր : Մինչեւ իրիկուն

զանոնք մաս առ մաս ծախեցինք կամ նետեցինք: Քալելով անցանք Պողանթի, Թարսուս, Ատանա, Օսմանիէ, Իսլահիէ քաղաքներէն: Պողանթիի լեռներուն մէջ չէթէները աքսորեալներու վրայ յարձակեցան, զարկին ու կողոպտեցին:

Օսմանիէի մէջ սաստիկ անձրեւի բռնուեցանք, կարելի չեղաւ վրանները կանգնել: Լեցուեցանք պարապ վակօններու մէջ: Վակօն գլուխ մէկ պարկ չոր հաց կուտային: Հօրեղբօրս տղան, Կիրակոսը որ Հայաստաններգաղթեց, յաջողեցաւ մէկ քանի պարկ ստանալ եւ մեր քանի մը օրուան ապրուստը ապահովել:

Մեզ օրերով քալեցուցին: Չէինք գիտեր թէ ո՞ւր ենք, ո՞ւր կ'երթանք: Աննկարագրելի է աքսորականներու քաշածը այդ ճամբաներուն վրայ: Օրին մէկը, բըլուրի մը ետեւ հազարաւոր վրաններ տեսանք: Խառնուեցանք իրենց: Այլեւս անապատին մէջն էինք:

Յաճախ, մանաւանդ գիշերները, մեր վրայ կը յարձակէին, կը կողոպտէին, կը սպաննէին, կ'առեւանգէին: Մինչեւ լոյս լաց ու շիւան: Առտուները նորէն կը քալեցնէին: Ծեր, հիւանդ, երեխայ, ով որ չէր կըրնար քալել, կը սպաննէին: Երկու նորածին երախաներու դիակները տեսայ, բոլորովին մերկ: Մարդ մը անոնց երիտասարդ մայրը շալկած կը տանէր պռալով. «Ձաւակս չեմ ձգեր դահիճներուն ձեռքը»:

Տէր-Ձօր հասանք: Հայրս արդէն սպաննուած էր: Հօրեղբօրս միւս տղան տեսած էր հօրս սպաննուելը: Երկու օր ետքը, զինքն ալ սպաննեցին:

Չեմ յիշեր թէ քանի՞ օր մնացինք Տէր-Ձօր: Առաւօտ կանուխ, ձիաւորներ, որոնք ժանտարմայի ալ չէին նմանէր, մեզ քշեցին Տէր-Ձօրէն: Անէգէ անապատին մէջն ենք: Ոչ գիւղ, ոչ քաղաք: Հեռուն արաբական սեւ վրաններ: Ժողովուրդը կը քալէ անընդհատ. անօ-



ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

Իրանէն հայրենադարձ կողխողունի մը

Թի, ծարաւ, հիւանդ, արեւին տաքութենէն խենթեցած :

Շատեր իրենց զաւակը չեն ճանչնար, ուրիշներ իրենց հայրն ու մայրը: Ամէն մարդ գլուխն առած կը քալէ: Երբեմն հեռուն լիճ մը կ'երեւայ: Կը վազեն ջուր խմելու: Լիճը անյայտ կ'ըլլայ: Իրենց աչքին երեւցեր է կամ միրափ է եղեր, որ յաճախ կը տեսնուի անապատներու մէջ: Յանկարծ Արաբները կը յարձակին կը կողոպտեն, կը մերկացնեն, երախաները կը յափշտակեն:

Օրին մէկը, մեզի ընկերացող ժանտարմաներուն թիւը կրկնապատկուեցաւ: Ըսինք թէ այլեւս մեռնելու կ'երթանք: Նորէն քալեցինք օրերով: Գիշեր մը հրացանաձգութիւն լսեցինք: Վերջէն իմացանք որ Սէնճար լեռան Եզիտի Քուրտերը աքսորականներու կարաւանին ճամբան կտրեր եւ փորձեր են մեզ ազատել: Արդէն Հա-

յերու ուրիշ կարաւան մը ազատած են եղեր :

Հասանք Մուսուլ : Մեր ընտանիքէն չորս հոգի մընացած էր : Ոչ վրան ունինք, ոչ հագուստ, ոչ ուտելիք, ոչ ալ դրամ : Եղբայրս հիւանդ պառկած էր : Արտերը կ'երթայինք, խոտ կ'ուտէինք : Մուսուլի շուրջը հագարաւոր աքսորեալներ նոյն վիճակին մէջ էին : Ամէն օր տասնեակներով մարդ կը մեռնէր, թաղող չկար : Գիշերը, բորենիները, ցորեկը՝ շուները դիակ կ'ուտէին : Առաւօտ մը մեր վրանին առջեւ կիսով կերուած դիակ մը գտանք : Արաբները քիթերնին բռնած կ'անցնէին, իսկ մենք հոտ անգամ չէինք առներ :

Սկսանք մուրալ : Արդէն հագարաւոր մուրացողներ կային : Արաբները, օր մը, ծէրահցի երիտասարդ կին մը բերին : Մայրս չուզեց զինքը մեր վրանը առնել : «Երեք հատ զաւակ ունիմ, ըսաւ, հիւանդ ու անօթի են» :

«Մի վախնար, մայրիկ, պատասխանեց կինը, ես դրամ ունիմ, ձեզի ալ կը կերակրեմ» : Եւ մէծիտ մը տալով մօրս, պատուիրեց որ երթայ հաց գնէ : Յարձակեցանք հացին վրայ եւ սկսանք ուտել դառագեղի զաղաններուն նման : Կնոջ դրամով փայտ գնեցինք, հագուստնիս լուացինք եւ ոջիլներէն մաքրուեցանք : Առաւօտ մը մեզ ճամբայ հանեցին դէպի Քէրքուք : Սայլերու մէջ նստեցուցին հիւանդները, գոյքերն ալ էչերու բեռցուցին : Անձրեւ մը սկսաւ որուն նմանը չեմ տեսած : Գիշեր եղաւ, չորս կառք անյայտ եղան : Ատոնց մէջ էր մեզ կերակրող հայ կինը : Յաջորդ առտու տեղեկացանք որ չորս կառքերուն ճամբորդները փոս մը նետեր եւ թաղեր են ողջ-ողջ :

Ալթուն Քէօփրիւ հասանք և երկու օր մնալէն ետք, մեզ ճամբայ հանեցին : Սաստիկ տաք էր, անօթի եւ

ծարաւ էինք: Երանի կուտայինք ճամբուն վրայ մեռնողներուն:

Արաբները, վերջապէս Քէրքուքէն դուրս կարաւանը կեցուցին: Մայրս ու եղբայրս, որուն ոտքերը կրկին ուռած էին, քաղաքին մէջ խան մը փոխադրուեցան: Հոտ ուրիշ աքսորականներ ալ կային: Քոյրս ու ես, Հաճի Ահմէտ անուն Արաբի մը քով ծառայութեան մտանք: Ես Հաճի Ահմէտին կովերը կ'արածէի, քոյրս տան գործերը կ'ընէր:

Վերջէն տեղեկացայ որ այդ օրերուն Թուրքերը պարտուեր եւ զինադադար կնքուեր է:

Մեզմէ առաջ եկած զաղթականներուն Քէրքուքի կառավարութիւնը ընտանիք գլուխ հինգ ոսկի տուեր է, բայց մենք այդ բախտը չունեցանք:

Քէրքուքի մէջ, քոյրս եւ ես ծառայեցինք տեղացիներու մօտ, հազիւ մեր սնունդը ապահովելով: Մայրըս կը մուրար: Ողջ մնացած եղբայրս հիւանդ պառկած էր: Կը ջանայի գոնէ հաց մը տանիլ մօրս երբեմն, բայց ամէն օր չէր յաջողէր: Յաճախ ձմերուկի եւ սլտուղի կեղեւներ կը փնտռէինք շուկային մէջ որ ուտենք:

Զինադադարին, Քէրքուքի կառավարութիւնը ամսական 20 ղրուչ սկսաւ տալ իւրաքանչիւր հայ աքսորականի: Դրամը մեծ արժէք ունէր որովհետեւ աշխատանք չկար: Ամսական 20 շրուչով գէշ-աղէկ կրնայինք ապրիլ, երբեմն գործ ճարելով: Եղբայրս սնունդ առնելով, արագօրէն բժշկուեցաւ:

Անգլիացիք կը մօտենային Քէրքուքին: Թուրքերը յուսահատած էին: Իրենց մօտ գտնուած հայ գերիները սկսան յանձնել:

Քէրքուք քաղաքին թշուառութիւնը իր գազաթնակէտին հասաւ: Բնակիչները սովի մատնուեցան: Թուրք զինուորները մեզի չէին ձգեր շուն, կատու, կրեայ, սատկած ձի, ինչ որ գտնէին կ'ուտէին եւ կը մեռնէին անհաշիւ: Մէկ փոսի մէջ 5-10 հատ զինուոր միասին կը թաղէին, յետոյ սկսան պարտէզներու պատերուն տակ կարգով շարել թուրք զինուորներու ըխակները եւ պատերը փլցնել ղիակներուն վրայ:

Անգլիացիք Քէրքուք մտան: Վերապրող Հայերը օթօներով Պաղտատ փոխադրեցին: Որբերը տեղաւորուեցան որբանոցներու մէջ: Կիրակի օրերը Հայոց եկեղեցին կ'երթայինք ընկերներով եւ ժամերգութենէն ետք, կը ղիտէինք անապատէն եկած աղջիկները որոնց երեսը «հաճի» ծեծուած էր: Կիրակի մը, երբ դարձեալ եկեղեցիին բակը կեցած էինք, ընկերներէս Ենովք անունով մէկը ըսաւ. «Սա աղջկան երեսը ծեծուած չէ, ես սիրեցի զինքը, հետը պիտի ամուսնանամ»: Աղջիկը խումբէն զատուելով մեզի մօտեցաւ և առջ տղոսն հարցուց. «Դուն Ենովքը չե՞ս, դիս ճանչցա՞ր»:

«Ո՛չ» պատասխանեց տղան: «Քու Մարիամ քոյրդ չե՞մ», հարցուց աղջիկը: Իրարու վիզ փաթթուեցան եւ ամենէքս ալ լացինք: Մարիամը հիմա Արժանթին է, երկու դակի տէր, իսկ Ենովքը վերջին կարաւանով ներգաղթեց Հայաստան:

Պաղտատ մնացինք 7-8 ամիս, յետոյ, Մուշեղ սըրբազանին կարգադրութեամբ Փոր-Սայիտ գացինք Պասրայի ճամբով: Վեց հարիւրի չափ երկսեռ որբեր էինք: Պասրայի Հայերը մէկ քանի օր մեզ կերակրեցին: Պարկերով ուտելիք տուին եւ քարափ եկան մեզի ճամբու դնելու: Որբերս հաւաքուեցանք և երգեցինք մեր շինած երգը.

Մենք չենք մոռնար քեզ Տէր-Զօր,
Ուր տուինք մէկ միլիոն գոհ :
Զենք մոռնար մեր վրէժը
Պիտի յիշենք դարէ դար...

Փոռ-Սայիտ հասանք 20-25 օրէն : Այդտեղ տասը հազարի մօտ վրաններ գարկած էին Հայերը : Որբերը տեղաւորեցին որբանոցներու մէջ, մայր ունեցողները վրաններու տակ : Սիսուան վարժարանը կը յաճախէի : Հազար աշակերտ էինք, Մարաշէն, Տէօրթ-Եօլէն, Եէրէ Պազանէն, Հաճընէն : Ամէնքն ալ տաճկախօս : Մինակ ես հայախօս էի որովհետեւ մեր գիւղը Թուրք չկար : Հպարտ էի որ Թուրքերէն չեմ գիտեր : Մեր տնօրէնն էր Խարբերդցի Մեսրոպ Ժամկոչեանը : Երեք հարիւր աշակերտներով մեզմէ սքառութի խումբ կազմեցինք :

Գերմաններու պարտութեան ատեն, ամէն ազգէ ըսքաութիներու եւ զինուորներու հետ քաղաքին մէջ տողանցք ըրինք : Մեր մարզիչը հայերէն հրաման տուաւ : Փողերը հնչեցուցինք : Պատուհաններէն մեր վրայ ծաղիկ եւ դրամ կը նետէին : Տողանցքէն ետք, անլիխացի սպայ մը մեզ մեծ սրճարան մը հրաւիրեց : Ըսաւ որ շուտով Անգլիա պիտի երթայ եւ հայ սքառութիներուն համար կարեւոր դումար մը պիտի զրկէ : Դեռ պիտի զրկէ :

Թուրքիան պարտուած էր : Եղեռնէն վերապրողները սկսան իրենց ծննդավայրը դառնալ : Կարգը մեզի եկաւ : Եգիպտոսէն Հայֆա, Հալէպ, Ատանա եւ Միսիս տարին մեզ : Գիւղէն լուր առինք որ հայրենակիցներ արգէն վերադարձած են : Կը գրէին որ մենք ալ վերադառնանք : Բայց մենք կամաւոր գրուեցանք եւ Կիլիկիա գացինք : Ըսած էին թէ Դաշնակիցները Հայերուն տուած են Կիլիկիան : Ի՞նչ յուսախարութիւն : Կիլիկիան նորէն ջար-

դուեցաւ : Անկարելի եղաւ Հաճընին օգնութեան հասնիլ : Ոչ գէնք տուին մեզի , ոչ հագուստ :

Պուլիս վերադարձանք մեր ողորմելի խնայողութիւններով կամ ասկէ անկէ ճամբու ծախք խնդրելով : Ես շոգենաւին մէջ , կաթսաները տաքցնելով ճամբորդեցի : Ծանր գործ էր , բայց ստիպուած էի կատարել :

Վերջապէս Պուլիս եւ անկից ալ մեր գիւղը հասանք , ուր հանգիստ մնացինք վեց ամիս :

Տասնըհինգ տարեկան էի երբ աքսորէն վերադարցայ :

Հայաբնակ 250 տունով կամ 1500 բնակիչով գիւղ էր Եաւազ-Տէրէն : Հազիւ հարիւր հոգի էինք վերապորոզներս : Անմիջապէս սկսանք մեր կործանած գիւղը վերաշինել : Պտուղները քաղեցինք ու մաս մը ծախեցինք , ցորենը հնձեցինք , տուներնիս լեցուցինք : Դրացի Թուրքերը նախանձով կը դիտէին մեր գիւղին վերածնունդը : Անգամ մը յարձակեցան մեր վրայ , բայց Գասըմ Չաուշ անուն զինուոր մը , որ շատ բարիք տեսած էր Հայերէն , միջամտեց : Ատկէ ետք , այլեւս լաւ դրացնութեամբ կ'ապրէինք Թուրքերու հետ :

Թուրք զինուորները որոնք անօթի , ծարաւ մեր եւ Մէրտէկէօզ հայաբնակ գիւղէն կ'անցնէին , կը կերակրէինք :

Երկու գիւղերը իրարմէ հինգ վայրկեանի հեռաւորութիւն ունէին :

Դրացի Ձէրքէզներն ալ շատ լաւ կը վարուէին մեզի հետ : Անգամ մը ձէմալ փաշան եկաւ մեր կողմերը : Մեծ խնջոյք սարքեցինք իրեն համար : Շատ գոհ մնաց եւ Թուրքերուն պատուիրեց մեր երկու գիւղերուն ձեռք չդպցնել : Ուրիշ մեծ սպաներ ալ կուգային , սուրճերնիս կը խմէին . «մէկ սուրճը քառասուն տարի չենք

մոռնար» կ'ըսէին, սեղանին հացը կը համբուրէին, «Ձեզի պէտք ունինք, մեր զինուորը կը կերակրէք» կ'ըսէին:

Մենք ալ գոհ էինք, վերագտած ըլլալով մեր սիրելի գիւղը: Եթէ փախչիլ ուզէինք, կարելի էր: Յունական բանակը չորս ժամ հեռու էր մեր գիւղէն: Վերջէն հասկցանք որ սխալեր ենք: Երկու ժամ հեռու էր Յըլաճեզ յունական գիւղը: Բնակիչները թրքախօս էին: Մեծով պղտիկով զինուած էին:

Թուրքերը Գարամուսալը գրաւելէ ետք, Յըլաճըզն ալ գրաւեցին: Այրերը փախան կամ սպաննուեցան: Կիները եւ երախաները մեր գիւղը ապաստանեցան: Թուրք զինուորները յոյն կիներէն կը զատէին եւ կը տանէին: Շատ չանցած յունական բանակը եկաւ: Թուրք պահակները գերի բռնեցին, կ'ուզէին սպաննել, հայ գիւղացիները թող չտուին, ըսելով որ մեր պահապաններն են: Մերձակայ թուրք գիւղերը կրակի տուին: Անոնց քաջուելէն ետք, Թուրքերը թաքստոցներէն դուրս ելան, իրենց օգնեցինք որ հրդեհը մարեն:

Մեր գիւղին անունը մինչեւ Մուստաֆա Քէմալին ականջը հասեր էր: Թուրք զինուորները մեր գիւղէն եւ Մէրտէկէօզէն յոյն կիներն ու երեխաները հաւաքեցին եւ մօտիկ գետեզրը տանելով սպաննեցին: Ուր որ Յոյն գտնէին, կը սպաննէին: Յոյն ջաղացպան ընտանիք մը, հինգ զաւակներով մեր գիւղին մօտ մորթեցին, գիշեր ատեն: Յաջորդ առտու դեռ ողջ էր ամենափոքր երախան որուն փորը դանակ մը ցցուած էր:

Քեռայրս կ'ուզէր որ գիւղը ամբողջութեամբ հեռանայ դէպի Պոլիս, գիւղացիներուն մէկ մասը համամիտ չէր: Նոր վերադարձեր էինք աքսորէն: Տեսեր էինք թշուառութիւն եւ մահ: Յոգնած էինք թափառելէն եւ յոյս դրած էինք Թուրքերուն բարեկամութեան վրայ: Կ'ուզէինք այլեւս հանգիստ ապրիլ: Կերեւայ որ դեռ

չէինք ճանչցած դադան թուրքը :

Յունվար ամսուն , իրիկուն մը , հաղարի չափ զինուոր եկան : Գիւղացիները անմիջապէս հաց հաւաքեցին , զինուորները կերակրեցին : Սպաները մեր սեղանին հացը կը նախընտրէին երզում ընելով որ մեզի վնաս պիտի չհասնի :

Առաւօտեան տեսանք որ գիւղը պաշարեր են : Մեզ ամէնքս լեցուցին եկեղեցիին մէջ : Սարսափը պատեց մեզ , հասկցանք որ պիտի սպաննուինք :

Մեր մէջէն Տէօնկէլ-մայրիկ անունով կին մը , մէկ հատիկ աղջիկ մը ունէր , անունը Նունեայ (այժմ Իսիլէ-Մուլինօ կը բնակի) : Անապատէն ազատուած եւ գիւղ եկած ու ամուսնացած էր Նունեան : Մայրը կ'ողբար եւ կ'երգէր . «Աղջիկս , ես քեզի վայրագ թուրքերէն , Արաբներէն , Քուրտերէն ազատեցի , հիմա , գիշեր-ցորեկ մեր սեղանին հացը ուտող թուրքը մեզ պիտի սպաննէ : Երանի այնտեղերը մեռած ըլլայինք : Աստուած , երկրաշարժ մը ըրէ , եկեղեցիինիս փլցուր , գոնէ չուն թուրքերու զնդակովը չմեռնինք» :

Այրերը խնդրագիր մը գրեցին թէ իսլամութիւնը կ'ընդունինք , «Գացած տեղերնիդ իսլամ եղէք» , պատասխանեցին թուրքերը : Գիշերը եկեղեցի մտնելով մեր դրամները կողոպտեցին : Առտուն երսիսաները հաց կ'ուզէին : Գիւղացի մը թուրքերուն երեսին պոռաց . «Գացէք հացերնիս բերէք , գոնէ կուշտ մեռնինք» : Կէս օրուան մօտ , եկեղեցիէն դուրս քշեցին մեզ ծեծելով : Կիները սկսան լալ : «Ինչո՞ւ կուլաք , հեզնեց թուրք ըսպայ մը , աքսոր դացիք ու վերադարձաք : Նորէն պիտի երթաք ու նորէն կը վերադառնաք» . . .

Մէրտէկէօզի Հայերն ալ լեցուցեր էին եկեղեցի : Գիշեր մը այդ գիւղը մնացինք : Եւ սկսանք երկրորդ տարագրութիւն մը , գիւղէ գիւղ եւ լեռնէ լեռ : Կողո-


պուտ, անօթութիւն, յողնութիւն, ծարաւ, սպաննութիւն, առեւանգում, ճիշտ նախորդին նման: Մեր վրայ հաղուստ չմնաց, մերկ ու բոպիկ էինք:

Տեղ մը երկու գեղեցիկ կին զատեցին: Մեր բողոքը օգուտ չըրաւ: Անոնց ամուսինները միասին դացին եւ իրիկուան ամէնքը մէկ վերադարձան եւ միացան մեր կարաւանին: Այսպէս Աղասար գիւղին մէջ ղինուորական շեփորներով մեզի կառավարական խոնախ տարին: Թուրքերը մեր վրայ կը խնդային: Մարդկութենէ դուրս էինք. կոնակնիս մէյմէկ պարկի նման ծածկոց, ցուրտէն պատասպարուելու համար, կիներն ալ իրենց կոնակը կապած էին երախաները: Չէինք վախնար այլեւս, մահը կը փնտռէինք: Աղասարի մէջ ժամանակին արդէն հայկական ջարդ մը եղած էր: Հօճան մինարէին վրայ պօռացած է «Մուհամմէտը սիրողը թող Հայ մը սպաննէ»:

Թուրքերը կը յարձակին Հայերուն վրայ, բռնածնին հորերուն մէջ կը նետեն: Իզմիրի առաջնորդ Ստեփաննոս եպիսկոպոսը կ'երթայ մեռելները հորերէն կը հանէ եւ թաղումը կը կատարէ: Եօթ տարեկան աղջիկ մըն ալ ողջ կը հանէ: Այդ աղջիկը ինծի պատմած է:

Ատկէ, Սաքարիա գետին եզերքով մեզ Կէյվէ քաղաքը տարին: Յետոյ ձիւնին վրայ քալելով մինչեւ Կիւնիք գիւղը: Սաստիկ ձիւնամրրիկի բռնուեցանք: Ճամբաները ձիւնով ծածկուած էին, երթեւեկ չկար: 8-10 օրի չափ Կիւնիք մնացինք: Սրճարաններուն մէջ բաժնած էին մեզ: Աչքի ցաւ եղանք, իրարու ձեռք բռնելով կը քալէինք: Կիւնիքէն Կիրիտիկ անուն գիւղ մը տարին մեզ ուր քանի մը օր մնացինք, ձիւն կը մաքրէինք, փայտ կը կոտրէինք, ապրուստնիս ճարելու համար: Լօեցինք որ յունական բանակը առաջացեր է:

Նոր Արարիկի մէջ հայրն ստորագրեցիւ շինած տուննոր
Վ. Ս. ԱՆՆՈՒՆՅԱՆ



Թնթանօթի ձայները մեզի կը հասնէին: Կ'աղօթէինք որ
գան եւ մեզի ազատեն: Տիւզճէի Յոյն-Լազերը աքսոր-
ուեցան Կէրէտէի փողոցներուն մէջ լուսցուցին: Առտու
մը կանուխ մեզ ալ անոնց հետ քշեցին: Այլեւս գիւղ
ալ չկար, ձիւնին վրայ կը պառկէինք: Շաբաթներ քա-
լելով, ջուրի մը քով հասանք: Թուրքերը մեր շուրջը
հաւաքուեցան: «Կեավուր Հայերը, կ'ըսէին, Պերլինի
մէջ Թալէաթ փաշանիս զարկեր են: Մէկ Հայ պէտք չէ
որջ ձգել»:

Մեր անցած գիւղերու եւ քաղաքներու մէջ, աքսոր-
է ու ջարդէ ազատուած խլեակներ կ'ապրէին, որոնք,
մեզի կ'օգնէին կրցածնուն չափ, ինչպէս Եօզկատի եւ
Գըր Շէհրի մէջ մնացած խեղճ Հայերը:

Այս վերջին քաղաքին մէջ քիչ մը հանգիստ ըրինք,
բայց այդտեղ էր որ մեր կարաւանին այրերն ու կիները
իրարմէ զատեցին: Մայրս, քոյրս եւ եղբայրս հոն մը-
նացին: Քեռայրս եւ ես Աւանօղ դիւղը քշուեցանք եւ
հոտ մնացինք երկար ատեն: Հարուստ Թուրքի մը քով
ծառայութեան մտայ: Գոհ էի վիճակէս, կրնայի գոնէ
ուսել եւ տաք ախոռի մը մէջ քնանալ:

Տանը մէջ իմ տարիքս թուրք աղջիկ մը կար: Միա-
սին այգի կ'երթայինք աշխատելու: Մայրը առաջարկեց
որ կրօնափոխ ըլլամ եւ աղջկանը հետ յարաբերութիւն
ունենամ: Մերժեցի: Կը նախընտրէի մեռնիլ քան թէ
թրքանալ: Երեք ամիս աշխատեցայ այդ տանը մէջ:
Առտու մը մեզ նորէն հաւաքեցին ըսելով որ ձեր տե-
ղերը պիտի վերադառնաք: Բայց քշուեցանք Կեսարիա,
յետոյ՝ Էվէրէկ, Սեբաստիա, Մալաթիա եւ վերջապէս
Խարբերդ: Ամէն տեղ, վերապրող հայ խլեակները մեզ
կը դիմաւորէին, կը կերակրէին: Եւ ամէն տեղ թուրք
ժանտարմաները մեզ կը ծեծէին եւ կը կողոպտէին,

Թուրք ժողովուրդը մեզ կը ծաղրէր եւ կ'ըսէր թէ «կեա-
վուր հայեր, արմատէն պէտք է ձեզ չորցնել...» Ճամ-
բաները մեռնողներուն, ձեռք ու ոտք սառողներուն
հաշիւը չկար: Սերաստիայէն, Հայ եւ Յոյն 7-8000
հոգի ճամբայ ելանք եւ Խարբերդ հասանք 2-300 միայն:

Առաջին տարագրութեան, Արաբիոյ անապատին
մէջ, ժողովուրդը տաքէն ու ծարաւէն մեռաւ, Գէմա-
լական աքսորին ալ՝ ցուրտէն:

Խարբերդէն ժամ մը հեռու մեզ կեցուցին: Մաստիկ
ցուրտ էր: Հաց ծախողներ եկան, որոնցմէ տեղեկացայ
թէ Խարբերդի մէջ ամերիկեան որբանոց մը կար: Որո-
շեցի փախչիլ եւ Խարբերդի որբանոցը մտնել: Մեր գիւ-
ղէն երկու կին ինծի միացան, մէկը հիմայ Ալֆորվիլ
կը բնակի, միւսը՝ Մարթա Կիւմիւլեան, հարաւ. Ամե-
րիկա պացած է: Գիշերանց ճամբայ ինկանք: Ուրիշներ
ալ մեզի միացան, եղանք 15 կին, ես եւ ինծի տարեկից
տղայ մը: Առտուն այգիներու մէջ գտանք ինքզինքնիս,
Խարբերդէն շատ հեռու քրտական գիւղի մը մօտերը:
Կիները այդտեղ ձգելով, մենք երկու տղայ սկսանք
Խարբերդի ճամբան փնտռել: Փլատակ գիւղ մը հա-
սանք, ուր երկու հայ կին տեսնելով, մեր վիճակը
յայտնեցինք: Ըսին թէ գիւղին մէջ, որ Սուրսուրի կը
կոչուէր, Ամերիկացի միսիոնարները կայան մը հաս-
տատած են, որուն վերակացուն Խաչիկ անուն հայ մըն
է: Պարոն Խաչիկը մեզի քիչ մը դրամ տուաւ, բայց
յայտնեց թէ գիշերելու տեղ չի կրնար տալ: Կայարանին
մէջ պատասպարուած էին աքսորականներ, շատերը Կի-
րասոնի կողմերէն: Իրենց մէջ տղամարդ չկար, ամէնքն
ալ կին ու երեխայ: Ազնիւ հայ կին մը մեզի ներս ա-
ռաւ: Գացինք մեր ճամբու ընկերները բերինք, անոնց
ալ տեղ ճարեց: Այդ կնոջ անունն էր Զարթիկ Գօրօ-

եան : Գիւղին Թուրքերը լսեցին թէ փախստական Հայեր կան : Գղիքը եկաւ ու սպառնաց մեզ ամէնքս բանտարկել, բայց Չարթիկը եւ Սուրսուրի Հայերը յաջողեցան մեզ պահել, տունէ տուն փախցնելով :

Գիւղին աղբիւրը մեր տան դիմացն էր : Մութ գիւղեր մը, խարխաբելով գացի Ղուր առնելու : Աղբիւրին վրայ ձեռքս ծրարի մը հանդիպեցաւ, մէջը իւղոտ հաց, սիմիթ, չամիչ, պանիր գտայ : Առտուն Չարթիկը ըսաւ որ «Սուրսուրցիները աղբիւրը կաղանտեր են : Ամէն տարի Թուրքերը կ'ուտէին, լաւ որ դուն գտեր ես» :

Չարթիկը ինձ աշխատանքի համար ճամբեց Թուրքի մը տունը : Կինը շատ գեղեցիկ հայ մըն էր : Իրենց կովերը եւ էջերը կ'արածէի : Ամէն առտու Ղուր կը տաքցնէի, մէկ օր ամուսինը կը լոգնար, միւս օրը ամուսինին եղբայրը : Հայ կնոջը հարցուցի թէ այս ցուրտին ինչո՞ւ կը լոգնան : Պատասխան չտուաւ եւ կարմրելով հեռացաւ : Չարթիկին հարցուցի : Շատ տխրեցաւ եւ ըսաւ որ «Երբ մեծնաս կը հասկնաս» : Եօթը ամիս այդ տունը մնացի : Խեղճ հայ կինը իր կեանքը կը պատմէր եւ կուլար : Շատ տառապած էր այդ Թուրքին ձեռքէն որ զինքը յափշտակած էր : Երկու սիրուն երախաներ ունէր, Հասան եւ Հիւսէին : Թուրքը զիս տունէն վըռնտեց կնոջը հետ հայերէն խօսելու համար : Ոստիկանները նորէն եկան եւ փախստական Հայերը հաւաքելով տարին : Ես յաջողեցայ պահուիլ :

Վերջապէս, կառավարութիւնը հրամայեց որ բոլոր Հայերը Հալէպ երթան : Խարբերդցիները սկսան տունտեղ ծախել : Չարթիկին և ուրիշ հայ կիներու հետ ճամբայ ելանք : Մեր ուրախութիւնը սահման չունէր : Զիաւորներ եւ ժանտարմաներ մեր վրայ կը հսկէին մինչեւ սահմանազուլի :

Գիշերները կը հաւաքուէինք և կը խօսէինք: 1915ին պատերազմէն ազատուող զինուոր մը անգամ մը պատմեց թէ հայ զինուոր մը կար իրենց հետ, որուն անունը Անդրանիկ էր: Վայրագ սպայ մը զինքը մեռցուցած է ծեծելով, որովհետեւ անունը Անդրանիկ էր: Հայ զինուորը ծեծելով Անդրանիկ փաշան ծեծած կ'ըլլայ եղեր:

Սարբերդէն Տիգրանակերտ ճամբուն վրայ քար կոտորող Հայերու հանդիպեցանք, մերկ, բոպիկ, կմախացած, կարծես գերեզմանէն ելած:

Տիգրանակերտ երկու գիշեր եկեղեցին մնացինք, յետոյ Եդեսիա (Ուրֆա) հասանք: Երկու օր ալ հոն մնացինք: Սուրուճ դացած ատեննիս ժանտարմը ըսաւ. «Զեր Գրիգոր Զօհրապը այս լերան մէջ սպաննեցինք»:

Սուրուճէն Պիլէճիք եւ օր մը եւս քալելով երկաթուղիի գծին հասանք: Հալէպ 15 օր եկեղեցիին բակը պառկեցանք: Գաղթականութիւնը խիստ մեծ էր, բոլոր խաները լեցուած էին: Մայրս եւ եղբայրս որոնք Մէրսին կը գտնուէին, Հալէպ եկան: Հայ շօֆէօրները որոնք Պաղտատէն Հալէպ մարդ կը փոխադրէին, մեզ Պաղտատ տարին: Երկու տարագրութեան միջոցին, երկու անգամ Պաղտատ դացինք: Տարի մը Պաղտատ ապրելէ ետք, 1925ին Ֆրանսա եկանք:

Ֆրանսա, 1951

Անծանօթ աղջկան մը օրագրութիւնը, գրուած՝ տարագրութեան քամբուն վրայ, մատիտով: Ստորագրութիւնը, թերեւս Նուարդ Շիրինեան, հազիւ ընթեռնելի է, նոյնպէս՝ շատ տողեր:

Մ Ա Ր Զ Ո Ւ Ա Ն

ՆՈՒԱՐԴ ՇԻՐԻՆԵԱՆ

1915 Յուն. 20ին առաջին անգամ սկսան հնչակեաններու տունները խուզարկել: Օղանեան Գազիկ էֆէնտին, որ կուսակցութեան պետն է, Արամեանը, Խաչիկ Գլտըրեանը, Արմենակ Ժամկոչեանը, Մամիկոնեանը եւ ուրիշ 30 ընկերներ, շղթայելով Սեբաստիա զրկեցին: Յիշատակ մը թող մնայ որ անոնք, ժպիտ մը իրենց շրթներուն վրայ, զոհուեցան իրենց հայրենիքին համար:

Յունիս 15ի գիշերը, զինուած Թուրքեր Հայերու տունները մտնելով, տղամարդիկը ձերբակալեցին եւ պոտոտմները (գետնի տակ մառան) լեցուցին: Սարսափելի տանջանքներով անոնցմէ ղէնք պահանջեցին: Միհրան Քիրէմիտճեանը, որ քաջ երիտասարդ մըն էր, տանջանքին չդիմանալով, իր ընկերներէն կը խնդրէ որ ձեռքին մատներուն մէջ մխոլած դամբ հանելու համար զմեկի մը տան եւ այդ զմեկիով անձնասպան կ'ըլլայ: Շատերը խենթեցան, ինչպէս Զարդարեանը: Մարածներուն վրայ ջուր թափելով կ'արթնցնեն եւ կը

չարունակեն տանջել: Շիրազեան Աբիսողոմը, ծեծին չդիմանալով թուրք եղաւ եւ ընկերները մատնեց: Տանջանքները՝ կարմրած երկաթին վրայ քալեցնել կուտան, կուծքերնուն վրայ կրակ կը թափեն, ձեռքի մատները կ'այրեն: Շիրազեան Աբիսողոմը Յուդայի նման մատնելով, գերեզմաննոցի նահատակներուն վրայէն 40 հրացան հանել տուաւ: Քսան զինուոր, հրացաններու վրայ մէյմէկ կարմիր ծաղիկ դրած, քաղաքին ամէն կողմը պտտցուցին:

Այրերէն ետք, կիները սկսան ծեծել մեռցնելու աստիճան: Մատնիչները թուրքերուն ընկերացած տուները կը պտտէին եւ կ'ըսէին. «Գիտենք, զէնք ունիք»: Այսպէսով 600 մարթինի հրացան յանձնուեցաւ: Յետոյ սկսան աղջիկներ ուղել: Օր Հալէպլեանը եւ երկու քոյր Մառանեանները առեւանդեցին: Շատ դրամ տուող այրերը եւ մէկ քանի վիրաւոր բանտէն արձակուեցան:

Յաջորդ առտու, պօտոռումներու մէջ մարդ չէր մընացած: Բոլորը տարած էին չղթայակապ: Մնացեալ տղամարդիկը թեւերնին կապուած Սերաստիա տարին:

Սրտատրոփ անցայ բոլոր այն փողոցներէն ուրկէ արհաւիրքը փոթորիկի պէս վազվուտած էր, ամենունէք աւեր ու մահ սփռելով:

Չորս օր վերջը Մարդուանի հա ութիւնը ճամբայ հանեցին: Տան դուռն մէյ մէկ կառք տուին եւ Շուր-Գըչլաղրկեցին հազար նեղութիւն տալով: Գայմաքա՞ր աքսորեալներու կարաւանին ընկերանալով, դազանութեան օրինակը կուտար: Բազմաթիւ աղջիկներ դատեցին եւ դպրոցը լեցուցին, դրան առջեւը աստիկան մը կեցած էր: Պղտիկ պատուհանէ մը, տասնըհինգ աղջիկ գիշերով փախանք եւ մեր մարդերը դտանք: Դէմքերնուսրով փախանք եւ մեր մայրերը դտանք: Դէմքերնուս



ՎԵՐԱԾՆՈՒՆԻ

Փարիզէն հայրենադարձ

Գիտութեան Փրոֆէսէօր Մկրտիչ Տէր-Կարապետեան
իւր կնոջ եւ զաւակներուն հետ

գանջ բոշաներու պէս: Թուրքերը դեղեցիկ եւ լաւ
հագուած կիներն ու աղջիկները կը փնտռէին: Այդ-
պէսով սոսկումէն ազատ մնացինք: Յաջորդ առտու
կառք ունեցողները Հասան-Չէլէպի բերին: Հոն կիները
խուզարկեցին, դրամնին առին եւ հարուստները կո-
ղոպակեցին: Յաջորդ օրը Հէքիմ-խան բերին: Դարձեալ
կողոպուտ եւ ծեծ: Երկու աղջիկ տարին, մէկը ընկե-
րուհիս էր, Օր. Ռեփեկա Ազշէհիբեան, որ բժիշկ մը
առաւ: Յետոյ Ղաւզան բերին, ուր հազարէ աւելի ու-
րիչ աքսորեալներու միացանք: Անտանէլի թշուառու-
թեան մէջ Ղարը-Կէօզ հասանք, այդտեղէն Փոլննըլար,
ուր մեր կառքերը, ձիերը, դրամները, հագուստները

կողոպտելով, չոր հոգիով մը կը ձգեցին մեզ: Յաջորդօրը քալելով Քուրդերու մէջ հասանք: Ամբողջ կարաւանը մօտ 4000 հօգի էր: Քուրդ պէկը 500 ոսկի ուզեց որ մեզ ամէնքս չի մորթէ: Հազար աղաչանքով եւ 200 ոսկի տալով, ջարդէն ազատեցանք:

Ատկէ կրկին ճամբայ հանեցին, քալեցնելով սարսափելի լեռներէ, անդունդի եզերքներէ, անօթի, ծարաւ: Ոմանք սահելով անդունդը վլորեցան, ուրիշներ՝ թուրք ոստիկաններուն ձեռքով անդունդին մէջ նետուեցան:

Ուրֆայի կողմերը մեզ կամուրջի մը եզերքը բերին: Թուրք դիւղացիներ մեր վրայ յարձակեցան, ծեծեցին, խուզարկեցին, մերկացուցին, սպաննեցին, աղջիկներ տարին: Իւնիացի շատ գեղեցիկ աղջիկ մը կար մեր մէջ: Զինքը քովս բերի, հագուստը փոխելով եւ երեսները վիրաւորելով անճանաչելի դարձուցի, դիւրկըն ալ պզտիկ եղբայրս տուի: Ոստիկանները այդ աղջիկը կը փնտռէին, ամէն տեղ, նոյնիսկ վերմակներու տակը խուզարկեցին բայց չի գտան: Իրարու կ'ըսէին. «Հիմա հոս էր, գետի^օնը մտաւ»: Մօտը գտնուող կիւները չարաչար ծեծեցին, բայց մատնող չեղաւ: Այրերէն դրամ հաւաքեցին որ ամբողջ կարաւանը չի մորթեն:

Գարա-Գոյըզ ըսուած տեղը հասանք: Հոտ Արաբները մեզ խուզարկեցին: Ամասիացի երեք ընկերուհիներ միատեղ էինք: Ես խենթ ձեւանալով, Աստուծոյ օգնութեամբը ազատեցայ: Բայց միւս երկուքը տարին: Մէկը ինքզինքը ջուրը նետեց, բայց դուրս հանելով տարին:

Այլեւս ոչ մէկ դրամ մնացած էր մեր վրայ: Հազիւ մերկուցիւննիս ծածկող քուջեր հագած էինք: Նա-

ւերով մեզ գետին միւս ափը հանեցին: Այդ գիշերը մինչեւ կէս-մէջըբերնիս ջուրին մէջը մնացինք: Յաջորդ օրը, այրող տաք ավազին վրայ քալեցնելով նորէն ճամբայ հանեցին: Պղտիկ եղբայրս մօրս յանձնելով, գետին կողմը վացած էի, մետաքսէ թաշկինակի մը մէջ ծըրարրուած երկու ոսկի գտայ: Չորս օրէ ի վեր բերաննիս փշրանք չէինք դրած: Մայրս հիւանդ էր: 50 զրուչ ծախսելով, ուտելիք գտայ եւ մայրս խնամեցի: Շատերը մեռան: Մայրը զաւակէն զատուեցաւ: Մայրս մարեցաւ, իր քովը մնացի: Ետ մնացողները կը սպաննէին, բայց վեց ժամէն աւելի կը տեւէր կարաւանին անցնիլը: Գաւաթ մը ջուր դնեցի 10 զրուչով եւ խմցուցի մօրս:

Հինգ օր ճամբորդելէ վերջ, մեզ Սուրուճ բերին: Արեւը սաստիկ տաք էր: Հոտ ամէն մարդ հիւանդացաւ: Երկու ամիս մնացինք Սուրուճ, հարիւրին տասը ողջ չմնացին:

Նորէն սէֆֆ (աքսոր) ըրին մեզ դէպի Հալէպ: Ճամբան, երկու ոստիկան դալով ըսին թէ մեզի աֆ (ներում) եկած է, մեզ մեր տեղերը պիտի վերադարձնեն: Այսպէսով, ետ ու առաջ օրերով քալեցուցին: Շատերը ճամբուն վրայ մեռան:

Մէկուկէս ամիս նորէն Սուրուճ մնացինք: Հոտ, եղբայրս, Արամը եւ մայրս մեռան: Արմենակ եղբօրս հետ մնացի:

Սուրուճէն Պէրէճիք քշուեցանք: Երկու ոստիկան ուղեցին զիս առեւանգել: Հեռացայ փախայ: Ժողովուրդը կրկին աքսորեցին, յաջողեցայ աքսորուածներուն միանալ եւ թուրք ոստիկաններուն ձեռքէն ազատիլ, թէեւ գիտէի որ մեռնելու կ'երթամ:

Աքսորեալներու հետ Պիրէճիկ հասայ, բայց Արմենակ եղբօրս հետքը կորսնցուցի:

Մարզուանէն օգնութիւն եկաւ: Գայմազամը թուղթ տալով Ատանա դացինք: Սիրանուշ Տիվանեանին հետ միաստին կ'աշխատինք եւ կ'ապրինք քրոջ պէս:

Մարզուանի ծանօթներէն մեր քովն են Թագուհի Գ. Լեւոնեանը որ կը փնտոէ իր հայրը Գարեգին եւ եղբայրը: Կիւմիւշ-Հաճի գիւղացի Վերոնիկ Աբիկեանը կը փնտոէ իր հայրը՝ Յարութիւն, Արաքսին եւ Միհրանը: Իր հետն են՝ Իլատիկցի Էլմօն Միսեան, աղջիկները՝ Արուսեակ, Ազապի և Սիրանուշ: Մարզուանցի Ջիլֆինազ Թոքատլեանը երեք պղտիկներով, քոյրը՝ Հայկանուշ որ կը փնտոէ ամուսինը, Հաճի Յարութիւն Թերմանճեանը:

Իսկ ես կը փնտոեմ, քոյրս՝ Եսթեր 13 տարեկան, եղբայրս՝ Արմենակ, հայրս՝ Պաղտասար, լեւիներս Մկրտիչ Մկրեան եւ Մկրտիչ Թուճեան:

ՄՈՐԵՆԻԿ - ԽԱՐԲԵՐԴԻ ՇՐՋԱՆ

ՏԻԿ. ԳԵՂԱՆՈՒՇ ՇԱՀՊԱԶԵԱՆ

Երբ տարագրութիւնը սկսաւ, հազիւ եօթ-ութ տարեկան էի:

Օր մը, երբ դպրոցէն կը դառնայի, տեսայ փողոցները պտտող մայրեր իրենց ղաւակները գրկած, վրանին բզկտուած, ոտքերնին բոպիկ, գլուխնին բաց: Մօրս հարցուցի թէ ովքե՞ր են ասոնք: Մայրիկս պատմեց որ տեղահան եղած Հայեր են:

Աքսորի կարգը մեզի եկաւ: Մեր գիւղէն քիչ հեռաւորութեամբ գիւղ մը կար որ Հիւսէյնիկ կը կոչուէր:

Առաջին անգամ այդ գիւղին Հայերը աքսորուեցան :

Իրիկուն մը դպրոցի ընկերներուս հետ՝ տեսանք որ Քէսրիկի բլուրներէն կ'իջնէին կառքերով, սայլակներով ու էչերով : Տուն վազեցինք եւ ուրախութեամբ մեր մայրերուն պատմեցինք մեր տեսածները, ըսելով որ մեզի ալ թող տանին մեր ուզած գիւղերը : Խեղճ մայրիկս ըսաւ . «Այո, դաւակս, քեզի քեռիենցդ գիւղը պիտի տանիմ» ու սկսաւ արտասուել : Չկրցայ հասկնալ պատճառը : Մեր տանը մէջ կային մայրիկս եւ մեծ մայրիկս : Հայրիկս Ամերիկա դացած էր : Երկու հօրաքոյրներս հարս դացած էին :

Այդ օրեր, մեծ մայրիկս եւ մայրս զիս եւ փոքրիկ եղբայրս վերի սենեակը կը տանէին քնացնելու : Հետաքրքրութիւնս շատցաւ : Յաջորդ իրիկունը, կամացուկ մը իրենց հետեւելով, տեսայ որ մառանին մէջ հոր մը փորած էին եւ կաթսան մէջը իջեցուցած՝ հագուստները անոր մէջ կը տեղաւորէին : Նաեւ, որչափ արժէքաւոր ապրանք կար՝ այնտեղ դրին, մայրս հողին վրայ յարդ լեցուց, իբրեւ թէ ձեռք դպած չէ : Իսկ իր զարդեղէններն ալ պզտիկ կուժի մը մէջ, դուռին ետեւի պատը փորեց ու հոն դրաւ եւ պատը ծեփեց :

Քանի մը օր վերջ, ոստիկանները գիւղը պաշարեցին, տունէ տուն մտան ու ժողովուրդը ծեծելով դուրս հանեցին : Երբ կարգը մեզի եկաւ խեղճ մայրս ճաճբու հաց կը պատրաստէր եւ աւանակին կը բեռցնէր : Ոստիկան մը, պանիրին պուտակը առաւ մօրս ձեռքէն, զարկաւ գետին ու փշուր փշուր ըրաւ եւ մայրս ալ հըրմշտակելով տունէն դուրս նետեց : Մեծ մայրիկս լալ սկսաւ : Ես ու եղբայրս ալ լացինք : Փողոցը արդէն լեցուած էր լաց ու կոծով : Մեզ առաջնորդեցին վարի

աղբիւրը ուր գիւղին ամբողջ ժողովուրդը հաւաքուած էր :

Կիրակոս ամուենց տունը գիւղին ծայրն էր, որուն ետեւը պարտէզ մը կար : Մայրիկս այդ պարտէզին բանալին քովը պահած էր : Երբ ժողովուրդը ճամբայ կը հանէին, մայրիկս զիս եւ եղբայրս, որ հազիւ չորս տարեկան էր, տարաւ Կիրակոս ամուենց երգիքը հանեց ու միւս կողմէն՝ մէկիկ վար իջեցուց եւ ցորենի արտերուն մէջը տարաւ : Ցորենը հասկ կապած էր, հոն պառկեցուց մինչեւ որ ձայները դադրեցան : Արեւին տաքութենէն այրեցանք : Ծարաւէս լալ սկսայ : Մայրիկս բարկացաւ թէ «ձայնդ կտրէ, հիմա կուզան մեզի կը բռնեն : Տես, քեզմէ պզտիկ եղբայրդ չի լար ու դո՞ւն կուլաս» :

Այդ պահուն ոստիկանը արտերուն շուրջը կը դառնար, փախստականներ փնտռելով : Մայրիկս մեզ պառկեցուց, բերաննիս բռնեց որ ձայներնիս չելլէ : Բաւական ժամանակ անցնելէ վերջ, ստքի ելաւ ու չորս կողմը նայեցաւ ու մեր ձեռքէն բռնելով, մօտիկ թուփ պարտէզը տարաւ : Տեսանք որ ծառաստաններուն մէջէն երկու երիտասարդ դէպի մեզի կուզան : Մայրիկիս ծանօթ Հայեր են եղեր : Մէկին անունը Արամ, Աստուրենց Պարսամ ամուին տղան, միւսը՝ Հայկ Սըվաճեան : Մայրիկս ըսաւ. «Սիրելի զաւակներս, ի սէր Աստուծոյ, զաւաթ մը ջուր հասցուցէք, պզտիկներս ծարաւէն կը մեռնին» :

Երիտասարդները, անմիջապէս, թիթեղով մը ջուր բերին կուշտ ու կուռ խմեցինք : Մեզի ալ պատուիրեցին որ շուտով հեռանանք ու երթանք Մէղիբէ, քանի որ ոստիկանները շարունակ կը պտտին ասդին անդին : Հազիւ թէ երկու քայլ յառաջացեր էինք, տեսանք Քուրտ մը որ իշուն վրայ բռն բարձած դէպի Մէղիբէ

կ'երթար: Մայրիկս չարչափով մը ծածկուած էր, քուրտը բնաւ կասկած չունեցաւ մեր հայ ըլլալուն: Անոր հետ դացինք Մէզիրէ քաղաքը: Մայրիկս մեզի տարաւ թուրքի մը տունը ուր կը մնային մօտիկ ազգականներս: Հօրեղբօրս կինը, հարսը, աղջիկը, Կիրակոս ամուսին կինը, Նէնէճանը եւ աղջիկը Հոսիփսիմէն: Մէկ երկու օր հոն մնալէ ետք, ուրիշ տուն փոխադրեց մեզ ուր Խոսեօր հօրաքոյրիս տալը կար: Քանի մը օրէն կրկին մեզ փոխադրեց ուրիշ թուրքի մը տունի որոնց մայրիկս մօտէն կը ճանչնար: Տանտէրը մեծ հայրիկէս շատ բարիք տեսած էր: Այդտեղ ալ մէկ շաբաթ մնացինք: Բայց այդ ապերախտը միտքը կը փոխէ եւ կ'ուզէ որ մայրիկիս հետ ամուսնանայ: Մայրս մերժելով կ'ըսէ. «Ամօթ չէ՞ որ այդ խօսքը կ'ընես: Դուն իմ հօրս հացը կերած ես, ես քեզի կ'ընդունիմ իբրեւ եղբայր: Մանաւանդ որ ես ողջ ամուսին ունիմ:»

Խեղճ մայրիկս ձգեց այդ գարշելիին տունը եւ այս անգամ տարաւ տուն մը ուր կային երկու տարէց թուրք կիներ: Զիս յանձնեց անոնց եւ խնդրեց որ գէթ երկու շաբաթ ալ ինքը մնայ, բայց մերժեցին: Եւ ըսին որ, սպասէ, ամուսնացած աղջիկ մը կայ տանիքը, անոր ամուսինին հետ թող նիքեահ ընեն քեզի, կ'ազատիս:

Մայրիկս արցունքներուս չդիմանալով, յանձն առաւ: Երբ դացին, մայրիկէս կէս ժամ առաջ ուրիշ հայ կին մը եկած է եղեր: Մայրս ետ դարձաւ: Եկաւ համբուրեց երեսներս ու սիրտ տալով ինծի, առաւ եղբայրս ու հեռացաւ:

Առաջին անգամ էր որ մայրիկէս կը բաժնուէի: Գիշեր ու ցերեկ արցունք կը թափէի: Թէեւ թուրք կիները կը շոյէին, կը համողէին որ մոռնամ մայրս ու եղբայրս, սակայն, երբ չյաջողեցան, սկսան վախցնել թէ ոստիկաններուն կուտանք քեզ որ տանին: Բայց ես

աւելի յուզուեցայ : Ինծի յատկացուցած էին սենեակ մը, փողոցին նայող պատուհաններով :

Օր մը, դուրսը կը դիտէի, տեսայ երկու կիներ, գլուխնին թրքական չարչաֆ ունէին : Մէկը մայրիկիս նմանցուցի : Գուշակութիւնս ճիշտ էր : Դեռ անոնք դըռանը չմօտեցած, վար վազեցի, դուռը բանալու : Մայրիկս էր, հետը եղողն ալ, մեր գիւղացի, Գեղանուշ անուն աղջիկ մը : Կարօտով մը նետուեցայ մայրիկիս գիրկը ու լալով պատմեցի ամէն բան :

Մայրիկս առաւ զիս իր թեւերուն մէջ եւ ըսաւ . «Եկուր, իմ սրտիս հատորը, ես ինչ որ ըլլամ, դուն ալ ան եղիր : Այլեւս պիտի չձգեմ քեզի :»

Ճամբան հարցուցի, ելբա՞յրս ուր է : Մայրիկս ըսաւոր «մեր գիւղն է : Խաթուն պուպուկիդ քովը ձգած եմ, Սիրանուշին եւ Չապէլին հետ կը խաղայ : Մեծ հարսս Ալմաս քոյրիկդ, Գէորգին եւ Փայլածունին մայրը, պզտիկ հարսը, ամբողջ ազատուած են» :

Ուրախութիւնս չափէն աւելի եղաւ : Մայրս գիւղին շուկայէն հաց ու պանիր գնեց, կերայ : Անօթի էի : Թուրքերու տուածը ինծի թոյն էր, կոկորդէս վար չէր երթար, որովհետեւ կ'ուզէին որ ուրանամ կրօնքս, ծընունդս եւ հարազատ ծնողքս, ըսելով թէ այլեւս մենք ենք քուկին հայրդ ու մայրդ :

Գիւղն ենք . հեռուէն տեսայ որ եղբայրս մեր դուռին առաջ, առուին մէջ, ջուրին հետ կը խաղար : Մեզ տեսածին պէս վազեց, փաթթուեցաւ ինծի : Ազգականներուս մեծ մասը ազատուած էին : Ահարոն հօրեղբօրս կինը իր երկու աղջիկներով ու թոռներով, յետոյ Խաթուն պուպուկս իր երկու պզտիկներով և կեսուր մայրը պատասպարուած էին մեր տանը մէջ : Թուրք ոստիկանները ըսած էին թէ այլեւս աքսորը դադրած է, ու խողճ

հայերը ազատորէն կ'երթային, կուգային:

Իրիկուն մը, յանկարծ, դնդակի ձայներ լսուեցան: ամէն մէկը աջ ու ձախ փախան: Մուրթիւն մէջ տեսանք դպրոցին այրուիլը, այն ատեն հասկցանք որ մեզի խա-



Տիկ. Գեղանուշ Շահպագեան

բաժ էին, ըսելով որ ամէն մարդ իր տեղը թող դառնայ եւ իր գործին սկսի, որպէսզի ուր որ Հայ կայ, իր թաքստոցէն դուրս գայ եւ ազատորէն բռնեն ու ջարդեն:

Հետզհետէ գնդակներու ձայնը կը շատնար: Այս ահռելի գիշերը լուսցուցինք: Խեղճ մայրիկս իմ ու եղբորս ձեռքը բռնելով, տարաւ մեր դրացի Խալիլ էֆէնտիին տունը, սենեակին մէջ, անկողիններուն ետեւը դրաւ ու ինքն ալ պահուրտեցաւ: Արդէն ոստիկանները խուզարկութեան սկսած էին տուններու մէջ: Հազիւ թէ տասը վայրկեան անցաւ, երեք ոստիկան ներս մը-

տան : Մեզի ծանօթ կին մըն ալ պահուած էր : Սուլթան հօրաքոյրիս տալն էր , Փսիգեսենց աղջիկը , անիկա ալ դտնելով քաշկուտեցին դուրս : Յետոյ մեզի ալ տեսան : Վերջապէս ոստիկանները՝ հրելով , հրմշտկելով , մեզի տարին մինչեւ վարի աղբիւրը : Հոն ժողովուրդը հաւաքած եւ կանաչին վրայ նստեցուցած էին եւ , աղբիւրին ետեւն ալ , երեք կարգի վրայ ղինուորներ եւ ոստիկաններ կը կենային : Ու գիւղը կ'այրէր :

Կրակը մինչեւ Թէթէենց տունը հասած էր : Խեղճ կին մը ոստիկանները կրակը նետեցին : Ծերերն ու կապերը որ չէին կրնար քալել , անոնց ոտքերէն քաշկուտելով կը սպաննէին . ոմանք կիսամեռ , ոմանք մեռած՝ դիւղին տակ պարտէզի մը ջրհորին մէջ կը լեցնէին : Ոմանք ալ ողջ ողջ հորը կը նետէին :

Իսկ անդին խեղճ ժողովուրդը այս զարհուրելի տեսարանը դիտելով կուլար ու կ'աղաղակէր : Աղաղակը մինչեւ երկինք կը բարձրանար , բայց ոչ ոք կը լսէր . . .

Գիւղին մէջ , այդ ժամանակ , գաղթականներ եկած կը բնակէին : Ոստիկանները անոնցմէ հաց հաւաքեցին և ժողովուրդին բաժնեցին որ ողջ մնացող Հայերը ճամբայ հանեն : Աղբիւրին քով տուն մը գաղթական լեցուած էր , մայրիկս առիթէն օգտուելով , եղբայրս շալակին , թուրքի չարչաֆ մը գլխուն առած , դացեր է այդ գաղթականներուն մէջ : Ես ալ Կիրակոս հօրեղբորս կնոջ ձեռքէն բռնած կը սպասէի որ մայրիկս գայ : Հացերը բերին եւ բաժնել սկսան ու ամէն մարդ առաւ : Ինծի հաց տուող չկար : Մայրիկս ինծի շալվար մը հաղցուցած էր , հանեցի եւ հացի կտորուանք ճարելով , անոր մէջը լեցուցի : Ուսէս կախուած թիթեղէ ամանը ջուր լեցուցի ակնիկէն : Կարաւանը սկսաւ քալել , ես կուլայի որ մայրիկս չկայ : Ոստիկան մը եկաւ հարցուց . « Այս պգտիկը ինչո՞ւ կուլայ » : Ան չորս կողմը նայե-



Տիկ. Գեղամուշ Շահոյազեանի ընտանիքը: Աջէն ճախ՝
Մայրը, Գեղամուշը (ձեռքը դիրքով) եւ փոքր եղբայրը: Միւսները
մեծ-հայր, մեծ-մայր, հորափոյրիք, հորաքոյզ ամուսինը եւ տղան:
Գեղամուշէն զատ ամէնքն ալ նահատակուած:

ցաւ ու ըսաւ. «այս կարաւանին մէջ ճերմակ շարշափով
կին մը կար ու չկայ. անպատճառ, ասոր մայրը ըլլա-
լու է»:

Կարաւանը կը քալէր. առուակէն անցած էր արդէն
երբ տեսայ որ մայրիկս, եղբայրս շալակին, ծեծելով,
քաշկոտելով կը բերեն: Խեղճ մայրիկս մինչեւ Մէզիրէ
ծեծելով տարին: Թուրքերը կ'ուղէին ոտքի կօշիկը ու
վրայի հագուստները հանել: Ոտտիկան մը բարկացաւ
ըսելով. «Քիչ մը համբերութիւն ունեցէք, այդ վայր-
կեաններն ալ պիտի գան, այն ժամանակ ուղածնիդ
ըրէք»:

Այսպէս տանջանքներով վերջապէս հասանք Մէզլի-
րէ : Մեզ կարմիր խօնախին տակ նստեցուցին ու ըսին .
«Երկուական մէծիտ տուէք որ ձեզի հաց դնենք» : Այս-
պէսով կողոպտեցին , եւ հաց չբերին :

Երկու-երեք օր մնացինք այնտեղ : Այդ խօնախին
չուրջը հիւանդներ լեցուած էին , ոմանք կիսամեռ :

Մեզի օրական երկու անգամ սոմին կուտային :
Մայրիկս մեզի կը պատուիրէր որ եղբայրս եւ ես զատ
զատ առնենք : Ուտելիք հաց չէր , մայրիկս արեւին տակ
կը չորցնէր : Այսպէսով բաւական հաց պատրաստեց
ճամբուն համար :

Մարդիկ կային որ , ոչ թէ ճամբու հաց՝ այլ , այդ
ժամուն իսկ անօթի կը մնային :

Այդ շէնքին մէջ երեք չորս օր մնացինք : Իսկ իմ
թեւիս վրայ խոշոր վէրք մը ելած էր , ցաւէն գիշերնե-
րը չէի կրնար քնանալ : Շէնքը բազմութիւնով լեցուած
էր , պառկելու տեղ չկար , իրարու վրայ կը պառկէին :
Մութին մէջ շատեր , դուրս ելած ժամանակ , թեւիս
կը դպէին եւ ցաւին չղիմանալով կուլայի : Անդութ
ոստիկանը կուգար , կը ծեծէր թէ դիս թէ մայրիկս ,
«սա շունին ձայնը կտրէ : Գիշերով մենք ատոր ճա՞յնը
մտիկ պիտի ընենք» ըսելով :

Անուշիկ մայրիկս տեսնելով որ անարգանք խօսքե-
րէ գատ , ուրիշ փրկանք չկայ , արտասուելով զիս առաւ
թեւերուն մէջ , օրօրելով հանգստացուց եւ քնացայ :

Վերջապէս , առտու մը ճամբայ հանեցին մեզ եւ
արտերուն մէջէն քալեցնելով տարին մինչեւ Մէզլիրէի
գերեզմաննոցը , ու այնտեղ դուրսի կողմը կանգնեցու-
ցին , ուր այրուած դիակներ կը բերէին սայլերով :
«Ատոնք , կ'ըսէին , Հայերու դիակներ են որ բանտին
մէջ այրեցինք : Զեզի ալ գերեզմաննոցին մէջ պիտի
լեցնենք ու կազ լեցնելով պիտի այրենք» :

Ժողովուրդին մէջ ինկաւ մէկ լաց ու կոծ : Ամէն մայր իր պզտիկը կուրծքին սեղմած կուլար ու կը պոռար : Մանաւանդ որ ոմանց եղբայրը, զաւակը կամ ամուսինը կար այդ այրուածներուն մէջ :

Դիակները լմննալէ վերջ, մեզ ալ լեցուցին գերեզմաննոցը որ պարիսպով էր : Հան կային հեռու տեղերէ եկած հարիւրաւոր գաղթականներ : Խեղճերը, արեւի տաքութենէն, անօթութենէն, մերկութենէն, տասնեակներով կը մեռնէին : Ձեմ յիշեր թէ գիշերը հոտ պառկեցանք թէ ոչ : Միայն գիտեմ որ հաց բաժնեցին ու իրիկուն մը ճամբայ հանեցին : Ճամբան ոմանք անօթութենէ չէին կրնար քայլել, ոմանք պզտիկներով ետ կը մնային : Ոստիկանները կը ծեծէին ետ մնացողները : Փոքրիկ եղբայրս յոգնեցաւ ու սկսաւ լայլ : Խեղճ մայրիկս չէր կրնար զայն գրկել : Արդէն իր կռնակը ունէր ճամբու պաշարը եւ գիշերուան համար՝ անկողին ու հագուստներ :

Վերջապէս հասանք գիւղ մը, երբ արեւը մարը մրտած էր : Մայրիկս ըսաւ որ այստեղը Գեղվանք կ'ըսեն : Դաշտին մէջ նստեցուցին : Գիշերային խաւարը պատած էր արդէն, ժողովուրդին մէջ դարձեալ ինկաւ լաց ու կոծը : Թուրքերը դեռատի հարսներ եւ աղջիկներ կ'ուզէին : Մենք ալ մեր քովը ունէինք Ահարոն հօրեղբորս աղջիկը, Ալմաստը : Մայրիկս ի զուր գինքը պահեց հացերու տոպրակներուն տակ : Եւ ահա ոստիկաններ, երեք չորս—հոգի, եկան հարցուցին . «Ձեզի հետ աղջիկ մը կար, ո՞ր է» :

Ի զուր ստեցին մայրը, քոյրը : Ձանոնք լաւ մը ծեծելէ եւ քիթ բերան արիւնելէ ետքը, խեղճ մայրս ալ ծեծեցին ըսելով որ, «դարձեալ ինչ որ ըրիր, դուն ըրիր : Աղջիկը ուր որ է, չուտ հանեցէք, թէ ոչ ծեծով պիտի սատկեցնենք ձեզի» :

Կէս գիշերին հացի տոպրակներուն տակէն գտան, առին ու դացին: Օգուտ չկար: Ամբողջ ժողովուրդը լաց ու կոծի մէջ էր: Մուրթին մէջ կը քաշկուտէին ոմանց աղջիկները, ոմանց հարսները: Դժոխային գիշեր մըն էր որ լուսցուցինք եւ առաւօտուն բերին աֆէնքն ալ տէրերուն յանձնեցին: Բոլորն ալ կիսամեռ վիճակի մէջ էին:

Ատկից ճամբայ հանեցին մեզ, դէպի Քիւրտ էմլիկ, քարերու եւ փուշերու մէջէն քալեցնելով, տարին գիւղէն տասը վայրկեան հեռու, ձորի մը մէջ նստեցուցին:

Կէս օր էր: Ամէն մարդ իր տոպրակը բացած, չոր հացի կտորուանքով կը կերակրէր իր պղտիկները: Ոմանք այդքանն ալ չունէին: Քիւրտերը կուգային, փոքրիկ աղջիկներ ու մանչեր տանելու: Խեղճ մայրերը, այլեւս, իրենց ձեռքերով կուտային ըսելով. «Տարէք, վերջերնիս հասկցուեցաւ, գէթ անոնք թող երթան ու ազատուին»:

Դաւիթ մեծ հօրեղբօրս տղան Յովհաննէսը, երկու Քուրտ եկան առին: Բայց անզգամները չհամաձայնեցան, իրարու ձեռքէ քաշքշելով, զարկին սպաննեցին. «ոչ ինձի, ոչ քեզի», ըսելով:

Մայրիկս ու ամէնքը արցունք թափելով, արիւննին ցամքեցաւ: Տեսանք որ ձորերուն մէջէն խումբ խումբ Քուրտեր կուգան կացիներով, գաւազաններով, սուրերով ու քարերով: Կը սպասեն որ ոստիկանները հրամայեն զարնելու: Մուրթը կոխեց: Ամէն մայր իր երախաները գրկած՝ ժողովուրդին մէջ կը մտնէր, վախնալով որ եզերքը եղողները կը քաշեն կը սպաննեն: Մուրթին մէջ միայն լացի աղաղակը կը լսուէր:

Այդ դժոխային գիշերն ալ լուսցուցինք:

Ատկից ալ ճամբայ հանեցին դէպի Շապկան: Կէսօր

էր, իջանք այնտեղ: Գիւղէն դուրս, աղբիւրի մը վըռու-
խը, ժողովուրդը ջուրի համար իրար կը կոխկրտէր: Թութի ծառեր կային, ոմանք թութին տերեւները կ'ու-
տէին: Այդտեղ ոստիկանները եւ գիւղացիները կուռի
բռնուեցան: Ոստիկանները կ'ուզէին տեղն ու տեղը ըս-
պաննել մեզի, իսկ գիւղացիները չէին ուզեր, ըսելով.
«Ալ կը բաւէ. դիակներուն հոտէն չենք կրնար կենալ.
ուրիշ տեղ տարէք»: Ատկից ալ տարին դէպի Կէօլճիւկ:

Երբ լերան վրայէն Կէօլճիւկը տեսայ, վախէս լալ
սկսայ: Անուշիկ մայրիկս ի դուր կը ջանար համոզել
թէ՝ ասիկա փոռուած կտաւ է, ցորեն է, խոտ է: Սուր-
թան հօրաքոյրս ինծի բարկացաւ, թէ՝ «ատիկա ծով է.
հիմայ մեզ պիտի տանին ատոր մէջ նետեն որ մեռնինք:
Փայլածուին չափ ալ չկաս, երբ զինքը թուրքին տուի,
ետեւէս անգամ չլացաւ: Դուն ելար մայրիկիդ ետեւէն
վաղեցիր եկար, հիմայ ալ սիրտերնուս կրակ կը դենս»:

Խեղճ կինը, ցաւէն միշտ կը նեղանար ինծի:

Լեռնէն մեզի իջեցուցին ծովեզերք, նստեցուցին:
Հոն անպիտան ոստիկանները մերկանալով սկսան լո-
ղալ ու ամէն անարգութիւն ընել կրներուն դէմ: Իսկ
այս կողմը փոքրիկները կուլան, հաց կ'ուզեն:

Վերջապէս, այդ սարսափելի գիշերն ալ անցուցինք
չարչարանքներով: Հազիւ թէ լոյսը բացուած էր, խումբ
մը բաժնեցին ու ձոր մը տարին, յօշոտեցին, ու եկան
մեզ ալ տարին: Խումբ մը մէկ ձորը, խումբ մը միւս
ձորը: Ու դեռ արեւը չծագած, վերջացուցին շատերը:

Ճիչ մը անգամ չլսուեցաւ թէ ինչ ըրին, ինչպէս
սպաննեցին:

Փոքրիկները քուներէն արթնցան որ մայր չկայ,
սկսան լալ «մայրիկ, մայրիկ» կանչելով: Ոստիկանները
զանոնք հաւաքեցին ու մէկիկ մէկիկ ծովը նետեցին:

Խեղճ փոքրիկները կը տապալտկէին ու կ'իջնէին ջուրին յատակը : Ուրիշներ , սուրին ծայրը անցուցած՝ կը խաղցնէին ու յետոյ ջուրը կը նետէին :

Կին մը փախուստ կուտար դէպի լեռները եւ իր ետեւէն կը վազէր տասը-տասնըմէկ տարեկան աղջիկը : Ոստիկանները անոնց հասան՝ ու քարերով մեռցուցին : Իսկ ես որ այս ամէնը տեսայ , մայրիկիս թեւերուն տակ պահուեցայ որ ալ չտեսնեմ եղածները : Մայրիկս պատրաստուեցաւ ջուրը նետուիլ ինծի եւ ելբօրս հետ : Ու ձեռքերէս քաշելով տարաւ ջուրին եզերքը : Հազիւ մինչեւ ծունկերս թրջուած էր , ոստիկանը տեսնելով վազեց ու մեզ ջուրէն հանեց , մայրս ալ՝ ծեծեց :

Կարգը Մորենիկցիներուն եկած էր : Սկսան մեզ քալեցնել : Ես եւ եղբայրս շատ ծարաւցաւ էինք . ծովուն ջուրը աղի էր եւ թէ արիւնով ու դիակներով լեցուն : Քուրտերը բերած էին թրիքէ ցեխոտ ջուր , կը ծախէին գաւաթը երկու դրուչ : Մայրիկս առաւ ու մեզի խմացուց : Դարձեալ ուրիշ քուրտեր բերին ծախեցին փիլաւ , թան եւ պաստեղ : Մայրիկս անոնք ալ գնեց ու կերցուց մեզի : Մաս մըն ալ պահեց , «այս ալ վաղը կ'ուտէք» ըսելով :

Խեղճ մայրիկս վաղուան վրայ կը մտածէր , չէր պիտէր որ քանի մը ժամէն պիտի վերջանար իր կեանքը :

Այնպիսի ճամբաներէ կը քալեցնէին որ մարդուս սոսկում կուտար : Մէկ կողմը լեռ , միւս կողմը ջուր , բարակ ճամբայ մը միայն որ ծովուն եզերքը կ'երթար : Այդ սոսկում տեղը , ձորին մէջ նստեցուցին մեզի , չորս կողմը լեռներով շրջապատուած էր , միայն քուրտերու քանի մը տուններ կար , ուրիշ ոչինչ :

Այդտեղ , մեր կարաւանին կիները մերկացուցին : Պոյաճոնց Յարութիւն ամուրի կիներ երկու ոստիկաններ բռնած կը կռուէին թէ՛ ես պիտի առնեմ : Զհամաձայ-

նեցան : Զարկին կինը եւ ջուրը նետեցին : Իսկ միւս կողմը տեսայ Կիրակոս հօրեղբօրս կինը որ միայն շապիկով մը նստած է ու կը պոռայ մայրիկիս . «Մարիամ , զաւակս , Քուրդ մը առ դնա , պզտիկներուդ կեանքը ազատէ : Մեզի ազատուիլ չկայ» :

Աղաղակներ բարձրացաւ չորս կողմէն : Տեսայ վրսի գեւոտենց հարսը , Սուլթան հօրաքոյրիս ները , անունը Շուշան , ունէր երկու աղջիկ եւ մանչ մը : Մայրը սպաննեցին , տղոց հագուստները հանել կ'ուզէին : Դառնալով մայրիկիս ըսի որ ասոնք ալ մեզի հետ տանինք : Մայրիկս ըսաւ . «Իս , իսնթ աղջիկ , տեսնեմ թէ ձեզի պիտի կրնամ ազատել» :

Մայրս ոստիկաններուն երկու ոսկի խոստացած էր որպէսզի մեզ ազատեն , ատոր համար մեզի զատած էին մէկ կողմ : Ունէր նաեւ երկու ոսկի մատանի , որոնք լաթով մը ծածկած էր , քակեց՝ անոնք ալ տուաւ : Սակայն չարագործները դարձեալ առարկեցին որ «դուն ոսկի խոստացար մեզի» եւ սպառնացին :

Մայրիկս այդ երկու ոսկիները , մազերուս հիւսկերուն մէջ կարած էր , տարին զիս ջուրին եղերքը որ քակեն ու հանեն : Ես ալ խորհելով որ ինծի պիտի մորթեն եւ ջուրը նետեն , սկսայ պօռալ : Մայրս թէ «աղջիկս , հանդարտ կեցիր որ այդ ոսկիները քակեն առնեն ու մեզ ազատեն : Թէ ոչ՝ կը մեռցնեն» :

Իսկ այդ առնելով ալ չգոհացան : «Քու քովդ շատ դրամ կայ» , ըսին : Խուճար հօրաքոյրիս դրամը եղբօրս հագուստներուն վրայ կարած էին , երբ բաժնուեցանք իրարմէ , անոր դրամն ալ մեր քով մնաց : Խեղճ մայրիկս ատոնք ալ տուաւ : Եւ ինչ որ ունէր վրան , հագուստներէն սկսեալ ամբողջ կողոպտելէ վերջ , դարձեալ մեզ տեղ մը չառաջնորդեցին : Մեր շուքը ամբողջ դիակներ էին :

Քանի մը հոգի, Քուրտերը գատած՝ կը տանէին: Ուրիշները քարերով, փայտերով ու կացիններով կը սպաննէին: Այդտեղ տեսայ Կիրակոս հօրեղբօրս կնոջ դիակը որ կը քաշկուտէին: Մայրիս ըսաւ ոստիկաննէն-րուն, «Ամբողջ ունեցածս առիք որ մեզի աշատէք ու բան մը չէք ըներ: Հիմա ալ մեզի պիտի մեռցնեն»:

Ճիշտ այդ վայրկեանին, լեռներէն վար Քուրտեր կը վազէին: Անոնք ուշ մնացած էին այդ կողոպուտէն: Ոստիկանները անոնց հրամայեցին որ մեզ տանին: Մեզի հետ ողջ մնացած էր Զմոռնց Հեղնար անունով աղջիկը: Մէկ Քուրդը յանձն առաւ զայն տանիլ, իսկ միւսն ալ՝ մեզ:

Քուրդը հրամայեց որ լերան մը ստորոտը նստինք. «Ընկեր մը ունիմ, երթամ գտնեմ, դայ՝ որ երթանք», ըսաւ: Ու մենք եւ այդ աղջիկը տանող Քուրդը՝ միասին նստանք: Միւսը գնաց ու հաղիւ տասը վայրկեան անցած, տեսանք որ հեռուէն, ուրիշ քիւրտի մը հետ կուգայ: Մայրիկս ոտքի ելաւ, բռնեց իմ եւ եղբօրս ձեռքէն որ փախչինք, Քուրդը գոռալով մեր վրայ վազեց: Զեռքը ունէր, ծայրը գունտ, հսկայ գաւազան մը, անով ձեռքիս զարկաւ, ինկայ գետին: Երկու Քիւրտերը մայրիկս ու եղբայրս ձորը իջեցուցին:

Այլեւս չգիտցայ թէ անուշ մայրիկիս եւ անուշիկ եղբօրս քնքուշ կեանքերը ի՞նչպէս վերջացուցին: Կը պոռայի, «Մայրիկս կ'ուզեմ, մայրիկս կ'ուզեմ»: Բայց ո՛չ Աստուած լսեց ձայնս, ո՛չ ալ՝ մարդիկ:

Այդ միջոցին Հեղնարը եւ զինք տանող Քուրդը կը փախչէին: Հեղնարը ըսաւ. «Գեղանուշ, աղւորս, հետս եկուր, մայրիկդ այլեւս վերջացաւ, հիմա կուգան քեզի ալ կը տանին, կը զարնեն»:

Բայց իմ աչքիս բան չէր երեւար:

Զայնս լսելով ուրիշ Քուրդ մը լեռնէն վար կը վա-

զէր, կացիներ ուսին. վախէս սկսայ վազել Հեղնարին ետեւէն: Շունչս կտրած՝ հազիւ հասայ իրեն: Զինքը տանող Քուրտը լեռներուն ետև անհետացած էր արդէն:

Հեղնարը ինձմէ աւելի տարիքոտ էր ու քիչ մը թուրքերէն կը հասկնար: Զեռքէս բռնեց, բաւական քալելէ վերջ, հասանք Շապկանի ձորը: Այդ հսկայ ձորը շատ խոր էր եւ ամբողջ դիակներով լեցուած. ոմանք ուռեցած-սւեցած, ոմանք նոր սպաննուած, ոմանք ալ կիսամեռ կը տանջուէին: Զեռքէս բռնելով ձորը իջեցուց: Բաւական յառաջացած էինք, խիտ ծառերուն մէջէն երեւցաւ մէկը որ բոլորովին մերկ հագուստները կը մաքրէր: Անշուշտ ոջիլ ունէր վրան: Հեղնարը կամաց, կամաց մօտեցաւ այդ մարդուն, եւ տեսաւ որ իրեն ընկերացող Քուրտն է, «ինչո՞ւ մեզ լեռներուն գլուխը ձգելով հեռացար, հա՞պա որ սպաննէին մեզի»:

Քուրդը հագուստները հագնելէ վերջ, մեզի ընկերացաւ դէպի Կէօլճիկ: Եւ ահա Կէօլճիկի կողմէն աւանակներ հեծած կիներ, աղջիկներ, տղաք ու երախաներ կուգային: Քուրդը անմիջապէս դիմաւորեց: Վերջը հասկցանք որ իր ընտանիքն է: Իրենց մէջէն երկու աղջիկ մօտենալով, կ'ուղէին զիս գգուել, քիւրտը իրենց լեզուով բաներ մը խօսեցաւ եւ արգիլեց որ մօտենան ինձի: Երբ տակաւին ձորին մէջ էինք, տեսանք որ մայրիկս ու եղբայրս եւ զիս տանող Քուրտը, անոնց հագուստները արիւնթաթախ՝ փայտին ծայրը անցուցած եւ ուսին նետած, լեռնէն վար կ'իջնէր: Այդ արիւնը խմող դազանը երբ տեսայ, մանաւանդ սիրելիներդս հագուստները որոնց արիւնները կը կաթկթէր տակաւին, ամբողջ մարմինս թունդ ելած, կառչեցայ Հեղնարին:

Այս պահան Քուրդն ալ ատոնց ընտանիքէն է եղեր:

Քուլերնիս դալով կ'ուզէր զիս շոյել ու սիրել: Բայց անկարելի եղաւ: Երբ կը փորձէր մօտենալ, ամբողջ ուժովս կը ճչայի եւ գազանը կը հեռանար ինձմէ:

Այդ կտորաւանին մէջ էր նաեւ իր կինը, չորս աղջիկ եւ մէկ մանչ գաւակներով: Այլեւս ինծի ի՞նչ պիտի ընէր որ մօրս հետ չձեռնցուց:

Վերջը իմացայ որ պիտի մեծցնէ եւ իրեն նման արիւնախում գաւակին հետ պիտի ամուսնացնէ:

Այդ ձորէն ելանք, գացինք Շապկանի մօտերը, աղբիւրի մը քով: Այդտեղ հանդէսցուցին իրենց կարաւանը: Մէկ շաբաթ մնացինք: Մեզի կ'ըսէին որ աւանակներուն ուշադրութիւն ըրէք, հեռուները չերթան:

Մեծերը կ'երթային կողոպուտի, իսկ փոքրերը կը սպասէին իրենց ապրանքներուն քով: Իսկ ես, աւանակները կը քչէի դէպի այն ձորը ուր մայրիկս ըսպաննուած էր: Կ'ուզէի երթալ, մայրիկիս դիակը տեսնել: Միշտ ուշադրութիւն կ'ընէին ինծի, ճամբէն ետ կը դարձնէին:

Ատկէ ելլելով, գացինք Քէզլիսա խանին կողմը: Ճամբուն վրայ, Քուրտի խօնախ մը կար, անոր քով հանդէսցուցին կարաւանը եւ իրենց պղտիկներուն հետ, ինձ ալ զրկեցին այդ շէնքը որ ուտելիք մուրամ: Հոն հանդիպեցայ մեր գիւղացի, Փառանձեմ անուն աղջկան մը, որուն մականունը չեմ յիշեր: Միայն գիտեմ որ Պետրոս ամուսին աղջիկն էր: Երբ զիս տեսաւ, ճանչցաւ, փարեցաւ վզիս ու լացինք: Իր աղան, խանումը ու ինձ հետ եղող տղաքը ապշած՝ երեսնիս կը նայէին որ ի՞նչ պատահեցաւ: Ու Փառանձեմը յայտնեց որ զիս կը ճանչնայ: Ու դառնալով պատմեց որ «Ահարոն հօրեղբորդ կինը, իր երկու աղջիկները, Սուլթան եւ Ալմաս հօրաքոյրներդ, ցորենները քաղելէ վերջ, Քիւր-

տերը տարին ու սպաննեցին» :

Այդտեղ ալ ութ օր կենալէ ետք, գացինք Քէզինա, աղային խօնախը ըսուած տեղը, մնացինք տասը օր :

Երկու օրուայ ճամբայ գացած էինք, տեսայ որ ծովու կողմէն հսկայ բազմութիւն մը կուգայ, վազելով գացի Հեղնարին հարցնելու որ, արդեօք Հայե՞ր են :

— Այո, աղուորս, այո, Հայ են : Ատոնք ալ մեռցնելու բերած են :

Եւ արդէն շատ չանցած, մերիններն ալ գացին կողոպուտի :

Ես կը փափաքէի միասին երթալ, այն յոյսով որ, թերեւս մեծ մայրիկս եւ Խումար ու Մարիամ հօրաքոյրներս գտնեմ մէջերնին : Բայց կարելի չէր որ տանին իրենց հետ :

Անոնց մեկնելէն վերջ, կամաց կամաց գացի, քիչ մը հեռուն կենալով սպասեցի, տեսնեմ ի՞նչ պիտի ընեն :

Ծովէն պզտիկ ջուր մը բաժնուելով կը թափէր Պախր-Մատէն : Այդ ջուրին եզերքը կար խիտ մացառներ, հոն նստեցուցին եւ սկսան մերկացնել : Արդէն ըսկսան լացի կոծի աղաղակներ որոնք երկինք դետին կը թնթացնէին : Բանակներով Քուրտեր եկան, ամէնուն ձեռքը կար հատոց, կացին, մանգաղ, ծայրերը մասնաւոր շինուած փայտեր : Մտան այդ բազմութեան մէջ ու ջարդեցին :

Լալով գացի ինկայ Հեղնարին գիրկը : Հեղնար կը չոյէր ու կ'ըսէր. «Ինչո՞ւ գացիր : Հիմա որ գան լալդ տեսնեն, քեզ ալ պիտի մեռցնեն» :

Այդ երեկոյին, մացառներուն մէջէն, երկու հոգի բոլորովին մերկ, ձեռքերովնին իրենք գիրենք ծածկած, դէպի մեզ կուգային : Երկու չափահաս եւ խելացի աղջիկներ էին : Ա'խ, Աստուած իմ, չտեսնուելու համար,

դիակներու տակ պառկած են եղեր, ու մութէն օգտու-
ւելով, եկած են կեանքերնին ազատելու եւ հազուստ
խնդրելու համար: Այդ գազաններն ալ Քէզինա, աղա-
յին խօնախը տարին գանոնք: Եւ մինչեւ լոյս իրենց լիրբ
հաճոյքներուն գոհացում տալէ վերջ, այդ երկու խեղճ
աղջիկներն ալ տարած եւ պատերուն տակ զարկած էին:

Առտուն տեսանք երկուքին ալ դիակները:

Քուրդերը գիւս, իրենց զաւակներուն հետ, աւա-
նակները արածելու կը զրկէին: Օր մըն ալ, տղաքը վա-
զելով եկան ինծի ըսին որ «Ֆէտիմէ, (իմ անունս էր)
աղան տարած է Ֆաթման (Հեղնարը) այդ աղջիկնե-
րուն դիակին քով, զարկած է»:

Շատ յուզուեցայ բայց չէի կրնար լալ, որովհետեւ
Խանում ըլլալիքն արդէն կը սպառնար ըսելով որ «դուն
դրամդ Ֆաթմային աղային տուած ես, Ֆաթման ըսաւ
ինծի: Եթէ երթաս ուզես լաւ, թէ ոչ՝ մենք ալ քեզի
կը մեռցնենք»:

Լալով կը պատասխանէի թէ «իմ քովս ո՞ւր տեղէն
դրամ պիտի ըլլայ: Դրամ ունեցողը ծովը կը նետէր,
Քուրտերուն չմնալու համար: Մեր դրամը արդէն մայ-
րիկիս քովն էր, ան ալ ոստիկանները առին: Երբ ամու-
սինդ մայրիկս սպաննեց, թող ըսէ որ, դրամ ունէ՞ր
քովը: Մօրս քովը չկար՝ իմ քովս ո՞ւր կէ պիտի ըլլար»:

Սուտ էր որ Հեղնարը իրենց ըսած էր: Թող տուին
օձիքս: Այդ տեղերէն ալ ելլելով, շատ մը քուրդ գիւ-
ղերէ անցանք: Երկար ատեն իրենց մօտ մնալով, հա-
յերէնս մոռցայ ու թէ իրենց եւ թէ Չաղաներու լեզուն
սորվեցայ: Երբ այլեւս ինքզինքս բացատրելու կարո-
ղացայ, համոզեցի զիրենք թէ՛ «մայրիկս մեր տունը
չատ ապրանք պահած է, երթանք հանենք, ձեզի ըլլայ»:

Համոզուեցան ու ճամբայ ելանք: Ամէն մէկ գիւղ,
մէկ-երկու օր իջեւանելէ յետոյ, դեռ մեր գիւղը չհա-

սած, լեռներուն վրայ տեսանք արեւին տակ սեւցած դիակներ: Քուրտերը քիթ-բերաննին կը կապէին ու փայտ մըն ալ ձեռքերնին առած, դիակները կը ճեղքէին ոսկի գտնելու համար: Ինծի ալ փայտ մը տուին եւ ըստիպեցին որ ես ալ ոսկի փնտռեմ: Ես ոչ թէ հոտէն, այլ վախէս կը մարէի:

Վերջապէս հասանք Քիւրտէմլիկ գիւղը: Հոն մնացինք երկու օր, հետեւեալ առաւօտ որ սլիսի մեկնէինք մեր գիւղը, թնդանօթի ձայներ լսեցին եւ ըսին որ «Ռուսը կուգայ, աս աղջիկն ալ կը փախչի կ'երթայ անոնց մէջ եւ մեզի կը մատնէ թէ իմ մայրս եւ եղբայրս ասոնք գարկին»: Եւ զիս ետ դարձուցին:

Իմ նպատակս ոչ թէ տանիլ եւ մեր ունեցածը այդ շուներուն ձեռքը տալ էր այլ, միտքս դրած էի, փախչիլ երբ մեր գիւղին մօտենայինք, քանի որ գիտէի թէ Կիրակոս հօրեղբորս աղջիկը, Հռիփսիմէն, ողջ է եւ Մէղիրէ կը մնայ:

Անկէ յետոյ անցանք Չանախլի գիւղը: Ութ օր ալ հոն մնալէ ետք, դարձեալ ճամբայ ելանք դէպի Պախր-Մատէնի: Իրենց սեփական տունը հոն էր: Հանդիպած գիւղերէն հաւաքած եւ գողցած ապրանքները տեղաւորելէ ետքը, նորէն ճամբայ ելանք դէպի Օսմանիէ, որուն շրջանը պտտելէ յետոյ, գացինք Արզնի: Եւ անկէ հասանք Տիգրանակերտի շրջանի գիւղերը: Ասոնց արհեստն էր գողնալ ու մուրալ:

Երբ ցուրտերը սկսան, դարձանք Պախր-Մատէն: Միշտ պտտելով հասանք Օսմանիոյ շրջանը: Հոտ հանդիպեցանք մաղ շինող բօշաներու խումբի մը ուր երկու հայ աղջիկներ կային: Զիրար ճանչցանք: Ծնողքին անունը չեմ յիշեր, սակայն գիտեմ որ երկու քոյրեր էին, Աղաւնի եւ Զապէլ: Տուներնին Կիրակոս հօրեղբորս տանը քով էր: Ուզեցին որ զիս ալ առնեն իրենց քով:

Այս երեկու քոյրերուն երեսները հաճի ծեծած էին, իրենց սովորութեան համեմատ :

Օսմանիոյ մօտ քիւտ գիւղ մըն էինք, ոստիկաններ պշարեցին մեզ, «Իպրահիմ, Իպրահիմ» հարցնելով : Աղաս բռնեցին տարին : Վերջը իմացայ որ զինուոր տարած են մինչեւ Հասան-Գալէ : Մենք ալ եկանք Պախր-Մատէն, ձմեռը հոն անցընելու համար :

Խանուժս հոն մայրիկիս հագուստները հանեց հագաւ, եղբօրս հագուստներն ալ իր պզտիկին հագցուց : Մայրիկս, եղբօրս գոգնոցին ուսին վրայ թաշկինակ մը կարած էր, այդ թաշկինակը փրցուցի, առի : Երբոր լեռը՝ աւանակները արածելու կը դրկէին, կ'երթայի ժայռի մը տակ, կը հանէի թաշկինակը եւ մայրիկս ու եղբայրս աչքին առջ բերելով կուլայի ու կ'անիծէի այդ գազան հրէշը, ըսելով, «ինչպէս որ իմ մայրս ու եղբայրս մեռցուցիր, չարչարանքներով, նոյն դասին ալ դուն դասուիս : Մահովդ չսատկիս» : Եւ կսկիծէս անուճները կը մոռնայի : Ասոնք կուգային որ կենդանիները չկան, թաշկինակը առած կուլամ, կը յափշտակէին, կը նետէին եւ աղուոր մըն ալ կը ծեծէին . «դեռ շատ պիտի լա՞ս այդ շան լակոտին թաշկինակին վրայ» ըսելով : Որքան որ կը նետէին, դարձեալ կ'երթայի կը գտնէի ու գաղտնի տեղ մը կուլայի : Հասկեցան որ այդ թաշկինակէն պիտի չկրնան բաժնել, աչքիս առջեւ այրեցին ըսելով, «հիմա գնա աղուոր մը լաց» :

Քանի մը շաբաթ ետքը, հեռագիր մը եկաւ Հասան-Գալէէն «ամուսինդ փախած ժամանակ, կռնակէն դարնուած է եւ տուն պիտի բերուի» :

Ես սրտիս մէջ ուրախացայ որ Աստուած անէծքս լսեց : Բայց իրենք խենթեցան : Վերջապէս տուն բերին, երեք օր չտեւեց, սատկեցաւ : Կինն ու դաւակները իրենք զիրենք կը բղբօտէին, ցաւէն : Բայց իմ այնքան

Թափած արցունքներս, այդ վայրկեանին ցամքեր էին, կարծէք: Ասոնք տեսնելով որ ես չեմ լար, ձբեցին իրենց շան դիակը եւ վրաս յարձակեցան գոռալով «վրէժ կը լուծես, հա՞, եւ չես լար: Դեռ քանի՞ օր առաջ էր շան լակոտին թաշկինակին վրայ հեղեղի պէս արցունք կը թափէիր»:

Ու սկսան աքցանով միսերս փեթտել ու ծեծել: Մանաւանդ երկու մեծ աղջիկները, Սէնէմը եւ Սուլթանը, զիս ծեծելով պիտի մեռցնէին: Իրենց աղագականներն ու դրացիները չգիմանալով եկան ըսին. «Հայտէ, ի՞նչ կ'ընէք, խեղճ էք, ձգեցէք, մեղք է աղջիկը: Զեր մարդը ինչպէս որ ձեզի համար անուշ է, անորն ալ հարկաւ իրեն համար անուշ է»: Եւ ձեռքերէն ազատելով տարին իրենց տունը: Ութ օր մնացի այնտեղ, մինչեւ որ միւսներուն սիրտը քիչ մը հանդարտեցաւ: Յետոյ տուն բերին եւ մայրիկիս կարած հագուստները վրայէս հանելով հին բաներ հագցուցին: Նոյնպէս կօշիկներս ալ առին, բոպիկ ձգեցին զիս եւ ուսիս պայուսակ մը կախելով, ստիպեցին որ քաղաք երթամ մուրալու: «Եթէ չերթաս, քեզի ոչ հագուստ կայ, ոչ կօշիկ եւ ոչ ուտելիք: Եւ պէտք է որ դողնաս ալ, հագուստ, կօշիկ, ինչ որ հանդիպի: Միայն իրենց տուածովը պէտք չէ դաս»: Ուզէի կամ ոչ պէտք էր երթալի: Մէկ երկու անգամ իր պզտիկները հետս ղրկեց ճամբաները սորվեցնելու համար: Եւ սկսայ մուրալ:

Պախըր-Մատէնի մէջտեղը ձոր մը կար որ երկուքի բաժնած էր քաղաքը: Շուկան եւ հարուստ թաղը պղինձի հանքին կողմը մնացին: Ես կ'երթալի այն կողմ ուր կային Ասորիներ եւ Հայ Հոռոմներ, որոնք տեղահանուած չէին: Հասկցած էին իմ հայ ըլլալս եւ շատ կը խղճային որ այդ շուներուն ձեռքը անցած եմ: Ամէն



ՎԵՐԱԾՆՈՒՆԻ

Հայրենագար՝ Տիկին Թովմասեան
իւր ուրբը գտակներով Պարուսի քարափին վրայ



ՎԵՐԱԾՆՈՒՆԻ

Հայրենագար՝ աղջիկներ իրենց ուսանողական տան մէջ

անգամ որ այդ թաղը երթայի, կը կանչէին, լաւ մը փորս կը կշտացնէին եւ բաներ մըն ալ կուտային: Աստուծոնէ մինչեւ իրիկուն փողոցները կը պտտէի: Հաւաքածներս երբոր տուն կը տանէի, տոպրակը կը բանային ու կ'ըսէին. «Լաւ բաները կերած ես, գէշերն ալ մեզի կը բերես»: Եւ նորէն կը ծեծէին: Բերածներս ալ իրենք կ'ուտէին եւ ինծի պատառ մը անգամ չէին տար: Այսպէս չարչարելով կը ստիպէին որ գողութիւն ընեմ:

Դարձեալ կը մուրայի, վերի Մէյտանին քով թուրք ընտանիք մը հարսանիք ունէր եւ, երկրի սովորութեան համեմատ, բոլորն ալ դուրսը հանած էին կօշիկները: Ծեծ չուտելու համար խորհեցայ գողնալ: Ծուրջս լաւ մը դիտելէ ետք, զոյգ մը կօշիկ պայուսակս դրի ու փախայ: Տուն տարի, ասոնք ուրախացան: Խոստացած էին որ ինծի պիտի տան, բայց առին իրենց պահեցին եւ զիս կրկին բոպիկ, ձիւներուն վրայ քալել տուին:

Այդ գողութենէս վերջ, նոյն թաղերը չզացի մէկ ու կէս ամիս: Վարի մէյտանը եւ մեր կողմերը կը պլտրտէի բայց ուտելիք չէի կրնար ճարել: Տուն կ'երթայի, կը ծեծէին ըսելով որ «ամէն տուածնին կ'ուտես հոս բան չես բերեր»: Մինչդեռ ամբողջ օրը անօթի ծարաւ կը թափառէի, որ տունը տանելու բան ունենամ եւ չծեծեն:

Երկու ամիս անցնելէ վերջ, երբ ճայն-ձուն չելաւ կօշիկներու մասին, կօշիկ գողցած տունէս քիչ մը հեռու, դիմացը, Հայ-Հոռոմի մը դուռը կը զարնէի հաց խնդրելու համար: Աղջիկ մը զիս տեսնելով, յանկարծ պօռաց որ այս պզտիկն էր կօշիկ գողցողը: Զիս բռնեցին ոստիկանատուն տարին ու ըսին որ մեր կօշիկները գողցած է: Բայց ես շարունակ ստեցի: Տեսան որ չեն յաջողիր բերնէս խօսք առնել, վախցուցին: Ոստիկանը հարցուց. «Ո՞ր տեղացի ես եւ ի՞նչ ազգի կը պատկա-

նիս» : Ըսի որ «էրզրումի կողմերէն Քուրդ եմ : Հայրս կեավուրները սպաննեցին : Մայրս ու եղբայրս ալ ճամբան անօթութենէ մեռան» : Գլուխը օրօրելով ըսաւ . «Լաւ յարմարցուցիր , բայց քու դիմագիծդ Հայ է , թէ եւ լեզուդ՝ քուրդ : Դէմքդ քեզ կը մատնէ , պարապ տեղը սուտ մի խօսիր : Ես քեզ կը ճանչնամ : Թէ՛ հայ ես եւ թէ՛ աչըղներուն քով կը մնաս : Անանկ չէ՞» :

Այսպէս որ ըսաւ , ծունկերս կոտորուիլ սկսան . վախէս կը դողայի : «Եթէ ճիշտը չխօսիս , քեզի պիտի մեռցնենք : Իսկ եթէ խոստովանիս բան չենք ըսեր : Ես գիտեմ որ դուն չես ընողը , այդ շուներն են որ կը վարժեցնեն» :

Կարելի չէր ստել , այլեւս : Բայց որքան որ կը լեցուէր բերանս որ պատմէի , չէի համարձակիր : Արդէն կռահեց ոստիկանը եւ մազերս շոյելով , ըսաւ . «Եթէ ճիշտը ըսես , քեզի այդ չարերուն ձեռքէն կ'ազատեմ , իմ տունս կը տանիմ : Մեղք չէ՞ , քեզի պէս աղուոր աղջիկ մը , բօշայ եւ աւազակ շինեն» :

Որքան որ կը խոստանայ , չեմ վստահիր , խորհելով որ «չունը շանը միսը չուտեր» : Բայց վերջապէս ամէն բան պատմեցի :

Հրամայեց ոստիկաններուն «հետը դացէք , կօշիկը բերէք» : Ոստիկանը գտաւ կօշիկները : Վերադարձանք ոստիկանատուն : Խանըմ ըլլալիքս ալ եկաւ եւ պահանջեց որ զիս իրեն յանձնեն : Ոստիկանը մերժեց ու իրեն տունը ղրկեց : Իր կինը ուրիշ արջիկ մը առած էր , ան ալ իր տալիջը ղրկեց :

Նոր խանութիս հասնեցաւ ինծի , որովհետեւ լաւ կար կը կարէի : Այս կինը ինծի տարեկից խորթ տղայ մը ունէր , գիշերները երկուքս ալ կ'արթնցնէր եւ ջուր կրել կուտար լողանքի համար : Ամանները ծանր էին , չէինք կրնար վերցնել : Երկուքս ալ որբ , լալով լալով կ'եր-

Թայլինք գիշերուայ մութին : Աղբիւրն ալ բաւական հե-
ռու էր , դուրսը ցուրտ-ձիւն :

Օր մը տունը ճերմկցնելու ելած էր : Հողը ախանի
մը մէջ , սենեակին մէջտեղն էր : Այդ օրերն ալ ոտքերս
բոպիկ , ցուրտէն վէրք եղած էր , կը ստիպէր որ շուտ
շուտ քալեմ : Ինչպէս եղաւ ամանը թափեցի : Կինը
փայտով մը արմուկիս զարկաւ , մարեցայ : Հինգ վայր-
կեան վերջ , այս անգութ կինը հրամայեց որ կաթ-
սան աղբիւր տանիմ լուալու համար : Որով միտքս դրի
փախչիլ : Գացի Ասորիներու եւ Հոռոմներու թաղը :
Յուրտ ձմեռ էր . փողոցները ձիւն կար : Այսպէս մնա-
ցի դուրսը : Պառկելու եւ հանգչելու տեղ չունէի : Կը
մուրայի եւ ուր որ ծածուկ տեղ գտնէի , հոն կը սլառ-
կէի :

Գիշեր մը , դուռի մը առջեւ , գլուխս քարին դրած ,
քնացեր էի , հազիւ արթնցայ երբ մէկը զիս կը շարժէր՝
ու կը ձայնէր . «Աղջիկս , դուն ո՞վ ես» :

Աչքս բացի որ հոռոմ տէրտէր մըն էր : Անմիջապէս
ներսէն իր ընտանիքը եւ աղջիկը կանչեց . եկան տարին :
Քիչ մը կերակուր եւ հաց տուին : Յետոյ , այծի մորթ
մը փռեցին բակին մէջ , մորթ մըն ալ վրաս ձկեցին ,
պառկեցուցին : Առտուն դարձեալ զիս կերակրեցին :

Հոս-հոն , ուր որ ծածուկ տեղ մը կը գտնէի կը
պառկէի : Ոտքերուս վէրքերը հետզհետէ ծանրացան ու
այլեւս չէի կրնար քալել : Օրերով անօթի կը մնայի :
Ստիպուած եղայ քաշկուտելով սլտտիլ : Կ'երթայի խա-
նութներուն առջեւը կը սպասէի որ մէկը գայ , բան մը
ղնէ , ինծի կտոր մը տայ :

Իրիկուն մը , սաստիկ ցուրտ էր , այդ օրն ալ բնաւ
ուտելիք ճարած չէի , մօտերը կար ասորի ընտանիք մը ,
ատոնց գացի , պառկելու տեղ մը ու սլատառ մը հաց
խնդրեցի : Այդ օրը դուռը չբացին : Երկու ոստիկան

այդ վայրկեանին վեր կ'ելլէին թեւերէս բռնեցին, տարին վերի մէյտանը, խանի մը մէջ դրին: Գիմացը հացագործ մը կար, գացին հաց մը առին, բերին ու. «այստեղէն մի հեռանար ըսին: Գիշերները հոս կը պառկիս, ցորեկն ալ, հացագործը մօտ է, հոն կը նստիս, հարկաւ եկող-գացողներէն մէկը, պատառ մը հաց կուտայ»:

Այդ խանը կեցայ, զրեթէ մ'իկ ամիս: Առտունները կ'ելլէի, դժուարաւ կ'երթայի հացագործին խանութը: Օր մը երբ Քուրդ մը հաց կը զնէր, խնդրեցի, «Ո՞ւալէ՛, լսալէ՛, կերէ՛ք և ոսկի պտեմը չ՛քեմը պտղիմէ, (հօրեղբայր քիչիկ մը հաց տուր, փորս անօթի է):

Այս անգութ Քուրդը ըսաւ. «Ձբէտա՞յ պտղիմէ, քէրիք ֆըլլան, քէյնէ քուրիքան: Հայստէ մալտ պաւէ տանմմ (փորդ անօթի՞ է, հայու աղջիկ, շունի ձագ: Եւ աղտոտ հայհոյանքներ հօրս ու մօրս...) եւ զարկաւ ու նետեց ցետին մէջ:

Շատ քիչեր խղճալով, պատառ մը հաց կը նետէին, շունի մը նմար: Տուած հացերնին կէսը կերայ, կէսն ալ ծոցս պահեցի որ առտուն ուտեմ: Առաւօտուն արթնցայ որ հացս չկայ, սկսայ լալ: Հարկաւ այդտեղ ինծի նման ուրիշ անօթիներ ալ կային:

Ոտքերուս վէրքերուն ցաւը հետզհետէ սաստկացաւ, բթամատերուս ոսկորները կ'երեւար, չէի դիմանար: Մարդ մը ըսաւ որ ամէն օր լուամ: Ատով քիչ մը լաւցան վէրքերս: Սկսայ քալել ու մուրալ:

Վարի մէյտանին մօտ թուրի ծառ մը կար, վրան ելայ եւ խակ խակ կերայ: Կ'ուտէի որովհետեւ միշտ անօթի էի:

Մեծ հայրիկիս տարիքը թուրք մը հարցուց, «անօթի՞ ես, եկուր հաց տամ»: Եւ սենեակ տարաւ: Կէս ժամ վերջը եկաւ, ձեռքը հաց չկար: Սենեակին դուռը

կղպեց : Սկսայ կասկածիլ ու լացի : Այս չարահոգի թուրքը , բերանս ուժով մը սեղմեց եւ ուղեց զիս մերկացնել : Ամբողջ ուժովս սկսայ պօռալ : Այլմուկէն վախսալով , զիս ազատ թողուց :

Ատկէ ետք , անօթի կը պառկէի եւ թուրքերու տունը չէի մտներ :

Իրիկուն մը , Հայ-Հոռոմ ընտանիքի մը դրան առջև պառկած էի , երկու աղջիկներ զիս ներս առին , գետինը բան մը փռեցին , վրաս ալ լաթ մը տուին եւ քիչ մըն ալ ուտելիք տալով պառկեցուցին , բակին մէջ : Որքան քնացեր եմ , չեմ գիտեր , մէկը արթնցուց . « Ել , ըսաւ , այստեղ քարերուն վրայ կը մսիս , եկուր լաւ տեղ մը տանիմ քեզ » :

Տունին տղան էր , տունէն դուրս աւերակներուն մէջ տարաւ : Դարձեալ կասկածեցայ , միւս շուն ծերուկին վերաբերմունքը աչքիս առաջ բերելով : Ու լացի , պօռացի : Ստիպուեցաւ տուն վերադարձնել :

Այդ գիշերը ինչպէս անցընելս չգիտցայ : Կուլայի ու կ'աղօթէի որ Աստուած ինձի ազատէ այս կեանքէն :

Առտուն հեռացայ այդ տունէն եւ սկսայ նորէն թափառիլ ու մուրալ : Ատեն մը ծառայութեան մտայ թուրք ընտանիքի մը քով : Կինը մաքրեց վրաս գլուխս եւ պատուիրեց որ իր մէկ տարեկան աղջկան հող տանիմ : Ինձի տարեկից մանչ մըն ալ ունէր : Ամուսինը օնպաշի էր :

Օր մը հրաման եկաւ որ Օնպաշին քուրդ գիւղերը երթայ : Ընտանեօք փոխադրուեցանք : Այդ գիւղերը ինձի ծանօթ էին , ես չէի նեղուիր , բայց իրենք շատ կը նեղուէին որովհետեւ լեզու չէին գիտեր :

Աղջիկը այդտեղ մեռաւ : Օնպաշին միշտ պահականոցին մէջ էր եւ շարունակ գործ ունէր Բուրտերուն

հետ : Ստիպուեցաւ զիս քովը տանիլ որ թարգման ըլլամ իրեն : Կինը բարկացաւ որ տանը գործերը իր վրայ կը մնար : Մանաւանդ պզտիկն ալ մեռաւ , սրտի նեղութենէն սկսաւ հետս չարութեամբ վարուիլ :

Քուրդը կիները ինծի խորհուրդ տուին որ փախչիմ որովհետեւ «այդ կինը կրնայ փորձանք մը բերել գըլխուդ» ըսին :

Ամուսինը գործով Չանախջի պիւղը վացած էր : Կինը , ամուսինին բացակայութենէն օգտուելով , կը չարչարէր զիս : Քուրդը բարի հարս մը կար , օգնեց որ փախչիմ :

Առաւօտ մը , անկողինները կարգադրեցի ու փախայ : Մինչեւ իրիկուն ճամբայ քալեցի : Մօտերը , Կունտէ անուն պիւղ մը կար , ձորին մէջ : Հեռուէն նշմարեցի աշուղներուն կարաւանը , վախէս ամբողջ մարմնովս դողացի ու խենթ ձեւացայ : Բարեբախտաբար , մայրիկս սպաննող աշուղները չէին : Ինծի ուտելիք տուին ու ըսին . «Օնպաչին քեզ կը փետոէ , պիտի սպաննէ : Կինը հեռագիր ըրած է որ հայ աղջիկը վիզիս ոսկիները գողցաւ ու փախաւ» :

Այդ միջոցին Քուրդերու բազմութիւն մը կը մօտենար մեզի : Օնպաչին կանգնած էր : Աշուղները զիս պահեցին փուշերուն տակ : Աղաս աշուղներուն սպառնական հարցուց . «տեսա՞՞ք էք հայ աղջիկը , ուր որ ալ գտնեմ , այս գէնքը կուրծքին պիտի պարպեմ» : Ու հեռացաւ :

— Ականջովդ լսեցի՞ր , ըսին : Ուրեմն ալ մի մնար մեր մօտը : Փախայ , արտերուն մէջէն , քարերուն , փուշերուն զարնուելով : Բաւական հեռուն , Պէտովէ պիւղը հասայ : Հոն մտնելը շատ դժուար էր , որովհետեւ հըսկայ շուներ , դիակներ ուտելով , կատղած էին :

Առաջին դուռը որ զարկի , տանտիկինը ներս տա-

րաւ ու կերակրեց : Ասոնք ալ Ձաղա Գուրդեր էին : Ինծի որդեգրեցին եւ քուրքէ կը կանչէին (ղաւակս ըսել է) : Աղաս այդ գիւղին խօճապաշին էր, ու անոր վախէն, ոչ մէկ Գուրդ ինծի չէր կրնար բան ըսել : Իր եղբոր որդիները ուղեցին առեւանգել, բայց աղաս ըստ պառնաց . «Ան իմ հարազատ զաւակս ըրի, ըսաւ, եթէ գլխուն փորձանք մը գայ, տունով-տեղով կ'այրեմ ձեզ» :

Ես ալ հաւատարմօրէն ծառայեցի : Այս մարդն ալ իր շահուն համար պաշտպանեց զիս : Գերիի պէս կ'աշխատցնէր : Անասուններուն աղբը կը թափէի : Քթոցը ծանր էր արդէն, երբոր աղբն ալ լեցնէի, աւելի կը ծանրանար : Մէկը չկար որ ուսիս վերցընէր : Մինակս՝ սանդուխի աստիճանին կը դնէի որ շալակս առնեմ, բայց ուժըս չէր բաւեր, գետին կ'իյնայի, քթոցն ալ՝ վրաս : Աղբին տեղն ալ բաւական հեռուն էր :

Բոլորովին հիւանդացայ եւ աշխատելու անկարող եղայ : Անգութ կիւնը զիս վռնտեց ու քուրդ աղջիկ մը առաւ : Դրացի քուրդ կիւնը խղճաց ու քանի մը օր իր տունը պահեց : Գիտէր իմ որտեղացի ըլլալս, խորհուրդ տուաւ ինծի ու ըսաւ . «Ոտրբերդ շատ Հայ կայ, եկուր ճամբան ցուցնեմ, գնա, այնտեղ քեզի հոգ կը տանին : Եթէ հոս մնաս, օր մը կը մեռցնեն քեզի» :

Կանուխ՝ միասին ելանք գիւղէն, ճամբաները բացատրեց . «Ճախ դառնալէ ետք, բաւական կ'երթաս եւ արդէն ծովը կ'երեւայ : Միշտ հարցունը ճամբորդներուն թէ Ոտրբերդ ո՞ր կողմն է» :

Այլեւս յուսահատեցայ, ինչու որ երբ մայրիկիս հետ էրթմնիկ, մօրեղբարենցս կ'երթայինք, կը հարցընէի, հայրիկս ո՞ր պացած է : Մայրիկս կ'ըսէր . «այդ լեռներուն ետեւ ծով մը կայ, անկէ անդին դացած է» : Թուրքերն ալ երբ կ'ըսէին, «Ամերիկա Հայ չէ մնացած, ամէնը զարկած են», իմ պացած ծովէն, անցած ճամ-

բաներուս վրայ ալ Հայ չկար՝ կը կարծէի թէ Աճերիկա հասած եմ: Ուրեմն ո՞ւր պիտի գտնեմ իմարբերը:

Առտու, արեւը չծագած ճամբայ ելայ: Գիւղէն հեռու, Քուրտերու հանդիպեցայ որոնք աւանակներու վրայ բեռներ դրած կը ճամբորդէին, հետեւեցայ իրենց եւ ուրախ էի որ թերեւս անոնք զիս կ'առաջնորդեն: Մինչդեռ անոնց խօսակցութիւնը լսեցի. «Ասիկա հայ կ'երեւայ, քիչ մը վեր տանինք, զարնենք»: Անմիջապէս հեռացայ ու վախէս գիւղ դառնալ ուզեցի:

Արեւը ծագեցաւ. մտայ արտերը, ինծի ծանօթ բոյսերէն կերայ, ու անոնք հեռանալէ վերջ, դարձեալ ճամբայ ելայ: Հեռուն՝ լեռներու մէջ ծուխ տեսայ, վախցայ: Մեր գիւղը դեւերու պատմութիւններ շատ կային, կը վախնայի որ դեւեր են: Երկար քալեցի: Ծամբան վերջացաւ լեռներու գլուխը որ ձիւնով պատած էր: Ծամբաս կորսնցուցի: Սկսայ ձիւներու մէջէն քալել: Աջ-ձախ կը դառնայի ու շարունակ շուրջս կը դիտէի, սոսկումով մը, որ հիմա գայլեր կամ արջեր պիտի գան բզկտեն ինծի:

Կէս օրուայ մօտ, ձիւնը կակուղցաւ եւ ձիւնին վրայ քալելս դժուարացաւ: Ոտքերս ունէի քրտական չառօխներ, քայլս երբ փոխէի ոտքս ձիւնին մէջ կը թաղուէր: Մէկ կողմէն վախը, միւս կողմէ ձիւնը, ոտքերս սառեցան, չառօխներս կորսուեցան: Կը ջնանայի ժամ առաջ ճամբայ կտրել, բայց ես ալ չէի գիտեր, դէպի ո՞ւր:

Ու վերջապէս ձիւներուն մէջ թաղուելով, ելլելով, հասայ լեռան միւս կողմը: Տեսայ ծովը, չափէ դուրս ուրախացայ թէեւ, սակայն լեռը շատ բարձր ու ցից էր եւ ձիւնոտ, կրկին յուսահատեցայ: Զեռքերովս ձիւնը սեղմեցի ու աստիճանի ձեւ տուի ու սկսայ իջնել:

Իջնելէ վերջ տեսայ որ ծովը բաւական հեռու էր :

Օրը իրիկունն եղած էր եւ ես անօթի էի : Դարձեալ խոտ կը փնտռէի ուտելու համար , տեսայ հեռուէն երկու Քուրդ կը վազեն : Կարծելով որ ինծի կը մօտենան լեղապատած՝ ինքզինքս մացառներու մէջ նետեցի : Անցան : Ինծի տեսած չէին : Ու քիչ մը ոգեւորուեցայ , խորհելով որ անշուշտ մօտերը գիւղ կայ , քանի որ մարդիկ կը պտտին : Կամացուկ , վախով-դողով յառաջացայ , ծովու ջուրին մէջ դրի ոտքերս ու ձեռքերս որ տաքնամ : Զուրը տաք էր : Ոտքերուս ցաւը թեթեւցաւ քիչ մը , դարձեալ քալել սկսայ , ո՞ւր , ես ալ չէի գիտեր :

Երբ առանձին էի , դադաններէն կը վախնայի . երբ մարդ հանդիպէր՝ մարդոցմէ կը վախնայի :

Ծովուն եզերքը բարակ ճամբայ մը կար , դէպի ձախ սկսայ քալել : Դիմացէն այր ու կին մը , աւանակներ բռնցուցած կուգային , վրաս վազեցին . «Կուջիկէ ֆլանէ» : Հայու աղջիկ է , զարնենք ըսին : Կինը արգիլեց . «այդ խեղճ ու կրակը զարնելով ի՞նչ պիտի շահինք : Վրան հագուստ անգամ չունի որ առնենք : Զգենք երթայ» : Ու ինծի դառնալով ըսաւ . «տես , այնտեղ ջաղացք մը կ'երեւայ , բազմութիւն կայ , Հայեր հաւաքած են որ տանին սպաննեն : Դուն ո՞ւր կ'երթաս , քեզի ալ կը զարնեն» : Ու դէպի լերան կուրծքը ցուցուց : «Այնտեղ գիւղ մը կայ , հոն գնա , կարելի է ազատիս» :

Նոյն պահուն , երկու քրտուհի արտերը եկան բանջարեղէն հաւաքելու համար : Սպասեցի որ երբ գիւղ դառնան , հետեւիմ իրենց : Յանդիմանեցին : Զէին ուզեր որ իրենց գիւղը երթամ : «Նս ձեր տուները չեմ դար» ըսի ու լացի : Մութը կը կոխէր , հասայ գիւղ , բայց ներս մտնել անկարելի է , կատաած շուներ կան : Գիւղին ծայրը տուն մը կար , հաղիւ ինքզինքս հոն նետեցի : Այդ գիշեր ընդունեցին : Առաւօտ , ստիպուած գիւղը

պտտեցայ, հաց մուրալու համար: Ուր որ կ'երթայի, պարապ կը դառնայի: Տեղ մը միայն դտայ, կլկլ եւ ցորեն կը չափէին: Գացի, դետինը թափածները ժողվեցի կերայ, շատ անօթի էի: Անպիտան Գուրդ մը վրաս վազեց, իր շան լեզուով. «հաստէ պավէ տէննմ» ըսելով, հայրիկիս հայհոյեց ու չթողուց որ հաւաքեմ: Ծեծ մըն ալ քաշեց: Լալով այդ տեղէն ալ հեռացայ: Յոյսս կտրած՝ դուռի մը առջեւ նստած էի, կին մը դուրս ելաւ, հարցուց. ի՞նչ կ'ուզես:

— Պատառ մը հաց ու գիշերուան տեղ մը կը խնդրեմ: Եթէ դուրսը մնամ, շուները կ'ոտեն ինձի:

— Եթէ վաղը առաւօտ ուր որ պիտի երթամ, հետս դաս, քեզի թէ հաց եւ թէ պառկելու տեղ կուտանք:

Խոստացայ: Թէեւ չէի գիտեր ո՞ւր պիտի տանէր գիս: Կրա՞կը պիտի ձգէր, հոգս չէր, միայն՝ դուրսը չմնամ:

Ներս տարին, կշտացուցին: Առաւօտ կանուխ կ'ինը եկաւ արթնցուց, «չուտով պէտք է ճամբայ ելլենք» ըսաւ: Առանձին երթալու կը վախնար: Օդը սոսկալի մը՝ շուշ էր, ան ինձի կը ճայնէր, ես՝ իբե՛ն, իբա՞: Զլոբսնցնելու համար: Հասանք լեռներուն գլուխը, մշուշը անհետացաւ: Հոն հանդիպեցանք աւազակներու, բարեբախտաբար կը ճանչնային կ'ինը, մեղի ազատ ձրգեցին: Յոգնած էի եւ թրջուած, քալել անկարելի էր: Կինը, սակայն, կ'աճապարէր որ տեղերնիս հասնինք:

Ճամբուն վրայ մանչ մը ու աղջիկ մը սպաննած, նետած էին: Թարմ արիւնը կը հոսէր տակաւին: Անշուշտ Հայեր էին: Կինը ստիպեց որ դիակներուն վրայէն հագուստները հանեմ: Վախէս չէի կրնար մօտենալ անգամ:

— Եթէ խօսքս մտիկ չընես, չեմ թողուր որ գիւլ

մտնես, ըսաւ: Այլեւս ինծի պէտք չունէր, քանի որ գիւղը կ'երեւար արդէն: Այնքան չարչարանքով հաղիւ ծովը գտած էի, հակառակ ճամբով, կրկին իմ տեղս վերադարձած էի: Լալով խնդրեցի որ «ձգէ գիւղ մըտնեմ, տունդ չեմ գար»: Ուրիշ գիւղի մը ճամբան ցուցուց եւ «իմ ետեւէս չգաս» ըսելով, քարկոծեց: Լալով վացի ու մինչեւ իրիկուն հաղիւ հասայ իր ցոյց տուած գիւղը:

Առաջին դուռը երբ զարկի, պզտիկ աղջիկ մը բացաւ, գնաց մօրը պատմեց վիճակս: Մայրը ներս առաւ, հագուստներս փոխեց, կրակին մօտ՝ մարմինս աղւոր մը տաքցուցին, մինչեւ որ իմ զգեստներս չորցան: Ու միասին ճաշեցինք:

Կինը ունէր երկու զաւակ, իմ եւ եղբօրս տարիքը: Ամուսինը տարի մը առաջ մեռած էր: Օճախին շուրջ բոլորուած էինք, խեղճ կինը, մեծի տեղ դնելով ինծի, սկսաւ իր դժբախտութիւնները պատմել: «Ամուսինս մեռնելէ վերջ, գիւղացիները արտերս առին ձեռքէս: Կը վարեն, կը ցանեն, ինծի բան չեն տար: Երկու որբերովս կը տանջուիմ: Ասկէ-անկէ պաշախ ընելով կ'ապրուիինք: Եթէ այս կեանքէն կը գոհանաս, կեցիր մեր քով: Երկուքի տեղ երեք զաւակ թող ունենամ: Վաղը ամառ կուգայ, միասին կ'աշխատինք, միասին կ'ապրինք»:

Սիրով ընդունեցայ: Դժբախտը կը հասկնայ դըժբախտին վիճակէն: Կարծես թէ Աստուած առաջնորդեց զիս այդ տունը: Բոլորս միասին լեռները կ'ելլէինք, փուշ բերելու, վառելու համար:

Տասնըհինգ օր վերջ, տեսան որ ուտելիք չունին, կինը տոպրակ մը կարեց, փայտ մըն ալ ձեռքս տուաւ որ գիւղերը մուրամ, ապրուիմ:

Գիւղէ գիւղ ձաւար, ալիւր, հաց հաւաքելով հասայ Չանախջի գիւղը որ մէկ օրուայ ճամբայ էր: Գիւղը եր-

կուքի բաժնուած էր, վերի եւ վարի Չանախջի: Կին մը ըսաւ, «Քեզի չափ աղջկայ մը պէտք ունիմ»: Մուրալէ կ'ազատիմ խորհելով, ընդունեցայ: Պղտիկը կ'օրօրէի եւ տունին գործերը կ'ընէի: Ունէին անասուններ որոնք արածելու համար, քուրդ տղայ մը վարձած էին: Անգամ մը, ինծի՝ անոր հետ միասին դաշտ զըրկեցին: Հեռուն տարած էինք կենդանիները: Երեկոյին օդը ամպեց, սկսաւ փոթորիկ, կայծակ, կարկուտ: Քուրդ պղտիկները լեռներուն ծանօթ՝ իրենց անասունները առին ու փախան: Ես՝ թէ տեղին անծանօթ էի եւ թէ միասին տուած էին կով, եզ, աւանակ, ոչխար եւ երեք նորածին գառնուկ: Մինակ էի, մութն ալ կոխեց, ամայի լեռներուն ու ձորերուն մէջ սիրտս կը պատռէր: Այլեւս կարելի չեղաւ գառնուկները քալեցնել: Կը խորհէի որ ինչպէս ընեմ որ չմեռնին, ծեծ չուտեմ:

Վերջապէս, ծառ մը գտայ որուն շուրջ, տղաքը քարերով տնակներ շինած էին, գառնուկները հոն տեղաւորեցի, հալուստներս հանեցի եւ լանոնք ծածկեցի, ես ալ իրենց կողքին սեղմուած, վախով դողով քնացեր եմ: Յանկարծ, հայհոյանքներով մէկը արթնցուց: Լուսցած էր: Աչքերս բացի, աղան գլխուս վերեւը կեցած էր:

— Գառնուկները հոս թող արածին, ըսաւ, դուն այս ձորը դնա, ես ալ՝ միւսը, աւանակը փնտռենք: Գտաւ, եօնճային մէջ մտեր, մինչեւ լոյս կերեր եւ արտը ոտնակոխ ըրած էր: Զիս տուն զրկեց որ միւսներն ալ բերեմ: Խանութի փոխանակ գլխալու, պատառ մը հաց չտուաւ: Մինչեւ իրիկուն անօթի ծարաւ, կենդանիները երբ վերադարձուցի, զանոնք ներս առին, զիս վռնտեցին: Խոտ ուտելով, սիրտս կը քամուէր, գըլուխս կը դառնար, հազիւ կը քալէի:

Մութը կոխեց, գացի պատի մը տակ ինկայ, քնա-

ցայ : Առաւօտ , դարձեալ մուրալու ելայ , սակայն կարելի չէր պատահ մը ուտելիք ճարել , որովհետեւ սով կար եւ ցորեններն ալ դեռ նոր ծլած էին :

Ձանախջիէն դացի Սէմսիկ գիւղը : Հոն ալ ոչ մէկ ուտելիք գտայ : Անցայ Կունտէ ըսուած գիւղը ուր հագիւ մտած էի , քուրդ տղաք շուները վրաս արձակեցին : Խոշոր գայլի նման շուն մը թեւէս խածաւ , կը պօռայի՝ անոնք աւելի կ'ուրախանային ու վրաս կը քքչէին շուները : Կին մը զիս ազատեց :

Այսպէս անցայ բազմաթիւ գիւղերէ , անօթի , ծարաւ , թափառելով : Քէյտան գիւղը երթալ կ'ուղէի , ճամբան թութի ծառերուն հանդիպեցայ , թէեւ հասունցած չէին , բայց ստիպուած քաղեցի , կերայ : Յորենի հասկերն ալ տակաւին կաթնոտ , սիրտս կը բռնէին , ինչու որ անօթութենէս այլեւս քալելու անկարող էի :

Մտայ գիւղ : Առաջին տունին մօտեցայ հաց խընդրելու : Ըսին . « Տանիքը կը շինենք , եկուր հետերնիս հող կրէ , հաց կուտանք քեզի » :

Մինչեւ իրիկուն աշխատցուցին , մինչդեռ տեղէս շարժելու կարողութիւն չունէի : Երբ իրիկունը կըսպասէի որ իրենց խոստումը կատարեն , հայհոյանքներով ու լիբր խօսքերով սպաննացին որ հեռանամ իրենց տունէն : Հազար աղաչանք , պաղատանք ոչ միայն օգուտ չըրաւ այլ , զգացի որ , մնալով՝ կեանքս ալ պիտի վտանգուի , ստիպուած հեռացայ :

Գացի ուրիշ տուներ , նոյնպէս պարապ դարձայ : Մութը կոխեց : Պարտէզի մը հանդիպեցայ , կանաչ սոխ կար , կամացուկ մը մտայ , գողցայ , կերայ ու պատի մը տակ ինկայ , քնացայ : Առտուն կանուխ սալորի ծառ մը տեսայ , վրան բարձրացայ , թէեւ խակ էին պըտուղները , սակայն քաղեցի , թէ կերայ եւ թէ ծոցս լեցուցի , վար իջայ : Գացի տուն մը , կին մը կը ճաչէր ,

խնդրեցի. «Տօրաքոյր, քիչիկ մը հաց տուր, փորս անօթի է», բարկացաւ. «մեզի ուտելիք չկայ, քեզի՞ ուսկից պիտի տանք»: Գացի ուրիշ տուն մը, ձայն տուող չեղաւ: Քանի մը աստիճանով տանիքը հասայ: Տեսայ որ այվանը (վրան ծածկուած տեղ մը), խոշոր կողովի մը տակ, մեծ պուտակի մը մէջ, կաթ մակրդած են: Զեռքովս ամբողջ սերը հաւաքեցի, կերայ: Կարծէք թէ վրաս ուժ՝ եւ աչքերս լոյս եկաւ: Այդտեղէն ուրիշ տուն մը դացի, դուռը զարկի, մարդ չկար: Հոս ալ հսկայ կողով մը կար: Վերցուցի, դեռ նոր զարկած չոքելիկ, սարմա, կարագ եւ պանիր կար: Գլուխս ունէի քրտական դտակ մը եւ փուշի (թաշկինակ) մը: Փուշին գլուխս կապեցի, չոքալիկն ալ լաւ մը քամելով, դտակիս մէջը լեցուցի, ծոցս դրի: Նոյնպէս՝ քիչիկ մըն ալ սարմա եւ պանիր առի, տակաւին ունէի սոխ ու սալոր: Կուրծքս խոշորցած էր, կը վախնայի որ բռնուիմ: Դուրս փախչիլ կ'ուզէի այդ գիւղէն բայց շուները հաչել սկսան: Վախէս, քովի տունը ելայ: Անոնք ալ նշմարեցին ծոցիս խոշորութիւնը: Աղջիկ մը ըսաւ. «Քովի տունէն կ'իջնէր, անպայման գողութիւն ըրած է»:

Մինչեւ անոր խօսքը վերջացնելը ես փախայ: Ետեւէս ինկան աղջիկ, մանչ եւ որչափ որ շուն կար: Ես կը վազէի դէպի լեռները: Վերջապէս ուժասպառ եղայ: Ասոնք ճամբաս կտրեցին: Արդէն ծոցս ալ բան մնացած չէր, ամբողջ թափած էր: Բռնեցին եւ աղուոր մը ծեծեցին, գլխուս փուշին ալ առին: Ունէի շարվար մը որ գիշերուայ իմ վերմակս էր, վարի մասը կը կապէի ու վերէն մէջը կը մտնէի, կապը կը քաշէի որ շունչովս տաքնամ եւ պատի մը տակ կը քնանայի, ա'յդ ալ ձեռքէս առին ու կրկին ծեծելով ձգեցին:

Միշտ լալով գացի Քէտան: Գիւղացիները երբ տեսան, «վերի Քէտանը դող մտեր է, անպայման աս մանչ ըլլալու է» ըսին:

Մազերս կտրուած, գլուխս բաց՝ ինծի մանչ կարծեցին, բռնեցին, ծեծելով պիտի մեռցնէին, «ես աղջիկ եմ եւ գող չեմ» ըսի, բայց չհաւատացին, Քուրդ կիներ զիս ներս տարին, քննեցին եւ ազատ թողուցին:

Այդ գիշեր, բարի կին մը ինծի իր տունը ընդունեց: Մօտ երկու ամիս կար որ հացի երես տեսած չէի: Կինը սաճի հաց կ'եփէր, լաւ մը կ'չտացուց եւ այդ գիշերը հանգիստ քնացայ:

Ութ օր հոտ մնացի: Աղային կինը հայ էր, միշտ կ'երթայի խօնախին պատին տակ կը նստէի, իր տնեցիներէն գաղտնի, ինծի ուտելիք կը հասցնէր:

Գիշեր մը, շուները զիս դիակ կարծելով ոտքս խածին: Յաւէն արթնցայ եւ սկսայ լալ: Հարսը ձայնս իմացեր է, վազեց շուները վռնտեց եւ ինծի ծածուկ տեղ մը տարաւ, բայց ցաւէն չէի կրնար կենալ: Հեռացայ գիւղէն, գացի Սիմսիկ գիւղը, ծունկիս վէրքը աւելի խորացաւ: Այդտեղ ալ՝ քուրդ կին մը վէրքս խնամելով, մէկ ամիսէն լաւցուց:

Դեզը հետեւեալն էր: Քաշուած ձաւարը կը լեցնէր վէրքիս վրայ, երբ ձաւարը ուռէր, անիկա կը պարպէր, չորը կը լեցնէր: Այսպէս բուժուեցայ:

Մուրալով գիւղէ գիւղ, յաճախ անօթի, անցայ վէնի ըսուած գիւղը:

Օր մը, ծառին տակ թութ կը հաւաքէի, Չնդուշի կողմէն ութը տասը ջորիներով բեռցուած կարաւան մը կուգար, գիւղին մօտիկ, ջորիէն վար ձգեցին պառաւ կին մը: Կինը կուլար, կ'աղաչէր. «Ի սէր Աստուծոյ, ինծի ինչո՞ւ այս լերան գլուխը ձգեցիք, հետերնիդ տարէք»: Չարագործները հեռացան: Սիրտս չդի՞ցաւ,

կամաց, կամաց մօտեցայ հարցուցի. «Ի՞նչ աշղ էս, ո՞ւր կէ կուգաս, ո՞ւր կ'երթայիք եւ ինչ՞ուք եզի հոս ձգեցին»։ Խեղճը լալով ըսաւ, «Հայ եմ, այդ ջորեպանները Ձնգուչէն Խարբերդ ապրանք կը տանին, հետերնին եղող կինն ալ հարսս է։ Մեղի խաբեցին թէ «եկէք Խարբերդ տանինք ձեզի, հոն շատ Հայ կայ» ու բերին հոս ձգեցին։ Հարսս ո՛ւր կը տանին, չեմ գիտեր։ Մեր բոլոր ունեցածը քովերնին մնաց»։

Ձորէին վար նետած ատեն, մէջքը ցաւցուցած էր եւ տեղէն չէր կրնար շարժիլ։ Կ'ուլար ու կ'անիծէր։ Ես ալ ցաւերս պատմեցի իրեն։

— Ախ, դո՞ւն ալ դժբախտ հայ ազգի դաւակն ես, ըսաւ ու լացաւ։ Քիչ մը ուտելիք, թուրթ ու ջուր բերի կերաւ, խմեց ու օրհնեց զիս։ Ձէր ուզեր որ մէկ վայրկեան հեռանամ քովէն։ Խոստացայ որ միշտ կուգամ եւ ինչ որ ուտելիք ճարեմ կէսը իրեն բերեմ։ Եւ այդպէս ալ ըրի։

Գիւղի Քուրտերը չարութիւն չըրին այդ խեղճ մայրիկին, ինծի ալ արգելք չեղան։ Միշտ այդպէս կը մնար ծառին տակ, գիշեր ու ցորեկ։

Ձնգուչէն «Փալ» նայող չէիս կին մը եկած էր քովի դրացիին տունը։ Քուրդ կիներ կ'երթային բախտերնին նայել տալու, զիս ալ տարին։ Այդ կինը իր աղօթքներուն մէջ էր. «Հոս դեռ Հայու հե՞օք կը դտնուի» ըսելով ոտքի ցատքեց, զիս պիտի բղկտէր։ Փախայ լեռ, ծառերուն վրայ ելայ, պահուըտեցայ, աղջիկ մը եկաւ իրենց տունը տարաւ։ Այդ չար կինը, դրացիին տունէն պօռաց. «Այդ աղջիկը դեռ հո՞տ է»։ Տնեցիք ստիպեցին որ երթամ ձեռքը, ոտքը պահեսեմ որ ինծի բան չընէ։ Համողեցին վերջապէս ու տարին։ Արդէն «խաւ» ինկած էր ու բերնէն ջուր կը վազէր, «հիննալլահ պօռալով, եւ ինքզինքը գետինները կը զարնէր։ Ձեռքին գաւազա-

նը շարժելով, սպառնադին կը հրամայէր իր ծառային որ ըսածը կատարէ :

Այդ սոսկալի վայրկեանին, զիս կը ստիպէին որ ծռիմ ոտքերուն տակը համբուրեմ : Կը դողայի ամբողջ մարմնովս որ եթէ ծռիմ, փայտով գլուխս պիտի զարնէ ու մեռցնէ : Բայց համբուրեցի ձեռքն ու ոտքը : Խոստացաւ որ բան պիտի չընէ, եթէ աչքին չերեւամ : Ուր որ ինք գտնուի, ես հոն պէտք չէ որ ըլլամ :

Օր մը, ուզեր է որ երթամ, ծառին տակ մնացող խեղճ մայրիկը մեռցնեմ ձեռքովս եւ անոր հագուստները հագնիմ : Գիշեր մը զիս տարին այդ խեղճ Հայուն մօտ, ըսին, «ՅՆ, ասկէ, քեզի ուրիշ տեղ մը տանինք, այդ չար կինը չի գայ քեզի մեռցնէ» : Կասկածեցայ այդ բարի կարծած մարդոցմէս, որ իրենք աչք ունէին անոր հագուստներուն :

Յաջորդ գիշերը, լուսունկի լուս գիշեր մըն էր, գացինք, հայր ու աղջիկ ըսին. «Քալէ, քեզի աւելի աղւոր տեղ մը կը տանինք» : Չորէն բարձրացնել կ'ուզէին, կինը կռահեց, գալ չէր ուզէր ու կը խնդրէր. «Ինձի մի մեռցնէք, հոս ձգեցէք, գիւղ չեմ գար» : Ես ալ միասին կուլայի, ձեռքէս բան չէր գար : Պառկեցուցին ու խոչոր քարեր վրան դիզեցին : Կինը կը պօռար, «Ալլա՛հ աչքընա» (ի սէր Աստուծոյ) եւ կ'աղօթէր, բայց անօգուտ էր :

Մայրիկին աղաղակներուն չդիմանալով ես ալ կուլայի : Յանդիմանեցին, «ի՞նչ կը սպասես, հայտէ, քար բեր» : Ուզէի կամ ոչ պիտի տանէի : Այսպէս, ողջ կնոջ վրայ քարեր դիզելով, հեռացանք :

Գիւղին կը մօտենայինք, տակաւ խեղճին ձայնը կը լսուէր : Դեռ այդ ձայնը չի հեռանար ականջէս :

Այդ գիւղէն ալ հեռացայ : Մարդ մը տիկով իւղ գնած էր «Յկուր, ըսաւ, այս տիկը շալկէ, մեր տունը

երթանք՝ քեզի աղջիկս կ'ընեմ : Իմ քովս հայ աղջիկ մըն ալ ունիմ , անիկա տունին գործերը կ'ընէ , դուն ալ պզտիկս կը խաղցնես» :

Կշտացուց զիս , տիկն ալ շալակս դրաւ ու մինչեւ կէսօր քալեցինք : Յոգնեցայ , կռնակիս բեռը շատ ծանրը էր , այնպիսի լեռներէ , ձորերէ կ'ելլէինք , կ'իջնէինք որ քալելու կարողութիւնս հատաւ : Դեռ շատ պիտի երթա՞նք , հարցուցի : «Քիչ մնաց , հոս է» , ըսելով , արեւմուտքին հազիւ գիւղ հասանք : Կենալու , շարժելու կարողութիւն չունէի : Հրամայեց որ ուտելիք տան :

Այդ կողմերը ինծի անծանօթ էին : Առտուն կանուխ եկաւ արթնցուց . «Ել որ երթանք , շուտով տեղերնիս հասնինք» : «Ձեր տունը ասիկա չէ՞» հարցուցի : Ոչ , ըսաւ : Ես յուսահատեցայ , տակաւին յոգնութիւնս առած չէի : Այդ օրն ալ մինչեւ գիշեր քալեցինք , հասանք մեծ քաղաք մը :

— Հոս է մեր տունը , այս տեղին Չնգուչ կ'ըսեն :

Տունը գացինք , ջուր տուին , լուացուեցայ : Քիչ մըն ալ կերակու բերին , բայց չկրցայ ուտել , ա՛յնքան յոգնած էի : Պառկեցայ :

Առտուն , ձեռքս տուին երկու խոշոր ջուրի ամաններ որ ջուր բերեմ ջորիներուն համար : Հարուստ էին , ունէին ութ ջորիներ : Մարդը Չնգուչէն ապրանք կը տանէր Խարբերդ ու կը բերէր : Անպիտանը իր խոստումը չկատարեց : Հայ աղջիկը որ կը պահէր , ինձմէ մեծ էր եւ պզտիկին կը նայէր , թէ տունին գործը մինչեւ իրիկուն եւ թէ անասուններուն համար ջուր կրել կուտային ինծի :

Օր մը երբ աղբիւրն էի , հայ կիներ տեսան խղճացին ու ըսին . «Դուն ո՞ր տեղէն այս շունին ձեռքը անցար : Եթէ կրնաս փախիր : Թէ ոչ՝ միշտ այդքան ծանր

աշխատանքով պիտի վնասուիս» : Համոզեցին որ փախ-
չիմ , բայց ո՞ր : Եկած տեղս դառնալու կը վախնայի :

Եւ արդէն ճամբան մոռցած էի :

Վերջապէս , օր մը այլեւս հողիս բերանս բերին ,
փախայ : Հազիւ լուսը բացուած էր , փողոցները մարդ
չկար , շուկայէն անցայ , քաղաքէն դուրս ելած էի , արե-
գակը ծագեց : Ադատ շունչ քաշեցի եւ քայլերս արագա-
ցուցի : Ճամբուս վրայ այգիներ կային , անօթի էի ,
մտայ այգին , ողկոյզ մը փրցուցի որ ուտեմ , ձայն մը
լսեցի որ ամբողջ ուժովը կը պօռար , «Չհեռանաս , կը
զարնեմ» :

Վախէս խաղողը նետեցի եւ ձայնին կողմը կը
փնտռէի : Լեռնէր վար մէկը կը վազէր , զէնքը ուսին :
Այգիին պահապանն է եղեր : Եկաւ բռնեց ու սպառնաց
թէ ինչո՞ւ փրցուցիր խաղողը : Վախէս արդէն պատաս-
խան չկրցայ տալ : Միայն կուլայի : Հասկցաւ որ դող
մը չեմ , անօթի եմ , սակայն միշտ կը գոռար սոսառ-
նալով , «Եթէ ինծի չյանձնուիս , քեզ կը մեռցնեմ» :

Մարսափէս կը դողայի : Աչքերս երկինք , Աստուծ-
մէ օգնութիւն կը խնդրէի : Բայց ոչ Աստուած օգնեց ,
ոչ մարդիկ...

Ա՛խ... սիրելի ընթերցողներ , երեւակայեցէք ի՞նչ
եղաւ կոկոն հասակս այդ ճիւղադ-դաղամին ձեռքերուն
մէջ...

Ա՛խ , այլեւս կարող չեմ շարունակելու...

Բայց պէտք է շարունակեմ : Թող գիտնան յաջորդ
սերունդները թէ ի՞նչ փշոտ , զարհուրելի ճամբաներէ
անցաւ հայ կինը եւ գիտնան սիրելի իրենց : Աղգն ու
Հայրենիքը եւ պաշտպանեն իրենց պատիւը :

Կ'անիծեմ այն Հայը որ կ'ուրանայ իր Ազգն ու Հայ-
րենիքը :

Այդ դաղան շունը , հրէշային կամքը կատարելէ

ետք, լաւ մը ծեծեց ու հեռացուց զիս :

Այլեւս երկինք, երկիր խաւարած էր ինձ համար : Այլեւս չէի գիտեր ուր երթամ : Շուքէս կը վախնայի, կը սարսուռայի՛, բայց շարունակեցի քալել : Ծամբան ամայի, ծառերով ու փուշերով, խորունկ ձորի մը մէջ, չէի գիտեր ո՞ւր փախչիմ : Կը վախնայի որ նման հրէշի մը կրնամ հանդիպիլ դարձեալ . . .

Թըչունի մը ճւճուցը, տերեւներուն խշրտուքը՝ կը սարսափեցնէր զիս : Զորը երկար էր, բայց անվտանգ դուրս եկայ, վերջապէս : Հեռուէն խօսակցութեան ձայներ լսեցի, վախէս՝ եզրպտացորենի արտի մը մէջ պահուեցայ : Գործաւորներ էին թէ ճամբորդներ, տեղէս չչարժեցայ : Միայն ուրախացայ որ ճամբաս կորսնցուցած չեմ : Հեռուէն անոնց կրնամ հետեւիլ : Անցան գացին : Մութը կոխեց, հասայ այն գիւղը ուր աղայիս հետ իջեւանած էինք Չնքուչ գացած ատեն : Գիւղին ծայրը, տունի մը պատին տակ պառկեցայ եւ առտու կանուխ ճամբաս շարունակեցի : Մինչեւ իրիկուն անօթի, ծարաւ, ճամբուս վրայ վայրի պտուղներու կը հանդիպէի, բայց վախէս չէի մօտենար :

Հասայ գիւղ մը ուր բարի քուրդ հարսին տունը կեցած էի : Գացի, կերակուր տուաւ եւ իրեն սենեակը պառկեցուց : Առտուն իրեն տան գործերը ըրի, գացի Զիլֆօ հայրիկը եւ Զէյօ մայրիկը տեսնելու, տունը չէին : Կալը իջայ, հոն էին : Զիս երբ տեսան, «Քանի շաբաթ է որ չես երեւնար, մենք վախցանք որ չէյիս կինը սպաննած է քեզի» :

Պատմեցի ամբողջ գլուխս եկածները : Ինծի հետ լացին եւ մայրերնին նեղացաւ ըսելով . «Քեզի չպատուիրեցի՞ որ այս երկու գիւղէն չհեռանաս» : Ըսի, «Այդ չար կնոջ պատճառով հեռացայ» :

— Անիկա ճէհէննէմ եղաւ զնաց ասկէ» :

Ուրախացայ եւ բնաւ չհեռացայ այդ գիւղէն: Օնպաչին ալ կրկին եկաւ այս գիւղը: Երբեմն կը կանչէր որ երթայի, իրենց տան գործերուն համար:

Օր մը ինծի ըսաւ, «Ֆատիմէ, ես մեր գիւղը պիտի երթամ, հետս կուգա՞ս, քեզի Խարբերդ տանիմ»: «Կուգամ» ըսի:

Աշնան վերջերն էր, ցուրտերը սկսած էին, կը պատրաստուէինք մեկնելու: Մուրալով հաւաքած էի ալիւր, ծեծած ոսպ, ձաւար եւ ուրիշ բաներ: Այս բարեսիրտ քուրտ ընտանիքը, փոխանակ ըսելու որ մենք քեզ խնամեցինք, ունեցածդ պէտք է որ մեզի ձգես, իրենց ձեռքով ծախեցին ամէնը, երեք մէճիտ դրամ եղաւ, գրպանս դրին եւ Օնպաչին հետ ճամբայ հանեցին «բարի ճանապարհ» մաղթելով: Լալով Օնպաչին խնդրեցին որ լաւ հոգ տանի ինծի եւ կէս ճամբան չձգէ: Լալով բաժնուեցայ իրենցմէ:

Ջորեպանները կ'աճապարէին որ ցուրտը չինկած տեղ հասնինք: Այդ օրը մինչեւ իրիկուն, հասանք գիւղ մը: Երկրորդ իրիկունը իջանք Խուլա, եւ մէկ օր ետքը անցանք Մէզիրէ: Ճամբան երբ Երթմնիկի տակէն կ'անցնէինք, սիրտս սկսաւ զարնել: Յիշեցի բոլոր ագգականներս եւ մեր անցուցած նախկին կեանքը: Մանաւանդ որ տեսայ մօրեղբօրս այգիներն ու պարտէզը, սիրտս լեցուեցաւ, լացի: Կ'ուզէի ջորիէն ցատկել ու երթալ գիւղը տեսնել թէ մօրեղբօրս տունէն ողջ մնացող կա՞յ: Բայց վախցայ որ մէկը չի տեսնեմ եւ Թուրքերը զիս մեռցնեն:

Ճիշտ այդ ատեն ալ մօրեղբօրս կլինը աղատուած, գիւղը կը բնակի եղեր: Իրենց գիւղացի քուրդ տղայ մը, մուրալս տեսած եւ պատմած է իրենց:

Մօրեղբօրս կլինը դրամ կը խոստանայ ու մարդ կը

ղրկէ որ զիս գտնեն: Բայց ի զուր: Խեղճ կինը յոյսը կը կտրէ, խորհելով թէ ով գիտէ անօթութենէ մեռաւ, զարկի՞ն, կամ այդ պղտիկ տարիքին՝ վայրենիներուն ձեռքէն ի՞նչ կը քաշէ:

Իջանք Մէգիրէ, ուր մնացինք հինգ օր: Կ'ուզէի փախչիլ, գիւղ երթալ, բայց վախցայ որ մարդ չեմ գտներ: Երկրորդ՝ գիտէի թէ Կիրակոս հօրեղբորս աղջիկը, Հոբիփսիմէն ողջ է եւ Մէգիրէ կը մնայ, բայց փողոցը չէի կրնար գտնել, մոռցեր էի: Սիրտ չունեցայ փախչելու, վախնալով որ մէջտեղը կը մնամ դարձեալ: Իսկ Օնպաշին տղան միշտ հետս կը ղրկէր, կասկածելով որ կը փախչիմ: Հացագործին խանութն էինք, կիներ հայերէն կը խօսէին, ինծի դժուար էր հասկնալ, բոլորովին մոռցած էի մայրենի լեզուս: Չհամարձակեցայ հարցնել թէ Հա՞յ էք դուք:

Հինգ օր ետքը, ճամբայ ելանք Խուլալանքի կողմը: Գիւղ մը հասանք, ամբողջ օր անձրեւին տակ քալելով: Հետեւեալ օրը ամբողջ նոյնպէս քալելով տեղ հասանք: Խանութիս ծնողքը դիմաւորելու եկած էին, իջանք իրենց տունը: Վրայ-գլուխ չորցնելէ վերջ, ճաշեցինք ու մեզի առաջնորդեցին աղայենցս տունը: Երկու ամիս վերջ, աղաս դարձեալ ղրկեցին ուրիշ տեղ, բայց առանց ընտանիքի:

Չարսիրտ խանութս, օգտուելով ամուսինին բացակայութենէն, գէշ կը վարուէր ինծի հետ: Անօթի կը ձգէր եւ հազար նեղութիւն կուտար:

Գարունը կը մօտենար: Լեռներու վրայ միայն, տեղ տեղ ձիւն կ'երեւէր: Խանութիս մայրը եւ բարի դրացիներ կը համոզէին որ փախչիմ: Բայց կը վախնայի, ինչու որ այդ կողմերուն անծանօթ էի:

Խանութիս ականջը հասած էր որ ինծի խրատ տըլուղներ կան, վրայէս հանեց նոր հագուստ, կօշիկ եւ

Հիներս հազցուց : Բայց իմ աչքիս հին, նոր միեւնոյն էր : Միայն կը մտածէի որ, փախչելէս վերջ ո՞ր պիտի երթամ, կամ վերջս ի՞նչ պիտի ըլլայ :

Յետոյ յիշեցի, Քուրդերուն մէջ Օնպաշիին ետեւէս իյնալը, վախ եկաւ վրաս : Եւ սակայն որոշեցի հեռանալ : Գիշեր մը, այս կինը եկաւ արթնցուց. «Ցատիմէ, ել նայէ դուրսը, երկինքը պա՞րզ է թէ ամպոտ» :

Իմ ուզածս ալ այդ էր : Ելայ երկինքը դիտեցի, տակաւին լուր պիտի տամ : Փախայ, լեռ բարձրացայ : Տակաւին մութ էր, կը վախնայի առաջ երթալ : Խոշոր քարի մը տակ քնացեր եմ : Յանկարծ աչքս բացի, արդէն արեւը ծագած էր եւ լերան կուրծքին տեղ տեղ ձին կ'երեւէր : Ինքզինքս արեգակին դէմ տաքցուցի եւ իջայ ձոր մը : Բանջարեղէններուն մէջ ճանչցածներս հաւաքեցի, կերայ բայց ճամբայ չկար : Լեռներու վըրայէն ու ձորերու մէջէն կը քայլէի :

Հեռուէն նշմարեցի ճամբորդներ, Քուրտեր էին, հետեւեցայ անոնց, հասայ գիւղ մը : Տունէ մը հաց խնդրեցի, աղաչեցի, «խանում, աղային ու զաւակներուդ գլխուն, պատառ մը հաց տուր, անօթութենէ կը մեռնիմ» : Հաց չունիմ ըսաւ ու բերաւ ձաւար :

«Ատրկա ո՞ր եփեմ, խանում, ըսի : Պատառ մը չոր հաց, եթէ ունիս, ի սէր Աստուծոյ» :

Այս կինը բաներ մը մըմուսաց, չհասկցայ : Բայց կըռահեցի որ Հայ է : Սկսայ աւելի թախանձիլ. — Խանում խանում, պէն տէ սիզին տինինիզտէնիմ, պիր փարչա էքմէք (ես ալ ձեր կրօնքէն եմ, կտոր մը հաց) :

«Չկայ, չկայ» ըսելով, ինծի ներսը ձգեց, դուրս ելաւ : Յոյսս կտրած, ես ալ ետեւէն ելայ :

Փողոցին մէջ, պզտիկներ, ձեռքերը հաց, կը խաղային : Վիզս ուլունքներ ունէի : Մօտեցայ ու համոզեցի պզտիկները, որ եթէ հաց տաք, ուլունքներս՝ ձեզի կու-

տամ: Հացը կերայ, քիչ մը սրտիս ուժ տուաւ: Օրը իրիկուն եղաւ, կը խորհէի ո՞ւր կրնամ պառկիլ գիշերը: Գացի դուռ մը զարկի, պառկելու տեղ եւ հաց խնդրելու համար: Կին մը դուռը բացաւ ու զիս ճանչցաւ.

— Աղջիկ, դուն Օնպաշին քովի աղջիկը չե՞ս:

Սարսուռ մը եկաւ վրաս: Քանի որ կինը կը ճանչնար, չէի կրնար ստել:

Հարցուց. «Դո՞ւրս ըրաւ թէ փախար:» Ստիպուած ստեցի. «Այո, դուրս ըրաւ»: Կը վախնայի որ լուր ղրկէ թէ աղջիկը հոս կը գտնուի:

— Դուն Խարբերգի գիւղերէն Մորենիկցի չէի՞ր:

Դարձեալ սարսուացի որ տեղն ու տեղը գիտէր:

— Ձեր գիւղացի Մարգրիտ անուն կին մը կայ այս տեղ, երկու մանչ, աղջիկ մը ունի. աղջիկը Փառանձեմ, մանչերը՝ Երեմիա եւ Երուանդ: Ձե՞ս ճանչնար:

Շատ մտաբերեցի բայց, «Ձեմ ճանչնար» ըսի:

Այդ առտուայ տունն էր ուր՝ կինը քիչ մը ձաւար տալ ուզեց: Թուրք կինը ըսաւ. «Մարգրիտ հանրմ, այս աղջիկը ձեր գիւղէն է, չե՞ս ճանչնար:

Կինը հարցուփորձեց թէ որո՞ւ զաւակն ես:

— Ընուպենց հաճի Սրապին թողն եմ: Մեծ մայրիկիս անունը Մարթա, Մայրիկինս՝ Մարիամ, Հայրս ալ՝ Մանուկ, որ Ամերիկա կը գտնուի: Եղբայր մը եւ քոյր մըն էինք: Եղբօրս անունը Սարգիս: Իմ անունս Գեղանուչ է:

Կինը շատ մտածեց, բայց չեմ ճանչնար ըսաւ:

— Մեծ մայրիկս ու մայրս Երթմնիկցի են ըսի, դարձեալ չյիշեց:

Այդ վայրկեանին իր աղջիկը, Փառանձեմը եկաւ, որ ուրիշի տուն կը մնար: Մայրը կրկնեց իմ խօսքերս ու աղջիկը խելագարի նման պօռաց. «Մայրիկ, մայրիկ

Երթմնիկցի Մարթա քեռկինին թոռն է»։ Ես զիրենք դեռ ճանչցած չէի։ Փարիզը, որ հարս տարուած էր այն իրարանցումին, քոյը մէկ կողմ գնաց ու երեսը բաց-ուեցաւ։ Ես ալ խելագարի պէս, «Փառանձեմ, քոյրիկ» ըսի, ու լալով վիզը փաթթուեցայ։

Մէկ կողմէն կուլայինք, միւս կողմէ կը խնդայինք։ Մարգրիտ պաճին որ մեզ կը դիտէր, ձեռքերովը գլուխին զարնելով ըսաւ. «Ախ, աչքերս կուրանար, առաւօտուն աղջիկը եկաւ, պատառ մը հաց չտուի։»

Բաւական հանգստացանք։ Խեղճ կինը, իբրեւ իրիկուայ ճաշ, մէյ մէկ հատ սաճի հաց տուաւ ու մէյ մէկ բուռ ալ ձմերուկի կուտ լեցուց հացերուս վրայ։ Տունին մէջ կար իր տղան Երուանդը, ինքը եւ թուրք ամուսինէն աղջիկ մը։ Շատ խեղճուկրակ էին։ Հաց չտալու իրաւունք ունէր։

Գիշերը ամէնքս մէկ մտանք քուրսիին աչքը, պառկեցանք։ Անկողին անգամ չունէին։ Միայն կեանքերսին ազատուած էր, այդքան։

Առաւօտուն խեղճ կինը, տղան՝ Երուանդը արթընցուց ու ղրկեց պարտէզները որ քիչ մը փայտ հաւաքէ։ Ինձի համար ապուր եփեց, կշտացուց եւ ըսաւ. «Աղջիկս, Խարբերդի մէջ Ամերիկեան որբանոց բացուած է, իմ մեծ աղջիկս՝ Մարիամն ալ հոն Քոյրիկ է։ Գնա ըսէ իրեն որ մայրիկդ ղրկեց, անիկա, անմիջապէս ներս առնել կուտայ քեզի»։ Յետոյ ճամբաներն ալ բացատրեց։ «Եթէ բարի մարդու հա նդիպիս, անոնք ալ կը բացատրեն։ Առաջքը ջուր մը կուզայ, այդ ջուրէն չես կրնար անցնիլ, նստէ հոն եւ անցնողներուն աղաչէ, քեզի կ'անցընեն։ Անկէ վերջ բաւական կը քալես ու կը հասնիս Խուլուվանք։ Արդէն այդ գիւղէն Մէզիրէն եւ

քաղաքը կ'երեւի» :

Ու զիս համբուրելով, աղօթեց, օրհնեց ու ճամբուղրաւ :

Հազիւ թէ իրենցմէ հեռացած էի, մէկէն սարսուռ մը ունեցայ եւ ամբողջ մարմնով դողացի : Քայլ առնել չկրցայ, ինկայ գետին, մնացի : Բաւական վերջ, ուշքի գալով, կամաց ելայ, արեւոտ պատի մը տակ գացի, մինչեւ իրիկուն պառկեցայ : Թուրք կին մը մօտեցաւ ու «Հա՞յ ես, ինձի աղջիկ չե՞ս ըլլար» ըսաւ :

«Ես Հայ չեմ, ըսի, էրզրումի Քուրտերէն եմ» :

«Կէպէրէսի, նէ տէ կիւզէլ» (սատկելիք, ինչ ալ աղուոր է) ըսելով զիս տարաւ իր տունը եւ այդ գիշեր թոնիրին վերեւ լաթ մը փռեց, պառկեցուց :

Առտուն արեւը դեռ նոր կը ծագէր, ճամբայ ելայ : Երկու քուրտ այրեր եւ կին մը կ'անցնէին, վախէս ետ քաշուեցայ : Անոնք բաւական յառաջացան, հետեւեցայ իրենց եւ հասայ լերան մը ստորոտը ուր ճամբան կը դառնար լերան միւս երեսը : Այդտեղ, «Գեղանուչ, Գեղանուչ» ձայնի մը արձագանգը հասաւ սկոնջիս : Վախէս, շուարած, շուրջս կը գիտէի : Լեռնէն վար հարս մը կը վագէր, «Գեղանուչ, Գեղանուչ» կրկնելով Յուզմունքէս լացի, խորհելով որ հօրաքոյրներէ՞ս մէկն է, կամ մեծ մայրի՞կս է որ այս տեղերը կը գտնուի :

Կանգնեցայ, Փարիզ քոյրիկն էր : Կեսուրին հետ լեռ եկած էր, փուչ հաւաքելու : Ան ալ իր մօրը նման ճամբաները բացատրեց, համբուրեց ու սպասեց մինչեւ որ ես լերան միւս երեսը դարձայ :

Հասայ գիւղը որ բացատրած էին : Դրան մը առջեւ կին մը կանգնած կուլար : Պատճառը հարցուցի : «Ամուսինս մեռաւ : Հա՞յ ես» : Ըսի, «Այո, ամուսինդ ալ Հա՞յ էր» : «Ոչ, թուրք էր» ըսաւ :

«Դեռ այդ շուներուն համար կուլա՞ս: Մենք ամբողջ փճացանք, մեզ փճացնողները անոնք չէի՞ն:»

Կինը ըսաւ. «Զաւակս, ճիշտ է, բայց անոր շուքին տակ կը շքաւորուէի: Ասկէ վերջ, ով գիտէ, միւսներուն ձեռքը ինչեր պիտի քաշեմ»:

Ինքն ալ ինձմով հետաքրքրուեցաւ: Ըսի. «Թուրքին քովէն փախայ, Խարբերդ կ'երթամ»:

— Սպասէ, միասին երթանք, երկու օր վերջը:

Յօժարեցայ, որովհետեւ ճամբաները չէի գիտեր: Պտտեցայ գիւղը, բաւական ալիւր հաւաքեցի, կնոջը տուի, հաց պատրաստեց, ճամբու համար

Այն օրը որ ճամբայ պիտի ելլէինք, սկսայ դողցընել: Հաց, ուտելիք չէր ուզեր սիրտս, միայն քաղցրեղէն: Այս կինը ունէր երկու պարկ թուրթ, կուշտ կերայ: Առաւօտ ճամբայ ելանք: Թուրք կին մըն ալ ընկերացաւ մեզի: Կէսօրին հասանք ջուրին քով: Հովիւ մը ոչխարներ կ'արածէր, երկու կիները խնդրեցին որ մեզի ջուրէն անցնէ: Հովիւը մեզի անցուց: Սկսանք քայլել. ես շատ յոգնեցայ, կը մնայի ետեւ: Կինը խոշոր ծրար մը տուած էր շալակս, ինքն ալ իր պզտիկը շալկած էր:

Իրիկուան դէմ հասանք Խուլավանք գիւղը: Ունէին ծանօթ հայ ընտանիք մը, հոն քիչ մը հանգստացանք: Երբ սկսան հայերէն խօսիլ, ու մանաւանդ երբոր կինը ծռեցաւ թոնիրէն կերակուր հանելու, յիշեցի մեր տունը, մեծ մայրիկս ու սիրտս վեր ելաւ, լացի: Այդ մեծ մայրիկը, կերակուրին ամանը վար դրաւ, հարցուց. «Ինչո՞ւ կուլայ այդ պզտիկը»:

«Ո՞վ գիտէ, թերեւս իր ծնողքը յիշեց» ըսին եւ ծեր կինն ալ սկսաւ արտասուել, եկաւ համբուրեց ու հանդարտեցուց սիրտս եւ կերակուր դրաւ որ ուտենք:

Ատկէ ալ ելանք եւ շարունակեցինք մեր ճամբան : Գիւղէն բաւական հեռու, կը տեսնուէր Մէզիբէն եւ քաղաքը : Ուրախացայ, բայց ա՛յնքան յոգնած եւ տըկար՝ մէկ քայլ անգամ փոխել չէի ուզեր : Հոգիս բերանըս հասանք Մէզիբէ : Այդտեղ խորհեցայ, քաղաք չերթալ եւ մնալ, բայց ո՞ւր : Շարունակեցի քալել իրենց հետ, որոնք ուղղակի քաղաք, որբանոցը կ'երթային : Քաղաքին դռովերը կ'ելլէինք, կռնակիս բեռը առաւ եւ ուտելու քիչ մը թութ եւ պաստեղ տուաւ : Հասանք որբանոցը : Ծանօթներուն մէկուն միջոցաւ. «Մարիամ Աւագեանը կանչեցէք, ըսաւ, այս աղջիկը անոր պիտի յանձնեմ :»

Անմիջապէս եկաւ Մարիամը, վիզիս փաթթուեցաւ : Երկուքս ալ շատ լացինք :

Ճիշտ այդ շրջանին որբ մը մեռած էր, զիս առանց միսիօնարուհիին ներկայացնելու, տարաւ, ցնցոտինները վրայէս հանեց, լուաց, մաքրեց ու մեռած որբին տեղը անցուց :

Այնտեղ ծանր կերպով հիւանդացայ : Ամերիկացի կնոջ ահանջը հասաւ քոյրիկին ըրածը, բարկացաւ թէ «ինչո՞ւ ինծի լուր չտուած, ընդուներ ես : Եւ թէ այսքան ծանր հիւանդ մը հոս պահեր եւ հիւանդանոց չես զրկեր, որ միւս որբե՞րն ալ վարակուին» :

Մարիամ Աւագեան, իսկական քոյր եղաւ ինծի համար : Հոգևով, սրտով դէմ կեցաւ. «այս պզտիկը փոխանցիկ հիւանդութիւն չունի : Անիկա լեռներ, ձորեր երեք տարի թափառելէ վերջ, անօթի ծարաւ, չոր քարերուն վրայ՝ հիմա անկողին տեսաւ, անոր համար հիւանդացաւ :»

Զատիկի օրեր էին, որբերուն չամիչ բաժնեցին : Ես ալ քիչիկ մը աչքս բացած էի, քոյրիկը թէ իր բա-

ժինը եւ թէ որբերուն բաժինէն բաւական կերցուց : Ուտելիքիս հոգ տանելոով առողջացուց , առանց հիւանդանոց ղրկելու :

Այս , ես ո՛րքան երախտապարտ եմ իրեն եւ իր գերդաստանին :

Այդ ատենները , Ամերիկայէն հայրիկս նամակ մը գրած էր . «Զաւակս , իմացայ որ դուն եւ եղբայրդ որբանոց կը գտնուիք , մայրիկդ ալ Թուրք առած է եղեր : Ձեզի հինգ անգլիական ոսկի ղրկեցի : Եղբօրդ լաւ հոգ տար եւ այդ դրամէն մայրիկիդ ալ բաժին հանէ : Զըլլայ , չըլլայ որ ըսես թէ մայրդ Թուրք առած է ու երեսը չնայիս : Ան ալ իր կամքովը չէ , գաւակս , բռնութեամբ բան մըն է : Քեզ տեսնեմ , միշտ քաջալերէ , սիրտ տուր անոր : Տեսնենք թէ վերջերնիս ի՞նչ կ'ըլլայ :»

Իմ գալէս վերջ Մայրամ քոյրիկը թերթի միջոցաւ թէ նամակով , չեմ գիտեր , հայրիկիս իմացուցած է որ «աղջիկդ գտնուեցաւ եւ որբանոցը քովս կը մնայ» :

Անուշիկ հայրիկս այդ լուրը առածին պէս , ճամբու դրամ կը ղրկէ եւ կ'ըսէ Մստըր Րիքսին . «Աղջիկս հոս բեր , ես անոր կ'չիռքովը դրամ կը վճարեմ :» Եւ աֆիտէֆիթս ալ կը ղրկէ :

Մստըր Րիքսը ինծի տեղեկացուց որ «Հայրիկդ դրամ ղրկած է , ես քեզի Ամերիկա պիտի տանիմ» : Շատ ուրախացայ :

Երբ Մարիամ Աւագեանը կը գրէ թէ աղջիկդ գտնուեցաւ եւ հոս որբանոցն է , այն ատեն հայրիկս կ'անդրադառնայ որ խաբուած է իր սիրելի եւ անկեղծ բարեկամներէն :

Անոնք գրած են եղեր որ «գաւակներդ որբանոցն են , կ'ինդ ալ Թուրքի կ'ին է» , որպէսզի դրամ քաշեն խեղճ հայրիկէս :

Վերջապէս, ասոնք իմացան որ Մստըր Րիքսին ալ դրամ եկած է, եւ կարծելով որ ինծի պիտի տայ, եկան համոզելու թէ «Որբերուն պիտի կերցնէ այդ դրամը, եկուր քովերնիս, գոնէ դուն կ'ուտես»: Ես ալ պզտիկ եւ անփորձ, համոզուեցայ: Երբ Մստըր Րիքսը իմացաւ, սոսկալի բարկացաւ եւ յանդիմանեց զիս. «Թուրքին ծեօծը, փիլան ու քիւֆթէն կարօտցեր ես: Եթէ երթաս դրամդ ետ պիտի ղրկեմ ու քեզի ալ մերկ դուրս պիտի հանեմ» ըսաւ:

Պզտիկ էի եւ կարօտ ծննդավայրիս: Կը կարծէի թէ գիւղը երթալով պիտի գտնեմ ծնողներս ու պիտի ունենամ նախկին կեանքս: Համոզուեցայ եւ տարին: Զօրաւոր համոզողներ էին: Մստըր Րիքսն ալ ինչպէս որ ըսած էր, ըրաւ:

Զեմ ուզեր ասոնց անունը տալ: Միայն խիղճերնին թող տանջէ զիրենք մինչեւ մահ, որ գիտնալով անցուցած չարչարալից կեանքս, ատկէց վերջն ալ դժբախտութեանս պատճառ դարձան: Միւս կողմէն ալ՝ հայրիկս, իր մէկ հատիկ սիրասուն զաւակին կարօտով մեռաւ Ամերիկայի մէջ:

Գիւղ տարին զիս, վերջապէս, եւ իմ անունովս եկած հինգ ոսկին գանձեցին, իմ ստորագրելէս վերջ:

Տակաւին քովերնին էի, հայրիկէն նամակ մը ըստացայ որ իմ գտնուելէս առաջ գրած է եղեր, բայց իմ ձեռքս նոր անցաւ: Սոսկալի նեղացած գրած էր թէ «Ինչո՞ւ նամակներուս պատասխան չէք տար: Ես այլեւս ոչ ընտանիք ունիմ եւ ոչ ալ զաւակ»:

Նամակը փոստը ձգելէն վերջ կ'ըսէ. «անգամ մըն ալ նայիմ տուփը, յոյսս կտրեմ»: Կը տեսնէ որ նամակ մը կայ, կը կարդայ հետեւեալը. —

« Սիրելի հայրիկս ,

Մայրիկս ու եղբայրս աչքիս առջեւ սպաննեցին այսինչ տեղը եւայլն» : Խեղճ հայրիկս յուզումէն չի գիտնար ինչ ընելը : Ու ինքնիրեն կ'ըսէ . « Հիմա բոլովին հաւատացի որ խարուած եմ եղեր եւ անխղճօրէն խաբած են զիս «անկեղծ բարեկամները» : »

Այս մարդիկը տեսնելով որ ամէն գաղտնիք մէջտեղ պիտի ելլէ , սկսան զանազան պատճառաբանութիւններով ճամբայ ցոյց տալ ինծի , թէ՛ «մենք կարող չենք պահելու , ուր որ ուզես , հոն գնա» :

Յուսահատական էր վիճակս , այդ փոքրիկ տարիքիս մէջ : Խորհեցայ երթալ Մէգիրէ եւ հիւանդանոցէն գործ խնդրել : Եւ գացի դուռը նստեցայ : Կէսօրը կ'անցնէր : Տեսայ կին մը եւ այր մը որ աւանակի նըստած , հիւանդանոց կուզան : Կինը զիս ճանչցաւ հարց ու փորձ ընելով : Զիս էրթմընիկ տարին եւ յանձնեցին Թամամին , որ մօրեղբօրս կինն էր :

Իր գաւակները , Սարգիսն ու Սաթենիկը քովն էին : Իսկ Պաղտասարը Փրանսական որբանոց դրած էր : Կեցայ քովը : Մօրեղբօրս կինն ու Սարգիսը Թուրքերուն կ'աշխատէին , պատառ մը հացի համար : Ես ու Սաթենիկն ալ , առուընէ մինչեւ իրիկուն , ծառերուն տակ , թուփ կը հաւաքէինք որ մօրեղբօրս կինը Մէգիրէ տանի ծախելու :

Եօթ-ութ ամիս մնացի այդ գիւղը : Հոն՝ Պէպէք աղային ընտանիքը կար . կինը Հայ եւ թէ մեր գիւղացի էր : Ունէր հայ ծառայ մը : Այս Թուրքը մեզի եկաւ եւ մօրեղբօր կնոջ ըսաւ որ «Իմ ծառայ այս աղջկան սիրտ ունի , աղջիկը մեզի պիտի տաս , եթէ ոչ կը փախցընենք : »

Մօրեղբօրս կինը վրդովեցաւ , շուարեցաւ , ի՞նչ ընէ : Աղաչանքով մը ըսաւ թէ «Այս աղջիկը իմս չէ ,



Տէր-Զօրի Եկեղեցին

Հայր ունի Ամերիկա: Նրկրորդ՝ դեռ շատ պզտիկ է»:

Բայց վախցաւ որ, օր մը գլխուս փորձանք կը բերեն, որովհետեւ Թուրքին առւնն ալ մեզի շատ մօտիկ էր: Գիշերը մինչեւ լոյս քար կը նետէին: Ես շատ կը վախնայի:

Աչնան վերջերն էր, ըսի որ ես այլեւս հոս չեմ կենար: Խեղճ կինը լացաւ, տխրեցաւ. «Աստուած իմ»

ո՞ւր տանիմ, որո՞ւ թողում», խորհելով:

«Մի լար, ըսի, միայն քաղաք տար զիս, հարկաւ ես կերպով մը որբանոց կը մտնեմ:»

Ուեղճ մօրեղբօրս կինը չէր ուզեր հեռացնել քովէն, բայց իմ ստիպումներուս վրայ քաղաք տարաւ մինչեւ որբանոցի դրան առջեւ:

«Դուն հեռացիր» ըսի, բայց սպասեց: «Եթէ ներս չառնեն, ո՞ւր պիտի մնաս գիշերը»:

«Ուեղճ կին, ըսի իրեն, երեք տարի ո՞ւր մնացի, գիշերները: Մէկ երկու օր ալ հոս կը մնամ: Հարկաւ Մստըր Բիքսի խղճին կը դպի ու կրկին ներս կ'առնէ»:

Աչքը ետեւ մնալով, վերջապէս հեռացաւ: Եւ ես, ութ օր պատերուն տակ մնացի, հօրս սիրելի եւ անկեղծ բարեկամներուն շնորհիւ:

Անկարելի եղաւ որ Մստըր Բիքսը ներս առնէ:

Այդտեղ, որբանոցին տնօրէնը, Գրիգոր թէ Գէորգ լաւ չեմ յիշեր, ըսաւ. «Աղջիկս, ասոնց Ամերիկացի կ'ըսեն, անգամ մը որ նօ ըսին, նօ կ'ըլլայ: Այդպէս պատերուն տակ մնալով ի՞նչ պիտի ըլլաս: Յուրտերը սկսան, կը սառիս այստեղ: Եկուր քեզի նամակ մը գրեմ, տար Մէզիրէի առաջնորդարանը, Պր. Արամին տուր: Անիկա Սրբազանին կը խօսի ու քեզի որբանոց առնել կուտայ»:

Իջայ Մէզիրէ, ուր որ խոշոր չէնք մը կը տեսնէի, կը կարծէի թէ Առաջնորդարանն է: Կը մտնէի, կ'ելլէի: Օրը իրիկուն եղաւ, երբ դարձեալ չէնք մը վեր կ'ելլէի, ըսին որ հոս պանքան է:

Փողոցը կանգնած, յուսահատ լացի: Երկու դպրոցական աղջիկներ տուն կը դառնային, հարցուցին. «Ինչո՞ւ կուլաս»: «Առաջնորդարանը կը փնտռեմ, ըսի, չեմ կրնար գտնել:»

Զիս տարին առաջնորդարան եւ նամակը յանձնեցին ու հեռացան: Երկար, շատ երկար սպասեցի, պատասխան տուող մը չեղաւ: Միայն պնակ մը կերակուր տուին, պարտէզէն դուրս հանեցին եւ դռները գոցեցին առանց բան մը ըսելու:

Ի՞նչ գրուած էր նամակին մէջ եւ թէ ինչո՞ւ բան մը չըսին, չգիտցայ: Այդ գիշեր փողոցը, պատին տակ պառկեցայ:

Առաւօտը, երբ դուռը բացին, տեսան որ պառկած եմ, վրաս ալ ձիւն դիզուած է: Դռնապանը զիս պարտէզ տարաւ եւ քիչ մը տաք բան բերաւ որ խմեմ: Դարձեալ մինչեւ իրիկուն սպասեցի պարտէզը, եւ ոչ մէկ պատասխան:

Իրիկունը, զիս իր տունը տարաւ: Մայր մը եւ ընտանիք ունէր: Պատուիրեց որ ինծի ուտելիք տան եւ թոնիրին վերեւ պառկեցուց: Առաւօտեան միասին տարաւ առաջնորդարան, նստեցուց դրան առջեւ:

Այսպէս տեւեց շաբաթ մը: Այդ օրերը առաջնորդարանին առջեւ լեցուեցան տասը — քսան որբուկներ եւս: Սրբազանը դուրս ելլելով բարկացաւ ու ամէնքը վռնտեց դրան առջեւէն: Ես վախցայ, կը դողայի որ արդեօք ինծի ի՞նչ պիտի ըսէ: Ամէնը փախան գացին: Միայն Բալուցի Մկրտիչ անունով որբը չգնաց: Անոր ալ բարկանալով ըսաւ. «Քեզի կ'ըսեմ, տղայ, ինչո՞ւ չես հեռանար ասկէ»:

— Տեղ չունիմ, հայրիկ, ո՞ւր երթամ, ըսաւ:

— Մինչեւ հիմա ուր որ կ'երթայիր, առ սա երկու զրուչը, հաց առ կեր ու վաղը եկուր, կրկնեց բարկացած:

Ու վերջը յանգիմանութեամբ մը վեր կանչեց եւ սկսաւ խստիւ հարցաքննել թէ՛ մինչեւ հիմա ուր էի եւ ով ունիմ:

Ստիպուած ստեցի թէ մէկը չունիմ : Այնքան խիստ կը խօսէր որ վախէս կը դողայի : «Քուրտերուն մէջէն եկայ, ըսի, հօրեղբայր մը ունէի գիւղը, ան ալ զինուոր տարին, ես մէջտեղ մնացի : Կրկին թուրքերուն ձեռքը չանցնելու համար հոս եկա, որբանոց մտնելու համար :»

Վերջապէս հայկական որբանոցը մտայ : Հոն հանդիպեցայ մեր գիւղացի Խոսրովուհի անուն աղջկան մը :

Լուրը տարածուելով հասած էր մինչեւ գիւղ, թէ Մորենիկցի Գեղանուշ անունով աղջիկ մը գտնուած է, եւ այստեղ որբանոցը կը մնայ :

Ամէնուն պատուիրեցի որ բան չխօսին, եւ ոչ մէկ ծանօթ թող գայ զիս տեսնելու, որովհետեւ արդէն դժուարաւ ընդունեցին, վերջը վիճակս գէշ կ'ըլլայ, արդէն այս վերջին չարչարանքիս պատճառը «անկեղծ բարեկամ»ներս եղան : Այդ շէնքին մէջ գտնուող կիները, բոլորն ալ թուրքերուն ձեռքէն փախած էին : Ինծի հետ նոյն օրը, ընդունած էին Չապէլ անուն աղջիկ մը, որ հանրատունէ փախցուցած բերած էին : Թուրքերը զինուած, գրեթէ ամէն գիշեր, շէնքը կը քարկոծէին, «Մեր կիները կը պահանջենք» պոռալով :

Երկու շաբթուայ գացած էին, Սրբազանը այցելութեան եկաւ : Ամէնքս ալ շէնքին պարտէզն էինք, անմիջապէս Չապէլին կողմը գնաց, շոյելով փայփայեց գլուխը, որպէսզի չփախչի : Նոյն գիշերը արդէն փախցուցին :

Ես ալ պատին տակը կեցած էի, դարձաւ Սրբազանը ու երբ զիս տեսաւ, հարցուց Ազնիւ մայրիկին թէ «այս աղջիկը ո՞վ է եւ թէ ո՞վ հոս բերաւ :»

Խեղճ կինը շուարած. «Սրբազան, ըսաւ, դուք զրկած էիք, որբի մը հետ» :

«Ոչ, ոչ, պոռաց, ես այդ աղջիկը ոչ տեսած եմ ;

ոչ ալ զըրկած եմ: Շուտ, զուրս հանեցէք»:

Ու ես լացի իմ անբախտութեանս վրայ:

Ազնիւ մայրիկը, շատ բարի կին մը, բարեխօսեց ըսելով. «Հայրիկ, շատ բարի պզտիկ մըն է. տանք՝ կ'ուտէ. չտանք՝ բնաւ չ'ուզեր: Եւ շատ ալ աշխատա՝ «էր է»:

«Լաւ, լաւ թող մնայ ուրեմն, ըսաւ: Եթէ անհնազանդութիւն ընէ, ինծի լուր տուէք, որ վճնտեմ»:

Միշտ զիս կը փորձէ եղեր: Գաղտնի, մայրիկին ըսած է որ. «այդ պզտիկը հոս մի ձգեր, վարը դպրոցականներուն մէջ զրկէ: Ասոնք ամէնքը կ'իներ են: Մանաւանդ որ Թուրքերը միշտ կը պաշարեն շէնքը, լաւ չէ աղջկան հոս մնալը:»

Ու զիս որբանոցին դպրոցի բաժինը փոխադրեցին:

Հոս էր որ, գիշեր ցերեկ պատմել կուտային ապրած կեանքս, մայրիկներ, քոյրիկներ եւ վարժուհիներ, մանաւանդ Լուսիա վարժուհիս:

Երբ յուզումէս սիրտս կը պոռթկար, սաստիկ կուլայի, եւ չէի ուզեր պատմել: Լուսիա վարժուհիս իր թաշկինակով կը սրբէր աչքերուս արցունքը, եւ ծունկերուն վրայ առնելով կը սիրէր, կը գզուէր, համոզելով որ շարունակեմ պատմութիւնս, որովհետեւ շատ կը հետաքրքրուէր մեր ցաւերով:

Ահա այս պատճառով էր միտքս մնաց այս ամբողջ պատմութիւնը, սիրելի ընթերցողներ:

Ու հոս կը վերջանայ կենսագրութիւնս:

Որբանոցին միջոցաւ եկայ Հալէպ: Երկու տարի յետոյ անցայ Ֆրանսա:

Ֆրանսայի մէջ ամուսնացայ, Բուզէն (Արտէշ) կոչուած գիւղին մէջ, մեր գիւղացի Եղիա Շահպաղեանի հետ: Ան ալ ինձ նման որբ ու տառապած երիտասարդ մըն էր:

Ու այսքան տառապանքներէս ու չարչարանքներէս վերջ, երբ հագիւ կազմած էինք մեր հայկական համեստ բոյնը, հոս ալ կրկին հասաւ դժբախտութիւնը ու զարնելով գլուխիս, երկու ձագուկներովս որբ ու անպաշտպան թողուց, դռներու ետեւ:

Աստուած, անգամ մըն ալ գրեց իմ ճակատագիրս, իր սեւ մելանով ու գրիչով:

Ֆրանսա, 1951

ՊՈԼԻՍ

ՌՈՒԲԷՆ ԶԱՐԳԱՐԵԱՆԻ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

ՏԻԿ. Վ. Ռ. ԶԱՐԳԱՐԵԱՆ

Երբ ամուսնացայ Ռուբէն Զարգարեանի հետ, երիտասարդ ուսուցիչ էր Խարբերդի (Մէզիբէ) Հայոց վարժարանը: Կ'աշխատակցէր Պոլսոյ եւ Իզմիրի թերթերուն եւ իր համբաւը արդէն տարածուած էր մինչեւ արտասահման:

Թուրք կառավարութիւնը սկսած էր կասկածիլ, տեղեակ ըլլալով անոր մասնակցութեանը հայ յեղափոխական շարժումներուն:

1902ի վերջերը բանտարկուեցաւ, ինչպէս Խարբերդի շատ մը մտաւորականները: Տարիէն աւելի բանտ մնաց, բայց փաստեր չկարենալով գտնել՝ կառավարութիւնը արձակեց գինքը եւ ուրիշ բանտարկեալներ: Հնչակեան երեք գործիչներէն Սէմէրճի Արութը բանտի պատուհանէն դուրս նետած էր ինքզինքը, անձնասպան

ըլլալու եւ ազատելու համար տանջանքէ, բայց երկու սրունքները միայն ջախջախուած էին եւ բանտարկուած էր երբ կը հեռանայինք Խարբերդէն: Միւս երկուքը, Յակոբ Աղան եւ Յարեթը, մզկիթի հրապարակին վրայ գլխատեր էին երբ Մանխա կը գտնուէինք: Ամուսինս կապուած էր մանաւանդ Յակոբ Աղային եւ այդ գոյժը ստանալով լացաւ օրերով:

Կառավարական որոշումով ստիպուեցանք Խարբերդէն հեռանալ: Իզմիրի հայութիւնը հեռագրով հրաւիրած էր ամուսինս դպրոցի տնօրէնութեան պաշտօնին:

1904 Մայիսին թողուցինք մեր ծննդավայրը: Երկար ու տաժանելի ճամբորդութիւն մը ըրինք մեր երախարենով եւ Գօնիա — Էսկիշէհիը գծով հասանք Իզմիր:

Հակառակ թուրք կառավարութեան խստութիւններուն, Հայերը հանդիսաւոր ընդունելութիւն ըրին ամուսնոյս: Վալին արգելեց որ Իզմիրի մէջ պաշտօնավարէ եւ նոյնիսկ բնակի: Այն ատեն, հոգաբարձութեան հրաւերով, փոխադրուեցանք Մանխա, ուր ամուսինս դպրոցին տնօրէնութիւնը ստանձնեց:

Մեր բնակութիւնը Մանխայի մէջ երկար չտեւեց, թէեւ շատ երջանիկ էինք այդտեղի հայ ժողովուրդին հետ որ կը սիրէր ու կապուած էր ամուսնոյս:

Համիտեան շրջանի հալածանքները, որոնք ծայրայեղ աստիճանի հասած էին, անապահով վիճակ ստեղծած էին մեզ համար: Օր մը, մեր տունը խուզարկեցին եւ քանի մը ատրճանակ գտնելով բանտարկեցին ամուսինս: Բայց Իզմիրի փաստաբաններէն Պէորգ Պուպլիի եւ Նազարէթ Հիլմիի ջանքերով եւ Պոլսոյ Պատրիարք Օրմանեանի միջամտութեամբ, երկու շաբաթ յետոյ արձակուեցաւ բանտէն:

Այդ ժամանակ էր որ ամուսինս նամակ ստացաւ անմիջապէս հեռանալու արտասահման: Շնորհիւ Իզմիրի ընկերներուն ձեռք առած միջոցներուն, Մանիսայէն անցանք Իզմիր գաղտնի կերպով: Կարգ մը վտանգներու հանդիպելէ ետք, որոնց մէջ՝ յոյն նաւավարի մը փորձած մատնութիւնը, յաջողեցանք, գիշերանց, Փլորանսական շոգենաւ մը ապաստանիլ:

Հազիւ քանի մը օրէ ի վեր Պուլկարիա հասած էինք, երբ տեղեկացանք Սուլթան Համիտի վրայ կատարուած մահափորձին: Ամուսիս Ֆիլիպէի մէջ սկսաւ հրատարակել «Ռազմիկ» թերթը: Իրեն կ'օգնէր Բարթող Ջորեանը, իսկ Սեդրակ Թօգաձեանը թերթը կը շարէր:

Այդ շրջանին էր (1905) որ բախտը ունեցանք անձնապէս ճանչնալու ազգային հերոս Անդրանիկը, որ Պուլկարիա եկաւ եւ մեր տունը հիւր մնաց մինչեւ Օսմ. Սահմանադրութիւն (1908):

Անկեղծ, անշահախնդիր, մաքուր, ամբողջ հոգւով Հայրենիքին նուիրուած մարդ էր Անդրանիկը: Բարձր ուսում չունէր, բայց ուսեալ, մտաւորական ընկերները մեծ ուշադրութեամբ կը հետեւէին իր խօսակցութեան եւ մեծ արժէք կ'ուտային իր ողջամըտութեան:

Անդրանիկը անդրդուելի էր Թուրքերու հանդէպ ունեցած իր անվստահութեանը մէջ եւ այդպէս ալ մընաց նոյնիսկ Օսմ. Սահմանադրութեան հռչակումէն ետք:

— Մի խաբուիք, կ'ըսէր, կեղծ է իրենց աղատութիւնն ալ, եղբայրութիւնն ալ, միութիւնն ալ:

Անդրանիկը Պալքանեան պատերազմին մասնակցեցաւ եւ կռուեցաւ թուրք բանակին դէմ:

Երբ Օսմ. Սահմանադրութիւնը հռչակուեցաւ, տե-

Ռուբին Զարդարեան, Տիկ. Վերոն Զարդարեան և իրենց գաւազնները
Քալին աջ: Ազատ, Մովսէսար (Թորգ Գիրկը), Ռաֆայէլ և Հրայր Զարդարեանները



դափոխուեցանք Պոլիս : Ամուսինս այդտեղ ամբողջ ե-
ռանդով նուիրուեցաւ ազգային կեանքին : «Ազատա-
մարտ»ի խմբագիր էր եւ ազգային ժողովի երեսփո-
խան , միեւնոյն ատեն գրական թերթերու կ'աշխա-
տակցէր եւ կը պաշտօնավարէր :

Սահմանադրական շրջանին , Անդրանիկը Պոլիս ե-
կաւ զաղտնի կերպով եւ մասնակցեցաւ կուսակցական
համագումարին : Կը բնակէր մեր մօտ : Ընկերները
ուզեցին համոզել զինքը որ հաստատուի Պոլիս , թէ՛
Թուրքերը իրապէս փոխուած են եւն . : Անդրանիկը կը
զգուշացնէր զիրենք եւ կ'ըսէր թէ՛ չարաչար կը խաբ-
բուին , թէ՛ սահմանադրական եւ իթթիհատական
թուրքը աւելի մոլեւանդ եւ վտանգաւոր է քան թէ՛ հա-
միտեանը :

Ամուսնոյս կուսակցական ընկերներուն մէջ կային
մարդիկ որոնք իրապէս հաւատացած էին իթթիհատա-
կան Թուրքերու անկեղծութեան եւ ազատամտութեան :
Կը հաւատային Ատանայի ջարդէն ետքն ալ , եւ նոյնիսկ
աքսորի դացած ատեն , իրենց սպաննութեան նախօր-
եակին :

Կը յիշեմ վիճաբանութիւն մը Անդրանիկին եւ դաշ-
նակցական շէֆերու միջեւ :

— Հարկ է մոռնալ անցեալը , կը պնդէր Խաչա-
տուր Մալումեան : Զարմանում եմ որ էդքան կ'ատես
Թրքերին : Տես , օրինակ , Թալաթը , որ յեղափոխա-
կան , կորէքթ , ազնիւ մարդ է . . .

— Խաչատուր , բարկացաւ ամուսինս , Անդրանիկը
իրաւունք ունի : Ի՞նչպէս կարելի է քորէքթ ու ազնիւ
կոչել այդ Թալաթը , իրենց մէջ ամենէն Փանաթիքը . . .

Յետագայ դէպքերը շուտով իրաւունք տուին Անդ-
րանիկին :

Մտաւորականներու ձերբակալութիւնը սկսաւ : Պոլ-

սահայութիւնը սարսափի մէջ էր, բայց Մալումեան եւ ուրիշներ տակաւին կը յուսային թէ Թալաթի միջնորդութեամբ պիտի յաջողին խստութեանց առաջքը առնել:

Այդ օրերուն, Ղալաթիոյ աւագերէց Տէր-Մեսրոպ հայրը (Պր. Լեւոն Մեսրոպի հայրը) որ դրացի էր մեզի, ամուսնոյս առաջարկեց պահուիլ եկեղեցւոյ իր խուցին մէջ, մինչեւ պատերազմին վախճանը: Շատ հաւանական է որ ամուսինս ողջ մնար եթէ ընդունէր այդ առաջարկը, որովհետեւ եկեղեցիները անձեռնմխելի կը համարուէին: Բայց ամուսինս մերժեց Տէր-հօր առաջարկը: Ինք եւ ընկերները չէին ուզեր ժողովուրդը լքել իր ճակատագրին: Այլապէս, արտասահմանի իրենց ընկերներն ալ փախուստի միջոցներ կաղմակերպած էին: Պէտք է այս առթիւ գիտցուի ողբերգական մանրամասնութիւն մըն ալ:

Ամուսինս, Տոքթ. Տաղաւարեանը, Մալումեանը եւ իրենց խումբը, ոստիկանի մը հսկողութեան տակ կը ճամբուին դէպի Անատոլուի ամայի խորերը: Ճամբան, ոստիկանը զինովցնելով, իբ վրայէն կը դտնեն հրահանգ-նամակ մը որ իրենց մահաւճիռն էր: Կրնային ոստիկանին ղէնքը գործածելով փախուստի դիմել: Բայց նամակը կը փակեն, կը դնեն ոստիկանին դրպանը եւ զիտակցօրէն կը քալեն դէպի մահ:

Տէր-Մեսրոպ հայրը քանի մը անգամ եկաւ եւ պընդեց որ ամուսինս համոզեմ:

— Գաղտնիքը, կ'ըսէր ինծի, մեր երեքէն դատ ոչ ոք կրնայ գիտնալ: Համոզեցէք Պր. Զարդարեանը:

Զենք մոռցած Տէր-հօր ազնուութիւնը որով ինքզինքը կը վտանգէր, փրկելու համար ամուսինս ստոյգ վտանգէն: Արդէն ինքն ալ կասկածելի էր կառավարութեան աչքին, ոչ միայն իբր աւագերէց Ղալաթիոյ

եկեղեցիին, որ հինէն ի վեր յեղափոխութեան բոյն կը համարուէր, այլեւ Համիտի օրով բանտարկուած եւ դատապարտուած ըլլալուն համար :

Քաղաքական կացութիւնը արագօրէն կը փոխուէր : Երկրէն մտահոգիչ լուրեր կը հասնէին, նախազգացնելով կատարուելիք անհար դէպքերը : Ամուսինս հետզհետէ կը դառնար աւելի լուռ եւ մտախոհ : Արդէն ամիսներէ ի վեր գաղտնի ոստիկանները կը հսկէին իր բոլոր շարժումներուն եւ քայլ առ քայլ իրեն կ'ընկերանային : Մատնուած էի անասելի ջղայնութեան :

— Ռուբէն, կ'ըսէի, պէտք է փրկես քու եւ զաւակներուդ կեանքը : Եթէ զաւակներուս կեանքը խլուի, գիտցած եղիր, նոյն իսկ մահուանդ մէջ հոգիս հանգիստ պիտի չտայ ոսկորներուդ...

Անգամ մը միայն պատասխանեց.

— Վերոն, ինչ որ ըլլայ ժողովուրդին, մեզի ալ նոյնը պիտի ըլլայ :

Իրենց վերջին յոյսը քաղաքական հրաչք մըն էր, այն որ՝ Դաշնակիցները արագ կերպով մտնեն Պոլիս եւ փրկուի թրքահայութիւնը : Դժբախտաբար ճիշդ հակառակը տեղի ունեցաւ, Դաշնակիցները պարտուեցան Տարտանէլի մէջ եւ նահանջեցին :

Գիշեր մը բազմաթիւ ոստիկաններ մեր տունը պաշարեցին, խուզարկեցին եւ տարին ամուսինս, վերջնականօրէն...

Վերջին խօսքը եղաւ, ուղղելով սիւլիլ ոստիկաններուն, հեգնական ժպիտով մը.

— Ահա թէ ի՞նչպէս կը վարձատրուին այս երկրին ճշմարիտ բարեկամները :

— Մի՛ մտահոգուիք, Զարդարեան էֆէնտի, պատասխանեց ոստիկանապետը, երկու ըոպէ միայն պէտք ունինք ձեզի : Անմիջապէս կը վերադառնաք ձեր ընտանիքին...

Եւ գնաց ամուսինս , ինչպէս ամբողջ մտաւորակա-
նութիւնը : Հայ ժողովուրդին գլուխը անջատուեցաւ
մարմինէն :

Աւելորդ է ըսել որ մեր , այրի մնացած ժայրերուս
եւ կիներուս , հաւաքական դիմումները կառավարու-
թեան , գերմանական եւ միւս դեսպաններուն մօտ ,
ապարդիւն անցան :

Հազիւ մէկ երկու գրութիւն ստացանք աքսորի
ճամբէն , յետոյ , հետզհետէ լռութիւն : Մեզի կը մնար
գոնէ ազատել մեր զաւակները որոնց նոյն վախճանը
վիճակուած էր :

Կառավարութեան դիմելով , յաջողեցայ անցազիր
ստանալ Պուլիպարիա երթալու համար : Հրաշքի նմանող
անսպասելի այս յաջողութիւնը կարելի եղաւ , որովհե-
տեւ այն քօմիսէրը որ մեր թուղթերը կը քննէր , խար-
բերդցի է եղեր եւ հօրս աչակերտներէն : Այդ մարդը
մեզ ճանչնալով , կնքեց անցազիրը :

Վերջապէս ոտք դրինք Պուլիպարիոյ ազատ հողին
վրայ , բայց , հակառակ պուլիպար կառավարութեան ան-
չափ բարեացակամութեան , ստիպուեցանք հեռանալ
Պուլիպարիայէն : Այդ երկիրն ալ մասնակցեցաւ պատե-
րազմին , Գերմանացիներու եւ Թուրքերու կողքին :

Մեծ խումբով մը , որուն մէջ էին աքսորուած նա-
հատակներու ընտանիքներէն ոմանք , Տիկին Զապէլ Ե-
սայեան , Վարդգէսին ընտանիքը եւն . , մեկնեցանք Կով-
կաս :

Կարելի չէ այստեղ ներկայացնել մեծ հնոցը որ
Կովկասն էր այդ օրերուն : Մնացեալ հայաչխարհը հե-
րոսաբար կը կռուէր բարբարոս թշնամիին դէմ :

Անդրանիկը դարձեալ կ'ապրէր մեր տունը , Թիֆ-
լիզ : Դարձեալ իրեն վիճակուած էր պատմական դեր
կատարել , երբ անհամար կեանքերու գնով եւ ոուս մեծ

ժողովուրդին ու կարմիր բանակին աջակցութեամբ, վերջնականապէս իրականացաւ հայ ժողովուրդին ազատագրութեան դարաւոր երազը:

Այդ շրջանին, Մուրատը սպաննուեցաւ Պաքու, թրքական բանակին դէմ կռուած ատեն: Անդրանիկը վերջնականապէս հեռացաւ կուսակցութենէն:

Մինչեւ Զինադադար տակաւին յոյս ունէինք որ մեր ամուսինները ողջ են: Պոլսէն ստացուած առաջին թերթերը այդ պատրանքը փշրեցին: Պոլսոյ մէջ սզահանդէս կատարուած էր աքսորուած բոլոր մտաւորականներուն եւ թրքահայ նահատակ ժողովուրդին համար...

1920ին, զաւակներուս հետ եկայ Ֆրանսա:

Ֆրանսա, 1952:

Ա Գ Շ Է Ն Ի Ր

Թ Ո Ր Ո Ս Մ Է Ս Տ Ճ Ե Ա Ն

Ադչէհիւր, Գոնիայի կապուած կուսակալութիւն մըն է: Կը գտնուի Գոնիա — Հայտար փաշա երկաթուղադծին վրայ եւ սահմանակից է Պրուսայի հողամասին, չոզեկառքով կէս ժամ հեռաւորութեամբ:

Ադչէհիւր, Գոնիայէն հինգ ժամ եւ Աֆիոն-Գարահիսարէն չորս ժամ հեռաւորութիւն ունի: Տաւրոս լեռան ստորոտը, ծառերով ու պարտէզներով զարդարուած, խիստ վաճառաշահ եւ բերրի քաղաք մըն էր: Պոլսոյ եւ Իզմիրի հետ ցորենի, դարիի, թիֆթիկի, բուրդի, աֆիոնի եւ հակիթի առեւտուր ունէր, եւ բաւական խոշոր համանուն լիճ մը որ առատ ձուկ կ'արտադրէր: Ռուսիայէն Գասնաւոր եկած եւ հոն հաստատ-

ուած ձկնորս կողակներ կ'որսային եւ գիւղացիները անոնցմէ կը գնէին: Մինչեւ 7 - 8 քիլօ ծանրութեամբ «սազան» կոչուած ձուկեր, մօրիւ ձուկի նման, աղուելով Ռուսմանիա եւ Պուլկարիա կը ղրկուէին: Տեղացիք օխան տասը փարայի ձուկ կ'ուտէին:

Ագչէհիր ունէր 800 տուն հայութիւն եւ երկու եկեղեցի, մէկը՝ Ս. Պօղոս-Պետրոս, որուն շինութեան ատեն, Թիւրպէին կից ըլլալուն համար, Թուրքերը կ'արգիլեն եւ շինուածը կը քանդեն: Մինչդեռ, իրենց ցորեկը քանդածը՝ հետեւեալ առաւօտ կուգան շինուած կը գտնեն: Այսպէս կը շարունակուի քանի մը անգամ: Բայց, ի վերջոյ, Թոյլ կուտան որ չէնքը լրացնեն:

Հայերը այդ եկեղեցիին կից ընդարձակ հող գնած եւ գերեզմաննոց շինած էին: Եկեղեցին՝ ժամերգութիւն ու պատարագ կը կատարուէր մեռելոցի օրը միայն: Ի վերջոյ Հայերը կը քաշուին դէպի ձորը եւ հոն բնակութիւն կը հաստատեն: Կը շինեն խոշոր եկեղեցի մը, վեց հսկայ, մարմարիոն սիւներու վրայ կանգնած, որ եօթ տարիէն աւարտած է: Քովն ալ մանկապարտէզ եւ նախակրթարան մը, որ մեր օրերուն երկրորդական վարժարանը կը համարուէր:

Հայերը, թէեւ իրենց մայրենի լեզուն գրել եւ կարդալ սորված են, բայց միշտ մնացած են տաճկախօս: Մինչեւ 1850ական թուականներուն իրենց թղթակցութիւնները եւ հաշուետետրերը պահած են հայատառ Թուրքերէնով: Այդ թուականէն յետոյ, տեղական դասատուներով չեն գոհանար եւ, Պուլէն, Իզմիրէն տնօրէն եւ ուսուցիչ կը հրաւիրեն, երբ այլեւս դասաւանդութիւնները կը կատարուին աշխարհաբարով:

1892ին, Մաղնիսացի Գրիգոր Էօլմէզեան ստանձնեց տնօրէնի պաշտօնը ու գւրոցին եւ տուներուն մէջ արգիլեց Թուրքերէն խօսիլը: Պարտադրեց մանաւանդ



Թորոս Մէստմեան

այն ընտանիքներուն՝ ուր հայերէն գիտցողներ կը գրտնուէին: Ազգէհիբ, իր հայախօսութիւնը Գ. Էօլմէզեանին կը պարտէր:

Նկեղեցին եւ դպրոցը, իբրեւ եկամուտ ունէին, խոշոր բաղնիք մը եւ հարիւրէ աւելի խանութ:

1915ին, երբ տեղահանութիւնը հրամայուեցաւ, քահանաներ եւ դպիրներ ալ զինուոր կանչուեցան կամ աքսորուեցան եթէ զինուորական տարիք չունէին: Ես ալ զինուոր կանչուեցայ երբ ամուսնանալու կը պատրաստուէի: Հետեւաբար, կամ ամուսնանալով, իբր զինուորական փախստական պիտի աքսորուէի, եւ կամ ծնողքս իբրեւ զինուորականի ընտանիք տեղահանութենէ զերծ մնալու համար, զինուոր պէտք էր ըլլայի: Վերջինը նախընտրեցի:

Այդ շրջանին ատաղձագործի խանութ ունէի: Օր մը, մունեաիկը կանչեց. «Ամէն մարդ խանութը գոցէ եւ կայարան երթայ: Էնվէր փաշան պիտի անցնի»: Ես ալ ուրիշներու հետեւեցայ: Օրուայ գայմագամը, Իյնէկէօլցի, զարգացած եւ Հայերու բարեկամ էր, վա-

կոնին առջեւ դիմաւորեց Էնվէր գազանը որ գինուորական պարզ համազգեստով մը վար իջաւ եւ, մեզմէ քիչ հեռու, սկսաւ Ագչէհիրի ժողովուրդին մասին հարցումներ ընել: Գայմագամը (զոր վերջը պաշտօնանկ ըրած են) ըսաւ.

— Հայերը առեւտրական եւ լաւ արհեստաւորներ են: Իրենց մէջ վարպետ երկաթագործներ կան, պելժիական արօրներ կը շինեն որոնք դուրսէն եկածներուն հետ կրնան մրցիլ:

Էնվէր հարցուց. — Իսկ Թուրքեր^oրը ինչ գործով կը զբաղին: Իրենց մէջ արհեստաւորներ չկա՞ն:

— Թուրքերը իբր արհեստաւոր, թէնէքէճի, պայտար եւ քանի մը հատ ալ մսավաճառ ունին, մաս մըն ալ առեւտրականներ: Մնացեալը հողագործութեամբ եւ պարտիզպանութեամբ կը զբաղի, պատասխանեց գայմագամը:

Այս թուականէն 15 օր վերջ, Ագչէհիրի հայ մեծամեծները հաւաքելով Փափաղեան Օթէլը արգիլափակեցին եւ հետեւեալ օրը շոգեկառքով Էրէյլի գրկեցին:

1915 Օգոստոս հինգին, երկու թաղերու Հայերուն լուր տրուեցաւ պատրաստուիլ, հետեւեալ օրը մեկնելու համար:

Առաւօտ կանուխ Չէչէններ, կովկասեան տարազ հագած, կողերն ի վար դաշոյններով, եկան տուները եւ նոյն իսկ հիւանդները ծեծելով դուրս հանեցին, մինչեւ կայարան տանելու համար: Ամէն ընտանիքի համար կառք մը բերած էին: Ու այս կերպով, երկու կարաւան արդէն ճամբայ հանած էին:

Ագչէհիրի ութ հարիւր տուն հայութենէն, հինգ-վեց ընտանիք միայն իսլամացած եւ հոն մնացած են, ինչպէս լսեցինք պատերազմէն վերջ: Իսկ մնացեալը, մեծ մասամբ Տէր-Չօրի մէջ ջարդուած է, որոնց մէջ

էին Յակոբ Թէքնէեան, Խաչատուր Բարաղամեան, Կարապետ Լուսարարեան, վերջին երկուքը մօրեղբայրներս, իրենց ընտանիքով եւ զաւակներով :

Օգոստոս 11ին, իբրեւ զինուոր Մաքրի ղրկուեցայ ուր, գերմանացի գօմանտան մը արհեստաւորները զատեց եւ երեք հարիւր հոգինոց խումբ մը կազմեց : Թէեւ ես ալ ասոնց մէջ էի, բայց տեսնելով որ ամէն օր երկու հարիւր Հայեր Գօնիա՝ ետ կը ղրկուէին, իրենց խառնուեցայ : Մեզ մինչեւ Պօզանթի շոգեկառքով, անկէ անդին ալ օրական ութ-տաս ժամ քալելով Դամասկոս տարին : Հոն՝ Համիտիէ զօրանոցը տեղաւորելով, 18րդ ամելի քապուրի մը կազմեցին, չորս խումբէ բաղկացած : Ամիս մը հոն աշխատելէ վերջ, մեզի՝ Պիր-Սէպայի անապատները տարին երկաթուղիի ճամբայ շինելու համար :

Այդ ճամբուն վրայ, ականատես եղանք մեր ազգակիցներու հալումաչ վիճակին, որոնք Արաբիոյ կիզիչ արեւուն տակ կը քալին մինչեւ իրենց կայանները Գաթմա, Բայազ, Իսլահիյէ եւայլն : Ու մեր ձեռքերով թաղեցինք հայ կնոջ մը մեռելը : Մեր չարաչար աշխատանքին եւ յուզումնալից վիճակին մէջ, մեր անտանելի ծարաւը անցնելու անգամ ջուր չէինք գտներ : Ծայր տուաւ տիզանթէրին եւ թիֆլիսը, որ մեր խումբին երկու երրորդը փճացուց : Ես մեր խումբին մէջ յիսնապետ էի : Ամբողջ բանակին մէջ հինգ թուրք եւ ութ Արաբ կար : Մնացեալը Հայեր էին :

Մեզ մինչեւ 1916, փետրուար 18ը աշխատցուցին : Այդ օրը, Վարդանանց Զօրավարաց Տօնն էր, մեզի կրօնափոխութիւն առաջարկեցին : «Մտածենք, պատասխան կուտանք» ըսելով ցրուեցանք :

Երբ առանձնացանք, ամէն խումբի տասնապետներ եւ յիսնապետներ խորհրդակցելով հետեւեալ եզրակա-

ցութեան եկանք. «Այսօր, Վարդան Մամիկոնեան եւ իր հաղար երեսուն եւ վեց վկաները կրօնափոխութեան դէմ պատերազմեցան ու անմահացան եւ հայ ազգը իբր սուրբեր ընդունած է զանոնք: Իսկ մենք որ կենդանի մեռելներ ենք, կեանքը մեզի համար ոչինչ կ'արժէ, իրենց օրինակին հետեւելու ենք:» Միայն չորրորդ խումբին մէջ գտնուող էնկիւրիցի կաթոլիկներ ընդունեցին կրօնափոխ ըլլալ: Բայց իրենց թուրք պետը կ'ըսէ. «Քանի որ ամէնքը կը մերժեն, դուք ալ կորսուեցէք, դացէք»:

Այդ շրջանին հիւանդացայ: Վարակուած էի թիֆլիսէն: Ծնողքէս շատոնց լուր առած չէի եւ Ագչէհիր գտնուող քեռայրէս տեղեկութիւն ուզեցի նամակով: Հայրս եւ մայրս, իբրեւ երկու զինուոր զաւակի ծընողք, ութ ամիս ազատ կը թողուն, նոյնպէս աներհայրս, բայց յետոյ, նման վիճակի մէջ եղողներուն հետ կը տեղահանուին: Հայրս Գաթմայի մէջ սուինահար կը սպաննեն, իսկ մայրս շաբաթ մը ետք կը մեռնի:

Վիշտը աւելի տկարացուց զիս: Բժիշկ մը եկաւ, 145 հիւանդ վերաքննելու, սակայն մեզ զատեց Պիր-Սեպա երթալու համար: Քանի մը ժամ շողեկառքով գացինք, յետոյ տասը ժամ քալելով տեղ մը հասանք, արդէն կաշի ու ոսկոր դարձած: Մինչդեռ ուրիշներ մանրակրկիտ քննութենէ ետք, պահեցին:

Այդտեղ ծառայող Հայեր ըսին. «Զեր հարիւրապետը նախապէս բժիշկներու հետ տեսնուեցաւ: Զեզի կրկին տեղերնիդ կը վերադարձնեն, իսկ միւսները Երուսազէմ օդափոխութեան կը զրկեն:»

Իրիկուն էր արդէն, մեզի վրան տուին պառկելու համար: Յերեկին, պահակներու կեցած դրանը քովէն փախչիլ փորձող Մաղնիսացի մը ծեծելով ներս բերին:

Ես ալ խորհեցայ փախչիլ: Այդ գիշեր պայծառ լուսին մը կար, առտուայ մօտ վար իջայ, պահակ չկար. չորս կողմը գննեցի, տեսայ շէնքին քովէն բանուկ ճամբայ մը կ'անցնի, որ մեր տեղէն մէկ մեթր ցած է, կրկին վրան վերադարձայ:

Մեզի մէյմէկ գիշերուայ ծածկոց տուած էին, գոյքերս անոր տակը պահեցի եւ քովս պառկող տասնապետ Պարտիզակցի Գրիգորը արթնցուցի: «Եթէ փախչիլ կ'ուզես, ըսի, գոյքերդ առ, դուրս ելիր»: (Այդ տղան էր որ Երուսաղէմ փախչելու խորհուրդ կուտար ինծի:)

Արագ քայլերով անցանք պողոտայէն եւ երեք քառորդ ժամ ետք, երբ արշալոյսը բացուեցաւ, հասած էինք ջրի մը քով: Լուացուեցանք: Քիչ անդին խոշոր տախտակի մը վրայ կարդացինք որ Երուսաղէմը 80 քիլոմեթր հեռու է: Այդ բանուկ ճամբով քալելը վտանգաւոր էր: Երկու Այնթապցիներ չորս հայ դինուորներով մեզի մօտեցան: Հարցուցինք. «Ո՞ւր կ'երթաք»:

— Երուսաղէմ, ըսին, ցերեկը կը քնանանք եւ միայն գիշերները կը ճամբորդենք:

Իրենց ընկերացանք եւ աւելի ապահով զգացինք:

Այսպէս, տկար, յոգնած, ութսուն քիլոմեթր քալելով, 1916 ապրիլ 9ին շրադալոյցի շաբաթ օրը, Հայոց Սուրբ Յակոբ Վանքը հասանք: Ապրիլ 23ին, Սուրբ Յարութեան Տաճարը զրկուեցայ, ուր Հոկտեմբերին լուսարարի պաշտօն տուին ինծի:

1917, նոյեմբեր 26ին, անգլիական բանակը Երուսաղէմ մտաւ: Տեղւոյն Քաղաքապետը եւ Միւլթիին զիրենք կառավարական պալատը առաջնորդեցին: Եթէ անգլիացիներու մոտքը երկու օր ուշանար, քաղաքին քրիստոնէայ բնակչութիւնը թրքական կառավարութեան կողմէ որոշուած էր ջարդել:

Անգլիական բանակի կառքելուն նորոգութեան հա-

մար արհեստանոց մը բացած էին: Հոն իբրեւ կահա-
գործ արձանագրուեցայ, ու 1918 մարտին լուսարարու-
թենէ հրաժարելով, վանքի գետնայարկը բնակեցայ: Ա-
մերիկեան Կ. Սաչի մէջ ալ աշխատելով, 20 եգիպտա-
կան ոսկի խնայեցի: 1919, փետրուար 15ին Դամասկաս
մեկնեցայ, ուր կը գտնուէր նշանածս, իր ծնողքին հետ:
Ամուսնացանք: Աղջիկ մը եւ երկու մանչ զաւակ ունե-
ցանք: Բայց դժբախտաբար կինս կորսնցուցի. ու երեք
զաւակներովս մնացի խեղճ ու այրի: Մէկ տարի յետոյ
ամուսնացայ հայրենակից՝ այրի Տիկին Կիւլիզար Ռու-
բէնեանի հետ: Իբրեւ տարալիր ամէն ցաւ ու ամէն
տառապանք կրելէ յետոյ, երկու զաւակներս ու երկ-
րորդ կինս ալ կորսնցուցի:

Արդ, 1915ի աղէտին ծնողքս, մօրեղբայրներս ի-
րենց ընտանիքով եւ բոլոր պարագաներով կորսնցնե-
լէ ետք, այսօր ինծի կը մնայ երկրորդ զաւակս միայն
որ 23 տարեկանին ամուսնացուցի հայ աղջկան մը հետ:
Թոռնիկ մը ունիմ հիմա, որմէ կ'առնեմ ամէնուն սէրը:

Ֆրանսա, 1951

Ա Տ Ա Բ Ա Ջ Ա Ր

ՏԻԿԻՆ ՎԱՐՍԵՆԻԿ ԱԴԱՄԵԱՆ

Մեր ընտանիքը՝ մեծ հայրս՝ Գէորգ Շիրինեան, 75 տարեկան: Հայրս՝ Սուրէն Շիրինեան, 45 տարե-
կան: Մայրս՝ Անթառամ (ծնեալ Կարապետեան, Կէյվէ-
էջմէ քաղաքէն): Ինձմէ պզտիկ քոյրերս՝ Նոյեմի՝ 16
տարեկան, Սաթենիկ՝ 14 տարեկան, եղբայրս՝ Վահան՝
12 տարեկան: Մօրս ընտանիքէն՝ մեծ մայրս, մօրեղ-



Տիկ. Վ. Ադամեանին ընտանիքը
աջէն ձախ, Բ-ը՝ իր առեւանգուած բոյրը՝ Սարեմիկ

բայրս, մօրաքոյրս, իրենց զաւակներով ու թոռներով Կէյլիէէն աքսորուած եւ անհետացած են :

Մեծ Հայրս Գէորդ Շիրինեան եւ Հայրս՝ Սուրէն, Շապին Գարահիսարէն փոխադրուած են նախ Պարտիզակ, յետոյ Ատարաղար, ուսուցչական պաշտօնով : Հայր եւ որդի սերունդներ դաստիարակած են : Մեծ հօրս յիսնամեայ յորելեանը կատարուած է Կոմիտաս Վարդ.ի մասնակցութեամբ :

1915ին Պօլիս էի եւ ամուսնացած : Մնողքս եւ ազգականներս կ'աքսորուին Ատարաղարէն նախ էսկիշէհիբ, ուր արտոռի մը մէջ կ'տպրին : Հայրս աւագ կը կրէ

կառավարական շէնքի մը: Կրկին կ'աքսորուին եւ տասը օր քաշելով կ'անցնին Տաւրոսի լեռներէն: Այնտեղ կը համոզեն մեծ հայրս որ թրքական անձազրով մը հեռանայ: Պօլիս եկաւ եւ իր զաւակներուն կորուստը ողբալով կուրացաւ ու մեռաւ քանի մը ամիսէն:

Օրին մէկը լուր առինք Տէր Զօրէն: Դրամ ղրկեցինք: Առաջին անգամ ստացան, երկրորդին Սապխա քուլաժ ըլլալնին իմացանք, յետոյ ոչ մէկ լուր:

Յետագային, հօրաքրոջմէս, Զարուհի Լաղեանէն տեղեկացանք թէ ինքը, ամուսինը եւ զաւակները Դամասկոս քուլեր են, մնացեալները՝ Տէր Զօր: Այդտեղ Պէտէվիները Սաթենիկ քոյրս կը գողնան, նաեւ ուրիշ ազջիկներ եւ հարսեր: Ատաբազարցի Մոմճեանը, որ զինուոր է եղեր, ցորենի արտի մը եղերքը փոքրիկ տղայ մը եւ ազջիկ մը կը գտնէ, որոնք ցորենի հատիկներ կը ժողվեն: Հարց կուտայ եւ քոյրս Նոյեմին կը պատասխանէ. «Երկուքս մնացինք, փոքր եղբայրս հիւանդ է, ջուր կը փնտռենք»: Մոմճեանը, որ հօրս աչակերտներէն էր, ամիս մը կը կերակրէ զիրենք, բայց յետոյ իրենց բանակը կը տեղափոխուի: Քանի մը շաբաթէն կրկին նոյն տեղը կուգայ եւ Արաբներուն կը հարցնէ քրոջս ու եղբօրս մասին: Կ'ըսեն թէ մեռան:

Զինադադարին դիմում ըրինք Հալէպ կազմուած որբախոյզ յանձնախումբին, բայց կարելի չեղաւ Սաթենիկ քրոջս հետք գտնել: Իմ խեղճ քոյրս, թերեւս ողջ է, ողջ-նահատակ...

Մեր բազմանգամ ընտանիքէն, ազգականներէ եւ ծանօթներէ մէկ քանի վերապրողներ, որոնք զինադադարին Ատաբազար եւ Կէյվէ-Էջմէ վերադարձած էին, կրկին ենթարկուեցան աքսորի եւ ջարդի, այս անգամ ալ Քեմալականներուն կողմէ, որոնց օղնեցին քրիս-

սոոնեալ եւ քաղաքակիրթ Եւրոպացիները...

Մեծ մայրս Իւղարեր Կարապետեան, 90 տարու, Աննա մօրաքոյրս, որ թուրք ազգին հաւատարմաբար ծառայած եւ մեծ բարիք ըրած էր, զոհ դացին Քեմա-վական դազաններուն:

Վերապրողներս այլեւս հեռացանք այդ դժոխքէն, թէեւ հիմա ալ «ճերմակ ջարդ» կը տեսնենք ամէն օր:

Այսչափ կորուստներէ եւ ցաւերէ ետք, մէկ միւթ-թարութիւն ունիմ որ զաւակս՝ Ազատ Ադամեանը, ամուսնացաւ եւ ներդաղթեց Հայաստան, ուր երեսփոխան ընտրուած է եւ կը ծառայէ մեր ամենասիրելի Սովետական Հայրենիքին:

Ձեր վեհ ձեռնարկին համար ինչպէ՞ս շնորհակալ ըլլամ: Այդ գիրքը մեր անթառամ նահատակներուն շիրիմը եղաւ:

Ֆրանսա, 1951

ՏՐԱՊԻՋՈՆ

ՏԻԿ. ԶԵՓԻՒՌՎԵԼԵՏԵԱՆ

1915ին ընտանիքիս անդամներն էին՝

Հայրս՝ Յակոբ, 43 տարեկան, մայրս՝ Վերգին, 37, ես՝ Զեփիւռ, 15, մեծ եղբարս՝ Սմբատ, 13, փոքր եղբայրս՝ Գուրգէն, 11, քոյրս՝ Մերսիտէս, 7, քոյրս՝ Արափսի, 5, մեծ մայրս՝ 70 տարեկան:

Տրապիզոն Սեւ Ծովու թրքական ամենակարեւոր շաւահանդիստն էր, կապուած՝ Կիւմիւշխանէի, Բաքերդէի, Երզնկայի, Էրզրումի, Վանի եւ այլ ներքին քաղաքներու:

Տրապիզոնի մէջ կային՝ Ամերիկացի միսինարներու, Միսիթարեաններու, Ֆոէրներու եւ Սէօներու վարժարաններ: Հայերը ունէին, մանկապարտէզ եւ աղջկանց եւ մղոց վարժարաններ: Երեք եկեղեցի՝ Ս. Ստեփաննոս, Ս. Յովհաննէս եւ Ս. Աստուածածին: Չորրորդ մեծ եկեղեցի մը գրեթէ աւարտելու մօտ էր: Քաղաքէն մէկ երկու ժամ հեռու, Քայմաքլը կոչուած բլուրին վրայ ունէինք ուխտատեղի վանք մը:

Աքսորէ վերադարձիս, ազգային բոլոր շէնքերը քանդուած դտայ: Մնացած էր միայն հին եկեղեցիի մը կիսաւեր դանդակատունը որ «Ղանճապուռճա» կը կոչուէր: Տրապիզոնի շուրջ բազմաթիւ հայաբնակ ամարանոց գիւղեր կային, ինչպէս՝ Չէֆանօզ, Սօուզսու, Կուոյլի, Պարիամ, Թոց եւ Կոոմեւա: Ասոնք դպրոց եւ եկեղեցի ունէին: Բնակիչները աքսորուեցան եւ սպաննուեցան:

Տրապիզոնի հայութիւնը 1914-15ին, մօտ 10 հազար էր, ընդհանրապէս վաճառական եւ արհեստաւոր, ամենքն ալ բարեկեցիկ:

Մայրս տրապիզոնցի էր եւ ամուսնացած էր Կիրասոն: 1915ին Տրապիզոնի մէջ կ'ապրէին մօրս հայրը Պետրոս Մալխասեան, եղբայրը եւ քոյրը, որոնց քով կ'անցընէի տարւոյն մեծ մասը: 1914ին Տրապիզոն կը գտնուէի երբ պատերազմը ծագեցաւ եւ մնացի ծնողքէս բաժնուած:

Տրապիզոնէն դէպի Պոլիս, ծովեզերեայ հետեւեալ քաղաքները կան — Օֆէ, Էլէվի, Թրիպօլի, Կիրասոն, Օրտու, Իւնիէ, Փացցա, Սինոպ, Սամսոն, Էրէջլի եւ Զօնկուլտաք: Միայն այս վերջին քաղաքին Հայերը զերծ մնացին տարազրութեանէ, շնորհիւ տեղւոյն ածուխի ընկերութեան եւրոպացի պաշտօնեաներուն ներկա-

յուլթեան: Մնացեալ քաղաքներու հայ բնակչութիւնը՝ ամբողջութեամբ տարագրուեցան եւ սպաննուեցան:

Կիրասոն Սեւ Ծովու եզերքը գտնուող քաղաքներուն ամենազեղեցիկն է իր բնական դիրքով: Նշանաւոր է կաղինի բերքով որուն վաճառականութեամբը կը զբաղէր հայրս:

Մեծ հօրս Վէլէտեան գերդաստանը կը բաղկանար 11 զաւակներէ, 45 թոռներէ եւ 26 թոռան զաւակներէ: 1914ին Ազգային վարժարան կ'երթայի, դեռ տարի մը ունէի վերջացնելու, յետոյ հեռացայ եւ սկսայ Սէօուրու վարժարանը յաճախել: Հաղիւ երկու ամիս դացի, որովհետեւ Սէօուրը քչեցին Ֆրանսա եւ վարժարանը գրաւեցին: Ռուսական զրահաւորներ Տրապիզոնը քանի մը անգամ ումբակոծեցին:

Սասուլթիւնները սկսան: Կառավարութիւնը հրաման ըրաւ որ ժողովուրդը գիւղերը ապաստանի ումբակոծումէ հեռու ըլլալու համար: Մենք մեկնեցանք Զէֆանօզ: Կիրասոն գտնուող ծնողքէս տարիի մօտ էր որ լուր չունէի, նամակագրութիւնը արգիլուած էր, շոգենաւեր չէին երթեւեկեր:

Ապրիլ ամսուան մէջ գիւղերու եւ քաղաքներու հայկական թաղերը պաշարուեցան թուրք ոստիկաններով եւ զինուորներով: Տուները խուզարկեցին եւ բազմաթիւ զէնքեր գտան, զորս դժբախտաբար Հայերը չուղեցին կամ ժամանակ չունեցան դործածելու:

Յետոյ հրաման ելաւ որ բոլոր Հայերը հինգ օրուան մէջ պատրաստուին ճամբայ ելլելու դէպի Տիգրանակերտ: Մեծ յուզում եւ իրարանցում: Աճապարանքով եւ հետիոտն քաղաք իջանք: Մօրեղբայրս եւ իր երեք ընկերները մեր տան մէջ պահուեցան, այն յոյսով որ պիտի յաջողին Ռուսաստան փախչիլ: Յետոյ լսեցի որ

բռնուած են: Կարգ մը հայ տիկիներ որոնց մէջ էր նաեւ մօրս աղբակահան եւ դպրոցի տնօրինուհի Տիկ. Արչալոյս Մազլըմեանը, դիմեցին Վալիին, խնդրելով որ Հայերը չաքսորուին, հայ տղամարդիկը բանտարկեն, կիներն ալ աշխատցնեն: Առաջարկեցին նոյն իսկ կրօնափոխ ըլլալ: Կուսակալը պատասխանած էր. «Գացած տեղերնիդ կրօնափոխ կ'ըլլաք»:

Այդ օրերը բազմաթիւ այրեր ձերբակալեցին, ոմանք աքսորեցին, ուրիշներ՝ ծովը նետեցին: Կառավարութիւնը յայտարարեց որ հայ ընտանիքները կրնան իրենց զաւակները յանձնել ամերիկեան միսիօնարներուն եւ Յունաց առաջնորդարանը: Զիս տարին միսիօնարներուն շէնքը ուր խոնուած էին ամէն տարիքի երախաներ: Թուրքերը ատոնց մեծ մասը աքսորեցին: Փախուստ տուի եւ տուն վերադարձայ: Մօրեղբայրս տան նկուղին մէջ ոսկեդրամ, զարդեղէն եւ արժեթուղթեր թաղեց եւ ինծի ըսաւ. «Զեփիւռ, կրնայ ըլլալ որ մենք մեռնինք եւ դուն ողջ մնաս: Ասոնց տեղը միտքդ պահէ»: Սաստիկ յուզուեցայ:

Հինգ օր տապնապի մէջ էր Տրապիզոնի հայութիւնը. թէ՛ կը պատրաստուէին ճամբու տոպրակներ չինելով, թէ՛ միջոցներ կը խորհէին աղէտէն ազատելու: Արչալոյս մօրաքոյրս զիս Յունաց առաջնորդարանը յանձնեց:

Պայուսակ մը լեցուն թանկագին իրեղէններ ղրկեցին յոյն տղու մը ձեռքով, բայց չբերաւ եւ ես մնացի դպրոցական գոգնոցովս եւ վերարկուովս: Հազիւ քանի մը ոսկեդրամ ունէի: Հետեւեալ առտու Թուրքերը յանկարծ առաջնորդարան մտան, ուր ապաստանած էին մեծ մասով հայ աղջնակներ: Թուրք սպայ մը ինծի մօտենալով պռաջարկեց հետս ամուսնանալ: Սարսափա-

հար փախայ ուրիշ սենեակ մը: Մեր տան մէջ տակաւին փոքր աղջկան տեղ դրած էին զիս, ամուսնութեան մասին ոչ իսկ խորհած էի, իսկ Տաճկի մը հետ ամուսնանալ՝ կը նշանակէր տաճկնալ եւ հայ աղջիկ մը պիտի նախընտրէր հազար անգամ մեռնիլ քան թէ տաճկնալ:

Քիչ յետոյ մեղ ամէնքս առաջնորդարանին բակը իջեցուցին եւ կարգով շարեցին: Զինուորներ մեր երկու կողմերը շարուեցան սուրնները ցցած: Սկսանք լալ մեր սարսափէն: Ընկերուհիներէս Հեղինէին թեւը մտած, սկսայ քալել: Մեղ դէպի ծովեղր կ'առաջնորդէին: Մեր վախը սաստկացաւ, կը կարծէինք որ մեզ ալ ծովամոյն պիտի ընեն: Կուլայիք բոլորս ալ, ոմանք մարեցան, ուրիշներու քիթէն սկսաւ արիւն հոսիլ: Յունաց թաղն էինք բայց պատուհանները եւ փողոցները ոչ ոք կար: Պահ մը վերջ ճամբանիս փոխեցին եւ սկսան Տէյիրմէնտէրէսի կողմը տանիլ:

Արդէն կէսօրը անցած էր, սուրնաւոր զինուորները քիչցան, ոստիկանները մեղ վազելով կը քալեցնէին: Օդը տաք էր, առտուընէ ի վեր անօթի էինք. մեր կօշիկները սկսան նեղել: Հանեցի իմ նորոյթ կօշիկներս եւ սկսայ գուլպայով վազել: Այսպէս սկսայ տարադրութեան գողգոթան, դպրոցական գոգնոցով, գրպանիս մէջ հաղիւ քանի մը ոսկի, առանց ծնողքի ու պաշտպանի:

Տրապիզոնի ժողովուրդը չորս գլխաւոր խումբերու բաժնելով տարադրած էին: Աղջիկներէն շատերը գտան իրենց ծնողքը այդ խումբին մէջ: Յանկարծ լսեցի Արշալոյս մօրաքրոջս ձայնը: Իր հետն էին նաեւ ամուսինը Արշակ, տաղբը Գուրգէն եւ անոր կինը Վառեակ, ամուսնոյն քոյրը արիկին Գարդուհին եւ զաւակը, 15-16 տարու եւ մօրս մօրաքոյրը ինչպէս նաեւ Արշալոյս մօրաքրոջս ազգականը Վարիամ: Մօրաքոյրս ինծի ուտե-

լիք տուաւ եւ ցաւած ոտքերուս ասեղնագործուած մու-
ճակ մը հագցուց : Ժամ մը ետք ճամբայ հանեցին : Մօ-
տաւորապէս 4000 հոգի էինք, տիւուր տրտում , առանց
գիտնալու թէ ո՞ւր կ'երթայինք : Նախ Տիարպէթիւր ըս-
ուած էր , յետոյ Մուսուլ եւ դեռ ուրիշ անուններ : Մե-
զի կ'ընկերանային բաւական թիւով զինուորներ եւ եր-
կու ձիաւոր հարիւրապետ :

Զինուորները կ'երգէին ուրախ , զուարթ , խենչ էր-
գեր , ծաղրելով մեր վիշտը : Հարս ու աղջիկներուն սրի-
կայ նայուածքներ կը նետէին : Առաջին գիշերը վրայ
հասաւ , ձէվիլլիք էինք կամ Խամսըքէօյ : Փողոցներուն
երկու կողմը ախոռներու եւ խաներու մէջ լեցուցին
մեզ , մէկ մասն ալ գետեզրը տեղաւորեցին : Խոնաւու-
թիւն , աղտոտութիւն ամէն կողմ : Բնաւ չքնացանք :
Առաւօտուն մեր տոպրակները դարձեալ շալկեցինք եւ
ճամբայ ելանք : Երրորդ իրիկունը մօտեցանք Տալտա-
պան կոչուած կիրճին : Այդտեղ յանկարծ մեզ կեցընե-
լով , հրամայեցին որ տղամարդիկը խումբէն զատուին :
Զէթէներ , ոտից գլուխ զինուած , թափեցան մեր շուր-
ջը եւ սկսան հրացան արձակել : Իրարանցումը սկսաւ ,
հրամանը կրկնուեցաւ . « Ինչ որ պիտի տաք այրերուն ,
դրամ , ուտելիք եւայլն , տուէք : Տղամարդիկ առանձին
պիտի ճամբորդեն , կիները առանձին » : Բաժանումի ա-
ղեխարչ տեսարանը աննկարագրելի է : Մարդոց երեսը
մեռելի գոյն առած էր , իսկ կիները կուլային եւ կ'ող-
բային : Մայրեր , քոյրեր , կիներ , նշանածներ , իրենց
այրերէն կը բաժնուէին համբուրուելով ու լալով : Ճամ-
բուն ձախ կողմը գոյգ գոյգ կարգի շարեցին այրերը :
Թուրք զինուորներ սուիներով չըջապատեցին զանոնք
եւ ոչխարներու պէս առին տարին : Մօրաքրոջս ամու-
սինը , տագրը , տալոջ տղան ալ անոնց հետ էին : Ար-
շալոյս մօրաքոյրս կուլար ու կ'ըսէր . « Եթէ միայն Ա-

րաս ողջ մնայ, մեր վրէժը կը լուծէ»։ Արան իր երկու տարեկան մանչուկն էր, զոր ձգած էր ամերիկացոց քով, իր միւս երկու զաւակներուն, 7 տարեկան Արչաւիւրին եւ 5 տարեկան Անահիտին հետ։ Աքսորէ վերադարձիս միայն տեղեկացայ թէ Արչաւիւրը իր տարեկից ուրիշ տղայոց հետ աքսորեր են մինչեւ Պազու Մատչն, անկէ յետոյ կորսուած է, իսկ Արան եւ Անահիտը տաճիկ ընտանիք մը պահած է։ Իրենց հօրաքոյրը կերպով մը ողջ մնացած ըլլալով, ետ կ'առնէ զիրենք եւ Ռուսերը Տրապիզոնը դըրուած ժամանակ, Ռուսաստան կը տանի իրենց հօրեղբօրը՝ Մաղլըմեանին։ Յետոյ կը վերադառնան Պոլիս եւ Յունաստան։ Վերջապէս Մարսէյլ կուգան ուր հօրաքոյրնին կը մեռնի։ Արան հիմա Գօուտօ դերձակ է, չի յիշեր իր ծնողքը եւ չեմ գիտեր թէ վրէժի մասին ի՞նչ կը խորհի։ Իսկ Անահիտը ամուսնացած է Ֆրանսացիի մը հետ։

Այրերը մեզմէ զատելն ետք, շարունակեցինք գողգոգթան։ Մեր անցած ճամբաներուն վրայ Թուրքերուն կը հարցնէինք թէ՛ տեսա՞նք արդեօք այր մարդոց խումբը։ Ոմանք կ'ըսէին թէ չապիկ վարտիքով տեսած են, ոմանք՝ «ձեզմէ բաժնուած գիշերը սպաննեցին»։ Չէինք հաւատար, դեռ չէինք կրնար երեւակայել թէ կրնար զանգուածային ջարդ տեղի ունենալ։ Եղածները մասնակի սպաննութեանց կը վերադրէինք, հաւատալով որ կատարուածը տեղահանութիւն էր։ Ճամբաները ծառերու վրայ փորագրուած հայերէն գիրեր կը տեսնայինք, որոնք մեզմէ առաջ զացողները փորագրած էին։ Հետզհետէ ատոնց ալ չհանդիպեցանք։ Կիները անշուշտ դուշակած էին թէ այրերը սպաննուած են, բայց ամէն մէկը իր մէջ կը պահէր սեւ մտածումը։ Կողոպուտը եւ յարձակումը շատցան։ Ուր որ գիշերէինք, շրջակայ Թուրքեր կուգային կողոպուտի։ Չէինք

արտօնուած քաղաքներու կամ գիւղերու մէջ գիշերել, այլ գետի մը եզերքը կամ ամալի տեղեր:

Գիշերը բացաստանի մը մէջ կը մնայինք: Մեր բեռները հազիւ վար դրած, գէնքի ձայներ լսեցինք եւ յանկարծ շրջապատուեցանք ձիաւոր չէթէներով: Սեւ հագուստ հագած էին եւ գլխանոց կապած էին Լազերու պէս, ըսին որ «մէջերնիդ եթէ կարել կամ ուէտ արհեստ գիտցող կայ, թող դատուի խումբէն, որ պէսպի քաղաք տանինք աշխատեցնելու»: Անոնք որ քաջութիւն ունեցան հեռանալու, յետոյ լսեցինք որ աշխատանքի տարեր են բայց այսօր ոչ մէկը մնացած է:

Հետեւեալ գիշերը դարձեալ դաշտի մէջ էինք, գիւղացիներ մեզի ուտելիք կը ծախէին, հաց, թան, պանիր, ջուր եւ այլն, փոխարէնը վերցնելով մեր ոսկիները եւ զարդեղէնները: Գաւաթ մը ջուրը թանկագին էր, ամբողջ օրը ծարաւէն կը տանջուէինք արեւին տակ քալելով: Այդ գիշեր հազիւ ճաշած, սաստիկ հրացանաձգութիւնը սկսաւ: Դարձեալ խուճապ: Սկսանք փախչիլ յառն ի խուռն պատերէ վեր բարձրացանք, իջանք, կրկին վազեցինք, ո՞ւր, ոչ ոք գիտէր: Վերջապէս հասանք հայկական աւերակ ու ամալի գիւղ մը: Թուրքերը մեզ լեցուցին մէկ-երկու մէթր բարձրութեամբ պատերով շրջապատուած տեղ մը: Իրենք դրան առջեւ կեցան, մեզ մէկիկ մէկիկ դուրս կանչեցին եւ մանրակրկիտ խուզարկելով, գետինը փռուած խոշոր լաթի մը վրայ հաւաքեցին ինչ որ ունէինք, դրամ, զարդեղէն, տոպրակ, հագուստ: Գեղեցիկ աղջիկներն ալ դատեցին: Անոնք որ ոչինչ ունէին, սպաննեցին: Կային խեղճ կիներ, որոնք, ընտանեօք անօթի չմեռնելու համար, ոսկիները կը կլլէին:

Այդ գիշեր, լսելով դուռսի խժգժութիւնները, ու-



Տիկ. Զեփիւռ Վէլտսեմ

նեցողը չունեցին դրամ տուաւ որ կեանքը փրկէ : Մասնաւորաբար գիւղացիք դրամ չունէին : Արշալոյսին, կողոպուտը դեռ չէր վերջացած : Խումբը ցիր ու ցան էր այդ օրը : Ինչ ունեցող գրեթէ չէր մնացած : Քաղցինք մինչեւ երեկոյ, յուսահատ, յողնած, անօթի, անքուն : Հետեւեալ օրերը կրկին նոյն յոգնութիւնը, նոյն սարսափները : Օրերը անդամ այլեւս չէինք հաշուեր :

Գիշեր մը ախուի մը մէջ էինք, ոստիկան մը 17-18 տարեկան Մշեցի գեղեցիկ աղջիկ մը բերաւ : Պղծուած էր : Կիները ուտելիք տուին : Աղջիկը լուռ եւ տխուր նստած էր : Մեծերը փափսալով կը խօսէին իրարու հետ : Հասկցայ որ առեւանգուած աղջիկ մըն էր : Կը գիտայի խեղճ անտէր աղջկան : Կ'ուզէի խօսիլ, մըխթարել զայն, բայց Արշալոյս մօրաքոյրս չթողուց որ մօտենամ այդ անմեղ զոհին : Ինչ քաղաքի սովորութեան համաձայն, կ'ուզէր որ ես անգիտակ մնամ այն ամէն բաներուն ինչ որ իմ տարիքիս աղջիկ մը պէտք չէր որ գիտնար : Մօրաքոյրս մտքէն չէր անցնէր որ

մենք ալ այդ ճամբուն վրայ ենք, մեզի ալ կրնայ պատահիլ նոյն դժբախտութիւնը :

Օր մը երբ կը քալէինք արեւին տակ, յանկարծ առաջին անգամ ըլլալով տեսանք կտրուած ոտք մը, սոսկումով դիտեցինք ու անցանք: Շշմած էինք եւ կը զգայինք որ օրէ օր դէպի մահ կը քալէինք: Քիչ անդին տեսանք մեռած կին մը, քովը ծծկեր մանկիկը որ կը տապաւրկէր իր մօր դիակին մօտ: Ազոռաներ կ'ելլէին ու կ'ընէին մեռնող կնոջ ու մանկիկին վրայ — հարիւր քայլ հեռու էր մեզմէ, բայց չէինք խորհեր դոնէ երթալ մանկիկը առնել, որովհետեւ արդէն անտանելի վիճակունէինք: Աւելի անդին երեկոյեան դէմ տեսանք ճամբուն եզերքը լքուած փոքրիկներ, մանկապարտէզի կարմիր դոգնոցը դեռ վրանին: Ա՛հ, երբէք պիտի չմոռնամ իրենց հիւժած, հալած մանկական դէմքերը, խոշոր մարած աչքերը, ցցուած ակոռները: Ճիշտ կմախքի կը նմանէին, աթօթութենէն ոտքի կանգնելու, ձայն հանելու անկարող, հազիւ կը շնչէին: Մեր ուտելիքէն տըւինք ու անցանք: Անկէ անդին սկսանք աւելի յաճախ հանդիպիլ դիակներու ճամբաներու վրայ եւ դետերու եզերքը: Անոնք ուռած էին եւ անհամար ճերմակ որդերով ծածկուած: Հողը դիակին շուրջը երկու մէթրի վրայ շուրջանակի իւղոտած ու սեւցած էր: Օդը անշունչն էր: Տարիներ ետք, ազատելէս ետքն ալ, ամառատեն, բաց դաշտերու մէջ կը կարծէի թէ դեռ դիակներու նոյն հոտը կ'առնեմ:

Աքսորեալներու խումբը օրէ օր կը հալէր: Թանջը սկսաւ տարածուիլ: Ծարաւէն տանջուող ժողովուրդը դիակներով թուանորուած ջուրերը կը խմէր, ինչ որ գտնար կ'ուտէր, ամէն օր մեռնողներ կային: Զինուորներ չկային այլեւս մեր հետ, ժանտարմները քիչ էին,

երբեմն նոյնիսկ աներեւոյթ կ'ըլլային երբ շրջակայ թուրքեր մեր վրայ յարձակելու, կողոպտելու եւ այլչիկ փախցնելու կուզային, յետոյ նորէն մէջտեղ կ'ելլէին: Անոնք մեր խումբը նախապէս կը ծախէին դիւզացիներուն եւ կը հեռանային:

Օր մը անտասի մը եղերքէն յոյն դեղջուկ քահանայ մը դուրս ելաւ եւ ըսաւ. «Ձեզի պիտի ջարդեն, ինչպէս ջարդեցին ձեզմէ առաջ անցնողները: Տուէք ձեր զաւակները որ պահենք: Մի երթաք առաջ, ճարընէք պահուեցէք»: Տարօրինակ թմրութեամբ մը բռնուած էինք: Զի հաւատացինք յոյն քահանային: Բարոյական մեծ կորով ունեցող կիներ կային մեր մէջ, որ մեզ կը քաջալերէին, ինչպէս Արշալոյս մօրաբոյրս, նաեւ Տիկին Վարդուհի Սիւրմէլեանը, որ, հակառակ չորս փոքր զաւակներով բեռնաւորուած ըլլալուն, քաջաբար կը տոկար եւ սիրտ կուտար բոլորին:

Անմոռանալի սպաւորութիւն մը կրած եմ առտուները կատարած մեր աղօթքներէն: Այժայի եւ բացօդեայ տեղեր, երբ ժանտարմը մօտակայ դիւզ մը կ'երթար, հայ կիները շրջանակ կը կազմէին եւ փոքրերուս կ'ըսէին որ երգենք իրենց հետ. «Դուք անմեղ էք, թերեւս Աստուած ձեր ձայնը կը լսէ»: Աղջիկ ու տղայ կ'երգէինք «Տէր Ողորմեա» զոր աբսորէն սորվեցայ: Մեծերը ծունկի կուզային, այրած դէմքերով, թափած մազերով, չորցած ձեռքերնին վեր բարձրացուցած եւ լալազին կ'երգէինք բոլորս: Երբ «Աղլիս Հայոց աղատութիւն» կ'երգէինք, մեծերը հեկեկալով երեսնին հոգերուն կը քսէին, Աստուծմէ հրաշք մը սպասելով: Բայց Աստուած չլսեց մեզ: Այդ «Տէր Ողորմեան», որ այստեղ եկեղեցիին մէջ երգուած եղանակը չէ, ես հիմա ալ շատ անգամ առանձին կ'երգեմ ու կուլամ մեր սըր-

բայցած նահատակները յիշելով :

Հասանք Երզնկա , ուրկէ բոլոր Հայերը աքսորուած էին : Մեզ քաղաքէն հեռու Հայոց գերեզմանատան մօտ դաշտի մը մէջ նստեցուցին : Ժողովուրդը ծարաւ ու անօթի էր : Մէկ աղբիւր կար , բայց անկարելի էր մօտենալ , այնքան մեծ էր բազմութիւնը : Տեսայ 14-15 տարեկան հայ տղայ մը զոր ժանտարմը զարկած էր սրտէն աղբիւրին մօտ , եկաւ մօրը գիրկը ինկաւ : Մայրը ձայն չհանեց , լալով գրկեց զաւակը որ քիչ ետքը մեռաւ :

Հետեւեալ օր էր դրումցի աքսորեալներ եկան : Բեռ եւ վրաններ ունէին տակաւին : Երզնկայէն ելլալով միւս օրը հասանք Քէմախ : Այնտեղի Հայերն ալ աքսորուած էին : Քիչ հեռու Եփրատ գետը տեսանք , որուն եզերքէն ճամբանիս շարունակելով մտանք անտառ մը : Գիշերը վրայ հասաւ . կողոպտիչներն ալ միասին : Առաւօտուն կրկին ճամբայ ելանք : Թուրքերը , երբ կուգային աղջիկներ առեւանգելու , կը մտնէին խումբին մէջ , աջ ու ձախ հարուածելով կը քաշէին , դուրս կը հանէին խեղճերը եւ կը նետէին զանոնք ճիւղ , ջրիի կամ էջու մը վրայ եւ կը տանէին : Օր մը երբ աղջիկ մը կ'առեւանգէին եւ մայրն ալ կուլար ու կ'ողբար , առեւանգիչ Թուրքը ուզեց որ մայրն ալ միասին տանի , բայց հերոս կինը որ Կիրասոնցի էր , ըսաւ . « Իմ ազգս ուր որ մեռնի , ես ալ այնտեղ թող մեռնիմ » : Յետոյ լսեցի որ խենդեցած եւ մեռած էր , իսկ իր աղջիկը այսօր ողջ է եւ ազատուած :

Օր մըն ալ մեղ բերին Եփրատին եզերքը : Դիմացի եզերքը պէտք էր անցնէինք սնտուկի նման տապաններով : Նաւաւարը կը վարէր սնտուկ-նաւը ձողով մը : Գետին մէջտեղը կը սկսէր կողոպուտը : Կուտային խեղճ հայ կիները ինչ որ ունէին : Այնտեղ տեսայ հայ

կին մը որ դետին մէջ մտաւ հանդարտօրէն, խաչ հանեց եւ սկսաւ առաջանալ: Ըսին որ անձնասպան պիտի ըլլայ: Ոչ ոք փորձեց ազատել: Գիտէին որ այլեւս մահը փրկութիւն է: Այդ կինը հոսանքին մէջ աներեւոյթ եղաւ: Երիտասարդ կին մը ինծի բերաւ գրկի մանկիկը ըսելով «Նետէ ջուրը, ես չի կրցի» — «Ես ալ չեմ կրնար» ըսի: Եփրատի վրայ խիստ շատ էին փոքր տղոց ուռած դիակները:

Ակն քաղաքին կը մօտենայինք: Մեր ճամբուն վըրայ աքսորականներու կը հանդիպէինք եւ Կիրասոնցիներու մասին տեղեկութիւն կը հարցնէինք: Մինչեւ Ակն ոչ ոքէ տեղեկութիւն ունէի: Յանկարծ հանդիպեցայ Կիրասոնցի կնոջ մը, որ ըսաւ. «Մայրդ քիչ անշին կը գտնուի իր տղոց հետ»: Խենթի պէս սկսայ վազել ցոյց տուած կողմը, գտնելու համար մայրս, եղբայրներս եւ քոյրերս, որոնցմէ տարիէն աւելի էր որ բաժնուած էի: Վերջապէս մայրս տեսայ հեռուէն, ոտքերը բոպիկ, դանդուր ու սեւ մազերը թափած, հագած կարճ գիշերանոց մը միայն: Վազելով ինկայ թեւերուն մէջ ու գրկուեցանք կարօտով: Քոյրերս եւ եղբայրներս համբուրեցի բայց բնաւ չի հարցուցի հօրս մասին: Կը գուշակէի որ միւս այրերուն ճակատագիրը ունեցած է: Մայրս ալ ոչինչ ըսաւ: Իմ ետեւէս հասան Արշալոյս եւ Մարիամ մօրաքոյրերս: Մայրս պատմեց թէ ինչպէս 5 ձի բեռնաւորուած ճամբայ ելեր են եւ երկու օր ետքը թուրքերը ձիերը բեռներով յափշտակեր են, հայրս բոլոր այրերուն հետ կարգի շարած, ձեռնակապերով տարած սպաննած են Կիրասոնէն երկու օր հեռու Իքիսու ըսուած տեղը:

Մայրս գիշերանոց մը գներ ու հագեր էր: Բարձրահասակ նուրբ կին էր եւ այդ կարճ գիշերանոցով, թափած մազերով, բոպիկ ոտքերով, տարօրինակ ե-

րեւոյթ ունէր: Ակն քաղաքին Եփրատի եղերքը, բլուրներու կողին վրայ փռուած այգիներուն մէջ էին Կիրասոնցի աքսորականները: Այդտեղ հիւանդ պառկած տեսայ շատեր, ինչպէս ընկերուհիներէս Արմենուշ Կալօնեանը եւ Հերանուշ Պարոնվարդեանը: Առաւօտուն երբ ճամբայ պիտի ելլայինք, տեսայ նոր հարս մը որ երկունքի մէջ էր: Կիները շուրջը բոլորուած էին: Ժանտարմը կ'աճապարէր, վերջապէս կ'ինը ծնաւ իր առաջին անբախտ զաւակը, բայց ժանտարմը խարազանելով ոտքի հանեց ամէնքը. կ'նոջ թեւերը մտան ու ճամբայ ելանք: Այդ սիրուն կ'ինը քանի մը օրէն մեռաւ, նաեւ մանկիկը:

Կարծէք թէ մայրս ինծի կը սպասէր որ հիւանդանայ, նաեւ եղբայրս Գուրգէնը, երկուքն ալ թանջքէ (տիղանթէրի) կը տառապէին, բռնուողը դատապարտուած էր մեռնելու: Հետեւեալ գիշերը դետի մը եղերքը բացաստան մը հասանք: Նորէն խումբին մէջ շշուկներ սկսան: Մայրս հին լաթեր փաթթեց դլուխս եւ զիս խումբին ծայրը, պառաւ կ'նոջ մը մօտ պահեց: Զգացի որ վտանգ մը կը սպառնայ: Կծկտեցայ պառաւ կ'նոջ քով: Պահ մը ետքը լսեցի հեռուէն որ կ'ին մը կը պողայ թէ «Ես աղջիկ չունիմ»: Զինքը կը ծեծէին, մայրս էր: Կիրասոնցի Քացախենց տղան զիս մատնած էր ինքը ազատելու համար: Թուրքերը զիս չգտնելով հեռացան, մայրս մուծին մէջ եկաւ զիս գտաւ, երբ հարցուցի թէ զի՞նքն էր որ կը ծեծէին, «ոչ, ուրիշն էր» ըսաւ: Երբեմն թուրք գիւղացի կ'իներ կ'ողէին տանիլ քոյրերս, որոնք շատ սիրուն էին: Մայրս կը մերժէր «Ես ուր որ մեռնիմ, տղաքս ալ այնտեղ թող մեռնին» կ'ըսէր:

Կիրասոնի մէջ նոյնպէս թուրք դրացիները ուղեր

են պահել քոյրերս, բայց հայրս չէ տուած : Ծնողքս եթէ կարենային գուշակել պատահելիքը, թերեւս չմերժէին : Արշալոյս մօրաքոջս ները, Տիկին Վառեակը, երբեմն կը յուսահատէր եւ ամերիկացիներուն յանձնած երկու զաւակներուն սիրոյն, կ'ուզէր երթալ սպասուհի ըլլալ Թուրքերուն, բայց անման Արշալոյս մօրաքոյրս խստիւ կ'արգիլէր : Մեծ ստորնութիւն կը համարէր Թուրքի տուն երթալը ունէ պատճառով : Գացողները մեզի համար ուրացողներ էին : Տիկին Վառեակը մնաց մեր մէջ եւ յետոյ Թուրքերը զինք գլխատեցին, իսկ զաւակները անհետացան, հաւանաբար Տրապիզոն մնացած միւս փոքրիկներուն հետ Թուրքերը ծովամոյն ըրած կամ թունաւորած էին զիրենք :

Ամիսը անցած էր որ աքսորի ճամբաներուն վրայ էինք : Մայրս կը տկարանար, Գուրգէնը այլեւս չէր կրնար քալել : Ոչ ուտելիք կրնայի ճարել իրենց համար, ոչ մաքուր ջուր : Խեղճ եղբօրս ու մօրս աղտոտ հագուստները կը լուայի երբ ջուրի մը հանդիպէինք : Զորցնելու ժամանակ չկար, թաց լաթերը գողիս մէջ կը քալէի : Մայրիկիս համար Թուրք գիւղացիներէն էչ մը վարձեցինք օրական հինգ ոսկիով : Մայրս օրէ օր խեղճացած տղու մը երեւոյթը կ'առնէր, անդադար կը կրկնէր որ մաղերը կտրենք, վար արնենք էչէն եւ ճամբուն եզերքը ձգենք զինքը : Բոլոր ուզածներն ալ անկարելի էին, ոչ մկրատ կար, ոչ սանտր, ոչ ալ կրնայինք զինքը լքել : Ամէն հոգ իմ վրաս մնացած էր, մայրիկէս յոյս չկար այլեւս : Արշալոյս եւ Մարիամ մօրաքոյրերուս հետ իրիկունները միայն կրնայինք միանալ, երբեմն պատառ մը ուտելիք ունենալով, երբեմն անօթի պառկելով գետինը, հողին, քարին վրայ :

Ամէն գիշեր բորենի Թուրքերը կուգային մեզ կո-

ղոպտելու եւ կիներ առեւանգելու : Յաջորդ առտու մեր ճամբուն վրայ կը տեսնէինք առեւանգուածներու դի-
ակները : Տեսած եմ ցիցերու անցուածներ ատոնց մէջ :
Օր մը տարիքոտ Թուրք մը 3-4 տարեկան հայ աղջնա-
կի մը թեւէն բռնած տարաւ անդունդի մը եզերքը ,
փայտով մը սպաննեց , յետոյ կիցի հարուածով նետեց
անդունդին մէջ : Մենք սահմուկած կը դիտէինք այս ո-
ճիւրները առանց ինքնապաշտպանութեան փորձ ընելու :
Մինչեւ այսօր դեռ կը մտածեմ թէ ի՞նչ թմրութիւն էր
պատած մեր հոգին : Կրնայինք սպաննել մեզի ընկե-
րացող մէկ կամ երկու ժանտարմները , թերեւս աւելի
քիչ տառապէինք եւ աւելի շատ թիւով ազատէինք :

Հազիւ վեց օր էր որ մայրս , քոյրերս եւ եղբայր-
ներս դատած էի : Առտու մը երբ արթնցայ , Գուրգէնը
անշարժ պառկած էր քովս եւ բերնէն դեզին ջուր կը
վազէր . մեռած էր : Մայրիկիս ձայնեցի , գլուխը դար-
ձուց եւ Գուրգէնին նայելով՝ «Նրանի քեզի ասլան
դաւակս» ըսաւ : Ոչ լաց , ոչ յուզում : Ժանտարմները
կ'աճապարէին մեզ ճամբայ հանել : Չէինք ուղեր եղ-
բօրս դիակը ձգել ու հեռանալ : Հայ կիներու դրամ առա-
ջարկեցինք որ թաղեն եղբայրս , ինչո՞վ ,ինչպէ՞ս պիտի
թաղէին , ոչ բահ կար , ոչ բրիչ : Այդ օրը մօրս համար
էչ կամ ջորի չգտանք , քաշքշելով մեզի հետ քալեցու-
ցինք : 37 տարեկան էր բայց ծեր կնոջ մը կը նմանէր :
Եթէ ուզէր կրնար Թուրքի մը տունը երթալ եւ մեզ ալ
իր հետը տանիլ , բայց շատերուն նման կը սոսկար
այդ գաղափարէն : Իրիկունը մայրս հաւանաբար զգա-
լով իր մահը , փոքրիկ գրպան մը տուաւ ինծի , պատ-
ուիրելով որ մարմնիս վրայ կապեմ , մէջը ազամանդ-
եայ օղերը մնացած էին եւ առետրական թուղթեր :
Լոնտոն գտնուած յոյն վաճառականի մը անունը տը-



Կիրասան. Գրիգոր Սիմիի դպրոցական երգչախումբը վարի կարգ, աչեն (նստած), առաջինը՝ Վիգորիա, կոստւած, Բ.ը՝ Սիրամուշ, գլխատուած, Գ.ը՝ Հերամուշ Յովիաննէտեան, առեանգուած եւ երեք ամիսէն մեռած, Գ.ը՝ Շնորհիկ, առեանգուած, Ե.ը՝ Սիրարփի Սալպագարեան, առեանգուած: Սիւնիին ետեւը, ձախէն աջ, Գ.ը՝ օցնական վարժուի, առեանգուած, Գ.ը՝ Սիրարփի Յիւհէրեան, առեանգուած:

Վերէն զէպի վար, Գ. կարգ, ձախէն, Մարիամ Վելտեան, Զեփիոսի պատմութեան մէջ յիշուած մոր-հարսը: Երրորդ կարգ, զէպի ձախ, երկրորդը, Արսէմ, քունատրուած: Մնացեալները, քիչ բացատրեալմբ, սպաննուած, առեանգուած կամ մեռած են տարագրութեան նամբուն վրայ:

*ւաւ, պատուիրելով սր երբ սղաաիմ, անոր դիմեմ: Ը-
սաւ նաեւ թէ ոսկի ապարանջանները, զօտին եւ ուրիշ
զարդեր ու դրամ հայրս Պանը Օթումանը յանձներ է,
որպէսզի երբ Սեբաստիա հասնին, ստանայ: Ուրիշ
Հայեր ալ թանկազին առարկաներ ու դրամ թողած*

էին բայց ոչինչ ստացան: Իրենք սպաննուեցան ու եւրոպական պանքան բոլորը իւրացուց:

Առաւօտուն մօրս համար ջորի մը վարձեցինք հինգ ոսկիով թուրք գիւղացիէ մը: Մայրս նստելու իսկ անկարող էր, ուստի գիւղացին մայրիկս պառկեցուց եւ կառեց ջորիին վրայ: Ճիշտ այդ պահուն մեր վրայ յարձակեցան Չազաներ: Ասոնք թրքացած Գուրտեր էին, արիւնարբու վայրենիներ: Չորեպանը ջորիին սանձը ձեռքս տուաւ եւ հեռացաւ կողոպուտին մասնակցելու համար: Կ'ուղէինք քալել, ջորին կը յամառէր ու չէր շարժեր, յուսահատութենէս կուլայի: Մայրս անտարբեր էր շուրջը անցած դարձածին:

Կէսօրին տեղ մը ծառերուն տակ նստեցուցին մեզ: Ես տղսց հետ ետեւ մնացած էի: Քանի մը ժամ վերջ տեսանք որ մայրս ճամբուն եզերքը, գետնին վրայ պառկած է, հայ կիներն ալ քովը կանգնած են, ըսին թէ մայրս մեռած էր: Չորս որբուկներս անտէր ու անտիրական, իր դիակը շրջապատած կուլայինք: Ժանտարմը եկաւ եւ հրամայեց որ առաջ անցնինք: Մերժեցինք մօրս դիակը անթաղ ձգելով հեռանալ, բայց խարաղանի հարուածները սկսան իջեցնել «Եւրուլըն, հայտէ»: Հեկեկալով սկսանք քալել, ճամբուն եզերքը ձգելով մայրս, գիշերանոցով, թափած մագերով, ոտքերը բոպիկ: Գուրգէն եղբօրմէս երկու օր յետոյ մեռած էր, ութ օր էր որ միասին էինք:

Խարբերդին երկու օր մնացած էր: Քալեցինք մինչեւ երեկոյ ուշ ատեն: Գտայ Արշալոյս մօրաքոյրս եւ ըսի որ մայրիկս մեռաւ: Ինքն ալ ըսաւ թէ «Մարիամ մօրաքոյրը մեռաւ»:

Առաւօտուն կրկին սկսանք քալել, ուժաթափ էինք եւ կմախացած: Թանջըր աւեր կը դործէր, բայց պէտք

էր քալել, լարուած մեքենաներու պէս քալել: Իրիկուան մօտ հասանք Խարբերդ, ուր հայկական զերեղմանատունը լեցուցին մեզ: Արդէն լեցուած էր աքսորականներով, հիւանդներով, մեռելներով: Գերեզմանները բարձ ընելով պառկեցանք եւ ապահով զգացինք, գոնէ պատով մը շրջապատուած էինք: Այդտեղ մեռաւ հօրեղբօրս աղջիկը, Մարիամը, որ քանի մը տարուան հարս էր: Ամուսինը զինուոր տարած էին եւ յետոյ սպաննած: Երկու սիրասուն փոքրիկները ճամբան մեռան:

Հետեւեալ օրը քարքարուտ լեռներէն բարձրացանք, յետոյ սկսանք իջնել: Օդը շատ տաք, քարերը տաք, ճամբան դժուար, մենք յոգնած, կ'իջնէինք լեռնի վար: Յանկարծ հեռուէն կապոյտ ծով մը տեսանք: Մերսէտէսը «Զեփիլոս քոյրիկ, Կիրասո՞ն եկանք» հարցուց ուրախութեամբ: Այդ անուշ կապոյտը տեսնելով յուզուած էի, ինչպէս բոլոր աքսորականները: Նոր ուժ եւ յոյս զգացինք մեր մարած հոգիներուն մէջ: Շատ խոշոր լիճ մըն էր, դիմացի եզերքը հազիւ կը նշմարուէր: Ըսին որ Կէօլճիւկն է: Դիակներով ծածկուած էր եզերքը, դիակները ուռած եւ որդնոտած էին: Մօտեցանք ջուրին, ամէնքս ալ ծարաւ էինք: Ոտքովս կնոջ մը դիակը մէկ կողմ հրելով տեղ մը բացի եւ խմեցի ապականուած ջուրը, ինչպէս խմեցին ուրիշներ ալ:

Ժամ մը քալելէ յետոյ հասանք նեղ կիրճ մը, ուրկէ սկսանք բարձրանալ: Լիճը կորսուեցաւ մեր տեսողութենէն, այդ օրը սովորականէն աւելի վախով դողով անցուցինք: Օգոստոսի սկիզբն էր, տաք այրող արեւ մը, կ'է քալէինք յոգնած, ցիր ու ցան, փշոտ արտերու մէջէն: Խուճբը հազիւ կրնար քալել, ոչ ոք կօ-

չիկ ունէր, քուրջներ ունեցողը կը փաթթէր ոտքերուն : Արաքսի քոյրս կուլար, Սմբատը եւ Մերսէտէսը ձեռք ձեռքի առաջ անցած էին, նաեւ Արշալոյս մօրաքոյրս : Հագուստներէս պատուելով Արաքսիին ոտքերը փաթթեցի . Մեզի հետեւող հայ գիւղացիներու խումբին մէջ մնացինք :

Այդ միջոցին շոտէ ճամբուն վրայ, ձիաւոր ժանտարմ մը մեզ դիմաւորելով պոռաց «ԱՖ կէլտի սիդէ, կէրի տէօնէճէքսինիդ» : Այլեւս թերահաւատ էինք, բայց դարձեալ յուզուեցանք : «Արաքսի, Կիրասոն պիտի երթանք» ըսի քրոջս ու լացի, չեմ կրնար բացատրել թէ ինչո՞ւ : Մայրս ու եղբայրս դեռ 2-3 օր էր որ մեռած էին, հայրս սպաննուած էր, մենք հիւժած չորս որբուկներ, պիտի դառնայինք հայրենիք, կարելի՞ էր այնքան ճամբան նորէն քալել :

Յանկարծ տեսանք ժանտարմներ, որոնք ճամբուն երկու կողմը սուիներով կեցած եւ անցքը դոցած էին : Խումբին կէսը, մեծ մասամբ քաղաքացի ժողովուրդ, անցած էր : Ասոնց հետ՝ Արշալոյս մօրաքոյրս, Սմբատը եւ Մեսէտէսը : Ես եւ Արաքսին մնացինք ետեւի խումբին մէջ : Ծեր կին մը, որ աղջիկէն դատուած էր, վազելով ուղեց անցնիլ, բայց տեղն ու տեղը սուինահար ըրին : Միւս կողմէն Քուրտեր կը հասնէին իրենց կիներուն հետ : Հասկեցանք որ ծուլակի մը մէջ ինկած ենք : Քոյրս շալկեցի եւ փորձեցի առաջ անցնիլ : Թուրքի մը դրամ խոստացայ աղաչելով որ թոյլ տայ մեզի առջեւի խումբին միանալ : «Հիմա ոսկի մը տուր» ըսաւ, դրամ բնաւ չունէի : Տրապիզոնցի Հնչակեան դործիչ Պր. Խուչպուլեանին քրոջմէն ոսկի մը խնդրեցի : Այդ աղնուահոգի եւ սրբացած կինը տուաւ ոսկին, տարի Թուրքին տուի, բայց անիկա ոսկին առնելով, զնաց ուրիշները կողոպտելու :

Մեզ հետզհետէ շոսէ ճամբէն շեղեցնելով բլուրներուն ստորոտը քշեցին, մէկ կողմէն կողոպտելով: Քոյրս միշտ շալակս էր: Մտածեցի պահուել թուփի մը տակ: Զաղա մը եւ կին մը մօտեցան, մարդը խանչերը բարձրացնելով հրամայեց մեր հագուստները հանել: Սկսանք հանուել: Արաքսին ըսաւ. «Զեփիւռ քոյրիկ, վարտիքս ալ կ'ուղեն կոր»: Հանէ ըսի եւ տուի իրենց, իսկ իմս մնաց վրաս: Մնացեալ հագուստներս կինը կողովին մէջ լեցուց եւ տարաւ: Քոյրս կրկին շալակս առի: Ծուրջս կին ու աղջիկ ամէնքն ալ մեղի պէս մերկացեր էին, կը լսէի հարուածներ եւ ճիչեր: Մահուան վտանգին մէջ էինք: Կը ջանամ փախչիլ, փայտով կը զարնեն քրոջս: Խեղճը պոռալով ինծի կը սեղմուի, երկու քայլ եւս կը յառաջանամ, հարուած մը կ'իջնայ գլխուս, 17-18 տարու Քուրտ մըն էր զարնողը: Աչքերս կը մթնեն, գետին կ'իյնամ, արիւնը կը հոսի գլխէս: Զեմ գիտեր քանի վայրկեան ետքը աչքերս բացի եւ փորձեցի նստիլ: Նոյն հրեշը որ կանգնած էր գլխուս վրայ, «Վայ կեալուր, սէն տահա կէպէրմէտին» պոռալով զարկաւ ճակտիս, ուսերուս: Հասկցայ որ անոնց նպատակը մեզ ամբողջութեամբ ջարդել էր, երեսիս վրայ պառկած ինկայ մեռելի պէս: «Արաքսի, սուտ մեռել եղիր, շունչ մի առներ» փսփսացի քրոջս: Հընձուած արտի մը մէջ էինք, արեւը սաստիկ տաք, մեր մորթը կ'այրէր, արիւնը կը հոսէր գլխէս, բայց բնաւ չէի շարժեր: Զազա կիներ մագերս կը խառնշտկէին, ոսկի կամ դարձ փնտռելով: Կին մը մէջքիս կապը քաշեց եւ առաւ այն դրպանը որ մայրս ինծի յանձնած էր: Ոտքիս փաթթած քուրջերը եւ գուլպայի կտորները կը պրպտէին:

Քանի մը ժամեր անցան, աղմուկը նուազեցաւ,

բայց բորենիները կը շրջադայէին, մեռելներու բերանը կը ճեղքէին ոսկի փնտուելով: Մթնելու վրայ էր, կամայ մը գլուխս բարձրացուցի, տեսայ որ ամէնքն ալ մեզի պէս մերկ ու արիւնլուայ փռուած են, ոմանք կը տքան, ոմանք լուած են բոլորովին: Կը լսեմ որ բորենիները հողեւարքները կը սպաննեն, կը լսեմ մեր սիրելի նահատակներուն վերջին հեծիւնները, կը լսեմ աղջնակի մը ճիչը: Կիրասոնցի 10-11 տարու Զուարթն է, հօր մօր մէկ հասիկ, ոսկի մագերով, գեղեցիկ Զուարթը: Քուրտեր շուրջը հաւաքուած լիտի առաջարկներ կ'ընեն: Ահա ուրիշ ծանօթ ձայն մը: Կին մըն է, արիւնով, ցեխերով ծեփուած, կ'աղաչէ. «Ալլահ աչկընա պէնի էօլտիւրմէին»: Օր. Արմենուհի Մնացականեանն է, Տրապիզոնցի: Յոյս մըն էր ինծի համար, եթէ ան երթայ, ես եւ քոյրս պիտի մնանք այդ ամայի անծանօթ վայրը, դիակներու մէջ: Կը նստիմ ես ալ եւ կը պոռամ «Պէնի տէ կէօթիւրիւն»:

Զաղա մը կը մօտենայ, կը քաշուիմ մերկութենէս: Նահակներուն վրայէն կը քաշէ պատուած, արիւնոտ քուրջ մը կը բերէ ինծի, կը բռնեմ կուրծքէս կախած եւ ոտքի կ'ելլամ: Քոյրս ալ կ'ելլէ: Զագուկիս մէջքը եւ կոնակը մատ մատ ուռած եւ կապուտցած են փայտի հարուածներէ: Կ'երթանք Արմենուհիին քով, ուժ կ'առնենք իրարմով: Նա աւելի չափահաս է, 26-28 տարեկան: Ահա Տիկին Վարդուհի Սիւրմէլեանին 12 տարու աղջնակը եւ 10 տարու մանչուկը դուրս կուգան իրենց մօր, եղբօր եւ քրոջ դիակներուն տակէն եւ մեզի կը միանան: Էրզրումցի տղայ մը 13 տարու, վիզէն վերաւորուած եւ գլուխը մէկ կողմ հակած, կը մօտենայ մեզի: Ահա ուրիշ մը նոյն տարիքով, դաստակէն վերաւոր, կը սահի դիակի մը տակէն եւ մեզի կը միա-

նայ : Կ'ըլլանք եօթը հողի , իսկ Զուարթը չենք տեսներ , առած տարած են : Ի՞նչ եղաւ արդեօք հրեշտակը , հըրէշներուն ձեռքը :

Քուրտերը իրարու հետ խօսելով կը յառաջանային , մենք ալ անոնց ետեւէն կ'երթայինք , անցնելով մեր սիրելի նահատակներուն քովէն , կը դգուչանայինք որ չկոխենք իրենց վրայ : Լուսինը անտարբեր կը լուսաւորէր սահմակեցուցիչ տեսարանը : Սաստիկ տխուր էինք . ոչ , ապուշ դարձած էինք , ոչինչ կը գլխայինք այլեւս : Արմենուհիին մայրն ալ այդտեղ սպաննուեցաւ , իսկ ինք աջ դէմքէն եւ կողէն խանչէրով վիրաւորուեցաւ : Անկապ բառեր կ'ըսէինք , «Մնաք բարեաւ» կ'ըսէինք մեռելներուն , «Երանի ձեզի որ աղատեցաք» : Անոնք խաղաղ պառկած էին կոշտ հողին վրայ որ իրենց արիւնովը թրջուած էր : Լուսնին տակ ոմանք մէկ կողմին , ոմանք կռնակի , ոմանք երեսի վրայ , ոմանք ալ իրարու վրայ : Ծանօթներ փնտուելով կ'անցնէինք սարսափահար : Կիսամեռ ծեր կին մը մեզ տեսնելով , ջուր , ջուր , ջուր կ'աղաղկէր , ի՞նչ կրնայինք ընել : Կային դեռ հռնդացողներ ալ : Տեսանք էրզրուամցի աղջիկ մը ոտքէն վիրաւոր , կէս մը նստած , սեւ մազերը ուսերուն վրայ , ճերմակ շապիկը հրաշքով վրան մնացած : «Զեմ կրնար քալել , ըսաւ , դուք գացէք» : Ստիպուած՝ լքեցինք զինքը :

Այդպէս հեռացանք մեր անմոռանալի նահատակներէն եւ հասանք գետակի մը եզերքը : Զաղաները մեզի ըսին , «Կեավուրներ , արիւննիդ մաքրեցէք» : Մըտանք գետակին մէջ սկսանք անյադաբար խմել : Արմենուհին աճապարել տուաւ մեզ : Քուրտերը հեռացած էին , կ'երեւայ թէ մեր վիրաւոր , հիւժած վիճակը զիրենք զգուցեցուց : Այլեւս մեզի համար կը սկսէր նոր

կեանք մը, որուն առաջին առաւօտն էր :

Արտին ծայրը քրտական գիւղ մը կար : Պէտք էր անցնիլ այդ գիւղէն : Մեր երեւոյթը զարհուրելի էր, մերկ, արնաշաղախ եւ վիրաւոր : Երբ գիւղին մէջէն կ'անցնէինք, զազա լակոտներ մեզ կը քարկոծէին եւ դամբուր մեր վրայ կը վազէին : Ծնչասպառ կը վազէինք : Քուրտ կիներէն մէկը Տիկին Վարդուհին սիրուն աղջնակը ուզեց, տուինք, ուրախանալով որ գտնէ խրճիթի մը մէջ պիտի ապրի եւ չոր հաց մը պիտի ուտէ : Մնացինք վեց հոգի :

Կէս օրին հասանք Քուրտերու մեծին տունը, որ 50 մէթր երկարութեամբ արահետի մը ծայրն էր : Քանի մը զազա Քուրտ խոտին վրայ ծալլապատիկ նստած կը ճաշէին, չհամարձակեցանք իրենց մօտենալ : Արմենուհին ըսաւ որ խեղճուկ երգեր երգենք որ գութերնին շարժենք, բայց ոչ խելք կար, ոչ տրամադրութիւն յիշելու եւ երգելու համար : Սկսանք ըստ բախտի մը ուրտալ կամ աւելի ճիշտը մեր ցաւերէն կազմուած հեկեկանքներ արձակել : Քիչ ետքը Քուրտերէն մէկը պըղինձէ աման մը, լաւաչ եւ փայտէ դգալներ բերաւ : Չեմ յիշեր թէ ի՞նչ ըրինք, լռեցի՞նք թէ շարունակեցինք երգել ի տես հացին, կը յիշեմ միայն որ թան էր բերածը : Անյազօրէն դգալեցինք թանը : Այլեւս բոլորովին մոռցած էինք մեր ճաշասրահները, սեղան, աթոռ, պնակ, գաւաթ, դանակ, պատառաքաղ, անձեռոց եւ դարձած էինք կիսավայրենիներ, իրենց պէս, եւ, մեր արտաքին երեւոյթէն դատելով, իրենցմէ աւելի : Երբ վերջացուցինք, աղային տունէն մէկը եկաւ Արմենուհին կանչեց : Քուրտ կին մը, որուն ամուսինը զինուոր դացած եւ ինք մինակ մնացած էր, կ'ուզէր զինքը պահել : Վախը զիս պատեց, մեր հինգ հոգինոց խոսմբին մեծը այլեւս ես մնացի :

Արտի մը մէջ աշխատող մշակներէն պատանի մը , կողով մը բեռցած մեր մօտէն կ'անցնէր : Իր տխուր երեւոյթէն Հայ ըլլալը դուշակեցի : Հարցուցի թէ Հա՞յ է : «Կէօլճիւղի Հայ եմ» փախաց : Ըսի որ «Երէկ մեզմէ 6000 հոգի ջարդեցին , մենք միայն ողջ մնացինք» : Տղան կամաց մը մէջքի գունաւոր դօտին քակելով ինծի նետեց «Քոյրիկիդ փաթթէ» ըսելով , եւ զգոյշ հեռացաւ մեր մօտէն : Իրիկուան դէմ վերջապէս մեզ ալ կանչեցին աղային տունէն : Քուրտ կնոջ երեւոյթ ունէր կանչողը , մեզ տարաւ ախոռ մը ուր կովեր կային , փայտէ սանդուխ մը կոթնցուց առաստաղէն բացուած ծակին եւ ըսաւ որ բարձրանանք : Կարգաւ ելանք վեր , ինքն ալ մեր ետեւէն եկաւ , ըսաւ որ ինք ալ Հայ է , աղային տունը կը ծառայէ : 30-35 տարեկան սիրուն կին էր , Կէօլճիւղի գիւղերէն : Պատմեց որ այդ կողմերուն Հայերն ալ ջարդած եւ լիճը թափած են :

Ախոռին մէջ խոտի դէզեր կային եւ պատուհանի պէս ծակ մը , առանց ասպակիի : Պառկեցանք խոտերուն վրայ : Երբ լոյսը բացուեցաւ , զգուշութեամբ վար իջայ , տեսայ հայ կինը որ կաթով լեցուն աման մը մօտեցուց բերնիս , շուրջը զննելով որ մարդ չտեսնայ մեզ : Գլխուս վէրքը սկսած էր ցաւիլ , աղբիւր դացի եւ սկսայ մաքրել : Ծեր Քուրտ մը մօտեցաւ ու թուրքերէն հասկցուց թէ ո՞ւրտեղացի եմ , քանի՞ տարեկան եմ , ամուսնանալ չե՞մ ուզեր : Ըսի որ իմ տարիքիս աղջիկ մը չամուսնանար եւ քրոջս հետ ախոռ վերադարձայ : Կէսօրին հայ կինը կերակուր բերաւ մեզի : Ճաշէն ետք իր հետը Հանրմին դացի : 55-60 տարեկան նիհար կին մըն էր , գունաւոր էնթարի հագած եւ ճերմակ լաչակով գլուխը փաթթած , այնտեղ էր երկրորդ Հանրմն ալ 35-38 տարեկան : Գրեթէ մերկ էի : Իրենց ամուսինին

հին վարտիքը տուին եւ վրայէն ալ շապիկի նմանող քուրջ մը: Որոշեցին որ պլլղուրի ալօրիքը դարձնեմ: Հայ կինը տեսնելով որ իմ ուժէս վեր է այդ աշխատանքը, ինծի օգնեց եւ պլլղուրը միասին քաշեցինք: Ժամ մը յետոյ Հանրմը կրկին զիս կանչեց եւ առաջարկեց կրօնափոխ ըլլալ: Ընդունեցի, շուրջի փոքրիկներուս եւ իմ կեանքս փրկելու համար: Ըսաւ որ նախ հայերէն ալօթք մը ընեմ, «Հայր Մեր»ը արտասանեցի, յետոյ սորվեցուց իսլամական հաւատամքը «Էջէտիւ էն լա իլահէ» որմէ ետք վարի բակը կեցած խումբ մը մարդիկ ցոյց տալով ըսաւ «Այս մէկը Նատր աղան է, քեզ եւ քոյրդ միասին կ'ողջ առնիլ տանիլ, լաւ մարդ է, երկուքիդ համար կօշիկ եւ հագուստ պիտի գնէ»: Աղբիւրին քով հետս խօսող ծերունին էր: Շատ խնդրեցի որ մնամ իրենց քով, բայց չուզեց պահել: Կրկին ախոռ երթալով ամբողջ գիշերը լալով անցուցի: Յաջորդ առաւօտ զիս վար կանչեցին: Հանրմին ամուսինը եւ Նատր աղան իրենց ձեռքերը կամարի նրման իրար միացնելով, կեցած էին: Ըսին ինծի որ տակէն անցնիմ: Քրոջս ձեռքէն բռնած անցայ այդ կամարին տակէն: Մեզ ձիու մը վրայ նստեցուցին, կապոյտ չարչաֆ մը ձգեցին վրաս, երեսիս ալ փէչէ մը: Ծերունին ձիուն սանձը բռնեց ու ճամբայ ինկանք: Ժամանակ իսկ չտուին որ երթամ հայ երախաներուն մնաք բարով ըսեմ:

Կէս օրին անտառակ մը հասանք: Քրտական տարազով կին մը ուտելիք բերաւ եւ գէշ թուրքերէնով մը ինծի հասկցուց որ Յոյն էր: Սաստիկ տխուր էի, հին յիշատակներ կուգային աչքիս առջեւ, մեր երջանիկ օրերը, ծնողքս, եղբայրներս, քոյրս: Հիմա մնացեր էինք երկուքս, անպաշտպան ու առանձին, վայրենի-

ներու մէջ, անոնց քմահաճոյքին խաղալիք, ամէն վայրկեան սպաննուելու սարսափին տակ: Ճամբուն վրայ ամենամեծ անակնկալը ունեցայ: Քուրտ մը եւ հայկական շալով կլին մը որ էշու մը վրայ նստած էր, կը ճամբորդէին մեր առջեւէն: Արմենուհին էր զոր ամուսնացուցեր էին այդ մարդուն հետ: 50-55 տարեկան տխեղծ, չափազանց աղտոտ, գլուխը գոնջ վայրենի մը: Քուրտերը հասկցուցին թէ քիչ ատենէն Յոյներն ալ պիտի ջարդեն: Բաժանման վայրկեանը եկաւ: Արմենուհին ուրիշ գիւղ մը պիտի բնակէր: Լալով բաժնուեցանք, դժբաղդ սզգի մը ամենադժբաղդ դաւակներն էինք: Վարդի պէս, շուշանի պէս մաքուր, հազարաւոր մեր աղջիկները դազաններու ձեռքը մնացեր էին: Ձիուն վրայ, քոյրս թեւերուս մէջ սեղմած, արցունք կը թափէի: Իմ հինգ տարեկան քոյրիկս իր տարիքէն չսպասուած լրջութեամբ ձայն էր հաներ, գիտէր որ մեր տունը չենք այլեւս, կը դգար որ դարհուրելի աղէտի մը զոհերն ենք, պէտք էր խելօք եւ լուռ մնալ:

Վերջապէս հասանք խրճիթ մը, 19-20 տարեկան սիրուն աղջիկ մը կանգնած էր դրան առջեւ: Հասած էինք մեր բնակարանը, փոքրիկ սենեակ մը, տանիքը հող, գետինը հող, մէկ անկիւնը օճախ, մէկ անկիւնն ալ, իբր անկողին, քուրջերու կոյտ մը: Աղջիկը որ էմիշ կը կոչուէր, մարդուն աղջիկն էր: Քիչ յետոյ խրճիթ մտան երկու տղաքը, 14 եւ 16 տարեկան, Հագւրը եւ Ապտուրահման: Էմիշը գետնին վրայ լաթ մը փռելով, լաւաչ, թան, սխտոր, վարունգ եւ չոր թուփի ձուածեղ բերաւ: Այդ միջոցին եկաւ նաեւ իր մեծ արդան Ահմէտը, երեք տարեկան աղջնակին հետ: Գիշերը բակին մէջ եւ տանիքը պառկեցան: Քոյրս եւ ես նոյնպէս: Հետեւեալ օրը մարդուն եղբօր կինը մեզ պար-

տէ՛ղ մը տանելով, արմատէն խուզեց մեր մազերը, որոնց մէջ առատ ոջիլ, հող ու չորցած արիւն կար: Գլխուս վէրքը խոր էր, կը ցաւէր եւ կ'ուռէր, ոչ մէկ խնամք կամ դեղ ըրին: Հետզհետէ տկարացած էի եւ անկողին ինկայ: Ձեմ գիտեր թէ որքան ատեն մնացի անկողին, մէ՞կ թէ երկու ամիս, միայն կը յիշեմ քըրոջս ուրուականը, կարծուկ հագուստ մը հագած, բուպիկ ոտքերով, խուզուած գլուխով, որ Հայերէ կողոպտուած կապոյտ սրճամանով մը ինծի ջուր կուտար: Նաեւ կը յիշեմ թէ ինծի հարցուցին «Ո՞ճա իստէրսի՞ն, եօքսա բաբազ»: Քրիստոնեայ ըլլալու վրտանդը այնքան խոր մտած էր մտքիս մէջ որ ըսի թէ խօճա կ'ուզեմ, եւ կը յիշեմ որ երկար ճերմակ մօրուքով, վերէն վար ճերմակ հագած քուրտ խօճա մը գըլխուս վերեւ զուրան կարդաց: Կը յիշեմ նաեւ որ օր մը պատէն կախուած չուանով անձնասպան ըլլալ ուզեցի, բայց այնքան տկար էի որ չի կրցայ ոտքի ելլել: Վերջապէս առողջացայ, բայց ոտքի կենալու կարողութիւն չունէի: Զիս կը զրկէին կովերը արածել, կամ վայտ եւ ցախ հաւաքել: Երբ բեռցած կը վերադառնայի, հազիւ ոտքերուս վրայ կենալով, էմիչին եղբայրները զիս կը քարկոծէին: Ծնողացս, քոյր եւ եղբայրներուս եւ բոլոր կորսնցուցած սիրելիներուս կարօտը եւ ցաւը կ'այրէր հոգիս, բայց կ'արգիլէին որ լամ: Փայտ եւսայլն բերելու համար թուրի մը ետեւ կը մտնէի, քոյրս ալ պահապան կը կեցնէի եւ կուշտ ու կուռ կուլայի:

Հազիւ ես ոտքի ելած էի, հիւանդացաւ էմիչը, քանի մը օր ետքն ալ հայրը: Դեռ չհիւանդացած պատմեց որ հայ կին մը ազատեր է: Ժանտարմ մը հայ կին մը առեր է իբրեւ կին, բայց իր թուրք կինը այնքան կուռեր է հետը որ, որոշեր է հայ կինը ամայի տեղ մը տանելով խեղդել: Ճիշտ այդ պահուն էմիչին հայրը

այդտեղէն կ'անցնի եւ արդեւք կ'ըլլայ : Քանի մը ամիս յետոյ տեսայ այդ կիներ, վզին վրայ դեռ մնացած էին ճանկերու սպիւները :

Էմիչ առողջացաւ բայց հայրը օրէ օր ծանրացաւ : Հիւանդութիւնս թիֆիւս էր եւ վարակած էի զիրենք : Մենք երիտասարդ ըլլալով տոկացինք, իսկ մարդը հոգեւարք էր : Իր կիներ որ Պագո Մատէն կը գտնուէր, եկաւ : Ամուսինը շարունակ կը խռխուար : Երեկոյեան դէմ, կիներ եւ եղբօր կիներ քուրջով մը հիւանդին բերանը խցեցին եւ մահը փութացուցին : Մեռնելէն ետքն ալ սկսան լալ ու կոծել : Պէտք էր որ մենք ալ իրենց հետ լայինք : Ասկէ լաւ առիթ չկար որ սրտիս վրայ կուտակուած մեծ վիշտերուս ազատ ասպարէզ տայի : Անկէ յետոյ տնեցիք սկսան մեզի գէշ աչքով նայիլ, « Հայրերնիս դուն մեոցուցիր » ըսելով եւ մեզ խրճիթէն վըռընտեցին : Երկու քսր խրճիթին ետեւը, պատին տակ կը նստէինք գիշեր ցերեկ : Ոչ ուտելիք կուտային, ոչ խմելիք, արդէն իրենք շատ չունէին : Երբ պղղուր կամ կորկոտ լուային, մենք աղտոտ ջուրին մէջէն հատիկները դատելով կ'ուտէինք : Ոչ ճամբայ գիտէինք, ոչ մարդ կը ճանչնայինք, արդէն ուր դտնուիս անգամ չէի գիտեր :

Քանի մը օր պատին տակը անօթի ծարաւ մնալէ յետոյ մեռնողին կիներ ձեռքերնիս ծալք մը պաստեղ տալով Ահմէտին հետ մեզ ճամբու դրաւ դէպի Պագո Մատէն : Ահմէտ կաղ էր, էշու մը վրայ նստաւ, մենք քալելով կը հետեւէինք իրեն : Քարքարուտ ճամբուն վրայ մեր բոպիկ ոտքերը կը ծակծկէին : Մտատանջ էի, չէի գիտեր որ, քաղաք տանելով մեզ սրճան պիտի յանձնէ : Վարժուած էինք հնազանդելու, խելք անգամ չէր մնացած խորհելու, անբան անասուններու վիճա-

կին իջած էինք: Արաքսին ալ սկսած էր թանջք ունենալ:

Կէս օրին քաղաք հասնելով, մեզ տարաւ կառավարութեան շէնքին առջեւ: Պաշտօնեաներ սկսած էին դուրս ելլել եւ երբ առաջին անգամ ժաքէթով մարդ մը տեսայ, յիշեցի հայրս եւ մեր այր մարդիկը: Կարծեցի թէ նորէն աշխարհ եկայ, փրկութեան յոյս մը ծնաւ մէջս: Քիչ յետոյ ոստիկան մը մեզ շէնք մը առաջնորդեց: Ներսը երեք սենեակներ կային եւ ուրիշ կիներ, հասկցայ որ կանանց բանտն է: Թուրք կանայք առանձին սենեակներու մէջ կ'ապրէին, հայ կիներն ալ, որոնք ինծի պէս ճողոպրած էին, աքսորականներու նոր խումբի մը կը սպասէին: Գետինը հող էր եւ խշտեակ ունեցող հազիւ երկու կին կար: Մենք, երկու քոյր, այնքան եղկելի, հիւժած, խեղճ վիճակ ունէինք, որ ոչ ոք մեզ իր մօտը կանչեց, մնացինք դուրսը, արտաքնոցին դրան քով: Այդ դարչահատութեան մէջ, մութ տեղը նստանք եւ գիշերն ալ չոր հողին վրայ պառկեցանք:

Աշնան ամիսներ էին, կը մսէինք, մանաւանդ հիւանդութենէ նոր ելած էի, բայց շատ գոհ եւ երջանիկ կը զգայի ինքզինքս այդ տեղ, քանի որ փողոցը չէի եւ մանաւանդ Հայոս երես տեսայ: Այդ քաղաքէն հայ կին մը կար երեք փոքրիկ զաւակներով, ուրիշ մը՝ Բալուցի եւ դարձեալ տեղացի երիտասարդ հայ կին մը, դեղեցիկ, կապոյտ աչքերով եւ թարթիչներով, որ ժանտարմին խեղդել ուզած կինն էր: Օրական մեզի կուտային անմարսելի կտոր մը հաց: Թուրք կիները, որոնք ոճրագործութեան եւ գողութեան պատճառաւ բանտարկուած էին, ուտելիք կը ստանային դուրսէն, իսկ մենք շարունակ անօթի էինք: Սորված էինք թէ ինչ կը նշանակէ անօթութիւնը: Երբեմն դրացի խոհա-

նոցներէ կերակուրի եւ խորոված մսի մուրցուած հոտերը կ'անոնէինք եւ կարօտով կը հօտտօտէինք:

40 օր անցնելէ ետք, բոլոր Հայերս բանտէն հանելով կառավարութեան շէնքը տարին: Այդ տեղ, դատաւորը (ղատին) եւ կանաչ փաթթոցաւորներ մեզ կարգաւ կանչեցին կանաչ սեղանի մը առջեւ: Նախ մեր աղօթքը (Հայր Մերը) ըսել տուին, յետոյ իրենց «Շէտիւ քնլա իլահէ իլլալլահը» եւ մեր անունները փոխեցին: Երբ իմ կարգս եկաւ, հարցուցին թէ ի՞նչ անուն կ'ուզէի ունենալ. յիշեցի մօրս մեզի կարդացած հաղարումէկ գիշերներու հէքիաթները ուր կար Զիւպէյտէ անունը, եւ կոչուեցայ Զիւպէյտէ, եւ Արաքսի քոյրս՝ Զէլիսա: Ոստիկան մը մեզ երկուքս տարաւ տեղացի հայ բայց թրքացած թիթեղադործի մը յանձնեց, որուն ընտանիքը կը բաղկանար այրուկին եւ մանչ ու աղջիկ զաւակներով:

Պագու Մատէնի մէջ թրքանալով մնացող Հայեր էին՝ 1 ոսկերիչ, 1 կօշկակար, 1 դերձակ, 1 թիթեղագործ եւ 1 պայտար: Թուրքերը անոնց պէտք ունէին եւ չէին սպաննած: Դերձակը Տիկին Պիւլպիւլեանն էր, որուն անունը երախտագիտութեամբ կը յիշեմ: Այդ տիկնոջ թրքական անունն էր Թերզի Ալմաստ, 50-55 տարեկան, շատ ազնիւ, ազգասէր կին մը, որ զինուորական կարերը կը կարէր, ինչպէս նաեւ թուրք հանրմներու հագուստները:

Տիկին Պիւլպիւլեան զիս կանչեց ցորեն մաքրելու համար: Քրօջս հետ գացի: Յուզուեցաւ մեր տեսքէն, շաբաթ մը իրենց մօտ պահեց, բաղնիք տարաւ, գըլխուս վէրքը խնամեց եւ ճերմակեղէն տուաւ: Արցունք թափելով լսեց զարհուրելի պատմութիւնս եւ պատմեց թէ Պագու Մատէնի Հայերը ընդհանրապէս նիւթական լաւ վիճակ ունէին, ամէնքն ալ աքսորած եւ ջարդած

են, նախապէս այրերը բանտարկած ու զարհուրելի տանջանքներ տուած են: Քահանային եղունքները քաշեր, աչքերը փորեր եւ մօրուքը փետտեր են:

Տիկին Պիւլպիւլեան բազմանդամ ընտանիքի մայր էր եղած, երկու տղայ, երեք աղջիկ եւ ամուսինը: Երկու աղջիկները ամուսնացած էին: Ամուսինը, երկու զաւակները եւ փեսաները բանտարկեր են: Տիկին Պիւլպիւլեանը օր մը ուտելիք տարեր է անոնց և մեծ տղան, Կարապետը տեսեր է անճանաչելի վիճակի մէջ: Կուրծքին ոսկորները ջարդեր եւ թեւերուն տակ խաշած տաք հաւկիթներ դրեր են: Այրերուն սպաննութենէն ետք, Տիկին Պիւլպիւլեան կը յաջողի իր մօտ պահել ամուսնացած այրի աղջիկները եւ անոնց փոքրիկները: Հայ պատանի մըն ալ որդեգրած էր որուն անունը Ֆէրիտ դրած էին: Հիմա երեք աղջիկներով եւ թոռներով ինը հողի էին: Հինգ այր զոհ տուած էին:

Կրկին թիթեղագործ ընտանիքին մօտ վերադարձած էինք երբ առտու մը չարչաֆ հաղած կին մը եկաւ: Կիրասոնցի Օր. Աղաւնի Վարդեանն էր: Պատմեց թէ երբ ճամբան մեր խումբը երկու մասի բաժնուեցաւ, ինք առաջ անցնող խումբին մէջ մնացած է: Գիշերը, մեր ջարդուած խումբէն վիրաւոր տղայ մը իրենց կը հասնի եւ կը պատմէ թէ ինչպէս զիրենք կողոպտելէն ետք ջարդեցին: Քուրդ մը զինքը տարեր է դիակներուն մէջէն, բայց ինք փախեր եւ Պագո Մատէն եկեր է: Սմբատին եւ Մերսէտէսին մասին որոշ բան մը չկրցաւ ըսել, եւ ես մինչեւ այսօր կը կասկածիմ որ թերեւս մէկն ու մէկը ողջ մնացած է, ողջ նահատակներու կարգին: Տարիներ վերջ Աղաւնին ամուսնացաւ Հայու մը հետ, ունեցաւ չորս զաւակներ, բայց աքսորի անառապանքներէն ջիղերը քայքայուած էին եւ ի

վերջոյ խենդեցաւ :

Պարս Մատենի թրքացած հայ արհեստաւոր այրերը թլիհատած , կիներն ալ հարէմի կեանքով կ'ապրէին : Մարդարէին ծննդեան առթիւ զուրան կարդացող կին բերել կուտային եւ թուրք հանրմներն ալ կը հրաւիրէին : Սակայն հակառակ իրենց դաւանափոխութեան , երկու տարի յետոյ կրկին աքսորեցին զանոնք , ինչպէս Տիկին Պիւլպիւլեանը ընտանեօք :

Մեր չար բախտէն թրթեղագործը , սրոնց քով կ'ապրէինք , մեռաւ : Կինը ապրուստ չունէր , ստիպուած էի աշխատիլ , բայց դործարան չկար պէտք էր տուները ծառայել : Զիս ծառայ չէին ուզեր , սրովհետեւ փոքր քոյր մը ունէի հետս : Քաղաքը չէի ճանչնար , տաք հագուստ չունէինք , այր մարդու ծակ կօշիկով ձիւներուն վրայ կը քալէինք : Յուսահատ կուլայի : Վերջապէս դացի Տիկին Պիւլպիւլեանին , որ մեզի տրամադրեց ազլկանը տան զետնայարկը : Հայերու լքուած տուներէն չուլեր եւ ցնցոտիներ դտայ եւ անկողին շինեցի : Քրոջս թանջքը հետզհետէ սաստկացաւ , յաճախ տաք ջուր մը անգամ չունէի որ իրեն խմցնեմ : Կ'ուտէինք ինչ որ գտնէի : Այսպէս անցուցինք առաջին ձմեռը , առանց ճրագի , առանց օճառի եւ առանց վառարանի :

Մարտ ամսուան մէջ օր մը , սովորականին պէս քոյրս անկողնին մէջ նստեցուցած , եւ իր քով քիչ մը կրակ դրած ու մեկնած էի ուտելիք ճարելու : Վերադարձայ պնակ մը կերակուրով : «Արաքսի , քեզի ուտելիք բերի» ըսի , բայց քոյրս չչարժեցաւ եւ երբ ծածկոցը վերցուցի , ինկաւ մէկ կողմի վրայ : Մեռած էր : Սոսկուտով ճչացի եւ փախայ Պիւլպիւլեաններուն : Այն տեղ ազատ ասպարէզ տուի իմ բզբտուած հոգիիս : Անմխիթարելի էի կորսնցնելով դժբաղդ փոքրիկ Արաք-

սիս, վերջին բեկորը իմ բազմանդամ ընտանիքիս :
Թուրք կին մը իրենց աղօթքներով լուաց քոյրիկիս
մարմինը, պատանքեց եւ թուրք խօճա մը կարդաց իր
վրայ : Դրին փայտէ սանդուղի մը վրայ եւ իրենց ա-
նիծեալ զերեզմանատունը տանելով թաղեցին :

Այլեւս ոչ ոք ունէի : Կորսնցուցած էի ամէն ինչ
որ սիրելի եւ նուիրական էր ինծի համար, եւ այս բո-
լոր աղէտները վեց ամսուան ընթացքին :

Իմ հինգ տարեկան նահատակ քոյրս իր ողջութեա-
նը իմ պահապան հրեշտակս էր : Իր պատճառաւ զիս
տղատ ձգած էին. բայց երբ մեռաւ Թուրքերը սկսան
զիս նեղել :

Ոմանք ամուսնութեան առաջարկ կ'ընէին, ուրիշ-
ներ գերիի մը պէս կ'աշխատցնէին, տարիքէս եւ ուժէս
վեր գործերու մէջ, հազիւ պատառ մը հացի փոխարէն :
Պիւլպիւլեաններուն տունը Բերրիցի 12 տարեկան հայ
աղջիկ մը ճանչցայ Մարօ անունով, (թուրք անունը
Նաճիյէ), ծեր թուրքի մը հոգեզաւակն էր, աղաչեց որ
զիս իրենց քով առնէ, մարդը ընդունեց : Տարի մը միա-
սին մնացինք, գոհ էինք մեր վիճակէն, ցերեկները
Մարոյին հետ կրնային հայերէն խօսիլ : Մաքուր սըր-
տով Հայ եւ ազնիւ աղջիկ էր : Դժբաղդաբար մարդը
մեռաւ եւ մենք մէջտեղ մնացինք : Մարօն յաջողեցաւ
Խարբերդի ամերիկեան որբանոցը մտնել :

Օր մը հանդիպեցայ նաեւ Արմենուհի Մնացական-
եանին : Իր քուրդ ամուսինին կինը նախանձեր եւ վը-
ռընտեր էր զինքը : Պագու Մատէն գալով Արմենուհին
կը ծառայէ մէկու մը քով, յետոյ կը յաջողի Խարբերդ
անցնիլ Իզմիրցի ատամնաբոյժ Գիսակին հետ : Երկու
տարի Խարբերդ մնալէ յետոյ երբ զինադադար կ'ըլլայ,
մայիս ամսուն ճամբայ կ'ելլեն քանի մը կիներ եւ Գի-

*սակը դէպի Տրապիզոն, եւ ամէնքն ալ կը սպաննուին :
Թուրքերը ջարդեցին ուրիշներ ալ, որոնք իրենց տեղե-
րը կը վերադառնային զինադադարին :*



Տիկ. Զեփիւս վելտեանի նահապետական գերդաստանը
Մէջտեղը՝ Զեփիւսին պապը, Հանի Ասատուր, մեծ մայրը՝ Մա-
րիանէ եւ գիրկը՝ Զեփիւս : Մայրը՝ Վերգին (գրած մէջտեղը) :
Մօրը բով՝ դէպի ձախ, հօրաֆոյրը՝ Սիրուի, հայրը՝ Յակոբ,
սպաննուած : Աջէն, վարի կարգը, ճտած նշան վելտեան եւ կինը
Սրբուհի, ծունկի բերելով քարկածած եւ սպաննած են : Իրենց
մէջտեղի ազգնակը՝ Արտէմ, 16 տարեկանին Թուրք մը առեւանգած
եւ Թուրքին կինը բուժուարած է գիմֆը : Այդ կնոջ վերելի երկու
տղաքը եւ ձախէն՝ ծայրի տղան, սպաննուած են : Միք պապին
վերել, աջ կողմը, հերոսուհի վարդուհի Սէրեանեան, Շապին Գա-
րսիսարի ինֆնապաշտպանութեան մասնակցած եւ սպաննուած է :

Բաւական չարչարանքներ կրելէ ետք, յաջողեցայ հեռանալ այդ անիծեալ քաղաքէն ուր կեանքիս ամէնէն դէշ օրերը անցուցի գերբի մը պէս: Երկու օրը անգամ մը ջերմէ կը բռնուէի: Շատ դէշ էր կլիման, համաճարակները, ջերմը եւ աչքի ցաւը անպակաս էին: Խարբերդ գացի եւ հայ ընտանիքի մը քով մնացի երկու օր, յետոյ գտայ Արմենուհին, նաեւ Լուսնթագ անունով Երզնկացի հայ աղջիկ մը, որուն կեանքն ալ տարբեր ձեւով ողբերգութիւն էր: Բարձրահասակ, նուրբ դիմագիծերով, 22 տարեկան Լուսնթագը օգնական վարժուհի եղած էր Երզնկայի Ազգ. վարժարանին մէջ: Քուրդ մը գինք ջարդէն ազատելով հետը կ'ամուսնանայ եւ կը տանի Տիգրանակերտի մօտ գիւղ մը: Տարի մը ետք քուրտ ամուսինը զինուոր կը տանին: Լուսնթագը աղջիկ դաւակ մը կ'ունենայ, ատեն մը իր ներոջ հետ կ'ապրի, բայց չկրնալով տանիլ այդ կնոջ չարութիւնները, երկու ուրիշ հայ աղջիկներու հետ կը փախչի Տիգրանակերտ եւ կ'ապաստանին խանի մը ախոռը: Անտէր Հայուհիները այնտեղ խաղալիք կը դառնան խանին տիրոջ եւ ուրիշ սրիկաներու ձեռքը: Կը յաջողին փախչիլ Պագու Մատէն: Լուսնթագը Պուսեցի զինուորական հայ բժիշկի մը ծառայութեան մէջ կը մտնէ: Օր մը իր բացակայութեան, դրացի հայ կիներ պզտիկին վրայ ծանր բազմոցներ դնելով կը խեղդեն, հոգեկան զարհուրելի տառապանք պատճառելով Լուսնթագին: Կը սիրէր բժիշկը եւ գաղտնօրէն կուլար որովհետեւ բժիշկը անտարբեր էր իր սիրոյն:

Խարբերդ, Փրանսացոց դպրոցին դէմ կիսաչէն սենեակ մը վարձեցինք Լուսնթագին հետ: Այնտեղ ծանրապէս հիւանդացայ եւ Լուսնթագին բժիշկը եւ

ուրիշ հայ զինուորական բժիշկ մը զիս դարմանեցին: Այդ շրջանին, օր ընդ մէջ զոյգ մը հայ երիտասարդ կը բերէին Քրանսական դպրոցը, որ զինուորական հիւանդանոցի վերածուած էր: Քովի խոշոր բացաստանին մէջ ձողի մը կը կապէին զանոնք եւ կը գնդակահարէին: Այդ ձեւով 30—40 հոգի գնդակահարեցին: Յայտնի չէր թէ ուրկէ՞ բերած էին այդ երիտասարդները Միայն լսեցինք թէ առաջին օրուան զոյգը Ակընցիներ էին: Ամէնքն ալ կիսամերկ, գիսախուիւ, հիւծած մարդիկ էին: Ոմանք քաջաբար կուգային, մահը արհամարհելով, ուրիշներ՝ կ'իթոտած ծունկերով եւ քաշկոտուելով: Մեր սենեակի պատուհանէն գաղտնի կը դիտէինք, արցունքով, աղօթքով ու անէծքով:

Այդ օրերը բազմաթիւ թուրքեր եւ Քուրդեր գաղթեցին ռուսական ճակատէն: Կառավարութիւնը զանոնք խոշոր շէնքի մը մէջ լեցուց եւ օրական հաց մը տալով, աշխատցուց զինուորներու գուլպայ հիւսել տալով: Լուսանթագն ու ես ապրուստի ունէ միջոց չունէինք եւ մտանք այդ գործարանը: Փոքր սենեակ մը յատկացուցին մեզի: Օրական մէկ մէկ զոյգ գուլպայ հիւսելով կը ստանայինք զինուորի սեւ, անմարսելի հաց մը եւ ապուր: Սոսկալի աղտոտ էին այդ գաղթականները: Երբեմն ալ մեզ կը տանէին Հայերու լքուած գիւղերը, Հիւսէյնիկ, Քէսրիկ, Եւայն, Հայոց լքած արտերը քաղելու: Մանգաղ չունէինք եւ ձեռքով կը քաղէինք: Զինուորական կառքով, չավուչի մը հըսկողութեամբ առտուն շատ կանուխ կ'երթայինք, գիշերը կը վերադառնայինք յոգնած: Երկու ամիս ետք գոցուեցաւ գուլպայի գործարանը եւ կրկին մնացինք անգործ եւ անտուն: Բարեբախտաբար ճանչցանք հայ աղինիւ զինուոր մը որ բարութիւնը ունեցաւ իր վարձած

սենեակը մեզի տրամադրելու: Այդ զինուորը Մարաչցի էր եւ ուրիշ Հայերու ալ կ'օգնէր: Հիմա քահանայ է Փարիզ եւ կը կոչուի Տէր Ադդէ Փայլակեան: Խարբերդ ճանչցայ հայրենակից կիներ որոնց մէջ էր Տիկին Էլիզ Խանճեանը իր երեք փոքրիկ զաւակներով, հերոսուհի կոչուելու արժանի մայր մը, որ անտանելի զրկանքներով, նոյնիսկ բեռնակրութիւն ընելով մեծցուց իր տղաքը: Այդ կիներ հիմա Տէր Ադդէին երիցուհին է:

Լուսնթագը եւ ես սենեակ մը ունեցանք, բայց բացարձակապէս ապրուստի միջոց չունէինք, ծառայութեան տեղ մը կը փնտռէինք եւ չէինք գտներ: Արդէն հացը շատ դժուարութեամբ կը ճարուէր քաղաքին մէջ: Մասնաւորաբար հայ դաղթականներու խեղճութիւնը սոսկալի էր: Փողոցներու անկիւնները շատ սովորական էր տեսնել հայ փոքրիկներ գետինը պլորուած ու պառկած, որոնք կը հեծծէին, «Աճ ըմ, աճ ըմ, անօթի եմ, աթօթի եմ»: Աղբամանները կը լրտեսէին, ձմերուկի կեղեւ, ոսկոր եւայլն ուտելու համար: Վառելիք չունէինք որ ճաշ եփենք, ոչ իսկ մէկ զրուշ՝ փայտ դնելու համար: Վերջապէս գտանք կովերու տէր թուրք կին մը որ առաջարկեց ախոռին աղբերը հաւաքել, չորցնել, վառելիք շինել եւ չորցած կտորները իր հետ կ'իսուիլ: Պէտք է երեւակայել մեզ, ընտանիքի մէջ մեծցած, դպրոց տեսած, հանգիստ եւ մաքուր կեանքի վարժ Տրապիզոնցի աղջիկներ, երբ խոշոր կողով մը կոնակնիս, ախոռի աղբերը կը կրէինք եւ մեր ձեռքով փորած փոսի մը մէջ կը լեցնէինք, յետոյ յարդ խառնելով, մինչեւ ծունկերնիս մէջը կը մտնէինք, ոտքերով կը շաղուէինք այդ գարշահոտ որդնոտած ցեխը, յետոյ ձեռքերով մաս մաս կը տափակցնէինք ու պատին վրայ կամ գետինը կը փակցնէինք եւ օրերով ատոնց չորնալուն կը հսկէինք:

Վերջապէս լսեցինք որ Անգլիացիները Սուրբաճ գրաւեր են: Թուրքերու մէջ իրարանցում կար: Օր մը մեծ հանումը զիս կանչելով հարցուց. «Եթէ Անգլիացիք գան մեզ կը պահե՞ս»: Այո, ըսի, բայց կարծեմ թէ սրտիս ուրախութիւնը ցոլաց դէմքիս վրայ եւ հանումը շատ ապահով չզգաց ինքզինքը:

Պագո Մատենի մէջ ճանչցած էի Էրզրումցի Արշալոյս անուն մանկամարդ կին մը, որ ամուսնացած էր Պօլսեցի թուրք բժիշկի մը հետ: Բժիշկը Վան կը փոխադրուի, Արշալոյսը անտէր եւ խեղճ մնալով կը յաջողի Խարբերդ գալ եւ մեզի միանալ: Մեր սենեակին մէջ իրար կը հոգայինք հարազատներու պէս: Կը ծառայէի թուրք տան մը մէջ: Շատ անգամ ուտելիքիս բաժինը երեկոյեան մութին դուռին տակէն պաղտնի կուտայի Լուսնթագին կամ Տիկին Էլիզին, որոնք դռան առջեւ կը սպասէին: Հազիւ երկու ամիս պահեցին զիս այդ տունը: Անգլիացիներուն վախը թերեւս պատճառ եղաւ որ իմ տեղս թուրք սպասուհի մը բերեն եւ ինծի ալ կտոր մը հաց տալով ճամբեն: Հացը մերժեցի եւ լայն շունչ քաշելով ազատութիւնս գտայ: Մարոն Խարբերդի ամերիկեան որբանոցէն երկու անգամ այցելութեան եկաւ, բոպիկ եւ յոգնած: Կը պատմէր որ շատ սակաւ է ուտելիքը որբանոցին մէջ: Հալած էին կարմիր խնձորի նման իր այտերը: Անուշիկ Մարոս ո՞ր է արդեօք հիմա:

Այդ միջոցին պատերազմը վերջացաւ: Ըսին թէ այն Հայերը որոնք կ'ուզեն մեկնիլ հայրենիք, կառավարութիւնը միջոցներ պիտի հայթայթէ իրենց: Մենք ալ հատ ու կտոր հայրենակիցներ հաւաքուեցանք եւ որոշեցինք առիթէն օգտուիլ, հակառակ որ ըսին թէ մեկնողները դարձեալ կը սպաննեն: Իրապէս ալ մեզմէ յետոյ ճամբայ ելլող Արենուհիենց կարաւանը ջարդե-

ցին: Ինչ ալ ըլլար, ծննդավայրին կարօտը եւ մեր խեղճութիւնը անտանեի էին այլեւս: Մեղի տրամադրեցին չորս հատ եղան կառք եւ մարդ գլուխ 10 ոսկի թղթադրամ:

Մեկնողները հետեւեալ անձերն էին: Յակոբ Ամպարեան, Տրապիզոնցի հայ կաթողիկ 16 տարեկան: Տրապիզոնցի Տիկին Էլիզ Պանճեան եւ իր երեք զաւակները: Տիկին Հայկուհի Էմէքսիզեան, Կիրասոնցի: Տիկին Սրբուհի (մականունը չեմ յիշեր) Տրապիզոնցի: Օր. Աստղիկ Ունճեան եւ իր փոքր եղբայրը՝ Տրապիզոնցի: Տիկին Արուսեակ Համազասպեան Տրապիզոնցի եւ իր աղջիկը Գարդուհի 28 տարու: Տիկին Չաքարեան Եւնիկէ եւ իր երեք զաւակները, (Տիկինը Օրտուցի էր եւ բողոքական պատուելիի կին): Երկու քոյրեր՝ Արմենուհի եւ Տիգրանուհի՝ Օրտուցի: Օր. Զուարթ՝ Օրտուցի: Տիկին Շողիկ՝ Տրապիզոնցի: Տիկին Ազնիւ եւ իր տղան՝ Յովհաննէս՝ Տրապիզոնցի: Որով 23 հոգի ճամբայ ելանք դէպի Օրտու, Կիրասոն եւ Տրապիզոն: Հսկայ կարաւաններով մեկնած էինք այդ քաղաքներէն եւ հիմա քանի մը բեկորներ կը վերադառնայինք: Մեր հոգևոյն մէջ թէ ուրախութիւն թէ վիշտ կար: Ես իմ կեանքիս ամէնէն անուշ վարուն տարիները այդ անիծեալ վայրերը անցուցի աներեւակայելի տառապանքներով եւ առողջութիւնս վրայ սուի:

Առաջին քաղաքը որ անցանք Մալաթիան էր, յետոյ Ամասիա եւ Թոգատ, ամէնքն ալ իրենց հայ բնակչութիւններէն ամայացած, հազիւ հատ ու կտոր խըլեակներ: Թոգատի մէջ գտնուող քանի մը Հայեր մեզ պատասպարեցին եւ տաք կերակուր տուին: Երախտագիտութեամբ կերայ ազգիս տաք ապուրը: Անցանք Պանկալէն եւ շատ մը գիւղերէ: Երկու օր Սեբաստիա

մնացինք: Խստաշունչ ձմեռ էր: Սերաստիոյ մէջ «Էօքսիւզ Եուրտու» անուն որբանոց մը բացեր էին թուրքերը եւ հայ որբուհիները իբր թուրք կը մեծցընէին: Սերաստիոյ մէջ գտայ Շապին Գարահիսար բընակող հօրաքրոջս աղջիկը՝ Սաթենիկ Քէօթէնէճեան, երկու աղջիկներով եւ 9 տարու մանչ զաւակով: Պատմեց Շապին Գարահիսարի հերոսական դիմադրութիւնը, որու միջոցին իր անդրանիկ տղան, մայրը եւ երեք կտրիճ եղբայրները սպաննուած էին: Ուրիշ մէկ հօրաքոյրս ալ, որ այդ տարին այցելութեան գացած էր իրենց, նոյնպէս սպաննուած էր, ճակտէն զնշակ մը ստանալով:

Վերջապէս հասանք Սամսոն, ուր այլ եւ այլ նահանգներէ հաւաքուած էին հայ խլեակներ: Այնտեղ գտայ հօրեղբօրս աղջիկը՝ Շողակաթը, պատմեց իրենց աքսորուելու պարագաները: Կիրասոնէն քանի մը օրուան ճամբայ հեռանալէ ետք, ծնողքը ծունկի բերելով սպաննած են քարերով, երեք չափահաս եւ երկու անչափահաս աղջիկները առեւանդեր են, երկու երիտասարդ տղաքը, որոնց մէկը բժշկական ուսանող էր Պէյրութ եւ Կիրասոն կը գտնուէր, բոլոր այրերուն հետ սպաննած են: Արտէմ անուն 16 տարեկան մէկ քոյրը առեւանգուած է թուրքի մը կողմէ, թուրքին կինը նախանձելով թունաւորած եւ սպաննած է խեղճ Արտէմը, որ իսկական զեղեցկուհի էր: Իսկ Շողակաթը թուրքի մը տունը ծառայած միջոցին կը հանդիպի Շապին Գարահիսարցի Արսէն Փափազեան անուն տղու մը եւ կ'ամուսնանայ հետը: Պատերազմը լրանալուն Սամսոն կուգան: Հիմա երեք քոյրեր Փարիզ կը դռնըւին, մէկը Ամերիկա, իսկ Արսէնը մեռաւ վերջերս:

Սամսոնէն Տրապիզոն ճամբորդեցինք լազ նաւովաներու խոշոր սանտալով մը: Շոգենաւ չկար: Թիա-

վարելով, ծովափին հետեւելով հասանք Կիրասոն: Լա-
լով ոտք դրի Կիրասոն, ծնողացս քաղաքը, մանկու-
թեան երազ օրերուս վայրը: Քանի մը հայ խլեակներ
կային, ինչպէս նաեւ Վառեակ հօրաքրոջս երկու աղ-
ջիկները, որոնք Ակն, յետոյ Սեբաստիա մնացեր էին:
Ծնողքնին, եղբայր, քոյրեր եւ չորս հօրեղբայր սպան-
նուած էին: Իրենց հօրենական զոյգ տուներէն, որոնք
Թուրքերով բնակուած էին, յաջողեցան մէկը ետ առ-
նել:

Երկու օր յետոյ շարունակեցինք մեր ճամբան եւ
12 օր ծովու վրայ մնալէ ետք, վերջապէս հասանք Տը-
րապիզոն: Կէս գիշեր էր: Զէօմլէքճիի կողմը ծովափ
հանած էին մեզ, փոխանակ սովորական նաւամատոյցը
հանելու: Մութ ու աւերակ ամէն կողմ: Ինծի հետ
էին Տիկիհներ՝ Սրբուհին, Աննիկը, Ազնիւը եւ տղան:
Նախ Աննիկին տունէն անցանք Զէյթինլիք թաղը: Փո-
ղոցները աւերակ էին, դժուարաւ կարելի եղաւ տունը
դտնել, որ նոյնպէս կիսաքանդ էր: Աննիկը կուլար իր
քանդուած բոյնը ցոյց տալով. «Ահա մեր սենեակը, ա-
հա զաւկիս օրօրոցին տեղը»: Խեղճին զաւակը Քուր-
տերը գրկէն խլած ու տարած էին: Այդ շէնքին մէջ կա-
րելի չէր գիշերել: Հասանք Ենի Մահալլէ, մեր թա-
ղը: Այդ հայաչատ շէն թաղն ալ աւերակ էր: Մեր տան
բակի փողոցին հսկայ դուռը չի կար: Ներս մտանք.
քարէ սանդուխներէն բարձրանալով տան դուռը զար-
կինք: Թուրք գաղթականներ կը բնակէին, որոնք ա-
ռաջին յարկէն սենեակ մը ցոյց տուին, որուն պա-
տուհանները եւ փեղկերը վառած էին: Քնացանք չոր
գետնին վրայ: Առաւօտուն սկսայ բակն ու պարտէզը
պտտիլ, պատերը շօշափել, սենեակները, սանդուխ-
ները դիտել եւ անհուն կարօտով ու յուզումով, սպան-
նուած սիրելիներուս ստուերները փնտռել:

Պարտէզի պատին վրայ մըջիւններու բանակ մը ուղիղ գիծով կը բարձրանար մինչեւ վերի յարկը ու կ'իջնէր: Ժամանակին հետաքրքրութեամբ յաճախ հետեւած էի այդ տեսարանին: Ընտանիքիս շէն, ծաղկող տանը մէջ մինակ մըջիւնները մնացած էին: Թուրքերը պարտէզին հաստ պատերը քանդած եւ մեր փողոցի դռնէն եւ պարտէզէն անցնելով կարճ ճամբայ շինած էին: Հայոց տուներուն աւերակներուն մէջէն, այդ բաղամամարդ, մաքուր հայ թաղին տուներէն մնացած էին մեր մէկ տունը, Մինասեաններուն, Պալլարեաններուն, Խաչատուրեաններուն, Մալխասեանին, Մնացականեաններուն շէնքերը եւ ուրիշ մէկ քանի տուներ:

Հետեւեալ օր իջանք նկուղ, բրիչ մը դտանք եւ սկսանք փորել, գտնելու համար մօրեղբօրս թաղած գանձը: Երբ ոսկի չգտնանք եւ զարդեր տեսնուեցան, յիշեցի իմ սիրելի նահատակ մօրեղբօրս խօսքերը. «Զեփիւռ, կրնայ ըլլալ որ մենք մեռնինք եւ դու ողջ մնաս»: Գաղտնի ոստիկաններ կուգային եւ զիս կը հարցաքննէին: Վերջապէս միշտ հսկողութեան տակ էի: Քաղաքին մէջ տարածուեցաւ «ոսկի դտնող աղջկան» անունը: Սկսանք այդ դրամով աքսորի մեր զրկանքները յագեցնել:

Տրապիզոնի մէջ ողջ մնացող քանի մը Հայերէ լըսեցի թէ ծերերը եւ երախաները վար դրեր են: Ծերերը թունաւորեր են, ինչպէս իմ մեծ հայրս ալ հաւանաբար: Մօրեղբայրս իր երեք ընկերներով ձերբակալեր են, մէկը տեղն ուտեղը սպաններ, միւսները աքսորեր եւ քանի մը օր վերջ սպաններ են: Մեր տունը ընդարձակ ըլլալով, Թուրքերը որբանոցի վերածեր են ամերիկացուց քովէն մաս մը տղաք առնելով: Որբանոցին վերակացու նշանակեր են Օր. Իմաստուհի Օրմանճեանը, որ պատմեց թէ ամէն աւտու թուրք բը-

Ժիշկ մը կը քննէր տղաքը եւ դեղագիր մը կուտար որ ուրիշ բան չէր բայց եթէ թոյն ։

Օրական 8-10 երախայ այս ձեւով սպաննած են , ուրիշ բազմաթիւ երախաներ պարկերու եւ անտուկներու մէջ ղնելով ծովամոյն ըրած են ։ Նոյն ոճիրները ուրիշ շատերէ ալ լսեցի ։

Կիրասոն գացի հօրաքրոջս աղջիկներուն մօտ եւ ամիս մը մնացի ։ Ամերիկացիք որբանոց բացած էին Կիրասոնի մէջ հայ որբ-որբուհիներու համար ։ Վերակացուն դարձեալ Օր . Իմաստուհի Օրմանճեանն էր ։ Ուր որ հայ որբերու լուր աննէինք , թուրքերու ձեռքէն ազատելով որբանոց կը տանէինք ։ Օր մը լուր առինք դժբախտ հայ աղջկան մը մասին ։ Տաճկնոց աղտոտ թաղի մը մէջ բանտարկուած 18 տարեկան շատ գեղեցիկ Մշեցի աղջիկ մըն էր ։ Երբ հետը հայերէն խօսեցայ , յուզուեցաւ եւ պատմեց թէ զգուելի բեռնակիր մը զինք ձեռք անցնելով կը բերէ Կիրասոն ։ Անճանօթ քաղաքի մը տաճկնոցին մէջ փակուած , խեղճ Հայուհին խաղալիք կը դառնայ բեռնակիրին եւ անոր ընկերներուն ։ Այդ հրէշը խեղճ աղջիկը կը շահագործէր ։ Ուրախութեամբ հետեւեցաւ ինծի եւ յանձնեցի որբանոց ։

Վերադարձայ Տրապիզոն ուր երեք տարի մնացի ։ Ամէն կողմէ Հայեր հաւաքուած էին Տրապիզոն , աղջկանց եւ մանչերու որբանոցներ հաստատուած էին ։ Եկեղեցի մը եւ քահանայ մը ունէինք ։ Տրապիզոն էր նաեւ Խաչատուրեան Գարեգին վարդապետը որ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ ։

Մուստաֆա Քէմալի շրջանն էր ։ 1922ին , յունական պատերազմը եւ Իզմիրի կոտորածը կրկին տակնու վրայ ըրին մեզ ։ Յոյներուն հետ , Տրապիզոնի Հայերն ալ տեղահան ըրին ։ Գիւղերու յոյն բնակչուլիւնը ,

ձիւն-ձմեռ օրով լեցուցին ծովեզերքը: Մեր բոլոր ունեցածը, տուն-տեղ, կահ-կարասի, ձգելով երկրորդ անգամ հեռացանք Տրապիզոնէն:

Պօլիսէն Փարիզ եկայ, առանց դրամի եւ առանց արհեստի: Ինքնաշխատութեամբ կարել սորվեցայ եւ ապրուստս ճարեցի: Ամուսնացայ ազնիւ ու պարկեշտ Հայու մը հետ: Իրաւունքս էր այլեւս երջանիկ կեանք ունենալ, բայց աքսորի երեք ու կէս տարիները, գերութիւնը, տանջանքը, հոգեկան տառապանքը, իրենց հետքերը ձգեցին եւ առողջութիւնս քայքայեցին:

Այս բոլոր աղէտներուն եւ կեանքիս խորտակման պատճառը տեսլի եւ վայրենի թուրքն է: Կը մաղթեմ որ չմեռած տեսնեմ իրենց պատժուիլը, կամ տեսնեմ որ, փոխուելով, մարդկային զգացում ունեցեր են եւ գիտակցեր՝ թէ ի՞նչ ահաւոր ոճիր գործած են:

Թրքական հրէշային եղեռնէն տառապեցան մանաւանդ հայ կիները: Վարդանանց պատերազմին Տիկնայք փափկասունք տանջուեցան եւ անմահացան: Պատմութիւնը պիտի ըսէ՞ որ անոնց չափ եւ աւելի տանջուեցան հայ կիները տարագրութեան դժոխքին մէջ:

Յուշերս կը փակեմ, մտածելով մեր միլիոնաւոր սրբացած նահատակներուն վրայ, եւ, անոնցմէ աւելի դժբաղդ այն հազարաւոր կենդանի նահատակներուն վրայ, որոնք տակաւին կը տառապին իրենց թուօք դահիճներուն ճիրաններուն մէջ:

Ֆրանսա, 1951

Զ Ի Լ Է

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՔԵՕՐՕՂԼԱՆԵԱՆ

1915 Ապրիլի սկիզբն էր որ ձերբակալեցին մեր քաղաքին երեւելիներէն 33 հոգի, Յ. Չալազեան, Գ. Տարազեան, Մ. Հալաճեան. վաճառականներ, Ա. Գուլումճեան՝ ոսկերիչ, Մ. Մխիթարեան՝ ուսուցիչ, Բենիամին քահանայ, Հարիկեան՝ թաղապետական ժողովի անդամ, Ներսէսեան՝ փաստաբան, Հ. Գատէմեան՝ դպրոցի տնօրէն, ծխախոտի ունեւորէն՝ Նիկողոսեան, դատախազի օգնական՝ Ասատուրեան, հարցաքննիչ դատաւոր՝ Մ. Լուսարարեան, Յ. Տէրտէրեան, Մ. Կիւրինլեան, Յ. Մսրեան, Օ. Մանուկեան՝ վաճառականներ եւայլն:

Կէս գիշերին ձերբակալուածները կը տարուէին բանտ, ուր կ'ենթարկուէին տանջալի հարցաքննութեան եւ որպէսզի անոնց ցաւակոծ աղաղակները դուրսէն չլսուին, զինուորական նուազախումբը կը նուագէր: Միեւնոյն ատեն մունետիկները կը հրաւիրէին քրիստոնեայ զինուորական փախստականները որ յանձնուին եւ տուրքի փոխարէն, վեց ամսուան համար 40 ոսկի վճարելով, ազատ ըլլան զինուորութենէ: Շատեր վճարեցին: Մունետիկը երկրորդ անգամ յայտարարեց սպառնալիքներով որ Հայերը ամէն տեսակ գէնք յանձնեն:

Առաջնորդարանը հրահանգեց ենթարկուիլ կառավարութեան հրամաններուն: Ժողովուրդը սկսաւ յանձնել ինչ որ ունէր իբր գէնք: Բայց, շատ չանցած, ու-

տիկանները սկսան խուզարկել տուները եւ անշուշտ ոչինչ գտան: Յանձնուած փախստական զինուորները, խիստ հսկողութեան տակ, ղրկուած էին Ամասիոյ ուղղութեամբ, իսկ քաղաքը շրջապատող զօրախումբերը կը սկսէին գրաւել եկեղեցին, դպրոցները եւ մեծ տուները եւ ոստիկաններու առաջնորդութեամբ ձերբակալել եւ բանտարկել այրերը:

Ձերբակալուած այրերը վեց կարաւանով քշուեցան



Յ. Գ. Բեօթովանեան

Ամասիա, բայց օր մը ետք այլեւս ոչ մէկ լուր եկաւ անոնցմէ: Տարէց կիներ քանիցս, խմբովին դիմում ըրին կառավարիչին, տեղեկութիւն ուղելու իրենց բացականերուն մասին: Կառավարիչը ամէն անգամ դանոնք կը խաբէր խոստումներով: Բայց քաղաքին կացութիւնը արդէն կը բաւէր զաղափար մը տալու անոնց իրական վիճակին մասին: Ոչ ոք մերիներէն կը համարձակէր դուրս ելլել, եւ բերնէ բերան զրոյց կը

չըջէր թէ Ամասիա չհասած, կարաւանները ջարդուած են :

Վերջապէս, մունետիկին բերնով հրահանդ տըրուեցաւ Հայերուն որ միայն երեք օրուան պաշար առնելով, պատրաստուին մեկնելու: Այդ միջոցին, հայրըս, որ չէր ձերբակալուած եւ տունը կը մնար պահուած, ստիպուեցաւ երեւան ելլել: Մեր կարգին պատրաստուեցանք կարաւանին միանալու: Հազիւ տունէն դուրս ելեր էինք, երբ ոստիկանները ձերբակալեցին հայրս եւ զիս ու տարին յանձնեցին վճռադատ ատեանին որուն անդամները հետեւեալ դահլճներն էին. Գայմագամ Հաճի Թայիր զատէ Բահմի, Ղազան ասմազ զատէ Իպրահիմ, Ֆէնէրճի զատէ Բահիմ, Թօփճու զատէ Պէքիր: Դեղին մօրուսաւոր հազարապետ մը հրամայեց որ հայրս տանին, եւ զիս համոզեց որ մօրս ընկերանամ, փոխանակ հօրս հետ երթալու:

Հայկական երեք թաղերու ժողովուրդը, մեծ մասամբ կիներ եւ մանուկներ, լեցուցին եկեղեցիին վերնատունը: Կէս օրը անցած էր, երբ տարածայնեցին որ կիները հարցաքննութեան պիտի տարուին, բայց տըրամարդոց նման քալելով պիտի չերթան, այլ եզանսայլերով:

Իրարանցումը սկսաւ: Խեղճ մայրերուն լացն ու կոծը պզտիկներուն ողբալի կանչերը կը լեցնէին եկեղեցին: Ոստիկանները, խարազաններով, հրմշտկելով ժողովուրդը դուրս կը թափէին եկեղեցիէն: Վերոյիշեալ ատեանը ամբողջ կազմով նստած էր եկեղեցիին բակը: Աքսորականներուն անունը, մականունը արձանագրելէ յետոյ կ'ըսէին անոնց. «Ջարդեղէն, ոսկեղէն, դրամ, ինչ որ ունիք հոս ձգեցէք, պատասխանատու չենք եթէ ճամբաները կողոպտուիք: Ձեր վերադարձին նոյնու-

թեամբ կը ստանաք» :

Խոշոր սեղանի մը վրայ ոսկեղէն ու գոհարեղէն տեղաւորուեցան : Միւս կողմէ, 10էն 25 տարեկան գեղեցիկ աղջիկները եւ հարսերը կը զատէին եւ կը լեցնէին եկեղեցիին դիմացը Սրապեան Սարգիսին տունը :

Վերջապէս մեկնումի հրամանը տրուեցաւ :

Սըրա Քէօփրիւ փողոցը 80է աւելի սայլեր կը ըսպասէին : Մենք ալ սայլ մը վարձեցինք երկու ընտանիքով : Կարաւանը 700 հոգիէն աւելի էր, յանձնուած՝ վեց ժանտարմաներու : Մեր առաջին հանգրուանն եղաւ Հասան աղա չէրքէզ գիւղը : Եօթներորդ օրը, տաժանելի ճամբորդութենէ մը յետոյ, հասանք Շարղըչլա : Սայլադանները ճամբան մեզ նեղեցին, նուէրներ ուղեցին, գողցան, բայց կ'երեւայ որ իրենց խստիւ պատուիրուած էր կեանքի վնաս չհասցնել : Թուրք խուժանն ալ փորձեց մեզ կողոպտել, բայց արգիլուեցաւ :

Մեզ առաջնորդեցին քաղաքէն դուրս, նոճիներու և ուռիներու անտառակ մը : Տեղացիները ուտելիք կը բերէին ծախելու, մածուն, կաթ, մեղր, հաց : Երկու օր յետոյ նոր գաղթականներ սկսան գալ ամէն կողմէ, Սամսոնէն, Ամասիայէն, Մարղուանէն, Կեսարիայէն, Կէմէրէկէն, Եօզկատէն : Երրորդ օրը հասաւ Զիւլէցիներու երկրորդ կարաւանը : Պատմեցին թէ Սըրա Քէօփրիւէն սայլերով Խըրըրլըխ հասած են, ուր Թուրք խուժանը կը սկսի զիրենք կողոպտել եւ աղջիկ ու տղայ առեւանգել :

Շարղըչլան աքսորեալներու կեդրոնավայրը դարձաւ : Տասնըհինգ հազարէն աւելի էինք : Սովը ծայր տուաւ : Միւս կողմէ թուրք պաշտօնեաները եւ ամբոխը սկսան աւելի բացայայտ կերպով գործել : Շարղըչլայի Գայմադամը հայ աղջիկներ բռնի կը տանէր, ընդդի-

ժաջող ծնողքները կը սպաննէր : Հինգէն տասը տարեկան երախաներ յափշտակելով, տուններու մէջ փոխադրեցին, թրքացնելու համար :

Ատկէց ալ մեկնելու հրամանը տրուեցաւ : Տարագրուածներու հսկայ բաղմութեան տրամադրուած էր մօտ երկու հարիւր սայլ : Երկար ճամբորդելէ ետք, հասանք թրքական Թոնոս գիւղը : Գիւղացիները դաւադաններով եւ բիրերով մեր վրայ յարձակեցան : Հայերը փորձեցին պաշտպանուիլ քարերով : Այդտեղ ալ ժանսարմաները միջամտեցին եւ ետ քշեցին թուրք խուժանը :

Ժանտարմաներու վարմունքը իր պատճառը ունէր : Աքսորեալները կողոպտելու եւ յետոյ ջարդելու համար, իւրաքանչիւր՝ կարաւանին տեղը տարբեր էր : Յաջորդ օրերը Հէքիմ-Սանէն եւ թրքական ուրիշ գիւղէ մը անցանք բոլորովին անվնաս, մինչդեռ մեզմէ առաջ անցնողները այդտեղ ենթարկուած էին զարհուրելի վայրագութեանց :

Ղանդալէն կ'անցնէինք : Դաշտը ծածկուած էր հայ գաղթականներով : Քաղաքին մէջ տեսանք բաղմաթիւ հայ աղջիկներ, բունի վար դրուած, որոնք պատուհաններէն մեզ կը կանչէին եւ կուլային :

Ղանդալի դաշտին մէջ, 5000 Հայեր եւս միացան մեր կարաւաններուն : Ամէն կողմէ պաշարուած էինք թուրք խուժանին կողմէ : Ժանտարմաները հազիւ կըրնային դանոնք ետ մղել : Իրենց ամբողջ վախը այն էր որ ամբողջովին կը կողոպտուինք եւ իրենց բաժին չի մնար : Յաջորդ օրերը, Չաղա թուրքերու կողմէ յարձակում կրեցինք : Շատեր սպաննուեցան :

Կանգ առինք Թոխմա գետին քով, Գլրդ-Կէօզ կամուրջին չորս կողմը : Այս գետը Մալաթիայէն կ'անցնի : Հող լսեցինք որ մեզմէ առաջ անցնող քսորեալները

այդ կամուրջէն վար նետած եւ ջարդած են: Գետին ափերը ծածկուած էին դիակներով:

Մալաթիոյ մօտէն անցնելով շարունակեցինք մեր ճամբան: Հակառակ ուղղութեամբ սայլեր անցան որոնք 5-10 տարեկան երախաներ կը փոխադրէին: Վերջէն տեղեկացանք թէ մեծ մասը խեղդած են գետին մէջ: Յըրընճըլարի դաշտին մէջ աքսորեալներու հսկայ բազմութեան մը խառնուեցանք: Երեսուն հազար հողի հաւաքուած էին այդտեղ: Անօթի կը մեռնէին: Մայրը կը լքէր դաւակը: Կմախացած հոգեւարքներ ծառերու տակ խումբ խումբ պառկած էին: Միլիոնաւոր ճանճեր կը բողբային անոնց շուրջը: Գիտէինք որ մենք ալ անոնց պէս պիտի ըլլանք: Տղայ էի, բայց կը հարցնէի յաճախ թէ ինչո՞ւ թուրքերը, իրենց մեծով ու պղտիկով այսչափ կատաղութեամբ կը հալածեն, կը խեղդեն, կը մորթեն մեզ: Ի՞նչ ըրած էինք իրենց բացի լաւ դրացնութենէ: Իրարու ոեւէ գէշութիւն չէինք ըրած, նոյն իսկ չէինք ճանչնար զիրար...

Եղբայրս ջորիի մը վրայ բեռցուցինք մեր անարժէք քուրջերուն վրայ եւ շարունակեցինք ճամբան: Հիւլանդ, ծեր, ով որ ետ մնար մեր աչքին առջեւ կը սպաննէին: Զորեպանը դրամը առնելէն ետք, ջորիէն վար նետեց եղբայրս որ քայլելու անկարող էր, մօրս հետ փոխն ի փոխը շալկելով ու քաշկոտելով կը տանէինք:

Լերան մը կատարը հասնելով, յանկարծ պաշարուեցանք կիրճի մը մէջ: Քուրդեր, սուրերով, տապարներով, մանգաղներով զինուած, սկսան ջարդել: Թուրք ոստիկանները անոնց կ'օգնէին: Քուրդ մը ետեւէս վազեց սպաննելու համար: Քուրդ բէկ մը, ժանտարմներով եւ ուրիշ Քուրդերով շրջապատուած, պոռաց եւ

արգիլեց որ սպանենն : Այս մարդիկը նստած էին գորգերու վրայ : Իրենց քով դիզուած էր ոսկեդրամներ եւ թանկագին զարդեղէններ : Կիրճին մէջ պառկած էին անհամար դիակներ, կարծես ոչխարի հօտ մը մորթուած եւ շարուած ըլլար : Այստեղ զոհուեցան 150է աւելի երախայ, ամենատարիքոտը՝ 12 տարու : Մեր խումբէն Ամասիացի տղայ մը, մեռեալ ձեւանալով, գիշերը դուրս եկած էր դիակներու տակէն եւ միացաւ մեզի : Գէշ կերպով վիրաւորուած էր :

Հետզհետէ անցայ սարսափելի տեսարաններէ : Տեսայ կոյս աղջիկներ որոնք խումբերով կը տարուէին, թուրքերու դազանային կիրքին զոհ կ'ըլլային եւ յաջորդ առտու անոնց մերկ դիակները կը տեսնէինք ճամբուն վրայ : Թուրք ժանտարմները այլեւս գիշակեր գազաններ դարձած էին : Հայ կիները ոսկեդրամները կուլ կուտային որ դանոնք կաշառեն ճամբան : Ժանտարմները տեսած էին որ կին մը ոսկի կուլ կուտայ : Փորը ճեղքեցին եւ ստամոքսէն դուրս հանեցին 12 ոսկի : Երախաները «մայրիկ, հաց» կը պոռային : Մայրերը խոտ կը կերցնէին անոնց : Ճամբաներուն վրայ կը տեսնէինք որբացած տղեկներ, այլանդակուած դիակներ, ոմանք գլխատուած, ուրիշներ ցցահան եղած : Երբ առուակի կամ հորի մը հանդիպէինք, ժանտարմները կ'արգիլէին որ խմենք : Զուրին մօտեցողը կը գնդակահարէին եւ կը ծիծալէին մեր տանջանքը տեսնելով : Անօթի մնալ կարելի էր, բայց ծարաւին չէինք կրնար դիմանալ : Բորենի թուրքերը իմ աչքիս առջեւ յղի կներու արգանդը պատուեցին եւ երախան սուրիներու վրայ ցցելով զուարճացան : Զիլէյի Զրգըրճըզլար թաղը բնակող ոսկերիչ Ե. Մսրեանին մայրը իր հարսին ոսկեթել գօտին ծախել ուզեց : Ժանտարմները 10 զրուշ առաջարկեցին : Կինը մերժեց, տեղնուտեղը սպաննելով գօտին յափը—

տակեցին: Շատերը թունաւոր խոտ ուտելով մեռան: Ողջերը երանի կուտային մեռնողներուն:

Պարեամի օր մը, Թուրքերը թնդանօթներ արձակեցին եւ մեզի ըսին որ մեզ զուրպան պիտի ընեն եւ անխնայ մորթեցին մեզմէ շատերը ճիշդ ոչխարներու պէս:

Տեղ մը, քուրդ խալիլ բէկ կոչուած գաղանը, իր մարդոցմով մեր մէջ մտաւ եւ սկսաւ գեղեցիկ աղջիկներ ընտրել: Մայր մը կատաղօրէն կռուեցաւ, աղջիկը տարին: Յաջորդ օրը աղջիկները ետ եկան եւ խալիլ բէկը նորերը տարաւ: Մեր երկրացի Սիմէան Յարութիւնին աղջիկը, Կիւլեանէն, աչքիս առջեւ խլեցին եւ այլեւս չվերադարձաւ: Մայրն ալ վիրաւորեցին ծանրապէս:

Տեսայ որ 10 – 12 տարու աղջնակները կը սղծէին իրենց մայրերուն աչքին առջեւ: Տեղ մը, մանչ երախաները սկսան հաւաքել: Փոքր եղբայրս, որ ոտքի կենալու ուժ չունէր, տարին: Ես փախայ անծանօթ կնոջ մը քով: Մայրս եւ ուրիշ կիներ իրենց գաւազներուն ետեւէն կը վազէին եւ մագերնին կը փետտէին: Գիչ վերջը, տղոց դիակները տեսանք:

Տարիքոտ կիներ ժանտարմներուն ոտքը ինկան եւ պաղատեցան որ խնայեն երախաներուն: Ժանտարմները վռնտեցին զիրենք ըսելով որ իրենց մեծերը այդպէս հրամայած են եւ Հայուն արմատը պիտի չորցնեն:

Վերջապէս, ողջ մնացողներս, անօթի, ծիւրած, մերկ, շատերը թիֆօյով բռնուած, Սուրուհ հասանք, անկէց ալ Հալէպ: Այդտեղ նորէն հաւաքեցին գաղթականներէն շատերը եւ զրկեցին Տէր-Զօր ուր ամէնքն ալ ջարդուեցան: Հալէպցի Հայերը եւ քրիստոնեայ կամ մահմետական Արաբները կրցածնուն չափ մեզ կը պա-

հէին եւ կը կերակրէին : Կառավարիչը որբանոց բացած էր : Զուգեցի մօրմէս զատուելով որբանոց երթալ : Վերջէն լսեցինք որ բոլոր որբերը սպաննած են թունաւորելով կամ Տէր-Զօրի սպանդանոց ճամբաները զրկելով :

Հալէպէն քշուեցանք Հոմս : Մեր քաղաքի Հայերէն 17 հոգի մնացած էինք, առողջ եւ հիւանդ : Հոմսի մէջ ալ Սուրիացի Արաբները մեզի օգնեցին կերակուր եւ հագուստ բաժնելով : Հոմսէն քշուեցանք անբընակ անապատ մը ուր խոտ անգամ չկար ուտելու համար : Մեր երկրացի 17 հոգիէն միայն 8 ողջ մնացած էին : Մայրս եւ ես թիֆօյէ բռնուած էինք : Այդ վիճակին մէջ սկըսանք նորէն քալել քաջքշուելով ու սողալով : Մայրս չկրցաւ աւելի դիմանալ եւ մեռաւ :

Հետզհետէ Սուրիոյ եւ Արաբիոյ մէջ ալ սովը սկսաւ սաստկանալ : Թուրքերը բոլոր ուտելիքները կողոպտած եւ տարած էին : Ապաստանեցայ Հալէպ :

Զինադադար եղաւ : Թուրք փաշաները եւ զինուորները փախուստ տուին, ձգելով Սուրիան եւ Միջագետքը : Անգլիացիները առանց զնդակ մը արձակելու Հալէպ մտան, բայց անդորրութիւնը կրկին խանգարուեցաւ : Ականատես եղայ Հալէպ ապաստանած դաղթականներէն մէկ քանի հարիւրին կոտորածին :

Հալէպէն Ատանա գացի 1919ին եւ ուզեցի կամաւոր արձանագրուել, բայց տարիքս փոքր ըլլալով մերժուեցայ : Շողեկառքով մեկնեցայ Պոլիս, Պոզանդի, Գոնիա, Էսկիչէհէր, Ատաբազար, Իզմիտ հանդիպելով :

Համաձայնականները գրաւած էին Թուրքիան : Հայ կամաւորները որոնք Պոլիս եկած էին, կ'ըսէին՝ թէ Թուրքը նորէն առաջուան գազանն է, բայց ես ականջ չկախելով կ'ուզէի անպատճառ կրկին տեսնել ծննդավայրս :

Հինդ Զիլէցի եւ եօթ Ամասիացի՝ շոգենաւով Պոլ-

սէն Սամսոն հասանք: Փոխանակ Անգլիացիներու՝ թուրք ոստիկաններ անցագիր քննեցին հայհոյելով եւ սպառնալով: Սամսոնը լեցուն էր վերապրող Հայերով որոնք չոգենաւի կը սպասէին Պոլիս երթալու համար:

Հավառայի ճամբով Ամասիա դացինք: Քաղաքին մէջ երեսուն հայ ընտանիք մնացած էր որոնք ազատած էին թրքանալով: Հիմա ինքզինքնին ազատ կը կարծէին համաձայնականներուն յաղթանակին շնորհիւ: Եկեղեցի եւ դպրոց բացած եւ իրենց հայ անունները կրկին առած էին: Ներկայ եղանք եկեղեցիին բացմանը: Աստուածածնին օրն էր: Մատաղներ մորթեցին, զանգակ դարկին եւ երեսնին գետին քսելով կ'աղօթէին:

Ամասիայէն մեկնեցանք Զիլէ երթալու համար: Զէնկիլի-Պան կոչուած կիրճէ մը անցանք, ուր շաբաթ մը առաջ Սեբաստացի հայ բժիշկ մը իր կնոջ եւ զաւակներուն հետ մորթած էին, կինը աչքին առջեւ բլուրնաբարեւէ ետք:

Վերջապէս Զիլէ մտանք: Քաղաքը մեծ մասամբ աւերակ էր: Եկեղեցիին թաղը վայրի խոտերով ծածկուած, ամայի գետին մը եղած էր: Հայերու բազմութենէն, որոնք չորս տարի առաջ փողոցները լեցուցած էին աքսորուելու համար, մնացած էինք հինգ վերադարձող եւ քաղաքին մէջ մնացած քանի մը հայ արհեստաւոր, որոնք իրենց մէջ դրամ հաւաքեցին եւ գրպանս դրին: Մեր կալուածներէն մնացած փայտերը ծախելով ապրուստս կ'ապահովէի: Գործ գտնել անկարելի էր:

Տարագրուեցանք առաջ Զիլէն 7500 կամ 8000 հայ բնակչութիւն ունէր: Անպատէն եւ մահուան կարաւաններէն ազատուողներս ընդամէնը հազիւ 35 հոգի հաւաքուեցանք, վերադառնալով Հալէպէն, Կիլիկիայէն եւ Պոլիսէն: Ասոնց մէկ մասը ստիպուեցաւ կրկին լքել իր ծննդավայրը եւ փախիլ Պոլսէն երբ Գեմալական

սարսափը յաջորդեց Իթթիհատական ոճրագործութեան: Մէկ մասը նորէն ղոհուեցաւ Թուրքերու վայրագութեան, իսկ փոքր թիւով վերապրողներ չկրցան հեռանալ եւ մնացած են մինչեւ հիմա Զիլէ:

Անգլիացիները, որոնք ծանօթ էին եղեռնին, ոչ մէկ ոճրագործ ձերբակալեցին, թէեւ շատ դիւրին էր, որովհետեւ ամբողջ թրքութիւնը ոճրագործ ըլլալով վախի դողի մէջ էր մինչեւ Քէմալական շարժումը:

Ահաւասիկ ինչ որ ստուգեցի Զիլէյի հայութեան կոտորածին մասին, թէ վերապրող Հայերէ է եւ թէ տեղացի Թուրքերէ:

Ամասիոյ ճամբով քսորուողները, Զիլէէն մէկ ժամ հեռու, Պայըր-Քէօյի ստորտը սպաննուած են, չորսական, թեւերնին կապուած, կացիններով եւ փայտերով: Ջարդին ազդանշանը տուած է Ղարա Հաճի անուն գազանը, ամենէն առաջ իր դրացի եւ բարեկամ Յովսէփ Պըչաքճեանը սպաննելով: Երկրորդ կարաւան մը էլլէզ գիւղին մօտ, Ալթը Աղաճ դաշտին մէջ ողջ ողջ այրած են: Երրորդ կարաւանը, քաղաքէն չորս ժամ հեռու, անդունդի մը մէջ գլորած են: Եւ ուրիշ կարաւաններ աւելի հեռուները տարած եւ ջարդած են, թուրք գիւղացիներու դանդատին վրայ, որոնք դիակներու հոտէն կը հիւանդանան եղեր:

Տարագրութենէ առաջ ձերբակալուած երեւելիները Ղաղ Օվայի ճախճախուտին մէջ, զարհուրելի տանջանքներու ենթարկելով սպաննած են: Մնացեալները սպաննուած են Զէլթիկի ճամբուն վրայ ուր Ս. Գրիգոր Լուսաւորչի ուխտավայր մը կար եւ վանքին մօտ, անդնդախոր կիրճ մը: Այդտեղ սպաննուած է հայրս:

1923 Մայիսին, Զիլէցի Թուրքերը, Քէմալական եւ հակաքէմալական, սկսան իրար կոտորել: Քէմալական-

ները պարտուեցան, իրենց գլխաւորներէն Կէօյիւնճիք-
լի Օսման քաղաքապետը, Թայիր Չատէ Բահմի, Ֆէ-
նէրճի Չատէ Բահիմ, Թօփճու Չատէ Պէքիր եւայլն,
ընդամէնը 27 հոգի, ամէնքն ալ ջարդարար, բանտար-
կուեցան: Հակաքէմալականները անոնց տունը-տեղը
քանդեցին, կողոպտեցին: Այս դրութիւնը տեւեց 11 օր:
Էնկիւրիւէն, Թօքատէն եւ Սեբաստիայէն Քէմալական
ուժեր հասնելով քաղաքը սաշարեցին, երեք օր անընդ-
հատ ուժակոծեցին: Շատ մը թաղեր աւերակ դարձան:
Երեք օրուան կռիւներէ ետք, Քէմալական զօրքը քա-
ղաքը գրաւեց: Բանտարկուած ջարդարարները ազատ-
ուեցան: Հակաքէմալականներէն 350 հոգի ձերբակալ-
ուեցան, 24 հոգի քաղաքապետարանին առջեւ, 22 հոգի
Թէքէ բաղնիքին առջեւ կախեցին, անոնց մէջ էին
Շէյխ-իւլ-Ֆալամի փոխանորդ միւլթիին, փաստաբան
Ալի էֆէնտին եւ երկու տղաքը, Պարտաք Հաֆըղ և ու-
րիշներ:

Քանի մը օր ետք, 15,000 հակաքէմալականներ քա-
ղաքը սաշարեցին: Քէմալականները ստիպուեցան բեր-
դը ապաստանիլ: Մուլթէն օգտուելով, տանիքներու վը-
րայ քարիւղ լեցուցած էին: Բերդէն արձակուած թըն-
դանօթի կրակով ամբողջ քաղաքը բռնկեցուցին: Բնակ-
չութիւնը փախուստ տուաւ շրջակայ արտերը: Հայերս
ապաստանեցանք Սրապեան Սիրականին պարտէզը:
Հրդեհը 1800 տուն լափեց, որոնցմէ 150ը Հայերու կը
պատկանէին: Ութը ժամ աշխատելով փրկեցինք մեր
եկեղեցին եւ դպրոցը: Հակաքէմալականները կրկին
պարտուեցան: Այս անգամ անխնայ սպաննեցին անոնց-
մէ շատերը:

Քէմալական իշխանութիւնը հազիւ հաստատուած,
հայ իլեակներուն դէմ հալածանքը սկսաւ: Գրաւեցին

եկեղեցւոյ եւ դպրոցի շէնքերը եւ Հայերու բնակած թաղը պաշարեցին: Ձերբակալութիւնները սկսան: Բերրոն Վարդերեսեանին հետ, որ աքսորի միջոցին քրոջ մը պէս զիս խնամած էր, յաջողեցանք թուրքերու շրջ-թայէն անցնիլ եւ քաղաքէն հեռանալ: Ամասիա դացինք ուր տեղեկացանք թէ մեր մեկնելէն ետք բազմաթիւ Հայեր բանտարկուած են: Անոնցմէ թէլլաքեան Միհրանը կարելի եղաւ ազատել կաշառքով: Ասատուրեանը Ամասիոյ պատերազմական ատեանին յանձնուեցաւ: Կիւրինլեան Մարտիրոսին աղջիկը, Մարիամ, զոր բռնութեամբ ամուսնացուցած էին թուրք դատաւորին հետ, յաջողեցաւ Ասատուրեանին մահաւժճիւրը փոխել տալ: Երկու տարի ետքը ազատ արձակուեցաւ: Իր յանցանքը այն էր որ դաշոյն մը գտնուած էր տունէն:

Քէմալական վարչութիւնը Իթթիհատականէն նուազ արիւնարբու չէր: 1922ին, Թօփալ Օսման Չարդարարը Մարզուան, Հէրէք եւ Նիքսար մնացած Հայերը կողոպտեց եւ շատերը սպաննեց: Ատոնց հետ նաեւ Յոյները: Այս գազանը մերժեց յունական ճակատը երթալ, վարժուած էր անգէն Հայերը եւ Յոյները սպաննելու: Իբր զինուորական փախստական եւ ապստամբ, էնկիւրիի մէջ զինքը կախեցին:

Յունական պատերազմի միջոցին, Յոյներ եւ Եօզկատցի Հայեր թոքատի եւ Սամսոնի կողմերը վեց ամիս կռուեցան Քէմալականներու դէմ, մեծ կորուստ պատճառելով անոնց: Թուրքերը ստիպուեցան արտօնել որ անոնք իրենց ղէնքերով Սամսոնէն նաւ նստին եւ երթան Յունաստան:

1923ի ձմրան, Քէմալական կառավարութիւնը յայտարարեց որ ճամբաները բաց են, ուզողը կրնայ հեռանալ թուրքիայէն: Միւս կողմէ, կ'ըսէին թէ իրենց կամքով չհեռացողները պիտի ձերբակալուին ու տարա-

գրուին: Շատերու նման, ստիպուեցայ վերջնականօրէն լքել հայրենիքս: Գացի Սամսոն ուր մօտ երեսուն հայ ընտանիքներ կային: Ճանչցայ Աթմաճը Զատէ Ալի Ֆայիք անուն Հայ մը որուն իսկական անունն էր Աթմաճեան Յակոբ: Ինծի շատ օգնեց: Վերջապէս չոգե՛նաւով Պոլիս հասայ ուր 15 օր բանտարկեցին եւ հարցաքննեցին զիս: Բանտին մէջ 18 Ռուսահայեր տեսայ որոնք ոչ իսկ հարցաքննուած էին: Իրենցմով հետաքրքրուող ալ չկար: Բանտարկուած էին իբր համայնա՛վար:

Թուրք կառավարութեան որոշումով, առժամեայ կերպով Պոլիս մնացի եւ 1925ին մեկնեցայ Ֆրանսա:
Ֆրանսա, 1951

ԱՄԱՍԻԱ

ՏԻԿ. ՓԱՌԱՆՁԵՄ ՇԷՐՊԵԹԵԱՆ

Ամասիան իր շրջակայքով, տարազրութենէն առաջ 15,000է աւելի հայ բնակչութիւն ունէր: Երեք եկեղեցի՝ Աստուածածին, Ս. Նիկողոս եւ Ս. Յակոբ: Երեք դպրոց, բացի Իբրանոսեան վարժարանէն: Կաթոլիկները եւ բողոքականները նոյնպէս դպրոցներ ունէին: Ռամկավար, Հնչակեան եւ Դաշնակցական կուսակցութիւնները, իրենց առանձին ժողովասրահները ունէին:

1915ին քսաներեք տարեկան էի, կուսակալ Սըրրի պէյին երկու աղջիկներուն զծագրութեան դաս կուտա-

յի: Այդ պարագան պատճառ եղաւ որ ընտանիքով ղերծ մնանք տարագրութեան սարսափներէն եւ յաջողեցանք 29 հոգի եւս ազատել:

Ամասիոյ Հայերու տարագրութիւնը սկսաւ, նախ՝ մարդիկը ձերբակալելով եւ բանտերը նետելով: Յակոր անուն ծանօթ մարդու մը կիներ մեր տունը եկաւ



Տիկին Փառսնձեմ Շերպեթեան եւ ամուսինը

լալով եւ պատմեց թէ բանտ գացած եւ ամուսինը տեսած է շատ գէշ վիճակի մէջ: Ամուսինը թողութի կտար մը կը սպրդեցնէ ուր գրուած էր որ բանտարկուածները կը ծեծեն, եղունգնին կը քաշեն, ոմանց լեղուն կը կըտրեն, աչքը կը փորեն եւայլն:

Ելբայրս, Մելքոն Պալլքճեան, երեք զուկի հայր, 30 տարեկան, ձերբակալեցին: Իրեն կերակուր տարինք: Քալելու եւ խօսելու անկարող էր:

Հօրեղբօրս մեծ սուլան, 32 տարեկան, Աւետիս, երկու երախաներու հայր, նոյնպէս բանտարկուած էր: Իր կնոջը հետ բանտ գացինք: Ըսաւ որ ծեծը դադրեցուցած են, յոյս ունին որ արձակուին, իրենցմէ առաջ

աքսոր գացողներէն նամակ ստացուած է եւայլն: Այս ամէնը Հայերը խաբելու համար էր: Երբ երրորդ անգամ բանտ գացինք, բանտը սլարսուած դտանք: Տարագրուածներէն ոչ մէկը ետ եկաւ:

Մեծ քոյրս, չորս անչափահաս զաւակներովը աքսորուեցաւ: Իր ամուսինը արդէն տարած էին: Մինակ մեծ տղան ողջ մնացած էր: Եօթը տարի ետքը Պոլիս եւ յետոյ Ֆրանսա գնաց:

Մեծ եղբայրս, Կարապետ Պալքճեան, կինը եւ երեք փոքրիկները մեր քով մնացին: Իրենց համար արտօնագիր առի կուսակալէն: Նեղ օրերը անցնելէ ետք Պոլսոյ ճամբով Պէյրութ գացին եւ 1946ին ներգաղթեցին Հայաստան, տղաքը, աղջիկները, հարսերը եւ թոռնիկները միասին:

Աքսորէն ազատ մնացողները՝ հայրս, Մկրտիչ Պալքճեան, պզտիկ քոյրս՝ Նուարդ, մեծ քոյրս՝ Ուլսաննա եւ զաւակները՝ Մայրանուշ, Նիկողոս եւ Զուարթ, մեծ եղբայրս՝ Կարապետ, կինը՝ Մարիամ եւ զաւակները՝ Արշալոյս, Պարոյր, Կադմոս: Աքսորուած ելբօրս կինը՝ Սրբուհի, զաւակները՝ Արմենուհի, Մարիամ, Կարապետ: Հօրեղբօրս աղջիկը՝ Պայծառ:

Աքսորուեցան, մեծ քոյրս՝ Աննա, ամուսինը՝ Գառնիկ Գարապաճապեան, զաւակները՝ Նշան, Փայել, Եաղութ, Հայկազն: Անոնցմէ միայն Փայելը ողջ վերադարձաւ:

Տարագրութենէ ազատ մնացողները, որոնք աննըշան թիւ մը կը կադմէին, ստիպուեցան առերեսս դաւանափոխ ըլլալ եւ անուննին փոխել:

1919ին, նշանածս զինուորութենէ ազատուելով եկաւ եւ ամուսնացանք: Ոչ եկեղեցի կար ոչ քահանայ: Ազգական եւ դրացի հաւաքուեցանք, հայրս աղօթք մը կարդագ եւ ճաշեցինք: Քանի մը ամիս ետքը, Պոլսոյ



Ամասիոյ հայկական քաղը, հինա անբակ

մէջ Երուանդ Վրդ. Փերտահճեանը մեզ ստակեց :

Մեր կեանքը, թէև չէինք տարագրուած, ամէնօրեայ ողբ ու կոծ էր : Կորսնցուցած էինք հարիւրաւոր ազգական եւ բարեկամ : Կուսակալ Սըրբին, որուն տունը մնացի, ջարդերուն կազմակերպողն էր, թէև տանը մէջ կինը եւ երկու աղջիկները այնպէս կը ձեւացնէին թէ բանտերու մէջ կամ աքսորի մէջ կատարուածներէն տեղեակ չէին : Աքսորականներու կարաւաններ կ'անցնէին եւ երբ մեզ կը տեսնէին փողոցներու մէջ, կը նայէին կարծես օգնութիւն աղերսելով մեզմէ : Բայց ի՞նչ կրնայինք ընել . . .

Ամասիոյ չէն ու զուարթ դպրոցներուն մանչերն ու աղջիկները քուեցան, ջարդուեցան կամ սնօթի մեռան :

Չարդերը կազմակերպող ուրիշ երկու դահիճներ ալ ճանչցայ : Մէկը Սերաստացի էր, Բէօր Չավուշ կը

կոչէին, միւսը՝ Սեբաստիոյ Վալին՝ արիւնարբու Մոհամմէրը:

Վերջապէս դուրս ելանք Ամասիայէն, մեր սիրելիները կորսնցուցած, տուն տեղ քայքայուած եւ աղքատ: Հազիւ կրցանք Սամսոնի վրայով Պոլիս հասնիլ: Անկէց ալ եկանք Ամերիկա:

Ամերիկա (Մ · Ն ·), 1951

ԳՈՒՐՏՊԷԼԷՆ

ՏԻԿ · ԹԱԳՈՒՀԻ ՍԵՐԱՅՏԱՐԵԱՆ

Մէկ քանի հարիւր տարուան, 8000 հայ բնակիչով գիւղ մըն էր Գուրտպէլէն: Շրջապատուած էր կաղնիի անտառներով եւ լեռներով: Օդը, ջուրը, հիանալի տեսարանները ծանօթ են Պոլսէն եւ ուրիշ տեղերէ ամարանոց եկողներուն: Փառաւոր եկեղեցի մը ունէինք որ կը նմանէր Իզմիրի եկեղեցիին: Կային երկու վարժարան, աղջկանց եւ աղայոց: Երկու մետաքսի գործարան:

Ամուսինս, Համբարձում Սէրայտարեան, երկաթի վաճառական էր: Երջանիկ ընտանիք էինք, վեց զաւակներով: Անդրանիկս, 1914ի պատերազմէն առաջ Ամերիկա մեկնեցաւ: Երկու տղաքս, Միհրան եւ Զաւէն, որոնք ինծի հետ էին աքսորին միջոցին, Հալէպ կը բռնակին: Երեք փոքրիկներս, Յովսէփ՝ եօթը տարու: Նուրհան՝ չորս տարու եւ աղջնակ մը, անապատի աւազներուն մէջ թողուցի:

Ամուսինս իր վեց եղբայրներով, նոյնպէս երկու եղբայրներս՝ Յովհաննէս եւ Սամուէլ Լաֆճեաները իրենց գերդաստանով զոհ գացին դազան Թուրքերուն: Մէկուն կինը՝ Թագուհի, զաւակները՝ Արշակ 10 տարեկան, Ջարուհի՝ եօթը, Արփինէ՝ չորս տարու, Չարդած եւ հորի մը մէջ նետած են:

Գուրտպէլէնի աղէտը սկսաւ 1915 Յունիս 3ին, երբ այրերը, որոնց մէջ էր ամուսինս, ձերբակալեցին եւ Պանտրմա տարին: Այդտեղ սարսափելի տանջանքներ կուտան իրենց չգործած յանցանքներուն համար: Շարաթ մը ետքը հեռագրով դրամ ուզած էր, զրկեցի: Ասկէ ի վեր ոչ մէկ լուր:

1915 Օգոստոս 24ին մեզ տեղահան ըրին: Տուն ու տեղ, ամէն ինչ լքելով հետիոտն ճամբայ ելանք, գիշերները բաց օդին մէջ մնալով: Չորս օրէն Պիլէճիք հասանք: Պիլէճիկի Հայերը դեռ տեղահան չէին եղած, երկու շաբաթ իրենց մէջ մնացինք: Կը խորհէի թէ անոնք տեղահան չեն ըլլար եւ մենք ալ Պիլէճիք կը մընանաք: Շուտով իրենց հետ քշուեցանք եւ չորս օր քալելով հասանք Էսկիշէհի: Յետոյ, մեզ ոչխարի վակոնները լեցուցին եւ տարին Գոնիա, ուր գիշեր մը մնացինք քաղաքէն դուրս: Միւս օրը նորէն ճամբայ հանեցին: Քալեցինք ու քալեցինք եւ թրքական գիւղերէ անցանք: Տեղ մը, հայ գինուորներու հանդիպեցանք որոնք Գերմաններու հրամանին տակ թիւնէլի մէջ կ'աշխատէին: Մեզ որ տեսան, լացին, մեզ ալ լացուցին: Արեւին տակ խանձեր էին խեղճերը: Հասանք Թարսուս: Քանի մը օր եւս քալելով՝ Օսմանիէ: Յիւր կիները անկարող էին քալելու, շատերը վիժեցին: Ծերերը ճամբան մնացին: Սաստիկ տաք էր եւ ջուր չկար: Ասկէ վերջն էր սակայն բուն ողբերգութիւնը:

Պզտիկներս կուլային. «Մայրիկ, ա՛լ չենք կրնար քալել»։ Կարաւանը կ'երթար, ետ մնացողը գնդակահար վը սպաննէին։ Ուժերս սպառեցան։ Պզտիկներս կը քաչկուտուէին, անօթի, ծարաւ, յողնած։ Մէկը շալկած, միւսին ալ ձեռքէն բռնած, լալով կը քալէի։

Վերջապէս տեղ մը մէկ գիշեր մնացինք։ Յանկարծ սաստիկ փոթորիկ մը պայթեցաւ, անձրեւ, հեղեղ, կայծակ։ Կարծես աշխարհի վերջը եկած էր. երանի թէ եկած ըլլար, կ'ազատէինք։ Առտուն դադրած էր անձրեւը, բայց մեր թրջած հագուստներուն մէջ կը դողայինք։ Այս վիճակին մէջ դարձեալ քալել տուին։ Շատերը ճամբուն վրայ մեռան։ Մեզմէ առաջ ուրիշներ անցած էին։ Տեսանք մոխրակոյտեր, դիակներ ու մեռած նորածին մը եւ կնոջ մը դիակը որուն քով նըստած կուլար իր երկու տարեկան տղան։

Շարունակ քալելով Մէսքէնէ հասանք, արարական անապատին մէջ, Եփրատի եզերքը։ Բոլորովին մերկ էինք, արեւին եւ աւազին տաքէն ոտքերնիս կ'այրէր։ Ծարաւն ու անօթութիւնը մեզ բոլորովին ուժաթափ ըրած էին։ Մարդկային կերպարանքէն բոլորովին դուրս ելած էինք։ Այստեղ երկու զաւակներս հիւանդացան եւ երկու օրուան մէջ մեռան, չդիմանալով զուլումին։ 15 տարեկան տղուս հետ աւազին մէջ փոս մը բացինք եւ անբախտ ձագուկներս թաղեցինք, հեղեղի նման արցունք թափելով։ Գրեթէ չափաթի մը չափ թողուցին հանգիստ։ Յուրտէն ու տաքէն, ինչպէս կարկուտը կը զարնէ, այնպէս ալ զարնուեցանք ամէնքս։ Օրական հինգ — տասը հողի կը մեռնէր շուրջս։ Անկարելի եղաւ թաղել։ Խոշոր փոս մը բացին եւ մեռելները մէջը նետեցին։

Այս վիճակով նորէն աքսոր։ Քալէ ու քալէ, ցեփեկուան սաստիկ տաքին եւ գիշերուան ցուրտին, հի-

ւանդ վրճակի մէջ: Վերջապէս կէս-մեռել հասանք Տիպ-նի, Նփրատի եզերքը: Ոչ ծառ, ոչ քար, աչքդ առածին չափ աւազ: Գոնէ խոտ ըլլար, ուտէինք: Գերեզմանէն փախած կմախքներու կը նմանէինք: Փոս մըն ալ այստեղ բացին դիակներու համար: Հազարներով անտէր Հայերուս գերեզմանը եղան Մէսքէնէն եւ Տիպսին:

Անօթի էինք: Տղուս հետ Արաբներուն վրանը մուրալու գացինք: Շատերը կուտային արմաւ եւ լաւաչ: Ասոնք պետուին աշիրէթներ էին: Կը սոսկայի իրենց երեւոյթէն, մանաւանդ կիները, այլանդակ մէկ սեւ շապրիկով, երեսնին, կուրծքերնին, ձեռքերնին «հաճի» ծեծուած:

Օր մը, երկու խոշոր շուն վրաս յարձակեցան: Արաբ կին մը զիս ազատեց եւ ձեռքէս բռնելով վրանը տարաւ: Այդ օրը հոն աշխատեցայ, շատ լաւ վարուեցաւ հետս: Երեկոյին լաւաչ մը տուաւ եւ պատուիրեց որ կրկին երթամ իրենց վրանը: Գոհ էի, գէշ աղէկ ապրուստ մը կը ճարէի: Դուրսի աշխարհէն բնաւ լուր չունէինք: Օր մը ժանտարմ մը եկաւ Արաբներէն զինուոր առնելու: Ոչ մէկը գնաց, ամենքն ալ անապատ փախան:

Տղաս Միհրանը զինուոր տարին, մնաց մէկ տղաս: Նորէն աքսոր եւ այս անգամ Տէր-Չօր: Սուրբերով, սոփաներով յարձակեցան անտէր ժողովուրդին վրայ:

Ներոջս երկու տղաքը զինուոր գացած էին Շքոտրա (Ալպանիա), անոնց նամակները պահած էինք: Վախը մէկ կողմ դնելով, թուրք սպաներուն գացի եւ նամակները ցոյց տուի: «Երկու տղաքս, ըսի, պետութեան համար կը կռուին եւ դուք անոնց ծնողքը կ'աքսորէք»: Ինծի թուղթ մը տուին ուր գրուած էր թէ զինուորի

մայր եմ եւ աքսորէ ազատ եմ : Այս թուղթը զիս ազատեց Տէր-Ջօրի ջարդէն :

Միայն մէկ քանի հիւանդներ մնացած էին Տիպսի : Մնացեալ ժողովուրդը ղրկեցին Տէր-Ջօր եւ ջարդեցին :

Տիպսի մնացի , մինչեւ որ տղաս քիչ մը աղէկցաւ : Նորէն Արարներուն վրանը կ'երթայի : Գաղթականներէ գողցած հագուստները կը կարէի : Պէտք է ըսեմ որ Պետուհիները թէեւ կը գողնային եւ կը կողոպտէին , բայց շատերուն օգտակար եղան :

Քանի մը հոգիով որոշեցինք Հալէպ երթալ : Երեք կին , տղաս , հիւանդ մարդ մը եւ իր կինը : Գիշերները կը ճամբորդէինք հեռագրի գծին հետեւելով , իսկ ցերեկները փոսերու մէջ կը պահուէինք : Որչափ որ զգուշացանք մարդակերպ թուրք գաղաններէն , նորէն հանդիպեցանք իրենց : Անոնցմէ մէկը ընկերներուն ըսաւ . «Ասոնք հիւանդ են , հեռու կեցէք : Ոչ դրամ ունին , ոչ հագուստ» :

Աղի անապատէ մը անցանք , ոտքերնիս ծակծակեցան : Վերջապէս հասանք Հալէպ , անծանօթ քաղաք մը , ցնցոտիներով , բոպիկ , արեւէն սեւցած , անօթի : Աղի արցունք թափեցի , հարուստի կին էի , հանդիստ տուն-տեղ ունէինք , հիմա ի՞նչ վիճակի հասեր էինք : Արար տղու մը հանդիպելով , Հայոց եկեղեցին հարցուցի : Փոխանակ եկեղեցի տանելու , ոստիկանատուն տարաւ : Ըսին թէ աքսորէն փախած ենք եւ մեզ բանտարկեցին , միւս օրը Տէր Ջօր քչելու համար : Տարիքոտ մարդ մը միջամտեց եւ ղրկեցին չէնք մը , ճիտտիէ թաղին մէջ , ուր թուրք զինուորներու հագուստ կը կարէին գաղթական հայ կիները , օրական 100 կըրամ հացի փոխարէն : Այդտեղ աշխատեցայ մինչեւ զինադադար :

Արար չէյիւր եւ Անգլիացիք քաղաքը գրաւեցին, բայց այստեղ ալ ջարդ եղաւ, շատեր մեռան եւ շատեր վիրաւորուեցան: Տղաս ու ես ալ վիրաւորուեցանք: Այթունեան հիւանդանոցը տարին մեզ ուր երեք ամիս մնացինք:

Հրաման ելաւ որ աքսորեալները իրենց տեղը վերադառնան: Շոգեկառքով Ատանա գացինք: Տղաս, Միհրանը, որ կորսուած էր, այդտեղ գտայ: Յետոյ՝ Պոլիս եւ մեր գիւղը վերադարձանք: Տուն—տեղ չէր մնացած, ամբողջ գիւղը աւերակ ու մոխիր էր:

Առաջին գործս եղաւ Ամերիկա գտնուող տղասս փնտուել, մօրեղբօրս՝ Վեր. Սեդրակ Պետրիկեանի միջոցաւ: Տղաս անմիջապէս պատասխանեց եւ ծամբուծախք ղրկեց: 1920ին, Փրանսական վիզայով հասանք Ամերիկա:

Տէր Զօրի ջարդի մասին Հալէպի մէջ հայ երիտասարդէ մը տեղեկացանք հետեւեալը: Օր մը բոլոր Հայերը կը հաւաքեն, ըսելով որ նպաստ պիտի բաժնեն: Զիաւոր թուրք զինուորական մը հայ տղեկ մը կ'ուզէ, ոտքէն կը կախէ եւ կ'ըսէ. «Կը տեսնէ՞ք այս օձի ձագը, պիտի մեծնայ եւ նորէն պատուհաս պիտի ըլլայ մեզի»: Եւ սուրով երկուքի կը բաժնէ տղեկը: Միւս գաղանները իր օրինակին հետեւելով կը սկսին ջարդել Տէր Զօր եւ չրջակայքը գտնուող Հայերը:

Արարներուն քով դեռ շատ կիներ եւ աղջիկներ կան: Այն ատեն պատիկ էին, կարելի է շատեր իրենց ինքնութիւննին մոռցեր են: Շատերուն հանդիպեցայ, լացին խեղճ, անտէր աղջիկները: Երեսնուն վրայ կապոյտ «հաճի»ներ շինուած էին: Տարին անգամ մը մասնաւոր մարդ մը կ'երթայ «հաճի» շինելու: Այլանդակ կերպարանք մը կ'առնեն: Միեւնոյն բանը հայ կի-

ներուն ըրած են ստիպողաբար: Շատերը ամուսնացած են: Անգամ մը մէկուն ըսի. «Ամէն մարդ իր տեղը կ'երթայ, չե՞ս ուղեր դուն ալ երթալ»: Գլուխը երեւոց տխրութեամբ. «Ի՞նչպէս երթամ այս երեսովս: Մարմինս փճացաւ, ծնողքս ջարդեցին, ոեւէ ազդական չունիմ, նշանածս մեռցուցին: Ո՞ւր երթամ, պիտի մընամ հոս եւ սպասեմ մահուանս, որ ազատիմ այս անտանելի կեանքէն...»:

Եթէ հիմակուան պէս զօրաւոր կառավարութիւն մը ունենայինք մեզ պաշտպանող, այս զուլուճները չէր կրնար ընել գազան, հրէշ թուրքը:

Չմոռնամ աւելցնել նաեւ թէ թուրքին բարբարոսութիւնը շարունակուեցաւ Մուսթաֆա Քէմալի օրով ալ: 1921 Սեպտ.ին, Կէյվէ-Ագհիսարի մէջ, Քէմալին զինուորները կը յարձակին, աքսորէն նոր վերադարձած հայ խլեակներու վրայ եւ ամէնքն ալ սուրէ կ'անցնեն: Այդտեղ սպաննած եւ հորի մը մէջ լեցուցած են երկու եղբայրներս, Յովհաննէս եւ Սամուէլ Լաֆճեանները, իրենց կիները եւ անչափահաս երեք զաւակները:

Քաղաքակրթեալ Եւրոպան եւ քրիստոնեայ Ամերիկան ոչ մէկ ձայն բարձրացուցին թուրքին այս նոր գազանութեան դէմ: Ընդհակառակը, ամէն բան գիտնալով հանդերձ, նորէն թուրքը կը պաշտպանեն...:

Ամերիկա (Մ. Ն.), 1951



ԻԶՄԻՐ

ՏԻԿԻՆ Հ. ԲԱՐԻԼՈՅՍԵԱՆ

Զմիւռնիոյ մէջ, որ Միջերկրականի հարսը կոչուած էր, կ'ապրէին մեծ թիւով Հայ եւ Յոյն, կատարեալ համերաշխութեամբ:

Տաքուկ երկիր մը, արգասաբեր ու բարգաւաճ, որ դատապարտուած էր, յանկարծ, հրոյ ճարակ դառնալու:

Տասնըվեց տարեկան էի, դպրոցական շրջանս աւարտելու մօտ, երբ ականատես եղայ զարհուրելի աղէտին, ուրկէ ազատեցայ հրաշքով:

Սեպտեմբերի սկիզբն էր: Իրիկուն մը, մօրաքրոջս ամուսինը, Արտաշ Պօտուրեան, հեւիհեւ հասաւ մեծ մօրս տունը, ուր օդափոխութեան դացած էի:

— Շո'ւտ, շո'ւտ, ըսաւ, մեզի ապշութեան մատնելով, Քէմալի զինուորները Պուռնովա հասած են, սէտք է քաղաք ապաստանինք:

Մեծ մայրս կը բնակէր Հալքա-Բունար գիւղը, Պուռնովայի շատ մօտիկ: Առանց առարկայ մը վերցընելու, հազուեցանք եւ փողոց նետուեցանք:

— Ո՞ւր կ'երթաք, յանդիմանեց մեր դրացուհին, Գօգօնա Մարիանթին, որ մեծ մօրս լաւագոյն բարեկամուհին էր, ինչպէ՞ս կրնաք տուն-տեղ ձգելով փախչիլ: Նստեցէք տեղերնիդ:

Ժամ մը վերջ խեղճ կիներ առաջին նահատակը եղած էր:

Քալելով հասանք Բօրթարէղ, ուրկէ անցանք Այ-Նիքոլա, յունական թաղը, որ շատ մօտիկ էր Հայոց թաղին: Հոն դիմեցինք մեր յոյն ծանօթներէն տիկին

Վանկէլիային, որուն տունը լեփ-լեցուն էր փախստական հայ երիտասարդներով:

Ազնիւ կինը իսկոյն մեզի ներս առաւ:

Սարսափը եղբայրացուցած էր մեզի: Քարացած՝ կը սպասէինք մեր ճակատագրին...

Փողոցները պարպուած՝ միայն դուրս ձգուած կենդանիներ կը թափառէին անտէր: Տուներու դռներն ու պատուհանները փակուած էին, մեռելային լուծիւն կը տիրէր ամէն կողմ: Յանկարծ սկսաւ հրացանաձգութիւն մը:

Վանկէլիայի բնակարանը քարաչէն, ամուր տուն մըն էր երկու յարկով: «Գուցէ չհամարձակին ներս մտնել» ըսաւ մեր պաշտպան ազնիւ տիկինը, համոզելով որ տեղերնուս չբաժնուինք:

Անխոհեմին մէկը ուզեց դուրս ելլել, մեզի տեղեկութիւններ բերելու համար: Հազիւ փողոց ելած ըսպաննուեցաւ:

Սարսափահար կը սպասէինք երբ քովի տունէն աղջկան մը ճիչը լսուեցաւ: Երկու երիտասարդ ոտքի ելան օւշնութեան հասնելու: «Օգուտ չունի, տեղերնիդ նստեցէք, սաստեց Վանկէլիա:» Աւելի վերջ իմացանք զարհուրելի իրականութիւնը: Հրէշ թուրքերը աթոռի մը վրայ կապեր էին հայրը եւ անոր ներկայութեան, իր մէկ հատիկ աղջիկը պղծեւէ վերջ, սպաններ էին ծերունին:

Քառորդ ժամ անցաւ դարու մը չափ ծանր, ահաւոր: Մեր դուռը զարկին...

Վանկէլիա մատը բերանին տարաւ: Տղաքը դէնքերը պատրաստեցին ինքնապաշտպանութեան նպատակով:

Աղջիկները դէմքերնին քէնքիւր տ'իօտով այրած ու տգեղցուցած էին, վայրենի զինուորներուն աչքին

չզարնելու համար :

Վանկելիա երկրորդ յարկը վազեց եւ առանց դուռ բանալու, փոքրիկ լուսամուտէ մը գլուխը դուրս հանելով, հարցուց .

— Ի՞նչ կ'ուզէք, մենք Յոյն ենք :

— Մեզի դրամ պէտք է, դուռաց զինուորը, «փարա՛, փարա՛ . . . »

— Ախ էֆէնտիս, ձեզմէ առաջ ուրիշներ եկան առին բոլոր ունեցածս : Ահա ձեզի՛ ոսկի մատանիս . . .

Ու Վանկելիա իր ամուսնական մատանին նետեց զինուորին :

— Քալեցէք, ըսաւ Թուրքը ընկերներուն, հոս մարդ չկայ : Ծեր կին մըն է միայն» : Ու անցան դացին : Դուրսը հրացանաձգութիւնը կը շարունակուէր : Հետուէն աղիողորմ ճիչեր մեզ կը տառապեցնէին : Երեք մահասարսուռ օրեր անցան : Վանկելիա մեզի բաժնեց իր ունեցած բոլոր ուտելիքը : Ունեցած պաշարը սպառելէ ետք, սկսաւ անօթութեան շրջանը . . . Ամենուս գոյնը նետած էր, մեռելի պէս դեղնած՝ անզօր ու անխօս, կը սպասէինք մահուան :

Այդ օրերը, մօրաքրոջս ամուսինը, խեղճ Արտաշ Պօտուրեանը, զգուշութեամբ տանիք ելաւ, քովի դրացիներու վիճակին տեղեակ ըլլալու համար :

Յոյներէն շատեր տուներու ետեւը տարածուող պարտէզներուն մէջ համախմբուած էին : Շատեր ալ թաքստոցներ շինած՝ հոն կը քնանային : Արտաշ վար իջաւ խռովայոյզ :

— Կարմիր մահիկը կը ծածանի ամէն կողմ, հազիւ կըրցաւ ըսել, Գատիֆէ Գալէէն մինչեւ ամենայետին շէքերը . . . ահաւոր է տեսարանը . . . »

— Ի՞նչ պիտի ըլլայ մեր վիճակը, կը մտածէինք : Առաւօտ մը, չարաչուք զանգակներու ձայնը լըս-

ուեցաւ Հայոց թաղէն : Սուրբ Ստեփաննոս եկեղեցին էր որ «օգնութիւն» կը հայցէր :

Սկսանք ամէնքս աղօթել, արտասուելով : Հիմա կը մտածէինք միւսներուն վրայ, անոնց որ իրական վրտանգի մէջ, գուցէ մեռնելու վրայ էին, չարչարանքով . . .

Երկար շարունակեց Սուրբ Ստեփաննոս իր ողբը, օգնութիւն խնդրելով : Հաղարաւոր Հայեր ապաստանած էին հոն, սպասելով հրաշքի մը :

Ժողովուրդը, չորս օր հերոսաբար դիմադրելէ ետքը, ազատուեցաւ : Ամերիկեան եւ միջազգային զինուորներ հասան եւ Հայերը առաջնորդեցին ծովեզերք :

Իսկ ի՞նչ պիտի ըլլայինք մենք :

— Տղաք, հոս նստիլը անխելքութիւն է, ըսաւ երիտասարդ մը : Զանանք դուրս ելլել եւ ինքզինքնիս ծովեզերք նետել :

Երկար խորհելէ յետոյ, որոշեցինք բոլորս միասին ելլել : Քովի դրացիներն ալ համաձայնեցան եւ բոլոր թաղեցիք լքեցին իրենց բնակարանները : Խուճապի մատնուած հէք ամբոխ մը սկսաւ յառաջանալ դէպի ծովեզերք : Ճամբու ընթացքին, աւելի ստուարացաւ թափօրը : Կիներ կը նուաղէին, չհաւատալով իրենց աչքերուն առջեւ պարզուած տեսարաններու : Վախը, հոգիներու տիրապետած, խարաղանով կը հալածէր մեզ : Դիակներ կոխկրտելով, սատկած կենդանիներու վրայէն անցնելով վերջապէս հասանք քարափ : Հոն արդէն հաղարաւոր ժողովուրդը խոնուած, կը յուսային փրկուիլ միջազգային նաւերու շնորհիւ, որոնք առիթէն օգտուելով, սինեմայի ժապաւէն կը պատրաստէին :

Մեր քաղաքին առաջնորդը հեռացեր էր ճիշտ ատենին : Իսկ Յոյներուն առաջնորդը, Մետրոպոլիտ Խրիստոսթոմոսը, մերժեր էր դասալիք դառնալ եւ որոշած էր

մեռնիլ իր ժողովուրդին հետ...

Թուրք խուժանը քաշկուտելով ու շարչարելով հանեց անոր աչքերը, եւ փետտեց մօրուքն ու մազերը: Իմացանք թէ հայր Խրիստոսթոմոսը մեռած էր իբրեւ հերոս: Անոր յիշատակը վառ կը մնայ յոյն ժողովուրդի սրտին մէջ, անիծելով վայրագութիւնը Քէմալին: Եւ իր գինուորներուն, որոնց, արդարեւ, «գլխուոր» մակդիրը շնորհել կարելի չէ...

Քարափին վրայ ձգեցինք մեր բոլոր ծրարները: Չէինք կրնար այլեւս կրել զանոնք:

Ծովեզերքը ահաւոր տեսարան մը կը ներկայացընէր: Գետինը նետուած վիրաւոր տղոց հաշիւը չկար: Տղեկ մը, փորոտիքը դուրս թափած, կը հեծեծէր ցաւագին: Ծովը լեցուն էր դիակներով, որոնց մէջ տեսայ խարտեաչ աղջկան մը սպիտակ մարմինը որ կը ծփար շուրին վրայ...

Յոյն աղջիկները թաքստոց ընտրեցին իրենց ազգային գերեզմանատունը, ուր կը պահուէին գիշերները, դամբաններու մէջ, գերծ մնալու համար առեւանգումէ...

Չարհուրելի հրդեհ մը, իր բոցեղէն լեզուներովը լափեց քաղաքին ամենաչքեղ մասերը եւ հսկայ քայլերով հասաւ քարափ, ժողովուրդը մղելով դէպի ծով, մահուան ծոցը:

Սուրի եւ հուրի մէջ մնացած ժողովուրդը խելացնոր, կը տանջուէր՝ մինչ միւս կողմէն կը շարունանուէին դաշնակից մարտանաւերու բրօժէքթէօններուն անխիղճ, անամօթ խաղերը, խեղճ ու անպաշտպան՝ հազարաւոր հոգիները նկարելու համար...

Երկար տեւեց կրակը, որ անթիւ շէնքեր ու թաղերաւերակ դարձնելով, խոր սուգի մատնեց Եգէական ծովուն հարսը...

Ութ օր ծովեզերքը թափառելէ յետոյ, միշտ ամբոխին մէջ մտնելով, Արտաշ մօրքերայրս մեզ առաջնորդեց անսպասելի կորովով եւ իր կիներն ու երեք զաւակները եւ կնոջը ամբողջ պարագաները բերաւ մինչեւ նաւահանգիստ ուր յունական շոգենաւեր կը հաւաքէին թափառական ժողովուրդը ու կը փոխադրէին Քիոս, Միտիլի, Անտրոս, Գալոնի եւ այլ կղզիներ:

Ու երբ փրկութեան ճամբան գտած ըլլալ կը կարծէինք, թուրք ոստիկաններ եկան եւ Արտաշը ձերբակալեցին:

— «Նազիկ, չօճուկներուս լաւ նայէ» եղան իր վերջին խօսքերը:

Արտաշը չվերադարձաւ: Իր երեք փոքրիկները շատերու պէս որբ մնացին:

Ազատարար խարխուլ շոգենաւ մը մեզ բեռցուց ու տարաւ Միտիլի: Մինչեւ այսօր՝ մղձաւանջի նման միտքէս չէ հեռացած 1922 թուականը: Եւ կ'ուզեմ պոռա՛լ աշխարհի երեսին.

«Քաղաքակիրթ» մարդիկ, աւելի վայրենի էք յաճախ, քան իրական վայրենիները:

Ֆրանսա, 1951

Պ Ա Ն Տ Ր Մ Ա

ՏԻԿ. ԳԱՅԵԱՆԷ ՊԱՆԻՐԵԱՆ

Բնիկ Պանտրմացի Յարութիւն Բումեանի վեց զաւակներուն երրորդը, ծնած էմ 1889 Յուլիսին: Եղած էմ աւագ ուսուցչուհի Ազգ. Աղջկան վարժարանին:

Պանտրմա, Մարմարա ծովուն եզերքը, Թուրքիոյ կարեւոր նաւահանգիստներէն մէկն էր: 1915ի ընդհա-

Նուր տեղահանութենէն առաջ, ունէր մօտաւորապէս 30,000 բնակչութիւն, Հայ, Յոյն եւ Թուրք: Այս վերջինները Հայերու եւ Յոյներու կրկինն էին: Յոյները գրաւած էին քաղաքին ծովեզերքը, Թուրքերը դաշտային մասը, իսկ Հայերը՝ կեդրոնը: Հայերը ունէին երեք եկեղեցի, Մայր եկեղեցին եւ բողոքական ու կաթոլիկ եկեղեցիներ: Հայերը եւ կաթոլիկները ունէին մանչերու եւ աղջիկներու առանձին դպրոցներ, բողոքականները՝ երկսեռ վարժարան մը միայն: Կաթոլիկ ու բողոքական Հայերը աննշան փոքրամասնութիւն կը կազմէին:

Հայոց բնակած թաղը կը կոչուէր «Կիրակոս օղլու մուհալլէսի», ի պատիւ հօրս եւ մեծ հօրս, որ ժամանակին աչքառու անձերէն մէկը եւ թուրք կառավարութեան ազդեցիկ աղա մը եղած է:

Հայերը կը զբաղէին վաճառականութեամբ եւ արհեստներով: Յատկանշական էր հայ ժողովուրդին մէջ կարօտ ընտանիքներու չգոյութիւնը:

Տարագրութենէն տարի մը առաջ, աղջկանց քարաչէն վարժարանը գրաւուեցաւ զինուորական իշխանութեան կողմէ: Քանի մը ամիս ետքն ալ՝ Հայոց Մայր եկեղեցին վերածեցին բանտի, ուր չարչարուեցան եւ սպաննուեցան չքջակայ քաղաքներու եւ գիւղերու եկեղեցականներէն եւ մտաւորականներէն շատեր: Հօրաքոյրս, Թուրք բանտապահի մը դերացի ըլլալով, մեծ սարսափով կը պատմէր անոր արիւնլուայ ձեռքերով տուն վերադառնալը ամէն երեկոյ: Բանտարկեալներէն ոմանք կախաղանով, ոմանք արիւնոտ վէրքերու վրայ օրական քանի մը անգամ հարուածելով եւ ուրիշներ զանազան անլուր խժգժութիւններով անշնչացած էին: Այս տարաբաղը Հայերու անունները հաւաքած էր հայոց Առաջնորդարանը մինչեւ տեղահանութեան օրը:

1915 Յուլիսին սկսաւ Պանտրմայի աղէտը: Բախտաւորութիւն էր մեր տան համար միջին եղբօրս, Պետրոսին, Ամերիկա մեկնելը 1913ին: 5000ի չափ հայու-թիւնը փոխադրեցին շոգեկանքով, շոգենաւերով եւ առազաստանաւերով: Մեզ վտարող թուրք սաշտօնեաները նախապէս առաջարկեցին դաւանափոխ ըլլալ ու մնալ իրենց հետ: Հայրս վճռական կերպով մերժեց:

Սրտաբեկ թողուցինք մեր պապենական օճախը եւ մտանք շոգենաւ, հասանք Կէմլէյիկ, ուր մնացինք մէկ դիշեր: Հետեւեալ առաւօտ, թուրք տեղակալը հրամայեց 4-5 ընտանիքի միայն մէկ կառք յատկացնել: Հարիւրաւորներու լքած առարկաներուն բլուրը մնաց թուրքերուն: Իսկ սոսկալի անձրեւներուն հետեւանքով բռներու կառքերն ալ չերեւցան ու բոլորս մնացինք մեր ունեցած ձեռքի բռներով եւ մեր վրայ գտնուած հագուստներով ու դրամով: Գրեթէ ամէն օր արշալոյսին ճամբայ ելանք եւ քալեցինք մինչեւ վերջալոյս: Պիլէճիքէն շոգեկանքով առաջնորդուեցանք Աֆիոն-Գարահիսարի բացերը: Հոտ, թուրքերը յարձակեցան մեր վրայ գոռալով, ծաղրելով ու ծեծելով. «Է՛յ, պանտրմացիներ, ո՞ւր մնացիք, ահա ձեզի կը սպասենք մատաղներով, հերիսայով, թմբուկով ու նուազով»:

Այդտեղ վրաններու ներքեւ հաւաքուած էին Սպարտայէն, Պուրտուրէն, Չէնկիլէրէն, Սէօլէօղէն, Պիլէճիկէն, Էսկիչէհիբէն, Պալլքէսէրէն եւ չրջակայքէն Հայեր: Մենք ալ լարեցինք մեր վրանը անորոշ ժամանակուան մը համար: Ամէն օրուան ուտեստեղէնը կը բերուէր մեր մօտ, մերձակայ թուրքերուն կողմէ որոնք մեզ կը կողոպտէին: Քառասուն օր յետոյ մեր վրանը քանդուեցաւ ոստիկաններու կողմէ, կրկին շոգեկանք խոնուելու համար: Որոշ էր այլեւս, գիւղ ու քաղաք պիտի չտեսնէինք, ոչ ալ տուն ու տանիք ունենայինք:

Անցանք Գոնիայէն , Գարամանէն , հասանք Էրէյլիի տա-
փաստանները , կանգնեցինք շարժուն բնակարանները եւ
մնացինք երեք գիշեր : Երրորդ օրը թուրք մը առաջար-
կեց վեց օսմ . դեղին ոսկիով իր կառքերը վարձու տալ
մեզի մինչեւ յաջորդ կայարանը : Համաձայնեցանք : Ա-
նոնք որ դրամ չունէին , ուշացան ճամբաներու վրայ
եւ կրեցին բարբարոսներու հալածանքը : Մեծ դառնու-
թեամբ կը պատմէին թէ թուրքերը , հարսերու քանի
մը ամսուան երախաները սուրին ծայրը անցուցած եւ
ծաղրած են : « Հո՞ւ ալ կը բազմանաք . . . »

Իսլահիյէ հասանք : Հոս թշուառութիւնը իր մա-
հասարսուռ ճիրանները սկսաւ ցոյց տալ : Աքսորեալները
թալանուած եւ կողոպտուած , ստիպուեցան հացի մը
փոխարէն ծախել իրենց վերջին ծածկոցներն ալ եւ մը-
նալ անպատասպար աշնան ցուրտին եւ անձրեւներուն
դէմ :

Հիւանդ մայրեր , իրենց անհայր փոքրիկներուն
հետ գամուած էին խոնաւ գետնին վրայ , կիսամերկ ու
դեղնած : Տեսայ երիտասարդ կին մը , ձեռքերուն ու
ոտքերուն վրայ թարախոտած վէրքերով : Իր երկու
անչափահաս մանչուկները , լալազին կը ջանային իրենց
մօր վէրքերը դարմանել :

Այդտեղէն ալ քուեցանք լեռներու վրայէն , ձիւնին
եւ ցեխին մէջէն ամայի , անորոշ ուղղութեամբ : Յետոյ
Հալէպի մօտ , փոքր կայարանի մը հողամասին վրայ
նետուեցանք : Տեղատարափ անձրեւը , միացած լեռնե-
րէն խուժող հեղեղներուն շքանդեց շատերու վրանները :
Մեզի համար միւիթարութիւն էր տեսնել մեր վրանին
մէջ պատասպարուած բազմութիւնը , ոտքի վրայ իրա-
րու քով սեղմուած : Դեկտեմբերի սառսկաշունչ քամին
ընդհուպ փոխեց անձրեւը ձիւնի ու սառնամանիքի :

Պանտրմա-Պալլքէսէրի առաջնորդ Մազլըմեան Արքեպիսկոպոս, որ աքսորականներու կարաւանին մէջ էր, յաջողեցաւ իր շուրջ հաւաքել կարգ մը ծանօթ մարդիկ որոնք որոշեցին կաշառել թուրք միւտիւրը եւ արտօնութիւն ձեռք բերել, շոգեկառքով փոխադրուելու համար յաջորդ տանջավայրը: Թուրքը դիւրաւ տեղի տուաւ:

Հարիւրաւոր Հայեր սկսանք քալել դէպի կայարան, անցնելով սարսուեցուցիչ տեսարաններէ: Ճամբուն վըրայ հազարաւորներ սառած էին, խումբ խումբ: Տեսանք կաթնկեր մանուկներ իրենց մօր կողքին փարած: Անցանք սարսափահար եւ լալահառաչ մտանք շոգեկառք, ուր մնացինք անչարժ երեք օր, մինչեւ որ գերման բարձրաստիճան սպայ մը մօտենալով հրամայեց դուրս նետել բոլորս ալ կառախումբէն: «Մեր շոգեկառքերը մեր զինուորներուն համար են, թող քալեն հայ գաղթականները» գոռաց այս քրիստոնեայ դահիճը: Թուրք ոստիկանները փայտերով յարձակեցան ու ծեծելով արտաքսեցին մեզ: Բախտաւոր զգացած էինք ինքզինքնիս երեք ամբողջ զիշերներ ձեռնախառն փոթորիկներու դէմ պաշտպանած ըլլալնուս համար, միւս կողմանէ, սակայն, ենթարկուած էինք ոջիւններու արշաւանքին: Ժանտատենդի մահասփիւռ համաճարակը աւերը տարածեց գաղթականներուս մէջ: Գիշեր էր, անպատասպար տափաստանին վրայ, ցուրտ քամին կը խարազանէր մեր մարմինը: Խարոյկներ պատրաստեցինք փայտի կտորուանքով ու կարելին ըրինք վրանները կանգնելու: Առաւօտուն կանուխ ըստ սովորութեան ճամբայ հանուեցանք: Մօտակայ գիւղերէն բերուած քանի մը գրաստ վարձեցինք հիւանդներու եւ ծերերու համար:

. Տեսարանը հետզհետէ աւելի ահաւոր կը դառնար : Ճամբուն երկու կողմը, անսահման տարածութեան մէջ սփռուած էին անթաղ մեռելներ, լքուած հիւանդներ, ծերեր, աշնան տերեւաթափի նման : Հիւժած ու պարտասած հետիոտն ժողովուրդը ուռած ոտքերու վրայ հաղիւ կը քաշկռտուէր, հետզհետէ ստիպուելով լքել իր սրտահատորները զորս կռնակով կրած էր շաբաթներով, ամիսներով : Այս ուղին կ'երկարէր այսպէս մինչեւ Տէր-Զօրի անապատը, ուր ողջամբ հասնողներուն կը սպասէր Թուրքին պատմական ջարդը :

Պանտրմա-Պալըքէսիբի Առաջնորդը Պոլսոյ Պատրիարքարանէն ստացեր էր 100 օսմ . Թղթադրամ, զոր արծաթ դրամի վերածելով բաժնեց քաղցածներուն, որոնց աչքերը ածխացած ու մարմինը կմախք էին դարձած : Մէկ օսմ . Թղթադրամը կ'արժէր 35 դրուշ : Ծով-կարօտութեան մէջ կաթիլ մը ջուր :

Եկանք Գաթմայի գաղթավայրը : Այս ընդարձակ տարածութեան մէջ ձիու պայտի մը չափ մաքուր տեղ գտնել անկարելի էր, հիւանդներուն ապականութենէն : Զիաւոր ոստիկանները անխնայ կը կոխտէին ու կը խարազանէին հիւանդ եւ մահամերձ, որոնք քանի մը քայլ առնելով կ'իյնային անշնչացած : Աննկարագրելի շփոթութեան մէջ, այս բեկորներուն միանալով քշուեցանք Ազազի հեռունները, ուր նշմարեցինք 30,000ի չափ վրաններ, ընդարձակ քաղաքի մը տուններուն պէս կարգի դրուած : Ամենուս կուրծքէն խորունկ շունչ մը բարձրացաւ : Պիտի մնայի՞նք հոս, տաք կերակուր մը պիտի ուտէի՞նք, ճերմակեղէնները լուալու ժամանակ գտնելով պիտի կարենայի՞նք մաքրուիլ նողկալի ոջիւններէն, որոնք Թուրքին պակաս ձգածը կը լրացնէին :

Այո, հնարաւորութիւն կար մնալու, որքան ատեն

որ ի վիճակի ըլլայինք կաշառելու ոստիկաններն ու պահակները, հակառակ պարագային կը կրակէին եւ կը քչէին ընչաթափ աքսորեալները: Հոս տեսանք որ մեծ փոսերու մէջ միասին կը լեցնէին մեռելներուն հետ օրհասականներն ալ: Միլիոնատէր Հայեր անօթի կը մեռնէին: Հացի մը փոխարէն կիներ Արաբներուն կը յանձնէին իրենց զաւակները: Ամէն վրանէ ողբ ու կոծ կը բարձրանար: Հոս Մազլըմեան Սրբազանը գտաւ իր քոյրը պարագաներով եւ միացաւ անոնց: Քրոջ կրտսեր փեսան գետամոյճ եղած էր չկարենալով տոկալ այս դարհուրանքին:

Սրբազանը դարձեալ ստացաւ 100 օսմ. թղթադրամ եւ փութաց, ձիւնին բուքին ճամբաներու վրայ կենալով բաժնեկ թշուառ ժողովուրդին: Երկրորդ շաբթուան մէջ, Առաջնորդը իր ազգականներով, մեր ընտանիքը, Պանտրմայի երկսեռ վարժարաններու հոգաբարձութեան ատենապետ Պ. Յովհ. Սաղոյեանը եւ Ռոտոսթոյէն ուսուցիչ Պր. Փոյրաճեանը իրենց ընտանիքներուն հետ, Ազազ գիւղին մէջ տուն վարձելու արտօնութիւնը ձեռք բերինք: Թորգոմ Սրբազանի ազգականներէն Պր. Արտաշէս Գուշակեանը, Մազլըմեան Արքեպիսկոպոսի փեսային եղբայրը եւ Սրբազանը դիչերանց Ազազէն հասեր էին Քիլիս: Մօտակայ քուրդ քաղաքին գայմագամը մեծ թիւով Հայ պահած էր ձեմալ փաշայի հաւանութեամբ, իբրեւ զինուորական ընտանիքներու անպաշտպան մնացորդներ: Արտաշէսը յաջողած էր ջորեպան մը վարձել՝ իրենները ամբողջութեամբ ազատելու համար:

Բոլորս ալ քուած էինք Ազազէն ձուրս, Սաֆրան եւ արագ արագ Տէր-Զօրի կը մօտենայինք: Յանկարծ Արտաշէսը երեւցաւ հաճի Ահմէտի ջորիներով ու բարի տղաւ մեզ ալ Քիլիս առաջնորդելու իր խումբին հետ:

Պորոնկ մթուփեան մէջ հեռացանք Սաֆրանէն: Յուն-վարի խայթող ցուրտը Գիլիս հասնելէ առաջ պրկած ու քարացուցած էր ամենուս մարմինը: Քսան հոգի փոխնիփոխ կը նստէինք դրաստներուն վրայ: Վերջապէս հասանք քաղաքը եւ ընդունուեցանք կաթուղի վարդապետէ մը, որ ամէն ջանք թափեց մեզ խնամելու: Հայ բժիշկի մը՝ Մսրեանին լքուած տունէն սենեակներ վարձեցինք: Ամէն ընտանիք իր առանձին խցիկը ունեցաւ: Մեծ ու պզտիկ ամենքս ալ մէկ մէկ մանուկներ դարձեր էինք: Վեց-եօթ ամիսներու զրկանքը կերպարանափոխ ըրած էր մեզ: Դժուար էր հաւատալը թէ երազ մը չէ՞ր սենեակ մը ունենալու բախտաւորութիւնը:

Հազիւ սակայն երկու օր հող ապրած էինք, աղէտը նորէն սկսաւ մեզ հալածել: Մեր խումբէն չորս հոգի համաճարակէն բռնուեցանք: Ես հակառակեցայ թուրք բժիշկներու խնամքին յանձնուելու: Յովհ. Սաղոյեանը թուրք բժիշկին տուած դեղով իր կեանքը վրայ տուաւ, մեծ ցաւ պատճառելով կնոջը, աղջկանը եւ բոլորիս: Մեծ քոյրս Մաննիկ եւ եղբայրս Թազուր, մօրս կանխատեսութեամբ, թուրք բժիշկին երկրորդ դեղահատը կուլ չտուին եւ ապրեցան: Հազիւ անկողինս թողուցած էի, երկու թուրք մեր բնակարանին վրայ յարձակեցան եւ հօրս, քրոջս, եղբօրս ու իմ ձեռքերէս քաշկուտելով դուրս հանեցին: Հայրս խնդրեց խնայել ինձի, քանի որ դեռ հիւանդ էի: «Թո՛ղ սատկի, դռուացին թուրքերը, օրական հազար կեալուր կը սատկի, ի՞նչ կը պակսի:»

Հօրս օգնութեամբ հասայ բանտ որ Բողոքականներու եկեղեցին էր: Հոն խոնուած էր մեծ բազմութիւն մը, որոնց մէջ Սրբազանը իր մերձաւորներով, մեր ընկերներէն այրի տիկ. Սաղոյեանը եւ իր աղջիկը՝

Պերճուհին: Յունվարի մէջ էինք, եկեղեցին սաստիկ ցուրտ ու խոնաւ էր: Այր մարդիկ կաշառեցին դռնապանը որ երկու խումբով գիշերանց վերադառնանք տուն: Արտաչէսը՝ կիներն ու անչափահասները առաջնորդեց: Գիշերուայ խորունկ լուսթեան մէջ, մեր ոտնաքայլերը լսելով պահապան շուններ սկսան հաջել: Կրկին ձերբակալուելու վախը ունէինք:

Վերջապէս հասանք մեր խեղճուկ բնակարանը, բայց երկար պիտի չմնայինք: Առտուն կանուխ առողջ, հիւանդ, լեցուցին կառքերուն մէջ եւ գիշեր ցերեկ առանց դադարի քշեցին Տէր Զօրի ուղղութեամբ: Երեք օրուան ճամբայ կտրելէն յետոյ՝ Քիլիսի կառավարիչին հանդիպեցանք, որ Հալէս կը վերադառնար: Կանգ առաւ եւ հետաքրքրուեցաւ մեր կարաւանով: Եւ երբ տեղեկացաւ թէ՛ Քիլիսի մէջ իր ձեռքին տակ գտնուող Հայերն ենք ու Տէր Զօր կը քշուինք, հրամայեց մեզ ետ դարձնել եւ Ազիլիէ նահանգին գիւղերուն մէջ տեղաւորել տասնեակ ընտանիքով: Մեզի վիճակուեցաւ բնակիլ Ռաճու կայարանին քրտական գիւղը, որուն լեռներուն կողքին, հազարաւոր ընտանիքներ սասեր էին: Գաղթականութենէ վերադարձին միայն տեղեկացանք թէ՛ Պր. Պոյրաճեանը առանձին վերապրած էր, այստեղ, մեռելներու մէջ ձգելով իրենները: տուն մը՝ առանց պատուհանի: Երկու կողմերը հաստատուած էին մէկ մէկ ծխնելոյց, միեւնոյն յարկի տակ, երկու կիւն պահելու յարմարութեամբ: Քուրդ տղամարդը արտօնութիւն ունէր մինչեւ չորս կիւն ունենալու: Այս գիւղին հարուստներէն Արապ Աղային առաջին կիւնը իրմէ շատ աւելի ծեր էր, երկրորդը գրեթէ իրմէ 15 տարի փոքր, երրորդը՝ երիտասարդ, իսկ չորրորդը հազիւ 17 տարեկան: Այս ցեղը սովորութիւն

ունէր 12 տարեկան տղաքը ամուսնացնելու 17-18 տարեկան աղջկայ մը հետ, որ պէտք չէր կրնար ըլլայ իր ամուսինը խնամել: Յետոյ 15-20 տարի տարբերութեամբ, տղամարդը հետզհետէ կ'ընտրէ մնացեալ երեք կիները: Ամուսնութեան օրէնքներէն մէկն էր նաեւ փեսային քոյրը փոխանակել հարսին եղբօրը հետ, եթէ ունի: Հակառակ պարագային ձի մը, զբաստ մը կամ նոյն իսկ ուլ մը կը նուիրէին հարսին ծնողաց: Այս դիւղին լուրջ կիներ, հացի խմոր շաղելէն յետոյ, կը խաչակնքէր երեք անգամ: Ուլունքներու ծայրէն կախուած խաչեր կը պահէին իրենց տան մէջ եւ կ'ըսէին թէ իրենց նախնիք Հայ կամ Յոյն էին: Մահատական տօներն ու ծէսերը կը կատարուէին մեծ նախանձախնդրութեամբ:

Խոնաւ գետնի վարյ կառուցուած մեր միայարկ բնակարանը թագաւորական պալատ մը կը թուէր մեզի, քանի որ հաստատ տանիքի մը ներքեւ պատասպարուած էինք, կը յուսայինք որ ազատուած ենք կրկին աքսորուելու վտանդէն: Դժբախտաբար երկար չտեւեց մեր ուրախութիւնը: Անձրեւներու, խոնաութեան եւ վառառողջ ջուրին պատճառով չեմք բուռնացանք: Համաճարակը հետզհետէ հնձեց մեր անձնուէր Արտաշէսը, իր ամուսնացած եղբայրը, Լեւոնը եւ այս վերջինին աներն ու գոքանջը:

աղջիկները առեւանդել:

Սերաստիոյ դիւղերէն մայր մը, մեր յարկը դալով լալազին խնդրեց ազատել իր 12 տարեկան աղջիկը, որուն երեք ասարու մեծ քոյրը քանի մը օր առաջ յափը շտակած էին: Փոլլիկ, սիրուն աղջիկ մըն էր: Պահեցինք քանի մը օր եւ պղտիկ եղբօրս Սարգիսին հագուստներով, Թագաւոր եղբայրս գինքը յանձնեց կայարանապետին, որ նուիրուած Հայ մըն էր, հասցնելու համար Հալէպի Հայոց եկեղեցին:

Քանի մը ամիս յետոյ մեր բնակարանին վրայ
յարձակեցան, կառավարական թուրք պաշտօնեայի մը
առաջնորդութեամբ: Թուրքը խոյացաւ իմ վրաս եւ
սկսաւ քաշկուտել: Հայրս ժանտախտէ հաղիւ ապաքի-
նած, ջերմէ կը տառապէր, մայրս միւսներուն հետ
սրտածմլիկ կը կոծէր: Դրացի Քուրդերը կը խորհէին
թէ մեզ կը մորթեն: Յանկարծ դիւղապետը ներս մտաւ
եւ յաջողեցաւ թուրք պաշտօնեան մեր տունէն հեռա-
ցնել: Գիւղապետին աղջկան նուրբ ասեղնագործութիւն
կը սորվեցնէի: Գիւղին մէջ աքսորական էր Ձէյթունցի
վիրաբոյժ Ասատուր աղան, որ Թուրքին կ'ըսէ թէ՝
«Այդ շէնքին բոլոր աղջիկները փոխանցիկ հիւանդու-
թենէ վարակուած են: Ահա այս գործիքով (գրպանէն
հանելով բարակ խողովակ մը) ամէն օր իրենց կո-
կորդին մէջ դեղ կը դնեմ»: Թուրքը հաւատալով կը
վերադառնայ Քիլիս:

Ձէյթունցին վազեց մեր մօտ. «Աղջիկներ, ձեզ ա-
ղատեցի, միայն թէ ջանացէք միշտ կապել ձեր վիզը
եւ հիւանդ ձեւանալ»:

Ֆիզիքապէս ընկճուած, հայրս կաթուածահար ե-
ղաւ ու մեռաւ երեք օրէն:

Սրբազանը քանի մը անգամ դիմեց քուրդ գիւղա-
պետին, արգիլելու համար հայ աղջիկներու առեւան-
գումը, սակայն պատասխան ստացաւ թէ՝ «Հայուն
ինչքին, պատիւին ու կեանքին տիրանալու հրաման
տրուած է Պոլսոյ թուրք կառավարութեան կողմէ»:

Այս միջոցին, Ձաւէն Պատրիարքը, իր աքսորի
ճամբուն վրայ, կանգ առաւ Ռաճուի կայարանը եւ
անձամբ տեսնելով Սրբազանը 200 օսմ. թղթադրամ
յանձնեց: Հօրս մահուընէն երկու ամիս յետոյ, Թագ-
ւոր եղբայրս Հալէսլ կը թալով հայ քահանային տեղե-

կացուցած էր Սրբազանին եւ իր պարազաններուն տազանապալից կացութիւնը: Քահանան յայտնած էր թէ՛ տարագրեալ առաջնորդներ Երուսաղէմ կ'ընդունին իբրեւ Սինողի անդամ եւ խոստացեր էր մեր մասին տեղեկագրել Սրբազան Պատրիարքին: 1916 Օգոստոսին, ձէմալ փաշայի կարգադրութեամբ, Սրբազանը իր ազգականներուն հետ, Տիկին Սաղոյեանը, աղջիկը՝ Պերճուհի եւ մեր ընտանիքը, ընդամէնը 13 անձ Երուսաղէմ փոխադրուեցանք: Մօտաւորապէս երեք տարի ապրեցանք Ս. Յակոբայ վանքը, ուր լեյդուեցան հետըզհետէ աղէտէն ճողոպրողները: Բոլորս ալ կերակրուեցանք վանքին մատակարարութեամբ:

1919 Մայիսին վերադարձանք Պանտրմա: Նոյն տարւոյ դպրոցական շրջանի սկզբնաւորութենէն մինչեւ 1922 ամալերջի արձակուրդը ուսուցչական պաշտօնս վարեցի:

Իզմիրի մէջ Քէմալի պաշրջօգուքներուն ձեռքով ըսպանուեցան մայրս, Թաղւոր եղբաւրս, իր կինը եւ իրենց նորածին երախան:

Ամերիկա (Մ. Ն.) 1951

ԷՐԶՐՈՒՄ

ՏԻԿԻՆ ՍԻՐԱՆՈՒՇ ԱՐԾՐՈՒՆԵԱՆ

Էրզրում կամ Կարին Հայաստանի մեծագոյն քաղաքներէն էր: Եղած էր մայրաքաղաք: Ծովէն 2000 մէթր բարձր, առողջ բայց խիստ կլիմայ ունի: Պատմական շէնքեր կային Էրզրումի մէջ: Ունէինք բազմա-



Սմբատ Եպ. Սատէթեան
Էրզրումի նահատակուած առաջնորդը

Թիւ վարժարաններ՝ Արծնեան, Մարեան, Աղայալեան, Սանասարեան, «Ճրէր»ներու եւ Կաթողիկ Հայերու դպրոցներ: Նշանաւոր էր Ս. Աստուածածին անուով, քան սիւներու վրայ կանգնած Հոյակապ մայր եկեղեցին եւ ուրիշ եկեղեցիներ, Հայերու, Հայ Կաթողիկներու եւ Բողոքականներու:

Էրզրումի շրջակայքը պատմական եւ մեծ հին վանքեր կային, ինչպէս Դաւիթ Անյաղթի եւ Մովսէս

Քերթոզի Ս. Աստուածածնայ վանքը, Մուտուրկայ գիւղին Լուսաւորիչ վանքը, Հինձքի նշանաւոր կարմիր վանքը, Խաչկայ վանքը եւ բազմաթիւ փոքր վանքեր, Օձին գիւղին Ս. Յովհաննէսը, Խանդամլուց Ս. Ստեփաննոսը, Ս. Սարգիսը, Քառասուն Մանկանց եւ Թուանջ գիւղի Ս. Գէորգ վանքերը:

Այս հնադարեան շէնքերէն, որոնք էրզրումցիներու սիրած ամարանոցները եւ ուխտատեղիներն էին, ոչ մէկը գոյութիւն ունի հիմա: Վայրենի եւ բարբարոս Թուրքերը քանդեցին ամէնքն ալ:

1828ին Ռուսերը կը գրաւեն էրզրումը եւ երբ կը նահանջեն, քաղաքէն եւ շրջակայ գիւղերէն 3300 ընտանիք կը գաղթեն Կովկաս, ուսսական բանակին հետ:

1913ին, մարդահամարի մը համաձայն, քաղաքին Հայերու թիւն էր 13.728 կամ 2470 տուն:

1914ի պատերազմին, Հայոց Առաջնորդ էր Սմբատ Եպ. Սաստէթեան, զոր Թուրքերը զարհուրելի տանջանքներով սպաննեցին քաղաքէն դուրս:

Կարնեցի Հայերը բարգաւաճ դիրք ունէին երբ պատերազմը սկսաւ, տարագրուեցան եւ գրեթէ մեծ մասով բնաջնջուեցան:

1915ին 30 տարեկան էի, ամուսնացած՝ ծանօթ հրապարակազիր Գրիգոր Արծրունիի եղբօր թոռանը հետ: Աղջկնութեանս անունն էր Օզնեցեան:

1915ի ամառը քաղաքին Հայերէն 400 հոգի բանտարկեցին իբր կասկածելի: Խուզարկեցին նախ մեր տունը որ Ռոստոմի եւ ընկերներուն ժողովատեղին եղած էր, հետեւաբար ամենէն շատ կասկածելին:

Կարնոյ Հայութիւնը լաւ զինուած էր: Գիւղէն քաղաք կուգային եւ առաջնորդարան կը դիմէին, լսած ըլլալով որ Հայերը տեղահան պիտի ըլլան: Առաջնորդ Եպիսկոպոսը, ազգային վարչութեան անդամնե-

րուն հետ կառավարութեան դիմեց ապահովութիւն ստանալու համար : Թուրք կուսակալը Ղուրանին վրայ երդում ըրեր է ըսելով որ « Մի վախնաք, ներքին խռովութիւն չըլլալու համար, ժողովուրդը կը հեռացնենք » :

Նախ գիւղերը տեղահան ըրին եւ կարնեցիներուն 15 օր պայմանաժամ տուին որ պատրաստուին :

Մեր հարստութեան մեծ մասը թաղեցինք, կարծելով որ պիտի վերադառնանք, մաս մըն ալ հետերնիս առինք :

Պատերազմի շուկներուն պատճառով, Հայերու մառանները լիքն էին մի քանի տարուան պաշարով : Այդ ամէնը ստիպուեցան թողուլ եւ հեռանալ : Իբր զէնք, արգիլուած էր նոյնիսկ զմելի մը ունենալ :

Հինգ եզան կառք լեցուցինք կահ-կարասիներով, անկողիններով եւ ճաբու պաշարով : Ուրիշներ, նոյնպէս կառքով, էշերով կամ հետիոտն, հասանք Երզնէ-կայի դաշտերը : Շատերը վրաններ ունէին : Բազմաչատ ժողովուրդը այդտեղ, վրաններու տակ, 15 օր սպասեց :

Յետոյ հրաման ելաւ որ կառքերը թողունք եւ ձի վարձենք : Սկսաւ վայնասունը : Ուրկէ՞ ճարել այդքան ձի :

Հազար նեղութիւնով հասանք Քէմախ, որու կամուրջին երկու կողմը ժանտարմներ կազմ ու պատրաստ կեցած, կարաւանին բոլոր երիտասարդները դատեցին : Տագրս, Արտաշէս Արծրունեանը եւ տալոջս ամուսինը՝ Երուանդ Բրուտեանը տարին, կարդը եկաւ ամուսինիս : Երեք զաւակ ունէի, ամենէն մեծը 7 տարեկան : Երեքը մէկ թեւերուս մէջ սեղմած, ինկայ ժանտարմին ոտքը որ զաւակներուս համար ամուսինիս խնայէ, բայց ձերբակալեցին ու տարին զինքն ալ :

Այդտեղէն մեզ ճամբայ հանեցին, ցերեկները քալելով եւ գիշերները երկինքին տակ պառկելով հասանք Մալաթիա: Այն տեսակ ճամբաներէ կը քալէինք որ կարելի չէր մեր շուրջը տեսնել: Լեռնէ մը կ'իջնէինք, ուրիշէ մը բարձրանալու համար: Ձորերու մէջ ի՞նչ ոճիրներ կը գործուէին: Մեզի հետ էր երիտասարդ, թշուառ Հայ մը, զոր գտնելով քաշկոտեցին ու տարին: Խորհեցայ որ ամուսինս ալ նոյն ձեւով տարած են եւ սկսայ լալ: Վայրենի թուրք մը զիս չարաչար ծեծեց, որովհետեւ կուլայի: Ամբողջ մարմինս կապուտցաւ, չէի կրնար քնանալ:

Օր մը, բարձր տեղէ մը Փէսերով ծածկուած դաշտ մը տեսանք: Տարագրուած հայ տղամարդերն էին: Թեւերնին կապուած կը տանէին: Անոնց մէջէն մերկ փախչողներ եղան եւ ոմանք վերադարձան մեր մօտ, պատմեցին որ տղամարդիկը ջարդուած են: Ազատած էր եղբայրս, Մկրտիչը որ թուրք ջարդարարներուն հրամանատար Ձէյնալ բէկին չէք մը տուած էր:

Լեռնէն կը տեսնէինք թէ ինչպէս խումբ-խումբ կը տանէին: Եղբօրմէս լսեցի որ կացինով սպաննած են ամուսինս եւ միւսները, որպէսզի զնդակին խնայեն:

Ամուսինիս մեծ-մայրը թոյն առնելով մեռաւ: Գրեթէ ամէն կին թոյն պահած էր: Շատերը իրենց սիրելիներուն անուաները կանչելով, տանջալից մահով անձնասպան կ'ըլլային:

Առտու մը մեզ ծեծելով քշեցին լեռնէ մը վեր ուր քրդական վրաններ կային: Ժանտարմները մեզ չըջապատեցին եւ սկսան խուզարկել հաղարաւոր ժողովուրդը: Իմ կարգս կը մօտենար: Գօտիս ոսկիով լեցուն էր, եթէ զիս կողոպտէին, զաւակներուս հետ անօթի կը մեռնէինք: Ինձմէ առաջ եղողները մերկացնելով ամէն ինչ կողոպտեցին: Ձեռքերս երկինք բարձրացուցած,

«Աստուած», կը կանչէի, մինչեւ հիմա համբերեցի, ամուսինս սպաննեցին, դաւակներս անօթի պիտի մեռնին, հրաշքով մը ազատէ մեզ այս դազաններուն ձեռքէն»:

Այդ բոպէին սոսկալի երկրաշարժ մը եղաւ, լեռը կարծես տեղէն շարժեցաւ: Դահլիճները սարսափահար կանգ առին եւ պահ մը դադրեցան մեզ չարչարելէ: Ատկէ ետք, թեթեւ կողոպուտներով գոհացան, դրամապանակիս մէջը եղածները առին:

Կրկին ճամբայ հանեցին մեզ: Թաց գետինները սլառկելով շատերը հիւանդացան ու մեռան: Երեք տարեկան Սիրարփիս հայրը կը յիշէր ու կուլար: Չէր հաւատար որ Պոլիս դացեր է: Տուրտը եւ անօթութիւնը զինքը սպաննեցին: Եօթը տարեկան Մինասս, դուռխնին կէս կտրուած ու յօշոտուած դիակները տեսնելով կուլար, ըսելով որ «Իմ հայրիկս ալ ասոնց պէս եղած է»:

Տեղ-տեղ, Քրդուհիներ ջուր կը ծախէին: Դրամ ունեցողը կրնար գնել ու խմել: Բուռերով դրամ կը վճարէինք ծարաւէն չմեռնելու համար: Ապարանջան, զարդ, ոսկեդրամ չմնաց մեր վրայ: Դիակներու հոտը հեռուէն կը զգայինք: Բաղմահազար դիակներու վրայէն կ'անցնէինք: Եփրատի երեսը ծածկուած էր դիակներով: Ափերուն վրայ կիսամեռ մարդիկ կը շարժուէին: Հանդիպեցանք մահամերձ փոքրիկներու որոնք խումբերով ինկած էին ծառերու տակ: Հանդիպեցանք պատանիներու, որոնք, կէս-խելագար, չէին կրնար ո՛չ խօսիլ, ոչ լալ. միայն շարժումներ կ'ընէին: Ըսինք իրենց որ մեր կարաւանին միանան, բայց կը նայէին ու չէին տեսներ, չէին կրնար խօսիլ ու զգալ:

Հասանք Սուրուճի դաշտը, Հալէպի մօտ: Այլեւս հսկողներ չկային: Դրամ ունեցողները մեզի օգնեցին: Բակեր վարձեցինք Քուրդերէն, ամենքս ալ անօթի էինք .

եւ հիւանդ: Շատեր այդտեղ թոյն առին ազատուելու համար չարչարանքէն:

Յետոյ, նորէն հրաման ելաւ որ Րազգա երթանք: Գրեթէ ամենքը ղրկեցին, բացի քանի մը տարեց կիներէ որոնք պահեցին իրենց ծառայելու համար:

Մենք Սուրուճ մնացինք շնորհիւ եղբօրս որ փոռոի մը մէջ կ'աշխատէր: Եղբայրս գայմագամին դիմելով հրաման ստացաւ Հալէպ երթալ ու չէք մը գանձել: Այդպէսով ազատեցաւ եւ մեզ ու իր ընտանիքն ալ Հալէպ փոխադրեց:

Հալէպ մնացինք երեք տարի, յետոյ Պոլիս անցանք եւ 1923ին Ֆրանսա եկանք:

Ֆրանսա, 1951

Չ Ն Ք Ո Ւ Շ

Մ Ե Լ Ի Ք Խ Ա Չ Ո Յ Ե Ա Ն

Չնքուշ կը գտնուի Տիգրանակերտի նահանգին մէջ: Հայ բնակչութիւնն էր մօտ 14,000, իսկ թուրքերը՝ 1500: Շուրջի քաղաքներն են՝ Ջերմուկ, Պաղըր-Մատէն, Սեւերէկ եւ Արղնի: Գիւղերու բնակիչները Գուրդեր են, կան նաեւ փոքրաթիւ Ասորիներ:

Չնքուշի Հայերը ամբողջովին արհեստաւորներ էին: Իրենց շինած կաշեղէնները մեծաքանակ կը ղրկէին Խարբերդ, Մալաթիա, Տիգրանակերտ եւ ուրիշ հրապարակներ:

1915ին, երիտասարդները զինուորագրեցին եւ կարգ մը ծանօթ Հայեր բանտարկեցին: Լսուեցաւ որ

չարաչար կը տանջեն զանոնք: 25 Հայուհիներ Ծովառ կոչուած լեռը ապաստանեցան, Թուրքերու ձեռքը չիյնալու համար: Խստութիւնները շատցան: Բանտարկեալ Հայերուն հող կրել կուտային մտրակելով, քաղաքէն մէկ ժամ հեռու եւ այդտեղէն քար փոխադրել կուտային քաղաք:

Հայերու խանութները գոցուած ըլլալով, քաղաքը մնացած էր նեղ դրութեան մէջ: Կառավարութիւնը հրամայեց խանութները բանալ եւ Թուրքերուն արհեստ սորվեցնել: Բացողները ձերբակալելով ղրկեցին քաղաքէն դուրս եւ սպաննեցին: Յետոյ սկսան մնացեալ տղամարդիկը հաւաքել մաս առ մաս եւ աքսորել: Հայոց թաղերը կրակ ձգեցին, տուները թալլեցին եւ առեւանգեցին բազմաթիւ կիներ ու աղջիկներ: Այսպէսով, Չնքուչի 14,000 հայութիւնը նօսրացուցին: Երախաներ ու պատանիներ, որոնք յաջողած էին պահուիլ, տարագրութենէն ետք դուրս եկան իրենց թագստոցներէն: Թուրքերը զանոնք հաւաքելով եւ քաղաքէն դուրս տանելով ողջ-ողջ վառեցին: Մնացեալ հայութիւնը, որ տարիքոտ մարդոցմէ, կիներէ եւ պատանիներէ կը բաղկանար, Տուտան կոչուած անդունդը նետելով ոչընչացուցին:

Չնքուչէն հազիւ 3 - 4 ընտանիքներ աղատեցան, որոնցմէ մէկն էր Թուխմանեան ընտանիքը, վարպետ դերձակներ որոնց խնայած էին որպէսզի Թրքուհիներուն կարել սորվեցնեն: Արհեստաւոր ընտանիքները 1920ին Խարբերդ անցան, յետոյ գաղթեցին Ամերիկա:

Այս տեղեկութիւնները քաղած եմ Տիկ. Թուխմանեանէն:

Ամերիկա (Մ. Ն.) 1951

Զ Ն Ք Ո Ւ Շ

ՄԱՆՈՒԿ ՓՈՒՍՈՒԼԵԱՆ

1915, Մայիս 1ին, Զնքուչի Պալախոր գիւղին մէջ տեղի ունեցաւ ժողով մը, Հայերու ջարդը կազմակերպելու համար:

Արդէն ատկէ առաջ, կառավարութիւնը Զնքուչի հայերեւելիներէն շատերը աքսորած եւ սպաննած էր զարհուրելի տանջանքներով:

Ոճրագործներու ժողովին կը մասնակցէին՝

Տիգրանակերտէն, Ռուշտի, Շէվքի, Սըտքի, Հարոն եւ Շաղաբ պէյերը, թուրք սպաներ՝ Մուսուլլի Եանիա եւ եղբայրը Մուհամմէտ, Հաճի Պաքիր, Համիտ եւ Օսման:

Պագըր-Մատէնէն, բանակի հրամանատար Ղալիպ պէկ:

Արղնիէն, Օսման, Սինան օղլու իսլիլ եւ Ահմէտ եւ Մուսա պէկի տղան:

Զնքուչէն, Կիւլլի պէկ, էշրաբ օղլի Ալի եւ Պայրամ աղաները, Ճեմալ, Իտրիս, Պէքիր եւ Զիա պէկերը:

Զերմուկէն, Պանտոյենց տղաքը եւ Մուստաֆա:

Վերոյիշեալներէն զատ, ներկայ էին երկու գերման սպաներ, Ֆօն Վէպէր Հայտ եւ Րիքարթ որ քար ու քանդ ըրաւ Եդեսիոյ (Ուրֆա) Հայոց եկեղեցին, զայն թնդանօթի բռնելով:

Այս գերման ոճրագործները, Զնքուչէն մէկ ժամ

հեռաւորութեամբ Տուտան կոչուած անյատակ հորը յարմարագոյն վայրը կ'որոշեն բնաջնջելու համար Չընքուչի հայութիւնը: Էչրաֆ աղային հիւր կը մնան եւ ութը օրուան ընթացքին 350 դահիճներ կը կանչեն շըրջակայ քաղաքներէն:

Չնքուչի հայութիւնը չորս կարաւաններով կ'առաջնորդուի Տուտանի եզերքը: Հոս, գերման երկու սպաները մրցում կը յայտարարեն Չերքէզներու եւ ժանտարմներու միջեւ, հասկնալու թէ որո՞նք աւելի վարժ են գլուխներ թռցնելու կամ խողխողելու ծեր, երախայ, կին կամ աղջիկ: Մրցանակը կը շահին ժանտարմները, որոնք հիմա Փէսը փոխած են ու եւրոպական գլխարկ կը կրեն:

Գլխաւոր ոճրագործներէն Շէյխ ձիւման երկու հայ սափրիչ բերել կուտայ եւ կը ստիպէ որ արիւնոտ դանակները սրեն: Երբ կարգը կուգայ իրենց ընտանիքներուն եւ անոնց գլուխները կ'իյնան, սափրիչները նըլաղած կը փոռուին: Շէյխ ձիւման անոնց մորթերը քերթել տալով կը տանի Չնքուչ:


Տիգրանակերտ աքսորուած Հայերը մասամբ կը խողխողուին տեղւոյն վրայ, մաս մը՝ Շէյխան Տերէսի կոչուած տեղը, իսկ մնացեալը, Տիգրանակերտի Հայերուն հետ Տիգրիսի եզերքը կամ Պերերթուրան կոչուած եւ Տուտանի նմանող վիհի մը մէջ:

Սուրիա, 1925

ՍԱՄՍՈՆ

ՏԻԿ. ՍԱԹԵՆԻԿ ՔԱԶՈՒՆԻ

Բնիկ Երզնկացի եմ, ծնած՝ 1889ին: Ծնողքս՝ Համբարձում եւ Գեղեցիկ Գաղանձեան:



Տիկ. Սաթենիկ Քազունի եւ տղան՝ Կարօ

Մեծցած եմ թրքական բռնութեան եւ վախի շրջապատի մը մէջ, որովհետեւ եղբայրներս յեղափոխական կազմակերպութեանց կը պատկանէին: Մէկ եղբայրս բանտարկուեցաւ, մայրս անոր ցաւէն մեռաւ. միւսը, 1913ին երեք ընկերներով զս՝ գնաց պոմուր շինած ատեն:

Ամուսինս, Արտաշէս Քաջունին, ուսուցիչ էր: Փոխադրուեցանք Սամսոն ուր մնացինք չորս տարի, երբ:

սկսաւ համաշխարհային պատերազմը: Ունէինք երեք զաւակ, Կարապետ, Մկրտիչ եւ Վրէժ:

Ամուսինս զինուոր տարին ամէլէ թապուրիին մէջ աշխատելու: Ճամբան կը յաջողի խոյս տալ եւ կ'երթայ Երզնկա, ուրկէ կը տարագրուի ազգականներուն հետ: Քեմախի մէջ ամենքն ալ կը ջարդուին:

Կարգը եկաւ Սամսոնի հայութեան: Երեք զաւակներովս առանձին էի. մեծը՝ 8 տարեկան էր, Մկրտիչը՝ 6 եւ փոքրը՝ 2: Կառք մը բերին մեր դրան առջեւ, գոյքերս ղետեղեցի եւ ճամբայ ինկանք: Այլեւս ոչ տուն ունէինք, ոչ պաշտպան:

15 օրէն հասանք Սարի-Ղըշլա, ուր երիտասարդները հաւաքեցին եւ ձեռքերը կապուած տարին սպաննեցին:

Մեր այն կրթուած ու զարուացած հայ օրիորդները, դեղ ու սխտոր կապելով երեսնուն վրայ վէրքեր բացին որ իրենց պատիւը եւ կրօնքը պաշտպանեն եւ բարբարոս թուրքերուն ձեռքը չիյնան:

Իարձեալ քալեցուցին մեզ 15 օր: Վրէժս սաստիկ փորհարութենէ բռնուած էր: Զուր չկար, շարունակ «Մայրիկ, ջուր, ջուր...» կ'աղաղակէր: Կմախք դարձած էր, կը սպասէի որ մեռնի եւ աղատի: Քովս կին մը կար, խնդրեցի որ քանի մը կաթիլ ստինքէն կաթեցնէ երախայիս բերանը: Խեղճը ըսաւ որ կաթը չորցած է:

Անմեղ երախաս ջուրի ձայն կ'առնէր եւ կը տանջուէր: Աստուծմէ, երկինքէն եւ ամպերէն կաթիլ մը ջուր կ'աղերսէի: Յուսահատած, Կարօին ըսի որ թասի մը մէջ միզէ եւ զառնուկիս բերանը թրջեցի: Խեղճ երախաս պրկուեցաւ եւ չապրեցաւ: Հողը ձեռքովս փորեցի եւ թաղեցի...

Միւս տղաս, Մկրտիչը, թանջքէ բռնուեցաւ: Զէի

Արնար քալել, զինքը ուսիս վրայ կ'առնէի եւ կէս ժամ հանդէսեցնելէ ետք, մեծ տղաս ուսիս կը նստեցնէի որ հանդէի :

Այնթապի գիւղերը քշուեցանք: Մկրտիչս այդտեղ մեռաւ, չեմ գիտեր ո՞ւր տարին ու թաղեցին: Մեծ տղաս ալ հիւանդ էր, մարմինը ուռեցաւ, մեռնելու վըրայ էր:

Գիւղին մէջ սարսափելի լուր մը տարածուեցաւ որ մեզ պիտի թրքացնեն: Տարագրուած Հայերը ամենքն ալ մերժեցին թրքանալ եւ սկսան Այնթապ փախիլ: Սամսոնցի Թուրքանտա անուն, 20 տարեկան հայ աղջիկ մը, Կարօս եւ ես, միասին գացինք Այնթապ եւ Հայերու տունը ապաստանեցանք: Ինը ամիս հոգ մնալէ ետք, ստիպուեցանք կրկին փախիլ եւ գացինք Ատանա: Զիս ձերբակալեցին իբր փախստական եւ բանտարկեցին: Բանտին մէջ երեք հայ կիներ կային, մէկը Հասան-Պէյլիէն, Մարիամ, երկրորդը՝ Ատանացի, Խասիկ եւ երրորդը 70 տարեկան ծեր կին մը: Մեր ցաւերը կը պատմէինք իրարու: Բանտարկուած թուրք կիները մեզ կը ծաղրէին, կը ծեծէին, կը նախատէին: Օր մը, իրենցմէ մէկը ջուան մը անցուց վզիս իբր թէ կատակով եւ սկսաւ խեղդել: Կարօս պատուհանէ մը դուրս ցատկելով կ'երթայ բանտապահին կը տեղեկացնէ: Բանտապահը Ալպանացի էր եւ մեզ կը պաշտպանէր: Վրայ հասաւ եւ զիս ազատեց:

Երեք ամիս բանտ մնալէ ետք, թուրքերը պէտք ունեցան հայ կիներու ծառայութեան եւ զիս նշանակեցին զինուորական հիւանդանոցին մէջ հիւանդապահ: Մեր քահիճները ստիպուած էին խնամուիլ իրենց զոհերուն ձեռքով...

Նոյն պահանջով փոխադրուեցայ Պօզանթի: Զի-

նադադարին Պոլիս գացի եւ 1921ին՝ Ամերիկա, ուր
ամուսնացայ Պօղոս Թերզեանին հետ: Անցեալ տարուան
(1951) վերջերը մեռաւ ամուսինս, կրկին սուղի մատ-
նելով մեզ: Շատ բարի, յարգուած, հայրենասէր անձ
էր: Որոշած էինք ներգաղթել: Այդ բախտը չունեցաւ:
Տղաս, Կարօ Քաջունին ներգաղթեց, երջանիկ է եւ ես
ալ իրմով երջանիկ եմ: Կը սպասեմ այն բախտաւոր
օրուան որ վերադառնամ մեր պաշտած հայրենիքը, ո-
րուն համար այսչափ զոհ տուինք, այսչափ տառապե-
ցանք:

Կարօս Երեւան կը բնակի: Հասնելէն երեք ամիս
ետքը ամուսնացեր է Երեւանցի ալջկան մը, Սոնեային
հետ: Կոմիտասի անուան Երեւանի Պետական Կոնսեր-
վաթօրիայի ձայնագրման ընդհանուր վարիչն է:

Համաշխարհային երկրորդ պատերազմին, ամերիկ-
եան Կարմիր խաչին մէջ կամաւոր արձանագրուեցայ եւ
աշխատեցայ վիրաբուժական բաժնին մէջ: Պատերազմին
վարջաւորութեան, Կարմիր խաչը շնորհակալութեան
գիր մը եւ վկայագիր մը ղրկեց: 1914ի պատերազմը,
տարագրութիւնը, թրքական զարհուրելի եղեռնը եւ
սիրելիներուս կորուստը տեսնելէ ետք, իմ պարտքս
համարեցի կրցածիս չափ օգնել պատերազմի զոհերուն:
Միայն Հայ մը կրնայ զգալ պատերազմ կոչուած աղէ-
տին ծանրութիւնը եւ խաղաղութեան արժէքը:

Մեր անմահ նահատակներուն շիրիմին առջեւ ծուն-
կի եկած, արցունքի տուրքս կուտամ իրենց: Իմ ա-
ղօթքս թող ըլլայ. «Դուք մեռած չէք, կ'ապրիք յա-
ւիտեան, վերապրողներուս սրտին մէջ: Ձեր արդար
գատին պաշտպանը պիտի ըլլան ամբողջ հայութիւնը
եւ արդարութեան հաւատացողները մարդկութեան
մէջ:»

Ամերիկա (Մ · Ն ·) 1952

Պ Ա Ղ Տ Ա Տ

ԴԱԻԻԹ ԹԱԴԵՈՍԵԱՆ

Հետեւեալը գրի առած է Պաղտատի հին եւ ծանօթ ընտանիքի մը անդամներէն մէկը, որ, իբր անգլիական հպատակ, եղած է առանձնաշնորհեալ մը եւ շուտով վերադարձած է Պաղտատ: Իրմէ առաջ եւ իրեն հետ, Պաղտատէն ուրիշ տղամարդիկ եւ կիներ ալ ւստարած են Մուսուլ, Տէր-Զօր եւ Իզմիր: (Տեսնել այս գրքին սկիզբը, Հայկ Թորոյեանի վկայութիւնը): Թուրքերուն ծրագիրն էր, տեղահան ընել բոլոր Հայերը, օրինակ, Պոլսոյ եւ Իզմիրի շրջակայքէն դէպի Միջագետք եւ Միջագետքէն դէպի Մուսուլ եւ Իզմիր, եւ սպառել ու ջարդել զանոնք տարագրութեան քամբուն վրայ: Պաղտատէն ւստարուածներէն շատերը մեռած են Մուսուլի եւ Տէր-Զօրի մէջ:

Դաւիթ Թադէոսեանի Տէր-Զօր գտնուած միջոցին, բաղդատաբար հանգիստ էր Տէր-Զօր բշուած ժողովուրդը, շնորհիւ միւթէսարըֆ Ալի Սուատ պէյի որ կ'ուզէր Հայերու շինարարութեանն օգտուելով, մեծ քաղաքի մը վերածել արաբական այդ ովասիսը:

Նոյն միւթէսարըֆը Տէր-Զօրի մէջ կը հաստատէ որբանոց մը, տնօրէն նշանակելով Պաղտատէն ւստարուած Տր. Յակոբեանը, հին յեղափոխական որ յիշուած է Սմբատ Բիւրատի «*Բանտէ Բանտ*» գրքին մէջ, «Ձաքալ-Սաֆալ Տօֆօր» անունով:

Թալաք կը տեղեկանայ թէ հազարաւոր Հայեր ողջ մնացած են Տէր-Զօրի մէջ: Ալի Սուատի տեղ մուրթէսարըֆ կը նշանակէ թրքական եղեռնին մեծագոյն դա-

հիմններէն մէկը, Զէֆին, որ Տէր-Զօրի եւ շրջակայքի ախարականները կը ջարդէ գրեթէ ամբողջութեամբ : Զարդին գոհ կ'երթան նաեւ որքանոցին 2000 երախաները : Զէֆին ֆաղափ կամուրջին վրայէն եփրատ գետը նետել կուտայ գանձնք : Իսկ Տր. Յակոբեանը յանկարծամահ կ'ըլլայ սրտին ցաւէն :

10 Դեկտ. 1915 ուրբաթ կէսօրին աքսորակից ընկերներու հետ միասին Տէր-Զօր հասանք : Ուղղակի սէրայ տարին մեզ ուր բակին մէջ շարուած մնացինք մեր գոյքերով եւ կառքերով մինչեւ որ ոստիկանապետը եկաւ եւ պէտք եղած ձեւակերպութիւնը կատարեց : Այդ միջոցին սէրայի բակը հաւաքուեցան բոլոր մեր ծանօթները որոնք Պալտատէն նախապէս աքսորուած էին : Մեզ տարին մեծկակ խան մը, քաղաքին հարաւակողմը, ուր սենեակներ վարձեցինք եւ առժամապէս տեղաւորուեցանք : Կը ճաշէինք քաղաքապետական սրահ տէգին մէջ, Պոլսէն աքսորուած Լեւոն Շաչեանի ճաշարանը : Ամէն առաւօտ ոստիկանատուն կը ներկայանայինք եւ յատուկ տետրակի մը մէջ կը ստորագրէինք :

Տէր-Զօր քաղաքը երկուքի կը բաժնուի՝ հին եւ նոր : Հին քաղաքը որ անճաշակ եւ ցեխով շինուած տուներէ կը բաղկանայ, գրեթէ բոլորովին լքուած գտանք : Նոր քաղաքը ճաշակաւոր տուներով, լայն պողոտայով եւ ուղիղ զուգահեռական փողոցներով շինուած է հին քաղաքի հարաւակողմը, դետի երկայնութեան : Եփրատ գետը, քաղաքէն գրեթէ երկու ժամ հեռու, դէպի հիւսիս երկու ճիւղի կը բաժնուի : Այս բաժանումը կ'երկարի մինչեւ Մէյատին դիւղը, Տէր-Զօրէն երկու ժամ դէպի հարաւ, ուր միանալով մայր Եփրատ գետը կը

կազմէ : Տէր-Ձօր քաղաքին դիմացը մօտաւորապէս չորս ժամ տարածութեամբ կղզի մը կազմուած է , ուր ժամանակին խոշոր անտառներ կային եւ ասորի ճգնաւորաց վանք մը որոնցմէ Տէր-Ձօր քաղաքը իր անունը առած է : «Տէյր» արաբերէն կը նշանակէ վանք , «զօր» կը նշանակէ անտառ : Հիմա այդ անտառներէն մաս մը միայն մնացած է , կղզիին մեծ մասը մշակուած է եւ պրտղատու պարտէզներ տնկուած են : Տէր-Ձօր նշանաւոր է նաեւ իր բանջարեղէնով եւ իւղոտ ու համեղ ոչխարի միտով : Քաղաքին դիմաց , վերոյիշեալ կղզիին մէջ սրճարաններ եւ շրջավայրեր շինուած են , ուր քաղաքացիք հինաւուրց քարէ կամուրջէ մը անցնելով երեկոները պտոյտի կ'երթան եւ կը զբօսնուն :

Տէր-Ձօր , անապատին մէջ շինուած , կարեւոր դիրք եւ առեւտուր ունի : Շրջակայքի վրանաբնակ ցեղերը իրենց բերքը ծախելու եւ պիտոյքը հայթայթելու համար Տէր-Ձօր կը դիմեն : Հոս քանի մը Դամասկոսցի եւ Հալէպցի վաճառականներ եւ արհեստաւորներ հաստատուած են տարիներէ ի վեր , եւ առեւտուրով կը պարապին :

Տեղացի քրիստոնեայ բնակչութեան մեծ մասը Մարտինէն գաղթած հայ կաթողիկ են , ունին վայելուչ եկեղեցի մը եւ յարակից դպրոց մը : Քաղաքացի եւ Ասորի կաթողիկներն ալ ունին իրենց յատուկ եկեղեցիները եւ փոքրաթիւ ժողովուրդ :

Երբ մենք Տէր-Ձօր հասանք , արդէն երկու կարաւան կիլիկեցի հայ գաղթականներ հասած եւ քաղաքին դիմաց , Եփրատի երկրորդ ճիւղէն անդին , անապատին մէջ տեղաւորուած էին : Մաս առ մաս ամէն օր դէպի Մուսուլ կը զրկուէին հետիոտն : Քանի Տէր-Ձօր էի շարունակ հայ գաղթականներու խմբակներ կուղապին եւ գետին միւս կողմը իրենց յատկացուած քէմբին մէջ

կը հաւաքուէին: Վերջէն լսեցի որ կոտորուած են դահիճ մութէսարիՓ Ահմէդ Չէքիի հրամանով:

Տէր-Չօր գտնուած ատենս, թիֆուսը համաճարակ հանգամանք ստացաւ, անխնայ հնձելով թէ հայ գաղթականները եւ թէ տեղացիները: Մեռնողները վերցնող չիկար եւ քաղաքապետութիւնը ստիպուեցաւ բեռնակիրներ գործածելով՝ տուներէն եւ փողոցներէն մեռելները հաւաքել եւ քաղաքէն դուրս խոշոր փոսերու մէջ թաղել:

Տէր-Չօր բաւականաչափ Չէրքէզներ ալ կը բնակին: Մեր ատենը իրենց աղբապատն էր Մահմուտ պէյ անունով անձ մը, որ Տէր-Չօրի քաղաքապետն էր: Կինը յոյն ըլլալով գաւազները քրիստոնէական կրթութիւն ստացած էին: Չէրքէզները ոեւէ արհեստ մը չունին, ասպատակութեամբ կ'ապրին եւ իրենց այս յատկութենէն օգտուելով, թուրք կառավարութիւնը զիրենք իբր չէթէ գործածեց թէ հոս եւ թէ Ռասուլայն, Հայերը կողոպտելու եւ բնաջինջ ընելու համար:

Ծնունդէն մի քանի օր յետոյ լսեցինք որ Տէր-Չօրի հայ կաթողիկ քահանան, Պետրոս Թէրզեանը ձերբակալուած է: Թէ մեզ եւ թէ բոլոր հայ գաղթականներուն անխտիր միշտ օգտակար եղած էր, որով ընկերներուս հետ իրեն այցելութեան գացինք եւ մեզ սիրով ընդունեց իր բանտին խուցին մէջ: Վերջէն լսեցի որ խեղճը ատեն մը բանտը մնալէ յետոյ սպաննուած է Տէր-Չօրի մութէսարիՓ տիրահոչակ Չէքիի հրամանաւ, կարգ մը հայ երիտասարդներու հետ, որոնց մէջ էին նաեւ մեր Րաս իւլ Այն հանդիպած եւ մեզ հետ Տէր-Չօր եկած Տիգրան Գասապեան Ուրֆացին եւ Պոլսեցի ճաշարանապետ Լեւոն Շաչեանը:

Մեր Տէր-Չօր հասած ատեն Սանճաղի մութէսարիՓն էր Ալի Սուլտան պէյը, որ Հայերու տեղահանու-

Թեան հակառակ էր, եւ հայ գաղթականներուն դըթա-
ռատ աչքով կը նայէր: Նա հայ անոք որբերը հաւա-
քել տուաւ մեծկակ տան մը մէջ եւ խնամեց քաղաքա-
պետութեան ծախքով եւ որբերուն իբր վերակացու
կարգեց մեր աքսորակից ընկերը՝ Տոքթ. Յակոբեան:
Պոլսոյ կառավարութիւնը լսելով Ալի Սուլտի բարեա-
ցակամութիւնը դէպի Հայերը, փոխադրեց զինքը Պաղ-
տատ փոխ-կուսակալի պաշտօնով եւ տեղը մութասա-
րիֆ կարգեց տիրահռչակ Ձէքին, Հայերը բնաջինջ
ընելու համար:

Տէր-Ձօրը այն ատեն անկախ մութասարիֆութիւն
էր ուղղակի Պոլսոյ պատասխանատու:

Իրաք, 1951

ԱԼԸՆՃԱ - ԷՍԿԻՇԷՆԻՐԻ ԳԻՒՂԵՐԷՆ

ՏԻԳՐԱՆ ՓԱԹՐՕՂԼԵԱՆ

Ծնած եմ Ալընճա, որ 120 տունով զուտ հայաբնակ
գիւղ մըն է, Էսկիշէհիբէն երեք ժամ հիւսիս, շրջա-
պատուած՝ թուրք գիւղերով: Մեր գիւղէն զատ, միայն
Չալկարա գիւղն էր զուտ հայաբնակ, 1200 տուն:

Մեր ընտանիքը կը բաղկանար 5 հոգիէ, ծնողքս,
քոյրս եւ փոքր եղբայրս: Դողալով կը յիշեմ տարա-
գրութեան առաջին օրը: Նախակրթարանի աշակերտ
էի, դպրոցները գոցեցին, հունձքը կալերու մէջ մնաց,
տուներու կահ-կարասին եկեղեցիին մէջ, հացը փուռին
մէջ, եւ քշուեցանք Էսկիշէհիբ, Ալաճուկ, Աֆիոն-Գարա-
Հիսար, Գոնիա: Առաջին անգամ Գոնիայի մէջ տեսանք
աքսորեալներու թշուառութիւնը: Թուրքերը այդտեղ



Տ. Բաբօրօզլեան

հաւաքուած Հայերը, այր, կին, ծեր, երախայ, կը ծեծէին, կը կողոպտէին, վրանները կը քանդէին:

Հետիոտն շարունակեցինք ճամբան դէպի էրէյլի, Ուլու-Գըշլա, Պօզանթի, Թարսուս, ուրկէ երկաթուղիով անցանք Ատանա, Գարաման, Օսմանիյէ: Այստեղ մնացինք ատեն մը լեռներու մէջ: Գիշերները բորենիներ կ'իջնէին լեռներէն եւ հիւանդ կամ տկար եղողները կը բզկտէին:

Օսմանիէէն անցանք Գանլը-Կէչլիտ ուր հայ զինուորներ ճամբու շինութեան կ'աշխատէին: Հասանք Գաթմա, Հալէպի մօտերը ուրկէ ծեծի հարուածներու տակ ճամբայ ելանք դէպի Պասլ, Բաղդա եւ վերջապէս Տէր-Ձօր:

Տէր-Ձօրէն երկրորդ կարաւանն էր որով ճամբայ ելանք Մուսուլի ուղղութեամբ: Քանի մը օր քալելէ ետք, թուրք ժանտարմաները ըսին թէ ներում չնորհուած է, պիտի վերադառնանք: Մէկ օր քալեցինք դէպի ետ, 8-10 օր մնացինք դիւղ մը: Տէր-Ձօրէն երրորդ

կարաւանը եկաւ եւ միացաւ մեզի: Հարիւրապետ մը եւ զինուորներ կային երրորդ կարաւանին հետ: Մեզ կրկին ճամբայ հանեցին դէպի Մուսուլ: Ճամբուն վրայ հարիւրաւոր դիակներ տեսանք կոյտերով: Պետուինները զանոնք հաւաքած ու մերկացուցած էին:

Մօտ 4000 հոգի էինք, 45 օր քալեցինք Տէր-Չօրէն Մուսուլ, հինգ օր առանց կաթիլ մը ջուրի: 4000 Հայերէն հազիւ 1500ը ողջ մնաց: Ատեն մը Մուսուլ մնալէ ետք, մեզ ճամբայ հանեցին դէպի Քէրքուկ, Իսլահիյէ, ուր քանի մը տնուոր հայ կրցան հաստատուիլ: 10-15 տնուոր ալ վերադարձանք Տուղ-Պօր, Քէրքուկին եւ Իսլահիյէին միջեւ զիւղաքաղաք մը ուր բաւական ապրեցանք: Պատերազմական ճակատը մօտեցած ըլլալով, մեզ կրկին քչեցին Մուսուլ: Մուսուլի մահմէտական ժողովուրդին կեանքը աննկարագրելիօրէն թշուառ էր: Անօթութիւնը այն աստիճանի հասած էր որ իրարու ձեռքէ կը խլէին պատառ մը հացը:

Օր մը, երկու ոստիկան զիս բռնեցին շուկային մէջ եւ ուրիշներու հետ, աշխատաւոր բանակի անունով, մեզ տարին Չաքօ, ճամբայ շինելու: Տարիքս փոքր էր որով, ջուր կրող խումբի մը մէջ աշխատցուցին մեզ:

Հաճի Չավուշ անունով պազանի մը հսկողութեան յանձնուած էինք: Հինգ երիտասարդ Հայեր գնդակահարեց որովհետեւ փորձեցին փախչիլ: Երկու հոգի զարհուրելի չարչարանքով սպաննեց: 300 աշխատաւոր Հայեր շուրջանակի նստեցուց եւ զինուորներուն հրահանգեց գնդակահարել ամենափոքր շարժում ընողը: Երկու Հայեր մերկացուց եւ իրար կապեց, կրակը վառել տուաւ եւ բահը, բրիչը կարմրցուց: Մեր մէջ Ատանացի կարճահասակ նուագիչ մը կար, հրէչ Հաճին շիշ մը օղի հանեց, կերաւ, խմեց եւ երգել ու պարել տուաւ այդ մարդուն: Յետոյ, կարմրած բահով

ու բրիչով տաղեց կապուածները, երբ ուրախութեան գագաթնակէտին հասած էր :

«Կառավարութիւնս 300 Հայ եւ 150 փամփուշտ յանձնեց ինծի, ըսաւ : Եթէ մէկ փամփուշտ պարպեմ մէկ Հայու համար, կը մնայ 150 Հայ : Մէկ փամփուշտը կ'արժէ երկու զրուշ : Կառավարութեանս երկու զրուշը խնայելու համար, 60 փարա տուի եւ այս դանակը առի, որով 60 Հայ կրնամ սպաննել : Կառավարութիւնս շահած կ'ըլլայ, 60 Հայու վրայ, 120 զրուշ» : Եւ դանակով զարկու կապուած տղոց : Վայ այն Հայուն որ հիւանդ կ'ըլլար, կրունկով գլուխնին կը ջախջախէր :

Վերջապէս եկաւ օր մը, երախաներն ու ծերերը ազատ ձգեցին :

1921-22ին Պաղտատ «Իրաք» պանդոկին մէջ կ'աշխատէի, խումբ մը ընկերներով : Իրիկունները կը պատմէինք տարագրութեան սեւ օրերը եւ Թուրքին վայրագութիւնները : Մեր մօտ նստած էր Մուսուլի Սապօնճի ընկերութեան արաբ ներկայացուցիչը, Սալիհ Ձէլէպի անունով, որ հետեւեալը պատմեց : «Թուրքիոյ ներքին գործոց նախարարութիւնը հրահանգած էր Մուսուլի նահանգապետին որ շուները մաքրել տայ : Իրօք ալ նահանգապետը շուները մաքրել տուաւ : Յետոյ ծածուկ հեռագիր մը եկաւ ուր ըսուած էր . «զրգոցեցէք տեղական ժողովուրդը եւ ջարդել տուէք Հայերը» :

«Նահանգապետը կը կանչէ Մուսուլի Արաբ երեւելիները եւ յայտնելով ներքին գործոց նախարարութեան հեռագիրը, հարց կուտայ թէ ի՞նչ է իրենց կարծիքը :

«Ամէն մէկին տունը, կը պատասխանեն Արաբները, մէկ-երկու Հայ կայ որոնք հաւատարմօրէն կ'աշխատին : Մեր խիղճը թոյլ չի տար որ արաբ ժողովուրդին ձեռքը թաթխուի Հայերու արեան մէջ : Կառավարութիւնը մինչեւ հոս բերաւ Հայերը, կրնայ հաւաքել եւ տանիլ մեզմէ հեռու :

«Նահանգապետը համամիտ եղաւ Մուսուլցիներուն» :

Ֆրանսա, 1951 :

Մ Է Ս Ք Է Ն Է

ԵՒՈՒԱՐԴ ԳԱՀ . ԴԱՐԲԻՆԵԱՆ

1916 Մարտ 4ին, ընտանեօք Մէսքէնէ աքսորուեցանք : Մեր մօտաւոր ազգական, Հաճընցի բժիշկ Աւետիս Գասելեանը ըսելով որ Մէսքէնէ հասած ենք, եկաւ եւ մեր վրանը փոխադրեց իր վրանին մօտ, քանի որ ենթակայ էինք առաջին հերթին քշուելու Տէր-Չօր :

Մարտ 5ին, բժիշկ Աւետիսը զիս ներկայացուց գաղթականաց պաշտօնէութեան պետ Մումպուլուճցի Չէրքէզ Հիւսէյինին, իբրեւ առողջապահական պաշտօնեայ :

1916, Մարտ 11ին, որոշուեցաւ պատսպարան մը հաստատել պղտիկներու համար որոնք անտէր կը թափառէին, իրենց ծնողքը ջարդուած, քշուած կամ Մէսքէնէի մէջ մեռած ըլլալով :

Տիկիներ՝ Ռաքէլ Քիրազեանը, Արմենուհի Փալանճեանը եւ Մարիցա Վարդանեանը, երեքն ալ Նիկոտէցիներ, պարապ վրան մը գտան ուր տեղաւորեցինք առաջին որբերը : Ազէհիբցի 12 տարեկան Շաւարշ, Ձէյթունցի Մարիամը՝ 7 տարեկան, որ վերջէն մեռաւ : Երեք տղայ, մէկը Էվէրէկցի Վահրամ, միւս երկուքը մեռան : Այլեւս պաշտօնապէս որբանոց մը կազմուած ըլլալով, սկսան նորերը գալ անօթի, մերկ, հիւանդ, անդամալոյծ եւայլն :

Վերոյիշեալ տիկիները ամէն զոհողութիւն կ'ընէին որբերը անօթի չձգելու համար: Տիկին Ռաքէլը, որ ամենէն զոհաբերողն էր, գացեր էր կալէթա առնելու: Ամպար մէմուրի Ալի Րիզան երեք անգամ վոնտած եւ մտրակով ծեծած էր զինքը:

Սկիզբի օրերուն, իբր առողջապահական պաշտօնեայ, չէի կրնար զբաղուիլ որբերով: Վերոյիշեալ տիկիներն էին որ կը ջանային զանոնք հոգալ: Թուրք պաշտօնեաներէն պէտք էր կորզել քիչ մը ուտելիք: Հակառակ մեր դրած արգելքին, յաճախ սատկած կենդանիներու միսն էր միակ ուտելիքը: Կրակ չիներու համար, կը ստիպուէինք մեռելներու քուրջերը եւ ոսկորները վառել: Մէկ ամսուան տղեկ մը, որուն մայրը աքսորուած էր, մեռաւ կաթ չըլլալուն պատճառաւ:

Առժամեայ կերպով Մէսքէնէի դժոխքը մնացողները, որոնց գլխուն կախուած էր ոեւէ ժամ աքսորուիլը դէպի Տէր-Ջօր, երբեմն մէկ-երկու մէծիտ կուտային որբանոցին համար: Պակաս չէին նաեւ ամուսնացողներ ալ, որոնք նուէրներ կ'ընէին:

Որբերուն թիւը հարիւրի մօտեցաւ: Երկու Հայեր ներկայացան եւ ըսին թէ «Որբերուդ օրական երեք անգամ հաց պիտի տանք»: Այդ անձերը Մարաչցի Համբարձում Քէլլէճեան եւ Փանոս Մէրճանեան, բողոքական ըուհճի աղանդին կը պատկանէին: Քանի մը օր հաց տալէ ետք, սկսան որբերուն Աւետարան քարոզել եւ իրենց աղանդը սորվեցնել: Հակառակ էի որ կրօնի եւ ազգութեան համար հալածուող ժողովուրդը խաղալիք ըլլայ այդ աղանդաւորներուն, բայց չէի համարձակեր արգելք ըլլալ քանի որ հաց կուտային:

Այս Հայերուն ծախսած դրամը կուգայ եղեր Հալէպ բնակող Գերմանուհի աղանդաւորէ մը: Իրենց զըրկուած դրամին փոքր մէկ մասը ծախսելով մնացեալը

իւրացուցած են : Շատ ետքը տեղեկացանք այդ մասին երբ Համբարձում Քէլլէճեանը Տէր-Զօրի մօտերը կը կողոպտուի Արաբներէն : Բարձի մը մէջ պահած է եղեր ստացած դրամին մեծ մասը : Այդ օրերուն , Հաճընցի տիկին Ռեբեկա Մանկրեանն ալ իբրեւ հոգեւոր քոյր կը հսկէր որբերուն , աւելի ուժ տալով ըուհճիութեան :

Օր մը , գաղթականապետ Հիւսէյինը կ'անցնի ձիով որբերուն վրանին առջեւէն : Տիկին Մանկրեանը որբերը բարեւի կը կեցնէ : Հիւսէյին գոհ կը մնայ ու մէճիտ մը կը նուիրէ որբերուն իբր հացի դրամ : Իսկ Տիկին Մանկրեանը անխելքօրէն կը մերժէ դրամը ըսելով թէ . «Բու տուած մէճիտիէներդ ի՞նչ կ'ըլլայ : Աստուած թող հողայ զանոնք» : Հիւսէյինը բարկանալով , յաջորդ առտու քշել տուաւ այդ հարիւրի մօտ որբերը Տէր-Զօր , Տիկին Մանկրեանն ալ միասին կոտորուեցան :

Այդ խումբէն հազիւ տասնեւհինգ որբեր ցախերու տակ պահուըտելով կ'ազատին եւ կը վերադառնան Մէսքէնէ : Ռաքէլ Քիրազեանը , Արմենուհի Փալանճեանը եւ Մարիցա Վարդանեանը զանոնք պահեցին գաղթականաց վրաններուն տակ :

Հինգ օր ետքը յաջողեցայ թուրք վերակացուն համոզել որ անտէր տղոց համար կրկին պատսպարան մը բանանք : Անօթուլթիւնը , սակայն , իր աւերը կը գործէր Մէսքէնէի մէջ թէ Ֆիզիքապէս եւ բարոյապէս : Կեսարացի կին մը փորձեց որբանոցի տղաքներէն մէկ քանին Արաբներու ծախել : Միւս կողմանէ թուրք պաշտօնեաներն ու զինուորներն ալ կը հետապնդէին մեր տղաքն ու աղջիկները : Եղան որբեր որոնք թշուառութեան չղիմանալով վերադարձան Արաբներու մօտ :

1916 Յուլիսէն սկսեալ որբերու վիճակը քիչ մը բարւոքեցաւ : Կրնայինք կանոնաւոր կերպով կերակրել զիրենք : Ամէն գիշեր , ձողերը վերցնելով , վրանները

վերմակի տեղ կը ծառայէին: Առտուները կրկին կը բարձրացնէինք վրանները: Աքսորեալները մեզի կ'օգնէին:

Յուլիսի վերջերը հինգ հարիւրի հասաւ որբերու թիւը: Ուտեստեղէնը պակսեցաւ: Անօթուլիւնը կրկին ցցեց զլուխը: Քոլէրայի նմանող հիւանդութիւն մըն ալ ծայր տուաւ: Վարակողները մասնաւոր վրանի մը տակ փոխադրել տուի:

1916 Օգոստոսի վերջերը թուրք հրէշ մը, Հազգը, որբերէն երկու հարիւր յիսունը, մանչ ու անղջիկ, քրտանըհինգ հայ կառապաններով փոխադրեց Տէր-Չօր, իր հսկողութեան տակ եւ Տէր-Չօրի մէջ այդ երախտները կառապաններով միասին այրել տուաւ:

Մեկնելէ առաջ Հազգըն ինծի ըսաւ. «Դուն յաջորդանգամին պիտի երթաս: Տէր-Չօրի մէջ հիւանդանոց մը շինել պիտի տամ եւ քեզ տնօրէն պիտի կարգեմ»:

Այդպէսով որբերուն կէսը փճացաւ, իսկ մնացած մասը ժամանակ մը քաչկոտուելէ ետք, իրենց բախտին ձգուեցան: Հազգըն, երկրորդ մասը չկրցաւ տանիլ:

Հասաւ զինադադարը: Ողջ մնացողները վերադարձան Հալէպ: Առած տեղեկութեանս համեմատ Հազգըն սպաննուած է Պօղանթիի մէջ, վրէժխնդիր երիտասարդներու ձեռքով:

Արժանթին, 1951:

ԿԱՐՃԿԱՆՑ ՓՐՆՈՒՍ ԳԻՒՂ

ՏԻԿԻՆ ԹԱԳՈՒՀԻ ՕՎԱՆԵՍ ՄԻՆԱՍԵԱՆ

Ծնած եմ վանի Կարճկանց Փրհուս գիւղը, շինուած՝ Հաստրակ, Խաթուն-Քար եւ Պաղչէճոր լեռանց մէջտեղ: 50 տուն հայ էինք եւ մէկ տուն քուրդ: Մեր շուրջի քրտական գիւղերն էին, Հալաց, Զիւլիւլ, Սալթիկ, Վարդենիս եւ Ժանանց: Մեր գիւղը առատ աղբիւրներ կային, Հաստրակ լեռը ծածկուած էր հոտաւէտ ծաղիկներով:

1915ին հայրս մեռած էր, մայրս ողջ էր եւ ես 14 տարեկան էի: Ամուսնացած էի շատ փոքր: Ամուսինս սկանդինավեան գացած ըլլալով, մօրս տունը կ'ապրէի: Մեր հողերը ուրիշներ կը վարէին: Մեծ եղբայրս՝ Վարազայ վանքէն շրջանաւարտ, ուսուցիչ պիտի ըլլար:

Տարագրութիւնը սկսաւ: Նախ՝ երիտասարդները զինուոր տարին եւ ջարդեցին: Եղբայրս, ընտանիքին պետը եւ դպրոցական ըլլալով, մեր քով մնաց: Ծերերը կառավարութեան հաշտոյն փայտ կտրելու կանչեցին: Գիւղին մնացեալ ժողովուրդին հետ լեռ փախանք ուսելիքի պաշարով:

Զապթիէները եկեր են գիւղ տուրք հաւաքելու եւ մարդ չեն գտեր: Մեզի մարդ զրկեցին՝ որ վերադառնանք, խոստանալով ոչ ոքի չի վնասել: Կիները վերադարձան, բայց ոչ զինուորացու երիտասարդները: Թուրքերը մտան գիւղ, վառեցին, թալլեցին եւ տաւարները գողցան:

Դաշտին մէջ մնացինք պահուած: Գիշերները երկ-



Թագուհի Օվանէս Մինասեան

տասարդութիւնը լեռնէն կ'իջնէր: Ամիս մը այսպէս ապրեցանք: Ուտելիքը սպառեցաւ: Քուրտերը մեզ խաբեցին, ըսելով որ ձեր երիտասարդները թող իջնեն, մենք կը պահենք զանոնք:

Մեր տան հացը սւտոյ Քորդ մը, հրացանով ու դաշոյնով կը սպաննէ եղբայրս, երբ լեռնէն կուգար: Քեռիիս տղան իսկոյն լեռ կը փախչի կրկին:

Փոքր եղբայրս, որ 12 տարեկան էր, մօրս պիւրկը կը քնանար: Քուրդ մը եկաւ եւ մօրս ըսաւ. «Տղիդ կը շիռով ոսկի տուր որ զինքը չըսպաննեմ»: Ո՞ւրկէ կըրնայինք գտնել այդ դրամը եւ արիւնկզակ մարդը, հակառակ մեր աղաչանքին, եղբայրս մորթեց մեր աչքին առջեւ: Տակաւին աչքիս առջեւն է թափուած արիւնը եւ ականջիս մէջն է եղբօրս աղաղակը:

Մեր դրացի Քուրտերը կատարեալ վայրենիներ էին: Երբ իրենց Շէյխը գիւղ գար, «Թուրեխք» կ'ընէին այսինքն շան պէս կը հաչէին: «Մեր մեծն է, կ'ըսէին,

մենք անոր շուններն ենք: Ոտքին լուսցած ջուրը կերակուրի մէջ կը դնենք, պէրէքէթ է»: Ամուսնութեան առաջին գիշերը, փեսան իր հարսը Շէյխին ծոցը կուտար յետոյ իր անկողինը կ'առնէր: Եկեղեցիի զանգակին ձայնը չէին ուզեր լսել եւ ժամհարը մեզ եկեղեցի կը կանչէր Հաճի Պէքիրին կնոջ արտօնութիւնով:

Եղբայրներու մահէն ետք, մեր ընտանիքը բաժան բաժան ըրին: Շատերը տաճկացիին: Ես գէշ հագուստս վրաս, լաւերը տակէն հագած էի երբ մեզ կը խուզարկէին: Ծանօթ Գուրդ մը մեզ պաշտպանեց, «մի՛ հանուեցնէք այս կինը» ըսելով: Քիչ յետոյ մօրս ըսաւ. «Աղջիկդ կին տուր ինձ, թէ՛ քեզ, թէ՛ միւս աղջիկներդ կը պահեմ»: Ես լալով ըսի. «Իմ արիւնս եղբօրս արեան կը խառնուի, չեմ առներ քեզ»: Մարդը ծանօթ ըլլալով, մայրս ոտքերուն ինկաւ, աղաչեց որ զիս չտանի: Գնաց ուրիշ խեղճ կին մը դտաւ եւ երկու զաւակները ձգելով, կնոջ թեւէն քաշեց ու տարաւ:

Գուրտերը մեզ բռնի ճամբայ հանեցին, «Ռուսը պիտի գայ, ամէնքդ վառէ» ըսելով: Ոչխարի հօտի պէս երկու ժամ քալեցինք եւ տեսանք որ Գուրտերը փախան: Վերադարձանք մեր կործանուած գիւղը: Մամատը, մեր հացը ուտող և մեծ եղբայրս սպաննող Գուրտը մեր քով պահուիլ ուզեց: Մենք ձեւացուցինք թէ չենք գիտեր որ եղբօրս սպաննողն է: Մայրս ըսաւ. «Տուր հրացանդ, պահենք: Դուն ալ իբր տղաս եղիր»: Հրացանը յանձնեց մօրս որ պահէ: Հեռուէն հրացանաձգութիւնը սկսաւ: Ռուսական զօրքը եւ հայ կամաւորներն էին: Մայրս «վրէ՛ժ, վրէ՛ժ, զաւակներուս արիւնը» պոռաց: Գուրտը եւ ընտանիքը սպաննուեցան, ինչպէս շատ ուրիշ Գուրտեր:

Կամաւորները նահանջել տուին մեզ դէպի Գաւաչ: Հոն շատերը մեռան անօթութենէ եւ քօլերայէ: Ռուսերը

Ֆուրկօններու մէջ լեցուցին մեզ, տարին Բարթողիմիոս վանք: Հոն դաշտին մէջ հազարաւոր բազմութիւն կար, փախչող փախչողի: Պարսկաստան գացողներէն շատերը սպաննուեցան Թուրքերու կողմէ: Ռուսերը կաթսաներով կերակուր եւ հաց բաժնեցին վանքը մնացողներուն:

Յետոյ գացինք Վան, տաճիկ չկար, մնացինք երեք ամիս: Եկանք Իկտիր, ուր Կարմիր Խաչը ուտելիք եւ հազուատ բաժնեց, Փապրիքաներ բացաւ եւ զործ տուաւ: Յետոյ Տաճիկները յարձակեցան: Գաղթեցինք էջմիածին: Պուլկարիա ազգական ունենալով, եկանք այս երկիրը:

Ամուսինս, որ պանդուխտ գացած էր Ռումանիա, իբր կամաւոր եկաւ զիս գտաւ Կովկասի մէջ: Իմ անդրանիկ աղջիկս էջմիածին ծնաւ, Աշտարակ գիւղը:

Պուլկարիա, 1951:

Բ Ի Ի Ր Ա Կ Ն

ՏԻԿԻՆ ՈՍԿԻ ՏԷՐ-ՅԱԿՈՒՅ ԶՈՊԵԱՆ

Սերաստիոյ Բիւրակն (Պինկէօլ) գիւղէն եմ: Ամուսինս քահանայ էր՝ Տէր Յակոբ: 25 հոգինոց տուն էինք: Ունէի 7 զաւակ (3 մանչ, 4 աղջիկ), Մանիա, Ուսաննա, Թագուհի, Սարգիս, Աւագ, Զատիկ եւ Համբար: Մէկ տուն կը բնակէինք, տագր, ներեր, հարսեր: 1915ին 45 տարեկան էի:

Առաջ տագրերս տարին քար կտրելու: Ներոջս տըղան զինուոր առին: Յետոյ ժանտարմաները եկան զէնք փնտռեցին: Տէրտէրը կը տանէին որ զէնքի տեղերը ցոյց տայ: Զէր ըսեր կամ չէր գիտեր, կը ծեծէին, կը տանջէին: Երեք շաբաթ տեւեց այս վիճակը: Քահանան պահեցինք մեր տանը մէջ եւ ըսինք որ քաղաք երթայ: Եկան տուն-տեղ թալլեցին:



Ոսկի Տէր-Յակոբ Զոպխան

Օր մըն ալ յանկարծ հաւաքեցին երիտասարդները եւ գիւղէն դուրս սպաննեցին: Լսեցինք որ չարչարած, քիթ ու բերան կտրտած, դիակները ձորի մը մէջ նետած են:

Մեր եւ ուրիշ ընտանիքներէ հարիւրական ոսկի առին խոստանալով աքսոր չի տանիլ, բայց Վարդավառի երկրորդ օրը ամէնքս ալ աքսորուեցանք: Հինգ կառք բեռցուցած էինք, չորսը առին մէջի գոյքերով: 40-45 տարեկան տղամարդոց հրամայեցին որ կարաւանին ապրանքները եկեղեցի փոխադրեն: Ամուսինս, Տէր-Յակոբն ալ մեղմէ գատեցին:

Կարաւանը կէսօրին ճամբայ ելաւ: Տղամարդոց ոչ մէկը տեսանք այլեւս: Յետոյ լսեցի որ ամուսինիս մօրուքը մէկ-մէկ քաշելով եւ տանջելով սպաններ են: Աղջիկս երկու զաւակով ճամբայ ելաւ, ամուսինը տարած էին:

Գացինք Ֆլորենճըլար քաղաքը: Մեր կառքերը գըրաւեցին, սկսանք հետիոտն ճամբորդել: Պատիկս երեք տարեկան էր, անօթի, յոգնած, կը քաշկռտուէինք: Մեր վրայ-գլուխը կը խուզարկէին: 15 տարեկանէն վեր տըղամարդ չէր մնացած մեզի հետ: Մեր ընտանիքէն չորս հոգի, 15 տարեկան, տարին: Շաբաթ մը վերջը երեքը վերադարձան, զինուորացու էք ըսելով: Մէկը սպաննած էին:

Հասանք Համա քաղաքը, ճանճերով, աղտեղութիւնով, հիւանդութիւններով լեցուն քաղաք մըն էր: Հազարաւոր դիակներու մէջէն անցանք: Համբար զաւակս զիս գտաւ: Այդտեղ անօթութենէ մեռան մեր տունէն Հեղինէ, էլմաս եւ Սանդուխտը: Գետ մը կար, ուզեցի ափով ջուր տալ մահամերձին, թուրք զապթիէն գըլխուս զարկաւ եւ չի թողուց, «սէնտէ կէսէրէճէքսին» պոռալով:

Այդտեղէն Եփրատ գետը քշուեցանք: Ամուսնացած մեծ աղջիկս կորսնցուցի, թոռնիկս ինծի մնաց: Երկու երախայ կրելու անկարող էի, թոռնիկս որ 2 տարեկան էր, մղկիթի մը առջեւ ձգեցի:

Մեզ նաւ նստեցուցին, ոստիկան մը տեսնելով որ երախաս արգելք է, ծոցէս խլեց ու գետը նետեց: Խեղճ Թագուհիիս վերջին ճիչը լսեցի: Ինծի կը նայէր տխուր աչքերով: Թուրքերը զիս աքացիներով կը հարուածէին որ լալէ դադրիմ:

Մեր կարաւանը ցամաք ելաւ: Սկսանք քալել, շարունակ քալել: Դարձուցին, նոյն տեղերէն գետը անցուցին եւ նորէն քալեցուցին: Իրենց նպատակն էր մընացեալները յոգնեցնելով, անօթի եւ ծարաւ քալեցնելով սպաննել:

Երեք-չորս ամիսէ ի վեր ճամբաներն էինք: Սատկած կենդանիներ, խոտ, դիակ, ինչ որ գտնէինք կ'ու-

տէինք: Այսպէսով մեզ վերադարձուցին Հօմս քաղաքը որ Համա քաղաքին մօտ էր: Մերկ էինք, ետեւ ու առջեւ քուրջեր կախած էինք: Աշուն էր, ցուրտ, հով, անձրեւ: Մեր ընտանիքէն չորս հոգի մնացինք: Արտերէ յարդ կը հաւաքէինք մեր մարմինը ծածկելու համար: Գիշերները իրարու քով կը սեղմուէինք որ տաքնանք:

Կէսօրէ մը վերջ մեզ ճամբայ հանեցին: Ովսաննա աղջիկս փորհարութենէ բռնուած էր, չէր կրնար քալել, իր թեւը մտած էի: 15 տարեկան Սարգիսս կարաւանին հետ դնաց: Անձրեւէն խխում եղած էինք: Կամուրջի մը տակ մտանք: Աղջիկս ըսաւ, «ես պիտի մեռնիմ, դնա եղբայրս գտիր, չի կորսուի»: Զաւակս հոտ ձգեցի, երկու ծեր կիներ ալ կային քովը: Արաբները զանոնք դուրս հաներ, արեւին տակ դրեր եւ միսիւրի հաց են տուեր: Աղջիկս չէ կրցեր ուտել: Դիմացս մերկ կին մը ելաւ ու ըսաւ. «տղայ մը տեսայ որ չէր կրնար քալել, Թուրքերը գէշութիւն ըրեր են իրեն»: Գացի գտայ, Սարգիս զաւակս էր:

Քուսեռ անուն քաղաք մը տարին մեզ: Գետնի հողին վրայ կը պառկէինք: Արաբ նպարավաճառ մը խրսիւր մը տուաւ որ վրան պառկինք եւ հանդանակութիւն ընելով դրամ բերաւ: Երեք օր վերջը աղջիկս մեռաւ թեւերու մէջ: Նոյն Արաբը դրամ հաւաքելով պատանքի համար կտոր մը բերաւ, եւ ես, երեւակայեցէք, մայր մը, դողդոջուն ձեռքերովս պատանքը կարեցի: Քրիստոնեայ արաբ քահանայ մը եկաւ եւ աղջիկս թաղեցին:

Այդտեղ երեք տարի մնացինք, տղաս եւ ես: Տարի մը մուրալով ապրեցանք, քօնսէռվայի տուփեր ծակելով մեր վիզէն կախած էինք: Երբեմն պատառ մը հաց կուտային, կամ հոտած ուտելիքներ: Անսիրտ կօշկա-

կար մը կաշիի կտորներ կը նետէր: Գիշերները շուներ կը յարձակէին մեր վրայ: Յետոյ տղաս սկսաւ աշխատիլ, ես ալ արտ քաղելու կ'երթայի եւ արաբ ընտանիքի մը, ուր շատ բարի կին մը կար, տան աշխատանքը կ'ընէի, մինակ հացի մը փոխարէն:

Օրին մէկը սկսայ լալ: Կարծեցին թէ անօթութենէ կուլայի: Լեզու չէի գիտեր որ ըսեմ թէ վեց զաւակ կորսնցուցած եմ եւ Յ հոգինոց ընտանիքէ մը երկու հոգի մնացած ենք:

Բրիստոնեայ Արարները եկեղեցիին դուռը պնակ դրած էին եւ մեզի կ'օգնէին դրամով:

Օր մըն ալ թուրք կառավարութիւնը Հայերը հաւաքեց, բաղնիք տարաւ եւ շոգեկառք դնելով Հօմս տարաւ եւ մզկիթին մէջ մեզ թրջացուց, անուննիս փոխեց: Գլուխնիս ճերմակ լաթերով ծածկեցին: Նորէն Բուսեռ վերադարձանք:

Վերջապէս Անգլիացիք եկան, առատ ուտելիք բերին: Դաշախն մէջ կերուխում կ'ընէին եւ Հայերը կ'երթային հաւաքելու աւելցուքը:

Այդտեղէն մեզ Համա տարին եւ երեք ամիս կերակրեցին, յետոյ՝ Հալէպ: Հայերը յանձնախումբ կազմած էին եւ հայ կը փնտռէին: Ըսին որ այլեւս ազատած ենք, կրնանք մեր ուղած անդր երթալ: Տղուս հետ Գուլիս գացինք, յետոյ՝ Մութաֆա Բէմալի բարբարոսութենէն ազտակուլ համար՝ Գուլկարիա:

Գուլկարի, 1952:

ԿԵՍԱՐԻԱ

ՍԱՐԳԻՍ ԿԻՒՐԻՆԼԵԱՆ

Թուրքիոյ բազմամարդ քաղաքներէն է Կեսարիան, ուր հայութիւնը փոքրամասնութիւն էր, (12 կամ 15 հազար) :

1915ին հազիւ 16 տարեկանս թեւակոխած էի: Մեր ընտանիքը Կիւրինլեան կը կոչուէր, հօրս անունը Գլըրիգոր, մօրս՝ Լպրըքճեան Տիրուհի: Բաղմանդամ էինք, հօրեղբայրներ, մօրաքոյրներ եւայլն, որոնցմէ միայն Յակոբ Կիւրինլեան հօրեղբայրս ողջ մնացած է եւ ներկայիս Յունաստան կը գտնուի, ամուսնացած եւ զուակներու հայր:

Հայութիւնը Կեսարիոյ մէջ կը բնակէր հինգ թաղամասերու մէջ, որոնցմէ մէկը, Պաղճէ Պաշին կ'երկաւրէր մինչեւ Ս. Սարգիս եկեղեցին: Ունէինք երեք եկեղեցի. Մարիամ Աստուածածին, Ս. Սարգիս եւ Գլըրիգոր Լուսաւորիչ: Մենք կը բնակէինք Մանիկ օղլու թաղը:

Այդ ժամանակուան կուսակալն էր արիւնարբու Ճէմալ փաշան, որ գործի ձեռնարկեց 20 մտաւորականներ կախաղան բարձրացնելով: Կը յիշեմ միայն մէկ քանիններուն անունները: Վահան Գիւրքճեան, Ճամճեան, Գուլումճեան, Պալրգճեան եւ Յովհաննէս Պօյաճեան: Այս վերջինը մեր վարժարանին տնօրէնն էր: Պատրուակելով որ Հայերը զինուած են, եւ թրքութիւնը անապահով դրութեան մէջ կը գտնուի, ուրեմն պէտք էր որ ամէն տեսակի զէնք յանձնէինք կառավարութեան, եթէ կ'ուզէինք հանգիստ մնալ մեր տեղերը: Ինքնապաշտպանութեան ժառին չէինք կրնար խորհիլ, փոքրամասնութիւն էինք եւ իրականութեան մէջ զէնք ալ չ'ունէինք:

Քսան կախաղաններու զոհերը դեռ չէին թաղուած,

երբ մեր մայր եկեղեցւոյն դրան վրայ փակցուեցաւ հետեւեալ գրութիւնը. «Հինդ թաղամասերու հայութիւնը պէտք է գոցէ իր տան դռները եւ բանալիները յանձնէ Ղըջը-Սաբու քօմիսարիադին»: Ժողովուրդը ողբ ու կոծի մատնուեցաւ, աննկարագրելի տեսարաններ պարզելով: Առաջնորդ Տրդատ Սրբազանը իր հայրական յորդորներով կը ջանար հանդատացնել իր հօտը: Իմացանք որ ոստիկանութիւնը ծրագրած էր Սըրբազանն ալ կախաղան բարձրացնել: Կոխած էին առաջնորդարանը երեք անգամ, բայց չէին դատած զինքը:

Չեմ գիտեր թէ ի՞նչ պատահեցաւ որ Թուրքերը իրենց դիտաւորութիւնը մէկ կողմ թողլով, գոհացան զինքը աքսորելով մեզի հետ: (Սրբազանը Յունաստանի մէջ կնքեց իր մահկանացուն): Ան կը սիրէր իր հօտը եւ փոխադարձաբան սիրուած էր ամենքէն:

Որոչուած օրին մենք յանձնեցինք ըստ կառավարութեան որոշման, մեր տան բանալիները Ղըջը-Սաբուի քօմիսարիաթը, հետերնիս տանելով մի քանի ծածկոցներ: Ժանտարմաներ զինուած մինչեւ իրենց ատամները, հրաման տուին չարժուելու եւ մենք առաջնորդուեցանք դէպի Ինճէ-Սու: Ասկէց անդին սկսան բաժնել ժողովուրդը. հասանք Քիւլլէկ կոչուած կայարանը որ Տարսոնի մօտ է: Կողոպուտը ծայր տուած էր արդէն: Մահեր անպակաս էին, նոյնպէս մեր ընտանիքի անդամներէն: Մեռեալները փոսերու մէջ կը նետուէին. թաղելու ժամանակ չունէինք: Կը յիշեմ որ անցանք Ատանայի մէջէն առանց կանգ առնելու եւ հասանք Ինճէլի: Շունչ առնելու ժամանակ չէր տրուէր մեզի, դարձեալ թափառական եւ դիւղէ դիւղ անցնելով հասանք Ղաթմա որը դէպի Արաբիոյ անապատները տանող ճամբան է: Այս անգամ Հալէպի ճամբան էր որ բռնած էինք: Քաղաքէն դուրս ընդարձակ չէնք մը կար որ Փրանսացիներու կը պատկանէր եւ կը ծառայէր իր-

րեւ հիւանդանոց . հող խճողեցին ժողովուրդը : Տարա-
փոխիկ հիւանդութիւններ ծայր տուին եւ ամէն օր 50
60 մեռեալ կ'ունենայինք որոնք գոմէշի կառքերու վրայ
բռցնելով կը տանէին քաղաքէն դուրս :

Մնացինք ես եւ փոքր եղբայրս որ հազիւ 7 տարու
էր : Երկար չթողուցին մեզ այդտեղ ալ, գրեթէ մերկ ,
անօթի , ծարաւ , համատարած թշուառութիւն , հարց
կուտամ ես ինձի թէ ի՞նչպէս կրցեր ենք դիմանալ :
Ճամբայ ինկանք եւ Բաս-իւլ-Այն ըսուած անապատը
հասանք , հող գտանք հողարներով վրաններ ամէն
կողմէ բերուած հայութիւնով : Պարտիզակէն , Զէյթու-
նէն , Սերաստիայէն , Եօզղատէն եւ Էվէրէկէն : Այդտեղ
մնացինք մօտաւորապէս մէկ տարի , խիստ հսկողու-
թեան տակ : Թափառաչըջիկ Արաբներ կուգային մեր-
չունեցածն ալ կողոպտելու , երախաներ փոսերու մէջ
կը նետէին գողնալու համար անոնց ծածկոցները :

Եւ ահա օր մը երկու գերմանացի սպաներու ըն-
կերակցութեամբ , Էնվէր բորենին ինքնաշարժով եկաւ
դիտելու եւ հարց ու փորձի ենթարկելու մարդկային
այս բեկորները , եւ մեզի աւետիս տալու որ ամէն մէ-
կերնիս մեր տեղերը պիտի վերադառնանք : Հազիւ երեք
օրեր վերջ այս խաբուսիկ աւետիսէն արաբ ժանտար-
մաներ , վրաններու վրայ յարձակում գործել սկսան ,
պարանները կտրելով եւ մեզ քշեցին դէպի Տէր-Զօր :
Մեր հոն հասնելէն երկու ամիս ետք Էվէրէկի դայմա-
գամը Տէր-Զօրի կառավարիչ կարգուեցաւ : Այս մար-
դակերպ հրէշին բարի դալուստ մաղթելու համար 12
երախաներ հաւաքեցին : Այդ երախաները 6էն 8 տարե-
կան մորթուեցան այդ հրէշին կառքին առջեւ :

Իր առաջին գործը եղաւ զատել տալ այրերը կի-
ներէն , մայրը իր զաւակէն , կինը իր ամուսինէն : Զէ-
չէն ըսուած ցեղախումբին քմահաճոյքներուն յանձնը-

ւած էինք, այլեւս պարզ էր որ դէպի սպանդանոց կ'առաջնորդուէինք:

Եւ ահա անակնկալ դէպք մը տեղի ունեցաւ: Զէչէն մը հաւաքեց մօտ 50 հոգի, որոնցմէ էինք եղբայրս եւ ես եւ մեզ առաջնորդեց իր գիւղը որ Սաֆա կը կոչուի, մահուան ճիրաններէն ազատուած էինք: Հոն մնացինք մօտաւորապէս մէկ ու կէս տարի, մերկ էինք գրեթէ, կը պռկէինք կենդանիներու գոմերէն աւելի վատ տեղեր, կ'աշխատէինք պատառ մը չոր հացի համար: Եղբօրս հետ ստիպուեցանք Զէչէնին խումբին մէջ կամաւոր գրուիլ, եւ հասանք Ճարապլուս: Հոտ մատնուեցանք իբրեւ հայ, ես եւ մշեցի տղեկ մը: Շղթայակապ մեզ բերին Հալէպի բանտը ուր մնացինք երկու ամիս: Օր մը մահը աչք առնելով յաջողեցայ փախիլ: Յետոյ իմացայ որ ընկերս, մշեցի տղեկը կախած են Պապ-իւլ Թարած ըսուած տեղը: Չորս ամիս աշխատեցայ Արաբի մը մօտ որ իմ պաշտպանս եղաւ:

Վերջապէս Զինադադարին անցայ Կիլիկիա ուր գլխաւոր հօրեղբայրս, եւ քիչ մը յետոյ հասաւ նոյնպէս փոքր եղբայրս:

Փրանսական բանակը երբ քաշուեցաւ Կիլիկիայէն մենք ստիպուեցանք անցնիլ Յունաստան, ուր ամուսնացայ Օր. Արտեմիս Փալթայեանի հետ 1923ին: Անցանք Պէյրութ ու հոն մնացինք մինչեւ 1928, այս թրւականին էր որ Փրանսա եկանք:

Ֆրանսա, 1951:





ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

1915ի հայկական — կարելի է իրաւամբ ըսել՝ համամարդկային — ողբերգութիւնը չէ վերջացած եւ կը շարունակուի մինչեւ այսօր արարական ամապատին մէջ :

Շնորհիւ Տէր-Զօր բնակող հայրենակիցներու եւ, մանաւանդ, մտաւորական եւ անձնուէր հայ կնոջ մը, Տիկ. Փ. Պապեանի, կարելի եղաւ հաղորդակցել պետուին վրաններու տակ ապրող, կիսով կամ ամբողջովին արաքացած հայ խլեակներու հետ եւ ունենալ մէկ քանիին վկայութիւնը՝ քրքական եղեռնին եւ իրենց ներկայ կեանքի մասին, ինչպէս նաեւ՝ լուսանկարներ :

Անա լուսանկարը հայ-պետուին կնոջ մը, որ 1915ին թէեւ անչափահաս, կը յիշէ եւ պատմած է իր յուշերը :

Ստացած եւ՛ ուրիշներ ալ, վկայութիւն եւ լուսանկար: Ատոնք պիտի հրատարակուին յաջորդ հատորով, որուն կարելոք մէկ մասը պիտի յատկացուի Տէր-Զօրի անապատին ողջ-նահատակներուն:

Կը կարծուի թէ, առնուազն 5000 է թիւը այդ խրուեակներուն, որոնք ցրուած են գլխաւորաբար Անէզէ ցեղախումբին աշիրէթներուն մէջ, Միջագետքի հսկայ անապատին մէկ ծայրէն միւսը: Խլեակներ, որոնք մեր մայրերն են, մեր եղբայրները, մեր քոյրերը, մեր գաւակները, մեր միսէն՝ միս, մեր արիւնէն՝ արիւն:

Ի՞նչ կրնանք ընել, որ գիտնան ու համոզուին թէ, մենք, իրենց հեռաւոր եւ բախտաւոր արեւակիցներս, չենք մոռցած եւ չենք լքած զիրենք...

Դժնդակ հարցեր որոնց պէ՛տք է պատասխանենք ամէնքս, ազգային իշխանութիւն եւ իւրաքանչիւր հայ անհատ, ուր ալ գտնուինք:

Լ. Մ.



ՊԱՏԿԵՐՆԵՐ

Հայկ Թորոյեան	էջ 17
Թալաթ-	18
Թալաթ-ի հեռագիրը Հայերու բնաջանջման մասին	19
Նահատակուած Եկեղեցականներ իրենց դահիճներով	26
Գերման սպայի մը ալպօմէն	35
Տափանաւ Եփրատի վրայ	37
Գերման սպայի մը ալպօմէն	43
Թուրք դահիճը Եւ հայ գոհը	62
Նահատակուած մտաւորականներ	64
Յոգնած, անօթի, հոգեւարք	66
Անթիւ ոսկրակոյտերէն մէկը	71
Խմբովին նահատակուած հայ երախտներ	76
Տէր-Զօր՝ Եփրատի այն մասը ուր 2000 հայ երախտներ խեղդամահ եղան	82
Այսթամար	85
Մշոյ Ս. Առաքելոց վանքը	103
Մշոյ Ս. Կարապետ վանքը	103
Ս. Կարապետ վանքին նակատը	104
Հայ որբեր	122
Ն. Ժամկոչեանի ընտանիքը վանայ մէջ	124
Զարդարար Ապտուլլահ փաշա	143
Մուսուլէն ազատուած երկու տղաք	144
Նահատակներու ոսկորներ	154
Հայ ատամնաբոյժ մը, ծպտուած	156
Տէր- Զօր	172
Հայ-պետուին տղաք	188
Թորոս Կարօբեան, Սեբաստացի, Շամմար ցեղին մէջ	191
Փրկարար ներգաղթը	192
Ամերիկահայ ներգաղթողներ	201
Հայրենադարձ կոփամարտիկ Տագէս Օհանեան	208
Քարէն Եէփէի յանձնարարագիրը	216

Երեւանի համալսարանի հայրենադարձ ուսանողներ	235
Երեւան, բնիկ եւ հայրենադարձ աղջիկներ	240
Երեւան, բժշկական վարժարանի հայրենադարձ ուսանող — ուհիներ	250
Իրանէն հայրենադարձ կոլլտնոգուհի մը	256
Նոր-Արաբկիր, հայրենադարձներու շինած տուները	265
Փարիզէն հայրենադարձ Փրօֆ. Մ. Տէր Կարա- պետեան, կնոջ եւ զաւակներուն հետ	272
Տիկին Գեղանուշ Շահպագեան	280
Տիկին Գեղանուշ Շահպագեանի ընտանիքը	282
Հայրենադարձ Տիկին Թովմասեան իր ութը զաւակներով	297
Հայրենադարձ աղջիկներ ուսանողական տան մէջ	297
Տէր — Զօրի Եկեղեցին	329
Ռուբէն Զարդարեան եւ ընտանիքը	337
Թորոս Մեստնեան	344
Տիկին Վ. Աղամեանի ընտանիքը	350
Տիկին Զէփիւո Վէլէտեան	360
Կիրասուն. Գրիգոր Սիւնիի Երգչախումբը	368
Տիկին Զէփիւո Վէլէտեանի գերդաստանը	386
Յ. Գ. Քէօրօլլանեան	398
Տիկին Փ. Շերպէթեան	411
Ամասիա	413
Նահարոակ Սմբատ Եպ. Սաատէթեան	438
Տիկին Սաթենիկ Քաջունի եւ տղան	447
Տիգրան Փաթրօլլեան	456
Տիկին Թագուհի Մինասեան	464
Տիկին Ոսկի Զոպեան	467
Հայ — Պետուին կին մը	475



ՆԻՒԹԵՐՈՒ ՑԱՆԿ

Ներածութիւն	էջ	5
Հայկ թորոյեանի վկայութիւնը		16
Որբերու յուշեր, գրի առնուած 1916ին		
ՄՇՈՅ ԴԱՇՏ — Սողոմոն		176
ՄՇՈՅ ԴԱՇՏ — Նախշուն		192
ՄՇՈՅ ԴԱՇՏ — Հայկազ		200
ՎԱՆ — Սիրվարդ		204
ԽՆՈՒՍ — Արմենակ		210
ՍԱՄՍՈՆ — Եսթեր		226
ՊՈՂԻՍ — Մտաւորականներու աքսորը, Օ. Թէրլէմէզեան		236
ՊՈՂԻՍ — Լճեցի Գալուստ Խորտիկեան		242
ԼՃԷ — Տիկին Հռիփսիմէ Տէր - Պօղոսեան		247
ԵԱԼԱԳ - ՏէրԷ — Յակոբ Սիմոնեան		254
ՄԱՐԶՈՒԱՆ — Նուարդ Շիրինեան		270
ՄՈՐԵՆԻԿ — Տիկին Գեղանուշ Շահապազեան		275
ՊՈՂԻՍ — Տիկին Վ. Ռ. Զարդարեան		334
ԱԳՇԷՀԻՐ — Թորոս Մէստճեան		342
ԱՏԱԲԱԶԱՐ — Տիկին Վ. Աղամեան		349
ՏՐԱՊԻՁՈՆ — Տիկին Զէփիւռ Վէլէտեան		352
ԶԻԼԷ — Յովհաննէս Բէօրօղլանեան		397
ԱՄԱՍԻԱ — Տիկին Փ. Շէրպէթեան		410
ԳՈՒՐՏՊԷԼԷՆ — Տիկին Թ. Մէրայտարեան		414
ԻԶՄԻՐ — Տիկին Ռ. Բարիլոյսեան		421
ՊԱՆՏՐՄԱ — Տիկին Գ. Պանիրեան		426
ԷՐԶՐՈՒՄ — Տիկին Ս. Արծրունեան		437
ԶՆԶՈՒՇ — Մելիք Խաչոյեան		443
ԶՆՔՈՒՇ — Մանուկ Փուսուլեան		445
ՍԱՄՍՈՆ — Տիկին Ս. Քաջունի		447
ՊԱՂՏԱՏ — Դաւիթ Թադէոսեան		451

ԱԼԸՆՃԱ-ԷՍԿԻՇԷՂԻՐ — Տիգրան Փաթրոզլեան	455	
ՄԷՍՔԷՆԷ — Եղ. Քաչ. Դարբինեան	459	
ԿԱՐՃԿԱՆՑ ՓՐՀՈՒՍ ԳԻՒՂ — Տիգրին Թ.		
	Մինասեան	463
ԲԻՒՐԱԿՆ — Տիգրին Ոսկի Զոպեան	466	
ԿԵՍԱՐԻԱ — Սարգիս Կիւրինլեան	471	
Ծանօթութիւն	475	
Պատկերներ	477	



ԵՊՀ գրադարան



SU0111957

9-16 3-50 Supp

Printed in France